Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

3(56)
Կ-53

Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

(1915-ից մինչև մեր օրերը)

1977

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1983

ԳՄԴ 63.3 (5 ԹՈՒ)
Կ 530

Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու Ռ. Պ. ԿՈՆԴԱԿՉՅԱՆ
Խմբագիր՝ Բ. Հ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Կիրակոսյան Ջ. Ս.

Կ 530 *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը)։ Գիրք երկրորդ—Եր.։ Հայաստան, 1983.— 464 էջ։*

Երկրորդ գիրքը առաջինի օրգանական շարունակությունն է։ Այն ընդգրկում է առաջին համաշխարհային պատերազմի և նրանից հետո ընկած ժամանակաշրջանը։ Հեղինակը բացահայտում է երիտթուրքերի և պանթուրքերի հակահայկական քաղաքականության անցած ճանապարհը ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում։ Արխիվային նյութերի հիման վրա նկարագրում է երիտթուրքերի դատական պրոցեսը։

Գրքում ցույց է տրված, որ ժամանակակից Թուրքիայում դեռևս առկա են պանթուրքիզմի հակասովետական և հակակոմունիստական դրսևորումները։

Նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար։

Կ $\frac{0505040000}{701\ (01)\ 83}$ 61—84

ԳՄԴ 63.3 (5 ԹՈՒ)
9 (ՈՒ) 32

© «Հայաստան» հրատարակչություն, 1983

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

„Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» (19-րդ դարի ավարտ—1914 թ.) առաջին գրքում մենք տվել ենք երիտթուրքական շարժման ծագման ու զարգացման քննական տեսությունը, նրա շարադրանքը հասցնելով մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը։ Խնդիրների ընկալումն ընթերցողի համար դյուրացնելու նպատակով մենք երիտթուրքական շարժման էությունը բացահայտել ենք արևմտահայության քաղաքական պատմության, հայկական հարցի ներքին ու արտաքին շարժիչների լուսաբանմանը զուգընթաց։ Գրքում քննարկված են երիտթուրքական կուսակցության տեսակետն ու գործնականը, մատնացույց են արված նրա թուրքիստական և պանթուրքիստական ծրագրերը։ Մեր նպատակն է եղել պարզել նրա հակահայկական քաղաքականության մանրամասները։

Դատելով ընթերցողների հարյուրավոր նամակներով, սովետական ու սփյուռքահայ առաջադիմական թերթերում ու ամսագրերում տպագրված գրախոսականներով, արտասահմանի հայության շրջաններում տեղ գտած արձագանքներով, մենագրության առաջին գիրքը լայն ընդունելություն է գտել արևմտահայության քաղաքական ճակատագրի պատմությամբ հետաքրքրվող մասնագետների և ընթերցողների մոտ։ Գոհունակություն հայտնելով առաջին գրքի լույս ընծայման առթիվ, բազմաթիվ ընթերցողներ անում են դիտողություններ, արտահայտում ցանկություններ, խնդրում են արագացնել երկրորդ գրքի լույս ընծայումը։ Օգտվելով առի-

թից, ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նամակագիրներին, գրախոսներին, բոլոր նրանց ովքեր իրենց գրավոր ու բանավոր խոսքով համերաշխվել են մեզ հետ, ոգևորել երկրորդ գիրքն իր ավարտին հասցնելու գործում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության շուրջը կատարված ողբերգական իրադարձությունների պատմության կեղծարարությունը թուրքական պատմագիտության, քաղաքական գրականության, մամուլի էջերում, հատուկ գումարվող կոնֆերանսների ամբիոններից ամբողջ ուժով շարունակվում է: Թուրք բուրժուական պատմաբանները (եթե միայն կարելի է նրանց պատմաբան կոչել), պետական գործիչները ամբարտավանորեն ժխտում են արևմտահայության գենոցիդի փաստը: Թուրք կեղծարարներին օգնության են շտապում ամերիկյան ու արևմտաեվրոպական ամեն տիպի պնակալեզ գրչակներ, որոնք շահագրգռված են Թուրքիայի հակասովետական դերի ուժեղացման և նրան ՆԱՏՕ-ի հարվածող ուժի դերում պահելու գործում: Հանուն իմպերիալիզմի հակակոմունիստական ռազմաքաղաքական շահերի, նրանք հանգիստ խղճով զոհում են պատմական ճշմարտությունը, գիտական անկողմնակալության սկզբունքները, ծառայում կեղծիքին ու ստին: Անհրաժեշտ է անզիջում գաղափարական պայքար մղել պատմության կեղծարարների, հակասովետիզմի թուրքական, թե ամերիկյան քրմերի դեմ:

Սովետական պատմաբանները մշտապես հանդես են գալիս հանուն պատմության ճշմարիտ լուսաբանման: Բոլորը հիշում են «Новое время» ամսագրի «Հիշողություն առևանգողները» հոդվածը: Այդ նպատակին է ծառայում ընթերցողի ուշադրությանը հանձնվող ներկա հատորը:

Ֆրանսիայում թե ԱՄՆ-ում, Լիբանանում թե այլուր առաջադեմ պատմաբանները հակահարված են տալիս կեղծարարության ասպետներին, հանդես են գալիս պատմական ճշմարտության պաշտպանության դիրքերից: Այս գործում իրենց մեծ ավանդն ունեն սփյուռքահայ առաջադիմական հրապարակագիրները ու պատմաբանները, Սովետական Հայաստանի անկեղծ բարեկամները:

ՀԵՂԻՆԱԿ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՆՈՑԻԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Համաշխարհային պատերազմը նպաստավոր պահ թուրքիզմի իրականացման համար: Գործի է դրվում արևմտահայության ոչնչացման նախապես պլանավորված ծրագիրը: «Թուրքիան պետք է լինի Արևելքում»՝ «Հայաստանը հայերից դատարկելու միջոցով: «Կատարածի քաղաքականությունը պլանավորվել էր ամենայն սառնասրտությամբ»,— հավաստել է գերմանացի ականատեսը: Դրան էին ծառայելու թե մոլեռանդ համիսլամականությունը, թե թուրքականությունն ու համաթուրքականությունը: Երիտթուրքերի նախահայկական գործերի կանխրալական բնույթը: Կայզերական Գերմանիայի խաղացած սև դերը: Անտանտայի տերությունները, հասարակական կարծիքը և հայ ժողովրդի ողբերգությունը: Վ. Ի. Լենինը, բոլշևիկները, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան դատապարտեցին արևմտահայության ոչնչացման երիտթուրքական քաղաքականությունը:

Արևմտահայությունը ոչնչացվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Պատերազմը սանձազերծել էին իմպերիալիստական մեծ տերությունները, առաջին հերթին Գերմանիան, աշխարհի վերաբաժանման համար: Խնդրի դասական ըմբռնմամբ օսմանյան կայսրությունը իմպերիալիստական չի կարող կոչվել, բայց նրա նվաճողական պլանները, որ իրագործելու էին պանթյուրքիզմի և պանիսլամիզմի դրոշի ներքո, իմպերիալիստական բնույթ ունեին և պակաս ագրեսիվ չէին: Էնվերն ու նրա պանթյուրքիստ համագործակիցները բացահայտ լկտիությամբ դիմեցին խաբեության, սկզբում չեզոք ձևացան, ապա ուխտադրժորեն հարձակվեցին Ռուսաստանի վրա

Օսմանյան Թուրքիան, ըստ Բեքիր Սըդքի, ամբողջ Թրքու-

թյան լոկ տասը տոկոսն էին։ Բայց հենց օսմանյան թուրքերը պետք է հանդես գային բոլոր թուրքերին միավորելու մի «հզոր համայնքի մեջ», ազատագրելու բոլոր թուրքերին օտարերկրյա տիրապետությունից (126, էջ 27—28)։ Ահավասիկ այսպիսի պանթուրքիստական լոզունգները պետք է հաջողություն բերեին իրենց պատերազմական արկածախնդրությանը, մտածում էին Էնվերը, Թալեաթը և երիտթուրքական մյուս ղեկավարները։

Էնվերն անձամբ էր գլխավորում «Թուրանական երիտասարդական շարժումը» («Իզցի»), որ հիշեցնում էր անգլիական տղաների սկաուտական շարժումը։ Այս կազմակերպության խորհրդանիշը գորշ գայլն էր՝ «բոզկուրտ» (108, էջ 191)։

Պատերազմի նախօրյակին թուրք շովինիստ Ջելալ Նուրին հռչակում էր, որ Իրաքը, Եմենը պետք է դառնան լրիվ թուրքական, այնտեղ պետք է տիրապետի թուրքերեն լեզուն, որ կայսերական շահերի պահպանման, թուրքերի գոյության համար անհրաժեշտ է թուրքացնել արաբական հողերը, սաղմի մեջ ճնշել արթնացող նացիոնալիզմն արաբ երիտասարդ սերնդի մեջ։ Ըստ նրա՝ «արաբները դժբախտություն են Թուրքիայի համար», «թուրքական պատերազմական նվաճող ձին ավելի լավ է, քան մի այլ ազգի մարգարեն» (126, էջ 25)։ Ընդհանրապես «օսմանյան կառավարության տեսությունն ու պրակտիկան մշտապես հանգում էին ոչ թուրքի դեմ թուրքին պաշտպանելուն» (119, էջ 4)։

Ոմանք հավաստում են, թե Նազըմ բեյը խիստ ազդվել էր Մ. Լեոն Կահունի գրքից, որտեղից նա տվյալներ էր քաղել վաղ թուրքերի և մոնղոլների քաջագործությունների մասին։ Զիա Գյոք Ալփը, որը 1909-ին երիտթուրքերի համագումար էր եկել Դիարբեքիրից, գովերգում էր Աթիլային, Չինգիզին, Օգուզ խանին, ապացուցում, որ թուրքերի հայրենիքը Թուրքիան չէ, ոչ էլ Թուրքեստանը, այլ լայնատարած Թուրանի հողը։ Նա ասում էր, թե թուրք ազգությունն ավելի առաջնային է, կարևոր, քան իսլամը, որ գլխավորը ռասայական հպարտությունն է։ Օսմանի, Ալթայից եկած թուրքերի առաջնորդի գովքը սրանց ամենասիրված թեման էր (126, էջ 15, 18, 19)։

Ահա թե ինչպես է ներկայացնում խնդիրը գերմանացի արևելագետ, հայագետ Յոզեֆ Մարկվարտը. երիտթուրքերը մտածում էին այսպես՝ «Երբ այլևս չեն լինի հայերը, այլևս չի լինի հայկական հարցը»։ Նա համոզված էր, որ երիտթուրքերն էին կազմակերպել Ադանայի սարսափելի կոտորածները, թեև Եվրոպայում լիբերալի անուն էին հանել։ Մարկվարտը գտնում է, որ «մեծ դահիճ Աբդուլ Համիդից» նրանք առաջ անցան։ Նա հիշատակում է 1910-ին Սալոնիկի համագումարում իթթիհադի ընդունած գաղտնի բանաձևը, ըստ որի կայսրությունը դառնալու էր զուտ թուրքական՝ քրիստոնյա, ոչ թուրք տարրերի վերացման միջոցով։ Այնուհետև Մարկվարտը մատնացույց է անում 1913—1914 թթ. երիտթուրքերին կայզերական Գերմանիայի ցույց տված ծառայության քաղաքական հետևանքները հայ ժողովրդի շահերի տեսակետից (103)։

Երիտթուրքական կառավարողները Գերմանիայի հետ դաշինքին կռթնած էին ուզում բացել դեպի Թուրան տանող ճանապարհը, նախապես թուրքացնելով երկրի ներսը։ Երիտթուրքական ղեկավար կորիզը այս խնդրի իրականացումը չէր պատկերացնում առանց արևմտահայության «վտանգի» վերացման։ Էնվերն ու Նազըմը, Թալեաթն ու Բեհաէդդին Շաքիրը համոզված էին, որ պատերազմը բացելու էր «Թուրանի ճանապարհը», որ Գերմանիայի աջակցությամբ գրավելու էին թե՛ Իրանը, թե՛ Կովկասը։ Բեհաէդդին Շաքիրն իրեն և իր գործընկերներին համեմատում էր Քրիստոսի, Մովսեսի, Մահմեդի հետ և ասում էր, թե իրենք ուժեղ կամքի տեր մտավորականներ են և պետք է հիմնեն «Թուրանի կրոնը» (40, էջ 161—162)։ Երկրի ներսում իրականացվում էր թուրքացում քաղաքական-ազգայնական միջոցներով, հանցագործ բարբարոսացում «ներքին գաղութացմամբ և հայկական կոտորածներով» (118, էջ 152—153)։ Պանիսլամիզմն իր տեղը զիջել էր ռասայական պանթուրքիզմին, որն իր նպատակն էր հռչակել Վոլգայի, Թաթարիայի, Արևմտյան Սիբիրի, Թուրքեստանի գավթումը (118, էջ 176—173, 181—182)։ Այս նպատակով նրանք ստեղծում էին «թուրքական Թուրքիա», Անատոլիան դարձնում էին թուրքական երկիր, վերացնում էին հայությանը (118, էջ 185)։

Ամերիկացի Գ. Մոնտգոմերին 1915-ի հայոց կոտորածների պատճառների բացահայտմանը նվիրած իր հոդվածում ցույց էր տվել, որ «հանցանքի պլանը գծվել էր և ղեկրեկավարվել իթթիհադի կենտրոնական կոմիտեի կողմից» (107): Այս հոդվածում օգտագործվում են 1919-ի հունվարին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին հանրածանոթ գերմանացի հայասեր գործիչ Արմին Տ. Վեգների նամակում բերված փաստերն ու վկայությունները: Իր պատմական հայրենիքին տեր լինելու հայ ժողովրդի բնական ձգտումը հակասում էր երիտթուրքական նվաճողական պլաններին: Հայկական սնպը պետք է վերացվեր համաթուրանականության ճանապարհից:

Համաշխարհային պատերազմն այն պատեհ առիթն էր, երբ խնդիրը կարելի էր իրականացնել պակաս աղմուկով, առավել «հաջողությամբ»: Եվ արևմտահայությունը ոչնչացվեց վանդալիզմի բոլոր օրենքներով: Հայի բույնը քանդվեց: Հայոց պատմական հայրենիքը, որտեղ ստեղծվել է մեր ժողովրդի բազմահարուստ քաղաքակրթությունը, ամայացավ: Հայ առաջադեմ մարդիկ այստեղ էին ուզում վերահաստատել իրենց կորսված պետականությունը: Սակայն երիտթուրքական շովինիստները դաժան հարված հասցրին մեր ժողովրդի միանգամայն բնականոն, օրինաչափ այդ ձգտումներին:

Պատերազմը չարիք էր բոլորի համար: Սակայն օրհասական հանդիսացավ առանձնապես հայ ժողովրդի համար: Խոսելով պատերազմի վնասների մասին, ոչ ոք աչք չի փակում այն աղետների հանդեպ, որոնց ենթարկվեցին օսմանյան կայսրության մյուս ժողովուրդները և հենց ինքը՝ թուրք ժողովուրդը: Երկրի համար համապարփակ աղետի ժամանակներ էին: Թուրքական բանակի կորուստները պատերազմում կազմեցին 488.798 մարդ (64. էջ 473):

Պատերազմի տարիներին երկրի բնակչությունը տառապում էր սովից և համաճարակներից: Շուկայից, վաճառատնից և արհեստից ոչինչ չէր մնացել: Խանութները և աշխատավայրերը փակվեցին: «Կլայեկչու, ղոդիչի բացակայությունն անգամ դժվար կացություն էր ստեղծել... Երկիրը գտնվում էր խիստ ողորմելի վիճակում: Անոթությունը, աղքատությունը, բարոյական անկումը, քարտերով տրվող ցեխի պես հացն ստանալու համար ժողովրդի իրարանցումը, այն ձեռք չբերողների

ճիչերը, սովից ուշաթափվողները սովորական էին դարձել: Հաց մուրացողներին թիվ ու սահման չկար: Փողոցները անոթիների և թշվառների տունն էին դարձել» (12, 29.7.1969):

Երկրի գյուղատնտեսությունը քայքայված էր: Թույլ զարգացած արդյունաբերությունն անկում էր ապրում: Տրանսպորտը քայքայվեց: Ֆինանսները քաոսային վիճակի մեջ էին: Գները աճել էին աննկարագրելի չափերով: Ամենուրեք քաղցն էր թևածում: Տիֆը հնձում էր մարդկանց: Թուրքական պետականությանը հատուկ կաշառակերությունը չափ ու սահման չուներ:

Սակայն, ինչպես նշվեց, պատերազմն ամենամեծ հարվածը հասցրեց արևմտահայությանը: Երիտթուրքերն օգտվեցին պատերազմական իրավիճակից գործի դնելու իրենց նախապես մշակված հայասպան ծրագիրը: Վ. Ի. Լենինին 1917-ի նոյեմբերին հղած «Զեկուցագիր Տաճկաստանի մասին» փաստաթղթում Վ. Տերյանը գրում էր, որ «երիտասարդ թուրքերի կառավարությունը, ամբողջապես կլանված պանիսլամիզմի գաղափարներով, ղեկավարությամբ Էնվերի ու Թալեաթի... օգտվեց համաշխարհային հրդեհից՝ հայկական հարցն ամենաարմատական կերպով լուծելու համար: Այդ կառավարությունը վճռեց ֆիզիկապես ոչնչացնել հայերին, որպեսզի այդպիսով մի անգամ ընդմիշտ վերջ տա Հայաստանի խնդրին» (38, գիրք V—VI, էջ 410):

Ջեյմս Բրայսն իր տեսակետն ունի և խիստ որոշակի. դա մի փորձ էր Թուրքական կայսրությունում հայ քրիստոնյաների արմատախիլ անելու համար (84, էջ 4):

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով պատերազմի նախօրյակին Թուրքիայի տիրապետության տակ ապրող հայերի թիվը 2,1 միլիոն էր (ոմանք այդ թվին համաձայն չեն և այն 3 միլիոն են համարում): Այս թվից 407 հազարն ապրում էր Կիլիկիայում, 1 163 հազարը՝ վեց վիլայեթներում: Այդ վեց վիլայեթներում քրդերի, թուրքերի և այլ ազգությունների առկայության պայմաններում հայերը մեծամասնություն էին և 40 տոկոսն էին կազմում:

Կայսրության 20—25 միլիոն բնակչության մեջ կազմելով 10 տոկոսը, հայերն իրենց ձեռքում էին պահում ներմուծող առևտրի 60 տոկոսը, արտածող առևտրի 40 տոկոսը և ներ-

քին առևտրի 80 տոկոսը։ Սակայն թուրքական տիրապետության պայմանները 1914-ին շատ ավելի վատ էին, քան Ղրիմի պատերազմի ժամանակ (85, էջ 7)։

Կ. Պոլսի «Փեյամ» թերթը (17.8.1922, № 1328) հրապարակել էր իթթիհադականներին ընդդիմադիր մի քաղաքական գործչի տեսակետը. «Հայերի և հույների կոտորածը կատարվել է գեռմենների ձեռքով, քանի որ նրանք ցանկանում էին նրանց տեղը բռնել առևտրում և տեր դառնալ նրանց հարստությանը»։

Երիտթուրքերի պարագլուխները հարմար համարեցին պահը. պատերազմական վիճակի ծխածածկույթով կարելի էր արդարացնել ամեն մի չարագործություն։ Ռեֆորմների շուրջը տեղի ունեցած բանակցություններից (1912—1914 թթ.) նրանք համոզվել էին, որ հայերը վաղ թե ուշ հասնելու էին իրենց ինքնավարության իրականացմանը։ Նրանք համոզված էին, որ ընթացիկ պատերազմում հայերը լուրջ ուժ էին հակառակորդի ձեռքում, և անհրաժեշտ էին համարում ոչնչացնել ավելի ուժեղանալու որևէ հնարավորություն։ Երիտթուրքերն իրենց ներքին քաղաքականության իրականացման մեջ հանդիպել էին հայերի ընդդիմադրությանը և նրանց Միջագետք տեղափոխելու, հայ ժողովրդի ուժը թուլացնելու մեջ էին տեսնում իրենց հաջողության գրավականը։

Ընթերցողին արդեն ծանոթ Ա. Վամբերին 19-րդ դարի վերջին մի գրքույկ էր հրատարակել, որտեղ խոստովանում էր. «Իսկական թուրք համարվում են Փոքր Ասիայի սելջուկների հետնորդները և այդ իսկական թուրքերի թիվը Թուրքիայում խիստ քիչ է, համեմատած կայսրության մեջ բնակվող մյուս ցեղերի թվի հետ»։ Նա գրում էր, որ «թուրքերին չի հաջողվել ցեղական տեսակետից մեծամասնություն կազմել, որն անհրաժեշտ է պետության միության համար»։ «Երբ թուրքերի մեջ զարթնեց ազգայնության գաղափարը, հին աշխարհակալների հետնորդները դառնությամբ տեսան, որ Թուրքիայում կամ գեթ նրա արևմտյան մասում իսկական թուրք գրեթե չկա»։ Այնուհետև նա նշում էր, որ «ասիական Թուրքիայում դրությունն ավելի վատ է, վասնզի քրդերը, հայերը, հույները, արաբները, ասորիացիները, քաղդեացիները և այլն, կազմում են բոլոր բնակիչների ավելի քան երկու երրորդ մասը» (37, № 137, 1898)։

Պատերազմի նախօրյակին իրավիճակը համարյա չէր փոխվել։ Երիտթուրքական կենտկոմի անդամ Նաջի բեյը օսմանյան պառլամենտի հայ անդամ Վահան Փափազյանին պնդում էր, որ իրենց չէր բավարարում հայերի չեզոքությունը։ Նա պահանջում էր կամավորական խմբեր ստեղծել ընդդեմ Ռուսաստանի։ «Պետք են մեզ նաև ձեր միջոցները, նյութականը»,— ասում էր նա։ «Պատերազմից հետո կովկասյան ժողովուրդները ֆեդերատիվ միավոր կստանան։ Ռուսահայերը կարող են վերաբնակվել Կովկաս և ձուլվել իրենց ռուսահայ եղբայրների հետ, կովկասյան մուսուլմանները կանցնեն Փոքր Ասիա և, այդպիսով, ձեր վաղուցվա երազանքը կիրագործվի» (48, 1916, VI, էջ 46)։

1914-ի հուլիսին Հ. Հ. դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովի որոշումներում արձանագրվեց. «Նկատի ունենալով ժամանակից կառավարության հետապնդած խափանարար ազգությանց հանդեպ բարենորոգումներու արդեն իսկ աղճատված ծրագրի անշեղ գործադրության, ընդհանուր ժողովը հանգավ այն եզրակացության, որ կուսակցությունը շարունակելու է մնալ անհողդողդ ընդդիմադիրի և անաշառ քննադատի դերի մեջ հանդեպ իթթիհատի, պայքարելով անոր ազգայնական փառամոլ քաղաքականության դեմ» (31, թ. 2—3)։ Միևնույն խոսքը ոչ թե անկախության կամ երիտթուրքերի համաիսլամական քաղաքականության դեմ պայքարի դրոշ պարզելու մասին է, այլ ռեֆորմները չիրագործելուց դժգոհելու և ընդդիմանալու մասին։ Ինչևէ, արդեն ուշացել էին։ Ժամանակը կորսված էր։ Իսկ երիտթուրքական մարդասպան պարագլուխները պատրաստ էին հայությանը հոշոտելու։

«Սա գավառականություն է,— գրում էր Բեհաէդդին Շաքիրը, Կ. Պոլսից եկած պատվիրակներից մեկը.— Դուք Ռուսաստանի կողմն եք անցնում մի պահի, որից կրիտիկական չէր եղել։ Դուք հրաժարվում եք պաշտպանել կառավարությանը։ Դուք մոռանում եք, որ օգտվում եք նրա հյուրընկալությունից»։ Բայց հայերը մնացին իրենց որոշման վրա։

Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմի բռնկելուց առաջ երիտթուրքերը մեկ անգամ էլ փորձեցին հաղթահարել

հայերի դիմադրությունը։ Նրանք ավելի չափավոր առաջարկություններ արեցին և բանակցությունների մեջ մտան յուրաքանչյուր վիլայեթի ներկայացուցիչների հետ։ Վանում բանակցությունները վարում էին նահանգապետ Թահսին բեյը և Նաջի բեյը։ Մուշում՝ Սերվեթ բեյը և Իսհան բեյը։ Էրզրումում՝ նույն Թահսին բեյը և ուրիշներ։ Կովկասում հայերի ապստամբության նախագծից երիտթուրքերը ձեռք քաշեցին։ Դրա փոխարեն օսմանյան հայերը պետք է միանային անդրկովկասյան մահմեդական բեկական, խանական վերնախավին, որի խոստումը, ըստ երիտթուրքերի, անտարակուսելի էր։ Հայերը նորից մերժեցին (115, էջ 107)։

Էնվերը 1914-ի օգոստոսի 5-ին մի հրաման արձակեց, որով պանթուրքական, պանիսլամիստական խնդիրներն իրականացնելու նպատակով հատուկ զորամասեր էին կյանքի կոչվում։ Սրանք Ռուսաստանի դեմ ուղղված ընդհանուր «Իսլամական հեղափոխական բանակի» (Umum alemi Islam teskilâti) բաղկացուցիչ ջոկատներն էին հանդիսանալու։

1935-ին թուրքական մի թերթում տպագրած իր հոդվածաշարում Ազիզ Սամիհը (որը պատերազմի ժամանակ օսմանյան ռազմական մինիստրության պատմության բաժնի պետն էր), չի թաքցրել, որ հայկական գյուղերի վրա հարձակվելու, հայերի նկատմամբ խժդժություններ սարքելու հրամանները տրվել էին Սարիղամիշի ճակատամարտից առաջ (1914-ի հոկտեմբերի 29-ի և նոյեմբերի 5-ի միջև)։ Հայ տղամարդկանց արդեն այն ժամանակ բռնի կերպով որպես քաշող ուժ օգտագործեցին։ 1914-ի դեկտեմբերի սկզբներին դոկտոր Բեհաէդդին Շաքիրն արդեն օսմանյան 34-րդ դիվիզիայի շտաբում էր, Մուշում։ Իթթիհադի բարձրագույն անդամի, գաղափարախոսի, քաղաքական անձնավորության ներկայությունը բանակի շտաբում կասկած չի թողնում, որ Փարիզում կրթություն ստացած այս «մտավորականը» կոտորածների գլխավոր կազմակերպիչներից էր,— եզրակացնում է անգլիացի ուսումնասիրող Քր. Ուոկերը (127, էջ 200)։

1914-ի ավարտին երիտթուրքական ղեկավարությունն արդեն գործնական հողի վրա էր դրել Ուրմիայի շրջանում նեստորական ասորիներին ոչնչացնելու ծրագիրը։ Խնդիր էր դր-

ված վերացնել այն բոլոր ոչ թուրք տարրերին, որոնք անջատում էին Անատոլիայի թուրքերին Բաքվի և իրանական Ադրբեջանի մահմեդական բնակչությունից (126, էջ 30)։ Թեքին Ալփը գտնում էր, որ Իրանում բնակչության մեկ երրորդը թուրքական արյուն ունի և պետք է նորից վերադառնա թուրքականության գիրկը։ Նրանք բոլորը, նաև շահերն ու մեծ վեզիրները, փիլիսոփաներն ու գիտնականները, որ կորցրել են իրենց թուրքական գիտակցությունը և ասիմիլացվել են՝ գրելով, խոսելով պարսկերեն, պետք է լինեն թուրքեր։ Թուրք հեղինակը գտնում էր, որ Թուրքիայի և Պարսկաստանի թուրքերը պետք է լինեն նույն հարաբերության մեջ, ինչպիսին ունեն Բավարիան և Պրուսիան (126, էջ 31—32)։ Երիտթուրքերի կարծիքով սա շատ անհրաժեշտ դրդապատճառ էր հայերին ոչնչացնելու համար, մի բան, որ նրանք կյանքի կոչեցին ռազմադաշտում անհաջողության մատնվելուց մեկ երկու ամիս հետո։

Մի թուրք ժանդարմ հայտարարել էր գերմանական կարմիր խաչի աշխատակցուհուն. «Նախ մենք կսպանենք հայերին, ապա քրդերին» (106, էջ 153)։ Ամեն մի ոչ թուրք ազգություն օսմանյան կայսրությունում դրված էր ոչնչացման սպառնալիքի տակ։

Անգլիական դիվանագետ, պետական գործիչ Ռոբերտ Սեսիլը գրել է, որ օսմանյան կայսրության կազմում Ռուսաստանի դեմ կռվելու պահանջին հայերի խիզախ մերժումին թուրքական կառավարությունը պատասխանեց սիստեմատիկ կոտորածով՝ 1915-ին։ Բնակչության երկու երրորդը արմատախիլ արվեց առավել սառնասիրտ դաժանությամբ (78)։

Մահմեդական մոլեռանդությունը չէր հայոց կոտորածի գլխավոր շարժիչը։ Ո՛չ նախաձեռնությունը բխում էր Կ. Պոլսի կենտրոնական կառավարությունից, որը պլանավորել էր օսմանյան կայսրությունում հայոց ազգի սիստեմատիկ ոչնչացումը։ Անգլիական աղբյուրները հավաստում են, որ այդ նպատակով միասնական մեթոդ էր մշակված ամենուրեք հայերի նկատմամբ նույնն անելու համար։ Հայերին տեղահան էին անում կանոնավոր զորքերը և ժանդարմները, նրանց կոտորում էին ճանապարհներին չեթեների բանդաները, որոնք

բաղկացած էին բանտերից ազատված քրեական հանցագործներից։ Երբ աքսորյալները անցնում էին գյուղերի միջով սիրունատես կանայք, առողջ երեխաները էժան գնով, իսկ երբեմն առանց գնի տրվում էին թուրք գյուղացիներին (126, էջ 20, 21)։

Փաստ էր, որ հայերի կոտորածն իրագործելու համար երիտթուրքերը համատեղում էին պանիսլամիզմը և թուրքական նացիոնալիզմը։

Ամերիկացի հեղինակ Կլեր Բրայսը գալիս է այն եզրակացության, որ 1915-ին հայերի հետ կատարվածը օսմանյան կայսրությունում 25 տարիների ընթացքում հայերի շուրջը կատարված արյունոտ ու ողբերգական անցքերի տրամաբանական վերջնագիծն էր։ Նա 1915-ի գլխավոր հանցավոր հռչակում էր օսմանյան կառավարությունը (116, էջ 118—120)։

Հալեպի գերմանական տեխնիկական դպրոցի մի ուսուցիչ, որը որպես բողոք հայոց կոտորածների դեմ՝ հրաժարական էր տվել, ռայխստագին հղած իր նամակում ցույց էր տալիս, որ երիտթուրքերը երկիրը թուրքացնելու ճանապարհին գլխավոր խոչընդոտ համարում էին քրիստոնյա ազգություններին, հայերին, սիրիացիներին և հույներին և վախենում էին նրանց կուլտուրական ու տնտեսական գերազանցությունից։ Նա մատնանշում էր թուրքերի մտավոր կարողությունների սահմանափակ լինելու փաստը հույների, հայերի, արաբների, հրեաների համեմատությամբ (126, էջ 37—38)։

Արդեն 1918-ին, համաշխարհային հռչակ ունեցող ֆրանսիական պատմաբան Ժակ դը Մորգանը Փարիզում հրատարակեց մի գիրք, որը վերնագրել էր՝ «Ընդդեմ բարբարոսության Արևելքում»։ Այստեղ ամփոփված էին պատերազմի տարիներին նրա տպագրած բազմաթիվ հոդվածները ֆրանսիական թերթերի էջերում։ Գրքի 5-րդ գլուխը վերնագրված էր «Թուրքիայի ներսում» (1915—1917)։ Այնտեղ մենք կարդում ենք. «Երիտթուրքերը իզուր թաքցնում են իրենց հանցագործությունները, որոնք նրանք կատարում են ամեն օր։ Այդ հանցագործությունների մասին տեղեկությունները հասնում են մեզ մեծ դժվարությամբ և հաճախ նրանք լրիվ չեն» (108, էջ 176)։ Մորգանը հանգամանորեն, բազմաթիվ փաս-

տաթղթերի, ականատեսների պատմածների, թերթերի լրատվության և այլ նյութերի հիման վրա այն եզրակացության է հանգում, որ երիտթուրքերը իրենց քաղաքականությունն իրականացնում էին հետևյալ կերպ.

1. «Երիտասարդության մոբիլիզացիա այն հաշվով, որպեսզի քրիստոնեական կենտրոններից վերացնեին դիմադրության համար ունակ տարրերին, այդ մարդկանց օգտագործելով ճանապարհային և հողային աշխատանքներում և հետո նրանց զանգվածորեն ոչնչացնեին։

2. Քրիստոնեական կենտրոնների վերացում և բնակչության մի մասի կոտորած, երիտասարդ կանանց ու աղջիկների վաճառք և ցրում հասարակաց շուկաներում (առավել հաճախ 5 ֆրանկ ամեն շնչի համար), «անհավատների» շարժական և անշարժ գույքի կողոպուտ։

3. Բնակչության մնացյալ մասի տեղահանություն, շարունակելով կոտորածը ճանապարհին։ Ծերերի և արական սեռի երեխաների ոչնչացում, դեռևս կենդանի մնացած կանանց և երիտասարդ աղջիկների հանձնում տեղերի մուսուլմաններին։

4. Կենդանի մնացած անձանց կենտրոնացում Միջագետքի ճամբարներում, այնպիսի կլիմայական ծանր պայմաններում, որպեսզի տեղահանվածների մեծամասնությունը զոհվեր» (108, էջ 178—179)։

«Պատմությունը դեռևս երբեք չէր իմացել այսպիսի ժողովուրդների և այսպիսի ձևի կոտորած» (79, էջ 15)։ Այս խոսքերն ասվում էին 1919-ին Լոնդոնում գումարված մի միտինգի ամբիոնից։ Այսօրվա պարոնայք թուրք հեղինակներից պահանջվում է սոսկ մի առաքինություն՝ ճշմարտության, պատմության փաստերը հարգելու ունակություն։ Մի բան, որից նրանք զուրկ են։

Արևմտագերմանական «Էմմա» ամսագրում (№ 3, 1978) տպագրած «Հենրի Մորգենթաու ավագի գործերը» իր հոդվածում Նյուրնբերգի պրոցեսում ԱՄՆ-ից գլխավոր մեղադրող Ռ. Ջեկսոնի տեղակալ Ռոբերտ Կեմպները գրել է. «Թուրքական կառավարության հրամանով 1,4 միլիոն հայերի սպանությունը մեր դարաշրջանի գենոցիդի առաջին ծրագիրն էր։ Հայերի համընդհանուր տեղահանության գաղափարը, որ մշակել էր երիտթուրքական կոմիտեն առաջին համաշ-

խարհային պատերազմի ժամանակ, հանգեցրեց հայ ժողովրդի $^{2}/_{3}$-ի զանգվածային ոչնչացման»։

Երզրումը ռուսական բանակի գրավելու նախօրյակին Բեհաէդդին Շաքիրը ասում էր. «Հայտնեցեք ռուսական զորքերի հրամանատարին, որ եթե թեկուզ մի մազ պակասի Էրզրումի թուրքերի գլուխներից, ապա կենդանի մնացած բոլոր հայերը կոչնչացվեն։ Մեզ պետք է, որպեսզի Կ. Պոլսից մինչև Հընդկաստան ու Չինաստան լինի լոկ մահմեդական բնակչություն։ Սիրիան կլինի կապող օղակ Ասիայի և Աֆրիկայի միջև. գերմանացիների գիտականությունը և կազմակերպչական տաղանդը ու թուրքերի արի ձեռքը կիրականացնեն այդ վիթխարի նախագիծը» (103, էջ 133)։

Ֆրանսիացի Ժակ դը Մորգանը հենվում է չեզոք երկրների (Շվեյցարիա, Հոլանդիա, Իսպանիա, սկանդինավյան պետություններ), ինչպես նաև ավստրիական, գերմանական, ամերիկյան ականատեսների՝ կրոնականների, բուժքույրերի, բժիշկների, ուսուցիչների, վաճառական ճանապարհորդների և այլոց նկարագրությունների վկայությունների վրա և սկզբունքային դիրքերից դատապարտում երիտթուրքերի ժողովրդակործան քաղաքականությունը։ «Ոչինչ չի փոխվել V և VI դարերի ներխուժումների ձևերի և եղանակների մեջ։ Սպանություններ, բռնություններ, կողոպուտ, սարկացում, սրանք բնորոշ գծեր են բոլոր թշնամիների գործելակերպի՝ ինչպես տևտոնների, այնպես և նրանց հարազատ թուրքերի համար» (108, էջ 186)։

1918-ի հունվարին Կ. Պոլսում կազմված մի հավաստի տեղեկանքում (Փարիզի Նուբարյան մատենադարան) Հայաստանում կատարված կոտորածների հեղինակները բաժանված են երեք խմբի. տեսաբաններ-ոգեշնչողներ, կազմակերպիչներ, կատարողներ կամ դահիճներ։

«Միություն և առաջադիմություն» կենտկոմի բոլոր անդամները մեղավոր էին ճանաչվում։ Սրանք թե որոշումներն էին ընդունել, թե գործնական կատարողներն էին այդ չարագործության։ Փաստաթղթի հեղինակները նշում են, որ երիտթուրքական պարագլուխներն իրենց սկզբունքն ընդօրինակել էին «Մոնրոյի դոկտրինայից»՝ հռչակելով «Թուրքիան թուրքերի համար» իրենց լոզունգը։ Բոլոր մինիստրները, նրանց

տեղակալները, բոլոր դեպուտատներն ու սենատորները, մեծ ու փոքր պաշտոնյաները մասնակցեցին «այդ ճակատագրական որոշման իրականացմանը»։

Խոսելով Սալոնիկի երիտթուրքական ղեկավար կորիզի մասին, փաստաթղթի հեղինակները մասնավորապես շեշտում են հայերի վերացման միջոցով տնտեսական գետնի վրա մրցակցությունը հաղթահարելու, առևտուրը սեփական մենաշնորհ դարձնելու, շահույթներն ավելացնելու նրանց ձգտումը։ Սրանց շարքում առաջինը հիշատակվում է սալոնիկցի Ջավիդ բեյը, որը երիտթուրքական առաջին կառավարության մեջ ֆինանսների մինիստրն էր։ Սա ամեն ինչ անում էր, որպեսզի հնկայական դրամական միջոցները կենտրոնանային սալոնիկցի երիտթուրքերի ձեռքում։ Քրիստոնյաների հարըստության գավթումը և հանձնումը երիտթուրքական վերնախավին կատարվեց նրա պլանին համապատասխան։ Ջավիդ բեյը միջնորդ էր, երիտթուրքերի կաշառակերության գլխավոր գիտակն ու կազմակերպիչը, մինչդեռ, փաստաթղթի հեղինակների համոզմամբ նրանց մեծամասնությունը, այդ թվում Թալեաթը գլուխ չէին հանում ֆինանսական նրբություններից։ Ֆրանսիայում երկար տարիներ ապրած ու մարդասիրության մասին ճառախոսող, նախորդ գրքից մեզ արդեն ծանոթ Ահմեդ Ռիզա բեյը չխորշեց բարձր ամբիոնից հայտարարել. «Ես այնքան եմ սիրում արդարադատությունը, որ անհրաժեշտության դեպքում սեփական ձեռքով կկոտորեի բոլոր հայերին»։ Այս անգամ մարդակերական հայտարարությունից շատ չանցած տեղի ունեցավ 1909-ի Ադանայի արյունահեղությունը։ Ահմեդ Ռիզա բեյն այն ժամանակ պառլամենտի նախագահն էր և չէր կարող չիմանալ հայերին կոտորելու վերաբերյալ երիտթուրքական ղեկավար կորիզի դաղտնի որոշման մասին և, փաստորեն, հասարակական կարծիքը պատրաստում էր այդ դարհուրելի փաստին։ Այնուհետև հիշատակվում են կող Ռիֆաթ բեյը և նրա մասնակցությունը կատարված չարագործություններին։ Փաստաթղթում բերվում է «Սատմբուլ» թերթին թագաժառանգի տված մի հարցազրույցը, որտեղ նա զարմանք է արտահայտում այն կապակցությամբ, որ երբ երիտթուրքական պարագլուխները՝ Թալեաթը, Էնվերը և Ջեմալը կարողացել էին այդքան ծավալուն

2—Ջ. Կիրակոսյան

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

ժողովրդապատ ծրագիր իրականացնել։ Սակայն, փաստաթղթի հեղինակները շեշտում են այն հանգամանքը, որ ազգի գլխավոր զանգվածի օժանդակության պայմաններում էր հնարավոր կատարել նման մի համապարփակ ոճրագործություն։ Ի հաստատումն այդ մտքի, ասվում է, որ նույնիսկ ամենամակերեսային խուզարկության միջոցով Կ. Պոլսում, թե այլուր թուրքերի բնակարաններում կարելի է գտնել հայերի ունեցվածքի հետքեր, հայ կանայք ու աղջիկներ գերված ու սարկացված թուրք զոռբաների անասնական քմայքների համար։

Փաստաթղթի հեղինակները մի հարթության վրա են դնում բոլոր թուրքերին. ազետ, հետամնաց զանգվածը, բատ նրանց, առաջնորդվում է կրոնական, ցեղային բացառիկության բնազդով. կրթված, գրագետ տարրերը գործում էին իրենց հակահայկական քաղաքական համոզմունքներով։ Որպես օրինակ հիշվում է Տրապիզոնի բժշկական գործի պետական տնօրեն «դոկտոր» Ալի Սաիբը. թերթերում հրապարակվեցին նրա մոտ բուժման գնացած հայ կանանց ու որբերի կանխամտածված թունավորումների մասին։ Մյուս օրինակը վերաբերում է իթթիհադի կենտկոմի անդամ, «արդարադատության» մինիստր Իբրահիմ բեյին, որը բացել է բանտերի դռները, քրեական հանցագործներից հայասպանների հատուկ ջոկատներ կազմավորելու համար։ Նա չէր մոռանում կլորիկ գումարներ յուրացնել նաև այս սև գործի իրականացման միջոցին։

1922-ի օգոստոսի 19-ին անդրադառնալով պատերազմի հանցագործ երիտասարդ թուրքերի պարագլուխների խաղացած սև դերին, «Ճակատամարտ» թերթը հատկապես մատնացույց էր անում Ջավիդ բեյին։ Թերթը ցույց էր տալիս, որ նա Թալեաթի ու Էնվերի մասնավոր խորհրդատուն էր, «ամեն կերպ ղանոնք կըգրգռեր ու կըխրախուսեր։ Պետք է լավ ըմբռնել, թե սելանիկցիները այս երկրին թե քրիստոնյաներուն և թե մահմեդականներուն ինչ գեշություններ ըրած են»։ Անոնք նախ «Թանինին» միջոցով հույներուն դեմ սկսան բուռն պրոպագանդ մը, միևնույն ատեն ձեռք առին հայերը։ Ժպտեցան անոնց դեմքին... Ընդհանուր պատերազմի ընթացքին բոլոր օսմանյան տարրերեն զինվոր առնվեցավ, միայն

դենմեները չառնվեցան ու անոնց շատ դրամ շահեցուցին։ Եթե այս պարագան ալ նկատի առնենք, այն ատեն կըհասկընանք, թե իթթիհադի հրեական ղեկավարները որոնք են և որու համար կաշխատին»։

Հայոց գենոցիդի մասին շատ է գրվել։ Եվ մենք այստեղ մտադիր չենք տալ դեպքերի և իրողությունների սիստեմատիկ շարադրանքը։ Մենք ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրելու երիտթուրքական ջարդարարների այն որոշումների ու գործողությունների վրա, որոնք բնորոշում են հայոց ոչընչացման կանխամտածված բնույթը։ Մենք դրանով իսկ հերքում ենք այսօրվա թուրքական քաղաքական պրոպագանդայի ճիգերը՝ խճողելու փաստերը, կեղծելու պատմական իրականությունը, արդարացնելու երիտթուրքերի մարդասպան բարքերը։ Այսօր արդեն զուր են թուրք խաբեբաների ջանքերը, քանի որ փաստաթղթերով, ականատեսների վկայություններով ապացուցված է կատարվածի ողջ ողբերգությունը, ապացուցված է համապարփակ գենոցիդի կազմակերպման սահմանկեցուցիչ էությունը։

1915-ի փետրվարի 27-ին ռազմական մինիստր Էնվերը ծածկագիր հեռագրով հրամայում էր բանակների հրամանատարներին, զորամասերի սպայությանը մասնակցել հայ ժողովրդի ոչնչացմանը. հինգ տարեկանից մեծ բոլոր օսմանահպատակ հայերին դուրս տանել քաղաքներից ու ոչնչացնել... բանակում ծառայող բոլոր հայերին անջատել իրենց զորամասերից և հեռացնելով առանձին վայրեր գնդակահարել...

Նույն ամսին Ադանայի իր ներկայացուցիչ Ջեմալ բեյին ուղղված հրահանգի մեջ «Իթթիհադ վե Թերաքքի» ղեկավարության անունից ասվում էր, որ «Ջեմիեթը» («Ընկերությունը», նույն կուսակցությունը երբեմն այդպես էին անվանում) որոշել է ոչնչացնել երկրում ապրող բոլոր հայերին «կենդանի չթողնելով նրանցից ոչ մեկին» և կառավարությանն այդ հարցում գործողությունների լրիվ ազատություն է շնորհել։ «Հասկանալի է, որ կառավարությունը համապատասխան հանձնարարականներ կտա նահանգապետներին կոտորածն իրականացնելու անհրաժեշտության մասին։ Իթթիհադի ներկայացուցիչները կանեն ամեն հնարավոր բան այդ հարցի շուտափույթ լուծման համար»։ Թալեաթի, Էնվերի

այսպիսի մարդակերական բովանդակություն ունեցող երեսուն ծածկագրերը (իրենց արաբատառ թուրքերեն ֆոտոպատճեններով) առաջին անգամ լույս աշխարհ բերվեցին 1920-ին, երբ Լոնդոնում լույս ընծայվեցին Հալեպի կոմիտեի գլխավոր քարտուղար Նաիմ բեյի հուշերը (77)։ Նույն թվականին այդ գիրքը Փարիզում լույս տեսավ ֆրանսերեն (76), իսկ 1921-ին հայերեն հրատարակվեց Բոստոնում (3)։ Նաիմ բեյի հուշերը նոր հրատարակությամբ տպագրվեցին 1964-ին ԱՄՆ-ում։ 1965-ի մարտին Նաիմ բեյի պահպանած և փրկած ծածկագրերի տեքստերը ֆրանսերենից թարգմանեց, արաբատառ թուրքերեն տեքստերի հետ համեմատելով որոշ վրիպակներ շտկեց և հայերեն հրատարակեց թուրքագետ Ռուբեն Սահակյանը (70)։

Նաիմ բեյի փաստերը հավաստի են։ Տաշճյանը գրում է, թե դրանց «վավերականության մասին կասկածելու պետք չկա», որ նրանց «պարունակությունն ալ քայլ առ քայլ կհաստատվի գերմանական փաստաթղթերով» (44, էջ 70—71)։ Հանրապետության պատմության կենտրոնական արխիվում կա երիտթուրքական ղեկավարության 1915-ի ապրիլի 15-ի գաղտնի հրամանի թուրքական բնագրից կատարված թարգմանությունը՝ արևմտահայության պլանային ոչնչացման կազմակերպման գործում տեղական մարմինների անելիքների մասին (22)։ Առ այսօր և ոչ մի թուրք հեղինակ չի հերքել Նաիմ բեյի հրապարակած փաստաթղթերի իսկությունը։ Այս նյութերն արժեքավոր են նրանով, որ պահպանվել են։ Դրանք գլխավորապես վերաբերում են Մուշի վիլայեթի անցուդարձին, որովհետև այնտեղ է պաշտոնավարել Նաիմ բեյը և իր ձեռքի տակ ունեցած թղթերն է հանձնել հանրության ուշադրությանը։ Իսկ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Մուշի, Կիլիկիայի և այլ վայրերի թղթերը տակավին փականքի տակ են, թուրքական պետական արխիվների սնդուկներում, որոնց փականքները, կարծում ենք, ի վերջո կբացվեն։

Թուրքական «հերքման» իմաստությունը հանգել է նրան, որ այս կամ այն ճշմարտացի հրատարակությունների հազարավոր օրինակները գնվել ու ոչնչացվել են տարբեր երկրներում հավատարմագրված թուրք դիվանագետների ձեռքով։ Տարիներ շարունակ այս մեթոդն է կիրառվել, օրինակ, Վեր-

ֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի նկատմամբ։ Վերջին տարիներս թուրքական փող էր ծախսվում Դ. Բոյաջյանի՝ հայոց գենոցիդին նվիրված հավաստի փաստաթղթերի ու աղբյուրների ժողովածուն (83) ոչնչացնելու վրա։

1915-ի փետրվարի վերջին տասնօրյակին աշխատանքից ազատվեցին հայազգի պաշտոնատար անձինք, ծառայողները։ Հայ զինվորներին տարան աշխատանքային գումարտակներ (ամելիե թաբուրի)։ Հայ սպաները բանտարկվեցին. Ք. Ուոկերը հենվում է Ա. Թոյնբիի՝ սովետահայ պատմագիտության մեջ տակավին չօգտագործված մի հոդվածի վրա (123, էջ 363—364), ցույց տալու համար այն բարբարոսական մեթոդները, որ կիրառվում էին տեղահանվող կանանց ու երեխաների նկատմամբ։ Բարբարոս երիտթուրքերը դիմում էին կեղծիքի, հարևան թուրքերից հավաքած զենքերը նկարում էին և ուղարկում Կ. Պոլիս որպես «հայերի դավաճանության վկայություն» (127, էջ 201)։ Ք. Ուոկերը եզրակացրել է, որ հայերին ոչնչացնելու վերջնական որոշումը կայացվել է 1915-ի փետրվարի կեսերին։ Նա գրում է, որ խնդիրը միանգամայն պարզ էր. արմատախիլ անել Արևմտյան Հայաստանի հայերին։ Այսպիսի որոշումը բխեց 1910-ին երիտթուրքական համագումարում թուրքական ռասիզմի զարգացումից. թուրքական նացիոնալիզմ, գումարած «Թուրքիան պետք է լինի Արևելքում» պանթուրքիստների նշանաբանը, նշանակում էր, որ Հայաստանը պետք է դատարկվի հայերից (127, էջ 200)։ Նա հանգամանորեն վերլուծում է հայերին արմատախիլ անելու մեթոդները, անդրադառնում Զեյթունին՝ փոքրիկ հայկական Մոնտենեգրոյին (Չեռնոգորիային), Վանին ու այնտեղ Ջևդեթ բեյի խաղացած սև դերին, Կ. Պոլսում ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը տեղի ունեցած իրադարձություններին, այնուհետև Բիթլիսին, Խարբերդին, Մուշին, Սըվասին, Մուսա լեռան, Սասունին, Երզնկային, Տրապիզոնին։ Նա մի առանձին հատվածում անդրադառնում է ասորիների նկատմամբ թուրքերի կատարած հանցագործություններին։

Ք. Ուոկերի գրքի աղբյուրների շարքում պետք է առանձնապես նշել Մեծ Բրիտանիայի «Ֆորին օֆիսի» արխիվների և պառլամենտական արձանագրությունների նյութերը (93)։ Պառլամենտական արձանագրությունների՝ miscellaneous-ի

համարները հատկապես լայնորեն են օգտագործված առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության ողբերգության հանգամանքները բացահայտելու համար։

Այսօր արդեն գաղտնիք չէ, որ «անկասկած հետապնդված նպատակն էր ամբողջովին բնաջնջել հայ ժողովրդին՝ մահվան և բռնի խալամացման միջոցով» (6, էջ 49)։ «Կառավարությունը, որուն բուն նպատակը հայոց ընդհանուր բնաջնջումն էր, երբեք համամիտ չէր գտնված, որ հայ գաղթականներ քաղաքներու, մասնավորաբար Հալեպի մեջ, կամ անոնց շրջանակները հաստատվեն» (3, էջ 88)։ Թալեաթը հատուկ հեռագիր էր հղել, պահանջելով թույլ չտալ հայերին հաստատվել Հալեպի շրջանում, իսկ իր կարգադրությունը չկատարողներին պահանջում էր պատժել որպես հայրենիքի դավաճանների։

Ռուս թղթակցուհի Արիադնա Տիրկովան, որ քաջածանոթ էր Ստամբուլի երիտթուրք տնօրենների բարքերին, գրել է, թե «իթթիհադի գլխավոր ղեկավար Թալեաթ բեյը հանդիսացավ հայ ժողովրդի դահիճը»։ Տիրկովան նրան անվանում է մարդասպան, նրան է համարում «հայ ժողովրդի կործանողը»։ Նա հայտարարում է, որ «այդ կոտորածի պատմությունը արյունոտ տառերով գրված դատավճիռ է երիտթուրքերին» (71, էջ 80, 127)։ Հ. Շտուրմերը Թալեաթին անվանում է Թուրքիայի «չթագադրված թագավոր» (118, էջ 195)։ Մեծ վեզիրն առանց այլևայլության կատարում էր ներքին գործերի մինիստր Թալեաթի կամքը։ «Կոտորածի քաղաքականությունը պլանավորվել էր ամենայն սառնասրտությամբ»,— հավաստում է դեպքերին ականատես ամերիկացի դիվանագետ Լ. Էյնշտեյնը (94, էջ VII)։

Նեղուցները գրավելու Անտանտի զինված ուժերի ձախողումից հետո, 1915-ի գարնանը, երիտթուրքերը մտածեցին, որ էնվերի, Թալեաթի քաղաքական ծրագրերն իսկապես կարող էին իրականացվել։ Չէ որ նրանք բոլոր մահմեդականներին «ազատագրելու», թուրքալեզու ժողովուրդներին միավորելու, մի մեծ կայսրություն ստեղծելու գաղափարի կենսագործումը ռեալ բան էին համարում («Թայմս», 7. VIII. 1919)։

1915-ի կեսերին, երբ Կ. Պոլիսը բրիտանական նավատորմի կողմից գրավվելու վտանգն անցավ, Թալեաթն ու էնվերը դարձան սանձարձակ իրենց հակահայկական գործողություններում (85, էջ 4)։

Մի մասնավոր զրույցի ժամանակ Թալեաթն ասել էր, թե «մենք վախենում ենք նրանցից (դաշնակներից)։ Մենք մեր հեղափոխական կազմակերպությունն ընդօրինակեցինք նրանցից։ Նրանք գիտեն մեր գաղտնիքները» (90, էջ VII, 126)։ Եվ սրա համար հարկ էր համարվում ոչնչացնել մի ամբողջ ժողովուրդ։ Երիտթուրքական պարագլուխները չէին կարող չգիտակցել, թե ինչպիսի հակամարդկային քայլի էին դիմում և տեղերին հղած իրենց առաջին ծածկագիր հեռագրերից մեկում խոստովանում էին, թե «հայրենասիրական մղումներից դրդված են ստանձնում խայտառակության պատասխանատվությունը, որը սևացնելու է օսմանյան պատմությունը» (70, էջ 76)։

Հիրավի, երիտթուրքերի չարագործությունն ընդմիշտ սևացրել է թուրքական պետականության առանց այն էլ սև պատմությունը։

Տակավին 1919-ին Բաքվում ռուսերեն լույս տեսնող ազդեցիկ «Наше время» թերթը հանգամանորեն վերլուծել է երիտթուրքական չարագործների հայասպան հրամանների, կարգադրությունների, շրջաբերականների բովանդակությունը, մերկացրել նրանց ժողովրդասպան քաղաքականությունը։ Հայերի բնաջնջման մասին հրամանում մասնավորապես ասված էր. փակել բոլոր հայկական կազմակերպությունները, ձերբակալել նրանց վարչական անձնակազմը և բոլոր այն անձանց, ովքեր հայտնի են իրենց հակակառավարական տրամադրություններով, աքսորել նրանց Բաղդադի, Մոսուլի վիլայեթները և այնտեղ ոչնչացնել նրանց, հայերից խլել բոլոր զենքերը. մահմեդականների մոտ առաջացնել համապատասխան տրամադրություն ու պաշտոնական բնույթի միջոցառումներով։ Վանի, Էրզրումի և Ադանայի նման վայրերում մահմեդականներին հրահրել հակահայկական կազմակերպված ելույթների... Էրզրումի, Վանի, Մամուրեթ ուլ-Ազիզի և Բիթլիսի վիլայեթներում գործի իրականացումը թողնել բուն ժողովրդին, իսկ զորքին և մյուս կազմակերպված ուժերին

օգտագործել արտաքին կարգը պահպանելու համար։ Իսկ Ադանայում, Սըվասում, Բրուսայում, Նիկոմեդիայում և Իզմիրում մահմեդական բնակչությանը օժանդակել զինվորական ուժով։ Անհրաժեշտ է կոտորել գլխավորապես 50 տարեկանից պակաս տղամարդկանց և ուսուցիչներին։ Աղջիկներին և երեխաներին պահել մահմեդականացնելու նպատակով։ Պետական ծառայությունից ազատել բոլոր հայերին, նրանց մեղադրելով լրտեսության մեջ։ Բանակում գտնվող հայերը ենթակա են ոչնչացման ռազմական իշխանությունների միջոցով։ Հայերի ոչնչացումն իրականացնել ամենուրեք միաժամանակ, հնարավորություն և ժամանակ չտալով ինքնապաշտպանության համար։ Ներկա հրամանը պահել խիստ գաղտնի և բոլոր միջոցները կիրառել, որպեսզի նրա մասին իմանան մի քանի մարդ (66, № 82, 1919)։

1915-ը դարձավ արևմտահայության համապարփակ կործանման տարի։ Արևմտյան Հայաստանի բնակչության ոչնչացմանը, տեղահանմանը զուգընթաց հայությանը վերացնում էին ամբողջ տերության մեջ։ Եվրոպական Թուրքիայի Ռոդոստո քաղաքից մինչև Ադանա, Տրապիզոնից մինչև Դիարբեքիր՝ ամենուր կիրառվում էր միևնույն մեթոդը։ Թուրքիզմն իր կործանարար դերի մեջ էր։

Իթթիհադի կենտրոնական կոմիտեի «Թեշքիլաթը Մախսուսե» հատուկ կազմակերպությունը գործի էր կոչել մոտ 40 հազար ավազակաբարո մարդասպանների։ Կուսակալները, կայմակամները, քաղաքացիական ու զինվորական պաշտոնատար անձինք իրենց ճնշող մեծամասնությամբ կուրորեն կատարում էին վերևից ստացած հրահանգները։

Ց. Նանսենը նկատում է, որ երիտթուրքերի հուշակած սրբազան պատերազմը թեև նպատակ ուներ Անգլիայի ու Ռուսաստանի դեմ հանել Ասիայի և Աֆրիկայի մահմեդականությանը, բայց քրիստոնյաների դեմ մահմեդականների ատելությունը գրգռեց նախ և առաջ երկրի ներսում (113, էջ 299)։

Ա. Թոյնբին նշում է, որ հայկական կոտորածների ժամանակ երիտթուրքերի քաղաքականությանը ծառայում էին ինչպես մոլեռանդ համիսլամականությունը, այնպես և թուրքականությունն ու համաթուրքականությունը (123, էջ 22—33)։

Թալեաթի լկտի հայտարարությունն այն մասին, թե «ես

ավելի շատ բան արեցի հայերի խնդիրը լուծելու երեք ամսում, քան Աբդուլ Համիդը երեսուն տարում» պարզ վկայությունն է հայերին կոտորելու երիտթուրքական որոշակի ծրագրի առկայության (109, էջ 342)։ Իսկ Էնվերը Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուին ասում էր, թե հայերը կախման մեջ պետք է լինեն միայն թուրքերից։ Նա դեսպանին հայտարարում էր, թե որքան ԱՄՆ-ը շատ օգնի հայերին, այնքան շատ հայ կկոտորեն իրենք (109, էջ 350)։

Մորգենթաուն Թալեաթին հակաճառելով ասում էր, որ ոչ բոլորն են համագործակցել ռուսական բանակի հետ, որ հայ ժողովրդի նկատմամբ նախապես մշակված ծրագիր է իրականացվում։ Երիտթուրքական դահիճն իր հայատյացությունը փորձում էր պատճառաբանել չինծու մեղադրանքներով, թե հայերն իբր հարստացել են մահմեդականների հաշվին, թե հայերն իբր որոշել են իրենց անկախ պետությունն ստեղծել, որ նրանք համագործակցում են Թուրքիայի թշնամիների հետ և այլն (109, էջ 335—337)։ Մորգենթաուն ցույց է տալիս, որ Թալեաթի հայատյացությունն աճում է հայ ժողովրդի տանջանքների աճին զուգընթաց (109, էջ 339)։ Նա նկատում է, որ երիտթուրքական պետական մարմինների միամիտ կարծիքով, մայրաքաղաքի և նահանգների միջև կապի վրա հսկողություն հաստատելով կարող էին արտաքին աշխարհն անտեղյակ պահել երկրի ներսում կատարված կոտորածներից (111, էջ 7—8)։

Ով ծանոթ է Զավեն արքեպիսկոպոսի «Պատրիարքական հուշերին» (1947, Կահիրե), Թալեաթի հետ նրա ունեցած զրույցներին, երիտթուրքական պարագլխի լկտի հայտարարություններին, նա երբեք չի տարակուսել հայ ժողովրդի դեմ կազմակերպված դավադրության համապարփակ բնույթի մեջ։

Դարդանելի ճակատամարտի օրերին (1915-ի սկիզբ) երիտթուրքերն իսկապես խուճապի մեջ էին։ 1915-ին Թալեաթը ընդդիմադիր իթթիլաֆ կուսակցության ղեկավար Սաբահեդդինին հրավիրում է Վիեննա, բանակցում նրա հետ և նրան առաջարկում անմիջապես Ստամբուլ անցնել, գլխավորել Թուրքիայի կառավարությունը, եթե դաշնակիցների զորքերը գրավեին մայրաքաղաքը։ Պատահական չէ դեպքերին ակա-

նուտես ամերիկյան դիվանագետ Լյուիս Էյնշտեյնի խոստովանությունը, թե «Դարդանելի ռազմաբեմում դաշնակիցների ձախողումից ամենաշատը տուժեցին հայերը» (94, էջ VII)։ Լ. Էյնշտեյնը շեշտում է և այն հանգամանքը, որ երիտթուրքերի պարագլուխները ոգևորվեցին Դարդանելի հաղթանակով և պահը հարմար համարեցին հայերի նկատմամբ իրենց քաղաքականությունն իրականացնելու համար (94, էջ 219)։

Նրանք ոգևորվել էին և մտածում էին, թե Թուրքիան կարող էր «նորից համաշխարհային տերություն դառնալ» (111, էջ 5—6)։ Նրանք այլևս ոչ ոքի առջև պատասխան տալու մասին չէին խորհում։ Նրանց համակել էր «խիփիր անցիր» թուրքական ավանդական նշանաբանը։

Ստորև տեսնենք, թե ինչպես սանձարձակ է ճամարտակում Թալեաթը արևմտահայ հայտնի գործիչ Վարդգեսի հետ ունեցած հանդիպման ժամանակ (վերջինս ըռհված մտավորականներից առաջինների թվում էր)։ «Քաղաքականություն է այս, Վարդգես... Կարգով է։ Հիմա մենք ենք ուժեղը։ Թրքական շահը ինչ որ պահանջե՝ ան պիտի ընենք։ Ասիկա հայրենիքի վերաբերյալ խնդիր մըն է։ Անձնական կապն ու բարեկամությունը տեղ չունին։ Մի մոռնաք, թե մեր տկարության օրերուն, դուք մեր վզին փաթաթվեցաք և բարենորոգումներու խնդիր մը բացիք մեր գլխուն։ Ահա թե ինչու պիտի օգտվինք այս նպաստավոր կացութենեն, որուն մեջ կը գտնվինք, այնպես մը ցրելու ձեր ժողովուրդը, որ ամբողջ հիսուն տարիներ, ձեր գլուխը վեր պիտի չառնեք բարենորոգումներու համար, ու հիսուն տարի ձեր խելքը գլուխը պիտի չգա» (տե՛ս Հյուսեին Ջահիդի (Յալչին) հուշերը, հրատարակված «Ենի Գյուն» թերթում, 4,28. IV. 1979)։

Նույն պահին մեծ վեզիր Սայիդ Հալիմը Եղիշե պատրիարքին միամտացնելով հավաստիացնում էր, թե «կառավարությունը հայ ազգը բնաջինջ անելու նպատակ չունի», որ նրա միջոցառումները այդ «նահանգները հայերից պարպելու» նպատակին են հանգում։ Նա պատրիարքից պահանջում էր, որ հայերը «ռուսներն ու անգլիացիները մոռնան»։

Արևմտահայությունը հանկարծակիի եկավ։ Նա պատրաստ չէր դիմագրավելու պետականորեն սարքված դավադրությանը, համերաշխորեն, զանգվածորեն զենքով դիմադրական ճակատ ստեղծելու թուրք ջարդարարների դեմ։ «Անգիտակցությունը և անտեղյակ ըլլալը զոհերու մեջ այնքան բացարձակ էր, որ անոնցմեն ոմանք բացակա ըլլալով իրենց տունեն, ձերբակալության պահուն, գացած ինքնաբերաբար ներկայացած են ոստիկանատուն, կարծելով թե անէական տեղեկություն մը պիտի հարցվի իրենց. մեկնած են առանց դրամի, առանց պատրաստության։ Մտքերնին հառած իրենց ասպարեզին հատուկ որոշումներու և մտադրություններու, մինչև իրենց աքսորի մեկնումը չեն ըմբռնած, թե ի՞նչ կկատարվի և ի՞նչ վտանգի ենթարկված են»։ Այսպես է նկարագրել եղելությունը Ջապել Եսայանը։ «Ավելի ևս, անտեղյակ եղած են այն զարհուրելի վտանգին, որուն ենթարկված էր ամբողջ ժողովուրդը, որուն բախտը վճռված էր այդ պահուն և որուն գլխուն վերև կըշռողային արդեն սուրերը» (11, № 71, 1926)։

1910-ի օգոստոս-սեպտեմբերին Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում տեղի էր ունենում II Ինտերնացիոնալի VIII համագումարը։ Նրան մասնակցում էին Ժորեսը, Ժյուլ Գեդը, Պլեխանովը, Կաուցկին, Վիկտոր Ադլերը, Վայանը, Ռոզա Լյուքսեմբուրգը և ուրիշներ։ 22 դաշնակցության չորս ներկայացուցիչներ նույնպես մասնակցում էին համագումարին։ Նրանցից Մ. Վարանդյանն իր ճառում գրական գեղանկարներ էր շռայլում երիտթուրքերի հասցեին, խոսում էր «Թուրքիայի միլիոնավոր մահմեդական զանգվածների հեղափոխության մեջ կատարվող ծանրակշիռ փոփոխության» մասին։ Նա ասում էր. «Մենք ուրախ ենք, որ ասիական ազատությունների հաղթանակը հնարավորություն է տալիս մեզ կազմակերպել մեր ազատագրական պայքարը մինչև օրս ճնշված ազգերի աշխատավոր զանգվածների մեջ, Եվրոպայի նրանց համերաշխության՝ [illegible] ու ոգեփոխի ավետարանի շուրջը»։ Եվ այս ամենը Ադանայի ջարդից հետո, շատ ու շատ այլանդակ փաստերից հետո, որոնք աներկբայորեն պետք է զգաստացնեին երիտթուրքերի իշխանությանը հավատ ընծայողներին։ Մ. Վարանդյանը սակայն հույս էր հայտնում, որ «երիտասարդ թուրքերի կառավարությունը վաղ թե ուշ պետք է փոխի իր ազգայնամոլ ընթացքը»։

Սա 1910-ին էր։

Իսկ հետո, 1915-ին ձերբակալված դաշնակցական ղեկավար գործիչները զարմացած էին, չէին հավատում, թե ինչ էր կատարվում իրենց հետ և իրենց շուրջը։ Այսպես հասած Ակնու-

նին, Զարդարյանը, դոկտոր Փաշայանը հեռագրում էին Թալեաթին, հիշեցնում իրենց համատեղ աշխատանքը երիտթուրքերի կազմակերպության հետ՝ հանուն «կայսրության բարգավաճման ու առաջադիմության», կատարվածը գնահատում որպես «տարօրինակ և անըմբռնելի կացություն», «երկու ազգերի փոխհարաբերությունների պղտորում», «բնակչության երկու տարրերի թշնամացում» և այլն։

3. Լեփսիուսը նկատում է, որ «դաշնակցական պետերը միշտ այն ինքնախաբեության մեջ էին, թե ինչ որ պատահած էր, սխալանքի մը արդյունք էր»։ Նա գրում է, թե այն կառավարությունը, որի դիտավորությունն էր «բնաջինջ անել ամբողջ հայ ժողովրդին» (15, էջ 208) չէր կարող ազդվել նման հեռագրերից։

Ինչ խոսք, որ «էֆենդիական», պետական պաշտոնատարների այդ բազմաճյուղ դասակարգը, անշուշտ, վայ էր տալիս իր գլխին, 1915-ին։ Նա տափակացավ, հարմարվեց, բայց չխուսափեց հալածանքից, հարվածներից, չէ որ, վերջապես հայ էր։ «Ո՞ր ես, ի՞նչ աղաղակներ ես արձակում, հոգիդ, իմացականությունդ, էությունդ իթթիհադին վաճառքի հանող հայ էֆենդիական, թուրք պետական՝ հայ պաշտոնյա դասակարգ։ Աքսորավա՞յրն ես, բանտն ես, ծովերի՞ն կեր ես դարձել, կորած կինդ, զավակդ, պատիվդ ես ողբում, թե՞ մերկությունդ, անոթությունդ» (41, էջ 19)։ Հայոց քաղաքական ճակատագրին տնօրինելուն հավակնած մարդիկ «եթե անկարող էին կշռել ու չափել ընդհարվող ուժերի խոշորությունը, գոնե պիտի շնորհք ունենային ըմբռնելու հարազատ ազգի հավաքական զորության թուլությունը, նրա ցրվածությունը, նրա գոյության տարբեր պայմանները տարբեր պետականությունների ծոցում և տարբեր ժողովուրդների հարևանության մեջ» (10, № 1, Բ մաս, 1917, էջ 23)։

Քաղաքական միամտություն չէ՞ր արդյոք Ակնունու լավատեսությունը, երբ աքսորի ճանապարհին նա ասում էր, թե ոստիկաններն իրեն արգելել էին հեռախոսելու Թալեաթի հետ, բայց ինքը համոզված էր, որ նույն բանն անելու էին իր ընկերները և հետևելու էր ազատման հրամանը (7)։

«Անկախ և ինքնավար Հայաստան մը կազմելու և կայսերական երկրներեն մաս մը օսմանյան կառավարութենեն

անջատելու» ամբաստանությամբ կախաղան հանվեցին 20 հնչակ գործիչներ (46, էջ 6)։ Այդ նույն հրապարակում սահմանադրության նախօրյակին «Բեմերեն եղբայրացած (՞) ազգերու բերան դարձող Թալեաթի և Ջոհրապի հայրենաշունչ բանախոսություններուն ունկնդրող ժողովուրդը կծփար, կծափեր... բայց այսօր այդ պատմական տախտակներեն կախաղանի սյուներ շինված են Թուրք մոլեռանդ խուժանին կողմեն» (46, էջ 93)։ «Երեկ իթթիհադ կառավարությունը միայն ս.-դ. հնչակյան կուսակցության դեմ կռիվ հայտարարած էր, իսկ այսօր՝ հանուր հայության դեմ։ Նա իր կատաղության գագաթնակետին հասած՝ այսօր կավերե, կքանդե, կկոտորե առանց աջ ու ահեակ դիտելու, առանց խտրություն դնելու սեռի և տարիքի մեջ»։ Այսպես էին գնահատում երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը Պրովիդենսում 1916-ին հրապարակած իրենց գրքույկում հնչակ գործիչները (46, էջ 7)։

Թուրք սպաները ծաղրում էին հայ քաղաքական գործիչներին, ասելով, «կատարյալ անկախություն ասիք հա՞... ձեր ախորժակը պահեցեք մյուս աշխարհի համար» (29, էջ 40)։ Սասունի հերոս Մեծն Մուրադին կախեցին Կեսարիայում։ Մահապատժից առաջ նա գոչեց. «Զիս կկախեք, բայց... հայ մայրերու արգանդը նոր Մուրադներ պիտի ծնի. մարմինս կկախեք, բայց գաղափարս՝ ոչ. նոր սերունդը վրեժ պիտի գոռա, դուք հրեշներդ նկուղե նկուղ պիտի սողոսկեք, երբ հայուն Արեգին ազատության ճառագայթները ծագին...» (16, էջ 27)։ Երբ 1915-ի ապրիլի 11-ին Կ. Պոլսից աքսորված մտավորականների հարցով հայոց պատրիարքը դիմեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային, սա պատասխանեց, թե «պատերազմից առաջ համաձայնական տերություններին դիմելով ուզեցիք անջատել ձեր ազգը օսմանյան պետությունից. ձեր արածների պատիժն է, որ կրում եք. հայերի մասին եղածը արդյունք է մի ծրագրի, որ պիտի գործադրվի» (3)։

Ինչ խոսք, որ միջոցառումը տրվում էր պետական, պաշտոնական բնույթ։ Նույնիսկ տեղահանված հայ բնակչությունը երբեմն ճանապարհում էին բոլոր կանոններով, քաղաքագլխի ու այլ պաշտոնյաների մասնակցությամբ ու ուղեկցությամբ (123, էջ 44)։ Իսկ որոշ տարածություն անցնելուց

Հետո նրանց կանգնեցնում էին գլուխ կտրողների հատուկ ջոկատները, կողոպտում, բռնաբարում, սպանում...

Ամենուրեք միևնույն մեթոդն էր տիրում։ Ամեն ինչ կատարվում էր կենտրոնի կամքով։ Օրինակ, Սեբաստիայում նույնպես սկզբում ձերբակալվեցին մտավորականները, հետո ընդհանուր տարագրության մասին հրաման տրվեց (15, էջ 63)։ Երբ Մարզվանում մի միսիոներ բողոքել էր տեղական իշխանությանը կատարված չարագործությունների դեմ, նրան պատասխանել էին, թե քաղաքից հայերին վերացնելու մասին հրամանը բարձրից է տրված (15, էջ 67)։ Ըստ ականատեսների և գիտակ մարդկանց, տեղահանվածների $^2/_3$-ը անհետանում էր ճանապարհներին (113, էջ 305)։

Երիտթուրքական կառավարողների քաղաքականության հիմքում ընկած էր հայ ազգը արմատախիլ անելու մտադրությունը։ Ոչ մի փաստաթղթում չէր հիշատակվում այս կամ այն սոցիալական խավի, դասակարգի, ունևորի կամ չունևորի նկատմամբ տարբեր մոտեցման հարցը։ Խոսքը վերաբերում էր հայ ազգին պատկանած բոլոր մարդկանց նկատմամբ ռեպրեսիաների կիրառմանը։

Բոստոնի հանրաճանաչ «Քրիշչն Սայենս Մոնիտոր» թերթը 1915-ի սեպտեմբերի 15-ին հրապարակեց մի հոդված, որը վերնագրված էր. «Թուրքիայում կատարվող կոտորածները համարվում են վատթարագույնը պատմության մեջ»։ Նոյեմբերի 16-ին անգլիական պառլամենտի համայնքների պալատի ամբիոնից նույն բանն էր ապացուցում Ա. Վիլյամսը։ Այս փաստերին կարելի է տեղեկանալ լորդերի պալատի և համայնքների պալատի արձանագրություններին ծանոթանալով (127, էջ 231)։

Ըստ էության, Թուրքիայի միայն չորս քաղաքում՝ Կ. Պոլիս, Քյութահիա, Իզմիր և Ուշագ, մասսայական տեղահանություն չեղավ։

Հայ զինվորներին գնդակահարում էին առանց դատի ու քննության։ Մի թուրք սպայի հիշատակարանում կարդում ենք 5 հայ զինվորների գնդակահարության մասին։ Նրանցից մեկը հազիվ 17 տարեկան էր և սպանվելուց առաջ աղոթում լալիս էր (29, էջ 6—7)։ Երիտթուրքերը պատրաստ էին ոչնչացնելու հայ ազգի թե կրոնական, թե քաղաքացիական

առաջնորդներին, ժողովրդի ինքնության համար մարտնչող բոլոր ուժերին, միայն թե հաղթանակեր թուրքականությունը։ 1915-ի սեպտեմբերի 22-ին Մարսելի «Արմենիա» թերթն արտատպել էր Սոֆիայի «Հայաստան» թերթից մի ցուցակ, ըստ որի երիտթուրքերը կենդանի այրել էին Դիարբեքիրի արքեպիսկոպոս Չիլհատյանին, Իզմիրի եպիսկոպոսին բանտ էին նետել, կախել էին Սըվասի արքեպիսկոպոս Գալեմքարյանին, Շապին-Գարահիսարի արքեպիսկոպոս Թորիկյանին, Խարբերդի արքեպիսկոպոս Խորենյանին, Էրզրումի արքեպիսկոպոս Սաադեթյանին և շատ ուրիշների (123, էջ 103—104)։

1915-ի սեպտեմբերին թուրքական «Թանին» թերթը բացահայտ հանդես եկավ «բոլոր հայ կանանց» «ոչնչացման» կամ «մահմեդականացման» պահանջով։ Թերթը գտնում էր, որ միայն այդ ճանապարհով էր հնարավոր «փրկել կայսրությունը»։ Այս մասին հաղորդել էր ֆրանսիական «Լա գեր սոսիալ» (Փարիզ) թերթը, 1915-ի սեպտեմբերի 16-ին (128, էջ 150—151)։ Դեպքերին ականատես դոկտոր Ե. Թուզճյանը գրում է, որ «հայկական բնաջնջումի սիստեմն ամեն տեղ միևնույն եղանակով և միևնույն որակով, եղեռնական ոճիրներով կատարվեցավ», ցույց է տալիս, որ տարբերայնություն չկար, այլ կար մտածված պլան։ «Հայաջնջումը թուրք կառավարության ծրագիրն էր», «քանի որ թուրք կառավարությունը հայկական հարց ըսված խնդրեն ազատվելու համար պետք էր մի անգամ ընդմիշտ սպանել ու գոցել, երբ թուրքական կառավարությունը պիտի ապրեր, իշխեր ու տիրապետեր, քրիստոնյա տարրերը պետք է պզտիկնային ու մանավանդ հայերը բնաջնջվեին» (21, թ. 5—8)։

Սամսունի, Կիրասոնի, Թերմի, Տրապիզոնի և մյուս քաղաքների ու բնակավայրերի հայ բնակիչները բնաջնջվեցին, ծովում խեղդվեցին կամ աքսորվեցին։

Տրապիզոնի նահանգապետ մարզակեր Ազմի փաշայի հրամանով հայ համայնքը տեղահանվեց հունիսի 18-ի առավոտյան։ Մինչ այդ, Տրապիզոնից 8 կմ արևմուտք գտնվող Պլատանա ծովեզրյա քաղաքի մոտ, հունիսի 11-ին սրախողխողվեցին 42 հայ անվանի մարդիկ։ Այդ քաղաքում ԱՄՆ-ի հյուպատոս Օսքար Հայզերը իր 1915-ի հուլիսի 28-ի տեղեկագրում տվել է կատարվածի հանգամանալի նկարագրու-

թյունը։ Այն առաջին անգամ հրապարակել է Յ. Լեփսիուսը։ Այդ տեղեկագիրը պատմում է. 1915-ի հուլիսի 6-ին, երեքշաբթի, Տրապիզոնի բոլոր հայ տները, շուրջ հազար, պարպված էին և իրենց բնակիչները տարագրված... Ոստիկանները դուրս էին տանում կարասիները (15, էջ 37—39)։ Ծովը ափ էր դուրս բերում Տրապիզոնի խեղդված հայ բնակչության հարյուրավոր դիակներ (112, էջ 230—233)։ Եվ այսօր Թուրքիայում ազգային հերոս են հռչակում այդ չարագործության հեղինակ Ազմի փաշային։

Ժ. Մորգանը գրում է, որ պատերազմից առաջ Տրապիզոնում և նրա շրջակայքի 45 գյուղերում 18343 հայ կար։ Երբ ռուսական զորքը գրավեց այդ շրջանը, 367 հայ կար գյուղերում և 92 մարդ քաղաքում՝ ընդամենը 459 մարդ։ Նա համոզմունք էր հայտնում, որ հայերի մի մասը սպանված էր, մի մասը գտնվում էր համակենտրոնացման ճամբարներում (108, էջ 180)։

Ամասիայի և Սամսունի հույն արքեպիսկոպոս Ժերմանոսը Պոնտոսի պատվիրակության անունից դիմել էր Փարիզի խաղաղության կոնֆերանսին, նկարագրելով երիտթուրքական խժդժությունների մանրամասնությունները երկրի այդ շրջանում։ Նա ցույց էր տալիս, որ իթթիհադի, նրա պարագլուխներ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի հետ միասին հայոց կոտորածին մասնակցում էր թուրք ժողովուրդը, որը աչք էր տնկել քրիստոնյաների ունեցվածքին, հարստությանը (97)։

Դարդանելի մոտ, Սեդարե փոքր քաղաքում թուրքերը մի տան մեջ հավաքել էին հայ երեխաներին։ Հետո այնտեղ բերեցին մայրերին, նրանց կարգադրելով վերցնել իրենց երեխաներին։ Մայրերն ուրախությունից դեռ չէին սթափվել, երբ տունը կլանեցին կրակի բոցերը (121)։

Փարիզի Նուբարյան մատենադարանում պահվում է «Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիո կուսակալության» փաստաթուղթը, կազմված 1919-ի փետրվարի 27-ին։ Նրա տակ դրված են Սեբաստիայի նահանգային գաղթականական մասնախմբի վարչության ատենադպիրի և անդամների ստորագրությունները՝ Հովհ. Մինասյան, Կարապետ Արծրունյան, Օսկան Կորկոտյան, Արամ Օնպաշյան, Նազարեթ Տարագճյան, Հարություն Ծրըլյան։ Այս մարդիկ կազմել են

խիստ ճշգրիտ մի փաստաթուղթ, որտեղից կարելի է գաղափար կազմել Սեբաստիայի նահանգի Ավաղ, Ամասիա, Թոգատ, Շապին-Գարահիսար գավառների, Հաֆիզ, Գոչկիրի, Դիվրիկ, Գանկաշ, Երլուջելի, Թոնուս, Կյուրին, Տարենտի, Աշատի, Աջիջիէ գավառակների բնակչության (139, 625), բռնագաղթի, բնաջնջվածների ու վերապրողների մասին։ Սեբաստիայի նահանգում հայերի սպանությունների սկիզբ առան 1914-ի նոյեմբերին, շարունակվեցին 1915-ի մարտ, ապրիլ, մայիս ամիսներին։ 1915-ի հունիսի 17-ին պաշտոնապես հայտարարվեց Սեբաստիա քաղաքի բռնագաղթը։ Տեղեկագրի մեջ տրված է նահանգի հիմնական սպանդանոցների նկարագրությունը։ «Սեբաստիո տեղահանության և ջարդի գլխավոր կազմակերպիչն ու ջարդարարները» բաժնում հիշատակվում են կուսակալ Մուամեր բեյը, իթթիհադի շեֆ Ղանի բեյը, ժանդարմերիայի պետ Խալիլ բեյը և բազմաթիվ ուրիշներ։ Ամասիայում սև գործը գլխավորել էին մյութեսարիֆ Ջելալ բեյը, ժանդարմերիայի հարյուրապետ օսման Նուրին և ուրիշներ։ Փաստաթղթում գրված է տնտեսական վնասների հանգամանալի հաշվարկը։

Հայ կանանց «Ազգանվեր» ընկերությունը (հիմնված Կ. Պոլսում 1879-ին) 1920-ին Փարիզում հրապարակեց փաստաթղթերի և վկայությունների մի ժողովածու, որտեղ ամփոփված են երիտթուրքական ճիվաղների հանցագործությունների մասին բազմաթիվ հավաստի փաստեր (121)։ Դրանք վերաբերում են Երզնկայի, Սեղարի, Բրուսայի, Կարինի, Ադանայի, Սամսունի, Տրապիզոնի, Շապին-Գարահիսարի դեպքերին։ Ռեպրեսիաները սկսում էին առավել աչքի ընկնող հայերի ձերբակալությամբ, հավաստում են ականատեսները։ Այնուհետև իրականացվում էր մնացյալ բնակչության տեղահանությունը։ Տղամարդկանց տանում էին կանանցից առանձին։ Ճանապարհին նրանց սպանում էին քաղցը, ծարավը, հիվանդությունները։ Ավազակների խմբերը կողոպտում էին, բռնաբարում կանանց, ապա ոչնչացնում։ Տրապիզոնի մի մեծահարուստ վաճառականի կին՝ Նվարդ Մանուկյանը, պատմում է, որ Երզնկայում ամբողջ գետինը պատված էր կտրված գլուխներով, մարդկանց վերջավորություններով, կանացի մազերով... Նա նշում է, որ Եփրատը տանում էր

բազմաթիվ մարդկային դիակներ։ Արմենուհի Թորիկյանը (Սամսունից) պատմում է, որ թուրքերը խլում էին ամենագեղեցիկ երիտասարդ հայուհիներին և օրգիաներ կազմակերպում։ Զոհերից շատերն ինքնասպանությամբ վերջ էին տալիս իրենց կյանքին։ Օրդուում և Կիրասունում եղան դեպքեր, երբ հայ ամուսինը սպանեց կնոջը, որդին՝ հորը, եղբայրը՝ քրոջը, հայրը զավակներին, որպեսզի խույս տային անպատվությունից։ Երզնկայի մյութեսարիֆ Մահմադ բեյը փոս էր փորել տվել և նրանում կենդանի-կենդանի թաղել 450 հայ մանուկների (121)։

Ահա թե ինչ էր գրվում Տրապիզոնի մասին տարիներ անց. «Տրապիզոնի մեջ բնավ հայություն չի մնացած. եթե երեք-չորս ընտանիքներ գտնվեին, անոնք ալ տրապիզոնցիներ չեն, այլ ուրիշ գավառներէ եկողներ. առայժմ հոն կմնան, հարմար առիթին անկից մեկնելու համար։ Հայերու ամբողջ կալվածները կառավարության ձեռքն են, ոմանք ծախված են կառավարության կողմե, ոմանք վարձու տրված, ոմանք ալ կառավարության պաշտոնատներ եղած են...» (36, № 131, 1927)։

Սամսունի մյութեսարիֆը հայոց վերնախավին առաջարկեց իսլամ ընդունել՝ տեղահանությունից խուսափելու համար։ Քաղաքի հայկական և թուրքական թաղերի միջև մի շղթա էին ձգել։ Ով ցանկանում էր չտարագրվել իսլամ ընդունելու միջոցով, կարող էր անցնել թուրքական կողմը։ Հարյուրավոր հայ ընտանիքներ խույս տվեցին գեհենից իսլամ ընդունելու միջոցով (15, էջ 269)։

Լավատեղյակ աղբյուրները վկայում են, որ մինչև 1915-ի օգոստոսի 15-ը, արդեն հայոց կորուստները հաշվում էին 500 հազար մարդ (44, էջ 63)։ Լորդ Քրոմերը 1915-ի հոկտեմբերի 7-ին անգլիական պառլամենտում հայտարարեց, որ հայերի զոհերի թիվն արդեն 800 հազարի է հասել (44, էջ 218)։

1915-ի հուլիսի 31-ին Կարինի հայ արքեպիսկոպոս Քաչերյանը հեռագրում էր Կ. Պոլսի պատրիարքարանին, թե ինքը և Կարինի ողջ մնացած հայերը աքսորված էին (15, էջ 50)։

Մինչ ռուսական բանակը կգրավեր Էրզրումը, երիտթուրքական պարագլուխների կազմակերպած գեհենից փրկվեցին

միայն 200 հոգի (քաղաքի 20 հազար հայությունից)։ Փրկվածները թաքնվել էին միսիոներների մոտ կամ այլ ապահով անկյուններում։ Քաղաքն ամայացել էր։

1915—1916 թթ. հայկական ջարդի օրերին մոտ հինգ հազար հայեր ապաստան գտան Դերսիմի քրդերի մոտ։ Դերսիմը հարկատու չէր օսմանյան բանակին, որին նաև զինվոր չէր տալիս։ Կարինի գրավումից հետո (1916) քրդերը այրեցին այդ շրջանի թուրքական գյուղերն ու քաղաքները։ Երզնկայի 30 հազար հայերին բնաջնջեց, ցաք ու ցրիվ արեց Մեհթու բեյը, որը հայերից կողոպտեց 50 հազար լիրա ոսկի (9, էջ 668)։ Այդ քաղաքի ճանապարհին քրդերը գերեվարում էին գեղեցիկ կանանց, աշխատող երիտասարդներին, մնացածներին մասամբ կոտորում, մասամբ խեղդում էին Քեմախի կիրճում։ Դիակների շատությունից գետը նույնիսկ փոխել էր իր հունը (33, թ. 35)։ Երզնկայում սկզբում երկու հազար հայերի ձերբակալեցին, առանց որևէ ամբաստանության։ Հետո նրանց գիշերով բանտից հանեցին և քաղաքի մոտակայքում գնդակահարեցին։ Սրանից հետո հայոց 1500 տները հրաման ստացան հեռանալ քաղաքից։ Հունիսի կեսերից տեղահանվեցին 20—25 հազար հայ բնակիչներ։ Հայ մանուկներին խլում էին թուրքերը (15, էջ 51—54)։

Ահա թե ինչ է պատմել մի ականատես կին. թուրքական պառլամենտի երեսփոխան Ալեո բեյը ավտոմեքենայով վերադառնալով Քեմախից, գետափին ամբոխ նկատեց։ Մոտենալով նա իմացավ, որ դրանք երեխաներ են, դրանց ծնողները սպանված էին։ Նրանք լացում էին, բղավում։ Երկար չմտածելով, թուրք դեպուտատը հրամայեց բոլոր երեխաներին ջուրը նետել։ Երբ նրա հրամանը կատարվեց, դահիճը հանգիստ շրջվեց դեպի իր ավտոմեքենան, հետո շարունակեց իր ճանապարհը։ Այս հրեշը մինչև պառլամենտի արձակումը (1918-ի ավարտ) տեղ էր զբաղեցնում դեպուտատների պալատում (121)։

Բաբերդի հայությունը տեղահանվեց երեք խմբով։ Երկրորդ խումբը հանդիպեց առաջին խմբի դիակներին։ «Տասնհինգ տարեկանեն վեր ոչ մեկ արու անհատ ողջ մնաց», պատմել է մի ականատես կին։ Քաղաքից երկու ժամվա հեռավորության վրա հայոց տարագիրների քարավանի վրա

հարձակվել էր «հրացաններով ու կացիններով» զինված թուրք խուժանը։ Հրոսակներն առևանգեցին կանանց ու աղջիկներին։ Շատերը զոհվում էին քաղցից (15, էջ 54—56)։ Եփրատի վրա դիակները լողում էին ամիսներ շարունակ. տղամարդկանց դիակները անդամատված, կանանց որովայնները բացված։ Կարդում ենք «Կեսարիո մտավորական և հեղափոխական թանկագին ուժերուն սպանդը» վերտառությամբ Մելքոն-Ասատուրի գրած նյութը (16, էջ 173)։ Այստեղ բերված են Կեսարիայի անվանի մարդկանց ցուցակները։ Նրանց տեղահանել էին, քշել հարավ, ոչնչացրել ամենագազանային մեթոդներով։ «Սույն խումբը չեթեից տապարով նահատակված է, Կեմերեկեն դուրս, ճհմալ օղլու Համբարի ջաղացքեն կես ժամ դեպի արևելք, Ղըզըլչար ձորին մեջ, ոտից ց՚գլուխ մերկացվելե վերջ. նահատակաց մարմինը նետվեցավ Նիրօղլու կոչված քարայրը։ Թրքական վայրագությունը իր հանդես եկած տապարով, խանչերով, բիրով սպանելու մասնագիտության մեջ, կապարը, խնդրված երջանիկ կապարը զլացված է միշտ» (16, էջ 184)։

Մարզվանի 16 հազար հայերի տեղահանությունը, ջարդը, հարյուրավոր հայուհիներին հարեմ քշելն իրականացրին կայմակամ բժիշկ Ֆայիքը, զինվորական հրամանատար Մահիր բեյը, ոստիկանապետ Սալիհ բեյը։ Կեսարիայի Էվերեկ գավառում կատարած հակահայկական «քաջագործությունների» համար Սալիհ Զեքին մյութեսարիֆ կարգվեց Դեր Զորում, որտեղ «եղավ իսկական Հիմլեր մը» (5)։

Երբ Լիջեի (Դիարբեքիր) կայմակամ Ներսինի բեյը հրաժարվեց կատարել Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդ բեյի հրամանը հայերի զանգվածային կոտորած սարքելու վերաբերյալ (այն բանից հետո, երբ ռուսական բանակը մոտենում էր Մանազկերտի և Բուլանուխի կազաներին), նրան սպանեցին այդ նպատակի համար ուղարկված չոկատի ժանդարմները։

Գերմանական «Ալգեմայնե Միսիոնս—Ցեյտշրիֆտ» հանդեսի 1915-ի նոյեմբերի համարում տպագրված էին ականատեսների պատմածները, ըստ որոնց Դիարբեքիրի և Մամուրեթ ուլ—Ազիզի 1300 երևելի բնակիչներից 674 հոգու

կողոպտել էին, հետո լաստերի վրա դրել ու տարել Տիգրիսի հոսանքով ներքև, խեղդել գետի ջրերում։ Նրանց հագուստները վաճառում էին շուկաներում (6, էջ 40)։

«Օսմանյան պաշտոնական և անպաշտոն անձնավորությանց մեջ բոլոր թախանձանքներն ու լացերը անարժեք եղան։ Օտար չեզոք պետությանց անպաշտոն և կես պաշտոնական դիտողությունները ոչ մեկ ազդեցություն գործեցին»,— գրում էր Ջավեն պատրիարքը։ 1915-ի հունիսի 10-ին Մուշից գրված նամակով հաղորդում էին, որ Մշո դաշտի հայ բնակչությունը, ահաբեկված զանգվածային սպանություններից, կողոպուտներից մերկ ու անոթի, խուճապով հեռանում էր Սասունի սարալանջերը (32)։ Տարոնի հայության կոտորածն սկսվեց հուլիսի 10-ին։ Թուրք բնակչության թիվը Բիթլիսի վիլայեթում 40 հազարից ավելի չէր, մինչդեռ այնտեղ կար 180 հազար հայություն։ Իսկ տեղի քրդությունը չէր մոռացել մեկ տարի առաջ երիտթուրքական դաժանությունն իր նկատմամբ։ Մինչև երիտթուրքերը նորից հակահայկական գործողությունների ասպարեզ հանեին XIX դարի 80-ական թթ. վերջին հակահայկական իր վայրագություններով անուն հանած, սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից ոգեշնչված և եվրոպական հասարակական կարծիքի կողմից դատապարտված Մուսա բեկին, որպեսզի նա քրդական հրոսակախմբեր կազմակերպեր համատարած հայկական կոտորածների համար, արդեն երկուս ու կես ամիս ժամանակ անցավ։ Այդ Մուսա բեկի հրոսակախմբերի «շնորհքն էր», որ մեկ օրվա ընթացքում (հուլիսի 10-ին) կոտորվեց Մշո դաշտի հայկական գյուղերի բնակչությունից 80 հազար մարդ։ Բիթլիսի նահանգապետը հայ բնակիչներին խաբում էր, թե հավատարիմ մնալու դեպքում ազատվելու էին։ «Այսպես ասելով,— գրում է ականատեսը, — զորանոցներ շինել տվեց, իսկ հետո բոլորին էլ կոտորեց» (29, էջ 44)։

Բիթլիսի կուսակալ Ռեշիդը, Կարինի կուսակալ Թահսինը պարծենալով հեռագրեր էին տվել կենտրոնական կառավարությանը, թե իրենց կառավարած նահանգներում ոչ մի հայ չկա այլևս։

1915-ի դեկտեմբերի 28-ին Կ. Պոլսի Ջավեն պատրիարքը ամերիկահայոց առաջնորդ Վեհունի Ծ. վարդապետին գրում

էր, թե «այս անգամ խուժանը չէր, որ հարձակվելով խաղաղ ժողովրդին վրա, այլ նույն ինքը՝ կառավարությունը, որ իր ծրագիրը գործադրեց զինվորներու, ժանդարմներու, ոստիկաններու և մանավանդ հրոսախմբերու ձեռքով։ Հրահանգը կենտրոնեն տրվեցավ և ամեն կողմ գործադրվեցավ անխղճորեն»։ Նա գրում էր, որ Սամսունից մինչև Տիգրանակերտ դրեթե հայ այր մարդ չի ազատված։ Ամեն ինչ կրոնով բացատրողները սխալվում են, միակողմանիություն են հանդես բերում։

Կոնիայի կրոնապետ Հյուսամեդդին Չելեբին (սելջուկ թուրքերի մեւլեւի աղանդի գլխավորը) դեմ էր հայերի ջարդին և հակառակվում էր իշխանությունների կարգադրություններին։ Նա ժողով էր հրավիրել, հատուկ բանաձև ընդունել և վարչապետ Սայիդ Հալիմից խնդրել հայերի տեղահանության մասին որոշումը չկիրառել Կոնիայում։ Նրան աքսորեցին Դամասկոս (45, էջ 32, 58, 85—87, 92)։ Զապել Եսայանը վկայում է, որ «թուրքական ժողովրդական զանգվածը որոշակիորեն դեմ էր այդ հալածանքներին և դրբանք իրականացնող կառավարությանը» (49, № 33, 1916, էջ 13—14)։ Իզուր չէ, որ Նանսենը նշում է՝ ջարդերը նախապես մշակված ու ծրագրված լինելու փաստը (113, էջ 305—307)։

Երբ ռուսական զորքերը գրավեցին Վանը, քաղաքում ու նրա մատույցներում հայտնաբերեցին ու այրեցին մոտ 55 հազար դիակ։ Նահանջի ճանապարհը բռնած կատաղած թուրքերը կոտորել էին անմեղ երեխաների, կանանց ու ծերերի (109, էջ 339)։

1915-ին թուրքերը Ուրֆայում կոտորած սարքեցին թվով երրորդ անգամ քսան տարվա ընթացքում։ Այստեղ 4000 հայի տուն կար։ Դրանցից անվնաս էր մնացել միայն 20-ից 30-ը (79, էջ 38)։ Ականատեսը հաղորդում էր, որ «սոսկալի ջարդով մը վերջաբան դրված է Տիգրանակերտի շրջանի հայությանը» (34, թ. 9)։

Ուրֆայում չարիքի սկիզբը դրվեց ապրիլի 17-ի խուզարկություններով։ «Հանկարծ,— գրում է ականատեսը,— 16 խումբ ոստիկաններ տարբեր ճամփաներով կմտնեն Հայոց

թաղը, կարծես թե նախապես չափված, ձևված և կնքված ծրագրով՝ խուզարկություններու կըձեռնարկեն։ Նախ կպաշարեն մայր եկեղեցին և հարուստներու տուները, ոստիկաններու տարբեր խումբեր հեծյալ և հետիոտն անդադար կշրջագայեն փողոցները… Կեսօրեն անմիջապես հետո 30-ի չափ հեծյալ ոստիկաններ կըփութան խուզարկելու քաղաքեն մեկուկես ժամ հեռու գտնվող զուտ հայաբնակ Կարմուճ գյուղը» (16, էջ 220)։

Ապրիլի 18-ին սկսվեցին ձերբակալությունները։ Նախ զինվորական տարիք ունեցող երիտասարդները հարյուրներով ուղարկվեցին ամելե թաբուրի անվան տակ դեպի Այնթապ և Ուրֆայի մոտ գտնվող Գարա-Քեոփրիի և Գատեմիի վայրերը։ Որոշակի էր դառնում, որ «թուրքական կառավարությունը, պաշտոնապես հայերը բնաջնջելու ծրագիրներ պատրաստած և գործադրության դրած է» (16, էջ 221)։ Թուրքական իշխանությունները Կարող դերե վայրում հրապարակ արեցին Կարմուճ գյուղի երիտասարդության մեծ մասին։ Այնուհետև, թուրք ոստիկաններն ու զինվորները 700 մարդ կոտորեցին Ուրֆայի Պըտիկ Մեյդանի թաղում։

Սեպտեմբերի 14-ին ուրֆացիները ինքնապաշտպանական ապստամբության դրոշ բարձրացրին փրկվելու համար թուրք խուժանի և կանոնավոր բանակի ճիրաններից։ Թուրքական հրամանատարությունը Այնթափից և Հալեպից բերեց 6 թնդանոթ և 7000-անոց կանոնավոր զորք, որը «Դիվանը Էորֆիի թարուրի» անվան տակ գործում էր ներքին ապստամբությունները ճնշելու դրոշի ներքո։ Մոտավորապես մեկ ամիս տևեց հերոսամարտը։ Հարյուրավոր մարդիկ զոհվեցին հրապարակ լինելով և կախաղան հանվելով, մյուսներն աքսորվեցին Դեր Զոր։

1916-ին Բաղդադի երկաթուղու վրա աշխատած հայ բանվորներին քշեցին անապատ և կոտորեցին (118, էջ 58)։ Երիտթուրքական պարագլուխներն անմիջապես պաշտոնանկ արեցին մեր հիշատակած Հալեպի կուսակալ Ջելալ բեյին, որը համամիտ չէր «անպատասխանատու ջարդարարների» հետ (44, էջ 198)։ Այս նահանգապետին մեղադրեցին այն բանում, որ Հալեպ հասած Վարդգեսի, Զոհրապի, Տաղավար-

յանի, Ակնունու, Խաժակի նկատմամբ «փափուկ» վերաբերմունք էր դրսևորվել (44, էջ 54)։ Արաբական երկրներում ծանր էր վիճակը. մինչև 1916-ի մարտը Սիրիայում և Լիբանանում սովից ու հիվանդություններից մահացել էր բնակչության (հատկապես գյուղական) մինչև 40 տոկոսը (58, էջ 72—73)։ 1915-ի փետրվար-հունիսին Բեյրութում, Դամասկոսում և Հայֆայում տեղի էին ունենում ընդհարումներ թուրքական զորքի, ժանդարմերիայի և արաբ բնակչության միջև։ Երիտթուրքական ազգայնական և կենտրոնաձիգ տենդենցներն ուղղված էին ոչ միայն հույների, հայերի, սիրիացիների և հրեաների դեմ, այլև մահմեդական սիրիացիների, քրդերի, շիա բնակչության դեմ։ Մասնավորապես, երիտթուրաքական շովինիզմը մերժում էր արաբական ազգային ինքնությունը։ «Կրոնը այժմ երկրորդական գործոն է լեզվի համեմատությամբ»,— ազդարարում էին երիտթուրքերի տեսաբանները։ «Բոլոր օսմանները թուրքեր չեն»,— ասում էին նրանք։ «Եթե կայսրությունը պետք է դառնա զուտ թուրքական, ապա բոլոր ոչ թուրք տարրերը կլինեն օտար նրա համար»... «Շուտով մենք առաջ կընթանանք Թուրքիայի անվան ու թուրքական դրոշի ներքո, մի կողմ հրելով կրոնը՝ որպես մասնավոր և երկրորդական հարց»։ Արաբներին դիմելով, նրանք ասում էին. «Դուք և Ձեր ազգը պետք է գիտակցեք, որ դուք թուրքեր եք և չկա արաբի հայրենիք» (126, էջ 24—25)։

Ուշագրավ են Թուրքիայում ամերիկյան թղթակից Ուիլյամ Տ. Էլլիսի («The Outlook». 20. 12. 1916) նկատանքները պանթուրքիզմի քաղաքականության մասին։ Նա գրում է այն ջանքերի մասին, որ գործադրում էին երիտթուրքերը բոլոր թուրքերին մի միության մեջ միավորելու, կրոնական կապերը ռասայականով փոխարինելու համար։ Հեղինակի կարծիքով դրան նոր ազդակ եղավ Մեքքայի շերիֆի գլխավորությամբ արաբների հակաթուրքական ապստամբությունը։ Խոսելով երիտթուրքերի հակահայկական քաղաքականության մասին, նա նշում է, որ թուրքական իշխանություններն ամեն ինչ անում էին ինֆորմացիայի հոսքը Թուրքիայից կանխելու համար։

1916-ի մարտի սկզբին Սիրիայում 816 և Միջագետքում 117 արաբ դատապարտվեցին մահվան, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվեց։ Այս առիթով մի թուրք սպա ասել էր. «Այն արաբներին, որոնք ուզում են մեզնից հեռանալ և գաղտնի կերպով համակրում են մեր թշնամիներին, մենք մտադիր ենք վերացնել նախքան նրանք կկարողանան իրենց համակրանքը գործողության վերածել» (126, էջ 27)։

Երբ Էնվերը Ջեմալին նշանակում էր 4-րդ բանակի հրամանատար Սիրիայում, որտեղ անհանգիստ արաբ բնակչությունը հարցականի տակ էր դնում թուրքական իշխանությունը, նա խոսում էր «ուժեղ ձեռքի» անհրաժեշտության մասին։ Եվ Ջեմալ փաշան արդարացրեց իր արյունարբու ընկերոջ վստահությունը. նա այնպիսի արյան բաղնիքներ սարքեց արաբ աշխատավոր մարդկանց գլխին, որ ստացավ «արաբների դահիճ» մականունը (58, էջ 74)։

Թուրքական տիրապետության կրնկի տակ հեծող արաբ աշխատավոր ժողովուրդը հնարավորության սահմաններում օգնության ձեռք էր մեկնում սիրիական անապատներն աքսորված արևմտահայ ժողովրդի բեկորներին։ Հոմսը, Հալեպը, Դամասկոսը դարձան մահվան ճիրաններից ազատված հայ աքսորյալների ապաքինման, վերակենդանացման վայրերը։ Արաբ ժողովրդի ասպնջականությունը մշտապես հիշվում ու բարձր է գնահատվում տառապանքի ճանապարհներով անցած հայ մարդկանց կողմից։

1914-ին թուրքական իշխանությունների դեմ ըմբոստություններ կազմակերպելու ամբաստանությամբ ձերբակալվել և Դիարբեքիր էր աքսորվել արաբ հայրենասեր, իրավաբան Ֆայեզ ալ Ղուսեյինը։ Նա ականատես եղավ երիտթուրքական չարագործություններին և շուտով 1916-ին Բոմբեյում արաբերեն լույս ընծայեց «Հայկական ջարդերը» խորագրով մի գրքույկ։ Արաբ հեղինակն ամենայն ճշմարտացիությամբ բացահայտեց ու մերկացրեց երիտթուրքական բռնակալական, հակաժողովրդական ռեժիմի արատները, ցույց տվեց արաբների հայասիրական գործողությունների բազմաթիվ փաստեր։ 1916-ի սեպտեմբերին նրա գրքույկն արդեն լույս տեսավ ԱՄՆ-ում «Նահատակ Հայաստան» վերնագրով և անգլիախոս աշխարհն այս անգամ արևմտահայ ողբերգության մանրամասներին ծանոթացավ արաբ ականատեսի վկայությունների միջոցով (92)։

1915-ի աշնանը հայկական կոտորածները դատապարտող ամերիկյան կոմիտեն, որի անդամներից կարելի է հիշատակել կարդինալ Գիբբոնսին (հայտնի է հայոց կոտորածներին նվիրված իր գրքով) (52), հրապարակեց մի հայտարարություն, որտեղ Թուրքիայից ստացված բազմաթիվ լուրերի հիման վրա ցույց էր տրվում, որ երիտթուրքերն իսկական պատերազմ էին սանձազերծել հայերին արմատախիլ անելու համար։ Կատարվածը գնահատվում էր որպես «պատմության մեջ առավել ցավալի և առավել հրեշավոր ողբերգություն»։ Երիտթուրքերը համեմատվում էին «վայրի գազանների» հետ (Wild animals could not be worse)։ Քանի որ Կ. Պոլսի կենտրոնական կառավարությունը թույլ չէր տալիս հայերին հեռանալ երկրից, ապա ավելի ակնբախ էր դառնում հայերին արմատախիլ անելու նրա նպատակը, եզրակացնում էր կոմիտեն։

Երիտթուրքերը չէին ժխտում կոտորածները, բայց պնդում էին, որ կատարվածը զինվորական միջոցառումներ էին պաշտպանելու համար պետական շահերը «ոչ լոյալ ցեղի հնարավոր հարձակումից»։ Ամերիկյան կոմիտեն բացահայտում էր թուրքական այս փաստարկների ստահոդությունը։ Հայ որբերին թուրքական անուններ էին տալիս և դաստիարակում որբանոցներում որպես թուրքերի։ Կեսարիայում 500-ից ավելի հայ ընտանիքների բռնությամբ մահմեդական դարձրին (44, էջ 112, 205)։

Սեբաստիայի նախկին նահանգապետ Մուհամեր բեյը 1916-ի հունիսին անձամբ էր գլխավորում «ամելե թաբուրի»՝ բանվորական զումարտակների հայ զինվորների ջարդը։ Ամերիկացի ականատես Ալբերտ Մակենզին անձամբ ճանաչում էր հայ ժողովրդի բազմաթիվ դահիճների։ Նա հիշատակում է խարբերդցի մի իթթիհադականի, որը պարծեցել էր, թե կենակցել է տեղահանված 72 հայ աղջիկների հետ (100, էջ 30)։

1920-ի գարնանը Կահիրեում հրատարակած իր գրքում Պիեր Մերջիմեկյանը տվել է Անկարայի հայության տեղահանման ու կոտորածի համապարփակ պատկերը։ Նա պատասխանել է բազմաթիվ «ինչուների», խորապես վերլուծե-

լով իթթիհադի հակահայկական, հակամարդկային գործողությունները, նահանգապետ Մազհար բեյի, կոմիտեական Աթեֆ բեյի զազրելի չարագործությունները։ Գիրքը բաղկացած է երեք գլխից. 1. Ինչո՞ւ Անգորայի հայերը տեղահանվեցին և կոտորվեցին. 2. Անգորայի հայերն ինչպե՞ս տեղահանվեցին և կոտորվեցին. 3. Իմ անձնական ճակատագիրը Անգորայի տեղահանության մեջ (105)։

Թուրքական գեհենից մազապուրծ հայ մարդիկ պատմելով տեղի ունեցած սարսափների մասին, միաժամանակ խնդրում էին չհրապարակել իրենց անունները, չվտանգելու համար դեռևս փրկվելու հույս ունեցող հարազատներին (86, էջ XXXIX)։

1916-ի գարնանը արևմտահայ գաղթականների թիվը Արևելյան Անդրկովկասում հասնում էր 240 հազարի, Երևանի նահանգում՝ 105 հազարի, Թիֆլիսի նահանգում՝ 7400-ի, Սևծովյան նահանգում՝ 2300-ի, Ստավրոպոլի նահանգում՝ 6200-ի, Թերեքի մարզում՝ 3500-ի, Կուբանի մարզում՝ 10000-ի, Կարսի մարզում՝ 24000-ի, Բաթումի մարզում՝ 12000-ի, Բաքվի նահանգում 2900-ի (48, № 1, 1916, էջ 15, 21)։

Արևմտյան Հայաստանի հայերից փրկվել էին ընդամենը 600 հազար հայ։ Եթե հայ բնակչության թվի հիմքում վերցնենք պատրիարքարանի տվյալները, ապա հայ ժողովրդի կորուստները կազմում են 1,5 միլիոն մարդ (30, էջ 75)։

Ռուսահայաստանում ստեղծված ծանր վիճակը նկարագրված է Բ. Իշխանյանի «Աղետի և տառապանքի աշխարհից» (Թիֆլիս, 1915) գրքույկում։ «Ապաբախտ ժողովուրդն ինքն իր բախտին է թողնված միանգամայն անօգնական՝ գաղթելու ժամանակ»,— գրում էր նա (էջ 7—8)։

1915-ին միայն Էջմիածնում 30 հազար գաղթական մեռավ (42, էջ 87)։ Արևմտահայությանը Էջմիածնից, Ռուսաստանից իսպառ խզելու մտադրությամբ Թալեաթը 1916-ին հատուկ կաթողիկոս նշանակեց թուրքահայերի համար։ Կիլիկիայի Տեր-Սահակ կաթողիկոս Խապայանը կազմեց իր հոգևոր ժողովը, մեկուսանալով Դամասկոսի մեջ (14, էջ

12)։ Երիտթուրքերի նպատակն էր հիմնովին քանդել հայոց միասնական կյանքի բոլոր կռվանները։

«Միություն և առաջադիմություն» կոմիտեն «իրեն դրսևորեց ավելի անխիղճ, քան իր նախորդները՝ ամբողջ կայսրության մեջ իրականացնելով «թուրքացման» քաղաքականությունը»,— գրում է Լեոնարդ Լիիզը։ 1915-ի ապրիլից սկսած թուրքական կառավարության հրամաններով սիստեմատիկ փորձ էր արվում Թուրքիայի հայոց բնակչությանը արմատախիլ անելու համար։ «Տղամարդկանց մեծամասնությունը մորթվեց հաճախակի առավել սարսափելի տանջանքների ենթարկվելուց հետո։ Քնքուշ կանանց գերեվարեցին թուրքական բեյերի ու սպաների հարեմների համար։ Երեխաներին ստրկության վաճառեցին, մահմեդական դարձնելու պայմանով» (96, էջ 8)։

Եթե որևէ մեկի մոտ տարակուսանք կա Փոքր Ասիայում կատարված թուրքական դաժանությունների վերաբերյալ, թող ծանոթանան հայերին տեղահանելու ու ոչնչացնելու մասին թուրքական պաշտոնական հեռագրերին։ Այսպես էր գրում Լոնդոնի «Դեյլի թելեգրաֆ» թերթը 1922-ի մայիսի 29-ին, մատնացույց անելով Մարկ Հ. Վարդի «Դեպորտացիաները Փոքր Ասիայում 1921—1922 թթ.» գիրքը (104)։ Հիշատակվում էր Թալեաթի հրամաններից մեկը (9. 09. 1915), որտեղ ասված էր, որ Թուրքիայում ամենուրեք վերացվում է հայերի ապրելու և աշխատելու իրավունքը։ Մի այլ հրամանում (29. 09. 1915) Թալեաթը թուրք պաշտոնատար անձանց արգելում էր ամուսնությունը հայ կանանց հետ, պահանջելով վերջիններիս ուղարկել անապատ։ Այնուհետև պահանջվում էր (18. 11. 1915) այնպիսի միջոցներ ձեռք առնել, որպեսզի տեղահանված հայերի քարավանների ճանապարհներին գտնվող քաղաքներում և մեծ գյուղերում օտարների, մասնավորապես, ամերիկացիների ուշադրությունը հրավիրող անկարգություն չլինի։ Թալեաթը պահանջում էր ամեն ինչ անել ցույց տալու համար, որ տեղահանության միակ նպատակը բնակության վայրը փոխելն է։ Մի այլ հրամանում (29. 11. 1915) խնդիր էր դրվում ճանապարհների եզրերից հավաքել հայերի դիակները, որոնք արդեն դարձել էին օտարերկրյա սպաների կողմից ֆոտոնկարահանման առարկա։

Պատերազմի տարբեր գոտիներում տեղ գտած ահավոր սարսափներից ոչ մեկը չի կարող համեմատվել հայերի ողբերգության հետ։ Այսպես էր գրում Հենրի Մորգենթաուն 1918-ի մարտին (110)։

Թալեաթի պնդումներն այն մասին, թե հայերը լոյալ չէին, թե նրանք համագործակցում էին թշնամի տերությունների հետ, պատմաբան Հովարդ Ջ. Սաշարը բնութագրում է որպես «սկզբից մինչև վերջ հորինվածք» (117a, էջ 101)՝ երիտթուրքական ժողովրդասպան ծրագիրն արդարացնելու համար։

□

Ինչպիսի՞ն էր իմպերիալիստական տերությունների դիրքորոշումը հայկական հարցում։ Ի՞նչ էին գրում արևմտաեվրոպական և ամերիկյան թերթերն ու ամսագրերը, գրքերի հեղինակներն այն օրերին։ Այս հարցերի պատասխանը այսօրվա սերունդներին անհրաժեշտ է, ճիշտ ըմբռնելու համար իմպերիալիստական ներկա քաղաքականությունը Մերձավոր արևելքում, հյուսիսատլանտյան պակտի անդամ Թուրքիայի դիրքը հակասովետական պլաններում։

Իմպերիալիստական տերությունները հանդիսացան թուրքական ոճրագործության մեղսակիցներ։ Նախ, հիշեցնենք, որ միլիտարիստական Գերմանիան վայրենաբարո թուրքական պետության դաշնակիցն էր և հակահայկական հանցագործ քաղաքականության գլխավոր ոգեշնչողը։ Այս խնդրին մենք անդրադարձել ենք տակավին 1965-ին (17)։ Նույն խնդրին նվիրված նոր աղբյուրներ են հրապարակ հանվել։ Հարկ ենք համարում լրացուցիչ նյութերի և վկայությունների հիման վրա պարզաբանել գերմանական քաղաքականության հակամարդկային էությունը։

Տասնամյակների ընթացքում գերմանական պետականությունը, քաղաքագետները, զինվորական միսիաները գործով ու խոսքով ոգևորում էին թուրքական կառավարողներին, նրանց մղում արկածախնդրությունների։ Օսմանյան կայսրու-

թյան մասնակցությունը պատերազմին նաև գերմանական ակտիվ քաղաքականության ազդեցության արգասիքն էր։

Պատերազմի նախօրյակին թուրքական բանակի վրա անչափ մեծ էր գերմանական զինվորականների ազդեցությունը։ Հայկական հարցի շուրջը դիվանագիտական պայքարի թեժ պահին դիվանագիտական նոր վեճ առաջացավ Ռուսաստանի և Գերմանիայի միջև Լիման ֆոն Սանդերսի ռազմական միսիայի պատճառով։ Սրա 1913-ի միսիան օժտված էր լայն լիազորություններով։ Նույն թվականի մայիսին Բեռլին ժամանեց Մեծ Բրիտանիայի թագավորը։ Պարզ դարձավ, որ Անգլիան իր դաշնակիցների թիկունքում գործարք է կնքում Գերմանիայի հետ, նրա ձեռքը հանձնելով ամբողջ թուրքական բանակը։

Երիտթուրքերի քաղաքականության բացահայտ հակառուսական այս դրսևորման դեմ մեծ աղմուկ բարձրացրեց ռուսական մամուլը։ Ավելի ուշ Բեռլին ուղարկված Ռուսաստանի կառավարության նախագահ Կոկովցևի բողոքները գործնական նշանակություն չունեցան (65)։ 1913-ի դեկտեմբերի կեսերին գերմանական զինվորականների խումբը (թվով 800 մարդ) ժամանեց Կ. Պոլիս։ Լիման ֆոն Սանդերսն ստացավ թուրքական բանակի մարշալի կոչում և դարձավ նույն բանակի գլխավոր տեսուչ։

Պատահական չէ, որ գերմանական ֆաշիստ Կուրտ Օկայը մի ամբողջ գիրք (700 էջ) է նվիրել Էնվեր փաշային՝ Գերմանիայի «մեծ բարեկամին»։ Գրքի բնաբանը Հիտլերի գովասանական կարծիքն է Էնվերի մասին։ Տեղին է հիշել ժողովրդական առածը՝ «Նման զնմանս գտանե»։ Ըստ ֆաշիստ հեղինակի, «միայն Էնվերն էր ճիշտ հասկանում և գնահատում Թուրքիայի բարեկամությունը Գերմանիայի հետ» (114)։ Իսկ գերմանացիներն Էնվերին շոյելու համար Թուրքիա ուղարկվող ապրանքների վագոնների վրա Թուրքիայի փոխարեն գրում էին՝ «Էնվերլանդ»։

Կլեմանսոն իր խմբագրած «L'Homme Libre»-ի մեջ 1913-ի հուլիսի 28-ին նշում էր Բեռլինի բացասական դերը հայկական հարցում։ Նա գրում էր, որ ցարական կառավարությունը ետ կանգնեց Հայաստան զորք մտցնելու

մտքից, հանդիպելով Գերմանիայի դիմադրությանը (27, № 165, 1913)։

Ահա թե ինչպես էր պատկերացնում հայկական հարցը ու նրա շուրջը գոյացած միջազգային հարաբերությունների խճճույկը Գերմանիայի արտաքին քաղաքականության ղեկավարներից մեկը՝ Ցիմերմանը 1914-ին, պատերազմի նախօրյակին։ Հայաստանից ստացվող բոլոր զեկույցները, ասում էր նա, վկայում են այն մեծ հույսերը, որ այդ ժողովուրդը կապում է Ռուսաստանի հետ։ Թուրքերի նկատմամբ հայերի ունեցած խոր անվստահության պատճառով Գերմանիան անհնարին է համարում նրանց մեկը մյուսի հետ հաշտեցումը։ Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող վտանգից խուսափելու համար Գերմանիան ըստ էության հայերին պետք է լրիվ հանձնի թուրքերի տնօրինությանը։ Բայց այստեղ, ցավոք, ասում էր Ցիմերմանը, Ռուսաստանը հանկարծ հանդես եկավ հայերի շահերի պաշտպանությամբ։ Բացի այդ, պետք է վախենալ նաև հայկական հուզումներից, ինչը Ռուսաստանի միջամտություն առաջ կբերի։ Այնուհետև, Ցիմերմանը եզրակացնում էր. եթե Գերմանիան պաշտպանի հայկական բարենորոգումների ծրագիրը և դրանով իսկ նըպաստի հայերի պահպանմանը, ապա հարկ կլինի հոգ տանել հայերի համակրանքը շահելու ուղղությամբ։ Դրա համար անհրաժեշտ կլինի հայերին ապացուցել Գերմանիայի բարյացակամությունը ինչ-որ օգտակար գործողություններով։ «Ինչևիցե, ես դեռ կանգ չեմ առել մի որևէ որոշակի տեսակետի վրա,— ամփոփում էր իր մտքերը Ցիմերմանը,— և պետք է մի լավ մտածել այդ ամենի մասին»։ Քանի որ հայերը համակրում էին Ռուսաստանին, նրա հետ էին կապում իրենց վաղվա օրը, ապա Գերմանիան պաշտպանելու էր երիտթուրքերին նրանց հակահայկական գործողություններում։ Գերմանիան երբեք չի կարողանա ապահով տիրապետություն ունենալ Կիլիկիայում և Միջագետքում, քանի դեռ Ռուսաստանը ձգտում է նվաճել Հայաստանը, քանի որ ամեն մի զինվորականի պարզ է, որ «ով տիրում է Հայաստանին, նա անխուսափելիորեն տիրում է Միջագետքին և Կիլիկիային՝ դեպի Միջերկրական տանող ելքին»։ Այսպես էր մտածում գերմանացի դիվանագետը՝ հայոց արտաքին գործերի ան-

պաշտոն հավատարմաբար դոկտոր Զավրիևի հետ ունեցած զրույցի ժամանակ, 1914-ի սկզբին (50, թթ. 29—32)։

Մի կողմից, Գերմանիան հարաճուն հաջողությամբ աշխատում էր Թուրքիայում գրավել գերակշիռ դիրք, որի ողնաշարը Բաղդադի երկաթուղին էր։ Պարզ է, որ տնտեսական այս ազդեցության պահպանության ամրապնդման համար ամբողջ օսմանյան կայսրության սահմաններում, Բեռլինի կառավարությունը պետք է քաղաքական աջակցություն ցույց տար Բ. Դռանը, բայց, մյուս կողմից՝ գերմանական կառավարությունն ի նկատի ուներ օսմանյան կայսրության փլուզումն ավելի կամ պակաս մոտավոր ապագայում և այս նախաձեռնությամբ պատրաստվում էր Թուրքիայի բաժանմանը՝ նպատակ ունենալով Փոքր Ասիայում ստեղծել հատուկ գերմանական «աշխատանքի գոտի» (Arbeit Zone)։ Այստեղից էլ Վիլհելմշտրասեի հայկական քաղաքականության շարունակության տատանումը. նախ՝ դժգոհ չթողնել Հայաստանում որևէ լուրջ բարենորոգում չկամեցող բարեկամ Թուրքիային, և ապա՝ չխրտնացնել հայկական տարրին (28, էջ 72)։ Կ. Պոլսում գերմանացի դեսպան Վանգենհայմն իր վերադասին հղած հաղորդումներում պարզում էր իր տեսակետի իմաստը։ Նա դեմ էր, որ վեց վիլայեթները միացվեին մի մեծ նահանգի մեջ։ Այս դիրքերից էլ նա քննադատում էր ռուսական նախագիծը։ Վանգենհայմն առարկում էր հայկական նահանգից մի քանի քրդական մեծամասնություն ունեցող գավառներ (Հեքիարի, Սղերդի հարավային մասը, Բիշերեկ ու Մալաթիա և Սըվասի հյուսիսարևելյան մասը) դուրս հանելու դեմ։ Այս հարցադրման մեջ նա տեսնում էր ռուսական կառավարության կողմից Ռուսաստանի վրա հենված հայկական մեծամասնություն ունեցող վարչական մի միություն ստեղծելու ձգտում։ Մյուս կողմից, նախագծվող հայկական նահանգի հարավային մասը, ըստ բարոն Վանգենհայմի, գտնվում էր գերմանական շահերի շրջանում։ Գերմանիայի դեսպանը պաշտպանեց թուրքական ծրագիրը, որ նախատեսում էր ընդհանուր բարենորոգումներ ամբողջ կայսրության համար (28, էջ 67)։ Վանգենհայմը գտնում էր, որ «Հայկական հարցի օգնությամբ Ռուսաստանը կամենում է իր առջև բաց պահել Կ. Պոլսի ճանապարհը» և որ «սահ-

մանի մոտ պատահած առաջին կոտորածը պատրվակ կծառայի Ռուսաստանին մտնելու Հայաստան» (90, № 15304)։ Իհարկե, այս կարծիքն ամբողջությամբ չէին բաժանում ոչ Պետերբուրգում գերմանական դեսպան Պուրտալեսը, ոչ արտաքին գործերի մինիստր ֆոն Յագովը։ Սրանք այն կարծիքին չէին, թե Ռուսաստանն ամեն գնով կոնֆլիկտ է փնտրում Թուրքիայի հետ, նշանակություն էին տալիս Սազոնովի այն հավաստիացումներին, թե իր կառավարությունը չափազանց շահագրգռված է իր սահմանները զերծ պահելու հեղափոխական անկարգություններից։ Մի գրության մեջ ֆոն Յագովը հայտնում էր Վանգենհայմին, որ ինքը հավատում է ռուսական կառավարության ձգտմանը՝ առժամանակ պահպանելու Թուրքիայի ամբողջականությունը (90, № 15367)։

Անդրադառնալով հայկական հարցում Գերմանիայի դերին, ռուս դիվանագետ Գուլկևիչը գրում է. Գերմանիան «հայկական խնդրում մեզ հետ համաձայնվեց երկու նպատակով. նախ՝ որպեսզի հնար ունենար ասելու Բ. Դռանը, թե ինքը չափավոր, Թուրքիայի համար վտանգ չներկայացնող բարենորոգումների գնով կարողացավ ռուսներին ետ պահել ընդարձակ բարենորոգումներից. երկրորդ՝ ապահովելու համար բարյացակամությունը հայերի, որոնց Գերմանիան կարևորություն է ընծայում շնորհիվ նրանց գերակայության Կիլիկիայում, որը գերմանացիք համարում են իրենց ազդեցության ոլորտը։

1912—1913 թթ. Գերմանիայում որոշակի տարածում էր գտնում այն տեսակետը, թե ասիական Թուրքիայի քաղաքական ու տնտեսական ամրացումը և եվրոպականացումը անկարելի է, առանց հայ ազգի աջակցության, թե գերմանացիների ու հայերի շահերը առնչվում են։ Մյուս կողմից, ի դեմս հայերի տեսնում էին իրենց մրցակիցներին առևտրի, արդյունաբերության և ֆինանսների բնագավառներում։ «Ահա թե ինչու նրանք ակտիվորեն նպաստում էին հայերի ֆիզիկական ոչնչացմանը։ Միայն թուրքերը չէին էլ կարողանա դա իրագործել այդքան մեթոդիկորեն։ Դրա համար նրանք չափազանց վատ կազմակերպիչներ են։ Այստեղ պարզ արտահայտվեց գերմանացիների մասնակցությունը» (98, էջ 195, 196, 206)։ Պանգերմանական միության օրգան

«Ալդոյչե բլետտեր» թերթը 1913-ի հունիսի 28-ին գերմանական ժողովրդին կոչ էր անում «իր ձեռքը դնել» ասիական Թուրքիայի վրա («տնտեսական ինքնապաշտպանության» նպատակով), թուրքերին համարելով անընդունակ օգտագործելու իրենց հողը երկրի տնտեսությունը զարգացնելու համար (47, էջ 21)։

«Գերմանիան 1913 թվականին սպառնում էր պատերազմով Հայաստանի պատճառով...»,— հիշատակում է Վ. Ի. Լենինը։ Նա ուշադրություն էր նվիրում «Գերմանական սոցիալ-դեմոկրատիան և համաշխարհային պատերազմը» գրքի հեղինակ Լենչի այն մտքին, թե «1913 թվականին Ռուսաստանը փորձում էր գրավել Հայաստանը» (1, հ. 39, էջ 374, 868)։

Թուրքիան ավելի որոշակի ընկավ Գերմանիայի գիրկը, երբ Չերչիլը բռնագրավեց Անգլիայում պատվիրված թուրքական երկու ռազմանավերը (117, էջ 13)։ 1916-ի ավարտին Վ. Ի. Լենինը նշում էր, որ Թուրքիան ֆինանսական ու ռազմական առումով Գերմանիայի վասալն է դարձել։

Կ. Պոլիսը լիքն էր գերմանական գրքերով, տեղեկագրերով, որոնք հիանալի հեռանկարներ էին խոստանում գերմանական առևտրին Փոքր Ասիայում, տալիս էին գործնական խորհուրդներ և ցուցումներ Գերմանիայի վաճառականներին Արևելքում առևտրի սովորությունների ու կարգ ու կանոնի մասին (66, № 69, 1919)։ Պատերազմի պահին, երբ արյան ծարավի երիտթուրքերի պարագլուխները գերմանական դիվանագետներին ասում էին, թե նրանք նույնպես հայերի նկատմամբ նույնը կանեին և պահանջում էին չմիջամտել Թուրքիայի ներքին գործերին, կայզերական Գերմանիայի ներկայացուցիչները համաձայնության նշան էին անում։ 1916-ի հունիսին Շվեյցարիայում Հալեպի գերմանական դպրոցի ավագ ուսուցիչ դոկտոր Էդ. Գրիտների հետ ունեցած հանդիպման ժամանակ պրոֆ. Խաչատրյանը տեղեկացել էր, թե կայզերն ինչ էր ասել էնվերին հայերի մասին. «Դուք կատարելապես ազատ եք ձեր ուզած ձևով կարգադրելու հայոց խնդիրը...»։ Այո, Լեփսիուսը գրել է. «Դժբախտաբար կայզերը շատ գեշ է տրամադրված հայերի վերաբերմամբ» (19. 29. 11. 1919)։

Գերմանական թերթերը տեղահանությունները ներկայացնում էին որպես թուրքական կառավարության անհրաժեշտ միջոցառումներ (91, էջ 17)։ Կ. Պոլսում գերմանական ռազմածովային խորհրդական հերցոգ Էռնստ Ռևենտլովը «Դոյչե Տագեսցեյտունգում» գրում էր, թե «Թուրքիան ոչ միայն իրավունք ունի պատժելու ապստամբ հայերին, այլև դա համարում է Թուրքիայի պարտքը», այն պատճառաբանելով ռազմական անհրաժեշտությամբ։ «... Մենք՝ գերմանացիներս, պետք է համարենք այդ հայկական հարցը ոչ մայն Թուրքիային, այլև նրա բոլոր դաշնակիցներին վերաբերող հարց»։ Նա դաշնակիցների պարտքն էր համարում ամեն կերպ օգնել «թուրքերին այն ժամանակ, երբ նրանց վրա հարձակվում են դրսից» (48, № 2—3, 1916, էջ 30)։

1915-ի հոկտեմբերի 4-ին պատասխանելով գերմանական «Ցեյտունգվերլագ» թերթի խմբագիր դ-ր Ցարերի հարցմանը, Ցիմերմանը չէր թաքցնում, որ «հայկական հարցի պատճառով խզել կապերը Թուրքիայի հետ մենք հարմար չենք գտել և չենք գտնում» (125, էջ 144)։

1915-ի հուլիսին գալով Կ. Պոլիս և տեղեկանալով հայկական ջարդի մանրամասների մասին, Լեփսիուսն ասում էր, թե «այժմ այնպիսի մի եղեռն է կատարվում, որ ոչ միայն Թուրքիայի պատմության, այլև ընդհանուր պատմության մեջ իր նախընթացը չունի...» (19, 27. XI. 1919)։ Հերբերտ Գիբոնսը գրում է, որ իրեն ծանոթ ամերիկյան մի միսիոներ, որին ինքը հավատ է ընծայում, տեսել է, թե ինչպես ասիական Թուրքիայի մեծ քաղաքներից մեկում գերմանական սպան անձամբ ղեկավարում և ուղղություն էր տալիս թուրքական հրետանուն ռմբակոծելու հայկական խաղաղ բնակչությանը։ Ըստ նրա, այլ կետերում գերմանական հյուպատոսներն ամեն կերպ պաշտպանում էին հայերին կոտորելու թուրքական քաղաքականությունը (52a, էջ 27)։

Սակայն գտնվեցին ազնիվ գերմանացիներ, որոնք գերմանական իշխանությունների հետապնդումների, արգելքների ու գրաքննության պայմաններում իրենց ձայնը բարձրացրին, բողոքելով հայոց գենոցիդի դեմ։ Դրանցից առաջինը Կարլ Լիբկնեխտն էր, որը գերմանական ռայխստագում կատարած իր ճշմարտացի ու սկզբունքային հարցապնդումնե-

րով ու հայտարարություններով բացահայտում էր կատարված չարագործության արմատները, ցույց տալիս Թուրքիայի դաշնակից գերմանական կառավարության վատ դերը (59)։ Լեփսիուսը գրել է, թե պատերազմի ժամանակ գերմանական գրաքննությունը չէր արտոնում Թուրքիայում տեղի ունեցող դեպքերի մասին ճշմարտության հրապարակումը (15, էջ ա)։

Գերմանական որոշ սոցիալ-դեմոկրատներ՝ «Ուլշտեյն պաբլիշինգ հաուզի» դիրեկտոր Բեռնհարդը, հրատարակիչ Յուլիուս Կալիսկին և ուրիշներ, Լեփսիուսին մեղադրում էին հայոց վիճակն անհիմն կերպով ծայրահեղ մռայլ գույներով ներկայացնելու մեջ։ Յու. Կալիսկին նույնիսկ գոհունակություն էր հայտնել, որ հայերի գործարար ունակությունները կարող էին «հաջողությամբ փոխարինվել հրեականով» (125, էջ 145)։

Ստորության մի նմուշ է համարում Յ. Մարկվարտը գերմանական մի ժուռնալիստի վարքագիծը «Դոյչե Տագեսցեյտունգ» թերթից, որը ոչ միայն հավանություն էր տալիս, այլև արդարացնում էր հայերի ոչնչացման գործը։ Մինչև 1918-ի հոկտեմբերը գերմանական կառավարությունը խստիվ արգելում էր որևէ դրական լուր, տեղեկություն հայտնել հայերի մասին։ Թուրքական զրպարտության հերքման որևէ փորձ (հոդվածների, գրքույկների հրատարակում), որը կարող էր հասարակությանը պարզել իրականությունը, ներկայացվում էր որպես Գերմանիայի նկատմամբ թշնամական գործողություն։ Մարկվարտը բերում է մի օրինակ. երբ մի հեղինակ՝ դոկտոր Մարտին Նեպաժը հրապարակեց «Դիմում գերմանական ժողովրդի ներկայացուցիչներին» գրքույկը, Քյոլնի թերթերից մեկը փորձում էր ժխտել նույնիսկ այսպիսի հեղինակի գոյությունն անգամ։ Մարկվարտը ցույց էր տալիս գերմանական գրաքննության հակաժողովրդական բնույթը։ Գերմանացի պաշտոնյաները չէին թաքցնում թուրքական վայրենությունները պաշտպանելու իրենց դիրքը, պահանջում էին մեղադրել հայ ժողովրդին, որն իբրև ինքն էր հրահրել կոտորածը (103)։

Բեռլինում լույս տեսնող բողոքական «Ալգեմայնե միսիոնս ցեյտշրիֆտ» ամսագիրը (հրատարակիչներ՝ պրոֆ. Յուլիուս Ռիխտեր և Իոհաննես Վարնեկ) հրապարակեցին Թուրքիայում

Հայերի կոտորածների վերաբերյալ մի չափազանց ճշմարտացի հաշվետվություն։ Այստեղ հիմնականում հիշատակվում էին ծագումով և հպատակությամբ գերմանացի ականատեսների վկայությունները։ Գերմանական գրաքննությունն անհանգստացել էր և արգելել որևէ արտատպություն այդ ամսագրից կամ որևէ հղում այդ նյութին (48, № 2—3, 1916, էջ 1)։

1916-ի հունվարի 4-ին Լոնդոնի «Թայմսը» տպագրել է մի ականատեսի պատմածները Խարբերդից դուրս եկած 5000 տեղահանված հայերի տանջանքների մասին, որոնք ձնցուտների մեջ, քաղցած ու վայրենացած ոչնչացվեցին ճանապարհին՝ խեղդվելով գետերի ջրերում, սարսափահար լինելով անապատներում։ 5000-ից տեղ էին հասել ընդամենը 213-ը։ Այս նյութում սոսկալի պատկերներ են նկարագրված տեղահանված կանանց ու աղջիկների կյանքից։ Գերմանացի սպան հրամայում է թուրք ժանդարմներին մտրակներով ծեծել ջրի վրա խմբված հայ կանանց ու երեխաներին։ Իսկ գերմանական սպաները հրանոթներից կրակ էին բացում անզեն հայերի տների վրա (118, էջ 68—69)։

Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին նկատել էր. ակներև է, որ որոշված է արմատախիլ անել հայկական տարրը, որն այնքան կասկածելի է դարձել այստեղ, վնասակար մեկընդմիշտ (127, էջ 233)։ Ինչ խոսք, որ թե գերմանական դեսպան Վանգենհայմը, թե ավստրո-հունգարական դեսպան Պալավիչինին անհանգստացած էին, որ Թուրքիայի քրիստոնյաների դեմ ձեռնարկված անմարդկային արարքները կարող էին իբր Անտանտի տերություններին պատրվակ տալ իրենց ամբողջ ուժն ուղղելու Թուրքիայի դեմ։ Վանգենհայմը Թալեաթին խորհուրդ է տալիս խուսափել «կանանց ու երեխաներին հետապնդելուց»՝ Թուրքիայի հակառակորդներին պրոպագանդայի լավ նյութ մատակարարելու համար։ Թալեաթն իր պատասխանում ընդունում է, որ գավառներում զոհվել են հազարավոր մարդիկ, բայց շեշտում է, թե ոչ միայն հայեր, և ժխտում է դաժան արարքների փաստը (125, էջ 135)։ Ոմանք փորձել են թուրքական գործերում գերմանական քաղաքականության այս կամ այն նրբերանգը բացատրել դեսպանների անձնա-

վորությամբ։ Բայց իրականում դեսպանները փոխվում էին, իսկ կայզերական Գերմանիայի թուրքասիրական քաղաքականությունը պահպանվում էր։

1915-ի հուլիսի 20-ից մինչև հոկտեմբերի 2-ը Վանգենհայմը արձակուրդ էր վերցրել, և դեսպանատան գործերը վարում էր իշխան Հոհենլոե Լանգենբուրգը։ Նրան որպես ժամանակավոր հավատարմատար փոխարինեց ֆոն Նեյրատը։ 1915-ի հոկտեմբերին սրտի կաթվածից մեռավ դեսպան Վանգենհայմը։ 1915-ի նոյեմբերից մինչև 1916-ի հոկտեմբերը դեսպան էր կոմս Վոլֆ Մետերնիխը։ Նրանից հետո դեսպան նշանակվեց ֆոն Կյուլմանը (1916-ի նոյեմբերից 1917-ի հուլիս), հետո կոմս Բերնսդորֆը (1917-ի նոյեմբերից—1918-ի հոկտեմբեր)։ Այս բոլորի օրոք գերմանական քաղաքականությունը մնաց շեշտված հակառուսական և հակահայկական՝ թուրքական բոլոր գործերում։ Սրանք բոլորն էլ իրենց սև մասնակցությունը բերեցին թուրքական պետականության հակահայկական գործողություններին։

Վերլուծելով 1916-ի հուլիսի 30-ին Կ. Պոլսից Բեռլին գերմանական նոր դեսպան Վոլֆ Մետերնիխի հղած զեկուցագրի բովանդակությունը, Ռուկերը ցույց է տալիս երիտթուրքերի իրականացրած հակահայկական վայրենի քաղաքականության զազրելիությունը։ Նա գրում է, որ այն «քաղաքական մոլեռանդություն էր», որը «ուղեկցում էր գենոցիդին»։ 1915-ի հայկական գենոցիդը իբրպես XX դարի «պտուղ էր ռասիզմի ու ռացիոնալիզմի խառնուրդով» (127, էջ 237)։

Արևմտահայության նկատմամբ կատարվածից սարսափել էին նույնիսկ սիոնիստները։

Գերմանացի Դևիս Թրիչը չի ժխտում, որ հրեաները մի պահ դանդաղեցրին Պաղեստինի գաղութացումը, որովհետև «ֆրանսիական և բրիտանական ազդեցիկ հրեաները տակավին գտնվում էին հայկական կոտորածների (1895—1897 թթ.) տպավորության տակ»։ Իրականում հայերի սպանդը Կ. Պոլսում մի համոզիչ ապացույց էր, որ հրեաները օսմանյան կայսրությունում ապահով վիճակում էին, քանզի ոչ մի հրեայի գլխից մազ չպակասեց։ Եվ 1897-ին սիոնիստների առաջին համագումարը որոշեց հրեա ժողովրդի համար հիմնա-

դրել հայրենի օջախ Պաղեստինում։ Հետո 1907-ին Յաֆայում բացվեց առաջին հրեական դպրոցը, 1914-ին՝ առաջին պոլիտեխնիկական ուսումնական հաստատությունը։ Իսկ 1915 թվականի «տպավորությունից» թվում էր, թե անհնար էր ազատվել։ Դոկտոր Դևիս Թրիչը դա գրել էր 1915-ի ավարտին (88)։

«Ես գերմանացիներին համարում եմ լիովին պատասխանատու հայերի կոտորածի համար։ Բեռլինից ասված մի քանի խոսքը կարող էր վերջ դնել կոտորածին քսանչորս ժամվա ընթացքում»։ Այս խոսքերը պատկանում են անգլիական պառլամենտի անդամ Օ'Քոնորին, որը մասնակցել էր 1919-ին Լոնդոնում տեղի ունեցած հայանպաստ միտինգին (79, էջ 23)։

1917-ի ամռանը Վիլհելմ II-ի և Թալեաթ փաշայի միջև տեղի ունեցած բանակցություններից հետո որոշվեց Թուրքիային 5 միլիոն մարկ հատկացնել Ռուսաստանի դեմ ջիհադը՝ կրոնական պատերազմը շարունակելու և ծավալելու նպատակով (61, էջ 54)։ 1915-ի գարնանից մինչև 1916-ի դեկտեմբերը Կ. Պոլսի անցուդարձի ականատեսներից է գերմանական «Քյոլնիշե Ցայտունգ» թերթի թղթակից դոկտոր Հ. Շտյուրմերը։ Նրա գիրքը (118) ժամանակին մի շառաչուն ապտակ հանդիսացավ հայ ժողովրդի դահիճների ու նրանց համախոհների երեսին։ Հայերի կոտորածը նա համեմատում է Աֆրիկայի ստրկավաճառության, Ներոնի կողմից քրիստոնյաներին ջարդելու մեթոդների հետ։ Նա համոզիչ փաստերով ժխտում է արևմտահայության տեղահանությունը «պատերազմական անհրաժեշտությամբ» բացատրելու երիտթուրքական ստահոդ վարկածը։ Նա ցույց է տալիս, որ երիտթուրքերը մշակել էին հայ ցեղն արմատախիլ անելու համապարփակ սիստեմ» (118, էջ 49)։ Գերմանացի լրագրողը Շվեյցարիայում ծանոթացել էր Թոյնբիի հայկական կոտորածին նվիրված գրքի ձեռագրին։ Նա համոզված էր, որ հանձինս երիտթուրքերի, աշխարհը գործ ունի մարդկության պատմության ամենացինիկ, ամենանողկալի ոճրագործների հետ (118, էջ 51)։ Գերմանացի լրագրողը չէր թաքցնում երիտթուրքական հանցագործների սրիկայությանը գերմանական կառավարողների մեղսակցությունը։

Շտյուրմերի կինը Գալաթասարայի փողոցներում 1916-ի

ամռանը տեսել էր հայ մարդկանց նկատմամբ կատարված վայրենությունները։ Տուն դառնալով նա ամուսնուն տրամաբանական հարց էր տալիս. եթե այդ բոլոր հրեշավոր գործողությունները կատարվում են Կ. Պոլսի գործարար կենտրոնում, ապա ի՞նչ է կատարվում գավառում, ներքին շրջաններում (118, էջ 62—63)։ Շտյուրմերն ականատեսի և օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական, ազգային խնդիրների խոր իմացությամբ ցույց է տալիս երիտթուրքերի պանթուրքիստական ծրագրի էությունը. թուրանիզմի, մեծ Թուրքիայի իրագործում «սրբազան» պատերազմի միջոցով. երկրի ներսում թուրքացում բռնի՝ քաղաքական ու ազգայնական միջոցներով, «հանցագործ բարբարոսությամբ», «ներքին գաղութացմամբ և հայկական կոտորածներով» (118, էջ 152—153)։ Նույն հեղինակը շեշտում է, որ պանիսլամականությունն իր տեղը զիջել էր ռասայական պանթուրքականությանը։ «Թուրքական Թուրքիա»՝ գոչում էին երիտթուրքերը։ Սրանք մտածում էին, որ պատերազմից հետո «Անատոլիան դառնալու էր թուրքական երկիր և թողնվելու էր իրենց» (118, էջ 176—178, 181, 185)։

Շտյուրմերը հաղորդում է, որ հայերից բռնագրավված ունեցվածքը, ապրանքները վաճառվում էին չնչին գներով (118, էջ 167)։ Նա հիշատակում է Մեհմեդ էմինին, որն իր գրվածքներով խրախուսում էր Անատոլիայի նվաճումը։ «Թուրք օջախ» հանդեսի էջերում թուրքականության ազդեցիկ տեսաբանները, այդ թվում արևմտահայության դահիճներից Բեհաէդդին Շաքիրը և ուրիշներ կոչ էին անում թուրքերին ամրանալ հայոց հողերի վրա, զարգացնել Արևելյան Անատոլիան (118, էջ 172—173)։ Թուրքականության գաղափարը երիտթուրքերն առաջ էին մղում շեշտված եռանդով. գործի էին կոչված ինչպես թուրքագիտությունը, այնպես և քաղաքական պրոպագանդան, գրում է Շտյուրմերը։ Ճիշտ է, Անդրկովկասը Ռուսաստանի դեմ հանելու էնվերի պլանը ձախողվեց պատերազմի հենց սկզբին, բայց երիտթուրքերը ռուսների հաղթանակները դիմավորելու էին առանց հայերի, դատարկված Հայաստանով (118, էջ 185—186)։

Անդրադառնալով Թալեաթի դերին, որը 1916-ին արդեն վարչապետ էր, ամենալայն լիազորություններով օժտված

երիտթուրք պարագլուխ, գերմանացի Շտյուրմերը նրան անվանում է «Թուրքիայի չթագադրված թագավոր» (118, էջ 195)։ Գերմանացի լրագրողը գտնում է, որ գերմանական կառավարությունը հավասարապես պատասխանատու է կատարված չարդերի համար (118, էջ 42—43)։ Եվ հայերի նկատմամբ թուրքերի՝ «ջինգոիզմը» հիասթափեցրել էր նրան։

Ֆրանսիացի Ռընե Բինոնը իր «Հայերի բնաջնջումը» (1916, Փարիզ) գրքում գրում էր, թե «գերմանացիք քաղաքական շահ ունեին հայոց անհետացումով, որպեսզի Թուրքիան դառնա գերմանական ցեղին գաղթավայր»։ Բինոնը շեշտում էր, որ «գերմանական շահերը հրաշալիորեն ներդաշնակ էին թուրքերի դարավոր ատելության հետ» (6, էջ 13—14)։ Պատերազմի տարիներին օսմանյան կայսրությունում Գերմանիայի ազդեցիկ դերի բացահայտմանը, գերմանա-թուրքական հարաբերությունների տարբեր կողմերի քննարկմանն է նվիրված կանադական պրոֆեսոր Ուլրիխ Տրումպեների փաստացի նյութերով ու դիպուկ նկատանքներով հարուստ աշխատությունը (125)։

«Հայկական ողբերգության մեջ Գերմանիայի դերի» հարցը, ըստ Տրումպեների, տակավին կարոտ է թարմ ուսումնասիրությունների։ Նա գտնում է, որ միակողմանի են արևմտաեվրոպական այն հեղինակները, որոնք ցայսօր փորձում են ապացուցել, թե պատերազմի ժամանակ հայերի հետապնդումները հրահրվել են գերմանական կառավարության կողմից։ Տրումպեները դատապարտում է Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի կառավարություններին այն բանի համար, որ նրանք տեսնելով, որ ամբողջ շրջաններ դատարկվում են հայերից՝ նրանց ցրելու ու ոչնչացնելու համար, ոչինչ վճռական ու լական չձեռնարկեցին թուրքական չարագործությունը դատապարտելու ուղղությամբ (125, էջ 205)։ Նա ցույց է տալիս, որ կայզերական Գերմանիայի տնօրեններն այնքան շատ էին շահագրգռված թուրքական դաշնակցին չխրտնացնելու մեջ, որ աչք էին փակում Բ. Դռան բոլոր հակամարդկային արարքների վրա։

«Իրականում,— գրում է Տրումպեները,— տրամադրության տակ առկա ապացույցների մեծամասնությունն այն հետևությանն է բերում, որ արևելյան նահանգներում հայ

ընակչության սիստեմատիկ ջարդերը արդեն որոշված էին «իթթիհադի» ռեժիմի կողմից և հուղումները Վանում ու այլ վայրերում լոկ հարմար առիթ ծառայեցին ցանկացած ընդդիմության ծրագրի իրականացման և մեծ մասշտաբով ոչնչացման համար» (125, էջ 203)։ Ըստ Տրումպեների, պատերազմի տարիներին օսմանյան հայերի հետապնդումները «ոչ հրահրվել և ոչ էլ հավանություն են արժանացել գերմանական կառավարության կողմից»։ Սա, իհարկե, ապացուցներ պահանջող հայտարարություն է։ Բանն այն է, որ պատերազմական պայմաններում ինքնապաշտպանական ելույթների օջախները վերացնելու երիտթուրքերի քաղաքականությունը, անտարակույս, հավանություն էր արժանանում ինչպես Գերմանիայի, այնպես և Ավստրո-Հունգարիայի կառավարողների կողմից։ Շատ դեպքերում Թուրքիայում ծառայող գերմանացի սպաները գործնականում օգնում էին Թուրքիային։ Տրումպեները փորձում է համոզել իր ընթերցողներին, որ դեսպանի պաշտոնում Վանգենհայմի փոխարինած Հոհենլոե Լանգենբուրգը հայկական հալածանքները դատապարտողի, սեփական նախաձեռնությամբ թուրքական իշխանություններին բողոքներ ներկայացնողի դերում էր։ Այս նպատակով նա արխիվային բազմաթիվ քաղվածքներ է վկայակոչում, ցույց տալիս թուրքական չարագործության պատասխանատվության իսկական հեղինակներին (125, էջ 141—142)։ Նա և գերմանացի այլ հեղինակներ փորձում են շրջանցել, մոռացության տալ փաստերը։

Տրումպեները փորձում է մեղմել Գերմանիայի կատարած սև դերը երիտթուրքերի հակահայկական չարագործության մեջ։ Սակայն նա չի հաջողում իր այդ փորձի մեջ, որովհետև փաստերն այլ բան են ապացուցում։ «Թեև Բեռլինի և Վիեննայի պետական գործիչները նողկում էին և ցնցված էին թուրքերի դաժան քաղաքականությունից և Բ. Դռանը հետագայում ուղղեցին բազմաթիվ նախազգուշացումներ ու բողոքներ, նրանք ավելի շատ շահագրգռված էին այն բանում, որ թուրքերը շարունակեն մնալ պատերազմական վիճակում, քան այն բանում, որ իրենցից վանեն Բ. Դռանը, գործադրելով նրա վրա իրական, ուժեղ ճնշում»,— եզրակացնում է

Ուլրիխ Տրումպեները (125, էջ 132)։ Իր գրքի «Սպանությունները և գերմանացիները» բաժնում անգլիացի պատմաբան Ռունկերը ցույց է տալիս Գերմանիայի և Ավստրո—Հունգարիայի մեղսակցությունը թուրքական ոճրագործությանը։ Տրումպեների գիրքը Ռունկերը գնահատում է որպես պատմական ճշմարտություններից հեռանալու մի փորձ՝ հօգուտ գերմանացիների վատ դերի արդարացման։

Գերմանիայի դիրքորոշման բնութագրման տեսակետից հատկանշական է մարդասպան Թալեաթի թաղման արարողությանը արտաքին գործերի նախարարության ուղարկած ծաղկեպսակի ժապավենի մակագրությունը. «Պետական մեծ մարդուն և հավատարիմ բարեկամին» (2, էջ 365)։ Վերջին հաշվով սա էր գերմանական պետականության դիրքորոշումը։

□

Պատերազմի նախօրյակին արդեն պարզ դարձավ, որ հայ ժողովուրդը կանգնեց Ռուսաստանի կողքին։ Նախօրյակին ռուսական պետական քաղաքականությունն իր որոշակի նպատակաուղղվածությամբ նպաստում էր Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու ընդհանուր մտայնության ու պատրաստակամության խորացմանը։ «Վախենալով հեղափոխական շարժման զարգացումից ինչպես թուրքահայերի, այնպես էլ ռուսահայերի մոտ,— գրում է սովետական պատմաբան Վ. Շպիլկովան,— ցարական կառավարությունը ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի Բ. Դուռը իրականացներ որոշ ռեֆորմներ կանխելու հեղափոխական պայթյունը, ինչպես նաև իր կողմը գրավելու հայերի համակրանքը» (73, էջ 19)։ Սակայն խաղաղ ժամանակների քաղաքականությունն արմատապես տարբերվում է պատերազմի պայմաններից։ Հայոց ամբողջովին ռուսասեր լինելու գործոնը թշնամություն էր ներկայանում թուրքականությանը։

Պատերազմի բռնկումը հույսեր ներշնչեց հայությանը, որ խորտակվելու է Հայոց հարցի հզոր հակառակորդ Գերմանիան և ուրեմն նպաստավոր քաղաքական կացություն պիտի ստեղծվի Հայոց հարցի լուծման համար։ Առաջ մղվեց Ռու-

սատանին զինվորական աջակցություն ցույց տալու գաղափարը, Թուրքիային հարվածելուն անմիջական մասնակցություն ունենալու պատրաստակամությունը։ «Այսպես թե այնպես՝ հայությունը փարեց կամավոր խմբերի գաղափարին. ամենուրեք բուսան օժանդակ մարմիններ, թափվեցին առատ նվերներ, հագուստ ու մթերք, եկան կամավոր խմբեր ու կռվի դաշտ հասան»։ Ազգային բյուրոն այդ գործի կազմակերպությունը հանձնեց մի հատուկ մարմնի, որ կոչվում է «Հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմին» կամ, ինչպես ասում են ընթացիկ լեզվով, շտաբ (26, թ. 18—19)։ Թուրքական կողմն այս ամենն ընկալում էր որպես բացահայտ թշնամական գործողություն հայերի կողմից։ «Եթե հայերը չլինեին,— հայտարարում էր թուրքական գեներալ Ալի Իհսան փաշան,— մենք կնվաճեինք Կովկասը» (39, էջ 132)։

Հիրավի, հայոց ընդդիմությունը թուրքական նվաճմանը պայմանավորված էր նրանց ապրելու ձգտմամբ։ Հայ ժողովուրդը մեծագույն զոհողությունների գնով պաշտպանում էր Կովկասի մատույցները նենգ թշնամու տարածողական նկրտումներից։ Խնդրի էությունն ամբողջապես հայտնի էր ցարական կառավարողներին։ Ահավասիկ ինչ էր ասում այդ առիթով արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովը. «Առաջներում ես արդեն առիթ ունեցել եմ հիշատակել այդ դժբախտ ժողովրդի անասելի տանջանքների մասին։ Դաշնակից Գերմանիայի բարյացակամ հայացքի տակ, թուրքերը, ամենայն հավանականությամբ, մտադրվել են իրականացնել իրենց վաղուցվա երազը հայ բնակչության լրիվ ոչնչացման մասին, որը չէր ենթարկվում մուսուլմանական ազդեցությանը և այդպիսով խանգարիչ հանգամանք հանդիսանում թուրքական կայսրությունը գերմանական տնտեսական ու քաղաքական շահերին ենթարկելու պլաններում» (48, էջ 181)։ Մյուս կողմից, ինչպես սահմանից այն կողմ, այնպես այստեղ՝ Անդրկովկասում հայոց քաղաքական-հասարակական շրջանները չէին կարող անհանգիստ չլինել թուրքական թշնամության ահեղ բռնկման հնարավորությունից։ Այս առումով կամավորական շարժումը, ցարական կառավարության պլանների իրականացմանը ծառայելը վտանգավոր բան էր ներկայանում։

Ռուսաստանը նրանց ներկայանում էր որպես առաջադիմության, փրկության խարիսխ, որպես արևելյան բռնակալական լծից ազատագրվելու ռեալ հնարավորություն։ Ցարիզմի հակաժողովրդական էությունը հետին պլան էր մղվել։ Արևելքում Ռուսաստանի ավանդական ազատագրական առաքելության բազմամյա փորձի լավատեսական գիտակցման համեմատությամբ։ Ռուսաստանի միջոցով ազատագրել Արևմտյան Հայաստանը՝ այս էր գլխավոր մտահոգությունը։ Ռուսական բանակի առաջին ռազմական հաջողությունները խանդավառեցին հայության սրտերը։ Միաժամանակ, երիտթուրքական շովինիզմի գաղափարական մարզանքները դրվեցին գործնական հողի վրա։ Սարիղամիշի ճակատամարտում թուրքական բանակի պարտության մեջ մեղավոր ճանաչվեցին նաև հայերը։

Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի թնդանոթների ռմբոցի, հրացանային համազարկերի, անզեն ու անմեղ կանանց և երեխաների կոտորածի աղմուկ-աղաղակի մեջ կորչի լավատեսությունը։ Ռուս-թուրքական ռազմաճակատից այն կողմ, Արևմտյան Հայաստանի տարածքի վրա կոտորվում էր ժողովուրդը և գործնականում չկար այն ուժը, որ բռներ, վնասազերծեր չարագործ ձեռքը։ «Հայ ժողովրդի անօրինակ ոչնչացումը ցույց տվեց, որ չնայած Եվրոպայից փոխառնված ծրագրերին և լոզունգներին, երիտթուրքերն ըստ էության ոչնչով չէին տարբերվում հին թուրքերից» (71, էջ VII)։

Վ. Ի. Լենինը առաջիններից մեկն էր, որ դատապարտեց երիտթուրքական ոճրագործությունը։ Միջազգային սոցիալիստական կոնֆերանսը, որ տեղի ունեցավ Ցիմմերվալդում (Շվեյցարիա) 1915-ի սեպտեմբերի 5-ից 8-ը, պատերազմի ժամանակ ինտերնացիոնալիստների առաջին կոնֆերանսն էր։ Այն գումարվել էր Վ. Ի. Լենինի ջանքերով։ Կոնֆերանսի փաստաթղթերում հիշատակվեց Հայաստանի, հայ ժողովրդի ծանր վիճակի մասին։ Պատերազմն իմպերիալիստական էր։ Բայց Վ. Ի. Լենինը չէր ժխտում պատերազմի որոշ մասնակիցների կամ նրանով շահագրգռված որոշ երկրների, ժողովուրդների համար բուրժուաառաջադիմական, ազգային-ազատագրական նկրտումների առկայությունը։ Նա գտնում

էր, որ «այժմյան պատերազմի մասնակիցների ինչ-որ հարյուրերորդականի համար պատերազմը բուրժուական ազատագրական շարժման «քաղաքականության շարունակությունն է» (1, հ. 21, էջ 292)։ Վ. Ի. Լենինը ազատագրական պատերազմը տաճկական (թուրքական) բարբարոսական բռնակալության դեմ համարում էր առաջադիմական, օգտակար մարդկության զարգացման շահերի տեսակետից (1, հ. 21, էջ 379)։

«Ցիմմերվալդյան ձախի բանաձևի նախագիծը» հոդվածում Վ. Ի. Լենինը նշում էր. «Եվ ներկայումս, եթե Եվրոպայի արևելքում կամ գաղութներում ծագեր ճնշված ազգերի պատերազմ իրենց կեղեքողների, մեծ տերությունների դեմ, սոցիալիստների համակրանքն ամբողջությամբ կլիներ կեղեքվածների կողմը» (1, հ. 21, էջ 438—439)։ Իսկ հայ ժողովուրդը կեղեքված էր թուրքական մեծապետական նացիոնալիզմի կողմից։ Նա պայքարում էր իր գոյության, ազգային համախմբման և հայրենիք ունենալու համար։ Ահա թե ինչու նրա արդարացի մաքառումներն արժանանում էին բոլշևիկների՝ հայ ժողովրդի ամենահետևողական բարեկամների, նրա դատին նվիրված պաշտպանների համակրանքին ու պաշտպանությանը։ Ցիմմերվալդի կոնֆերանսում ընդունված երկու փաստաթղթերում, որ ստորագրել էր Վ. Ի. Լենինը, սոցիալիստներն իրենց համակրանքն էին արտահայտում հայ ժողովրդի նկատմամբ, որի վիճակը կրիտիկական դարձավ հենց իմպերիալիստական պատերազմի հետևանքով։ «Միջազգային սոցիալիստական կոնֆերանսը Ցիմմերվալդում իր ամենախոր համակրանքն է արտահայտում պատերազմի բազմաթիվ զոհերին, լեհ և բելգիական ժողովուրդներին, հետապնդվող հրեական և հայկական ազգերին, բոլոր այն միլիոնավոր մարդկային էակներին, որոնք տառապում են անասելի աղետներից, որոնք ստիպված են ենթարկվել չլսված սարսափների»,— ասված է համակրանքի բանաձևում, որ կոնֆերանսի մասնակիցներն ընդունել էին միահամուռ կերպով (68, էջ 16)։ Կոնֆերանսի ընդունած մանիֆեստում, որն ուղղված էր Եվրոպայի պրոլետարիատին, արձանագրված էր. «Տնտեսապես հետամնաց կամ քաղաքականապես թույլ ազգերը սորկական կախման մեջ են ընկնում մեծ տերություն-

ների, որոնք ձգտում են այս պատերազմում արյամբ և երկաթով իրենց շահերին համապատասխան նորից վերաձևել Եվրոպայի քարտեզը։ Ամբողջ շարք ժողովուրդների և երկրների, ինչպես Բելգիան, Լեհաստանը, Բալկանյան պետությունները, Հայաստանը, սպառնում է առուծախի առարկա դառնալու ճակատագիր կոմպենսացիաների խաղում և անեքսիայի ենթարկվելու ամբողջությամբ կամ մաս-մաս» (68, էջ 18)։ Այս ձևակերպումները ճշտությամբ իրականացան ետպատերազմյան իմպերիալիստական դիվանագիտության սարքած խաղերի ժամանակ, երբ Արևմուտքի պլանների իրականացման մեջ հայկական հարցը օգտագործվեց միայն որպես մանր դրամ։ Իմպերիալիզմի պարագլուխները ինչպես բոլոր փոքր ազգերի, այնպես և հայ ժողովրդի թշնամիներն էին, բայց երբեք հովանավորներ, որպիսի դեր ստանձնել էին խաբեության համար։

Ցիմմերվալդյան երկրորդ կոնֆերանսը, որ տեղի ունեցավ Կինտալ գյուղում (Շվեյցարիա), 1916-ի ապրիլի 24—30-ը, իր ընդունած բանաձևերից մեկում նորից արձանագրեց. «Իրադարձությունները ցույց տվին, որ ոչ մի ճնշված ազգ չի կարող ազատագրություն և անկախություն սպասել ոչ իմպերիալիստական պետությունների, ոչ իմպերիալիստական պատերազմի կողմից։ Ինչպես ցուցադրում է Բալկանյան պետությունների օրինակը և առանձնապես Սերբիայի ու Հայաստանի ողբերգական ճակատագիրը, փոքր պետությունները և ճնշված ազգերը լոկ շախմատային ֆիգուրներ են մեծ տերությունների իմպերիալիստական խաղում, և աշխատավոր ժողովրդական զանգվածները նման պատերազմի ժամանակ ծառայում են որպես հասարակ միջոց, իսկ պատերազմից հետո կմատուցվեն կապիտալիստական բաղձանքների զոհասեղանին» (72, էջ 53—54)։

«Պրավդան» գրեց. «Մեկ միլիոն հայեր իրենց կանանց ու երեխաների հետ սրի քաշվեցին միայն այն բանի համար, որ նրանք հայ են» (69, № 258, 1918)։ Ս. Մ. Կիրովը և Մաքսիմ Գորկին, Յուրի Վեսելովսկին և Վալերի Բրյուսովը, Նիկոլայ Մառը և բազմաթիվ ռուս առաջադեմ այլ մտավորականներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին երիտթուրքական չարագործության դեմ։

Ռուսական հասարակայնությունը կոչ էր անում օգնել հայ գաղթականներին, նրանց փրկել մահվան ճիրաններից։ «Ժամանակը չի սպասում։ Պետրոգրադի քաղաքացինե՛ր, ցույց տվեք բարոյական և նյութական օժանդակություն մեր եղբայրներին»,— ասված էր կոչերից մեկում։ «Բարձրացրե՛ք նրանց ոգին, թույլ մի տվեք, որ հուսահատությունը բույն դնի նրանց տանջված սրտերում, ջերմացրե՛ք սառածներին, հագցրե՛ք ոտաբոբիկներին, կերակրե՛ք քաղցածներին»։ Կոչն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Թող մեծ Ռուսիան ևս մի ավելորդ անգամ ապացուցի, որ սիրառատ ու նուրբ է նրա սիրտը, որ իր սահմաններում ապրող բոլոր ժողովուրդներին նա սեր և խաղաղություն է պարգևում, դժվարին պահերին ուրախությամբ և բարեկամությամբ նրանց մեկնում է իր օգնության ձեռքը»։

Ռուս ազնիվ մարդիկ (Պ. Մորել, Գ. Գավրիլով, Ա. Լոնգինով, Լերեդինսկի) լծվել էին թուրքական վայրագությունների ծանր հետևանքներն ուսումնասիրելու և հանրությանը ներկայացնելու շնորհակալ գործին (24)։ Այս մարդկանց ուսումնասիրությունները, ականատեսների հետ նրանց զրույցները հատորներ կազմեցին, որոնք ներկայացվեցին Փարիզի խաղաղության կոնֆերանսին։

Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո սովետական կառավարությունը հրապարակեց ցարական կառավարության արտաքին քաղաքական գաղտնի փաստաթղթերը, որոնք լույս սփռեցին նրա ռազմաքաղաքական ու դիվանագիտական պլանների ու գործունեության վրա։ Բնականորեն դա հնարավորություն ընձեռեց ավելի հանգամանորեն լուսաբանելու ցարիզմի արտաքին քաղաքականությունը, բացահայտելու նրա հետապնդած նպատակները։ Հատկապես 20-ական և 30-ական թվականներին այդ հարցերի լուսաբանմանը նվիրված հարուստ գրականություն ստեղծվեց։ Մյուս կողմից, թուրքական կառավարողների նվաճողական պլանների փաստաթղթերը այդպես էլ չհրապարակվեցին, լայն հասարակայնության սեփականությունը չդարձան, չուսումնասիրվեցին, այլ մնացին թուրքական պետական գաղտնարաններում, փականքի տակ։ Որոշ տեսակետից դա էր պատճառը, որ բազմաթիվ հեղինակներ (այդ թվում նաև սովետական առանձին պատմաբաններ) իրենց գործերում հանգամանորեն վերլուծելով ցարիզմի նվաճողական քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, միաժամանակ անհրաժեշտ խորությամբ չէին բացահայտում երիտասարդ թուրքերի ռեակցիոն, պանթուրքիստական ու նվաճողական քաղաքականությունը։ Որոշ աշխատություններում Թուրքիան միակողմանիորեն ներկայացվել է միայն որպես կիսագաղութային, իմպերիալիզմի կողմից ճնշված երկիր, ցույց չի տրվել, որ օսմանյան պետությունը ժանդարմի դեր էր կատարում կայսրության փոքր ժողովուրդների նկատմամբ, որ նա զոհ լինելով արևմտյան գաղութարարների տնտեսական ու քաղաքական էքսպանսիային, միաժամանակ հարստահարող և գաղութացնող էր արաբների, հայերի, քրդերի, սլավոնական և այլ ժողովուրդների համար, ուներ զավթողական որոշակի պլաններ Անդրկովկասի նկատմամբ, որոնք գործնականում ցայտուն կերպով դրսևորվեցին առաջին համաշխարհային պատերազմի վերջին փուլում։

□

Արևմտահայության խնդրին խոսքով համակրական դիրք բռնած Անտանտի տերությունների կառավարությունները գործնականում ոչնչով չնպաստեցին թուրքական ոճրագործության կանխմանը։ «... Եթե տերությունք համաձայնեին և կամենային, միայն մեկ խոսքով կարող էին թուրքին գազանության սանձ դնել և ահա դա մեկ խոսքին զլացմամբ այսօր հայն ու Հայաստան արյան մեջ կլողան. և ուստի կրնանք ըսել, որ Թուրքը դահիճ է և պետությունք նրա մեղսակիցք»,— կարդում ենք կաթողիկոսական դիվանի արխիվային մի փաստաթղթում (23, թ. 1)։

Ռաբինդրանաթ Տագորն ասում էր, թե «դիվանագետներն իրենց կռնակին ունեն ստերի մի տոպրակ, որը երբեմն պատռվում է կեղծիքի ծանրությունից»։ Լորդ Բերտին իր հուշերում գրում է. «Եթե 1914—1918 թթ. համաշխարհային պատերազմի մասին դատելու լինենք կառավարական նոտաներով, դեկլարացիաներով և այլ փաստաթղթերով, որ գրված են դիվանագիտական լեզվով, մենք երբեք հասու չենք լինի

իմպերիալիստական տերությունների իսկական մտադրություններին» (51)։ Այսօր էլ բուրժուական դիվանագիտությունը սրբորեն պաշտպանում է Թալեյրանի պատգամն այն մասին, թե լեզուն մեզ պետք է մեր մտքերը թաքցնելու համար։

Թե Անտանտը, թե նույնիսկ միությունը ձգտում էին տիրել Թուրքիային, տերությունների միջև բաժանել նրա հսկայածավալ տիրույթները, որոնք միայն ձևականորեն էին ենթարկվում Կ. Պոլսի իշխանությանը։ «Թվում էր, թե Բ. Դռանը ազատություն է տրված լոկ ընտրելու իր սեփական դահճին, քանի որ մեծ տերությունների դիվանագիտական բոլոր լարախաղացությունների ժամանակ կարելի էր Բոսֆորի ափին հույս դնել կախաղանի ժամկետը երկարաձգելու վրա միայն» (43, էջ 26)։

Անգլիական քաղաքականության խարդավանքները էական դեր խաղացին, բացասական հետք թողեցին արևմտահայության քաղաքական ճակատագրի վրա։ Ընթերցողին հիշեցնենք, որ այլ կլիներ արևմտահայության ճակատագիրը, եթե Դիզրայելին ու Լայարդը, Սոլսբերին ու Ռոզբերին տասնամյակներ շարունակ արևելյան հարցում չվարեին այդպիսի շեշտված հակառուսական քաղաքականություն։ Բեռլինի կոնգրեսում, թե XIX դարի 80-ական ու 90-ական թվականներին, Անգլիան բացասական դեր խաղաց արևմտահայության վիճակը բարվոքելու խնդրում։ Վ. Ի. Լենինն ասում էր, թե «... ժամանակակից պատերազմը հասկանալու համար մենք ամենից առաջ պետք է մի ընդհանուր հայացք գցենք եվրոպական տերությունների քաղաքականության վրա ամբողջությամբ վերցրած...» (1, հ. 24, էջ 502)։

Մինչդեռ Եվրոպայում հասարակական կարծիքը զայրույթով պահանջում էր, որպեսզի պետությունների միջամտությունը վերջ դնի կոտորածներին Հայաստանում, եվրոպական դիվանագետներն ու պետական գործիչները դրանք օգտագործում էին Թուրքիայում նոր կոնցեսիաներ ստանալու համար, ակնհայտորեն «առանց որևէ լուրջ մտադրության օգնելու տանջված ու արյունաքամ ժողովրդին, որն այդքան առատ նյութ էր տալիս նրանց հուզիչ հռետորության» (113, էջ 282)։ Այսպես է գրել մեծ հումանիստ Նանսենը։

Անտանտի տերությունները պատերազմ հայտարարելով Թուրքիային, լրիվ հնարավորություն ունեին կարճ ժամանակում ջախջախելու թուրքական զորքերին և պատերազմից դուրս հանելու օսմանյան կայսրությանը։ Բայց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները ոչ միայն չէին ուզում օգտվել Թուրքիայի ռազմական թուլությունից, կարճ ժամանակվա ընթացքում վճռական հարված հասցնելու նրան, այլև խանգարում էին Ռուսաստանի ակտիվ գործողություններին ինչպես կովկասյան ճակատում, այնպես էլ Սև ծովի ավազանում (53)։ Միջիմպերիալիստական հակասություններին, նրանց ռազմական պլաններին և, մասնավորապես, գեներալ Կիտչեների ռազմական ծրագրին առանձնապես, հանգամանորեն է անդրադառնում անգլիացի Բարկերը (81)։ Անգլիական զորքերի գլխավոր շտաբում մշակված Կիտչեների պլանով, անգլիական զորքերը ափ պետք է դուրս գային Թուրքիայի հարավում, Ալեքսանդրետի ծովածոցում։ Այս գործողությունը հնարավորություն էր ընձեռելու Անտանտի տերություններին հուժկու հարված հասցնելու օսմանյան կայսրությանը՝ կայզերական Գերմանիայի դաշնակցին։ Հսկա երկիրը բաժանվում էր երկու մասի, Բ. Դուռը զրկվում էր Հայաստանի, Միջագետքի, արաբական մյուս երկրների վրա իր տիրապետությունից։ Բաղդադի երկաթուղին տակավին պատրաստ չէր Ամանոս-Տավրոս թունելների շրջանում և այլևս շարք չէր մտնելու, եթե իրականացվեր Կիտչեների պլանը։ Հաշվի էր առնված նաև այն հանգամանքը, որ Կիլիկիայի շրջանում բնակչության մեծամասնությունը հայերն էին, որոնք օգնելու էին դաշնակիցների զինված ուժերին (81, էջ 409)։ Բարկերը պնդում է, որ եթե այդ գործողությունն իրականացվեր, օսմանյան կայսրության փլուզումը կատարված փաստ կլիներ արդեն 1915-ի վերջին։ Այս դեպքում, նրա կարծիքով, չէին լինի Դարդանելի և Գալիպոլիի զոհերը, տեղի չէին ունենա հայկական կոտորածները, անհրաժեշտ չէր լինի զոհառատ կռիվներ մղել Միջագետքի անապատներում՝ Սինայի ավազների մեջ, Գազայի կամ Պաղեստինի համար։

Խնդրի այս կողմը դուրս չի մնացել գերմանական ֆելդմարշալ Հինդենբուրգի տեսադաշտից։ Սա իր զարմանքն է արտահայտել այն մասին, թե ինչու նույնիսկ տերությունները

շօգտվեցին այդ թույլ, անպաշտպան օղակից և շարքից չհանեցին իրենց դաշնակից Թուրքիային։ «Այդպես վարվելու դեպքում,— գրում է Հինդենբուրգը,— նրանք կկարողանային կտրել Թուրքիայի տրանստավրոսյան երակը, որի վրայով թուրքական ուժերը և հանդերձանքն ու սպառազինությունն ուղարկվում էին Սիրիա, Միջագետք և մասամբ կովկասյան բանակներին» (81, էջ 410)։ Հինդենբուրգը գրում է, որ Ալեքսանդրետի ծովածոցը պաշտպանված չէր։ Թուրքերը եղած ուժերը ուղարկել էին Սիրիա և Միջագետք։ Այս մասին էնվեր փաշան ասել էր Հինդենբուրգին, թե իր միակ հույսն այն էր, որ «թշնամին չբացահայտեր մեր թուլությունը հենց այդ կրիտիկական կետում» (81, էջ 410)։

Սակայն բանը սխալի մեջ չէր, ռազմական արվեստին չտիրապետելու մեջ չէր։ Բանն այն էր, որ նեղուցների նկատմամբ ռուսական վտանգի մոտալուտ լինելը անգլո-ֆրանսիական դաշնակիցներին մղեցին Դարդանելի արկածախնդրությանը, մղեցին այն բանին, որպեսզի կանխեին ռուսների կողմից նեղուցների գրավումը։ Դա էր պատճառը, որ լրիվ մշակված պլանը չիրագործվեց։ Հայտնի է, որ Եգիպտոսում տեղադրված գեներալ Բերդվուդի բանակը լրիվ պատրաստ էր նշված գործողությանը։ Ըստ էության ափ դուրս գալու մասին հրամանի իրագործումը դրված էր ընթացքի մեջ։ Բայց 1915-ի փետրվարի 16-ին Ուայթհոլում որոշում ընդունվեց նավատորմը և մյուս ուժերն ուղղել դեպի Դարդանելի շրջանը։ Կիտչեների պլանը մերժվեց։ Սկսվեց Դարդանելի գործողությունը, որի անփառունակ ավարտը հանրահայտ է։ Բարկերը գտնում է, որ փայլուն հնարավորությունը ձեռքից բաց թողնըվեց (81, էջ 411)։ «Անգլիական պրեստիժը թաղվեց Դարդանելի ճակատում շատ ավելի խոր, քան որևէ այլ վայրում» (51, էջ 71)։ Ավստրալիայում ամեն տարի ապրիլին նշում են Դարդանելի մարտերում զոհված իրենց զինվորների հիշատակը։

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանը 1915-ի մայիսի 16-ին հայտնում էր Փարիզ՝ արտաքին գործերի մինիստրությանը, որ Անգլիայի արտաքին գործերի մինիստր Հարոլդ Նիքոլսոնը դեմ էր հայերին կոտորելու թուրքական քաղաքականությունը դատապարտող հայտարարություն անելուն (8, էջ 78)։

Իհարկե, մայիսի 24-ին դաշնակիցներն այնուամենայնիվ այդպիսի հայտարարություն արեցին, սակայն վերը նշված փաստը ցույց է տալիս իմպերիալիստական Անգլիայի տըն-օրենների ոչ հայանպաստ դիրքորոշումը։ Ֆրանսիացի դիվանագետ Լըդուն, որն իր գործընկերների նման չէր մեկնել հայրենիք և պատերազմի ժամանակ շարունակում էր ապրել Կ. Պոլսում, հավաստում է, որ տերությունների նոտան Բ. Դռանը կրակի վրա յուղ լցնելու դեր կատարեց. կոտորածներն ավելի սաստկացան (25, թ. 44)։ Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Պալեոլոգի համար առաջնայինը Ռուսաստանի մասնակցությամբ Գերմանիայի հետ հաշվեհարդար տեսնելն էր և նա Նիկոլայ II-ի հետ ունեցած հանդիպման ժամանակ ասում էր. «Հուսով եմ, որ Փոքր Ասիայի պատճառով Ձեր կառավարությունը չի մոռանա Հռենոսի ձախ ափի մասին» (67, էջ 74)։

1915-ի հուլիսին Հռոմի Բենեդիկտ պապը նույնպես բողոք հայտնեց հայերին ոչնչացնելու քաղաքականության դեմ։ Ավելի ուշ՝ 1915-ի նոյեմբերին նա այդ առիթով անձնական նամակ գրեց Կ. Պոլիս՝ սուլթանին (74, էջ 81)։ Սրանք հասարակական կարծիքի ճնշման տակ արված քայլեր էին, որոնք և ոչ մի գործնական նշանակություն չունեցան։ Նույնիսկ Գերմանիայի և Թուրքիայի դաշնակից պետության՝ Բուլղարիայի դեսպանը Կ. Պոլսում բողոք հայտնեց հայոց կոտորածների առթիվ (109, էջ 340—341)։

1915-ի դեկտեմբերի 1-ին «Նյու Յորք Թայմսը» հրապարակեց ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտի նույն թվի նոյեմբերի 24-ի նամակի պատճենը, որտեղ նա ցավ էր հայտնում, թե իր երկիրը քիչ բան էր «անում վայրագությամբ ու ծավալով աննախընթաց այն ոճիրների առթիվ, ինչպիսին հայկական կոտորածներն էին»։

ԱՄՆ-ի հասարակական կազմակերպությունները, կրոնական հաստատությունները, բազմաթիվ անհատներ բանաձևեր և դիմումներ էին հղում պրեզիդենտ Վիլսոնին՝ խնդրելով նրան ձգտել անել մի բան փրկելու համար հայ ժողովրդի բեկորները վերջնական կորստից։

Դաշնակցության գլխավոր հյուպատոսը ԱՄՆ-ում՝ Հ. Հ. Թոփակյանը 1915-ի հոկտեմբերին մի կոչ էր հղել պետական

քարտուղար Լանսինգին անելու իր ուժերից կախված ամեն ինչ՝ վերջ դնելու հայերի կոտորածներին ու հետապնդումներին թուրքերի կողմից։ Թուրքական յաթաղանից զոհվել էին նաև նրա հարազատները։ ԱՄՆ-ի պետական քարտուղարը հարց էր դրել Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Բեռնսդորֆի առջև օգտագործել իր ազդեցությունը գերմանական կառավարության վրա՝ դադարեցնելու հայերի կոտորածները, նրանց ազատելու «արյունռուշտ թուրքերի ձեռքից» (120, 20.10.1915)։ Թերթերը գրել էին այն մասին, որ Գերմանիայի դեսպանին նույն խնդրով դիմել էր նաև պրեզիդենտ Վիլսոնը։ Ամերիկյան թերթերը գրում էին, որ Բելգիան պատմության սև էջն է, իսկ Հայաստանը ավելի սև էջը։ Թերթերը պահանջում էին, որ ի պատասխան հակահայկական չարագործությունների՝ ԱՄՆ-ը ասպարեզ իջներ իր զինված ուժերով և նավատորմով։

Մեծ եղեռնի 65-ամյակի առթիվ ամերիկահայ Ռիչարդ Դիրան Քլոյանը 1980-ին ԱՄՆ-ում (Սան Ֆրանցիսկո) լույս ընծայեց չափազանց պետքական մի գիրք (95)։ Այստեղ բերված են 1913—1921 թթ. ԱՄՆ-ի թերթերի էջերում, ամսագրերում և այլ հրատարակություններում հայոց ողբերգությանը նվիրված հազարավոր նյութերի՝ թղթակցությունների, ինֆորմացիաների, հոդվածների, պատճենները (մեծ մասամբ ֆոտոպատճենները)։ Միայն «Նյու Յորք Թայմս» թերթից բերված նյութերի թիվն անցնում է երեք հարյուրից։ «Աութլուկ», «Քարընթ հիսթորի», «Ամերիկան ռևյու օվ ռևյուս», «Սենչրի», «Աթլանթիք մանթլի», «Լիթերարի դայջեստ» և այլ ամսագրերից բերված են հարյուրավոր հավաստի, կատարվածի վրա սպառիչ լույս սփռող նյութեր։ Այդ նյութերի վերնագրերի լոկ թվարկումն էլ բավական է, որպեսզի հօդս ցնդեն երեկվա ու այսօրվա թուրք հեղինակների կեղծիքների օճառե պղպջակները։ Այդ նյութերը մի-մի ապտակ են ՆԱՏՕ-ի գծով Թուրքիայի այսօրվա ամերիկյան հովանավորողներին, որոնք իրենց իմպերիալիստական քաղաքականության շահերին համապատասխան աղավաղում են նաև պատմական ճշմարտությունները։

«Հայաստանի բնակչության ոչնչացումը», «Հայ գաղթականները», «Հայերին արմատախիլ անելը», «Հայոց դիմումը

Ամերիկային», «Մեծագույն կրոնական կոտորածը», «Ազգայի ոչնչացումը», «Ո՞վ կարող էր փրկել Հայաստանը», «Նահատակ Հայաստան», «Ինչո՞ւ են հայերին սպանում», «Հայկական ողբերգություն», «Դատապարտված Հայաստան», «Թուրքերը հայերին սպանել են կացիններով», «Գերմանիան և հայկական կոտորածները» և այլ վերնագրերով նյութերը տպագրվել են 1915—1916 թվականներին։ Այս նյութերը ոչ մի կասկած չեն թողնում, որ միջազգային հասարակական կարծիքը որոշակի և սպառիչ պատկերացում ուներ երիտթուրքական չարագործության մասին։ Ամենատարրական ցանկությունը բավական է, որպեսզի Եվրոպայում, թե ԱՄՆ-ում համապատասխան խոսք ասվի, հակահարված տրվի այն կեղծիքներին, որ տարածում են այսօր թուրքական պաշտոնական ու անպաշտոն շրջանները հայոց հետ կատարվածի շուրջը։

Կոպենհագենի «Պոլիտիկեն» թերթը 1915-ի հոկտեմբերի 8-ին գրում էր. «Թուրքիան փորձել է լուծել ամբողջ հայ ժողովրդին ոչնչացնելու խնդիրը»։ Թերթը նշում էր, որ տեղի ունեցած սարսափները չեն կարող զուգահեռներ ունենալ համաշխարհային պատմության մեջ (87)։ Ամերիկյան թերթերը Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Բեռնսդորֆին կնքեցին փաշա այն բանից հետո, երբ նա հայոց կոտորածներն անվանեց հորինվածք։ «Ամերիկա-Արմենիա նպաստամատույցը» նամակ էր ստացել Կ. Պոլսից (1915. 15. VIII.), որտեղ ասված էր. փաստորեն հայ չի մնացել Էրզրումի, Տրապիզոնի, Սըվասի, Խարբերդի, Բիթլիսի, Դիարբեքիրի վիլայեթներում, որտեղ մոտ մեկ միլիոն մարդ տեղահանվել և աքսորվել է հարավ։ Նամակագիրը նշում էր, թե Կ. Պոլսում եվրոպացիների մոտ տիրող կարծիքն այն է, որ թուրքական կառավարության նպատակն է հայկական բնակչությանը վտարել հայոց վեց վիլայեթներից, անհնարին դարձնելով ապագայում հայոց պահանջները բարենորոգումների կամ ինքնավարության մարզում։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ասոշեյտեդ Պրես գործակալության թղթակցի հետ (Վիեննայում, 1916-ի հոկտեմբերի 25-ին) օսմանյան կայսրության արտաքին գործերի մինիստր Խալիլ փաշայի հարցազրույցը։ Այն տպագր-

վել էր ամերիկյան «Current History Magazine» ամսագրում 1916-ի դեկտեմբերին։ Խալիլը խոսում էր օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ «ավանդական լավ» վերաբերմունքի մասին, որպես օրինակ մատնացույց անելով, թե թուրքական կառավարության համարյա բոլոր մինիստրների տեղակալները հայեր էին։ «Մենք պատրաստ էինք նրանց քաղաքական իրավունքներ շնորհելու»,— հայտարարում էր նա։ Սակայն ինչը դրան խանգարեց։ Պարզվում է, որ բալկանյան պատերազմներից հետո ուժեղացել էր հայերի ձգտումը ինքնավարության։ Բայց նա շեշտում էր հայերի ցրվածության փաստը։ «Հայերի դեպորտացիան հսկայական կորուստ էր օսմանյան կայսրության համար։ Հայը խելոք է և աշխատասեր և դրա համար արժեքավոր է էկոնոմիայի ոլորտում, բայց ի՞նչ կարող էին անել։ Մենք գտնվում էինք պատերազմական դրության մեջ և ստիպված էինք»,— արդարանում էր նա։

Ամերիկացի Ուիլյամ Ու. Ռոքուելը «Սպանված հայերի և սիրիացիների ընդհանուր հանրագումարը» հոդվածում («Current history», 1916-ի նոյեմբեր), պնդում էր, որ պատերազմից առաջ Թուրքիայում ապրում էր մինչև 2 միլիոն հայ։ «Նրանցից քանի՞սն են կենդանի այսօր»,— հարց է տալիս նա։ Հեղինակը չի տարակուսում, որ հայ բնակչության 50 տոկոսը, այսինքն մեկ միլիոն մարդ սպանված էր։ Պետք է նկատել, որ այդ տողերը գրվում էին 1916-ի ավարտին, իսկ արևմտահայության ողբերգությունը շարունակվեց նաև հետագա մի քանի տարիներին։ Ամերիկյան շատ պարբերականներ մշտապես հրապարակում էին 1915-ի արյունոտ դեպքերի ականատեսների պատմածները։ Օրինակ, «The Independent» ամսագիրը (5. 1. 1918) պատմել էր տասնեբեքամյա Մարգարիտ Գարողյանի մասին, որն անցել էր թուրքական հարեմային կյանքով և փրկվել էր միայն ռուսաց կողմն անցնելու շնորհիվ։ «The Atlantic Monthy» ամսագրի (1916 նոյեմբեր) անհայտ հեղինակն իր հոդվածը վերնագրել էր «Մի ազգի գողգոթան»։ Դա մի հանգամանալի ակնարկ է հայկական հարցի դիվանագիտական և քաղաքական պատմության մասին, բավականին տեղին դիտումներով ու նկատանքներով։ «Կոտորածը սովորական բան էր Թուրքիա-

յի պատմության մեջ։ Թուրքը Կենտրոնական Ասիայից եկել է մի հող, որը հիմա օկուպացնում է, կոտորելով բոլորին»։

Ամերիկյան հոդվածագիրները մատնացույց էին անում երիտթուրքերի վերջնական նպատակը՝ հայոց ազգի ոչնչացումը որպես հայկական հարցի լրիվ և վերջնական լուծման միջոց։ Ֆրեդ Պ. Հագգարդը «Պետք է մեռնի՞ Հայաստանը» հոդվածում («The Independent», 23. 06. 1917) ցույց էր տալիս, որ «Թուրքիան թուրքերի համար» լոզունգի հեղինակները կարծում էին, որ քանի դեռ տերությունները զբաղված են պատերազմով, նրանք կկարողանան հասնել իրենց մարդակերական նպատակին։ Այս նպատակով, նախ և առաջ, նրանք կազմակերպեցին թուրքական բանակում ծառայող հայ և սիրիացի զինվորների սպանությունը։ «Ոչ Բելգիան, ոչ Սերբիան և Լեհաստանը այնքան չեն տուժել, որքան Հայաստանն ու Սիրիան»,— եզրակացնում է Ֆ. Պ. Հագգարդը։

1917-ի հոկտեմբերի 6-ին ամերիկյան «The Literary Digest» ամսագիրը մի գրախոսական տպագրեց գերմանացի զինվորական թղթակից, դոկտոր Հարրի Շտյուրմերի գրքի (118) մասին՝ «Գերմանիայի մեղքը ըստ մի գերմանացու ներկայացրած մեղադրանքի» վերնագրով։ Նույն ամսագիրը (27. 10. 1917) «Հայոց արյունահեղության մեջ Գերմանիայի մեղքը» հոդվածում (հեղինակ դ-ր Անդրուս) ցույց էր տալիս, որ Գերմանիան ամենաանմիջական մասնակցություն էր ունեցել հայոց ոչնչացման ծրագրի կազմմանը։ Հեղինակը գրում էր, որ այնտեղ, որտեղ հայերին հաջողվեց կազմակերպված դիմադրություն ցույց տալ թուրքերին, նրանց ճնշեցին «գերմանական սպաները և թնդանոթները»։

Արժեքավոր տեղեկություններ է հաղորդում վերը հիշատակած ամերիկացի դիվանագետ Լյուիս Էյնշտեյնը։ Սա աշխատել էր Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանատանը 1906-ից մինչև 1909 թվականը, իր հայացքներով թուրքոֆիլ էր։ Նորից Կ. Պոլիս էր եկել 1915-ի սկզբին ամերիկյան դեսպանի հատուկ քարտուղար-օգնականի պաշտոնով, գլխավորապես զբաղվելով Թուրքիայի հետ պատերազմի մեջ գտնված Իտալիայի ու Ռուսաստանի շահերի պաշտպանությամբ։ Այս դիվանագետը թողել է մի փաստաշատ օրագիր, որտեղ հարուստ տվյալներ կան երիտթուրքերի հակահայկական գործո-

դությունների, նրանցում Գերմանիայի մասնակցության վերաբերյալ։

Էյնշտեյնը գրում է, որ Դարդանելի շրջանում ծավալված պատերազմական գործողությունների մեջ դաշնակիցների անհաջողությունը ոգեշնչեց երիտթուրքերին՝ պահը հարմար համարել իրենց հին քաղաքականությունը հայերի դեմ իրականացնելու համար (94, էջ 219)։ Ամերիկյան դիվանագետն օրագրում գրում է (1915 թ. մայիսի 1), որ կոտորածի ահեղ օրերին Թալեաթը երիտթուրքական ակումբում պոկեր էր խաղում, իսկ մեծ վեզիրը՝ բիլյարդ (94, էջ 18)։ Հայերի կոտորածների կապակցությամբ դաշնակիցների սպառնալից նոտան երիտթուրքական կառավարությանը (1915 մայիս) վախեցրել էր մեծ վեզիրին, քանի որ նրա հարստությունը գլխավորապես կենտրոնացված էր Եգիպտոսում (94, էջ 126)։ Թալեաթն ու իր համախոհները Գրիգոր Զոհրապի ու Վարդգեսի սպանությունը հասարակությանը ներկայացրին ամբողջապես կեղծված։ Նրանց կարգադրությունը կատարելով, թերթերը հաղորդեցին, թե իբր առաջինը մահացել էր սրտի կաթվածից, իսկ երկրորդն իբր ընկել էր ձիուց (94, էջ 123)։ Միևնույն պահին հայերին գիշերով հանում էին բանտերից և խումբ-խումբ գնդակահարում։ Թուրքիայում Ավստրո-Հունգարիայի դեսպանին պատմել էին, որ մինչև տասը տարեկան հայ երեխաներին երիտթուրքերը բաժանում էին մահմեդական բնակչությանը, իսկ ավելի բարձր տարիքի պատանիներին ու աղջիկներին թափել էին գետը։ Լողացողների վրա կրակ էին բացել (94, էջ 215)։ Ամերիկացի դիվանագետ Լյուիս Էյնշտեյնը Թալեաթին համարում էր հայոց կոտորածի գլխավոր ոգեշնչող։ Իսկ սա կոտորածը բացատրում էր Սարիղամիշի պարտությամբ, Ադրբեջան չհասնելու անհաջողությամբ, Վանի կորուստով և այլն։ Էյնշտեյնը Թալեաթին բնութագրում է որպես թուրքացման դաժան քաղաքականության հեղինակ։ Իսկ կայզերական Գերմանիայի ֆինանսների մինիստր Գելֆերիխը Թալեաթի ուշադրությունն էր հրավիրում հայ ժողովրդի կոտորածների հետևանքով գերմանացիների կրած ֆինանսական կորուստների վրա։ Հաշվել էին, որ «Դոյչե Օրիենտ բանկը» 750 000 դոլար էր կորցրել հայերի տեղահանության սկզբից մինչև 1915-ի օգոստոսը (94, էջ

218)։ Էյնշտեյնն ակնարկում էր, թե թուրքերը քանդեցին իրենց երկրի տնտեսական հարստության մեծագույն աղբյուրը (94, էջ 231)։

Այսպիսով, արևմտահայության գենոցիդի հեղինակները միջազգային ասպարեզում դատապարտվում էին արդեն 1915-ին։ Եվրոպական և ամերիկյան մամուլի բազմաթիվ նյութերին հետևեցին գրքեր։ Սրանց շարքում պետք է հիշատակել Ժյուլ Ցավրի, Ջեյմս Բրայսի, Առնոլդ Թոյնբիի հատորները։ Անգլիացի Ջեյմս Բրայսը համայնքների պալատում 1915-ի հոկտեմբերի 6-ին արտասանած իր ճառում հայոց կոտորածները համարում էր «թուրքական կայսրության գլուխ անցած անամոթ արկածախնդիրների բանդայի» քաղաքականության արդյունք։ Նա այդ ջարդերը համեմատում էր Թամերլանի բարբարոսությունների հետ (123, էջ 6,11), մատնանշում, որ ոչ մի պատճառաբանություն չի կարող արդարացնել այդ ոճրագործությունը։

1915-ի սեպտեմբերի 20-ին «Նյու Յորք Թայմս» թերթում լույս տեսավ Ջեյմս Բրայսի նամակը թուրքական կառավարության վայրագությունների մասին։ Անգլիացի հայասեր հասարակական գործիչն իր պատմական ակնարկով, հանգամանալի վերլուծություններով ընթերցողի առջև պարզում էր երիտթուրքական կառավարողների քստմնելի դերը կատարված չարագործության մեջ։

1915-ի հոկտեմբերի 15-ին «Նյու Յորք Հերալդ տրիբյունը» տպագրել էր ոմն Սալեմ Մուսլեհի նամակը, որտեղ շնորհակալություն էր հայտնվում թերթի խմբագրությանը հայոց կոտորածների մեջ գերմանական կայզերի և դերը բացահայտելու համար։ Նամակագիրը ցույց էր տալիս, որ գերմանական կայզերն անմիջական պատասխանատվություն է կրում «Հայ ցեղը» արմատախիլ անելու գործում։ Այնուհետև նա հարց էր տալիս. «Ինչո՞ւ է պրեզիդենտ Վիլսոնը ուղերձներ հղում Թուրքիային, նրան մեղադրելով ջարդարարական քաղաքականության մեջ։ Ինչո՞ւ նա չի դիմում անձամբ կայզերին, որն ինքն է հայերին սպանողը (թեև ֆոն Բեռնսդորֆը ժխտում է դա), իսկ Էնվեր փաշան միայն մի գործակալ է»։

1916-ի փետրվարի 16-ին «Գաղետ դը Լոզանը» գրում էր. «Ինչ որ այսօր տեղի է ունենում Հայաստանում, վաղուց ի վեր երիտասարդ թուրքերի ծրագիրն էր, որոնք պատեհ առիթի էին սպասում իրագործելու համար։ Այս սոսկալի պատերազմը լավագույն շարժառիթը եղավ։ Հայկական ապստամբությունը մի պատրվակ էր...»

«Ջիկագո տրիբյուն» թերթի թղթակիցը 1916-ի փետրվարի 18-ին հաղորդել էր շարունակվող հայկական կոտորածների դեմ Միացյալ Նահանգների «ձևական բողոքի» մասին։ 1916-ի դեկտեմբերի 18-ին Բրիանը և Բալֆուրը ի պատասխան Վիլսոնի հաշտարար առաջարկության, պահանջում էին «արևմտյան քաղաքակրթությանը օտար» օսմանյան կայսրությանը վռնդել Եվրոպայից։ 1917-ի գարնանը պատերազմի մեջ ԱՄՆ-ի մտնելուց անմիջապես հետո Վուդրո Վիլսոնը հայտարարություն արեց այն մասին, որ «թուրքերը, քրիստոնյաներին սպանողները, պետք է հեռացվեն Եվրոպայից» (63, էջ 61—62)։

Ֆրանսիայում դեպուտատների պալատի նախագահ Դեշանելը, ժողովրդական լուսավորության մինիստր Պենլևեն և Անատոլ Ֆրանսը ճառեր էին արտասանում, որոնք լի էին ջերմ արտահայտություններով հայ ժողովրդի հասցեին ոչ միայն նրա կրած տառապանքների, այլև «ցուցաբերած ոգու և կայունության համար» (48, № 2—3, 1916, էջ 44)։

Լեհական «Էխո Պոլսկիե» ամսագրում հայտնի լեհ գործիչ Ա. Լեդնիցկին գրում էր. «...Լեհ ժողովուրդը չի կարող անտարբեր անցնել մի ժողովրդի սարսափելի, ողբերգական պատմության կողքով, որը մեր կուլտուրայի մեջ ներդրել է իր շնորհքի և ազնվության ծաղիկը, մի ժողովրդի, որը վերաբնակվելով մեր լեհական հողի վրա, մեզ տվել է հայրենասիրությամբ ու ինքնազոհությամբ համակված մարդիկ։ Եվ մենք ցանկանում ենք տեսնել ժողովրդի ազատագրման մոտալուտ արշալույսը, որն իր հին կուլտուրայով ունի ինքնուրույն կյանքի բոլոր իրավունքները» (48, № 2—3, 1916, էջ 38)։

Ոմանք անտեսելով հասարակական զարգացման կարևորագույն ասպեկտները, կոնֆլիկտը փորձում էին բացատրել միայն կրոնական տարբերությամբ, քրիստոնեությանը հա-

յինի նվիրվածությամբ և այլն (115, էջ 18)։ Մյուսները սատանայորեն քննարկում էին տնտեսական հարցեր։

1917-ի հունվարի 27-ին ամերիկյան «Նյու Ռիփաբլիկ» ամսագիրը «Կոտրած դեկրետով» վերնագրով հոդվածում ցույց էր տալիս արևմտահայության ողբերգության սարսափները։ Ըստ հոդվածագրի 1915—1916 թթ. կես միլիոն հայ սպանվել էր, կես միլիոն էլ մահացել էր շոգից ու քաղցից տեղահանման ժամանակ։ «Երիտթուրքերը որոշել էին ամայացնել Հայաստանը»,— եզրակացնում էր նա։

«Քարընտ հիսթորի մագազին» ամսագիրը (1917, փետրվար) «Հայերի ճամբարների սարսափները» վերնագրի տակ հրապարակել էր «Մի ականատեսի պատմությունը»։ Այստեղ նկարագրված են Եփրատի հովտում, հյուսիսային Արաբիայում և Սիրիայում թուրքական բանտային ճամբարների անմարդկային պայմանները։ Միայն Մեսկինում հողին էին հանձնվել 60 հազար հայեր, որ մեռել էին քաղցից ու տարափոխիկ հիվանդություններից։ Այստեղ պատմվում է այն մասին, թե ինչպես մի թուրք պաշտոնյա քաղաքի բանտում հանդիպում է քուրդ ավազակապետ Մուրսա Բեկին։ Այն հարցին, թե ինչու է նա բանտում, Մուրսա Բեկը պատասխանում է. «Ես 70 հազար հայ եմ սպանել, իսկ հիմա ինձ ձերբակալել են այն բանի համար, որ ես հարվածել եմ ժանդարմին»։ Շուտով քուրդ ավազակին սպանեցին բանտում, փակելու համար նրա անզգույշ բերանը։

«Թուրքերը հայերին սպանում էին կացիններով»— այսպես է վերնագրված այն հոդվածը («Քարընտ հիսթորի» 1917-ի նոյեմբեր), որտեղ բերված են Մարզվանի Անատոլիական կոլեջի տնօրեն Ջորջ Ուայթի վկայությունները։ Նա գրում է, որ թուրքերը որոշել էին վերջ դնել հայկական հարցին, կոտորելով բոլոր հայերին և հենց երիտթուրքական կառավարությունն է ճանաչվում բոլոր հակահայկական գործողությունների պատասխանատուն։

«Ավելի քան երկու միլիոն հայ սպանվել է կամ մահացել թուրքական կառավարության սատանայական քաղաքականության հետևանքով»։ Այս խոսքերով է սկսվում «The missionary Review of the World» (1917-ի նոյեմբեր) ամսագրի խմբագրական հոդվածը։ Հոդվածում ամերիկյան հա-

սարակությանը կոչ էր արվում ձեռք մեկնել հարյուր-հազարավոր հայ գաղթականներին և որբերին։ Այսպիսի կոչով հանդես էր եկել նաև «The Literary Digest» ամսագիրը (1917-ի սեպտեմբեր) իր «Կոչ հանուն հայերի փրկության» հոդվածում։

Արդեն 1920-ին Բրայսը հակահարված էր տալիս հայկական կոտորածների իրական պատմությունը կեղծելու թուրքական փորձերին։ Նա ցույց էր տալիս, որ երիտթուրքերը գործել էին որոշակի ծրագրով։ Հիշեցնելով, որ երիտթուրքերը հայերին մեղադրում էին ռուսների հետ համագործակցելու մեջ և փորձում դրանով արդարացնել կատարված սև գործը, Բրայսը հարց էր տալիս, իսկ նեստորականներին և խալդերին կոտորելն ի՞նչի հետ էր կապված։ «Քրիստոնյաները մորթվեցին, որովհետև նրանք քրիստոնյաներ էին»։ Նա ցույց էր տալիս, որ երիտթուրքերը ղեկավարվում էին «քաղաքական մոտիվներով», ինչպես նաև կողոպուտի միջոցով (ինչպես և նրանք վարվեցին) հարստանալու սկզբունքով (85, էջ 5,6)։

Բազմաթիվ աղբյուրներ ընդգծել են հայ տարրի ոչնչացման բացասական հետևանքները երկրի տնտեսական, առևտրական կյանքի վրա։ Գերմանական, ամերիկյան աղբյուրները նշում էին, որ ոչնչացվածները բնակչության տնտեսապես զարգացած, քաղաքակրթված մասն էին, նրանց ձեռքում կենտրոնացված էր երկրի ներքին առևտրի մեծ տոկոսը։ Հայերից զրկված վայրերում չի մնացել ոչ մի դաբաղագործ, ձուլող, դարբին, դերձակ, հյուսն, բրուտագործ, ջուլհակ, կոշկակար, ոսկերիչ, դեղագործ, բժիշկ, իրավաբան և այլն։ Ասվում էր, որ «երկիրը թողնվում է անօգնական վիճակում»։ Այս կապակցությամբ մի գերմանացի նշում էր, թե «դուք չեք կարող վաճառական դառնալ մեկ ուրիշին սպանելով։ Դուք չեք կարող արհեստ բանեցնել նրա գործիքները ոչնչացնելով» (126)։

Հալեպի ամերիկյան հյուպատոսն իր մի զեկուցագրում նշում էր, որ ներքին վաճառականության խոշոր մասը հայերի ձեռքին էր և տարագրության հետևանքով ամբողջ գործը կործանվում էր, սնանկացնելով շատերին։ Պարպված երկրամասերում, գրում էր նա, բացի մի քանի բացառություններից,

չէր մնացել ոչ որմնադիր, ոչ երկաթագործ, ոչ հյուսն, ոչ ատաղձագործ, ոչ բրուտ, ոչ կղմինդրագործ, ոչ տարազագործ, ոչ ոսկերիչ, ոչ կոշկակար, ոչ դեղագործ ու բժիշկ և ոչ փաստաբան։ «Երկիրն իսկապես հուսահատական կացության մեջ պիտի ընկնի,— եզրակացնում էր ամերիկացի հյուպատոսը։

Ֆ. Նանսենի հաշվարկով թուրքերը 1914—1921 թթ. կոտորեցին ամբողջ հայության մեկ երրորդին (113, էջ 312)։ Նա շեշտում է երիտթուրքերի կողմից նախապես ջարդերը կազմակերպելու և պլանավորելու փաստը։ Մեծ հումանիստը գրում էր, որ արևմտյան տերությունները «երբեք չէին մտածում կատարել իրենց խոստումները», թեև հասարակական կարծիքը զայրույթով պահանջում էր միջամտել իրադարձություններին Հայաստանում։ Նա շեշտում է, որ այդ տերություններին հետաքրքրում էին նավթային կոնցեսիաները, բայց ոչ «տանջված ու արյունաքամ ժողովուրդը»։ Նանսենը մեղադրում է եվրոպական դիվանագիտությանը, որը միայն թուրքերին գրգռել գիտեր, թեև հայերի օգտին որևէ բան անելու մտադրություն չուներ (113, էջ 282—233)։

Շվեդուհի Ալմա Յուհանսոնն իր «Աքսորյալ ժողովուրդ» գրքում (Ett Folk J Laandselykt), բերում է անհերքելի վկայություններ թուրքական չարագործության մանրամասների մասին։ Այդ միսիոներուհին հայկական եղեռնի իր հիշատակները կառուցել է Արևմտյան Հայաստանի գերմանական միսիոներական հաստատություններում աշխատած տարիներին սեփական աչքերով տեսած փաստերի վրա։ Նա վերջին չորս ամիսները ճաշակել է Մուշի հայ բնակչության դառնակսկիծ օրերը։

Հայաստանին նվիրված իր գրքում Բենեդիկտսենը (82, էջ 259) բերում է Թալեաթի այն հեռագրի ֆոտոպատճենը, որ 1915-ի սեպտեմբերի 15-ին հղվել էր Հալեպի նահանգապետությանը։ Դա այն հեռագիրն է, որով ներքին գործերի մինիստրը պահանջում էր ոչնչացնել բոլոր հայերին առանց ներողամտության։ Հեռագրում թուրքական կառավարության թշնամիներ էին հռչակվում բոլոր նրանք, ովքեր կթերանային կատարել այդ հրամանը։ Այս հրամանը տպագրվել է բազմիցս, քննարկվել շատ հեղինակների գրքերում։ Այստեղ մենք հի-

շատակերյինք հրամանն այն առումով, որ Կոպենհագենում 1925-ին լույս տեսած գրքում արդեն գիտեին Թալեաթի չարագործությունների մասին ամենայն մանրամասնությամբ։ Դրա մասին գիտեին Լոնդոնում ու Փարիզում, Բեռլինում ու Հռոմում, Աթենքում ու Տոկիոյում։

Հայաստանի բարեկամների Շվեյցարական միությունը (նախագահ՝ Լեոպոլդ Ցավը, քարտուղար՝ Ա. Քրաֆթ Բոնարտ) պրեզիդենտ Վիլսոնին և փոխպրեզիդենտ Մարշալին ուղարկել էր մի հեռագիր, որով ԱՄՆ-ից խնդրում էր ընդունել Հայաստանի մանդատը, «որպեսզի Հայաստանը չանհետանա աշխարհի երեսից»։ «Այս համաշխարհային պատերազմի ընթացքում ոչ մեկ ազգ այնքան տառապած է ազատության հույսի համար, որքան տառապած են հայերը։ Հայաստանը մեռնում է և որևէ պատասխան չի տրվում վերապրողների կանչերին» (19, 9. XI. 1919)։

1919-ի հուլիսին ամերիկյան ակադեմիայի քաղաքական գիտությունների բաժանմունքը հրապարակեց փաստերով ու եզրահանգումներով մի ամփոփագիր, որտեղ երիտթուրքերը մեղադրվում էին զանգվածային սպանություններ և տեղահանություններ կազմակերպելու մեջ (117, էջ 36)։

Սոցիալիստ Հյուիսմանսը (էմիգրացիայի տարիներին Վ. Ի. Լենինի մտերիմ բարեկամ) հայասեր այլ բելգիացիների հետ միասին 1922-ի դեկտեմբերի 20-ին ամբիոն բարձրացավ խոսելու հայ ժողովրդի տառապանքների, հայկական դատի քաղաքական պատմության մասին։ Ժողովի ընդունած բանաձևում ասված էր. «Հինգ հարյուր բելգիացի քաղաքացիներ հավաքվելով Անվերսի մեջ... բողոքում են 1904-ից ի վեր Փոքր Ասիայում սիստեմատիկ կերպով քրիստոնյա ազգաբնակչության ոչնչացման դեմ, ընդդեմ թուրքական կառավարության գործադրած բռնությունների, կոչ անելով բելգիական կառավարությանը Լոզանի խորհրդաժողովում ընդառաջերթալ համաշխարհային խղճի ցանկությանը և պահանջել պարտված Թուրքիայից.

ա. վերջ դնել ջարդերին ու տեղահանությանը.

բ. իր սահմաններում հարգել փոքրամասնությունների իրավունքները.

գ. հատուցել կատարված հանցանքների համար.

դ. հայերին տալ օջախ իրենց նախնիների հողերի վրա» (18, № 24, 1922)։

Ըստ «Նյու Յորք Թայմս» թերթի հաղորդագրության, 1924-ի դեկտեմբերի 22-ին Մարսել քաղաքը ցնցվեց սարսափելի լուրից. նավահանգիստ էր ժամանել անգլիական «Ջան» նավը, բեռնված 400 տոննա մարդկային ոսկորներով գործարաններին հանձնելու համար։ Հայտնի դարձավ, որ դա հայ զոհերի ոսկորներն էին, որ նավ էին բարձել Մարմարայի ծովեզրում, Մուդանիայի մոտ։

«Ընկք, պատասխանեցեք, աշխարհի ոչ թե քաղաքակիրթ, այլ ո՞ր բարբարոս, ո՞ր մարդակեր կառավարությունը վարվեցավ այնպես՝ ինչպես վարվեցաք դուք հայ ժողովրդին հետ, որ ուրիշ բան չուզեց, բայց եթե վայելել մարդկային ամենատարրական իրավունքները, կյանքի, ինչքի և պատվի ապահովության»։ Այսպես էր գրում Տիգրան Զավենը «Ժողովուրդ» թերթում, 1918-ի նոյեմբերի 30-ին։

1. Լենին Վ. Ի. Երկեր, 4-րդ հրատ.
2. Ամենուն տարեցույցը, ԺԶ տարի, 1922, Հայ միտքը երեկ և այսօր, Կ. Պոլիս։
3. Անտոնյան Արամ Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, պաշտոնական հեռագրեր, Բոստոն, 1921։
4. «Աշխարհ» թերթ, Փարիզ։
5. Բայբուրդյան Ա. Եղեռնը և իր հեղինակները, «Աշխարհ», 23. 6. 1979։
6. Բինոն, Ռընե Հայերու բնաջնջումը գերմանական մեթոդ—թուրքական գործելակերպ, Կ. Պոլիս, 1919։
7. Գանգրունի Հ. Կարելի՞ էր գործակցել իթթիհադի հետ, «Արարատ», 1. 6. 1973։
8. Գարամանուկյան Ա. Հայկական լեզուն պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ և վավերագրեր. «Հայկազյան հայագիտական հանդես», Բեյրութ, 1974, հ. Ե.։
9. Գեղամյանց Եղիշե Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում, մ. 2, Բաքու, 1917։
10. «Գործ» ամսագիր, Բաքու։
11. «Երևան» թերթ, Փարիզ։
12. «Զարթոնք» թերթ, Բեյրութ։
13. Զ. Ն. և Մ. Կ. Հայկական հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, 1913։

14. Բուրքաց ազնար, պատմական փաստաթղթեր, Ա. Տեղեկագիր, Տեր Մ... արքեպիսկոպոս Օ.-ի (Օրմանյան), Ս. Էջմիածին, 1919։
15. Լեփսիուս Ի. Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն, Կ. Պոլիս, 1919։
16. Կիլիկյան տարեցույց, 1922, կազմեցին Նվարդ—Ասպետ, Արամ—Ասպետ, Ադանա, Կիլիկիա, Կ. Պոլիս, 1922։
17. Կիրակոսյան Ջ. Ս. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965։
18. «Հայաստանի ձայն» թերթ, Փարիզ։
19. «Հայրենիք» թերթ, Բոստոն։
20. Հովակիմյան Հովակիմ (Արշակունի), Պատմություն հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967։
21. ՀՍՍՀ ՊԿՊԱ. Ֆ. 57, ց. 1, գործ 618։
22. ՀՍՍՀ ՊԿՊԱ. Ֆ. 314, ց. 12, գ. 23։
23. ՀՍՍՀ ՊԿՊԱ. Ֆ. 57, ց. 1, գ. 693։
24. ՀՍՍՀ ՊԿՊԱ. Ֆ. 200, ց. 1, գ. 144։
25. ՀՍՍՀ ՊԿՊԱ. Ֆ. 57, ց. 2. գ. 669։
26. ՀՍՍՀ ՊԿՊԱ. Ֆ. 57, ց. 2, գ. 729։
27. «Հորիզոն» թերթ, Թիֆլիս։
28. Մանդելշտամ Ա. Ռուսաստանի քաղաքականությունը Թուրքիայում մեծ պատերազմից առաջ, «Վեմ» ամս., 1935։
29. Մի թուրք սպայի հիշատակարանից, Թիֆլիս, 1917։
30. Միրագենց Վ. Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա մաս, Կ. Պոլիս, 1920։
31. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, Ֆ. 4047, ց. 1, գ. 72։
32. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, Ֆ. 4047, ց. 1, գ. 120։
33. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, Ֆ. 4047, ց. 1, գ. 142։
34. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, Ֆ. 4047, ց. 1, գ. 145։
35. «Մշակ» թերթ, Թիֆլիս։
36. «Մշակ» թերթ, Ֆրեզնո։
37. «Նոր դար» թերթ, Թիֆլիս։
38. «Նորք» ամսագիր, Երևան։
39. «Պայքար» թերթ, Թիֆլիս։
40. Ռիֆաթ, Մևլան Զադե Օսմանյան հեղափոխությունը և մութ ծալքերը, Բեյրութ, 1938։
41. Սապահ—Գյուլյան Ս. Պատասխանատուները, Պրովիդենս, 1916։
42. Սասունի Կ. Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918), Բոստոն, 1927։
43. Վերներ Է. Թուրքիան եռյակ միության և Անտանտի միջև 1914 թվականին. պատրանքներ և իրականություն Բոսֆորի ափերին, «Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ, № 7, 1970։

44. [illegible] Հ., Հակովբոս Վ. Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագրերու համեմատ, մասն Ա, Վիեննա, 1921։
45. Բեշյան Ա. Մ. Կարմիր դրվագներ հերոսներու կյանքեն, 1915—1918, Պուքրեշ, 1938։
46. Բաց կախաղաններ, նվեր 1915 հունիսի 2/15-ին Կ. Պոլսո մեջ կախաղան բարձրացած քսան և. դ. հնչակյան ընկերների հիշատակին, Պրովիդենս, 1916։

47 **Аветян А. С.** Германский империализм на Ближнем Востоке, М., 1966.
48 «Армяне и война», ежемесячный, иллюстрированный журнал об армянской жизни, Одесса.
49 «Армянский Вестник», 1916, М.
50 АВПР, Ф. Канцелярия, 1914, д. 207 (записка армянского деятеля доктора Завриева).
51 **Берти, лорд,** За кулисами Антанты. Дневник британского посла в Париже, 1914—1919, М., 1927.
52 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1966. с. 560.
52а **Гиббонс, Герберт А.** Самая черная страница новейшей истории. Последние избиения в Армении, Петроград, 1916.
53 **Голованов Н. И.** (полковник). Империалистические противоречия в лагере Антанты в период первой мировой войны (1914—1917), (Автореферат), М., 1953.
54 Дело Петроградского Армянского кружка, т. III, 1914—1915 (библиотека Армянского филиала ИМЛ).
55 **Истягин Л. Г.** Стратегия и тактика германского империализма на Среднем Востоке в конце XIX — начале XX вв. М., 1967.
56 **Капчев Г. И.** Турецкое наследство и мировая война, Стокгольм, 1917.
57 **Кряжин В.** Политические группировки Турции. Младотурки. «Новый Восток», № 1, 1923.
58 **Лазарев М. С.** Крушение турецкого господства на Арабском Востоке, (1914—1918 гг.), М., 1960.
59 **Либкнехт К.** Мой процесс по документам, Петроград, 1918.
60 **Мандельштам А. Н.** Младотурецкая держава. Историко-политический очерк, М., 1915.

61 **Марунов Ю.**, Пантюркизм и панисламизм младотурок (1908—1918), «Краткие сообщения института народов Азии», XLV, М., 1961.

62 Международные отношения в эпоху империализма, серия III, М., 1931.

63 **Миллер А. Ф.** Американский план захвата Константинополя и проливов в 1919 году, журнал «Вопросы истории», № 3, 1951.

64 **Мирный С.** К вопросу об определении стоимости мировой войны для Турции, жур. «Новый Восток», № 1, 1923.

65 **Могилевич А. А. и Айрапетян М. Э.** На путях к мировой войне, 1914—1918, Л., 1940.

66 «Наше время», газета, Баку.

67 **Палеолог М.** Итоги мировой войны. М., 1924.

68 Первая Циммервальдская конференция. Официальные документы, Петроград, 1915.

69 «Правда», газета.

70 **Саакян Р. Г.** Документы младотурецкого комитета о геноциде западных армян в 1915—1916 гг., Известия АН Арм. ССР, Общественные науки, Ереван, № 3, 1965.

71 **Тыркова, Ариадна,** Старая Турция и младотурки, Петроград, 1916.

72 Циммервальдская и Кинтальская конференции. С предисловием проф. В. В. Святловского, Л. — М., 1924.

73 **Шпилькова В. И.** Империалистическая политика США в отношении Турции (1914—1920), М., 1960.

74 **Эрцбергер М.** Германия и Антанта, Мемуары, М., — П., 1923.

75 **Anderson M.S.** The Great Powers and the Near East, 1774—1923 Documents of Modern History, London, 1970.

76. **Andonian Aram** Documents officiels concernement les massacres Arméniens. Reproduction photographique d'un grand nombre de Documents, Paris.

77 **Andonian Aram** The Memoirs of Naim Bey. Turkish official Documents Relating of the Deporations and Massacres of Armenians, London, 1920.

78 Armenia's Charter. Right to Liberation by the Allies. From Lord Bryce to mr. Balfour, september 30, 1918; From Lord Robert Cecil to Lord Bryce, oktober 3, 1918. Reprinted from the "Westmister Gazette", october 3, 1918.

79 Armenia and the Settlement. Report of Public to express Sympathy with the Armenian Cause, Held at the Central Hall, Westminster on Thursday, Iune, 19-th, 1919, London.

80 **Armstrong H.C.** Gray wolf, The Life of Kemal Ataturk, N.Y., 1961.

81 **Barker A.J.** The Mesopotamian Campaign of 1914-1918, The Bastard War, N.Y., 1967.

82 **Beneticfsen M.** Armenien, Kopenhagen, 1925.

83 **Boyajian Dickran H.** Armenia: The Case For a Forgotten Genocide, Westwood, New Jersey, 1972.

84 **Bryce, Viscount.** The Future of Armenia, Reprinted from the "Contemporary Review", December, 1918.

85 **Bryce, Viscount O. M.** The Settlement of the Near East, Reprinted from "The Contemporary Riview", London, 1920.

86 **Bryce J.** The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916 London, p. XXXIX.

87 **Deregian Avetis** The Armenian Genocide (1915), N.Y., 1977.

88 **Davis—Trietsch.** Die Jüden der Türkei, Leipzig, 1915 (Dent sches Vorderasion scomitee—*սերիայի շարքում համար* 8 *նյութը* "Lönder. Völker der Türkei).

89 **Gibbons A.H.** Armenia in the World War, N.Y., 1926.

90 Grosse Politik der Europäischen Kabinette, 1871-1914 38 Band, Neue Gefahrenzonen in Orient 1913-1914. Die Frage der Armenischen Reformen. Januar 1913 bis April 1914, Berlin, 1927.

91 **Guttman Joseph** The Beginnings of Genocide, 1948, N.Y.

92 FA'IZ El-Ghusein Martyred Armenia, N. Y., 1916.

93 Foreign Office, Great Britain, Parliamentary Papers, Miscellaneous, London.

94 **Einstein, Lewis** Inside Constantinople, Former minister plenipotentioary of United States diplomatic service; N.Y., 1918.

95 **Kloian R. D.** The Armenian Genocide—first 20-th Century Holocaust, San-Francisco, Second Edition, 1981.

96 **Leese, Leonard C.** Armenia and the Allies, London, 1920.

97 Les Atrocités Turques au Pont—Euxin, Copie D'une Lettre de S.E. L'Archesevêque d'Amassia et Samsoun Germanes, Paris 1919.

98 **Lengyel, Emil** Turkey, N.Y., 1941.

100 **Mackenzie, Albert** Crimes of Turkish Misrule, "The New York Times Current History", N.Y. october, 1922.

101 **Mandelshtame A.** La Societé des Nation et les Puissance devant le Probleme Armenien, 2-ème edition, Liban, 1970.

102 **Mandelshtame A.** Le sort de l'Empire Ottoman, Lausanne et Paris, 1917.

103 **Marquart J.** L'Origine et La Reconstitution De La Nation Arménienne. Traduction de Marie K. J. Basmadjian, Paris, 1919.

104. **Mark H., Ward M. D.** The Deportations In Asia Minor 1921-1922, London, 1922.

105 **Merdjimekian, Pierre P.** Les Armeniens D'Angora Déportés et Massacrés. Pourquoi??? et Comment??? Le Caire, 25 mars, 1920.

106 **Miscellaneous** N 31 (1916). London.

107 **Montgomery G. R.** The Massacres of Armenians in 1915 "Current History", 1922, october.

108 **Morgan J.** Contre Les Barbares de L'Orient, Paris 1918.

109 **Morgenthau H.** Ambassador Morgenthan's Story, N.Y., 1926.

110 **Morgenthau H.** The Greatest Horror in History, "Red Cross Magazine", March, 1918.

111 **Morgenthau H.** The Tragedy of Armenia (reprinted from the Red Cross magazine, march, 1918), London, 1918.

112 **Naaem, Rev. Joseph** Shall this Nation Die? N.Y., 1921.

113 **Nansen Fritjof** Armenia and Near East, London, 1928.

114 **Okay, Kurt** Enver Paschader Grosse Freund Deutschlands, Berlin, 1935.

115 **Papazian B. S.** The Tragedy of Armenia, Boston, Chicago, 1918.

116 **Price, Clair.** Mustapha Kemal and The Americans. "The New York Times Current History", October, 1922.

117 **Robinson R. D.** The first Turkish Republic, Harvard University press, Cambridge, Massachusetts, 1963.

117a **Sachar, J. Howard** The Emergence of the Middle East, Knopf, 1969.

118 **Stuermer, Harry** The War Years in Constantinople. Sketches of German and Young Turkish Ethics and Politics, N. Y., 1917.

119 **Sykes, Mark.** The Future of the Near East, London.

120 "The New York Herald Tribune", N. Y.

121 Témoignages Inédits Sur les Atrocités Turques Commises on Arménie Suivis d'un Récit de L'Epopée Arménienne de Chabin-Karahissar recueillis par La Societe de Dames Arméniennes (Azkanever de Constantinople), Paris, 1920.

122. **Toynbee A. J.** A past and a Future, N.Y.

123 **Toynbee A. J.** Armenian Atrocities, The Murder of a Nation, London—N.Y., 1915.

124 **Toynbee A. J.** The Extermination of the Armenians, The Time History of the War, London, 1916, vol. VIII.

125 **Trumpener, Ulrich** Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, New Jersey, 1968(*գլուխ 7-րդ, Հայկական հալածանքներ, տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», № 2, 1970)*

126 Turkey: A past and a Future. Reprinted (with additions) from "The Round Table", june 1917, London.

127 **Walker, Christopher** Armenia; The Survival of a Nation, N.Y., 1980.

128 **Williams, W.** Lew Armenia; Past and Present, London, 1916,

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1918 ԹՎԱԿԱՆ. ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՈՑ ԳԵՆՈՑԻԴԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը: «Թուրքահայաստանի մասին» սովետական կառավարության դեկրետը: Երիտթուրքերը դարձան հակասովետական ինտերվենցիայի առաջին իրականացնողները: Թուրքական զորքերը նորից գրավեցին Արևմտյան Հայաստանը, ներխուժեցին Արևելյան Հայաստան: Բրեստ-Լիտովսկի խաղաղությունը: Անդրկովկասյան հակահեղափոխության սև դերը: Տրապիզոնի բանակցությունները: Քաղաքական մթնոլորտը Հայոց ազգային խորհրդում: Սարդարապատի հերոսամարտը: Բաթումի կոնֆերանսը: Հայոց բանագնացները Բեռլինում, Վիեննայում, Կ. Պոլսում: Պանթուրքիզմը գործողության մեջ: Երիտթուրքերի չարագործությունները Անդրկովկասում: Անտանտի գաղութարարների խոսքն ու գործը: Միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունն էր օգնության ձեռք մեկնում հայ ժողովրդին:

Հայ ժողովուրդը 1917 թվականը թևակոխեց ջարդված ու բզկտված, անթիվ ու անհամար որբերով, տեղահանված և ռուսական հող հասած ու տարբեր վայրերում սփռված 300—350 հազար գաղթականությամբ:

1917-ի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը դրեց մարդկության նոր, իսկական պատմության սկիզբը: Հաշտության մասին լենինյան դեկրետը ժողովուրդներին ելք ցույց տվեց իմպերիալիստական պատերազմի սպանդից, ավերածություններից ու ժողովրդական զանգվածների թշվառությունից: Սովետական կառավարության կողմից 1917-ի նոյեմբերի 3-ին հրապարակված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում» հռչակվում էր Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարությունն ու

սուվերենությունը, ազատ ինքնորոշման իրավունքը: Սովետական կառավարությունն ազդարարում էր, որ ազատ զարգացում է ապահովելու Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների համար:

Վ. Ի. Լենինը հատուկ ուշադրություն էր նվիրում հայ ժողովրդին, հայկական հարցին: *Դատապարտելով Գուչկով-Միլյուկովի բուրժուական կառավարության՝ իմպերիալիստական պատերազմը շարունակելու քաղաքականությունը, նրա գործելակերպը Արևմտյան Հայաստանում, Վ. Ի. Լենինը լիակատար ազատության պահանջ էր դնում «ամբողջ Հայաստանի նկատմամբ» (1, հ. 26, էջ 58): Հանդես գալով 1917-ի հունիսին տեղի ունեցած Սովետների I համագումարում, նա, դիմելով ժամանակավոր կառավարության ղեկավարներին, ասում էր. այն բանակը, որ «այժմ պահվում է Հայաստանում... եթե* Հայաստանը դառնար անկախ հայկական հանրապետություն, և այն դրամը, որ մեզնից վերցնում են Անգլիայի և Ֆրանսիայի ֆինանսիստները, *տար նրան, ապա այդ լավ կլիներ» (1, հ. 25, էջ 31): «Ապացուցեք, որ դուք ազատագրում եք հայկական հանրապետությունը, համաձայնության մեջ եք մտնում բանվորների և գյուղացիների դեպուտատների հետ յուրաքանչյուր երկրում,— ասում էր նա,— որ* դուք ազատ հանրապետության կողմնակից եք, *այն ժամանակ ռուսական հեղափոխության արտաքին քաղաքականությունը կդառնա իրոք հեղափոխական, իրոք դեմոկրատական» (1, հ. 25, էջ 31):*

Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ հրապարակվեցին և հանրության դատաստանին հանձնվեցին իմպերիալիստական դիվանագիտության փաստաթղթերը: Պատռվեց իմպերիալիստական գիշատիչների դիմակը, ջրի երես դուրս բերվեցին աշխարհի վերաբաժանման ծրագրերը, նրանց խոսքի և գործի հակադիր պատկերը: Պարզվեց, որ հայ ժողովրդի օգտին ճառեր ասող արևմտաեվրոպական դիվանագետներն իրենց կնքած գաղտնի համաձայնագրերում Մերձավոր արևելքի տերիտորիաները նախատեսելով որպես անգլիական և ֆրանսիական, ցարական և մի փոքր ուշ նաև իտալական ազդեցության գոտիներ, հայ ժողովրդի իրավունքները հարգելու ոչ մի միտք ու մտադրություն չունեին:

Ի հակադրություն այդ քաղաքականության, սովետական կառավարության ընդունած առաջին որոշումներից էր՝ «Թուրքահայաստանի մասին» դեկրետը (1917 թ. դեկտեմբերի 29—1918 թ. հունվարի 11)։ «Թուրքահայաստանի մասին» սովետական կառավարության դեկրետը նոր ժամանակների դիվանագիտության պատմության մեջ, միջազգային հարաբերությունների պրակտիկայում առաջին փաստաթուղթն էր, որ ճանաչում էր հայ ժողովրդի ազատ ինքնորոշման, դարեր առաջ կորցրած պետականության ստեղծման իրավունքը։ Այս փաստաթղթով սովետական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ պաշտպանում է Արևմտյան Հայաստանի «ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»։ Սովետական կառավարությունը պահանջում էր ապահովել տարբեր երկրներում ցրված կամ բռնի կերպով օսմանյան կայսրության խորքերն աքսորված հայերի անարգել վերադարձն իրենց հայրենի հողերը։

Մինչդեռ երիտթուրքերը կործանման եզրին էին հասցրել արևմտահայությանը, իմպերիալիստական տերությունների ղեկավարներն ու դիվանագետները բավարարվում էին հայանպաստ փարիսեցիությամբ և դատարկահնչյուն, անորոշ խոստումներով, սոցիալիստական առաջին պետությունը հռչակում էր, որ հարգում է հայ ժողովրդի ինքնությունը և գործնական միջոցառումներ մշակում այդ իրավունքներն իրականացնելու համար։

Սրանից էլ բխում էր այն փաստը, որ Վ. Ի. Լենինը համաձայնություն տվեց կազմկոմիտե ստեղծելու և Հայաստանի կոմունիստական կուսակցություն կազմակերպելու ուղղությամբ աշխատանք տանելու համար։ Հայաստանում սովետական պետականություն ստեղծելու, «Թուրքահայաստանի մասին» դեկրետն իրագործելու հսկողությունը Վ. Ի. Լենինի կողմից դրվում էր Կովկասում սովետական արտակարգ կոմիսար կարգված Ս. Շահումյանի վրա։

Անդրկովկասի հակահեղափոխությունը (ազգբեջանական մուսավաթը, վրաց մենշևիկները, հայկական դաշնակցությունը), Անդրկովկասյան կոմիսարիատը, ապա սեյմը, ազգային խորհուրդները՝ չճանաչելով Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարությունը, արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի լիազորությունները, պայքար սանձազերծեցին սոցիալիզմի հաղթանակի դեմ և իրենց ազգայնական գործելակերպով խորացրին երկրամասի ազգությունների երկպառակությունները, չլատեցին աշխատավորության ուժերը, դեմ առ դեմ միայնակ մնացին օսմանյան գիշատիչ պետության առջև։

Սովետական կառավարությունը 1918-ի ամբողջ ընթացքում երկրի ներքին և արտաքին բարդ իրադրության պայմաններում բոլոր միջոցներով ձգտում էր թեթևացնել հայ ժողովրդի համար ստեղծված ծանր վիճակը։

Ստեղծվեց հայկական գործերի կոմիսարիատ, որտեղ ղեկավար աշխատանքի ներգրավվեցին հայ կոմունիստներ Վարլամ Ավանեսովը, Վահան Տերյանը, Սարգիս Լուկաշինը, Պողոս Մակինցյանը, ավելի ուշ՝ Արտ. Կարինյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Հայկ Հովսեփյանը և ուրիշներ, որոնք լավատեղյակ էին հայ ժողովրդի վիճակին և ժողկոմխորհրդի օրգաններին ներկայացնում էին զեկուցագրեր, առաջարկներ, նախագծեր՝ Հայաստանի հետ կապված հարցերը լուծելու մասին։

Հայկական գործերի կոմիսարիատի 30 ներկայացուցիչներ Պետրոգրադից և Մոսկվայից ուղարկվեցին այն մարզերը, ուր կուտակվել էին հայ գաղթականները, նրանց օգնելու համար։ Ժողկոմխորհուրդը 1918-ի հունվարին քննեց «Հայկական գործերի կոմիսարիատի հայտարարությունը հայ գաղթականներին անհապաղ օգնություն ցույց տալու մասին» և որոշեց այդ նպատակի համար հատկացնել 6 միլիոն 194 հազար 784 ռուբլի, որպես անվերադարձ նպաստ՝ կարիքավորներին բաժանելու համար։ Միաժամանակ Սովետական Ռուսաստանի կառավարությունը հրահանգ ուղարկեց բոլոր հեղկոմներին և տեղերում գործող սովետական մյուս կազմակերպություններին՝ օգնություն ցույց տալ հայկական կազմակերպություններին՝ հայկական ջոկատներ կազմակերպելու, նրանց զինելու և անարգել կերպով այդ ուժերը Հայաստան ուղարկելու համար։

1917-ի վերջին ռուս-թուրքական սահմանը (մոտ 500 կմ երկարությամբ) անցնում էր Տրապիզոն—Երզնկա—Խնուս—

Վան գծով։ Պատերազմի տարիներին ռուսական բանակը գրավել էր Ալաշկերտը, Բայազեդը, Վանը, Էրզրումը, Տրապիզոնը, հասել Երզնկա։ Այդ շրջաններն էր վերադարձել երեկվա մազապուրծ գաղթականության մի մասը, փորձելով վերաշինել իր բույնը։

Երբ 1917-ի նոյեմբերին թուրքական արևելյան բանակի հրամանատար Վեհիբ փաշան կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին դիմեց հանուն «մշտական բարեկամության», «հանուն մարդասիրության» եղբայրասպան պատերազմին վերջ տալու, հաշտություն կնքելու մասին առաջարկությամբ, երիտթուրքական կառավարողների նպատակը խաղաղությունը չէր։ Չնայած այն բանին, որ 1917-ի դեկտեմբերի 18-ին Երզնկայում զինադադար կնքվեց ռուսական և թուրքական բանակների միջև, Էնվեր—Թալեաթի կառավարությունը միտք չուներ հարգելու այդ փաստաթուղթը։ Համաշխարհային պատերազմը շարունակվում էր։ Թուրքիան, հետևելով իր ավագ դաշնակից՝ կայզերական Գերմանիայի օրինակին, հեղափոխությունը Ռուսաստանում դիտում էր մի պատեհ առիթ իր ծավալողական պլաններն իրագործելու, տերիտորիալ ավարառության համար։ Զինադադարը միայն միջոց էր ժամանակ շահելու, սեփական ուժերը համախմբելու և հարձակման նախապատրաստվելու համար։

Երիտթուրքական կառավարողները դարձան հակասովետական ինտերվենցիայի առաջին իրականացնողները: Էնվերի ու Թալեաթի կառավարությունն անկարող էր կերակրել նույնիսկ բանակը, որի թիվը 1917-ի վերջին և 1918-ի սկզբին 2 միլիոնի էր հասնում (61, էջ 67)։ Եփրատից մինչև Ուրմիա լճի հարավարևմտյան կողմերը, մոտ 500 կմ երկարությամբ պաշտպանական գիծ բռնած 6-րդ բանակի մնացորդները հալչում էին սովից և տարափոխիկ հիվանդություններից։ Ամեն ինչ վերջացած էր համարվում։ Թվում էր, թե թուրքական բանակն այլևս ոչ մի բանի պիտանի չէր։ Սակայն նվաճողական պանթուրքիստական ծրագրերը նրանց մղեցին արկածախնդրության, հանուն Էնվերի, Թալեաթի, Նազըմի պանիսլամիստական ու պանթուրքիստական պլանների իրականացման։

Արևմտահայության դահիճները միևնույն պլաններն էին ծրագրել Անդրկովկասի հայության նկատմամբ, ինչ նրանք բարբարոսաբար իրագործել էին 1915-ին։ Նրանք փայփայում էին այն միտքը որ «Սև ծովը պետք է թուրքական լինի, որի առափնյա պետությունները պետք է գտնվեն Թուրքիայի հովանավորության ներքո, իսկ թուրքական փադիշահը տիրապետի Ղրիմում և Ադրբեջանում» (19)։

Երիտթուրքերն ամբողջապես նպատակամղվում էին դեպի Անդրկովկաս, Հյուսիսային Կովկաս, պահանջներ էին առաջադրում Թավրիզի և Ուրմիայի նկատմամբ, հեռավոր պլաններ էին որոճում (47, 1918, № 194)։

Անդրկովկասում «արդեն 1917-ի ավարտին փաստորեն տնօրենը ազգային խորհուրդներն էին» (44, էջ 64)։ «Ժամանակավոր կառավարության հատուկ անդրկովկասյան կոմիտեի» (ՕԶԱԿՈՄ) անդամները՝ (Ջաֆարով, Պապաջանով, Չխենկելի) գործում էին իրենց ազգային բուրժուական շահերին համապատասխան։ Կոմիտեի նախագահ ռուս Վ. Ա. Խարլամովը դժվարին կացության մեջ էր։ «ՕԶԱԿՈՄԻՆ» զուգահեռ գործում էին վրացական, հայկական, թաթարական (ադրբեջանական) ազգային խորհուրդները, որոնք փորձում էին չենթարկվել բանվորական և զինվորական դեպուտատների սովետների իշխանությանը։ 1917-ի նոյեմբերի 24-ին ստեղծվեց Անդրկովկասյան կոմիսարիատը։

1917-ի նոյեմբերի 14-ին Հայոց ազգային խորհրդում ընթերցվում էր Զապել Եսայանի նամակը Միջագետքի տարագիր հայերի մասին։ Նկարագրելով թուրքական իշխանությունների կողմից հայ բեկորների նկատմամբ կիրառված բարդարարական գործողությունները, նա միաժամանակ ճըշմարիտ տեղեկություն էր հայտնում Միջագետք մտած անգլիական զինվորական իշխանությունների հակահայկական վերաբերմունքի մասին, որ «անգլիացիները հայերին չեն պաշտպանում», ձգտելով «իրենց հարաբերությունները չփչացնել» թուրքերի հետ (11, թ. 24—25)։ Չնայած սրան, ազգային գործիչները շարունակում էին անգլիացիներից ակնկալել իրենց հույսը, մտածել նրանց հետ համագործակցելու մասին։

Թուրքահայաստանի մասին դեկրետի իրագործումը շատ տեսանկյունից հենց կախված էր հայ ազգային ուժերի կազմա-

կերպվածությունից, վարչական ունակություններից, այն բանից, թե նրանք որքան օպերատիվ կմոբիլիզացնեին ուժերը երկրում կարգ հաստատելու, միլիցիա ստեղծելու, մասսայական դարձած դասալքությունը կանխելու, ռուսական բանակի զորամասերը օգտագործելու համար։ Այնինչ նրանց այդ չհաջողվեց։ Մի կողմից, ստեղծված օբյեկտիվ ծանր կացությունը, մյուս կողմից, նրանց անճարակությունը, պարտություն պարտության ետևից բերեցին նրանց, խորացնելով հայ ժողովրդի դժբախտությունը։ Ազգային խորհրդի 1917-ի նոյեմբերի 4-ի նիստում Պապաջանովը հայտարարում էր. «Մենք Ռուսաստանից չենք անջատվելու, բայց օգնություն սպասել չենք կարող» (11, թ. 14)։ Խոսքով անջատվելու դեմ էր ոչ միայն այս անվանի կադետը, այլև հայկական բուրժուազգային մյուս կուսակցությունների ու խմբավորումների ղեկավարները։ Բայց միայն խոսքով։ Գործնականում նրանք ընդդիմացան սովետական կառավարությունը ճանաչելուն, նրան ենթարկվելուն, կանգնեցին նրա թշնամիների դիրքերում և աստիճանաբար դեպի անդունդի եզրը գլորեցին առանց այն էլ բզկտված հայ ժողովրդին։

«Վախենում եմ,— ասում էր Արամ Մանուկյանը,— տարվենք Թուրքաց Հայաստանով և Կովկասը կորցնենք» (11, թ. 76)։ Տիրահոչակ Հ. Օհանջանյանի մտահոգությունն այլ էր. նոյեմբերի 24-ին նա կոչ էր անում բոլոր միջոցներով «ընդդիմանալ ուժեղացող բոլշևիկյան շարժմանը» (11, թ. 49)։

Կովկասյան ռուսական բանակի հրամանատարությունը հրաման էր տվել մինչև 1917-ի դեկտեմբերի 25-ը ոչ մի զինվոր չթողնել թուրքական ճակատում։ Զինվորները կուտակվում էին, խճողվում Կարինի, Հասան Կալեի, Կարաուրգանի և Սարիղամիշի կայարաններում։ Հինգ-տասը օրվա մեջ գրեթե դատարկվել էին Երզնկան, Մամախաթունը և Բաբերդը (4, էջ 11)։ Երզնկայի ստիպողական նահանջից հետո Մուրադն ասում էր. «Արշակ Ջամալյանը պատճառ դարձավ 6000 հոգու կորստյան։ Ես չէի հավատում, որ մեզ ուժ կուղարկեն Կովկասից...» (4, էջ 96)։ «Դավաճան ոճրագործներ, անմեղ զոհերի դահիճները դուք եք։ Ո՞ւր է Արշակ Ջամալյանը...» (4, էջ 122)։

Մինչև դեկտեմբերի 10-ը Տրապիզոնի, Գյումուշխանեի,

Բաբերդի, Երզնկայի ճակատներից համախմբված ռուսահայ զինվորների թիվը 2000-ից չէր անցնում։ 1917-ի նոյեմբերի սկզբին Վանի շրջանում եղած ռուսական զորքի 70 տոկոսն արդեն հեռացել էր, մնացյալը նույնպես բռնել էր ցրվելու ճանապարհը (11, թ. 14)։ 1918-ի սկզբին Էրզրումից մինչև Վասպուրական գծի վրա 22 հազար հայ զորք կար (34, էջ 163)։

Խախտելով Էրզինջանի զինադադարը և հարձակման անցնելով, Վեհիբ փաշան ասում էր, որ «այդ գործողությունը ձեռնարկվում է լոկ անհրաժեշտաբար՝ հանուն հումանիզմի և քաղաքակրթության» (42, էջ 19)։ Սա ասվում էր որպես ծխածածկույթ։ Միաժամանակ երիտթուրքերն այն ժամանակ սիրում էին ասել, թե հարավում արաբական հողերը կորցնելու դիմաց իրենք պետք է փոխհատուցում ստանան հյուսիսում։

Խոսելով 1918-ի սկզբին երիտթուրքական ուխտադրուժ հարձակման, Էրզինջանում կնքված պայմանագրի դրժման և հայ ժողովրդի համար ստեղծված ծանր կացության մասին, սովետական պատմաբան Ջ. Գոգոլևը գրում է, որ «Անդրանիկի հայկական չեթնիկների մանր ջոկատները չէին կարող կանգնեցնել թուրքական հարձակումը», որ «Կարսի մարզի հայ և ռուս բնակչությունը թողնվեց բախտի քմահաճույքին», իսկ «թուրքական զորքերը կազմակերպեցին քրիստոնյաների, առանձնապես բնակչության հայ հատվածի սարսափելի կոտորած» (41, էջ 15)։

Ազգային խորհրդի 1917-ի դեկտեմբերի 15-ի նիստում Անդրանիկը տարակուսանքի մեջ հայտարարում էր. «Ես դեռ մտածում եմ, թե գուցե պետք է թուրքերի հետ հաշտվել, եթե ֆրոնտն այսպես քայքայվի»։ Նա դժգոհում էր Ազգային խորհրդից, որը լուրջ մոտեցում չուներ արևմտահայության խնդրին, որ ինքը դեռ վաղուց դրել է ինքնապաշտպանության խնդիրը (11, թ. 79, 82)։ Մի քանի օր անց, դեկտեմբերի 19-ին նա ասում էր. «Հաշտություն կնքեք, չկնքեք ձեզ պիտի կոտորեն։ ...Թուրքերն Էրզրումը վերցնեն, 600 թնդանոթը նրանց կմնա։ Սիրտս կարյունի, երբ կմտածեմ» (11, թ. 79, 82)։

Դեկտեմբերի 19-ի որոշումով մերժվում են թուրքահայերից մի դիվիզիա և մի երկրապահ զորամաս կազմելու առաջարկու-

թյունները: Հիմնական պատճառաբանությունն էր՝ «չգրգռել թուրքերին»: Ընդունված բանաձևում ասված էր. «Ազգային խորհուրդը ցանկալի է համարում կազմել Հայաստանի զանազան վայրերում երկրապահ անջատ գնդեր» (11, թ. 98): Անդրանիկը դրան դեմ է արտահայտվում: Հեռանալով նիստից, նա ասում է. «Պահպանողական, թե ոչ, ձեր բոլոր օձապտույտները ձեզ չեն փրկելու... ոչ ոքի խաբել չեք կարող... Եթե ինձ հայու զավակ կնկատեք, ես վաղը գնում եմ Էրզրում: ...Մենակ եմ գնում իմ ժողովրդի պաշտպանության համար» (11, թ. 101): Բանն այն էր, որ կիսախրատված կամավորական շարժման դասերից, ազգային ջոկերը վախենալով Թուրքիայից, կիսատ-պռատ քայլերի էին դիմում զինված ուժեր կազմակերպելու գործում: Կենսափորձով հարուստ, ամբողջ կյանքը թուրքական լծից հարազատ ժողովրդի ազատագրմանը նվիրած Անդրանիկը անհամեմատ գործնականորեն էր խորհում: Նա ասում էր. «Թուրքերը պիտի գրգռվեն թուրքահայ զորամասի կազմության համար. դրա պատճառը, ձևն ու անունը չեն, այլ էությունը, այն, որ հայերը ուժ են կազմում: Այս պատճառով չարժե հապաղել. ընդհակառակը, որքան արագ կազմակերպենք, այնքան ավելի ապահով կլինենք: Ճիշտ ձեռնարկելով այս գործին՝ մենք ռիսկ ենք անում, բայց դավաճանություն կլիներ մանր մտահոգությունների համար զոհել մեր պատմական դատը» (11, թ. 102): Հիրավի, Ս. Վրացյանը խորհրդում խոստովանում էր, թե «մեկը չգիտի թե ինչ է անում մյուսը. ուստի ժամերով խոսում ենք ապարդյուն: ...Պետք է վերջ տալ այս կոմեդիային» (11, թ. 94):

Հայոց ազգային խորհրդում 1917-ի դեկտեմբերի 31-ին բուռն վեճեր էին ծավալվել Բրեստ-Լիտովսկի հաշտության հարցերի շուրջը: Ոմանք պնդում էին պատվիրակություն ուղարկելու, մյուսները դիտորդներ ուղարկելու վրա: Սոցիալ-դեմոկրատ Ս. Փիրումյանն առաջարկություն է մտցնում պատվիրակությունը կազմել թուրքահայերից և «կապ պահպանել Լենինի հետ» (11, թ. 128): 1918-ի հունվարի 1-ին որոշվում է պատվիրակություն ունենալ Պետրոգրադում, որի նպատակը պետք է լիներ կապ պահպանել խաղաղության բանակցություններ վարող մարմինների հետ: Այդ պահին հայոց քաղաքական կուսակցությունների (դաշնակներ, էսէռներ, ս.-դ.-ներ)

ղեկավար շրջանները այն կարծիքին էին, որ ոչ մի խոսք պետք է լիներ Թուրքիայի հետ սեպարատ հաշտության մասին և այդ պատճառով Բրեստ-Լիտովսկի բանակցություններին ուզում էին մասնակցել դիտորդի մակարդակով: Երիտթուրքերի նպատակներից մեկն էր ունենալ իրենցից կախման մեջ գտնվող Անդրկովկաս և անմիջական սահման չունենալ Ռուսաստանի հետ (11, թ. 155): Երիտթուրքերն ուզում էին հայերին ոչնչացնել նաև Ռուսահայաստանում, գրում է Նանսենը (66, էջ 312):

«Ոչ ոք կրնա ուրանալ թե թուրքը կովկասահայը ևս ջարդել կուզեր: Ոչ ոք կրնա ուրանալ թե թուրքը իր այդ մտադրությունը իրագործած էր Կովկասի սահմաններեն ներս արշավելով» (12, 9. XI. 1919):

Տիրապետող մտայնություն էր այն ճշմարտությունը, որ հայ ժողովրդի բախտը ոչ միայն Ռուսաստանում, այլև Արևմտյան Հայաստանում անքակտելիորեն կապված է Ռուսաստանի ճակատագրի հետ: Սակայն Անդրկովկասն ամբողջապես կտրված էր հյուսիսից: Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի միջև բոլոր ճանապարհների վրա առաջացել էին խցաններ:

1917-ի աշնանը «ոչ մեկի մտքով չէր անցնում (բացի գուցե առավել ազգայնական տարրերից, գլխավորապես վրացիների և թուրքոֆիլ թաթարների շրջանում) ընդմիշտ խզել կապերը Ռուսաստանի հետ»,— գրում է դեպքերին ականատես Գ. Մելիք-Կարակոզովն իր հուշերում (51):

1918-ի իրադարձությունները մեզ մոտ ավելի շատ քննարկվել են ներքին դրության առումով: Մեր կարծիքով մոտեցման հիմքում ամբողջ խորությամբ չի դրվել բուրժական ինտերվենցիան բացահայտելու, դատապարտելու անհրաժեշտությունը:

1918 թվականը ամենաբարդ տարին է իրադարձությունների բազմազանությամբ, քաղաքական իրադրության բարդացմամբ, տարբեր ուժերի բախման ու կոնֆլիկտների առատությամբ: Իրադրությունը հայ ժողովրդի համար այդ տարի փոխվում էր ոչ թե ամիսներով, այլև օրերով, իսկ երբեմն նաև ժամերով: Այս հանգամանքը պատմաբանից պահանջում է նախ և առաջ օբյեկտիվություն ու կուսակցականության ճշմարիտ չափանիշների կիրառում պատմական պրոցեսի իրական պատկերը վերականգնելու և վերապատմելու համար:

Օրինակ, պատմական ճշմարտությունը ոտնահարվում է, երբ գրում են, թե անդրկովկասյան կոմիսարիատն ստեղծել են Անտանտի իմպերիալիստները։ Կամ երբ պնդում են, թե թուրքական և գերմանական զորքերին Անդրկովկասի վրա հարձակման դրդել են անգլիական և ամերիկյան իմպերիալիստները, թե «ստեղծված իրադրության մեջ, ուղղակի զինված ինտերվենցիա կազմակերպելու հնարավորություն չունենալով ԱՄՆ-ը կուրս վերցրին խրախուսելու Անդրկովկասի դեմ գերմանա-թուրքական ագրեսիա կազմակերպելու» (40)։ ԱՄՆ-ի քաղաքականությունը կարելի է և պետք է քննադատել այլ, տեղին առիթներով, բայց ոչ թե 1918-ի թուրքական ներխուժման համար։ *Այդ ներխուժման հեղինակներն ու պատասխանատուները երիտթուրքական ջարդարարներն են և չպետք է նրանց մեղքը մեղմացնել, այն ուրիշի վերագրելով։*

Երիտթուրքերի գործած մեծագույն չարագործություններից մեկը 1918-ի հակասովետական ինտերվենցիան էր Անդրկովկասում։ Այս մասին հսկայական գրականություն է ստեղծված ինչպես Սովետական Միությունում, մասնավորապես Անդրկովկասում, այնպես և աշխարհի տարբեր երկրներում։ Երիտթուրքերի ագրեսիվությունը, ուխտադրժությունը, ժողովրդակործան քաղաքականությունը Անդրկովկասում, 1918-ի գարնան չարագործությունները Հայաստանի ամբողջ տարածքում, Բաքվի զանգվածային մարդասպանությունը, որին զոհ գնաց 30 հազար հայություն, հանրահայտ փաստեր են։

1918-ի դժնի ժամանակաշրջանն ուսումնասիրելիս մեզ մոտ շատ ավելի շեշտը դրվել է բուրժուանացիոնալիստական կուսակցությունների հակասովետական կեցվածքի, նրանց ներհակությունների ու մրցապայքարի վրա, քան թուրքական ագրեսիվ քաղաքականության էության բացահայտման ու մերկացման վրա։

1918-ի փետրվարի 27-ին գաղտնի հրամանով Էնվերը ռազմական մինիստրության անունից հրամայում էր ոչնչացնել ամբողջ հայ ցեղը։ «Թեև գեներալ Վեհիբը հավաստիացնում էր, որ նրա զորքերը թշնամական մտադրություններ չունեին... այդ գործողության իրական նպատակը Անդրկովկասի մեծ մասի վրա թուրքական հսկողության հաստատումն էր»,— գրում է Տրումպեները (71, էջ 94)։ Բրեստում ապահովելով պանթուրքիստական ծրագրի մինիմումը, երիտթուրքական կառավարությունը շարունակեց ճնշում գործա-

դրել Անդրկովկասի վրա, պահանջելով նրանից անջատվել Ռուսաստանից, իսկ հետո վերջնագրով տարանջատելու էր Անդրկովկասը՝ բաժանիր, որ տիրես սկզբունքով իր տիրապետությունը երկրամասում հաստատելու համար։ «Այդ ահեղ վտանգի և իրավաբանական խորամանկ խաղերի դեմ հանդիման, պետք է խոստովանել,— գրում է դեպքերին քաջատեղյակ Գ. Մելիք-Կարակոզովը,— Անդրկովկասյան սեյմը (առաջին անգամ գումարված 1918-ի փետրվարի 10-ին) և ազգային խորհուրդները խղճուկ պատկեր էին ներկայացնում։ Խճճվելով ու սայթաքելով ամեն քայլում, դողալով մոտեցող վտանգից... Անդրկովկասյան կառավարությունը չկարողացավ կազմակերպել երկրամասի պաշտպանությունը, չնայած ռուսական բանակի թողած զգալի զինամթերքներին և, ինչպես հետո պարզվեց, թուրքական զինված ուժերի չնչինությանը» (51)։

1918-ի փետրվարի 5-ին գեներալ Նազարբեկովը գանգատվում էր, որ Կարինում գտնվող առաջին գնդի կազմում միայն 500 մարդ կա, չորրորդ գնդում միայն 300 հոգի, իսկ Խնուսի երկրորդ գունդը վերջնագիր է տվել, թե դառնալու է Կովկաս մինչև փետրվարի 15-ը։ Նա ասում էր, որ ուղարկված համալրումներից «ոչ մի մարդ տեղ չի հասել» (11, թ. 147)։

Փետրվարի 8-ին արդեն նոր կացություն էր։ Թուրքական զորքն առաջ էր շարժվում «միմիայն նրա համար, որ... մենք զորք չունենք ճակատում։ Եթե մենք դիմադրեինք խուճապ չէր լինի»,— եզրակացնում էր Հայոց ազգային խորհրդում նախագահողը (11, թ. 149)։

Ազգային խորհրդի փետրվարի 12-ի նիստում անհիմն լավատեսի դերում էր դաշնակ Ռ. Տեր-Մինասյանը։ Նա հորդորում էր. «Այս րոպեին մեր ուժերով թուրքերին հավասար ենք։ Հարց է նույնիսկ, թե ո՞վ շատ ուժ ունի, մենք, թե նրանք։ ... Մենք դեռ հաղթված չենք։ Անդրկովկասի բախտը հայերի ձեռքին է. մենք դեռ հաղթողի դերի մեջ ենք» (11, թ. 149)։ 1918-ի մարտի 30-ին Ազգային խորհրդի նիստում Արշ. Զուրաբյանը հայտարարում էր. «Թուրքերի պահանջը՝ անկախություն հայտարարել, մի միջոց է մեզ Ռուսաստանից անջատելու և մենակ թողնելու» (11, թ. 174)։

Ս.-դ. Փիրումյանը առաջարկում էր կռիվը շարունակել Թուրքիայի դեմ, բայց բոլշևիկյան Ռուսաստանի հետ դաշնակցած (11, թ. 174)։

1917—1918 թթ. ռուսական զորքերի հեռացումով առավել անհանգստացած էին հայ հասարակական-քաղաքական ուժերը։ Առանց Ռուսաստանի նրանց չափազանց անհեռանկար էր ներկայանում վաղվա օրը։ Սա էր պատճառը, որ նրանց ղեկավարներն անհամեմատ շատ էին խոսում Անդրկովկասի համախմբվածության, արտաքին հարձակումից երկրամասը պաշտպանելու համատեղ ջանքերի գործադրման մասին։ Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից ստեղծում էր անելանելի վիճակ։ Վրաց մենշևիկները ճկունորեն մանևրում էին գերմանական հովանավորության ու թուրքական ճնշման միջև՝ պահպանելով Վրաստանի տերիտորիալ անձեռնմխելիությունը։ Ադրբեջանական հողատեր բեկական ու խանական վերնախավն աղոթում էր Թուրքիայի գալստյան համար։ Իսկ հայկական միջավայրում շարունակվում էր անորոշ ընթացքը, սակայն միշտ գիտակցելով, որ առանց Ռուսաստանի ամեն ինչ վատ է լինելու։

Ճակատը չկարողանալով պահել միայն հայոց ազգային խորհրդի կազմած զորամասերով, սեյմն ուզում էր թուրքերի հետ զինադադար կնքել Անդրկովկասի հանրապետության անունից, որը ձևականորեն շարունակում էր մնալ համառուսաստանյան պետության կազմում։ Երիտթուրքական ինտերվենտների համար որքան հաջող էին զարգանում իրադարձությունները կովկասյան ճակատում (ավելի շուտ նրանք առաջ էին շարժվում համարյա դիմադրության չհանդիպելով), «այնքան ավելի էր բացահայտվում Անդրկովկասյան սեյմի ու կառավարության իշխանության նոմինալ բնույթը», ակընբախ էր դառնում անդրկովկասյան ժողովուրդների բուրժուական վերնախավերի ազգային-քաղաքական կողմնորոշումների հակասականությունը։ «Անդրկովկասյան թաթարներն առանց երկընտրանքի ծարավի էին թուրքերի գալստյան, վրացիները տատանվում էին՝ ընտրություն կատարելով դիվանագիտության և պատերազմի միջև, իսկ հայերը իմանալով, որ հաշտեցում և խաղաղություն չի կարող լինել իրենց և թուրքերի միջև այն ամենից հետո, որ տեղի էր ունեցել

հայերի հետ Թուրքիայում, գտնվում էին տենդագին զգացման մեջ իրենց լրիվ միայնակության ու մահացու վտանգի գիտակցումից» (51, էջ 7)։

Եվ աշխարհագրական, և քաղաքական տեսակետից հայերը պետք է իրենց վրա վերցնեին հարձակվող թշնամու առաջին հարվածը, և նրանց համար դա կյանքի ու մահվան հարց էր։ Դիվանագիտությո՞ւն, թե՞ պատերազմ. վրաց մենշևիկները նախընտրում էին առաջինը։

Երկրամասի ազգային խորհուրդներում շատերը խոսքով դատապարտում էին սեպարատիստական տենդենցները, կոչ էին անում միասնականություն ընդդեմ թուրքական վտանգի, բայց գործով ամեն ինչ հակառակն էր տանում։ «Նեղ ազգային կրքերը կատարում էին իրենց քայքայիչ գործը, խարխլելով անդրկովկասյան պետական իշխանությունը» (51, էջ 8)։ Գ. Ղարաջյանը (Արկոմեդ) գրում է, որ սեյմը որպես բարձրագույն օրգան համարյա գոյություն չուներ։ Ընդհանուր անդրկովկասյան հիմնարկները կախված էին օդում և ոչ մի իշխանություն չունեին (38, էջ 65)։

Թուրքական զորքերը առաջանում էին Անդրկովկաս, քայլ առ քայլ ամրանալով նոր դիրքերում։ Նրանց հրամանատարները կեղծավոր առաջարկություններ էին անում անդրկովկասյան իշխանությանը հաշտության ու խաղաղության կնքելու մասին։ Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բուշեն 1918-ի մարտի 17-ին հաղորդում էր, որ թուրքական «բոլոր ազդեցիկ շրջաններն այս վայրկյանիս ուղղակի արբեցած են հաղթության գիտակցությամբ, ազգայնամոլությամբ և համիսլամությամբ»։ Հ. Տաշեանը գրում է, որ «այդպիսի ոգի մը պիտի չանձկեր դյուրավ, մանավանդ, երբ ռուս բանակները քաշված էին հայ հողեն...» (36, էջ 37)։

1918-ի սկզբի թուրքական հարձակումը տեղահանեց Թուրքահայաստանի 150 հազար հայությանը։ 1918-ի մարտի 14-ին Վանի ներկայացուցիչ Հովհաննիսյանը հետևյալ կերպ էր նկարագրում ստեղծված ծանր դրությունը. «Վանը կտրված է, մի ռազմական գոյություն ունի, բայց մասնագետի բացակայության պատճառով անգործության է մատնված։ Տեղացիներից կարելի է հավաքել մոտ 2000 հոգի, բայց զենք չկա... երկու թնդանոթ կա, բայց մարդ չկա։ Հեռախոս-

ների, հեռագրերի համար մարդիկ չկան...» (11, թ. 168)։ Թուրքական զինված ուժերը 1918-ի հունվար-ապրիլին գրավեցին Երզնկան, Բայբուրթը (Բաբերդ), Մամախաթունը, Էրզրումը, Կարսը և այլն։ Չնայած այն բանին, որ Անդրկովկասյան սեյմի կառավարությունն ապրիլի 1-ին, այնուամենայնիվ, թեև ուշացած, ընդունեց Բրեստ-Լիտովսկի պայմանները, Թուրքիան, ի խախտումն այդ պայմանների, ոչ միայն գրավեց Կարսը, այլև Ալեքսանդրապոլը և մխրճվեց Անդրկովկասի խորքը։

Էնվեր-Թալեաթ երիտթուրքական կլիկը ոչ մի միտք չուներ հարգելու միջազգային իրավունքը, իր իսկ կնքած զինադադարի պայմանները, ըմբռնելու Սովետական Ռուսաստանի հռչակած՝ ժողովուրդների եղբայրության, խաղաղության և նոր հասարակարգի կառուցման սկզբունքները։ Նա ղեկավարվում էր Անդրկովկասը նվաճելու պանթուրքական սկզբունքներով։

Բրեստ-Լիտովսկում Գերմանիան պահանջում էր, որ «Ռուսաստանը իր տրամադրության տակ ունեցած բոլոր միջոցներով պետք է նպաստի ամենակարճ ժամանակամիջոցում ալանաչափ կերպով Թուրքիային վերադարձնելու նրա անատոլիական մարզերը...» (43, էջ 113)։ Սրանք դեռ կոնկրետացված պահանջներ չէին։ Օգտվելով զինադադար կնքելու լենինյան տակտիկայի դեմ Տրոցկու և «ձախ» կոմունիստների հարուցած դժվարություններից, կայզերական Գերմանիան ավելի սանձարձակ պահանջներ առաջադրեց։ «Այն բանից հետո,— գրում է Գ. Վ. Չիչերինը,— երբ մենք ժամանեցինք Բրեստ-Լիտովսկ, մեզ ներկայացվեց էլի մի նոր պայման, որը վատացնում էր առաջվա վերջնագիրը, այն է՝ Ռուսաստանից Կարսը, Բաթումը և Արդահանը անջատելու պահանջը։ Միաժամանակ մեզ հայտնեցին, որ դա հակառակ կողմի մինիմալ պահանջն է» (60, էջ 20)։

Բրեստ-Լիտովսկի բանակցությունների մասնակից, սովետական դիվանագետ Ա. Ա. Իոֆֆեն գրել է, թե Բուլղարիան և Թուրքիան Բրեստ-Լիտովսկում համարյա ոչ մի դեր չէին խաղում, իսկ մեծ վեզիր Թալեաթ փաշան «փորձում էր նվաճել մեր համակրանքը հաճախակի հիշեցումներով այն մասին, թե ինքը նույնպես հեղափոխական է»։ Իոֆֆեն հիշում

է նաև թուրք մյուս պատվիրակ Հաքքի փաշային, որին գերմանացի Կյուլմանը սովետական պատվիրակներին էր ներկայացրել իբրև բոլոր ժամանակների «Եվրոպայի լավագույն դիվանագետ»։ Սա ուզած պահին իսկական արցունքներով կարող էր լաց լինել՝ նման կինոդերասաններին, հիշում է Իոֆֆեն (46)։ Գերմանական վերջնագիրն ավելի ծանր էր դարձել Կարսը, Արդահանը և Բաթումը Թուրքիային հանձնելու պահանջով (46, էջ 146)։

1918-ի մարտին Բրեստում սովետական պատվիրակությունը բողոք էր հայտնում գերմանական ու թուրքական ներկայացուցիչներին՝ թուրքական բանակի հարձակման, նոր տերիտորիաներ գրավելու առթիվ, առանց հաշվի նստելու այդ «մարզերի բնակչության կամքի հետ» (54, № 43. 7. 3. 1918)։ Բրեստի պայմանագրի (կնքված 1918 թ. մարտի 3-ին) 4-րդ հոդվածով Արդահանի, Կարսի և Բաթումի շրջաններում բնակչությունը նոր իրավակարգ էր ստեղծելու հարևան պետությունների, «հատկապես Թուրքիայի համաձայնությամբ», թեև սովետական ներկայացուցիչները (1918 թ. փետրվարի 21-ին) բողոքեցին Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերը հօգուտ Թուրքիայի Ռուսաստանից անջատելու դեմ (52)։ Սովետական կառավարության պահանջը մերժվեց և նա ստիպված էր կնքել «անասելի ծանր, բռնակալական և ստորացուցիչ հաշտություն», որը փաթաթեցին «մեր վզին բացահայտ ուլտիմատումով և անողոք բռնությամբ» (1, հ. 27, էջ 233)։

Այսպիսով, Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածով ռուսական բանակը պետք է ազատեր Արևմտյան Հայաստանի գրավված տերիտորիաները։ Կարսի և Արդահանի մարզերում պետք է անցկացվեր հանրաքվե, իսկ Արևմտյան Հայաստանի հողերը Թուրքիան սեփականացնում էր, անտեսելով հայ ժողովրդի իրավունքները։ Երիտթուրքական կառավարությունը չէր ճանաչում «Թուրքահայաստանի մասին» դեկրետի դրույթները, շարունակելով իր որդեգրած հակահայկական ուղեգիծը։

Բոլշևիկները բացատրում էին, որ թուրքերի «անզուսպ ցանկությունն է՝ հաջողությամբ պսակված տեսնել բեգական գերիշխանությունը Անդրկովկասում», որ նրանք «հուր ու

կրակի, սուր ու թրի տալով» Հայաստանը, ձգտում են «թիկունքից հարձակվել սոցիալիստական Ռուսաստանի վրա»։ Ընդգծելով, որ «տաճկական իմպերիալիզմի դեմ մեր կռիվը նույն կռիվն է», որ մղվում է բեգական-ազնվականական բուրժուական հակահեղափոխության դեմ, նրանք բոլոր հեղափոխական ուժերի «սրբազան պարտականությունը» համարում էին «ամենահամառ կերպով պաշտպանել սոցիալիստական Ռուսաստանի թիկունքը» (9, № 5, 6, 7, 1918)։

Խճճված հակասությունների մեջ, ավելի գրգռելով ազգամիջյան երկպառակությունները Անդրկովկասյան սեյմը, ազգային խորհուրդներն անկարող գտնվեցին դիմագրավելու թուրքական ագրեսիային։ Չկար կազմակերպված բանակ, միասնական հրամանատարություն, տարրական կարգապահություն։ Վրաց մենշևիկները կապի մեջ էին գերմանացիների հետ, «Վիլհելմի պրոտեկտորատ» (33, էջ 200) էին ուզում։ Ադրբեջանական մուսավաթն ու բեգական-խանական վերնախավը՝ երիտթուրքերի հետ, «գյուղացիներին իրենց ենթարկելու համար օգնության էին կանչում Թուրքիային» (33, էջ 210)։ Իսկ դաշնակցության վերնախավն ընդունելով հակասովետական դիրքորոշում, ընթացավ իսկական դավաճանության ուղիով։ «Իրենց սոցիալիստ անվանող մենշևիկները փոխանակ իրենց բեգերի դեմ ապստամբած մուսուլման գյուղացիների հետ կապվելու, գործարքի մեջ մտան հենց այդ բեգերի հետ, զինեցին ու ուժեղացրին նրանց և նրանց հետ միասին դավաճանեցին ու Անդրկովկասը վաճառեցին թուրք փաշաներին։ Ռուսաստանից Անդրկովկասն անջատելու խայտառակ ակտին մասնակցեցին նաև դաշնակցականները...»,— ասվում էր Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետի 1918-ի հունիսի 1-ի կոչում։ Անդրկովկասը նվաճելու ռազմական գործի գլուխ կարգվել էր մոլեռանդ պանթուրքիստ Վեհիբ փաշան (70, թ. 40)։

1918-ի ապրիլի 13-ին Գ. Չիչերինը և Լ. Կարախանը հեռագրում էին Թիֆլիսում գերմանական հյուպատոսին, պահանջելով, որ Գերմանիան կանխեր թուրքական արշավանքը Հայաստան։ Հեռագրում ասված էր. «Թուրքական բանակն առաջ է շարժվում դեպի Բաթում, Կարս, Արդահան, ավերելով երկիրը և ոչնչացնելով գյուղացիական բնակչությանը։

Հայերի հետագա ճակատագրի համար պատասխանատվությունն ընկնում է Գերմանիայի վրա, որովհետև նրա պահանջով էլ հենց ռուսական զորքերը դուրս բերվեցին հայկական մարզերից և այժմ Գերմանիայից է կախված թուրքական բանակի ետ պահումը վրեժի և չարության հողի վրա ծագող ավերական էքսցեսներից։ Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ մի այնպիսի կուլտուրական պետություն, ինչպիսին Գերմանիան է, որը հնարավորություն ունի ազդելու իր դաշնակից Թուրքիայի վրա, թույլ կտա, որ կամքից անկախ այս համաշխարհային պատերազմի մեջ քաշված հայ ժողովրդի համար Բրեստի հաշտության պայմանագիրը ծառայի անթիվ թշվառությունների աղբյուր» (10, էջ 433)։

Արխիվային վավերագրերը մեզ պատմում են այն հրեշավոր չարագործությունների մասին, որ գործում էին երիտթուրքական բանակի հրամանատարները հայ գերիների նկատմամբ։ Էրզրում բերված 4000 հայ գերիների մեծամասնությունը կոտորվեց։ Որոշ կայարաններում գերիներին դիմավորում էին դանակներով, դագանակներով ու քարերով զինված թուրք կանայք, որոնք հարձակվում էին անզեն, հյուծված գերիների վրա և «վրեժ» լուծում «անցյալի» համար (13, թ. 61)։

1918-ի ապրիլի 6(19)-ից մինչև 8(21)-ը Ալեքսանդրապոլում կառավարության անդամների, կուսակցությունների ղեկավարների խորհրդակցությունում քննարկվում էին Անդրկովկասյան սեյմի, Բրեստի հաշտության, երկրամասի պաշտպանության և այլ հարցեր։ Գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկին ճակատում տիրող դրության մասին տված հաղորդման մեջ, (7(20) ապրիլի), ասում էր. «Կարսը բավարար չափով պաշտպանված է և կարող է ցույց տալ դիմադրություն» (31, թ. 6)։ Թշնամու զորքի թիվը նա հաշվում էր 3—4 հազար զինվոր։ Գեներալ Նազարբեկովը հայտարարում էր, որ ամբողջ ճակատում ունեին 6 հազար զինվոր։ Նա բողոքում էր մատակարարումից և գտնում էր, որ «մենք մենակ դիմադրել չենք կարող թշնամուն» (31, թ. 6)։ Խորհրդակցությունում Արշ. Ջուրաբյանը կոչ էր անում հավատ չընծայել խարդախ երիտթուրքերին։ Նա ասում էր. «Ինչո՞վ կարելի է երաշխավորել, որ Թուրքիան կբավականանա 1877 թվականի

սահմաններով և ավելի առաջ չի գա։ Թշնամու առաջխաղացումն ինքնին ապացույց է, որ նրանք չեն հարգի դաշնագիրը (Բրեստ-Լիտովսկի պայմանագրի մասին է խոսքը—Զ. Կ.)։ ... Ոչ ոք չի կարող տալ երաշխիք, որ թշնամին առաջ չի գա և մեզ չի կոտորի, հավատալ Թուրքիո խոստումներին—դա վտանգավոր ավանտյուրա է։ ... Տաճկաստանի նպատակն է բաժանել մեզ Ռուսաստանից և ենթարկել իրեն։ Բայց մենք կարո՞ղ ենք թողնել Ռուսաստանը, հյուսիսի օրհնությունը, կարո՞ղ ենք դադարել մեր աչքերը դեպի հյուսիս հառելուց» (31, թ. 11—12)։ Լևոն Սարգսյանը նույն խորհրդակցությունում չէր ժխտում, որ «ժողովուրդը բնավ չի ուզում Ռուսաստանից բաժանվել» (31, թ. 17)։ Արշ. Զուրաբյանը չէր ընդունում Անդրկովկասի անկախությունը և հերթական խնդիրը համարում էր «ամրապնդել կապերը ռուսական ֆեդերատիվ հանրապետության հետ»։ Բայց նա, իհարկե, դատապարտում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որը «հաստատում էր Բաթումի, Կարսի և Արդահանի շրջանների անջատումը», «Թուրքիայի առաջ բացում էր ավելի հեշտ եղանակներ և ուղիներ տիրանալու ամբողջ Անդրկովկասին ու բնաջնջելու ժողովուրդներին, մասնավորապես հայերին» (31, թ. 18)։

Երիտթուրքերը հայոց քաղաքական ղեկավարներին հորդորում էին իրենց հետ դաշն կապել ընդդեմ Սովետական Ռուսաստանի։ «Մենք կօգնենք Ձեզ սեփական պետություն կազմելու, մեր շահն է հանդես գալ ընդդեմ Ռուսաստանի»։ Այս նպատակով «ընդդեմ բոլշևիկների» կռվելու համար թուրքերը խոստանում էին զինված օգնություն։ Այնուհետև նրանք զգուշացնում էին. «Մենք մեր պատմական կոչումը պիտի կատարենք։ Եթե այժմ հայերը մեզ ստիպեն, որ Կովկասը կռվի մեր դեմ, այն ժամանակ կլինենք անողոք» (31, թ. 8)։ Ասվել էր այն մասին, որ հայերը միջազգային կոնֆերանսի վրա հույս չպետք է դնեին, քանի որ կասկածում էին, թե հայ մնալո՞ւ էր կոնֆերանսի համար (31, թ. 9)։

Ստ. Շահումյանը ցույց էր տալիս, որ «թուրքական կայսրությունը օգտվեց Անդրկովկասյան սեյմի դավաճանական, դուռ պրովոկացիոն գործունեությունից» (33, էջ 290)։ Նա ցույց էր տալիս, որ միայն հայոց զինված ուժը բավարար էր թուրքական հրոսակների առաջն առնելու համար, միայն

թե լիներ որոշակի կազմակերպվածություն։ Նացիոնալիստները «խայտառակ կերպով դավաճանեցին» հայ զանգվածներին։ Նա մեղադրում էր դաշնակցության վերնախավին, որի ձեռքին կար մոտ 30 000 հայ ճակատային զինվոր։ Այդ ուժով հրաշքներ կարելի էր գործել» (33, էջ 224)։ Մինչդեռ «դաշնակցության կուսակցության տվյալների համաձայն ամբողջ ռազմաճակատում, սկսած Սև ծովից մինչև Պարսկաստան, թուրքերն ունեն 18—20 հազար հոգնած, կազմալուծված զորք» (33, էջ 276)։ «Թուրքական տիրակալությունը կալվածատերերի հաղթանակն է և կործանում՝ ամբողջ Անդրկովկասի գյուղացիների ու բանվորների համար» (33, էջ 244)։ Ստ. Շահումյանը զգուշացնում էր «բեգական հակահեղափոխությունից», որին պաշտպանում էին Ժորդանիան, Գեգեչկորին, Չխենկելին, սրանց մեղադրում «հանցավոր խաղի» մեջ (33, էջ 244)։

Անդրկովկասյան կոմիսարիատը Թուրքիային պատերազմ հայտարարեց միայն 1918-ի մարտի 1-ին, թեև ռազմաճակատում պատերազմական գործողությունները ոչ մի օր չէին դադարել։ Այնուհետև, սեյմն ինքնուրույն բանակցությունների մեջ մտավ թուրքերի հետ Տրապիզոնում։ Ճանաչելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը (Ռուսաստանի և Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Բուլղարիայի միջև), որը հոդվածներ էր պարունակում Անդրկովկասի վերաբերյալ, սեյմն անհրաժեշտ էր համարում խաղաղության հարցը Թուրքիայի և Անդրկովկասի միջև դարձնել հատուկ քննարկման առարկա։

Ապրիլի 1-ին, երբ Անդրկովկասի պատվիրակությունը ստիպված էր հայտարարություն անել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ճանաչելու մասին, բանակցությունները խզվեցին և թուրքերը գրավեցին Բաթումը։ Երբ մենշևիկյան կուսակցության վերնախավում հաղթեց թուրքերի հետ ամեն գնով հաշտություն հաստատելու գիծը, անդրկովկասյան կառավարության նոր նախագահ Չխենկելին «իր իշխանությամբ» (58, թ. 5) Կարսը հանձնեց թուրքերին և նրանց հետ բանակցություններ սկսեց խաղաղության շուրջը։ Սովետական կառավարությունը դատապարտում էր Կարսի, Բաթումի և Արդահանի նահանգների օկուպացիան երիտթուրքական զավթիչների կողմից,

«Որտեղ նրանք սկսեցին ամենավայրագ ձևով դատաստան տեսնել տեղի բնակիչների հետ» (10, էջ 443)։ Տրապիզոնի բանակցությունների ժամանակ օսմանյան պատվիրակները «Հայկական հարցի մասին լսել անգամ չէին ուզում, համարելով այդ իրենց ներքին գործը»։ Թուրք ագրեսորներն արհամարհում էին «Թուրքահայաստանի մասին» դեկրետը։ Օսմանյան պատվիրակները պնդում էին Բրեստ-Լիտովսկի հաշտության համաձայնագիրն անհապաղ ընդունելու վրա, այլապես Անդրկովկասը դիտելու էին որպես Սովետական Ռուսաստանի և իրենց դեմ ապստամբած երկրամաս։ Թուրք պատվիրակներ Ռեուֆ բեյը, Նիազի բեյը, Խյուսրև բեյը, պրոֆ. Համդի բեյը խոստումներ էին տալիս, հայերին Թուրքիա վերադարձնելու (300 հազար Կովկասից, 30 հազար Միջագետքից) մասին էին շաղակրատում։ Միաժամանակ սպառնում էին. «Դուք միշտ հակված եք դեպի ռուսները և դրա համար պետք է ջնջենք հայերին. եթե դուք՝ հայերդ, կրկին շարունակեք Ռուսաստանի կամ Անգլիայի օգնության դիմել, մենք չենք երաշխավորի և մնացած հայերի ապահովությունը» (55, թ. 178)։

Տրապիզոնի կոնֆերանսում թուրք պատվիրակները շատ բացորոշ էին արտահայտվում երիտթուրքական պարագլուխների հետապնդած նպատակների, նրանց պանթուրքիստական ծրագրերի մասին։ Տարբեր առիթներով նրանք ասում էին, որ իրենք «նացիոնալիստներ» են, «իմպերիալիստներ» և ուզում են իրենց ազդեցությունը տարածել Ղրիմում, Կովկասում։ «Եթե չեք ուզում ընդունել մեր պայմանները, մենք կգանք և կթելադրենք մեր պահանջները և նույնիսկ ռազմատուգանք կգնենք մեր ծախսերը ծածկելու համար» (11, թ. 178)։ Ռեուֆ բեյը հեգնանքով ասել էր Հովհ. Քաջազնունուն. «Մենք ինչպես չվախենանք ձեզնից, հայերից։ Թուրքիայում այլևս ոչ մի հայ չկա, իսկ դուք դեռ պլաններ եք քաշում Թուրքահայաստանի մասին» (51, էջ 25)։

Անդրկովկասի պատվիրակությունը Տրապիզոնում թուրքական պատվիրակության հետ գումարեց վեց նիստ, իսկ առանց նրա՝ 46 նիստ։ Հայերից մասնակցում էին Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին։ Որպես խորհրդական մասնակցում էր նաև Լեոն։ 1918-ի ապրիլի 5-ին Հայոց ազգային

խորհրդի նիստում բանակցությունների ընթացքի, արդյունքների մասին զեկուցելիս Ալ. Խատիսյանը, մասնավորապես, ասում էր. «Օսմանցիք հայկական հարցի մասին լսել անգամ չէին ուզում, համարելով այդ իրենց ներքին գործը» (11, թ. 178)։

Հաշտության բանակցությունների երկրորդ շրջանը Տրապիզոնում սկսվեց թուրքական վերջնագրի ժամկետի լրանալուց հետո։ Տրված էր 48 ժամ։ Ռազմական դրության անհուսալիություն, խուճապ ու անկումայնություն, սեյմի իրարամերժ հրահանգները դրությունը դարձրին է՛լ ավելի կրիտիկական։ Տրապիզոնում անդրկովկասյան պատվիրակությունն ընդունեց թուրքական վերջնագրի պայմանները, որոնց հիմքում դրված էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պահանջները։ Թիֆլիսից հեռագրով հրահանգ էին տվել հանձնել Կարսն ու Կաղզվանը։ Թեև Ժորդանիան և Ծերեթելին հեռագրով պահանջել էին Բաթումը չզիջել, բայց Բաթումն առանց կռվի հանձնվեց թուրքերին։ Իսկ սեյմը չորս օր ուշացրեց պաշտոնական պատասխանը թուրքերին և վերջն էլ մերժեց վերջնագիրը։

Տրապիզոնի բանակցությունները մի անգամ ևս ցուցադրեցին թուրքական քաղաքականության ողջ նողկալիությունը։ Նենգապաշտություն, շողոքորթություն՝ դիվանագիտության բնագավառում, ուխտադրժություն, արյունարբու դաժանություն ռազմական ասպարեզում՝ ահա թուրքական գործելակերպի ընդհանուր պատկերը։

Սկսվեց Անդրկովկասի տարբեր ուժերի, քաղաքական կուսակցությունների միջև առկա հակասությունների էլ ավելի խորացման, բախումների շրջանը։ Սոցիալ-դեմոկրատների մի մասը, ֆեդերալիստները, մուսավաթականները, հումմեթը, սոցիալիստական բլոկը հանդես եկան բանակցությունները վերսկսելու օգտին, իսկ դաշնակցությունը, համենայն դեպս խոսքով, դեմ արտահայտվեց։ Վերջապես որոշվեց այդ խնդիրը քննարկել Ալեքսանդրապոլում գումարվելիք բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների համաժողովում։ Թուրքերի կազմած պայմանագրի նախագծի 4-րդ հոդվածով Անդրկովկասի անկախությունը չհայտարարելու դեպքում օկուպացիայի տակ գտնվող ազգաբնակչության

նկատմամբ իրավունքը անցնում էր թուրքական իշխանություններին։ Զինված ուժերը զինաթափվելու և լուծարքի էին ենթարկվելու։ Հարցն այսպես էր դրվում. կամ Ռուսաստանից անջատվել և հետո բանակցությունների մեջ մտնել Թուրքական կառավարության հետ, կամ ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանները։ Բնական է, որ վերջին դեպքում գիշատիչ թուրքական իմպերիալիզմը չէր հարգելու Անդրկովկասի աշխատավորության շահերը։ Լեոն այդ նույն նիստում խոստովանում էր, որ օսմանցիք ուղղակի խաղ էին անում իրենց հետ։ Նա ասում էր, որ նույնիսկ ձեռքի տակ չունեին, չգիտեին Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որ թուրքերն իրենց հետ խոսում էին իբրև հաղթողներ, իրենց կտրել էին արտաքին աշխարհից, հայկական հարցի մասին լսել անգամ չէին ուզում և այլն (11, թ. 179)։

Այդ պահին (1918 թ. ապրիլի 12-ին) շատերն էին արտահայտվում ընդդեմ անկախության։ «Թուրքը գալու է և փրկություն չկա նրանից։ Դեռ ուշ չէ, պետք է սեյմը ցրել և հարել բոլշևիկյան իշխանության. մեր ժողովրդի համակրանքը նրա կողմն է...»,— ասում էին ոմանք (11, թ. 181)։ Արտակ Ստամբոլցյանը գտնում էր, որ փրկությունը սովետների իշխանություն հաստատելու մեջ էր, Ռուսաստանի հետ դաշինք կապելու մեջ (11, թ. 182)։ Նույնիսկ ընդունվում է մի բանաձև, որտեղ դատապարտվում էր սեյմը, որն իրավունք չուներ ոտնահարել ժողովուրդների իրավունքը՝ անկախություն հայտարարելով։ Բանաձևում ասվում էր, որ անկախության ակտը կարելի էր հրատարակել միայն Անդրկովկասի ժողովուրդների հանրաքվեի միջոցով (11, թ. 183)։

«Ազգային խորհուրդը,— ասված էր բանաձևում,— բողոքում է այդ ձևով կատարված ակտի համար, թողնելով դրա ամբողջ պատասխանատվությունը սեյմի վրա» (11, թ. 183)։ Ձևի տեսակետից կարծես թե սա ճիշտ դիրքորոշում էր, բայց գործնականում սեյմը շարունակելու էր հակասովետական ընթացքը, քանի որ փաստացի իշխանությունը մնում էր այնտեղ խմբված մենշևիկների և մուսավաթականների ձեռքին։ Դաշնակները և հայ մյուս քաղաքական ուղղությունների մարդիկ գլխիկոր ընթացան նրա ետևից։ Այդ ընթացքը մի պահ շեղվեց Սարդարապատի ժողովրդական դիմադրության շնոր-

հիվ, բայց նորից շարունակվեց 1918-ի հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագրի բովանդակությամբ և հետևանքներով։

1918-ի մայիսի 7-ին Ազգային խորհրդում միտքը պտտվում էր այն խնդրի շուրջը, որ եթե Ազգային խորհուրդը մնար Ալեքսանդրոպոլում և կազմակերպեր նրա պաշտպանությունը, թուրքերը չէին մտնի այդ քաղաքը (11, թ. 194)։ Խոսում էին այն մասին, որ զինվորական գործի գլուխ էին կանգնած «հին բյուրոկրատ, հասարակական ցիղ չունեցող զինվորականներ և ծառայությունից խուսափողներ», որ զենքերը վաճառում էին, դասալքությունը բուն էր դրել ամենուրեք, որ «հարուստների տղաները պրոտեկցիայի շնորհիվ ետ էին կանչվում պահեստի գնդերից գրագետի անվան տակ» և այլն (11, թ. 198)։ Ոմանք գտնում էին, որ գեներալ Նազարբեկովը «միանգամայն անհարմար է այդ բարձր և պատասխանատու պաշտոնի համար. հուսահատ, գործի հաջողությանը չհավատացող և խուճապի ենթակա մարդուն թողնել այդ պաշտոնում՝ հանցագործություն է» (11, թ. 199)։

Մայիսի 15-ին թուրքական հրամանատարությունն անընթեռնելի մի վերջնագիր ներկայացրեց Ալեքսանդրապոլի ամրոցի պարետին։ Թուրք սպան անհապաղ պատասխան էր պահանջում։ Մինչև պարետը կգար մոտակա թուրքական պահակակետ թուղթը թարգմանել տալու (այն վերջնագիր էր Ալեքսանդրապոլը, Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագիծը թուրքերին հանձնելու և այլնի մասին), թուրքական զորամասերն անցան սահմանը, իսկ հրետանին սկսեց ռմբակոծել քաղաքի բնակելի տները (21, թ. 49—50)։

Մայիսի 15-ին Ազգային խորհուրդն արտակարգ նիստ էր գումարել։ Ալեքսանդրապոլը ռմբակոծված էր։ Թուրքերը պահանջում էին այդ քաղաքը, Երևանը, Էջմիածինը, Ախալքալաքը, դեպի Ջուլֆա երկաթուղային գիծը հանձնել իրենց։ Պահանջում էին աղոթելիս հիշել սուլթանի անունը (55, թ. 207)։

Թվում էր, թե երիտթուրքական ջարդարարներին հաջողվելու էր իրականացնել Ռուսահայաստանը նույնպես ոչնչացնելու իրենց մարդակերական ծրագիրը։ Գաղթելու տեղ այլևս չէր մնացել։ Թուրքական զորքերի մի մասը շարժվեց Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա գծով, մյուսը դեպի Երևան։ Սա-

կայն Ղարաքիլիսայի, Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերում թուրքական զինված ուժերը պարտություն մատնվեցին։ «Հանուն հայ ժողովրդի գոյատևության ու ազատության, հերոսաբար դիմագրելով թուրք զավթիչներին,— գրել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը,— Սարդարապատի մարտիկները փաստորեն պատերազմում էին այն ուժերի դեմ, որոնք պատրաստվում էին հայ ժողովրդի կրծքավանդակի վրայով նետվել Անդրկովկաս՝ նպատակ ունենալով արյան մեջ խեղդել Բաքվի կոմունան, տիրանալով նաև Բաքվի նավթին, որի կարիքն օդի ու ջրի պես զգում էր թուրք-գերմանական կոալիցիան» (7, էջ 7, առաջաբան)։

Որտեղ դիպավ թուրք ասկյարի ոտքը, որտեղով անցան երիտթուրք սպաների վաշտերը, այնտեղ հորդառատ արյուն հոսեց։ «Ղարաքիլիսան և իր շրջակա յոթ գյուղերը՝ Ղշլաղ, Հաջի—Ղարա, Դարբաս, Բղովղալ, Սարմուսախլի, Եղաբլի, Վարդանլի փոխվեցին մի ահռելի հեկատոմբի, ուր կատարվեց մեծ եղեռնի վերջին արարը» (32, էջ 28)։ Մի քանի օրվա ընթացքում ավերակների կույտի վերածվեցին Փամբակի շրջանը, Ղարաքիլիսա գյուղաքաղաքը։ Մարդկանց խումբ-խումբ գնդակահարեցին քաղաքի շրջակայքում։ Կանանց ու աղջիկներին բռնաբարեցին։

Երիտթուրք Ջավիդ բեյը բանվորահավաք հայտարարեց, հետո հավաքվածներին կապկպեցին, քշեցին Մայմեխի, Աջաուրթի և Ալթունթախտի բարձունքները և գնդակահարեցին։ Տներից թուրքերը կողոպտում, տանում էին ամեն ինչ՝ ամանեղենից սկսած մինչև գրքերն ու սեղանները, անասուններն ու փեթակները։ Այս ամենը բարձում և ուղարկում էին Թուրքիա։ Ականատեսը հավաստում է, որ ոչ մի պատահական բան չկար. ամեն ինչ հետևանք էր «թուրք վարիչների կանխորոշված ծրագրի» (32, էջ 101)։

1918-ի հունիսի 29-ին «Le Soleil du midi» թերթը գրել էր. «Բոլոր գլխատված փոքր ազգերից առավել կոտորվածը Հայաստանն է» (65a, էջ 15)։

Տրապիզոնում թուրքական պատվիրակությունը լսել անգամ չէր ուզում հայերի մասին և պատվիրակության նախագահն իր բացման խոսքում հայ անունն անգամ չտվեց և հայ-

սահմաններից՝ ուր հասնի թուրք զինվորը, այնտեղ էլ հայ չի կարող գոյություն ունենալ (25, թ. 1)։ Թիֆլիսում գերմանական ներկայացուցիչը Հայոց ազգային խորհրդի նախագահին փաստաթղթեր էր ցույց տվել, որոնք հաստատում էին, որ թուրքերը վճռել էին հայերին բնաջնջել նաև Կովկասում։ Թուրքական ղեկավարների տրամադրությունը սոսկալի թըշնամական էր հայերի հանդեպ մինչև մայիսի վերջին օրերը, և հանկարծ հեղաշրջում է կատարվում նրանց տրամադրության մեջ։

Կ. Պոլսում 1918-ի հունիսին գերմանական դեսպան Բեռնսդորֆը զարմանք էր հայտնել, թե «Թուրքիան, որ ութ օր առաջ լսել անգամ չէր ուզում Հայաստան ստեղծելու մասին (մանավանդ Էնվեր և Թալեաթ փաշաները), հանկարծ համաձայնություն տվեց...» (ՄԼԻ հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 4047, ց. 260, թ. 2)։ Այս բոլորը կարծես թե պետք է հասկանալի լիներ անգամ ոչ քաղաքագետներին։ Բայց դաշնակցական ղեկավարները միայն շոյվեցին, երբ մայիսի 27-ին Խալիլն ու Վեհիբը իրենց մոտ հրավիրեցին Քաջազնունուն ու Խատիսովին և բարեկամական տոնով խոսեցին։ Խալիլը հաճոյախոսում էր հայերի հասցեին, Խատիսովին խնդրում հաղորդել Հայոց ազգային խորհրդին, թե թուրքերը դեմ չեն Կովկասի սահմաններում «Հայաստան կազմելուն»։ Իսկ Վեհիբն ավելացնում էր. «Հայ զորքը հիանալի է կռվել... Ըստ Շեքի փաշայի տեղեկության՝ նա նման կռիվ չի տեսել ռազմական ոչ մեկ զորաճակատում, չնայած մեր ուժերին (10 հազար կանոնավոր զորք, չհաշված կամավոր հրոսակներին, իսկ հայերը՝ 7000) ու տեխնիկական առավելություններին, կռիվը 4 օր տևեց։ Այդ կռիվը զանազան խորհրդածությունների նյութ է դառնում, որ Կովկասում դուք բռնելու եք Բուլղարիայի տեղը» (25, թ. 2)։ Նա առաջարկում է հայերի հետ պայմանագիր կնքել։

Ֆրանսիական մի թերթ 1918-ի հունիսի 29-ին գրում էր. «Արյունաքամ Հայաստանը, շրջապատված, առանց հացի, առանց օգնության, առանց հույսի Հայաստանը սրբազան ճիչ է արձակում. «Վեր կացեք մեռածներ»։ Եվ նա ոտքի է կանգնում թուրքի դեմ։ Նա կտրում է նրա ճանապարհը, նա կռվում է, նա նրան պարտություն է մատնում Պարսկաստա-

նի և Միջագետքի ճանապարհների վրա. նա հաղթականորեն դիմադրում է Վանում, Կարսում, Բաքվում կատաղի բորենուն» (65ա, էջ 17)։

Հայերը «մի բուռ առյուծներ էին թուրքական բորենիների դեմ»։ Ֆրանսիական թերթը գրում էր, թե ընդհանուր կարծիքն այն էր, որ հայերին պետք է միայն ողբալ։ Բայց պարզվեց, որ նրանցով պետք է հիանալ (65ա, էջ 18)։

Վեհիբը լռում էր թուրքական զորքի պարտության ու փախուստի մասին։ Իսկ հայ «դիվանագետները» չէին զարմանում, թե ի՞նչ փոփոխություն է դա, չէ՞ որ մինչ այդ թուրքերը կտրականապես պահանջում էին ազատել Ալեքսանդրապոլ—Ջուլֆա գիծը, դադարեցնել դիմադրությունը, քանի որ, նրանց կարծիքով, դա անօգուտ էր։ Մարտի դաշտում հաղթանակել էր հայ զինվորը, իսկ Բաթումում պարտվում էին Խատիսով-Քաջազնունի «դիվանագետները»։

Շուտով Ավ. Ահարոնյանը Կ. Պոլսում թերթերից մեկի թղթակցին ասում էր, թե Կ. Պոլիս ժամանած հայկական պատվիրակության խնդիրների մեջ ամենևին չի մտնում թուրքահայերի հարցը, իսկ կովկասահայերի հարցը կարող է լուծվել միայն Թուրքիայի բարյացակամ վերաբերմունքի դեպքում։ Նա արդեն հայտարարում էր, թե, «եվրոպական տերությունների բարեկամությունը և հովանավորությունը մեզ շատ թանկ նստեցին, նրանցից այժմ մենք որևէ օգուտ սպասել չենք կարող»։ Նա հույս էր տածում, որ առաջիկա բանակցությունների ժամանակ թուրքական կառավարությունն իրենց նկատմամբ «կգործեր ներողամտորեն-բարյացակամորեն» (13, թ. 239)։

Սարդարապատի ճակատամարտը համաժողովրդական մի կռիվ էր հանուն պատվի, ապրելու և գոյատևելու։ Այդ հերոսամարտը մեր ժողովրդի ազգային-ազատագրական բազմադարյան պայքարի ամենափայլուն էջերից մեկն է, որն անջնջելի է նրա պատմությունից։

Սակայն տեսնենք, թե ինչ էր կատարվում Հայոց ազգային խորհրդի ներսում, Բաթումի կոնֆերանսում Անդրկովկասին երիտթուրքերի տված վերջնագրի շուրջ։ Բաթումից վերադարձած Հովհ. Բեկզադյանը մայիսի 23-ին Ազգային խորհրդի նիստում պատմում էր կոնֆերանսի աշխատանքի

ընթացքի մասին։ Նա հաղորդում էր, որ Խալիլ բեյը հայ պատվիրակների հետ խոսում էր «հեգնանքով», «զզվելի» տոնով։ «Այժմ,— ասում էր նա,— մենք հաղթող ենք, դուք պարտված, պետք է ընդունեք մեր պայմանները»։ Այս խաղաղարարը՝ Վեհիբ փաշան, Իգդիրի և Բաշ-Ապարանի կողմից թուրքական զորքի հարձակումը փորձում էր վերագրել քրդերին, կեղծում էր փաստերը (11, թ. 221)։ 1918-ի մայիսի 25-ին Ազգային խորհրդում արձանագրում էին, որ «բոլորին համակել է լքումն ու անորոշ տրամադրությունը» (11, թ. 222)։ Ոմանք գտնում էին, որ նոր կացությունն այլ քաղաքականություն է առաջադրում, որ «կովի քաղաքականության գլխավոր ղեկավար Հ. Հ. դաշնակցությունը» պետք է հեռանա, իր տեղը զիջի Հայ ժողովրդական կուսակցությանը կամ կաթողիկոսին, որոնք ավելի հարմար են արտաքին աշխարհի հետ «զիջման, համակերպման» գիծ որդեգրելու համար։ Մյուսները հիշեցնում էին, որ քաղաքականության «էական կետերում՝ տաճկահայկական, կամավորական, դիվանագիտական և այլ խնդիրներում» երկու կուսակցությունն էլ նման են միմյանց։

Անհանգստություն էր տիրում այն կապակցությամբ, որ մայիսի 26-ին անկախություն էր հայտարարելու Վրաստանը, որ Բաթումի միացյալ պատվիրակությունը փլուզվել էր, իսկ Չխենկելին ֆոն Լոսսի հետ մեկնում էր Բեռլին։ Որոշվում է Բեռլին ուղարկել Արշ. Զուրաբյանին, իսկ Կ. Պոլիս՝ Մ. Պապաջանովին և Ալ. Խատիսովին (11, թ. 223, 225, 226)։ Մայիսի 26-ին մեծամասնությունը անժամանակ է համարում Հայաստանի անկախության հռչակումը։ Երբ քվեարկության է դրվում անկախության հարցը, ոչ ոք չի ցանկանում: Մերժվում է նաև Ավ. Ահարոնյանի առաջարկը Ազգային խորհուրդը ժամանակավոր կառավարություն հռչակելու մասին։

Վերջապես ընդունվում է էսէռ Լ. Թումանյանի առաջարկը (ստանում է 7 ձայն և համարվում ընդունված)։ Այնտեղ ասված էր. «Ի նկատի ունենալով, որ Վրաստանի և Ադրբեջանի անկախության հրապարակումով լուծվում է անդրկովկասյան անկախությունը, Հայոց ազգային խորհուրդը ժամանակավորապես իր վրա է վերցնում կառավարչական

ֆունկցիաներ հայկական գավառների նկատմամբ» (11, թ. 229)։ Ընտրվում է հանձնաժողով (Ս. Հարությունյան, Ստ. Մամիկոնյան, Լ. Թումանյան և Ա. Երզնկյան)՝ Ազգային խորհրդի հետագա գործունեության ընթացքը մշակելու, ներքին ստատուսը կազմելու և երկու օրվա ընթացքում համապատասխան բանաձևեր մշակելու համար։

Այսպիսով, մայիսի 26-ին անկախության հռչակումը մեծամասնության կողմից մերժվում էր այն պատճառաբանությամբ, որ այն չէր իրագործվի Թուրքիայի հետևողական հակառակության հետևանքով։ Մայիսի 26-ի երեկոյան նիստում քննարկվում է Նազարբեկովի հեռագիրն այն մասին, որ զորք չի մնացել, ցրվել են գյուղերը, որ Դիլիջանում հաց, փամփուշտ չկա, որ դրությունը կրիտիկական է և ստիպված է ցրել փաստորեն ցրված զորքը, անպայման հաշտություն կնքել և փրկել այն, ինչ որ հնարավոր էր։ Խորհուրդը որոշում է զորքի ցրումը թողնել Նազարբեկովի հայեցողությանը (11, թ. 229)։

1918-ի մայիսի 27-ի նիստում լսվում է Մ. Պապաջանովի զեկուցումը։ Վերջինս մի շարք փաստերով ցույց էր տալիս, որ դեռևս հունվարին մենշևիկները թուրքերից գրավոր համաձայնություն էին ստացել Վրաստանի անկախության մասին (11, էջ 231)։ Պարզվում է, որ մայիսի 25-ին ֆոն Լոսսը Խատիսովին և Քաջազնունուն առաջարկել էր՝ 1. պատվիրակություն ուղարկել Բեռլին, 2. Կ. Պոլիս չգնալ, 3. անպայման պայմանագիր թուրքերի հետ չկնքել, 4. թուրքերի օկուպացիային չդիմադրել, 5. Հայաստանի անկախություն հռչակել և այլն։ Խալիլ բեյը խոստացել էր հարգել Հայաստանի անկախությունը և նրա տերիտորիան ընդլայնել Կովկասի հաշվին, պահանջել էր վերացնել «բանդաները», այսինքն՝ թուրքերին դիմադրող հայրենասեր ուժերին, հրաժարվել բոլշևիկյան իշխանությունը պաշտպանելուց (11, թ. 231)։

1918-ի մայիսի 28-ին Խ. Կարճիկյանը դաշնակցության ֆրակցիայի կողմից առաջարկում է չստորագրել թուրքական վերջնագիրը։ Հայ ժողովրդական կուսակցության կողմից Մ. Պապաջանովը առաջարկություն է մտցնում ընդունել վերջնագիրը։ Այդ կուսակցության ֆրակցիայի բանաձևը հրա-

պարակում է Ս. Հարությունյանը։ Այնտեղ նշվում էր, որ թուրքական նվաճումից ազատ մնացած շրջանները Երևանի և Գանձակի նահանգներում կտրված են դրսի աշխարհից, որ հայկական զորքը կազմալուծված է, իսկ Երևանի նահանգում թեև կռիվը շարունակվում է, բայց չի կարող երկարատև լինել թշնամու ուժերի գերակշռության և ռազմամթերքի ու պարենի պակասի հետևանքով։ Նշվում էր, որ ժողովրդի մեջ նկատվում է անկումային տրամադրություն և որ անհաջող կռիվները սպառնում են կործանարար հետևանքներ ունենալ հայ մնացյալ ժողովրդի համար։ Ընդգծվում էր խնդրի այն կողմը, որ վերջնագրի ընդունումը և զինադադարը կփրկեն ժողովրդին, և որ պատերազմի ավարտից հետո հնարավորություն կստեղծվի համաեվրոպական կոնգրեսի միջոցով համապատասխան լուծում տալ հայկական հարցին։ «Վերջնագրի ընդունումը,— ասված էր բանաձևում,— կարող է ապահովել մեզ հնարավորություն ունենալու մի փոքր ազգային տերիտորիա, որը կլինի ապագա ազգային կյանքի սաղմը» (11, թ. 233—234)։

Այնուհետև բանաձևն առաջարկում էր բանակցել Բաթումի թուրքական խաղաղարար պատվիրակության հետ, որպեսզի Էջմիածինը մնա այժմյան հայկական անվիճելի շրջան, իսկ մնացյալ հայկական շրջանների մասին, որոնք վերջնագրի հիման վրա անցնելու էին Թուրքիային, համարվեն առժամանակ վիճելի և դրանք ետ ստանալու համար պատվիրակություն ուղարկել Կ. Պոլիս։ Որպես պայման առաջադրվում էին հետևյալ պահանջները. թուրքերի օկուպացված շրջաններում հայերը չէին ենթարկվելու զինակոչի և պատերազմական պարտադիր աշխատանքների, իսկ Հայաստանը պահպանելու էր ներքին զինվորական ուժերը։ Թուրքերից պահանջվում էր թույլ տալ գաղթած հայերին վերադառնալ իրենց վայրերը (11, թ. 234)։ Այնուամենայնիվ, քվեարկության ժամանակ ձայների մեծամասնությամբ թուրքական վերջնագիրը մերժվեց։

Հատկանշական է, որ վերջնագրի մեջ կար հատուկ կետ, որտեղ թուրքերը պահանջում էին «կռիվ հեղափոխական բանդաներին» (11, թ. 234)։ Թուրքերի հարցադրումը համընկնում էր անդրկովկասյան հակահեղափոխության դիրք-

որոշմանը։ Պատահական չէր, որ Ալ. Խատիսովը՝ Թիֆլիսի երեկվա քաղաքագլուխը, հայ բուրժուազիայի քաղաքական ղեկավարներից մեկը «ծանր դրության» պատճառները երեքն էր համարում. 1) Բաքվի դեպքերը և դաշնակցությունը, 2) հողային ռեֆորմների անժամանակ հրապարակումը և 3) Սուրմալուի և Երևանի հակաթուրքական դեպքերը» (11, թ. 236)։

Բաքվում Ստ. Շահումյանի գլխավորած սովետական իշխանության պայքարին ձախ դաշնակների մասնակցությունը Խատիսովի դժգոհության առաջին պատճառն էր, երկրորդը՝ հողային հարցը լուծելու ուղղությամբ կատարված երկչոտ քայլերը։ Իսկ երրորդ պատճառը՝ Սարդարապատի հերոսական դիմադրությունն էր, որը նույնպես քաղաքական դժվարություն էր հարուցել քաղաքագետ խատիսովներին իրենց գավաճանությունը՝ թուրքերի գիրկն ընկնելը, դյուրացնելու տեսակետից։

Վեհիբ Փաշային և Խալիլ բեյին ուղղված այն հարցին, թե ինչո՞ւ բանակցությունների ընթացքում նրանք շարունակում էին արշավանքը, Վեհիբ փաշան պատասխանել է, որ «դրանք միջոցներ են մեր պահանջներն ընդունել տալու համար. գրավված են բոլոր կարևոր ռազմական կետերը՝ Ջալալօղլի, Ղարաքիլիսա»։ Դա ամենևին չէր խանգարում Հ. Քաջազնունուն հայտարարելու, թե «Վեհիբ փաշան իր վրա լավ տպավորություն է թողել իբրև ազնիվ զինվորական»։ Նա գտնում էր, որ վերջնագիրը ստորագրելուց հետո ավելորդ չի լինի Կ. Պոլիս գնալը» (11, թ. 236)։

1918-ի մայիսի 28-ին գիշերվա ժամը 10 և կեսին նույն օրվա մեջ խորհուրդը գումարում է իր երրորդ նիստը։ Նախագահում էր Ավ. Ահարոնյանը։ Ներկա էին Ն. Աղբալյանը, Ս. Վրացյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Բաբալյանը, Տ. Բեկզադյանը, Ստ. Մամիկոնյանը, Ա. Երզնկյանը, Մ. Հարությունյանը, Մ. Պապաջանովը, Բունիաթյանը, Հ. Քաջազնունին, Ալ. Խատիսովը։ Վերջնագրի օգտին քվեարկում են Հ. Հ. դաշնակցությունը և Հայ ժողովրդական կուսակցությունը։ Սոցիալ-դեմոկրատները և սոցիալ-հեղափոխականները բացակայում էին։ Որոշվում է վերջնագիրը համարել ընդունված, իսկ ձայները հաշվել մյուս օրը։ Տ. Բեկզադյանը

նույն նիստում ասում էր. «Մենք անկախ Հայաստան ենք հայտարարում, բայց ի՞նչ է նրա բովանդակությունը, անհայտ է։ ...Ազգային խորհուրդը հայտարարենք կառավարություն, առանց անկախություն հռչակելու» (11, թ. 238)։

1918-ի մայիսի 30-ին Ազգային խորհուրդը կոչ ընդունեց՝ ուղղված հայ ժողովրդին, որտեղ Ազգային խորհուրդն իրեն հայտարարում էր հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն, որոշ «ծանրակշիռ պատճառներով» թողնելով մոտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարություն։ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում էր կառավարության բոլոր լիազորությունները «հայկական գավառների քաղաքական ու վարչական ղեկը վարելու համար» (11, թ. 239)։ Կառավարության կազմի որոշումը դեռ վաղաժամ էր համարվում, անհրաժեշտ էր սպասել Բաթումի բանակցությունների արդյունքներին։ Ավ. Ահարոնյանն ավելի հեռու էր գնում, ասելով. «Մենք անկախություն չենք ուզում... Մենք ժամանակավորապես վերցնում ենք կառավարչական լիազորությունները, իսկ Ազգային խորհուրդն ընտրված լինելով բոլոր հայերի կողմից, չի կարող մի որևէ մասի կառավարություն կազմել։ Պետք է այդ իրավունքը փոխանցել Երևանի ազգային խորհրդին, որը և իրավազոր է կառավարություն կազմելու, եթե թուրքերի առաջխաղացումը դադարի» (11, թ. 240—241)։

Հատկանշական է Ս. Հարությունյանի խոստովանությունը. «Արդյոք Հ. ժողովրդական կուսակցությունը կարո՞ղ է իր վրա վերցնել կառավարություն կազմելու ղեկը։ Չի կարող, որովհետև չունի ոչ բավական մեծություն և հմայք. իսկ քաղաքականության գծի սխալը ընկնում է նաև նրա վրա, որովհետև նրա վարիչները նույնպես մեղավոր են կամավորական շարժման մեջ» (11, թ. 241)։ Համբարձում Առաքելյանը փորձում էր ցույց տալ, որ «Հ. ժողովրդական կուսակցությունը կամավորական շարժման մեջ դեր չի խաղացել» և հայտարարում էր, որ դրա ամբողջ մեղքն ընկնում է դաշնակցության վրա (11, թ. 241)։ Նա պահանջում էր, որ կազմվելիք կառավարության մեջ «դաշնակցությունը ղեկավար դեր չկատարի։ Նրա երեսնամյա գործունեությունը բացասական հետևանքներ տվեց և նրա ղեկավար դերը կարող

է խանգարել մեր բարեկամական հարաբերություններին ոչ միայն հարևանների, այլև դրսի պետությունների հետ» (11, թ. 241)։

Երբ 1918-ի հունիսի 1-ին կարդացվում էին Բաթումից ստացված հեռագրերը, արձանագրվում է, որ «մեր պատվիրակությունը, թերևս ստիպված, ընդունել է մեր անկախությունը»։ Որոշվում է դիմավորել Ալեքսանդրապոլ եկած էնվերին։ Նույն օրը անկախության հարցի մասին որոշվում է. «Քանի որ այս երկու օրս Բաթումի պատվիրակությունը գալու է, սպասել նրան և ապա խոսել այդ մասին»։ Իսկ մինչ այդ, կազմվել էր մի մասնաժողով «անկախության ակտը մշակելու, հայտարարման ձևն ու տեղը բազմակողմանիորեն որոշելու» (11, թ. 242)։ Շուտով պարզ դարձավ, որ դավաճանական գործարք էր կնքվել թուրք նվաճողների հետ ընդդեմ սովետական իշխանության՝ Բաքվի կոմունայի, Ստ. Շահումյանի։ Խատիսովը պատմում էր 1918-ի հունիսի 6-ի նիստում. «Բաքվի հարցը երկար խորհրդակցությունների նյութ դարձավ. նրանք (այսինքն՝ թուրքերը—Ջ. Կ.) պահանջում էին ակտիվ միջամտություն հեղափոխականներից ազատվելու և կռվին վերջ տալու։ Մենք միայն ասացինք, որ գործ կդնենք մեզնից կախված բոլոր միջոցները... Արդեն հետներս մի սպա է եկել, մեր ներկայացուցչի հետ Բաքու գնալու և այդ խնդիրը լուծելու, իրենք երաշխավորում են ճանապարհների ապահովությունը» (11, թ. 243)։ Խատիսովը և Քաջազնունին չէին թաքցնում, որ «թուրք սպան եկել է պատվիրակության խնդրանոք» (11, թ. 246)։

Դավաճանները թուրքերին խոստացել էին համատեղ ազդեցություն գործել և բանալ Երևանի ճանապարհը։ Կռվով Երևան չկարողացան մտնել թուրքերը, այժմ մտնելու էին դաշնակցության օգնությամբ։ Այս խնդրի շուրջը «Լիազորություն է տրվում նաև Մ. Պապաջանովին և Ռ. Տեր-Մինասյանին միջոցներ ձեռք առնելու թուրքերի հետ միասին ճանապարհը բանալու համար» (11, թ. 245)։ Քննարկվում է նաև Բաքու մարդիկ ուղարկելու խնդիրը։ Սրանց նպատակն էր լինելու Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի խորհուրդը զրկել հայկական զորամասերից։ Սոցիալ-դեմոկրատ Ղ. Ղազարյանը պահանջում է ետ կանգնել այդ մտադրությունից։

Իսկ արկածախնդիր Ռ. Տեր-Մինասյանը պահանջում էր «հայ զորքը այնտեղից (Բաքվից) հանել» և «եթե հարկավոր է [illegible] նույնիսկ պատերազմ հայտարարել» սովետական Բաքվին։

Դաշնակցության ղեկավարները դառնում էին սովետական իշխանության դեմ ինտերվենցիայի եկած թուրք հրոսակախմբերի կամակատարներ։ Սոցիալ-դեմոկրատ Դ. Տ. Ղազարյանը Ազգային խորհրդի հունիսի 7-ի նիստում հայտարարում էր, որ «այս անկախությունը մենք ընդունում ենք որպես մի բռնի քայլ, որ մեր ժողովրդի ստրկությունն է, այն էլ տաճկական» լծի տակ (11, թ. 248)։

1918-ի հունիսի 8-ին, երբ քննարկվում էր կառավարության կազմելու խնդիրը, Քաջազնունին բավարարվեց տալ միայն արտաքին, զինվորական և ֆինանսների մինիստրների անունները, իսկ մնացյալը լրացնել Երևանում։ Արամայիս Երզնկյանի այն հարցմանը, թե երբ հոգով կառավարություն չի լինի, քաղաքականություն չի վարվի, որ հարկավոր է հայտարարություն հրապարակել, Քաջազնունին պատասխանում էր, որ «մեզ դեկլարացիա հարկավոր չէ. մեր դեկլարացիան հաշտության դաշնագիրն է, որ պետք է իրագործել կյանքի մեջ» (11, թ. 250)։ Իսկ հաշտության դաշնագիրը (Բաթում, հունիսի 4) թուրքերի վերջնագիրն էր պարտադրված հայերին, որը և Քաջազնունու համար դարձել էր կառավարական հայտարարություն։

Ինչպես Ալ. Խատիսովն էր հայտարարում Ազգային խորհրդում, «հակառակ մեր կամքի անկախացանք», որովհետև այդպես էր ցանկանում Թուրքիան։ Երիտթուրքերն ուզում էին Ռուսահայաստանը ենթարկել իրենց (6, էջ 51—52)։

Երիտթուրքական կառավարության վերջնագրով «անկախություն» հռչակած Վրաստանը, Ադրբեջանը և նրանց օրինակով ասպարեզ իջած «Հայաստանի հանրապետությունը» ենթարկվում էին Թուրքիայի կամքին։ Այդ «անկախության» հռչակման նպատակն էր անջատումը Սովետական Ռուսաստանից և, այնուհետև, առանձին-առանձին հաշվեհարդար տեսնելը յուրաքանչյուրի հետ։ Հայաստանի անկախությունը

Ֆիկտիվ էր։ «Ընկնում ենք» «թուրքական նահանգի դրության մեջ»,— հայտարարում էին գործին իրազեկ մարդիկ (26, թ. 22)։

1918 թվականի հունիսի 4-ին Բաթումում կնքված «Հաշտություն և բարեկամություն» պայմանագիրը ստրկացուցիչ դիկտատ էր։ Երիտթուրքական կառավարողները բացի Կարսի և Արդահանի մարզերից, Արևելյան Հայաստանից զավթում էին Սուրմալուի, Շարուրի, Նախիջևանի գավառները, Էջմիածնի և Ալեքսանդրապոլի շրջանների մեծ մասը՝ Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթգծով։ Այդ պայմանագրով Հայաստանից և Վրաստանից օսմանյան կայսրության զավթած տերիտորիան կազմում էր 38 հազար քառ. կմ, 1250 հազար բնակչությամբ, չհաշված մեծաթիվ գաղթականությունը։ Գրավված շրջանների բնակչության 80 տոկոսից ավելին հայեր և վրացիներ էին։ Այս կորուստը 15 հազար քառ. կմ-ով և 650 հազար բնակչությամբ ավելի էր այն տերիտորիայից, որտեղ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով պետք է հանրաքվե անցկացվեր (45, էջ 69—71)։

Բաթումի ստրկացուցիչ գործարքով, որը դաշնակցական կառավարության ստորագրած առաջին միջազգային բնույթի պաշտոնական փաստաթուղթն էր, Հայաստանի տերիտորիան կազմելու էր 9 հազար քառակուսի կմ տարածություն, մոտավոր թվերով, ոչ ավելի 325 հազար բնակչությամբ։ Հայաստանի հանրապետության (դաշնակցական Հայաստանի) կազմի մեջ մտան Նոր Բայազետի գավառը (առանց Բասարգեչարի հարավարևելյան մասի), Երևանի գավառի $^3/_5$-ը, Էջմիածնի $^1/_4$-ը և Ալեքսանդրապոլի՝ $^1/_4$-ը, 230 հազար հայով, 80 հազար մահմեդականով (որից 5 հազարը քուրդ), 5000 եզիդով, 6000 այլ ազգությունների ներկայացուցիչներ, ընդամենը 321 հազար մարդ։ «Հայկական հանրապետությունը» իր մեջ առնում էր Կովկասի ողջ հայության (1825) $^1/_9$ մասը (10, էջ 531—537)։

Ընդ որում, Բաթումում երիտթուրքական կառավարության ներկայացուցիչները հատկապես պնդում էին Ղարաբաղը (որի բնակչության 94 տոկոսը հայեր էին) և դաշտային Գանձակի հայկական շրջանները Ադրբեջանին հանձնելու վրա։ Նախիջևանը նրանք ցանկանում էին ուղղակի կցել

Թուրքիային։ Սա պանթուրքիզմի անքող դրսևորում էր։ Ընդվզելով Թուրքիայի և նրա հետ Բաթումում գործարքի մեջ մտած հայկական հակահեղափոխական ուժերի դեմ, Անդրանիկը 1918-ի հուլիսի 14-ի իր № 1 հրամանում Նախիջևանը հայտարարում էր Սովետական Ռուսաստանի անբաժանելի մասը, այդ առթիվ հիշատակելով նաև Բրեստ-Լիտովսկի պայմանագրով թուրքական կառավարության ստանձնած պարտավորությունը (29, թ. 64)։ Գերմանական դիվանագետ Կոմս Բերնսդորֆը նույնիսկ կատակել էր. «Թուրքիան հայերին միայն թողել է Սևանա լիճը, որում նրանք կարող են լողալ, բայց տեղ չունեն դուրս գալու և չորանալու համար» (58, թ 16)։ Ինչպես հավաստում է Լ. Թումանովը, Անդրանիկն ընդվզեց Բաթումի խայտառակ պայմանագրի դեմ և իր հետագա մնալը հանրապետությունում համարեց աննպատակ (53, թ. 167)։

□

1918-ի ամբողջ ընթացքում Հայոց ազգային խորհրդի ղեկավարները, այնուհետև Հայաստանի հանրապետության նորընծա տնօրենները մեկ աջակցություն էին փնտրում Բեռլինում ու Վիեննայում, մեկ ծեծում Կ. Պոլսի դռները՝ երկրի իրավական վիճակի մեջ պարզություն մտցնելու նպատակով ծնկի գալիս երիտթուրք ջարդարարների առաջ։ Իսկ Անտանտի երկրների մայրաքաղաքներում իրենց ավանդական առաքելությունն էին իրականացնում Նուբար փաշան ու մյուսները, օգնություն մուրալով Լոնդոնից ու Փարիզից։ Սակայն օգնությունն ուշանում էր, օգնություն չկար։ Օգնություն կարող էր լինել միայն հեղափոխական հյուսիսից։

1918-ի գարնանը Թիֆլիսի Հայկական ազգային խորհուրդը ժողովրդական կուսակցության Կենտկոմի անդամ Գ. Մելիք-Կարակոզովին և դաշնակցության կուսակցության ղեկավար գործիչ Արշ. Ջամալյանին գործուղեց Բեռլին, ապահովելու համար Գերմանիայի միջամտությունը, որպեսզի նա Թուրքիային թույլ չտար ներխուժելու Անդրկովկասի սահմանները» (51, էջ 45)։ Սակայն և ոչ մի արդյունք։ Այնուհետև՝ Բեռլին մեկնեց մի այլ պատվիրակու-

թյուն, որի մեջ մտնում էին սոցիալ-դեմոկրատ Ս.ՂՂ. Զավարյանը և դաշնակ Համո Օհանջանյանը։ Մեր հանրապետության արխիվներում պահպանվում են նրանց հաշվետվություն-նամակները՝ օրեր ու շաբաթներ գերմանական ու ավստրիական պետական մարմիններից օգնություն քաղելու իրենց ջանքերի մասին։ Հատկանշական է, որ միևնույն խնդրի շուրջը երկու պատվիրակները երբեմն միանգամայն հակառակ դիրքորոշում էին հանդես բերել։

1918-ի օգոստոսի 12-ին կոմս Բեռնստորֆը բացորոշ հայտարարեց հայկական պատվիրակությանը, որ չի կարող ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա և «լրջորեն» խորհուրդ տվեց դիմել Իսպանիայի օգնությանը» (58, էջ 15)։ Նա Օհանջանյանին և Զոհրաբյանին հասկացրել էր, որ Գերմանիան չի կարող ճանաչել Հայաստանը ոչ դե-ֆակտո, ոչ դե-յուրե։

1918-ի օգոստոսի 30-ին Համո Օհանջանյանը Բեռլինից գրում էր. «... այստեղ ամեն ինչ կատարվում է (մեր կովկասյան խնդիրների մասին է խոսքս իհարկե) առանց մեր գիտության ու մասնակցության և առանց մեր այստեղ լինելուն կարևորություն տալուն» (խոսքը Թալեաթի և գերմանական կառավարության բանակցությունների մասին էր) (27, թ. 9)։

1918-ի հոկտեմբերի սկզբին Իոֆֆեն Բեռլինում հայտարարեց հայ պատվիրակներին, որ ժողովրդական կոմիսարների սովետը չի կարող ճանաչել Հայաստանի կառավարությանը, քանի դեռ վերջինս չի ճանաչել Մոսկվայի սովետական կառավարությանը։ 1918-ի հոկտեմբերի 14-ին Համո Օհանջանյանը Բեռլինից Կ. Պոլսում գտնվող Հայաստանի հանրապետության պատվիրակությանը հղած նամակում գրում էր Իոֆֆեի հետ ունեցած հանդիպման մանրամասների մասին։ Սովետական ներկայացուցիչը նրան ասում էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը պնդում էր ինչպես Կարսի ու Բաթումի ինքնորոշման, այնպես և Տաճկահայաստանի ինքնավարության վրա։ «Ռուսաստանը ներկայումս խզել է արդեն յուր խաղաղ ժամանակի հարաբերությունները Տաճկաստանի հետ,— ասում էր Իոֆֆեն,—

և իրավաբանորեն երկու կողմից էլ կարող են սկսվել պատերազմական գործողություններ» (26, թթ. 82—85)։

Շուտով Գերմանիայի դրությունը բարդացավ այնքան, որ հայկական պատվիրակության ներկայությունը Բեռլինում ցանկալի չէր։ Գերմանիան Ավստրո-Հունգարիային առաջարկեց վերցնել Հայաստանի պրոտեկտորատը։ Ավստրո-Հունգարիան հանդես գալով Անդրկովկասը գոտիների բաժանելու դեմ, առաջարկեց համատեղ՝ ավստրո-գերմանական պրոտեկտորատ։ Այս բանը հաղորդվեց հայ պատվիրակությանը արտաքին գործերի մինիստրի օգնական կոմս Ամբրոզիի միջոցով սեպտեմբերի առաջին կեսերին (58, էջ 16)։

Սեպտեմբերի 5-ին Վիեննայում բացվեց մի կոնֆերանս, որին մասնակցում էին Բուլղարիայի թագավոր Ֆերդինանդ I-ը, ավստրո-հունգարական բարձրաստիճան ներկայացուցիչներ, Թալեաթ փաշան, Գերմանիայի արտաքին գործերի մինիստր, պետական քարտուղար Պաուլ Գինցեն և Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին։ Այս հավաքին հետևեց ևս մի խորհրդակցություն Բեռլինում։ Թե՛ մեկում, թե՛ մյուսում անդրադարձումներ եղան Անդրկովկասին, հայկական հարցին։

Թալեաթը ճիգ էր գործադրում պարզելու Գերմանիայի քաղաքականության իմաստը Անդրկովկասում, փորձում էր ճշտել և համաձայնություն ձեռք բերել Վրաստանում, Ադրբեջանում, Հայաստանում թուրքական ու գերմանական ազդեցության գոտիների հարցում։ Օսմանյան քաղաքականության շահերին համապատասխան Թալեաթը պաշտպանում էր Հայաստանի հանրապետության «անկախությունը», ընդ որում նա այդ անում էր այնպիսի կրքոտությամբ, որ առաջացրել էր Թուրքիայի դաշնակից տերությունների ներկայացուցիչների զարմանքը (58, էջ 21)։ Սեպտեմբերի 13-ին գերմանական պաշտոնաթերթ «Կրեյզեր Ցեյտունգը» հանդես եկավ մի խմբագրական հոդվածով, որտեղ նպատակահարմար էր հռչակվում Հայաստանը ֆեդերատիվ հիմունքներով օսմանյան կայսրության կազմում թողնելու տարբերակը։ Սա Գերմանիայի կառավարության տեսակետն էր, որով ուզում էին գոհացում տալ թե՛ հայերին, թե՛ Անտանտին և դրանով

փակել հայկական հարցը մինչև խաղաղության կոնգրեսի գումարումը։

Համո Օհանջանյանը Վիեննայից (15. 9. 1918) Հայաստանի Հանրապետության ազգային խորհրդին և կառավարությանը գրում էր. «Ամսի 4-ից գտնվում ենք ես և դր. Գրինֆիլդը Վիեննայում Կ. Պոլսի մեր պատվիրակության առաջարկությամբ, որ առաջարկենք ավստրո-հունգարական կառավարության՝ վերցնի յուր վրա Հայաստանի հովանավորությունը և ինչպես Գերմանիան Վրաստանի համար արել, պաշտպանի մեր քաղաքական և ֆիզիկական գոյությունը յուր քաղաքական ազդեցությամբ և յուր զինվորական ուժով, ուղարկելով նրան մեր երկրի որոշ մասերը»։ Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր Բուրիանը չի ընդունում նրանց։ Նրա օգնական Ցլոտովը ոչ մի որոշակի պատասխան չի տալիս։ «Երևում էր, որ այդ ընդունելությունը միայն քաղաքավարության համար են անում, քանի որ մենք եկել ենք, բայց մեզ ոչինչ չեն ուզում ասել, չեն ուզում իրենց վրա վերցնել այդ խոր խնդիրը, չեն ուզում ոչ մի դեպքում իրենց դաշնակից Թուրքիային ոչ մի անախորժ քայլեր անել»։

Վիեննայում ավստրիական մի կրտսեր պաշտոնյա՝ Մագրհոֆֆերը Օհանջանյանին ասում էր (վերջինիս նամակը Կ. Պոլիս Հայաստանի պատվիրակությանը 16. 9. 1918), թե «թուրք ղեկավարող շրջանները հիմա հրաժարվել են պանիսլամիզմից՝ արաբների բռնած դիրքի պատճառով և ներկայումս տարված են պանթուրանիզմի գաղափարով և հայությունը, և Հայաստանը գտնվում են նրա ճանապարհի վրա դեպի Ադրբեջան և Անդրկասպիա։ Եթե հիմա Թուրքիան կարծես հաշտվում է Հայաստանի գոյության հետ, որովհետև նա կարծում է, որ կարելի է Հայաստանը սահմանափակել միայն Բաթումի հունիսի 4-ի սահմաններով և համենայն դեպս խոսք չի կարող լինել Թուրքիայի տարածքի մասին (Վան, Ալաշկերտ և այլն), որովհետև այդպիսով բոլորովին կփակվի Տաճկաստանի ճանապարհը դեպի Թուրանական արևելքը, այդ պատճառով էլ խորհուրդ է տալիս, որ Տաճկաստանի խնդիրը ոչ մի դեպքում չբարձրացնել» (26, թ. 25, 28)։ Այդ օրեր լեյտենանտը ծառայել էր Թուրքիայում և քաջածանոթ էր այնտեղի քաղաքական անցուդարձին։ Նա առաջարկում էր

պահանջների հարցում լինել համեստ, քիչ բան խնդրել, իսկ առաջարկների հարցում, ընդհակառակը, առաջարկել, արտահանել բամբակ, բուրդ, պղինձ, մետաքս, կաշի և այլն։ Նա առաջարկում էր թուրքերի դրած սահմաններով բավարարվել՝ Սևանա լճի շրջանով, «չվշտացնել Թուրքիային» (26, թ. 29—30)։

1918-ի սեպտեմբերի 9-ին կոմս Ամբռոզին Վիեննայում հայոց պատվիրակներին խորհուրդ էր տալիս «զգուշությամբ վերաբերվել Թալեաթի խոսքերին» (26, թ. 48)։

Համաձայն իրենց պանթուրքիստական ծրագրերին, երիտթուրքական շովինիստներն ուզում էին ստեղծել այսպես կոչված «Արևելյան ֆեդերացիա», որի մեջ մտնելու էին Հյուսիսային Կովկասը, Ադրբեջանը, Հայաստանը։ Սրան ստիպված պետք է հարեր գերմանական հովանու տակ մնած մենշևիկյան Վրաստանը։ Այսպես էին մտածում երիտթուրքական պարագլուխները, որոնցից Ահմեդ Աղաևը սեպտեմբերի 15-ին Կ. Պոլսի ազդեցիկ թերթերից մեկում նույն գաղափարներն էր զարգացնում (58, էջ 22)։

Ահա թե ինչու Թալեաթը 1918-ի սեպտեմբերին սիրալիր էր դաշնակցական բանագնաց Համո Օհանջանյանի նկատմամբ, նրան հայերեն ասում էր. «Անդրանիկը քաշ՝ գնանք դեպ Սասուն»։ Համո Օհանջանյանն իր նամակներից մեկում, որ նա հղել էր 1918-ի սեպտեմբերի 23-ին Բեռլինից Կ. Պոլիս՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը, գրում էր. «Թալեաթ փաշան ինձ ընդունեց շատ սիրալիր, բայց երևում էր, որ չի ուզում մտնել մեզ հետ մեր խնդրի խոր քննության մեջ» (26, թթ. 60—63)։

Անդրկովկասի համար գիշատիչ պայքարում բախվում էին Գերմանիայի և Թուրքիայի շահերը։ Զավթողական պլաններն իրականացնելիս նրանք ավելի շատ ախոյանների, քան դաշնակիցների դերում էին։ «Տարաձայնություններն Անդրկովկասյան հարցում 1918-ին,— գրում է Տրումպեները,— գերմանա-թուրքական դաշինքը շատ ավելի լարված դարձրին, քան պատերազմի որևէ այլ իրադարձություն։ Եթե պատերազմը շարունակվեր, այդ հարցը կարող էր հասցնել երկու դաշնակիցների բացահայտ խզման» (71, էջ 198)։ Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր առաջ անցնել մյուսից, իր թաթը

դնել Բաքվի նավթի վրա, իր կամքը փաթաթել Անդրկովկասի ժողովուրդներին։

Թուրքերի կողմից Բրեստ-Լիտովսկի սահմանը խախտելու դեմ Գերմանիայի արտաքին գործոց մինիստրի հրահանգը Վիեննայի և Կ. Պոլսի իր դեսպաններին, Լյուդենդորֆի հեռագիրը Կ. Պոլիս՝ թուրքերի հետ «այլևս չգործակցելու» սպառնալիքով, Հինդենբուրգի հեռագիրը (36, էջ 38) թուրքաց զորքը ետ քաշելու վերաբերյալ ոչ թե Գերմանիայի քրիստոնեասիրության արդյունք էր, այլ թուրքական տարածողական քաղաքականությունից, Բաքուն կորցնելու հնարավորությունից զգուշանալու արտահայտություն (2)։

Թալեաթը դժգոհ էր ռուս-գերմանական լրացուցիչ պայմանագրից, Բաքուն Ռուսաստանին թողնելու պարտավորությունից։ Թուրքիան սպառնում էր խզել դաշինքը Գերմանիայի հետ, մտնել Անտանտի մեջ։ Վերջապես Գերմանիան Թուրքիային 45 միլիոն լիրայի փոխառության տվեց, որից հետո Թուրքիան համակերպվում էր Բաքուն սովետական իշխանությանը ենթարկելու, Վրաստանի անկախությունը ճանաչելու վերաբերյալ ռուս-գերմանական լրացուցիչ պայմանագրին (58, էջ 18)։

□

Հայաստանի հանրապետությունը 1918-ի հունիսից մինչև նույն տարվա նոյեմբեր ամբողջապես ենթարկված էր երիտթուրքական ագրեսորների քմահաճ կամքին։ Ամեն ինչ շուտ էր ելել։ Թուրքական տիրապետության դեմ տասնյակ տարիներ խոսքով ու գործով պայքար մղած հայ կուսակցական գործիչներն այժմ թուրք պետական հանրահայտ դահիճների հետ սեղան նստելու, բանակցելու պարտականությունն ունեին։

Բաթումից Թիֆլիս վերադառնալուց հետո Ազգային խորհրդի հանձնարարությամբ հայոց պատվիրակությունը Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ մեկնեց Կ. Պոլիս Գերմանիայի նախաձեռնած կոնֆերանսին մասնակցելու համար։ Այս կոնֆերանսը պետք է քններկեր և լուծեր Կովկասի հետ կապված հարցերը և, առաջին հերթին, Բաքվի խնդիրը։ Ձևակա-

նրին այդ հավաքը կոչված էր լուծելու Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պահանջները։ Այն պետք է բացվեր հունիսին, բայց երեք շաբաթով հետաձգվեց Գերմանիայի և Թուրքիայի միջև երկարած բանակցությունների հետևանքով։ Հունիսի երկրորդ կեսին նրանց միջև համաձայնագիր կնքվեց, ըստ որի Բորչալուի գավառում գերմանական և թուրքական զորքերի միջև սահմանն անցնելու էր Կամենկա գետով։

Կոնֆերանսը շարունակ հետաձգվում էր և ի վերջո չկայացավ։ Նախ Բուլղարիան (սեպտեմբերի վերջին), հետո Թուրքիան (հոկտեմբերի վերջին) լքեցին Գերմանիային և Ավստրո-Հունգարիային ու սեպարատ բանակցություններ սկսեցին Անտանտի հետ։

1918-ի հունիսին հայ ժողովրդի համար ստեղծված քաղաքական ծանր վիճակն ավելի խորացել էր։ ...Քաջազնունին և Ավ. Սահակյանը հանդիպում են գերմանական միսիայի ղեկավար ֆոն Կրեսի հետ։ Վերջինս հարց է տալիս, թե Կ. Պոլիս մեկնած և թուրքական կառավարության հետ բանակցություններ սկսած հայոց պատվիրակության անդամները «հայ ժողովրդի կամքի արտահայտի՞չ են, թե՞ ոչ»։ Գերմանացի զինվորականը զարմացել էր, որ այդ հայ պատվիրակները Բաթումում տեսնվել էին Էնվեր փաշայի հետ և ասել, թե պայմանագրի վերաքննության խնդիր չեն դնում, քանզի «ընդունել ենք տաճկական օրիենտացիա»։

Երբ հայկական պատվիրակությունը Կ. Պոլսում հարցերի լուծում էր ակնկալում Թուրքիայի ու Գերմանիայի կառավարողներից, 1918-ի հուլիսի 23-ին Պողոս Նուբար փաշան Փարիզում հրապարակեց մի նամակ Ֆրանսիայի վարչապետ Կլեմանսոյի անունով։ Մի դեպքում հայ ժողովրդի անունից Ավ. Ահարոնյանն ու մյուսները Կ. Պոլսում ճանաչում էին հայցում թուրքերից, մյուս դեպքում, Էջմիածնի կաթողիկոսի կողմից տակավին 1912-ից Հայաստանը ներկայացնելու որոշակի իրավասությամբ օժտված Պողոս Նուբարը Հայաստանի անկախության, վաղվա օրվա խնդիրը կապում էր Անգլիայի, Ֆրանսիայի կառավարությունների հետ։

Հակասական, անելանելի մի վիճակ էր ստեղծված։ Կ. Պոլսում թուրքական թերթերն աղմկեցին։ Պետական շրջանները նույնպես։ Նրանք պահանջում էին, որ Կ. Պոլսում

գտնված հայոց պատրիարքությունը պատասխան տա։ Ալ. Խատիսովը մամուլի ներկայացուցիչներին հայտարարեց, որ միայն Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչներն են լիազորված հայ ժողովրդի անունից պատասխանատու հայտարարություններ անելու (58, թ. 11)։ Սրանով իսկ Պողոս Նուբարի և մյուսների դերն ու ակտիվությունը հայկական հարցում ժխտվում էին։ Ծիծաղաշարժն էլ այն է, որ Կ. Պոլսի հայոց մամուլը նույն պահին գրում էր, թե ոչ մի ընդհանուր բան չունեին հայկական հանրապետության հետ և հավատարիմ էին թուրքական հայրենիքին։

Իսկ թուրքական զորքերը նույն պահին, հարձակումներ էին ձեռնարկում Երևանի շրջանում, փորձելով խորանալ դեպի երկրի խորքը, բայց ետ էին շպրտվում հայկական զորքերի կողմից։ Հուլիսին Էնվեր փաշան, հենվելով Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղու վրա գործող հայկական «բանդաների» անհանգիստ վարքագծի փաստի վրա, հրամայեց օկուպացնել ամբողջ Հայաստանը։ Նրա պլանը չիրականացավ, քանի որ միջամտած Գերմանիան «անհրաժեշտ էր համարում Հայաստանի անկախության ֆիկցիայի պահպանումը» (58, թ. 12)։

Կ. Պոլսում թուրքական կառավարությունն իբր ընդառաջեց հայկական պատրիարքությանը և վերջինս օգոստոսի 1-ի հեռագրով հայտնում էր Երևան՝ իր կառավարությանը, թե հայ գաղթականները կարող էին վերադառնալ Ալեքսանդրապոլի և Բաթումի շրջանները (58, թ. 112)։ Բայց դա անհիմն լավատեսություն էր։

Ահա թե ինչ էր գրում Ախալքալաքի հայրենակցական վարչությունը 1918-ի օգոստոսի 22-ին Թիֆլիսից «Կ. Պոլսի համաժողովի բարձրապատիվ անդամներին». նախ ցույց էր տրվում, որ հազարավոր հայեր սպանվեցին, երբ Բաթումի դաշնագրով Ախալքալաքի գավառը հանձնվեց Տաճկաստանին։ Թուրքերը կողոպտեցին մի քանի միլիոն փութ հացահատիկ, հազարավոր փթերով կաթնամթերք, հազարավոր փեթակներ, անասուններ և այլն։ Մոտավոր հաշիվներով երիտթուրքական իշխանությունները յուրացրել էին մեկ միլիարդ ռուբլուց ոչ պակաս արժեք ունեցող հարստություն։ Բակուրիանում և Ծալկայում ապաստանած 70 հազար հայ

փախստականների համար ստեղծվել էր աղետալի վիճակ։ Նրանցից օրական մեռնում էր 220—250 հոգի։ Փաստաթղթի հեղինակները փորձում էին երիտթուրքական բռնակալներին համոզել, որ 76 տոկոս հայ բնակչություն ունեցող, «Ախալքալաքի միացումը Տաճկաստանին բռնության հետևանք է, չհամապատասխանող գավառի բնակչության ճնշող մեծամասնության կամքի արտահայտությանը»։ Այնուհետև, դիմումի վերջում ասվում էր, որ «Ախալքալաքի գավառի հայ բնակչությունը կամենում է Տաճկաստանից բաժանվել և իր բախտը կապել Հայաստանի հանրապետության բախտի հետ» (23, թ. 186—187)։

1918-ի օգոստոսի 20-ին Էնվեր փաշան մեկուկես ժամանոց հանդիպում ունեցավ հայոց պատրիարքության հետ։ Նա ասում էր, որ չի վստահում Հայաստանին, որովհետև թուրքերի նահանջի դեպքում հայերը խորանալու են իրենց տերիտորիան։ Նա պահանջում էր հայերից դաշինք կնքել Թուրքիայի հետ և հրաժարվել չեզոքությունից, կռվել Թուրքիայի թշնամիների դեմ, պահպանել երկաթուղիները, թուրքերի թիկունքը։ Էնվերը հայտարարեց, որ այդպիսի դաշինք չկնքելու դեպքում չի քննարկելու Հայաստանի որևէ տերիտորիալ հարց, չի ընդառաջելու հայոց գաղթականության վերադարձին իրենց տները (58, թ. 19)։

Էնվերը ձգտում էր Հայաստանը ենթարկել իր ստրատեգիական պլաններին, այն ծառայեցնել թուրքական նվաճողական քաղաքականությանը։ Հայոց պատրիարքությունը ստիպված համաձայնվում էր թուրքական ճնշման, ընդհանուր երաշխիք ստանալով հայկական տերիտորիաները վերստանալու շուրջը։

Հետագա բանակցությունները պետք է շարունակվեին Թուրքիայի արտաքին գործերի մինիստրի հետ։ Երկու և կես ամիս կտրված սեփական կառավարությունից, իրազեկ չլինելով միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխություններին, Սովետական Ռուսաստանի միջազգային դրությանը, Անգլիայի, Ֆրանսիայի քաղաքականության հանգամանքներին, հայոց պատրիարքությունը Կ. Պոլսում կարող էր գործել միայն կուրորեն, երեկվա չափանիշներով։ Նեսիմի բեյի հետ հանդիպումը տեղի ունեցավ միայն 10 օր

հետ։ Թուրքերի անվստահությունն ավելի մեծացավ։ Հայերի ակտիվ հակաթուրքական դիրքը հեղափոխական Բաքվում, Անդրանիկի գործողությունները, Պողոս Նուբարի քայլերը Փարիզում, հայոց ներկայացուցիչների (Օհանջանյան, Զուրաբյան) դիվանագիտական աշխատանքը Բեռլինում, ռուսական համակրական դրսևորումները, Բաթումի պայմանագիրը չվավերացնելը հայոց պառլամենտում՝ երիտթուրքական մարդասպանների համար պարզ էին դարձնում հայոց հասարակական ուժերի հակաթուրքական կողմնորոշման փաստը։ Այնուամենայնիվ, 1918-ի սեպտեմբերի 1-ին հայոց պատվիրակությունը Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Նեսիմի բեյին հայտարարեց, որ համաձայն է Էնվեր փաշայի առաջարկությանը Թուրքիայի և Հայաստանի միջև չեզոքության ու բարեկամության համաձայնագիր կնքելու մասին։ Հայտարարության մեջ դրվում էին տերիտորիալ հարցեր։ Պատվիրակությունը օսմանյան կառավարությունից շոգենավ էր խնդրում Կովկաս գնալու և վերադառնալու համար (58, թ. 20)։

Թալեաթը ճանապարհ ընկավ Բեռլին և Վիեննա սեպտեմբերի 3-ին։ Մեկնելուց առաջ նա ընդունեց Հայաստանի պատվիրակությանը և ծանոթացավ նրա տեսակետին հայ-թուրքական պայմանագիր կնքելու հարցում։ Նա կեղծավորություն էր անում, հայերին անվանում էր «իրենց խոսքի տեր ապետներ», ասում էր, թե հավատում է նրանց լոյալությանը օսմանյան պետության նկատմամբ։ Հայոց պատվիրակությունը շոյված էր և այդ հանդիպումից, և «Վաթան» թերթի (3. 9. 1918) «հայանպաստ» առաջնորդող հոդվածից (58, թ. 20—21)։

1918-ի սեպտեմբերին Կ. Պոլսի «Սաբահ» թերթը տպագրեց Միհրան էֆենդու զրույցը Կ. Պոլսում գումարվելիք կոնֆերանսի ժամանակ հայոց պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանի հետ։ Վերջինս շեշտում էր լոկ կովկասյան հողերի ճակատագրով զբաղվելու իր առաքելությունը։ Ընդ որում նա ասում էր, որ կովկասյան հողերի խնդիրը կարող է կարգավորվել միայն Թուրքիայի բարյացակամ վերաբերմունքի միջոցով։ «Եվրոպական տերությունների բարեկամությունը և հովանավորությունը մեզ շատ թանկ են նստել.

նրանցից այլևս ոչ մի օգուտ չենք սպասում»։ Նա թուրքական կողմի «ներողամտությունն ու բարյացակամությունն էր» հայցում (13, թ. 238—239)։ Դրան զուգընթաց Հայաստանի Հանրապետությունը փորձում էր ժամանակ շահել, սպասել պատերազմի վախճանին։ Երևանում տեղի էին ունենում երկար-բարակ խորհրդակցություններ (58, թ. 34)։

Սեպտեմբերի 12-ին, Ալ. Խատիսովը Կ. Պոլսում մի շրջաբերական նամակ էր հղել գերմանական կոալիցիայի անդամ պետություններին, պահանջելով ճանաչել Հայաստանի անկախությունը։ Այդ նամակում հիշատակվում էր Հայաստանի «անկախությունը» ճանաչած Բաթումի պայմանագիրը։ Ոչ մի կասկած չկար, որ շրջաբերական-նամակի ստեղծումը թուրքական կառավարության հրահրմամբ էր կատարվել։

Կ. Պոլսում 1918-ի սեպտեմբերի 28-ին հայոց պատվիրակությունը փակ նիստ էր գումարել։ Վիճաբանությունների ընթացքում Մ. Պապաջանովն առաջարկեց դիմել Երևան, Հայաստանի Հանրապետության կառավարությանը, նպատակահարմար գտնելով մի հեղինակավոր պատվիրակություն ուղարկել Մոսկվա՝ «բոլշևիկյան կառավարության հետ հարաբերություններ հաստատելու համար» (28. թ. 94).

□

Ռուսաստանի հզորության անկումը յուրովի էին ընկալում պանթուրքիստական և պանիսլամական գաղափարներով ու ծրագրերով տոգորված մահմեդական քաղաքական կազմակերպություններն ու կուսակցությունները։ Նրանք Թուրքիայի հովանու տակ մեծ թուրքական պետության հեռանկարներն էին տեսնում։ Միջերկրականից և Սև ծովից մինչև Անդրկասպիա և Թուրքմենստան ընկած տարածքը Ռուսաստանի տիրապետությունից ազատելու մասին նրանք պլաններ էին մշակում։ «Կասպից ծովը պետք է դառնա մեր ներքին լիճը»,— այսպես էր ձևակերպել այդ գաղափարը պանթուրքիստական ձգտումների ջատագովներից մեկը՝ ադրբեջանցի Ռասուլ Զադեն (17, թթ. 8—25)։

Պանթուրքիզմի ռասիստական տեսությունն այդ պահին ստացավ իր գործնական սանձարձակ տարածումն ու զարգացումը։ Այս պլանների իրագործումը հնարավոր էր համար-

վում հաղթական թուրքական ավինների միջոցով։ Ահա թե ինչու մահմեդական ազգայնամոլ գործիչների և նրանց հետևից ընթացողների գլխավոր միտքը պտտվում էր Անդրկովկասից ռուսներին դուրս հանելու, հայերին չեզոքացնելու շուրջը, քանի որ վերջիններիս դիմադրությունը հաղթահարելու միջոցով հեշտանալու էր թուրքերի մուտքը Անդրկովկաս (21, թթ. 8—25)։ Մուսավաթական, խանական, բեկական ուժերը փակեցին Բաքու—Թիֆլիս երկաթուղագիծը և կտրեցին երկաթուղային կապը Ռուսաստանի հետ (Շամխորի արյունոտ դեպքերը)։ Հետո դադարեցվեց երկաթուղային շարժումը Բաքու—Գրոզնի գծի վրա։ Տրապիզոնի և Բաթումի բանակցությունների ժամանակ ոչ մի կասկած չմնաց, որ «մուսավաթական կուսակցությունը «Միություն և առաջադիմություն» կուսակցության ադրբեջանական ֆիլիալն էր» (56, էջ 116)։ Մուսավաթական կառավարությունը «արդարացնում էր տաճիկների գալուստը հենց նրանով, որ թուրք բեկությունը կարող էր որբանալ բոլորովին, եթե դրսի ճնշիչ ուժեր չլինեին» (55, թ. 10—11)։ Մուսավաթը խոշոր մուսուլման հողատերերի, խաների, բեկերի, մոլլաների, բժիշկների ու փաստաբանների ազգայնական կուսակցություն էր։ 1918-ին այս կուսակցությունն ուզում էր օգտվել ստեղծված դրությունից և Ելիզավետպոլի նահանգը միացնել Թուրքիային։ Մուսավաթի դեպուտատները տեղերում զբաղված էին Ադրբեջանի միացումը Թուրքիայի հետ ապահովելու գործնական խնդիրներով (59, էջ 301)։ Մուսավաթը Թուրքիայի հետ միավորվելու լայն ագիտացիա էր մղում։ Ակտիվորեն գործում էր մուսուլմանական հոգևորականությունը (59, էջ 303)։ Ադրբեջանը Թուրքիային կցելու գործի գլուխ կանգնած էին սեյմի մուսավաթ անդամները։ Սեյմի անդամ Սուլթանովը թուրք սպայի համազգեստով դես ու դեն էր նետվում, հանդես գալիս Թուրքիայի գիրկն ընկնելու կոչով։ Սեյմի նիստերի դահլիճից երկու քայլի վրա, Թիֆլիսում, փոխարքայի նախկին պալատում, մուսավաթականներն իրենց ֆրակցիայի սենյակում հանդիպումներ էին ունենում ծպտյալ թուրք էմիսարների հետ։ Սրանց մեջ էր Պարսկաստանի վրայով բանակցությունների համար Թիֆլիս անցած Էնվեր փաշայի եղբայրը (59, էջ 303)։

Դեպքերին մասնակից Մելիք-Կարակոզովը հավաստում է, որ «մուսավաթականները մշտապես քայքայիչ աշխատանք էին կատարում, ճանապարհ հարթելով թուրքական զորքերին և դավաճանաբար էին իրենց պահում Տրապիզոնում և Բաթումում տեղի ունեցած հաշտարար բանակցությունների ժամանակ» (51, էջ 10)։

Մինչ կսկսվեր թուրքական կանոնավոր բանակի հարձակումը դեպի Անդրկովկասի խորքը, թիկունքում արդեն սկսվել էին հարձակումները հայոց գյուղերի վրա։ Սա խիստ բացասաբար էր ազդում ռազմաճակատի զորամասերի վրա։ Հայ զինվորը մտածում էր, որ թիկունքում սպանում են իր կնոջն ու զավակներին, ոչնչացնում հարազատ օջախը։ Գերմանացիների կողմից կաշառված ու թուրք սպաների կողմից ղեկավարվող մահմեդական հրոսակները մի իսկական պատերազմ էին սկսել Դավալուի ու Բաշ-Նորաշենի, Շարուրի և Իգդիրի, Նախիջևանի և Արազդայանի հայկական գյուղերի դեմ։ Երևանի նահանգի և Կարսի մարզի բոլոր շրջաններից չէին դադարում լուրերը բանակի թիկունքի վրա, հայկական գյուղերի վրա մուսուլմանական հրոսակների հարձակումների մասին (17, թթ. 8—25)։

Թուրքական ահազանգով թիկունքն սկսեցին ավերել Շուշիի, Ելիզավետպոլի, Զանգեզուրի, Շեմախիի, Նուխվա գավառներում, Ջարաթալայի օկրուգում, Թիֆլիսի նահանգի Ախալցխայի և Ախալքալաքի, Բորչալուի գավառներում։ Այս շրջանների բնակիչներն իրենց նամակ-բողոքներով խուճապ էին առաջացնում, բացասական ազդեցություն թողնում ճակատի վրա (17, թթ. 8—25)։

Ահա թե ինչպես է նկարագրել այդ դեպքերը Գ. Ղարաջյանը. «Մուսավաթիստների և տաճիկ ագենտների պրովոկացիոն գործունեության շնորհիվ և նրանց ղեկավարությամբ թուրք անգիտակից և խավար զինված մասսաները սկսեցին տակնուվրա անել երկիրը, թալանել ու կոտորել, երկաթուղիները ջարդել, ճանապարհները ոչնչացնել, կամուրջները քանդել և այլն» (24, էջ 26—27)։

1918-ի գարնանը, հայոց պատվիրակների հետ հանդիպումների ժամանակ թուրք դիվանագետներն ու զինվորականները մշտապես կրկնում էին, թե թուրքերը «ոչ թե կով-

կաս, այլ ուրիշ կողմ պետք է գնան» (31, թ. 9)։ Տրապիզոնում թուրքական պատվիրակության նախագահը սպառնում էր. «Եթե հայերը չկատարեն իրենց պահանջները, ապա ռուսահայերը կենթարկվեն նույն բանին՝ կոտորածին, ինչ որ տաճկահայերը» (31, թ. 11)։

Ստ. Շահումյանը, Պ. Ջափարիձեն, Գ. Կորգանովը և ուրիշներ 1918-ի հունիսի 1-ին Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետի անունից դիմեցին Անդրկովկասի բոլոր բանվորներին և գյուղացիներին, կոչ անելով հավատ չընծայել «այդ ստախոսներին՝ մուսավաթականներին և մենշևիկներին, որոնք հավատացնում են ձեզ, թե թուրքական զորքերին Բաքու են բերում մուսուլմանական գյուղացիությանը պաշտպանելու համար»։ «Թուրքական տիրապետությունն օգտակար կլինի միայն կալվածատերերի համար...», «Թող կորչի թուրքական լուծը, կեցցե միասնությունը հեղափոխական Ռուսաստանի հետ»,— ասված էր կոչում (10, էջ 437—438)։

1918-ի օգոստոսի 31-ին Երևանում Հայաստանի հանրապետության կառավարության կազմակերպած ընդունելության ժամանակ Խալիլ փաշան բացորոշ հայտարարում էր, որ թուրքերի իդեալն է վերամիավորվել հին հայրենիքի՝ Թուրանի հետ և ձգտում էին վերացնել այդ նպատակի իրագործման ճանապարհին եղած բոլոր խոչընդոտները (22, թթ. 44—48)։

Թուրքական բանակը Բաքվի ճանապարհին տեղական մահմեդական խուժանի հետ միասին «կողոպտեցին և կոտորեցին Նուխու, Արեշի և Գյոկչայի գավառների համարյա ամբողջ հայ բնակչությունը, թվով մի քանի տասնյակ հազար մարդ։ Այդ կոտորածից մազապուրծ մարդկանց խմբերը Վրաստանի սահմաններից ներս չթողնվեցին և նրանցից շատերը զոհվեցին թաթարական (իմա՝ խանական-բեկական) սրից»։ Այսպես է նկարագրում ականատեսը անցուդարձը Անդրկովկասի այդ մասում թուրքական ներխուժման պահին, (ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թթ. 16—28)։

1918-ի աշնանը թուրքական կանոնավոր բանակի երկու դիվիզիաներ՝ 5-րդը և 15-րդը, զինվորական հագուստները փոխելով միացել էին ադրբեջանական խաներին ու բեկերին և նրանց հետ ձեռք ձեռքի տված ավերում ու կողոպտում էին հայոց գյուղերը, ավազակային կռիվներ մղելով քրիստոնյաների դեմ (67a, էջ 3)։ Սրանք էին, որ խանգարեցին Անդրանիկի ջոկատին Ղարաբաղի վրայով անցնելուն ու Ստ. Շահումյանին օգնության հասնելուն։ Ոգևորված թուրքական զորքերի առաջխաղացումից, 1918-ի օգոստոսին մուսավաթական կառավարությունը պահանջում էր հայկական կառավարությունից միջոցներ ձեռք առնել Անդրանիկի դեմ (58, թ. 167—168)։

Հայությունը մի փուշ էր համաթուրքականության կողում խրված։

Մի՞թե երիտթուրքերի և մուսավաթականների կազմակերպածը չէր 1918-ի սեպտեմբերի Բաքվի հայերի կոտորածը։ Հետագայում թուրքական վանդալության որոշ փաստաբաններ փորձում էին հայերի նկատմամբ երիտթուրքական բանակի հրամանատարության կատաղությունը բացատրել այն բանով, որ օգոստոսի 17-ի ճակատամարտից հետո Բաքուն հանձնելու պահանջով թուրքերի տված վերջնագրին Հայ ազգային խորհուրդը պատասխանել էր մերժումով։ «Գրիչը առաջ չերթար նկարագրելու այն սարսափները, որ տեղի ունեցան Բաքվի մեջ քաղաքի գրավումից հետո»,— գրում է ականատեսը։ Երեք օր ու գիշեր թուրք ասկյարների խմբերն իրենց երիտթուրքական սպաների գլխավորությամբ հարձակվեցին հայերի տների վրա, կողոպտեցին ունեցվածքը, տանջամահ արեցին հազարավոր մարդկանց, բռնաբարեցին հայ աղջիկներին ու կանանց իրենց ամուսինների ու ծնողների ներկայությամբ։ Բաքվի փողոցները լիքն էին խոշտանգված մարդկանց դիակներով։ Ընդհանուր առմամբ 30 հազար հայ կոտորվեց։ Մ. Ա. Բոլինովսկայա անունով վկան 1918-ի նոյեմբերի 22-ին Ռոստովից գրած նամակում պարզում էր Բաքվում իր տեսած սահմռկեցուցիչ պատկերները. վայրագ գազանների բռնություններից ազատվելու համար նավերի վրայից ծովը նետվող, բարձր տների պատուհաններից փողոց նետվող դժբախտ կանայք, խողխողված երեխաներ, արյան բաղնիքներ և այլն (5, էջ 138—142)։

Բաքվում կատարված արյունոտ դեպքերը ոմանք փորձում են հեռացնել թուրքական կանոնավոր բանակից, մեղքը բարդում են միայն քաղաքի մահմեդական խուժանի վրա։ Այդպես են վարվում թուրք պատմաբանները, այդպես են

փորձում համոզել որոշ եվրոպական ու ամերիկյան հեղինակներ (71, էջ 265—266): Սակայն փաստը մնում է փաստ, որ Բաքվի հակահայկական ամբողջ գործողության ռեժիսորը Խալիլ, Նուրի փաշաներն էին: Բաքվի հայության կոտորածը կազմակերպած Նուրի փաշան քեֆեր ու օրգիաներ էր կազմակերպում Մետրոպոլ հյուրանոցում, նաև քաղաքից դուրս, այգիների մեջ (66, էջ 312):

«Տաճիկները Շուշի հասնելուց հետո իսկույն ձերբակալել են տեղական հայ ինտելիգենտներին»: Նրանք զայրացել էին, որ Շուշիում հայերը ռուսական դրոշակ էին պարզել (55, թ. 8):

Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը 1918-ի սեպտեմբերի 20-ին թուրքական արտաքին գործերի մինիստրությանը բողոք հայտնեց Բաքուն գրավելու առթիվ: «Այժմ, երբ Բաքու քաղաքն արդեն գրավված է և թուրքական զորքերը գտնվում են բուն քաղաքում, երբ անպաշտպան բնակչությունը և ամբողջ քաղաքը թուրքական զորքերի և նրանց միացած թաթարական բանդաների կողմից մի քանի օր՝ շարունակ ենթարկվում են ավերածության ու կողոպուտի բոլոր սարսափներին, թուրքական ներկայացուցիչների վկայակոչումը, թե իբր Բաքվի վրա կատարված հարձակմանը մասնակցել են միայն տեղական ավազակները, հանդիսանում է Թուրքիայի բուն գործողությունների անհաջող քողարկումը» (10, էջ 440—441):

Բաքվի հայ բնակչության դեմ երիտթուրքերի կազմակերպած չարագործության դեմ բողոքեց և Թիֆլիսի վրացական խորհուրդը և Թիֆլիսի համալսարանի կոլեկտիվը:

Երիտթուրքական ինտերվենտները փորձում էին իրենց ենթարկել Ղարաբաղը: Նուրի փաշան դիմում էր կեղծավորության ու սպառնալիքի: Նա մեկ ասում էր, թե անցյալի թշնամությունը իբր հանձնում է «ալլահի դատաստանին», մեկ սպառնում, թե Ղարաբաղի հետ վարվելու էր այնպես, ինչպես Բաքվի հայության հետ: Ղարաբաղի գյուղացիական պատգամավորության երկրորդ, երրորդ համագումարները (1918-ի սեպտեմբեր) մերժեցին թուրքական 5-րդ դիվիզիայի հրամանատար Ջամալ Ջավադ բեյի սեպտեմբերի 17-ի վերջնագիրը Շուշվա ճանապարհն ազատելու մասին (35):

Ղարաբաղի հայ աշխատավոր գյուղացիությունը բոլշևիկների կոչով զինված պայքարի դիմեց ընդդեմ թուրք ինտերվենտների և թուրքերին չհաջողվեց գրավել Ղարաբաղը: Շուշին անձնատուր եղավ Ղարաբաղի «Հայոց ազգային խորհրդի» անճարակության հետևանքով (1918-ի հոկտեմբերի 8) (35, էջ 192):

Սակայն զինված պարտիզանական կռիվները թուրք հրոսակների դեմ շարունակվեցին մինչև 1918-ի դեկտեմբերը: 1918-ի հոկտեմբերի 12-ին Օրջոնիկիձեն հաղորդում էր Վ. Ի. Լենինին, որ Հայաստանում տիրող դրությունը ողբերգական է: Ղարաբաղ մտած թուրքական զորքերը մորթել են ժողովրդի կեսին: Զանգեզուրի և Շուշիի գավառների բնակչությունը կատաղի դիմադրություն է ցույց տալիս: «Հայ ժողովուրդը Սովետական Ռուսաստանից սպասում է օգնություն» (53, էջ 140):

1918-ին թուրքական ներխուժման ժամանակ թուրքական սպայի վերնազգեստով հակահայկական խժդժություններին մասնակցած, պանթուրքիստական հովերով տարված Սուլթանովը 1919-ի ամռանը մուսավաթական կառավարության կողմից նշանակվել էր Ղարաբաղի նահանգապետ: Նա իր վայրենի գործողություններով առաջացրել էր հայ բնակչության անհուն ատելությունը (58, թ. 191):

Սուլթան բեկ Սուլթանովը հին պանթուրքիստ էր: Նա կրթությամբ բժիշկ էր, բայց երբեք չպարեց իր մասնագիտությամբ վաստակելով: Նա չեչոտ երես ուներ և մեկ աչք: 1915-ին որպես Բաքվի մահմեդական բարեգործական ընկերության նախագահ ռուս-թուրքական ռազմաճակատում մահմեդական գաղթականներին օգնելու պատրվակով լրտեսություն էր անում հօգուտ թուրքերի: Նրան ձերբակալեցին որպես թուրքական գործակալ և բանտարկեցին Բաքվում: 1917-ին Անդրկովկասյան սեյմի անդամ դարձած Սուլթանովը զանազան թոփչիբաշևների, ռասուլզադեների հետ ձեռք ձեռքի տված երկրամասը Ռուսաստանից անջատելու, այն Թուրքիային հանձնելու վրա էր աշխատում:

1918-ի մայիսին Սուլթանովը Կ. Պոլսում էր, էնվերի ու՝ Թալեաթի հյուրը, նրանց համոզում էր առաջխաղացումն արագացնել, գրավել ամբողջ Հայաստանը, հետո նաև Բաքուն: Հետո Սուլթանովը Ղարաբաղի նահանգապետն էր, անգլիացիների վստահելի անձը:

1919-ի մայիսին Շուշիում, Խանքենդում և այլ վայրերում

ջարդված հայերի թիվն անցնում էր 1000-ից: Մի շարք գյուղեր հանգված էին և այրված: 1919-ի նոյեմբերին մի նոր ջարդ կազմակերպվեց Շուշիում: Քաղաքն այրվեց: Սպանված հայերի թիվը 6000—7000 էր:

Կ. Պոլսի «Վաքըթ» թերթում 1918-ի սեպտեմբերի 3-ին տպագրված «Մեր քաղաքականությունը Կովկասում և հայերը» հոդվածում Ահմեդ Էմին բեյը գրում էր, թե հայերն արդեն եվրոպական տերություններից սպասելիք չպետք է ունենան և թե նրանց միակ հովանավորը լինելու է Թուրքիան։ Հոդվածագիրն արտահայտում էր երիտթուրքերի պլանները, գրելով, թե Հայաստանը մի բուֆերային պետություն պետք է լինի Ռուսաստանի և Թուրքիայի միջև և ծառայի վերջինիս ռազմաքաղաքական նպատակներին (13, թթ. 238—239)։

Բաքուն գրավելուց հետո, սեպտեմբերի 23-ին իր եղբայր Նուրի փաշային հղած հեռագրով Էնվերն առաջարկում էր Ադրբեջանի ազգային ժողով գումարել, կիրառել կառավարման սուլթանական սիստեմ, որից հետո հնարավոր է նաև «ընտրել սուլթան»։ Ավելի ուշ, 1918-ի հոկտեմբերի 8-ին, Խալիլ փաշային (այդ պահին կովկասյան բանակի հրամանատարն էր) հղած մի հեռագրում նա, հայտնելով, թե 700 հազար լիրա է ուղարկում, միաժամանակ ցանկություն է հայտնում «ընդմիշտ Ադրբեջան տեղափոխվելու և այնտեղ հաստատվելու մասին»։ Խալիլը նրա հարցադրմանը դրական պատասխան չի տալիս, կասկած է հայտնում այն մասին, թե Ադրբեջանի ժողովուրդը իրադրության փոխվելու դեպքում կուզե՞ր արդյոք մնալ թուրքական տիրապետության ներքո։ Թուրք պատմաբան Սինա Ակշինը Յուսուֆ Հիքմեթ Բայուրի «XX դարում պատմության և համաշխարհային քաղաքականության վրա թուրքիզմի թողած ազդեցությունը» (Անկարա, 1974), Շևքեթ Այդեմիրի «Էնվեր փաշա» գրքերի փաստերի հիման վրա ցույց է տալիս, որ Էնվերը պատրաստվում էր իրեն հռչակել Ադրբեջանի սուլթան (69, էջ 294)։

Հիրավի, բացահայտ բան էր Թուրքիա—Ադրբեջան առանցքի ստեղծման գործնական ծրագրի առկայությունը։ Այս բանը հաստատում է Մուստաֆա Քեմալը։ Նա գրում է, որ Էնվերն ուզում էր Ադրբեջանի, Դաղստանի և Հայաստանի

հիմքի վրա ստեղծել իր նոր իշխանապետությունը։ Նրան այս խնդրում օգնելու էր Նուրի փաշան (48, էջ 265)։

Իսկ այսօրվա թուրք կեղծարարաններն ընդհանրապես շըրջանցում են 1918-ին իրենց նախորդների կատարած հակասովետական ինտերվենցիայի փաստը։ Ի՞նչ գործ ունեին թուրք հրոսակ ասկյարները Բաքվում, Երևանի մատույցներում, Գանձակում, Ղարաբաղում։ Այդ ինչո՞ւ այսօրվա հետազոտողներից, երիտասարդ սերնդից թուրք իշխանավորները թաքցնում են Անդրկովկասում կատարված չարագործությունները, Շամխորում ռուս զինվորների զանգվածային խողխողման փաստը։

Մինչև 1918-ի հոկտեմբերի 30-ը՝ Թուրքիայի պարտությունը և Մուդրոսի զինադադարը (Անտանտի և Թուրքիայի միջև) Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր երիտթուրքական կառավարողների գերիշխանության տակ։

Միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունն էր օգնության ձեռք մեկնում հայ ժողովրդին, ելք ցույց տալիս նրա համար ստեղծված անելանելի վիճակից:

Թուրքիայի արտաքին գործերի մինիստրությանը 1918-ի սեպտեմբերի 20-ին հղած իր նոտայում Սովետական Ռուսաստանի արտգործժողկոմ Չիչերինը ցույց էր տալիս թուրքական իշխանությունների կողմից Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերում կիրառված բռնություններն ու կողոպուտները։ Նա շեշտում էր, որ խախտված է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որ թուրքական կանոնավոր զորքերը, դաշինք կապած ավազակային բանդաների հետ գրավում են սովետական հանրապետության տերիտորիան, քաղաքներն ու գյուղերը ենթարկում են ավերման ու կողոպուտի, քրիստոնյա բնակչությանը, չբացառելով կանանց ու երեխաներին, գնդակոծում են կամ ենթարկում ամեն տեսակի բռնությունների»։ Նա չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը (10, էջ 439—441)։

1918-ի սեպտեմբերի 26-ին Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Իոֆֆեն Բեռլինում Թալեաթից պահանջում էր «անհապաղ ետ քաշվել մինչև Բրեստով հաստատված սահմանները» այլապես սպառնում էր խզել դիվանագիտական և խաղաղ հարաբերությունները։ Երբ Թալեաթը ստիպված

համաձայնվում է, պայմանով, որ Հայաստանի երկաթուղիների վրա թուրքական հսկողություն լինի, Իոֆֆեն կտրուկ կերպով մերժում է դա, հայտարարելով, որ քանի դեռ «թեկուզ թուրքական մի զինվոր կա ռուսական տերիտորիայում», Բրեստի պայմանագիրը խախտված կհամարվի: Երբ Թալեաթը շնականորեն հիշատակում է Հայաստանի «անկախության» մասին (ո՞վ է խոսում), սովետական ներկայացուցիչը նորից պնդում է, որ այդ մասին խոսք լինել չի կարող, քանի դեռ «թուրքական ջոկատները և վարչությունը չեն մաքրել ապօրինաբար գրավված տերիտորիաները» (26, թ. 67): Իոֆֆեն 1918-ի հոկտեմբերին հայտարարում էր «հայկական պատվիրակությանը» (դաշնակ Հ. Օհանջանյան, մենշևիկ-ինտերնացիոնալիստ Արշակ Զուրաբով). «Ամենաբնականն է, որ դուք հիմա մեզ հետ միասին դուրս գաք Տաճկաստանի դեմ, հայտարարեք, որ դուք Ռուսաստանի հետ եք և նրա հետ միասին դնում եք այս և այս պահանջները» (26, թ. 84—85): Մի բան, որ երբեք չարին դաշնակցության պարագլուխները՝ թուրքական պետականության հարձակողական հարվածներին ենթարկելով կղզիացած հայ ժողովրդին:

1918-ի նոյեմբերին դաշնակցական ազդեցիկ գործիչներ Արամ Մանուկյանը, Քաջազնունին և Սահակյանը խալիլ փաշայի և գերմանական ներկայացուցիչների հետ քննարկում էին Անդրանիկի դեմ «խառը» զորամաս ուղարկելու հարցը, համոզում էին նրանց, որ եթե նա «ոտք դնի Հայաստանի տերիտորիան, պետք է զինաթափվի և զինվորական դատի հանձնվի (15, թթ. 44—48, 102—107): Անդրանիկն ստիպված էր հեռանալ հայրենի երկրից:

Մինչև 1918-ի դեկտեմբեր թուրքական զորքերը շարունակում էին մնալ Հայաստանի Հանրապետության տերիտորիայում, որի տնօրեններին այդպես էլ չհաջողվեց ճշտել իրենց երկրի վերջնական սահմաններն ու պետական հարաբերությունները սուլթանական Թուրքիայի հետ: Արխիվային փաստաթղթերից հայտնի են այն չարագործությունները, կողոպուտը, զանգվածային սպանությունները, որ թուրքերը կազմակերպեցին հայ ժողովրդի նկատմամբ այդ ամիսներին:

«Կառավարության լրաբերում» տպագրված կոչում նկա-

րագրված էին սովի կործանարար չափերը. «Պատերի տակ ու փողոցներում թափառող հազարավոր որբերը, հյուծված ու անճար՝ նրանց կմախքները դեգերում են Երևանի մայթերի վրա, էջմիածնի դաշտերում, Նոր Բայազետի, Դիլիջանի գյուղերում:... Թառամում է խոշորագույն մասը մեր մատաղ սերնդի, մեռնում է ապագան մեր հայրենիքի...» (8, № 10, 8.10.1918): «Բծավոր տիֆը Երևանում, Էջմիածնում և Քանաքեռում ստացել է այնպիսի ծավալ, որ պետք է նկատվի իբրև պետական մեծ աղետ» (8, № 1. 10.1.1919): 1918-ի հունվարի 16-ին Սամսոն Հարությունյանը (պարենավորման նախարարի պաշտոնակատար) կառավարության նիստում տեղեկացնում էր «երկրի կատաստրոֆիկ վիճակի մասին» (8, № 5, 31.1.1919): 1919-ի ձմեռը «մահացության դեպքերը զարհուրելի չափերի էին հասել Երևանում, որը երեխաների համար դարձել էր սպանդանոց»: Սովամահությունից ու հիվանդություններից այստեղ օրական 2000 մարդ էր մահանում (55, թ. 26, 57):

1918-ի հոկտեմբերի 7-ին Թալեաթի գլխավորած կառավարությունը հրաժարական տվեց: Կ. Պոլսում իշխանության գլուխ կարգվեցին մարդիկ, որոնք պետք է պակաս վնասով լեզու գտնեին Անտանտի տերությունների հետ:

էնվեր փաշան Թուրքիայից փախել էր մի առագաստանավով, օրերով ալեկոծ ծովում թափառելուց հետո, ափ էր դուրս եկել Անապայում: Իսկ Թալեաթը, Ջեմալը ու մի շարք այլ դեմքեր սուզանավով փախել էին 1918-ի նոյեմբերի 2—3-ին Սևաստոպոլ և այնտեղից անցել Գերմանիա (37, էջ 21):

1918-ի հոկտեմբերի 30-ին թուրքական կառավարությունն Անտանտի երկրների հետ ստորագրեց Մուդրոսի զինադադարը, որի համաձայն 1918-ի նոյեմբերին թուրքերն իրենց զորքերը հանեցին Բաքվից, և անգլիացիները օկուպացրին քաղաքը:

Բեռլինում թուրքական դեսպան Ռիֆաթ փաշայի ներկայացրած արձանագրության նախագիծը նախատեսում էր Կովկասից թուրքական զորքերի դուրս բերումը մինչև Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանները: Բայց սրանում բացակայում էր թուրքերի կողմից էվակուացվող տերիտո-

րիաները անմիջականորեն սովետական իշխանություններին հանձնելու մասին կետը (1, հ. 44, էջ 539)։ 1918-ի հոկտեմբեր-նոյեմբերին օկուպանտները ձգձգում էին գրավված վայրերից իրենց զորքերի էվակուացիան, արգելքներ հարուցում գաղթականների վերադարձին։ Նրանց նպատակն էր ոչնչացնել գաղթականության մնացորդներին (14, թթ. 102, 124, 134)։

Այն պահին, երբ Անտանտի հաղթանակը կասկած չէր հարուցում, 1918-ի հոկտեմբերի սկզբին օսմանյան կառավարությունը նույնիսկ դիմեց հայկական պատվիրակությանը, խնդրելով իր վրա վերցնել միջնորդի դերը Թուրքիայի և Անտանտի տերությունների միջև (58, թ. 32)։ Սակայն օսմանյան կառավարությունն անմիջապես հանձնվելու միտք չուներ։ Թեև նա հայտարարում էր, թե վերականգնելու է Բրեստի պայմանագրով որոշված սահմանները, բայց շարունակում էր կառչել Բաթումի համաձայնագրի սահմանագծից։

1918-ի հոկտեմբերի 5-ին Երևանում հանդիպեցին օսմանյան բանակի արևելյան խմբի շտաբի պետ փոխգնդապետ Բասրի բեյը և հայկական դիվիզիայի շտաբի պետ գնդապետ Ձենկևիչը։ Մի արձանագրություն ստորագրվեց, որով թուրքական զորքերը հեռանում էին Հայաստանից (58, թ. 33)։

Օսմանյան զորքերը հեռանում էին՝ հայկական զորքերի կողմից այդ տարածքները գրավելու պայմանով։ Երկաթուղին, հեռագիրը, ինչպես նաև Ղարաքիլիսա—Ղազախ—Աղըստաֆա խճուղին հայկական զորքերը հսկելու էին մինչև թուրքական զորքերի տեղաշարժի ավարտը։ Թուրքական զորքի էվակուացիան սկսվելու էր հոկտեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը։ Սակայն այն սկսվեց միայն հոկտեմբերի 24-ին։ Թիֆլիսում օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցիչ Աբդուլ Քերիմ փաշան պաշտոնապես հայտնեց Արշ. Ջամալյանին, որ թուրքական զորքերը 6 շաբաթվա ընթացքում դատարկելու էին Կովկասի օկուպացված տերիտորիաները՝ համաձայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի։

Երիտթուրքերը սրում էին հայ-վրացական հարաբերությունները, բանսարկություններ սարքում Լոռու, Բորչալուի, Ախալքալաքի շուրջը։ Խալիլ փաշան 1918-ի հոկտեմբերին

Ջամալյանին հայտնում էր, որ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը դիմել էր Ստամբուլ, թուրքական օգնությունը խնդրելով Լոռին, Ղարաքիլիսան գրավելու համար, այն դեպքում, երբ 1918-ի հունիսին Ժորդանիան հայոց մինիստրներին ասում էր, թե ոչ մի պահանջախնդրություն չունեն Լոռվա նկատմամբ (58, թ. 37—38)։ Սակայն Վրաստանի մենշևիկյան կառավարողները խլում էին երկաթուղով անցնող ապրանքի 25 տոկոսը, ձգտում էին մեկուսացնել, կղզիացնել Հայաստանը (55, թ. 18, 26, 36)։ 1918-ի նոյեմբերին Հայաստանի հանրապետության կառավարությունը չի կարողանում պատվիրակություն ուղարկել Թիֆլիս, որովհետև գրնացք չուներ։ Եղած մի շոգեքարշն այդ պահին գտնվում էր Թիֆլիսում (58, թ. 48)։

□

Իմպերիալիստական Անտանտի ղեկավարները խոսքով «հայանպաստ» դիրք էին բռնել դեռ պատերազմի սկզբից։ Ժամանակ առ ժամանակ Լլոյդ Ջորջն ու Կլեմանսոն, Վիլսոնն ու Սոնինոն, մյուս մեծ ու փոքր պետական գործիչներն ու դիվանագետները չէին խորշում հայանպաստ հայտարարություններից։ Նրանք խոսքով խստագույնս դատապարտում էին երիտթուրքերին, բայց գործով, ինչպես ավելի բացորոշ դարձավ 1918-ին, 1919-ին, 1920-ին և հետո, նրանք ոչինչ չարեցին մահացու հարված ստացած հայ ժողովրդին օգնելու համար։

Ընթերցողին հիշեցնենք որոշ փաստեր, եղելություններ, ճշմարտություններ։

Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, բազմամյա գաղութատիրական փորձով զինված անգլիական դիվանագետներն ու արևելագետները, ռազմագետներն ու քաղաքագետները անմիջապես գործի անցան մշակելու Սովետական Ռուսաստանը Արևելքից մեկուսացնելու իրենց պլանները։ Տվյալ դեպքում, նրանց միտքն աշխատում էր Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև իրենց հլուհնազանդ բուֆերային պետություններ ստեղծելու, հեղափոխության ալիքի առջև պատվար դնելու շուրջը, փրկելու գա-

ղութներում և կիսագաղութներում անգլիական տիրապետության հիմքերը։ Այս բանը չեն թաքցնում իրենք իսկ անգլիական, ամերիկյան հեղինակները (63, էջ 390)։

Ժամանակին ֆոն Պապենն[1] է գրել, որ անգլիական գեներալ Ալենբին կարող էր մինչև վերջ հասցնել Պաղեստինյան գործողությունը և «Թուրքիային ծնկի բերել» արդեն 1917-ի նոյեմբերին (49, էջ 141)։ Բայց Անգլիան իր շահախնդիր նպատակներն էր հետապնդում և շահագրգռված էր զուտ գաղութատիրական նոր էքսպանսիայով։

1916-ի փետրվարի 28-ին Հայոց ազգային խորհրդի նիստում (Թիֆլիս) Ավ. Ահարոնյանը պատմելով Ֆրանսիա կատարած իր ուղևորության, ֆրանսիական պետական ու հասարակական գործիչների հետ ունեցած հանդիպումների մասին նշում էր, որ նրանք զրույցների ժամանակ ավելի շատ խոսում էին Սիրիայի, Կիլիկիայի մասին։ Նա համոզվել էր, որ Ֆրանսիայի համար հայկական հարցը դեռ լուծված չէ, որ ոչինչ չի արվում հայկական հարցի նկատմամբ հետաքրքրությունն այնտեղ բարձր պահելու» համար (30, թ. 39)։

Հիրավի, 1917-ի ապրիլի 2-ին Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը Սիրիայում և Պաղեստինում ֆրանսիական կոմիսար Պիկոյին (1916-ի հայտնի Սայքս-Պիկո, անգլո-ֆրանսիական պայմանագրերի հեղինակներից մեկը) տված իր հրահանգում հիշատակում էր, որ «Ֆրանսիան Անգլիայի հետ կնքած վերջին համաձայնագրով հատուկ իրավունքներ է հաստատել Հայաստանում» (58, թ. 93)։ Ֆրանսիական գաղութատիրությունը պակաս ընչաքաղց չէր, քան անգլիականը։

ԱՄՆ-ի կառավարությունը Գերմանիային պատերազմ հայտարարեց 1917-ի ապրիլի 6-ին, իսկ Թուրքիայի վրա ձեռք չբարձրացրեց։ 1917-ի փետրվարին ԱՄՆ-ի պետական քարտուղար Լանսինգը հանձնարարել էր Կ. Պոլսում դեսպան Էլքուսին հայտնել Էնվերին, որ ԱՄՆ-ի վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ բարեկամական է, նույնիսկ սրտալից և որ Թուրքիան կշահի և առավելությունների կհասնի, եթե

[1] Ֆրից ֆոն Պապենը 1917—1918 թթ. թուրքական 4-րդ բանակի շտաբի պետի համհարզն էր։

ԱՄՆ-ի հետ բարեկամական հարաբերություններ պահպանի (65)։ ԱՄՆ-ը 1917-ի դեկտեմբերի 22-ի հուշագրում հռչակում էր. «Մենք պետք է երաշխավորված ինքնավարություն ապահովենք հայերի համար ոչ միայն արդարությունից և մարդասիրությունից ելնելով, այլև վերահաստատելու Փոքր Ասիայի այն ժողովրդին, որն ընդունակ է խոչընդոտելու Թուրքիայի վրա գերմանացիների կողմից տնտեսական մենաշնորհ հաստատելուն» (67, էջ 43)։

ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը երիտթուրքերի «տգետ» «բանդան» Եվրոպայից քշելու անհրաժեշտությունը պայմանավորում էր հայերի կոտորածի փաստով։ Նա ասում էր, որ հայերը պետք է ստանան այն, «ինչ նրան պարտք է պատմությունը»։ Վիլսոնն ասում էր, թե «մահմեդականների առաջխաղացումը Ռուսաստանի խորքը հավասարազոր է բանդիտների կողմից թանկարժեք իրերի զավթման» և հույս էր հայտնում, որ նրանց չարագործությունների վրա շուտով սանձ կդրվի (58, թ. 90)։ Բայց դրանք հնչեցին որպես զրնգուն խոսքեր՝ առանց որոշակի գործնականության ու հետևանքների։ Մեկ տարի անց, 1918-ի նոյեմբերին նույն ամերիկյան դիվանագետները պնդում էին, որ հայերի ներկայացուցիչներին կարող են լսել խաղաղության կոնֆերանսում, բայց Հայաստանը չի կարող անգամ պետություն համարվել (67, էջ 363)։

1918-ի հունվարի 5-ին Լլոյդ Ջորջը հայտարարեց, որ Հայաստանը, Արաբիան, Սիրիան և Պաղեստինը պատերազմի ավարտից հետո կճանաչվեն որպես առանձին ազգային-պետական միավորներ (62, էջ 345)։

Անգլիայի և Ֆրանսիայի կառավարողները քանիցս հայտարարել էին, թե իրենց գլխավոր նպատակներից մեկը «թուրքերի արյունոտ լծից ճնշված ժողովուրդների ազատագրումն է»։ Իսկ 1918-ի սեպտեմբերի 21-ին ԱՄՆ-ի պետական քարտուղար Լանսինգը նույնպես գտնում էր, որ Հայաստանը պետք է անջատվի թուրքական պետականությունից և միջազգային հովանավորության տակ ստեղծի իր ինքնուրույն պետությունը (57, էջ VIII—IX)։ Ամերիկացի Ռ. Բեյկերը նկարագրում է, թե ինչպես մյուս կողմից Լլոյդ Ջորջը հմտորեն օգտագործեց մահմեդական աշխարհի քաղա-

քական տրամադրությունները Մեծ Բրիտանիայի աշխարհակալ ձգտումներին համապատասխան։ Նա չորսի խորհրդի նիստերի դահլիճ է հրավիրում Հնդկաստանի մահմեդական գործիչների մի ամբողջ խումբ, ազգային տարազներով, որոնք խանդավառ տոնով պահանջեցին հրաժարվել Թուրքիայի բաժանման ծրագրերից (39, էջ 224)։

1918-ի հուլիսի 11-ին Բալֆուրը պատասխանելով Ռամսեյ Մակդոնալդի հարցապնդմանը, համայնքների պալատում ասաց, որ «նորին մեծության կառավարությունը լուրջ համակրանքով և հիացմունքով հետևում է հայերի քաջարի դիմադրությանը, որոնք պաշտպանում էին իրենց ազատությունը և իրենց պատիվը։ Նա (կառավարությունը) անում է ամեն հնարավոր բան, որպեսզի օգնության հասնի նրանց։ Ինչ վերաբերում է Հայաստանի ապագային, ապա ես հարգարժան դեպուտատի ուշադրությունն եմ հրավիրում դաշնակից քաղաքական ղեկավար գործիչների հրապարակային հայտարարությունների վրա հօգուտ հարցի այնպիսի լուծման, որ նշեց պ. Մակդոնալդը» (58, թ. 90—91)։

1918-ի սեպտեմբերի 11-ին Լ. Ջորջը Մանչեստրում հայկական գաղութի ներկայացուցիչներին ասում էր, որ «Անգլիայի պատասխանատու ղեկավարները մտահոգված են ձեր նահատակ ժողովրդի առջև իրենց պատասխանատվությամբ»։ Իսկ հետո՞։ Հետո ոչ մի գործնական քայլ հօգուտ հայ ժողովրդի։ Անգլիական գաղութարարները միայն հաջողությամբ 1919-ի սկզբին կողոպտեցին Կարսի ամրոցի արժեքները։ 1918-ի հոկտեմբերի 3-ին լորդ Ռոբերտ Սեսիլը պաշտոնական նամակ էր հղում լորդ Բրայսին, ի պատասխան վերջինիս սեպտեմբերի 30-ի նամակի։ Ամփոփելով իր երկար նամակում «դաշնակիցների գործին» հայերի մատուցած ծառայությունները, Սեսիլը նշում էր չորս կետ, որ հայերը կարող էին հաշվել դաշնակիցների կողմից իրենց «ազատագրման» իրավունքների խարտիա. I. 1914-ի աշնանը Էրզրումի դաշնակցական համագումարում հայերը մերժեցին հանդես գալ ընդդեմ Ռուսաստանի, թեև թուրքերը նրանց ինքնավարություն էին խոստանում։ Նրանք ասացին, որ որպես ազգ հանդես չեն գա Թուրքիայի և նրա դաշնակիցների կողմում, բայց որպես անհատներ կկատարեն իրենց քաղաքա-

ցիական պարտքը։ II. Հենց այս պատճառով օսմանյան հայերը ենթարկվեցին սիստեմատիկ ոչնչացման թուրքական կառավարության կողմից 1915-ին։ Հայ բնակչության 2/3-ը ոչնչացվեց։ III. Հայերը կամավոր գնդեր կազմեցին կռվելու ռուսական բանակի կազմում ընդդեմ Թուրքիայի։ IV. Ռուսական հեղափոխությունից, ռազմաճակատի քայքայումից հետո հայերը միայնակ պահում էին կովկասյան ճակատը (5 ամիս) թուրքական հարձակումից։ Դրանով իսկ նրանք կարևոր ծառայություն մատուցեցին բրիտանական բանակին (58, թ. 93)։ 1918-ի նոյեմբերի 26-ին Չերչիլը հայտարարեց, թե «ոչ մի նվաճված մարզ Թուրքիային չի վերադարձվելու» (39, էջ 118)։

Վ. Ցելիքս անունով թուրք հեղինակը 1925-ին Լոնդոնում հրատարակած իր գրքում գրում է, թե երբ Լլոյդ Ջորջը ստիպված եղավ Փարիզի խաղաղության կոնֆերանս հրավիրել Հնդկաստանի մահմեդականության պարագլուխներին, ոչ ոք չտարակուսեց, որ երիտթուրքերը հաջողության են հասել։ Մուսուլմանական ճնշումը ներազդեց Մեծ Բրիտանիայի քաղաքականության վրա։ «Անգլիայի համար Թուրքիայի կարևորությունը»,— գրում է նա,— շատ ավելի արժեք ուներ, քան Հայաստանի օգտին «պատմական փաստարկների հարյուրավոր էջերը» (73, էջ 23)։

Անգլիացիները մեկ ցույց էին տալիս, թե հետևողական հակաերիտթուրքական քաղաքականություն են իրականացնում, մեկ իթթիհադականներին ենթարկում իրենց ծրագրերին։ Օրինակ, 1918-ի աշնանը անգլիացի գեներալ Թոմսոնը մեր հիշատակած Սուլթանովին Ղարաբաղի և Զանգեզուրի գեներալ նահանգապետ նշանակելով դառնում էր պանթուրքիստ մուսավաթականների գործակիցը (72, էջ 270)։

1918-ի վերջին և 1919-ի սկզբին հայոց կոտորածների շուրջը անհամեմատ ավելի բարձրաձայն խոսեցին Եվրոպայի տարբեր երկրներում։ 1918-ի նոյեմբերի 26-ին Իտալիայի պառլամենտի դեպուտատների պալատը որոտընդոստ ծափահարությունների ներքո ընդունեց 195 դեպուտատների բանաձևը Հայաստանի մասին։ Այդ բանաձևը, որին հավանություն էր տվել հայտնի տնտեսագետ, նախկին պրեմիեր Լ. Լուցցատին, հռչակում էր. «Իտալիայի դեպուտատների պալատը

համոզմունք է հայտնում, որ կառավարությունը հիշելով Իտալիայի ու Հայաստանի պատմական կապերը, կպաշտպանի դարավոր բռնակալությունից ազատված Հայաստանի քաղաքական անկախությունը» (58, թ. 90): Իսկ քիչ անց, Փարիզի կոնֆերանսում, Իտալիայի ներկայացուցիչներն իրենց արևմտաեվրոպական գործընկերների նման առաջ էին տանում լոկ իրենց գաղութատիրական նկրտումները:

Դեռևս 1918-ի դեկտեմբերի 10-ին սենատոր Լոջը ԱՄՆ-ի քննարկմանն էր դրել մի բանաձև, ըստ որի ապագա Հայաստանն իր մեջ էր առնելու վեց վիլայեթն ու Կիլիկիան, Ռուսահայաստանը և պարսից Ադրբեջանի հյուսիսարևմտյան մասը: Լոջը հայտարարել էր, որ «ԱՄՆ-ը պետք է լրիվ իշխանություն ունենա այն ամբողջ տերիտորիայի վրա, որտեղ հայեր են ապրում, ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Թուրքիայում» (64, էջ 9, 29): Սա արդեն բացահայտ իմպերիալիզմ էր: Ով ծանոթ է Հարբորդի, Կինգ-Կրենի առաքելությունների մանրամասներին, նա չի կարող տարակուսել, որ ամերիկյան կառավարությունը հետապնդում էր սեփական բուրժուազիային համապատասխան տնտեսական և քաղաքական շահեր ապահովելու նպատակներ և ոչնչով մտահոգված չէր հայ ժողովրդի անագորույն վիճակով: ԱՄՆ-ը ոչինչ չարեց երիտթուրքերի ականջները ոլորելու համար, թեև նրա ներկայացուցիչները բարձրաձայն աղմկում էին, թե Ամերիկայի պարտքն է արձագանքել քրիստոնեական Հայաստանի՝ աշխարհում առաջին քրիստոնեական ազգի կանչին:

1919-ի փետրվարի 10-ին Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ս. Պիշոնը Ահարոնյանին և Նուբար փաշային հավաստիացնում էր, թե «Հայաստանի դատն ու ապագան միշտ խիստ մոտ են եղել Ֆրանսիայի սրտին և մոտ էլ կլինեն միշտ: Ֆրանսիան միշտ պատրաստ է հզորապես աջակցել ձեր ժողովրդի փրկության գործի լավագույն ելքի համար» (3, էջ 7): 1918-ի հուլիսի 23-ին Կլեմանսոն՝ «Հաղթանակի հայրը», Ֆրանսիայի մինիստրների խորհրդի նախագահը գրավոր հայտարարեց Պողոս Նուբարին, որ ինքը երջանիկ է հավաստիացնելու, որ ֆրանսիական կառավարությունը և Միացյալ Թագավորության կառավարությունը չեն դադարում

հայոց ազգը դասել այն ժողովուրդների շարքը, որոնց բախտը դաշնակիցները մտադիր են որոշել մարդասիրության և արդարության բարձրագույն օրենքներին համապատասխան: Ավելի ուշ, 1919-ի փետրվարի 9-ին պաշտոնական «Թան» թերթը առավել կոնկրետ ձևակերպեց ֆրանսիական կառավարության «տեսակետը», նշելով, որ պետք է ստեղծել Թուրքիայի արևելքում իրապես կենսունակ Հայաստան, ինքնուրույն ելքով դեպի Սև ծով և առևտրական ելքով դեպի Միջերկրական ծով» (58, թ. 92—93):

Ժորեսի օրոք քանիցս ֆրանսիական հանրային կարծիքը գրգռաց Հայաստանի զուլումների լուրերով: Իսկ այժմ բողոքելով ֆրանսիական «Թան» թերթի դիրքից, ֆրանսիական պաշտոնական շրջանների գործողություններից «Հայրենիք» թերթը գրում էր. «Մոռանալով խղճի և արդարության պարտքը «Ազատության» հայրենիքը՝ Ֆրանսիան, շտապում է ծափահարել թուրքական Միլլի (ազգային) շարժման ծավալումը, որ հավասար է մեր անկախության ոտնահարման»: Թղթակիցը փաստեր էր բերում, որ ֆրանսիական հայտնի մտավորականները պախարակում էին «անանկ դիվանագիտության և դրամատիրության սարքած դավերը բազմաչարչար Հայաստանի դեմ, որ զոհաբերեց առավելագույնը պատերազմին և հաղթության համար» (12, 19.10.1919):

«Չէ՞ որ Հալեպի ջարդերն էլ տեղի ունեցան անգլիական զորքի ներկայությամբ,— գրում էր Բոստոնի «Հայրենիքը» 1919-ի նոյեմբերին:— Չէ՞ որ թուրք-թաթարական հարձակումները Հայկական հանրապետության վրա սկսվեցին, երբ դեռ անգլիական զորքը Կովկասում էր գտնվում: Անգլիական իշխանությունները ոչ միայն որևէ քայլ չառին արգելելու թուրքական ասպատակությունները, այլև իրենց զորքը ետ քաշեցին, կարծես հասկացնելու համար թուրքերին, որ ազատ էին հայերի հետ վարվելու այնպես, ինչպես կցանկանային: Ինչո՞ւ խաբենք մենք մեզ սին հույսերով: Մեր մեծ ու պզտիկ բոլոր դաշնակիցներն ալ լքած են մեզ մեր բախտին: Ամերիկան, հեռավոր Ամերիկան է միայն, որ այսօր օրորում է մեզ հույսերով, դժբախտաբար միայն հույսերով: ...Բայց հերիք օրորվեցանք հույսերով, հերիք որքան պարապեցանք դիվանագիտությամբ: Մեկդի բյուզանդական դիվանագիտու-

թյունները, թող լռեն քաղաքական բոլոր փառասիրությունները։ Հայ ժողովուրդը Կովկասի, ինչպես նաև Թուրքիայի մեջ՝ կորստյան անդունդի եզրին է գտնվում» (12, 29. 11. 1919)։

1919-ի հուլիսին ամերիկյան մի ամսագրում հրապարակվեց մի հոդված, որտեղ թուրքերը մեղադրվում էին տեղահանությունների, զանգվածային սպանությունների մեջ (68, էջ 36)։ Մյուս կողմից, ամերիկյան ծովակալ Մարկ Լ. Բրիստոլը, որ բարձր կոմիսարն էր Կ. Պոլսում, հատկապես հիացած էր... թուրքական կառավարման կոպիտ ձևերով ու մեթոդներով։ Իսկ հայր ու որդի Չեստերները գովում էին Թուրքիան, որովհետև հավատում էին, որ իրենք էին կառուցելու 2.800 մղոն երկաթուղագիծը Թուրքիայում։ 1922-ի սեպտեմբերին կրտսեր Չեսթերը բարբաջում էր «Current History» (Նյու Յորք) ամսագրի էջերում այն մասին, թե 1915-ին հայերին անհարմար ու անպտուղ շրջաններից, որտեղ նրանք վատ էին զգում ու չէին կարող բարգավաճել, տեղափոխեցին Սիրիայի հիանալի ու բարեբեր մասերը... որտեղ կլիման նման է Ֆլորիդայի և Կալիֆոռնիայի, ուր Նյու Յորքի միլիոնատերերը ճամփորդում են առողջանալու և հանգստանալու համար։ Վերջում Չեսթերը հարկ էր համարում նշել, թե այդ ամենը կատարվել էր մեծ ջանքերի ու ծախսերի միջոցով (72, էջ 345)։

Սուր բախումների մեջ էր նաև հայ հասարակական միտքը։

1919-ի մարտի 11-ին Բաքվի հայոց ազգային կոմիտեի նիստում Հակոբ Մանանդյանը ասում էր. «Դաշնակցությունը երբեք չի ունեցել և չունի քաղաքական հատուկ ֆիզանոմիա, որովհետև այնտեղ ամփոփվել են բազմաթիվ շահերով ու ձգտումներով հակադիր տարրեր։ ...Ինտելիգենցիան կուլտուրական մեծ առաքելություն ունի հայ իրականության մեջ։ Իսկ դաշնակցականները քար են նետում հայ կուլտուրական գործիչների դեմ, խանգարելով նրանց գործունեությանը» (55, թ. 55)։ Նույն նիստում մի այլ հռետոր (Եր. Թաղիանոսյան) ասում էր. «Դաշնակցության մեջ տիրապետող ինտելիգենտական խումբը իրավունք չունի հայ ժողովրդի շլինքին փաթաթել արկածախնդրական քաղաքականության ծրագիր։ Եթե դաշնակցությունը շարունակ չմտահոգվեր իր տիրապետությունը ապահովելու մասին՝ իր հակասական քայլերով, գուցե այն ժամանակ կարելի լիներ խուսափել հայկական ողբերգությունից։ Դաշնակցությունը վարել է ոչ թե հայ ժողովրդի շահերի քաղաքականություն, այլ զուտ իր կուսակցական քաղաքականությունը» (55, թ. 55)։

Արտակարգ սրատես Բեռնար Շոուն Իռլանդիայի առիթով նկատել էր. սխալ է մտածել, որ տառապագին օրերով անցնող ժողովուրդներն ավելի ուշադրություն են գրավում իրենց տառապած լինելու հանգամանքի շնորհիվ։ «Իռլանդիայի տառապանքները նվազ շահագրգիռ կդարձնեն զինքը»։ Իսկ հայ ազգայինները գործում էին նույն սխալը՝ աշխարհին ներկայացնելով Հայաստանի տառապանքների պատմությունը, և ուրիշ ոչինչ, մինչև որ նույն ինքը «Հայաստան» բառը անգլերեն լեզվի մեջ դարձավ «տառապանք» բառի մի հոմանիշ։

Իմպերիալիստական Արևմուտքի հետ հույսեր կապած ուժերը տապալվեցին, ոչ մի օգուտ, լույս, ջերմություն չապահովելով թուրքական յաթաղանից նվաղած, հեղափոխական հյուսիսի փրկարար օգնությունից առժամանակ կտրված մեր ժողովրդի բեկորներին։ Շուտով հայ ժողովրդի գլխին կախվեց թուրքական ազգայնական բանակի՝ Կարաբեքիր փաշայի գնդերի մահաբեր սուրը։

Միայն սովետական իշխանության հաստատումով հայ ժողովուրդը խաղաղ շինարարական կյանքի, առաջադիմության ու զարգացման հնարավորություններ ստացավ։

1. Լենին Վ. Ի. Երկեր, 4-րդ հրատ.
2. Ագուզյան Ա. Գերմանա-թուրքական ներդաշնակցային հակամարտությունն Անդրկովկասում գերակայության համար 1918-ին, «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, 1978։
3. Ահարոնյան Ավ. Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր), Բոստոն, 1943։
4. Ամիրխանյան Ա. Ռուս և թուրք զինադադար, պատմական անցքեր, 1917—1918, Ֆրեզնո, 1921։
5. Անդրանիկ Մուրադ և Պողոս Նուբար, Բ հատոր, Կ. Պոլիս, 1920։

6. Երզնկյան Ա. Աշխատավորության դատին, Երևան, 1927։
7. Թուրշյան Հ. Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1965։
8. «Կառավարության լրաբեր» («Вестник правительства»), Երևան։
9. Կասյան Ս. Մեր տակտիկան, «Բանվոր» թերթ, Թիֆլիս, № 5—7, 1918։
10. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, ժողովածու, պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ և առաջաբանով, Երևան, 1972։
11. Հայոց ազգային խորհրդի արձանագրությունները, Թիֆլիս. 16. 1917—15. 1918 թթ., ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ։
12. «Հայրենիք», թերթ, Բոստոն։
13. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7։
14. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 53։
15. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 619 ա, 619 բ։
16. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121 ց. 1, գ. 7։
17. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 33։
18. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 31։
19. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 57։
20. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 1։
21. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 37։
22. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 619։
23. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 13։
24. Ղարաջյան Գ. (Արքոմեդ Ս. Տ.) Անդրկովկասի քաղաքական կյանքը 1918-ին, Թիֆլիս, 1919։
25. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 241։
26. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 251։
27. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 280։
28. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 252։
29. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 194։
30. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142։
31. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 213։
32. Մ. Դ. Ղարաքիլիսայի հերոսամարտը (ականատեսի հիշողությունները), Թիֆլիս, 1920։
33. Շահումյան Ստ. Երկեր, հ. 3։
34. Սասունի Կ. Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918), Բոստոն, 1927։
35. Սողոմոնյան Մ. Ս. Լեռնային Ղարաբաղում թուրքական ինտերվենցիայի հարցի շուրջը (1918), «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, 1972։
36. Տաշեան Վ., Հակոբոս Հ. Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագրերու համեմատ, մասն Ա, Վիեննա, 1921։

37. Բուրայ, Ջեմալ Կարաբեքիրն ինչպես բնաջնջեց Հայաստանը, Կրգըլթոփրաք (թուրքերենից թարգմանեց Խ. Ամիրյանը, 1964)։

38 **Аркомед,** Материалы по истории отпадения Закавказья от России, Тифлис, 1923.
39 **Бекер С.** Вудро Вильсон, Мировая война. Версальский мир. М.—П., 1923.
40 **Галоян Г.,** Участие США в контрреволюционной интервенции в Закавказье в 1917 г. (ՀՍՍՀ ԳԱ-ի «Տեղեկագիր», № 8, 1956)։
41 **Гоголев З. В.** Советско-турецкие отношения в 1918—1923 гг., Ученые записки, вып. П., Якутского педагогического института. Якутск, 1950.
42 Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1918.
43 Документы Внешней политики СССР, т. 1, М., 1957.
44 **Драбкина Ел.** Грузинская контрреволюция. Из серии издания истории партии ЦК ВКП(б), 1928.
45 **Завриев Д. С.,** К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947.
46 **Иоффе А. А.** Брест-Литовск (воспоминания). «Новый мир», книга 6-ая. М., 1927.
47 «Кавказское слово», газета, Тифлис.
48 **Кемаль, Мустафа,** Путь новой Турции, т. III, М., 1934.
49 **Лазарев М. С.** Крушение турецкого господства на Арабском Востоке. (1914—1918), М., 1960.
50 **Лудшувейт Е. Ф.** Послеоктябрьский революционный подъем в Турции (ноябрь 1917—май 1919). Вестник Московского университета, серия общ. наук, выпуск 3, № 7, июль 1949.
51 **Мелик-Каракозов Г.** Воспоминания 1918 г. (подлинник у С. Вермишевой, Ереван).
52 Мирные переговоры в Брест-Литовске, изд. НКИД, М., 1920.
53 **Орджоникидзе Г. К.** Статьи и речи, т. 1., М., 1956.
54 «Правда», газета.
55 Протоколы заседаний Бакинского армянского национального комитета, Архив Армянского филиала ИМЛ, ф. 4047, оп. 1, д. 315.
56 **Саакян Р.** Рецензия на книгу Гигинейшвили, «Лрабер», АН Арм. ССР, № 7, 1967.
57 Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, изд. НКИД, М., 1927. со вступительной статьей проф. Ю. В. Ключникова.

58 Туманов Л. Дипломатическая история республики Армения (рукопись). Архив грузинского филиала ИМЛ, ф. 2914, д. 503.
59 **Хейфец С. Я.** Закавказье в первую половину 1918 г. и Закавказский сейм. «Былое», № 21, 1923, Петроград.
60 **Чичерин Г. В.** Статьи и речи, М., 1961.
61 **Эрцбергер М.** Германия и Антанта. Мемуары, М. — П., 1923.

62 **Anderson M. S.** The Eastern Guestion, 1774—1923, A study in International Relations, N. Y., 1965.
63 Barker A. J. The Mesopotamian Campaign of 1914—1917, The Bastard War, N. Y., 1967.
64 Congressional Records, 66-th Congr. 2-ser, vol. 59, num. 281, Washington.
65 Foreign Relations of the USA, 1917, Supplement II, vol. I, p. II
65a **Mauclaire,** Camille Pour l'Armenie Libre. Pages Ecrites au cours de la grande guerre, Paris.
66 **Nansen F.** Armenia and the Near East, London, 1928.
67 Papers Relating to the Foreign Relations of the United States, 1919, The Paris Peace Conference, vol. I, Washington, 1942.
67a Parliamentary Debates. House of Lords, November 13, 1918, House of Commons, October 23, 24, 30, 31, November 6, 7, 12, 14, 1918, London, 1918.
68 **Robinson D.** The First Turkish Republic, A Case Study in National Development, Cambridge, Massachusetts, 1963.
68a. Pour la Liberation de L'Armenie, Discours, Paris, 1920.
69 **Sina Aksin** 100 Soruda Jön Türkler ve Ittihat ve Teraki, Istanbul, 1980.
70 **Stuermer, Harry** The War Years in Constantinople, Sketches of German and Young Turkish Ethics and Politics, N. Y., 1917.
71 **Trumpener, Ulrich** Germany and the Ottoman Empire, 1914-1918, Princeton, New Jersey, 1968 *(գլուխ 7-րդ «Հայկական հալածանքները», տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների» № 2, 1970)*
72 Walker, **Christopher** Armenia, The Survival of a Nation, N. Y., 1980.
73 **Vályi Felix.** Revolutions in Islam, London, 1925.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Թուրքական արխիվները մնում են փականքի տակ: Երիտթուրքական պետականության այսօրվա ժառանգորդները թաքցնում են չարագործությունները բացահայտող թղթերը: Թուրքական առաջին կեղծագրերը: Առաջին խոստովանությունները: «Թուրք ժողովուրդն իր գլուխը խոնարհում է» հայ ժողովրդի ողբերգության առաջ: Երիտթուրքերին միջազգային տրիբունալով դատելու Մարկվարտի, Մորգանի պահանջը: Թուրքական զինվորական դատարանի նիստերը: «Թաքվիմ-ի Վաքայի» (դեպքերի օրացույց) թուրքական թերթի էջերում տպագրված դատական նյութերը: Երիտթուրքերի պարագլուխներին ներկայացված մեղադրանքները: Դատավճիռներ: Հետո թուրք հեղինակները ընթացան կեղծարարության ուղիով:

Թուրքական արխիվները մնում են փականքի տակ։ Աշխարհի բոլոր երկրները վերջին տարիներս շրջանառության մեջ են դրել մեծ քանակությամբ արխիվային նյութեր, որոնք լույս են սփռում XIX դարի վերջի և XX դարի սկզբի միջազգային հարաբերությունների, իրենց երկրների ներքին ու արտաքին քաղաքականության՝ մինչ այդ անհայտ հանգամանքների վրա։ Իսկ երիտթուրքական պետականության այսօրվա ժառանգորդները խնամքով թաքցնում են իրենց նախորդների չարագործությունները բացահայտող թղթերը։

Այնուամենայնիվ, ի՞նչ էին գրում թուրք հեղինակներն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և նրանից հետո, ինչպիսի՞ն էին նրանց գնահատականներն ու բնութագրումները հայոց բնաջնջման երիտթուրքական քաղաքականությանը։

Ընթերցողին հիշեցնենք, որ ժողովուրդների բարեկամու-

թյան սկզբունքներին հավատարմության ոգով էին գործում թուրք առաջին կոմունիստները, նրանց ղեկավար Մուստաֆա Սուբխին։

Երիտթուրքական հեղափոխությունը,— ասում էր նա,— ոչ մի օգուտ չբերեց ժողովրդին։ (23, էջ 8)։ Տակավին 1918-ի հուլիսի 23-ին Մոսկվայում բացվեց թուրքական ձախ սոցիալիստների կոնֆերանսը, որը գլխավորում էր թուրք հեղափոխական Սուբխի բեյը։ Կոնֆերանսը դատապարտեց սուլթանական կառավարության արտաքին քաղաքականությունը, արտահայտվեց թուրքական կայսրության տերիտորիայի վրա ապրող բոլոր ժողովուրդների, այդ թվում հայերի, ինքնորոշման օգտին (17, 15. VIII. 1918)։ Սակայն աննշան էին թուրք սոցիալիստների ուժն ու ազդեցությունը։ Հետագայում վերադառնալով Թուրքիա, նրանք հաջողություն չունեցան և գաղտնաբար սպանվեցին Մուստաֆա Քեմալի ձեռքով։

Երիտթուրքերի իշխանությունը տապալված էր։ Նրանց գործունեությունն ընդհանրապես, հակահայկական չարագործությունը մասնավորապես դատապարտվում էին ամենուրեք, ամբողջ աշխարհում։ Թուրքիայի նոր իշխանավորները, որ Անտանտի տերությունների կառավարողներին ենթակա մարդիկ էին, առժամանակ երիտթուրքական ռեժիմի ղեկավարներին դատապարտելու դիրք բռնեցին։

Մուսուլմանական կրոնի հեղինակավոր անձինք ժամանակին դատապարտեցին համիդյան ջարդերը (44, էջ 7)։ Պատերազմի ժամանակ էլ խոսքով մուսուլման ուլեմներն արտահայտվում էին կոտորածի դեմ, բայց գործով չէին զսպում խուժանի մոլեռանդությունը։ Դամադ Սալեհ փաշան, որին իթթիհադականները սպանեցին 1912-ին, ասում էր, որ իթթիհադը որոշել է կոտորել հայերին։ «Մեզ համար Հայաստանը արդեն կորած երկիր է»,— ասում էին երիտթուրքերը։ Իթթիհադականները ոչինչ չէին խնայում հայկական կազմակերպությունները վարկաբեկելու, հայկական դատը եվրոպական մամուլի էջերում խեղաթյուրված ներկայացնելու համար։

Բնական է, որ երիտթուրքերն իրենց հակամարդկային արարքները պատճառաբանելու համար պետք է մեղքը

վերագրեին հայերին, հնարելով ամեն տեսակի ստեր։ Հայկական կոտորածների շուրջը խոսակցությունների ժամանակ երիտթուրքական պարագլուխները ժխտելով ազգային ինքնավարության ձգտելու հայոց իրավունքը, առաջ էին քաշում «ազգային գոյության համար» թուրքերի պայքարի հարցը, հայերին մեղադրում դավաճանության մեջ (34, էջ 364)։

Արդեն այն ժամանակ երիտթուրքական հակապրոպագանդան փորձում էր համոզել համաշխարհային հասարակական կարծիքը, թե իբր ռուսական զորքերն էին գազանություններ արել կովկասյան ճակատում մահմեդական բնակչության նկատմամբ, իսկ հույն և հայ բնակչությունը համագործակցել էր նրանց հետ։ Այսպիսի բովանդակություն ուներ Վաշինգտոնում թուրքական դեսպանատանը Կ. Պոլսից հղված փաստաթուղթը, որը թխել էր օսմանյան կայսրության արտաքին գործերի մինիստրության քաղաքական դեպարտամենտը (41, 21. X. 1915)։ Պատերազմի տարիներին Բեռլինում թուրքական դեսպան Հաքքի բեյն իր ելույթներում, հարցազրույցներում փորձում էր հայերի վրա բարդել կատարված ողբերգական դեպքերի պատասխանատվությունը։ Նա մշտապես մատնացույց էր անում Ռուսաստանի հետ հայերի համագործակցության փաստը։

Թալեաթը փորձել է հայկական կոտորածը ներկայացնել որպես հայերի ու քրդերի ռասայական հակամարտության պատմական տխրալի ավարտ (19, էջ 34)։

1916-ի սեպտեմբերի 28-ին Կ. Պոլսում բացված Իթթիհադի կոնգրեսում տեր ու տնօրինություն էր անում Թալեաթը, թեև նախագահը մեծ վեզիրն էր, իսկ ինքը Միդհատ Շուքրիի հետ միայն տեղակալներ էին։ Այլ հարցերի շարքում համագումարն անդրադարձավ հայերի տեղահանման ու դրա հետ կապված չարաշահումների հարցին։ Երիտթուրքական պարագլուխները կատարված չարագործությունը փորձում էին պատճառաբանել հայերի ռուսական կողմնորոշմամբ, ապստամբություններով, ռուսական բանակի հետ համագործակցելու փաստերով։ Այնուամենայնիվ, համագումարն արձանագրեց, որ հայերի նկատմամբ տեղ են գտել չարաշահումներ, որոշում ընդունվեց անհապաղ հանձնաժողովներ ուղար-

կել ասելը իբր հետաքննելու համար կատարվածը (20, էջ 246, 14, էջ 203—204)։

Սակայն, Թալեաթի հանձնարարությամբ անմիջապես հրապարակ հանվեց մի կեղծագիր հայկական հեղափոխական շարժումների և դրանց դեմ կառավարության ձեռնարկած միջոցառումների մասին (45)։ Այս հրատարակությունը կատարվել էր ֆրանսերեն և նպատակ ուներ խեղաթյուրված պատկերացում տալ կատարված չարագործության մասին։ Հիմնական մեղադրանքը, որ ներկայացվում էր հայերին՝ դավաճանությունն էր։ Ժամանակին մենք ցույց ենք տվել նման հարցադրման հիմնազուրկ բնույթը (5)։

Հայ ազգային կուսակցությունների ղեկավարներն ակնհայտորեն ետ էին մնում թուրքական պրոպագանդիստական կեղծագրերին հակահարված տալու գործում։ Պատերազմի տարիներին աշխարհի տարբեր երկրներում հայերեն ու այլ լեզուներով բազմաթիվ թերթեր, պարբերականներ հրատարակող դաշնակցական, հնչակյան կոմիտեները, մյուս կազմակերպությունները չկարողացան եվրոպական լեզուներով հրապարակ հանել երիտթուրքական ոճրագործությունը բացահայտող և դատապարտող և ոչ մի լուրջ, փաստահարուստ ամփոփագիր։ Սա դատապարտելի անկարողության, անհոգության դրսևորում էր։ Թուրքական փորձառու պետականությունն արդեն կեղծիքի նախաձեռնությունը վերցրել էր իր ձեռքը։

Դեռևս 1916-ի փետրվարին Հայոց ազգային խորհրդի նիստում Ավ. Ահարոնյանը խնդիր էր դնում լեհերի և ֆրանսիացիների օրինակով ի մի բերել, հավաքել թուրքական բոլոր չարագործությունների մասին նյութերը։ Նա գտնում էր, որ դա որոշակի նշանակություն էր ունենալու առաջիկա կոնֆերանսի ժամանակ (11, թ. 40)։

1916-ի ապրիլի 29-ին Հայոց ազգային խորհրդում Մ. Պապաջանովը խոսում էր այն մասին, որ թուրքական պրոպագանդան լայն կամպանիա էր ծավալել հայոց դեմ և որ նրան արձագանքում էր գերմանական պրոպագանդան, հայերին մեղադրելով ապստամբական տրամադրությունների համար (11, թ. 66)։

1918-ի նոյեմբերի սկզբին, երիտթուրքական կառավարության անկումից հետո օսմանյան կայսրության նոր վարչապետ Դամադ Ֆերիդ փաշան «քողազերծեց հայերու դեմ Իթթիհադ կուսակցության մշակած ու կազմակերպած ցեղասպանության գաղտնի ծալքերը»։ Նա հայտարարեց, թե երիտթուրքական կառավարության հրապարակած պաշտոնական «Կարմիր գրքի» մեջ հայերի անհավատարմության մասին ասված բաները շինծու են, ճշմարտությանը չեն համապատասխանում։ Իշխանությունից զրկված երիտթուրքական ղեկավարները արժանացան հասարակական կարծիքի համընդհանուր պարսավանքի։

1919-ի հունվարի 28-ին Ալի Քեմալ բեյը (1920-ին դարձավ Թուրքիայի ներքին գործերի մինիստր) «Սաբահ» թերթում գրում էր, թե «արդեն ապացուցված իրողություն է, որ եղեռնը ծրագրվել էր իթթիհադի ընդհանուր կենտրոնի որոշումներով և կարգադրություններով»։ Նա հայկական ջարդերը գնահատում էր որպես «պատմության մեջ եզակի, աշխարհատասան մի ոճիր» (2, էջ 249)։ Հետո թուրքական պաշտոնական շրջաններն ընթացան իրողությունները քողարկելու և կեղծելու ուղիով։

1918-ի նոյեմբեր-դեկտեմբերին Կ. Պոլսում (Ղալաթիա) Տիգրան Զավենը լույս էր ընծայում «Ժողովուրդ» թերթը, որի էջերում տպագրվում էին երիտասարդ թուրքերի չարագործությունները մերկացնող նյութեր։ Թերթը պատմում էր Սեբաստիայի վալի Մուհամմեդ բեյի ձեռքով Թոկատի առաջնորդ Շավարշ Ծ. Վրդ. Սահակյանի դաժանային սպանության կազմակերպման մանրամասների մասին։ 1918-ի նոյեմբերի 30-ին թերթի առաջնորդող հոդվածը նվիրված էր արևմտահայության ոչնչացման խնդրի շուրջը թուրքական պետականության «սուտության, ամոթի ու դատապարտության» անհրաժեշտությանը։ Նա խարազանում էր արդարանալու յուրաքանչյուր փորձ. «Այդ արդարացումը գործածեցին գիշատիչ բորենիները, Թալեաթն ու իր արբանյակները, լվալու համար իրենց կարմիր ձեռքերն ու արյունոտ խիղճը»։ «Լիրբ ստություն մըն է, այո, պնդել, որ հայերը օգնեցին թշնամիին, երբ այդ թշնամին բյուրավոր մղոններով հեռու կգտնվեր իրենցմե, ինչպես, օրինակ, Ենկյուրիի մեջ, Պրուսիայի մեջ և այն

բոլոր գավառներուն մեջ, որոնց չսպառնաց երբեք թշնամին։ Բայց ենթադրելով, նույնիսկ որ հայերը ապստամբած ըլլան —et pour cause— սահմանակից քաղաքի մը մեջ, ո՞ր քաղաքակիրթ երկիրը թույլ պիտի տար իրեն, առանց որևէ շարժառիթի, առանց որևէ provocation-ի գրգռման, նախ զինաթափ, հետո խաբեությամբ արմատախիլ ընել մյուս գավառներու խաղաղ, անմեղ ու անպաշտպան ժողովուրդը իր բույնեն, քշել սպանդանոց առաջնորդ հոտերու պես՝ ալևոր ծերունիներ ու պառավներ, մատաղ աղջիկներ ու հարսեր, անչափահաս տղեկներ ու երեխաներ վարժ մարդասպաններու յաթաղանին տակ... Ըսեք, պատասխանեցեք, աշխարհի ոչ թե քաղաքակիրթ, այլ ո՞ր բարբարոս, ո՞ր մարդակեր կառավարությունը վարվեցավ այնպես՝ ինչպես վարվեցաք դուք հայ ժողովրդին հետ, որ ուրիշ բան չուզեց, բայց եթե վայելել մարդկային ամենատարրական իրավունքները, կյանքի, ինչքի և պատվի ապահովություն...»

1918-ի դեկտեմբերի 7-ին «Նյու Յորք Թայմսը» հաղորդում էր, որ նոր սուլթան Մուհամմեդ 6-ը Կ. Պոլսում մի անգլիացի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ դատապարտել էր երիտթուրքերի քաղաքականությունը հայերի նկատմամբ, ընդմին ցավ արտահայտելով կատարվածի կապակցությամբ։ Նա հայտարարել էր, թե եթե ինքը այն ժամանակ սուլթան լիներ, ոչ մի այդպիսի բան տեղի չէր ունենա։ «Նման հանցագործությունները և միևնույն հայրենիքի զավակների փոխադարձ ոչնչացումը ցնցեցին ինձ»։ Նա ասում էր, որ սուլթան դառնալով, նա կարգադրել էր հետաքննություն անցկացնել և խստորեն պատժել հրահրողներին։ «Սակայն տարբեր փաստեր խանգարեցին իմ հրամանների լրիվ կատարմանը։ Այժմ գործը մանրազնին ուսումնասիրվում է,— ասում էր նա,— արդարադատությունը շուտով կասի իր խոսքը և մենք երբեք չենք տեսնի այսպիսի սարսափելի իրադարձությունների կրկնություն։ Սուլթանը խնդրել էր թղթակցին անպայման հրապարակել հետևյալ խոսքերը. «Ազգի ճնշող մեծամասնությունը լիովին անմեղ է այդ հանցանքների մեջ, որ վերագրվում են նրան։ Լոկ սահմանափակ թվով մարդիկ են պատասխանատվություն կրում»։ Արդեն

1918-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կ. Պոլսի մամուլի էջերը լի էին ճշմարտությունը պարզելու նպատակով հարուստ վկայություններով։ Թերթերի էջերում հրապարակվեցին Թալեաթի, Բեհաէդդին Շաքիրի, Նազըմի հակահայկական հրամանների, շրջաբերականների պատճենները։ Դրանցից մեկում ասված էր. «Կետ առ կետ գործադրեցեք հայերը սպանելու մասին Ձեզի տրված հրամանները» («Ժամանակ», 11. 12. 1918)։ Այդ թերթի նույն համարում տպագրված էր Բեհաէդդին Շաքիրի մի ծածկագիր շրջաբերականը, գրված չափածո և հղված նահանգապետներին որպես ազդանշան։ Ահավասիկ նրա թուրքերեն և հայերեն տեքստերը.

Սելահ փաթլամասըն,
Ասքեր խափամասըն,
Էրմենի գալմասըն։

Պեույուքլերի քեսմելի,
Կյուչյուկլերի սեզմելի,
Օ պիրլերի սյուրմելի։

Թող զենք չպայթի,
Թող զինվորը չընէ,
Թող հայ չմնա։

Մեծերը մորթոտել,
Գեղուհիներն ընտրել,
Մյուսները տարագրել։

1980-ին Նյու Յորքում լույս տեսավ «Յոզղաթի հայասպանության վավերագրական պատմությունը» նյութերի ժողովածուն, որը պատրաստել է Քրիկերը (Documentary History of the Armenocide in Yosgat, Copyright, 1980 by Krieger: Library of Congress Catalog Card Number 79—693349)։ Այս գրքում հսկայական օրիգինալ և չափազանց արժեքավոր փաստաթղթեր, վկայություններ են հրապարակված (թուրքերեն և հայերեն լեզուներով), քաղված 1918—1919 թթ. թուրքական պաշտոնական աղբյուրներից, մամուլի էջերից։ Այս գրքից տեղեկանում ենք, որ տակավին 1918-ին Կ. Պոլսում սուլթանական հրովարտակով թուրքական կառավարությանը կից ստեղծվել էր մի հարցաքննիչ հանձնախումբ, որը հանձնարարություն էր ստացել հավաքել հայասպանության վերաբերյալ բոլոր պաշտոնական վավերագրերը։ Այս հանձնախմբի գլուխ կանգնած էր Մազհար բեյը (Անկարայի նախկին կուսակալը, որը 1915-ի հունիսին պաշտոնանկ էր

արվել հայերի տեղահանության վերաբերյալ Թալեաթի հրամանները չկատարելու համար)։ Մաղհար բեյը երկրի տարբեր կենտրոնները հղած հատուկ հարցաթերթիկների միջոցով հսկայական պաշտոնական և մասնավոր գրավոր վկայություններ հավաքեց, որոնք դրվեցին զինվորական դատարանի տրամադրության տակ։

1918-ի դեկտեմբերի 11-ին Յոզղաթի մյութեսարիֆ Ջեմալ բեյը հարցաքննիչ հանձնախմբին պաշտոնական վկայություն տվեց, կարևոր տեղեկություններ հայտնելով առանձին պաշտոնատար դեմքերի հանցագործ արարքների մասին։ Այսպես օրինակ, նա պատմեց ոստիկանապետ Թեֆիկ բեյի կազմակերպած հրոսակների, նրանց կողմից հայերի սպանությունների մասին։ Երբ Ջեմալ բեյին պաշտոնանկ անելուց հետո Յոզղաթ եկավ Քեմալ բեյը, նա անմիջապես ձեռնամուխ եղավ Յոզղաթի ու նրա շրջակա գյուղերի 35 հազար հայության կոտորածի իրականացմանը (տե՛ս Գրիկեր, նշվ. աշխ. էջ 256)։

Թրքուհի Հալիդե էդիպ խանումը (բանաստեղծուհի, գրական, հասարակական-քաղաքական ակտիվ գործիչ) 1918-ի հոկտեմբերի 21-ին մի հայտարարություն հրապարակեց թուրքական «Վաքըթ» թերթում (տե՛ս «Ժամանակ», 22. 10. 1918). «Այն օրերին, երբ մենք զորեղ էինք, աշխատեցինք քրիստոնյաներին, մասնավորապես հայերին միջնադարյան միջոցներով բնաջնջել...»։ «Այսօր մեր ազգային կյանքի ամենից տխուր և սև օրերն ենք ապրում։ Ամերիկան և Անգլիան մեզ նկատում են մի պետություն, որն իր անմեղ հպատակներին և զավակներին է կոտորել։ Այժմյան կառավարությունը հայտարարում է, թե հայերին պետք է իրենց տեղերը վերադարձնենք»։ Նա հավատ չէր ընծայում նման խնդրի հաջող իրականացման հնարավորությանը, նահանգների գործադիր իշխանության կարողությանը և արդարադատ թուրքերից, հայերից ու ամերիկացիներից խառը հանձնաժողով կազմելու խնդիր էր հարուցում։ Երկու ամիս անց, «Ենի Գյուն» թերթում Հալիդե էդիպը դատապարտում էր երիտթուրքերի կուսակցությանն ու կառավարությանը՝ հայերի դեմ կատարված ոճիրների համար, եզրակացնելով, թե «թուրքերն ապացույց տվին, որ իրենք անկարող են քաղաքակրթված կառավարություն կազմելու» («Ռենեսանս», 22. 12. 1918)։

Զինադադարից հետո (Մուդրոսի զինադադարը ստորագրվեց 1918-ի հոկտեմբերի 30-ին) օսմանյան պառլամենտի քննարկման ամենակարևոր նյութը դարձավ հայերի կոտորածի խնդիրը։ Հռետորների ելույթների արձանագրությունները տպագրված են ինչպես զինվորական ատյանի պաշտոնաթերթ «Թաքվիմը վաքայի» («Թաքվիմը վաքայի դիվանը հարբի էորֆի Մուհաքեմաթը Ջալըթ ճերիդեսի»), այնպես և այլ թերթերի էջերում։ «Թաքվիմը վաքային» 1919—1920 թթ. նույնությամբ տպագրվում էր զինվորական դատարանի նիստերի արձանագրությունները, մյուս թերթերն անդրադառնում էին առանձին փաստերի, ատենագրությունների կարևոր կետերին։

Տրապիզոնի երեսփոխան Հաֆըզ Մեհմեդ բեյը պառլամենտի նիստում փաստերով հաստատել էր, թե հայերի կոտորածը հանգամանորեն կազմակերպված էր երիտթուրքական կառավարության կողմից և գործադրվել էր «Թեշքիլաթը Մախսուսե» (հատուկ կազմակերպություն) հրոսակապետերի և հրոսակների միջոցով («Ժամանակ», 13. 12. 1918)։ Թուրքական պառլամենտում խոսք էր գնում այն մասին, որ պետք է դատվեին ոչ միայն կոտորածի կազմակերպիչները, այլև նրա շարքային մասնակիցները։ «Այս դասակարգի հանցավորները պետք է դատվեն հասարակ դատարանների միջոցով»,— արձանագրվում էր պառլամենտի որոշման մեջ։ Խնդիր էր դրվում դատապարտել այն ոճիրները, որ գործել էր ամբոխը՝ պաշտոնյաների հավանությամբ ու մեղսակցությամբ («Ռենեսանս», № 2, 10. 12. 1918)։ Ոմանք մեղադրում էին թուրքական ազգային ժողովը, այն հաշվելով մեղսակից կատարված չարագործություններին։ Մի քանի խոսքով ընթերցողին հիշեցնենք Թալեաթի կառավարության անկումից հետո (7 հոկտեմբերի 1918) թուրքական պետության վերնահարկում տեղի ունեցած կարևոր անցուդարձի մասին։ Սկզբում կառավարություն կազմելու առաջարկություն ստացավ Լոնդոնում նախկին դեսպան, սենատի անդամ Թեֆիկ փաշան։ Սա դեմ էր երիտթուրքերին, բայց և չհաջողեց առանց նրանց կառավարություն կազմել։ 1918-ի

հոկտեմբերի 9-ին նախկին ռազմական մինիստր Իզզեթ փաշան կազմեց մի կառավարություն, որի մեջ մտան մի շարք երևելի երիտթուրքական գործիչներ։ Սրանց մեջ էր Ֆեթհի բեյը (ներքին գործերի մինիստր), որը դարձել էր «Թեջադդուտ» կազմակերպության ղեկավար։ Սա իթթիհադի նոր անվանումն էր։ Մամուլում քննադատության ծավալվեց Իզզեթ փաշայի դեմ։ Նրան մեղադրում էին իթթիհադականների փախուստը կազմակերպելու, հայերից կողոպտված գումարները և թանկարժեք իրերն արտասահման փոխադրելու մեջ («Նոր կյանք», № 107, 3. 2. 1919) 1918-ի դեկտեմբերի 27-ին «Նյու Յորք Թայմսը» հաղորդեց, թե թուրքական պառլամենտը ցրված է, թե Թուրքիայի ներքին գործերի մինիստրը Գերագույն զինվորական դատարան կազմելու վերաբերյալ հաղորդագրություն է հրապարակել։ Նույն թերթը մի քանի օր անց (30. 12. 1918) տպագրել էր ԱՄՆ-ի հայկական ազգային խորհրդի նախագահ Միհրան Սվազլիի բողոքը, որտեղ նա անվստահություն էր արտահայտում թուրքական դատարանի և դատավորների նկատմամբ, և պահանջում էր դատական պրոցեսը կազմակերպել Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Ընդհանրապես սկսած 1918-ի հոկտեմբերից, այն բանից հետո, երբ նույն ամսի 7-ին Թալեաթի երիտթուրքական կառավարությունը հրաժարական տվեց, քննադատությունը, վերադնահատումները, դատապարտումները դարձան թուրքական մամուլի գլխավոր զբաղմունքը։ Հայկական թեման՝ արևմտահայության տեղահանման ու ոչնչացման խնդիրները օսմանյան պետության ներսում հայոց խաղացած դերի տարբեր կողմերը քննարկվում էին ամենուրեք։ Նախապես Հալեպի ապա Կոնիայի կուսակալ Ջելալ բեյը «Վաքիթ» թերթում պատմել էր հայոց տեղահանության չափազանց կարևոր մանրամասների, իր բռնած դիրքի մասին։ Նա գրել է. «Եթե աշխարհի վրա մեր բոլոր թշնամիները իրար միանային մեր դեմ և ուզեին այսպիսի մեծագույն կորուստ պատճառել մեզ, պիտի չկարողանային հաջողել»։ «Հանրային հարստության գրեթե քառորդը հայերի ձեռքին էր,— գրում է նա։— Հայերն իրենց ձեռքում ունեին երկրի վաճառահանության և արդյունագործության գրեթե կեսը։ Բնաջնջել հայերին համազոր է կայսրության քանդումին, մի կորուստ, որը կարելի պիտի չլինի վերադարձնել դարերի ընթացքում»։ Ջելալ բեյը իր տեսակետները չէր թաքցրել ոչ կուսակցությունից, ոչ երեսփոխաններից։ Բայց ոչ ոք ականջ չէր դրել նրա խորհուրդներին («Ռենեսանս», № 5, 13. 12. 1918)։

«Ռենեսանս» թերթը 1918-ի դեկտեմբերի 18-ին (№ 10) տպագրեց «Մորնինգ պոստ» անգլիական թերթին թագաժառանգ իշխան Աբդուլ Մեճիտի տված հարցազրույցի տեքստը։ Թագաժառանգը չէր թաքցնում, որ «կոտորածը Թալեաթի և էնվերի գործն էր», որ «եթե Գերմանիան ուզեր, կարող էր սպանդն արգելել» և այլն և այլն։ Էնվերը թագաժառանգից չէր թաքցրել, որ նրանք բնաջնջման վերաբերյալ «վճռական որոշումներ» էին ունեցել։ Թագաժառանգը պատմում էր, թե իբր սուլթանին աղաչել էր միջամտել, բայց ոչինչ չէր ստացվել։

Մամուլի էջերում բացահայտվում էին նոր փաստեր, հրապարակ էին հանվում նոր հանցավորներ։ Թուրքական «Սաբահ» թերթը մի բաց նամակ էր հղել արդարադատության նախկին մինիստր Փիրիզադե Իբրահիմ բեյին, նրան ուղղելով բազմաթիվ մերկացնող հարցադրումներ։ «Մի՞թե հրոսապետ Թալեաթը չէր, որ քեզ Սալոնիկի կուսակալ նշանակեց և այնտեղից հետ կանչելով արդարադատության մինիստր նշանակեց»։

«Երիտասարդ թուրքերի կուսակցության հրոսակների ժողովատեղի մեջ ընդունված որոշման համաձայն չէ՞ր, որ բանտերից ազատ արձակել տվիր ամենից սարսափելի ոճրագործներին՝ միակ նպատակով հայերին իրենց բնակարաններից արտաքսելու համար և հակառակ նրանց բացարձակ անմեղության, նրանց բնաջնջել տվիր վայրագությամբ»։ «Մի՞թե դու չէիր, որ կազմակերպեցիր ամենավայրագ ոճրագործներին, վայրենի հրոսակներից, որոնք Կ. Պոլսի կենտրոնական բանտի կալանավորներն էին, միևնույն ժամանակ հրամաններ հղելով գավառները (բանտերից ոճրագործների ազատ արձակելու մասին)»։ «Մի՞թե մի բժիշկ պաշտոն չստացավ, քո ցանկությանը համաձայն, քննելու և որոշելու ոճրագործների ֆիզիկական կարողությունները բնաջնջումի բարբարոսական գործի համար»։ «Մի՞թե դու չէիր, որ քո

տիրոջ՝ Թալեաթի հետ համաձայնվելուց հետո տվեցիր հրամաններ և հրահանգներ անմիջապես պաշտոնազրկելու հայ պաշտոնյաներին այն վայրերում, որտեղից պետք է տարագրվեին և բնաջնջվեին հայերը...»։ «Մի՞թե դու չէիր, որ հրճվում էիր հայ ժողովրդի սպանդի տեսարանի առջև, որ գործադրվում էր կացնի, ուրագի ու բրիչի հարվածներով» («Ռենեսանս», № 80, 19. 1. 1919)։ Սրանք փաստեր են, որոնց շրջանցել, նշանակում է փախուստ տալ ճշմարտությունից։ Հենց այդպես են վարվում այսօր պատմության թուրք կեղծարարները։

Հայասպանության պատասխանատուներին դատելու համար սուլթան Մուհամմեդ Զ. Վահիդէդդինի կայսերական հրովարտակով 1918-ի դեկտեմբերին նշանակված թուրքական արտակարգ զինվորական դատարանի նիստերում արծարծված բոլոր փաստարկությունները հիմնված էին նախ երիտթուրքական կառավարության պաշտոնական վավերագրերի բովանդակության, զանազան պաշտոնական և մասնավոր վկայությունների վրա։ Այս վավերագրերը հրապարակվեցին ինչպես զինվորական ատյանի «Թաքվիմը վաքայի» պաշտոնաթերթի էջերում, այնպես և բազմաթիվ այլ թերթերի էջերում։ Այդ նյութերի հրապարակմանը հատկապես մեծ տեղ էր հատկացնում «Renaissance» ֆրանսերեն թերթը, որը լույս էր տեսնում Կ. Պոլսում։ Այս թերթի նյութերից օգտվելն անհամեմատ դյուրին է. այլապես սկզբնաղբյուր վավերագրերից օգտվելու համար պետք է դիմել արաբատառ թուրքերենին։ Բավականաչափ նյութեր տեղ են գտել Կ. Պոլսի «Ժամանակ» թերթի էջերում, որտեղ արտատպումներ կան թուրքական մամուլից։

1918-ի ավարտին Թուրքիայի ներքին գործերի մինիստր Մուստաֆա Արիֆ բեյը դատապարտում էր ինչպես Սայիդ Հալիմի, այնպես և Թալեաթի կառավարությունները։ Նա հայտարարեց. «Ցավալի է, որ մեր այն ժամանակվա ղեկավարները ներշնչված ավազակությունից՝ տարագրությունը կիրառեցին այնպիսի ձևով, որ նույնիսկ ամենից հանդուգն և արյունարբու ավազակները չպետք է կարողանային այդպես անել... Կառավարությունը, որ հրամայեց հայերին դեպի Դեր էլ Զոր աքսորել, չէր էլ մտածել նրանց արաբական

ցեղերի մեջ տեղավորելու և սնունդ հայթայթելու մասին»։

«Ի՞նչ էր կառավարության նպատակը», — հարց էր տալիս մինիստրը։ «Դժբախտաբար հնարավոր չէ ուրանալ և կամ հարցը անտեսել։ Ուզեցին բնաջնջել (հայերին) և բնաջնջեցին։ Ինչպես և չի կարելի թաքցնել, որ բնաջնջումի որոշումը տրվեց կուսակցության կենտրոնական կոմիտեի ազդեցիկ անդամների կողմից և գործադրվելով կառավարության կողմից... նրանք նախընտրեցին բնաջնջել հայերին» («Ռենեսանս», № 6, 14. 12. 1918)։ Թուրք դիվանագետ-դեսպանները, պատմաբանները, քաղաքագետները և նրանց մյուս գործընկերները ցանկության դեպքում կարող են ծանոթանալ «Ռենեսանսի» նյութերին։

Երբ 1918-ի դեկտեմբերի 21-ին օսմանյան պառլամենտում քննարկում էին երիտթուրք պարագլուխների հանցանքների հետ կապված խնդիրները, նույն մինիստր Մուստաֆա Արիֆ բեյը ակնարկելով հայ ժողովրդի բնաջնջումը, հայտարարեց. «Լույս է սփռվում հայերի դեմ գործված վայրագությունների վրա, վայրագություններ, որոնք ամբողջ մարդկության զզվանքն առաջացրին. մեր երկիրը մեզ հանձնվեց վերածված մի հսկայական սպանդանոցի» («Ռենեսանս», № 13, 22. 12. 1918)։

1918-ի ավարտին 1919-ի սկզբին Կ. Պոլսի «Սաբահ» թերթի խմբագրապետ Ալի Քեմալը և «Ենի Գյուն» թերթի խմբագրապետ Յունուս Նադին մի շարք խմբագրականների մեջ վիճաբանություն էին բացել հայասպանության պատասխանատուներին բացահայտելու, նրանց մեղքը հաստատելու խնդիրների շուրջը։ «Սաբահի» խմբագրապետը գրեց. «Աշխարհը գիտի և այս է ճշմարտությունը, որ հայերի կոտորածները կազմակերպվեցին կենտրոնական կոմիտեի (խոսքը իթթիհադական ղեկավարության մասին է—Զ. Կ.) հրամաններով։ Այս հրամանները հաղորդվեցին մասնավոր պատվիրակների միջոցով և գործադրվեցին իր իսկ հսկողության տակ ավազակների միջոցով։ Այս բանը երևան հանել մի՞թե թուրքերին և թրքության դատին ծառայել չէ,— հարց էր տալիս խմբագիր Ալի Քեմալը։— Ուզո՞ւմ ես, որ ես

կանգնենք այս բանն անելուց և մե՞նք էլ նույն ամբաստանության տակ ընկնենք» («Ռենեսանս», № 7 15. 12. 1918)։

Ահա թե ինչպես էր արտահայտվում «Ալեմդար» թերթը Թալեաթի ու նրա գործընկերների մասին. «Կախեցին, սպանեցին, աքսորեցին, մորթեցին և միևնույն ժամանակ հայերը մորթել, աքսորել և սպանել տվին։ Նրանք կրկնակի մարդասպաններ են, որովհետև հրամաններ արձակեցին սպանելու և սպանեցին» («Ռենեսանս», № 127, 30. 4. 1919)։ Թուրքական «Իսթիքլալ» թերթը խոստովանում էր, որ «համաշխարհային առաջին պատերազմը մեր մեջ առաջացրեց անասնության և անբարոյականության ոգի։ Ուրանալ դառն ճշմարտությունը, նշանակում է ուրանալ արևի լույսը» («Ռենեսանս», № 173, 22. 6. 1919)։

Երբ 1918-ի նոյեմբերի 4-ին օսմանյան պառլամենտը քննարկում էր հայերի տեղահանության և կոտորածի հարցերը, դեպուտատ Ֆուադ բեյն իր ելույթում բազմաթիվ մեղադրանքներ առաջադրեց երիտթուրքերի իշխանությանը, ապացուցելով, որ նրանց «երկիրը ոճիրների թատերավայր դարձրին» («Ժամանակ», 5. 11. 1918)։

Պառլամենտի (ազգային ժողով) սենատի նախագահ, հին երիտթուրքական գործիչ Ահմեդ Ռիզան 1918-ի դեկտեմբերի 2-ին հայտարարեց. «Պատերազմին մեր մասնակցությունից (30 հոկտեմբերի 1914) մինչև Թալեաթ փաշայի կառավարության անկումը (7 հոկտեմբերի 1918) կառավարության կողմից գործված սխալների և ոճիրների, ջարդի, հրապարակային ոճրագործությունների..., կալվածների ու շենքերի բռնագրավումների..., հարստահարությունների... համար դատախազությունից պահանջել եմ դատ բացել և ժամ առաջ երևան հանել ոճրագործներին և արդարադատության հանձնել»։ Այս հարցադրմանը համապատասխան սենատն ընդունեց մի հատուկ թագրիր, որը հանձնվեց գործադիր իշխանությանը («Ժամանակ», 5. 11. 1918)։

Ահմեդ Ռիզայի հարցադրմանն ի պատասխան արդարադատության նախարար Ալի բեյը գտնում էր, որ «տարագրության ժամանակ ջարդ կազմակերպողները կամ ջարդին մասնակցողները՝ լինեն կուսակալներ, թե զինվորականներ, ամեն պարագայում սովորական անձերի նման պարզ դատարան-

ների առջև պիտի դատվեն» («Ժամանակ», 25. 7. 1918)։ Երբ սկսեցին ձերբակալել կուսակալների, պաշտոնատար այլ անձանց, «Թասֆիրի էֆքեար» թերթը մի հոդված տպագրեց «Պալատից դեպի բանտի զնդան» վերտառությամբ։ Այնտեղ ասված էր. «Ինչպես ցավալի է տեսնել, որ այս անձերից շատերը սրանից երկու ամիս առաջ բոլորի կողմից փառքի ու պատվի էին արժանանում մեր նահանգների մեջ և այսօր բանտ են տարվում իբրև հասարակ ոճրագործներ։ Դժվար է հասկանալ, թե ինչու այս անձերը չմտածեցին, թե մի օր իրենք պետք է հաշիվ տային Թալեաթ փաշայի կառավարության կողմից կատարված բոլոր ոճիրների համար, նույնիսկ եթե պատերազմից մենք հաղթական դուրս գայինք» («Ռենեսանս», № 7, 15. 12. 1918)։ Չենք տարակուսում, որ ցանկության դեպքում Ստամբուլի, թե Անկարայի գրադարաններից թուրքաց պետական գործիչներին իսկույն կտրամադրեն «Ռենեսանս», «Թասֆիրի էֆքեար» ու մյուս թերթերի հավաքածուները։ Թող կարդան, ուսումնասիրեն իրենց իսկ երկրի պատմությունը... ու չասեն այլևս։

1919-ի հունիսի 19-ին Լոնդոնում, Վեստմինստրի կենտրոնական սրահում գումարված հայանպաստ միտինգում անգլիացի հռետորներից մեկը խոսում էր 250 հազար հայ որբուկներին օգնություն կազմակերպելու, երկրի ներսում թուրքական տներում գերության մեջ գտնված հայ կանանց ու երեխաներին ազատելու անհրաժեշտության մասին (25ա, էջ 38)։ Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը զայրացած էր թուրքական չարագործությունների վրա։ Անգլիացի դիվանագետ Հարոլդ Նիքոլսոնը գրեց. «Թուրքերը ոչինչ չեն տվել մարդկային առաջադիմությանը։ Դա անատոլիական ավազակների ցեղ է։ Ես լոկ մի բան եմ ուզում, որպեսզի խաղաղության պայմանագրով նրանք վերադարձվեն Անատոլիա» (19, էջ 47)։

Դեշանելը, որ Ֆրանսիայի ազգային ժողովի դեպուտատների պալատի նախագահն էր, հետո նաև Ֆրանսիայի պրեզիդենտը, «Le journal»-ի թղթակից Հենրի Բարբիի «Au pays de l'Epouvante» գրքի առաջաբանում ամենայն ճշմարտացիությամբ բնութագրեց արևմտահայության հետ կատարվածը։ Նա գրում էր, որ 1915-ի սկզբին Թուրքիայում

կար ու պակաս 2 միլիոն հայ, որոնցից մեկ միլիոնից ավելին ոչնչացված են։ Նա ցույց էր տալիս տեղահանության կոտորածի փաստերի ողջ նողկալիությունը, ապացուցում էր հայերի անմեղությունը, որ նրանք «ուղղակի զոհեր էին», որոնց «սպանությունը իրականացվում էր նախապես խնամքով կազմված պլանի համեմատ»։ Դա մի սիստեմավորված բան էր, եզրակացնում էր ֆրանսիացի գործիչը,— ըստ որի ոչ մի քաղաք, ոչ մի գյուղ, ոչ մի ընտանիք չպետք է փրկվեր։

Աշխարհահռչակ լեզվաբան, հայագետ Անտուան Մեյեն 1919-ի փետրվարի 28-ին Փարիզում գումարված մի ժողովում ասում էր. «Հայերի դժբախտությունը չափ ու սահման չունի, սակայն նրանց ուժն էլ չափ ու սահման չունի» (38, էջ 9)։

1918-ի դեկտեմբերին Ջեյմս Բրայսը լավատեսորեն կարծում էր, որ թուրքական կառավարումը ոչ թուրք ժողովուրդների վրա պետք է ընդմիշտ դադարի, քանի որ այն մարդկության շահերի տեսակետից եղել է ամենավատը» (26, էջ 3)։

«Այլևս ոչ մի թուրքական կառավարում Տավրոսի լեռներից Արևելք»,— 1919-ի դեկտեմբերին բացականչում էր Բրայսը (27, էջ 10)։

□

1918-ի ավարտին «Իթթիհադ» կուսակցությունը, երիտթուրքերը Թուրքիայում հայտարարվեցին օրենքից դուրս (15, էջ 100)։ Եվրոպական հասարակական կարծիքը խիստ հակաերիտթուրքական էր։ Ականավոր արևելագետներ՝ գերմանացի Յոզեֆ Մարկվարտը և ֆրանսիացի Ժակ դե Մորգանը հրապարակավ պահանջեցին միջազգային տրիբունալի դատին հանձնել հայասպան քաղաքականության գլխավոր հանցագործներին (21, էջ 17)։ Գերմանացի գիտնական Յոզեֆ Մարկվարտը 1919-ի հունվարին արտասանած ճառում իր կառավարությունից պահանջեց ջանքեր գործադրել, գտնել Էնվերին, Թալեաթին և մյուս չարագործներին, նրանց հանձնել Անտանտին՝ միջազգային դատարանի միջոցով նրանց դատելու համար (32, էջ 54—55)։

1919-ի սկզբին Թուրքաց կառավարությունն անգլերեն հրապարակեց մի գրություն, որը վերնագրված էր «Թուրքհայկական հարց. Թուրքաց տեսակետը»։ Այստեղ խոսվում էր երիտթուրքական պարագլուխների բարբարոսական մեթոդների մասին, նրանց գործողություններն անվանում էին «անխիղճ», «դաժան», խոստովանում էին, որ պետության շահերը պաշտպանելու համար այդպիսի քաղաքականություն վարելու անհրաժեշտություն չկար։ «Միության կազմակերպության մեղքը, որը մշակել և մտածված իրականացնում էր ոչնչացման և կողոպուտի այդ ներքին քաղաքականությունը, ակներև է։ Նրա պարագլուխներն ընկնում են մարդկության ամենամեծ հանցագործների շարքը» (42, էջ 83)։ Գրության հեղինակները համապատասխան փոխհատուցում էին խոստանում երիտթուրքական քաղաքականությունից տուժած հայերին, խոսում էին անհրաժեշտ ժամանակի մասին այդ խնդիրն իրականացնելու համար։ Եվ վերջապես ազդարարվում էր, որ «այդ ամենի համար, բոլոր պաշտոնական անձինք, ովքեր գործել են որպես միության կազմակերպության գործակալներ հայերին ոչնչացնելու և կողոպտելու կամպանիայում, արդեն ձերբակալված են և տրված են դատի» (42, էջ 83—84)։ «Մի խոսքով արդարությունը լրիվ գործողության մեջ է դրված»,— ասված էր այնտեղ։ «Տեղահանված բնակչությունը վերադառնում է իր տները», կողոպուտից տուժած մարդկանց տրվում են նպաստներ, «առանձնացվում են նշանակալի ֆոնդեր», տուժածների «վիշտն ամոքելու» համար։ Կ. Պոլսի տնօրենները գրում էին, որ «թուրք ժողովուրդն իր գլուխը խոնարհում է» հայ ժողովրդի ողբերգության առաջ: «Դա նա անում է տխրությամբ՝ հայ ժողովրդի և ամոթով՝ իր համար: Նա խոստովանում է դա և պարտավորություններ է իրականացնում, որոնք ծագել են այդ իրադրության հետևանքով։ Բայց թուրք ժողովուրդը մերժում է որևէ բարոյական պատասխանատվություն, որ կապված է իր անարժան ղեկավարների գործողությունների հետ և նրանց չի ճանաչում» (42, էջ 84)։ Այնուհետև ասվում էր, որ «թուրքերն իսկապես սպանել էին հայերին, կոտորածներ կազմակերպել, կողոպտել և ավերել նրանց տները»։

Այս ամենը վկայությունն է այն բանի, որ թուրքական պաշտոնական շրջանները խոստովանել էին կատարված չարագործությունը։ Իսկ հետո՞։ Հետո ամեն ինչ արվեց սուտը հիմնավորելու համար։ Ստի հիմնավորումը թուրքական իրականության մեջ շարունակվում է։ 1918—1921 թթ. երիտթուրքերին քննադատեցին ու դատապարտեցին բուն Կ. Պոլսում։ Այստեղ թարգմանաբար հայերեն լույս ընծայվեցին երիտթուրքական քաղաքականության մերկացմանը նվիրված տասնյակ գրքեր, ժողովածուներ։ Թուրքիայի ներքին դժվարին վիճակը, սովը, թշվառությունը, գյուղատնտեսական արտադրության անկումը՝ այս ամենը վերագրվում էր պատերազմին մասնակցելու երիտթուրքական քաղաքականությանը։

1919-ի հունվարին Ստամբուլում սկսվեց «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցության ղեկավարության հանցագործությունները քննող դատական պրոցես։ Այն տեղի էր ունենում Անտանտի և, առաջին հերթին, Անգլիայի օկուպացիոն զորքերի հսկողության տակ։ «Զինադադարից հետո,— իր հուշերում գրել է Ուինստոն Չերչիլը,— թուրքերն ասում էին. մենք արժանի էինք պատժվելու, բայց թող մեզ պատժի մեր հին բարեկամ Անգլիան» (24, էջ 247)։

Հայկական կոտորածի համար պատասխանատու թուրքական կառավարության անդամներին պատժելու պահանջով Մեծ Բրիտանիայի պառլամենտի համայնքների պալատում 1918-ի նոյեմբերի 12-ին հարցապնդումով հանդես եկավ դեպուտատ Ուայթը։ Նա անհրաժեշտ էր համարում, որպեսզի դաշնակիցների ներկայացուցիչները դրա վրա պնդեին Թուրքիայի հետ խաղաղության պայմանները քննարկելիս։ Բալֆուրը պատասխանեց, թե վաղ է հիշատակել այն պայմանները, որոնք դրվելու են խաղաղության կոնֆերանսի առջև, ավելացնելով, որ «իր հարգարժան բարեկամի առաջարկությունը նա վերաբերվում է համակրանքով» (36, էջ 12)։

Համաշխարհային հասարակական կարծիքը հետևում և լայնորեն արձագանքում էր պատերազմի ավարտից հետո թուրքական կյանքի երևույթներին։ Թերթերի էջերում տպագրվում էին ականատեսների վկայություններ երիտթուրքական չարագործների հակահայկական քաղաքականության մասին։

Արդեն 1918—1919 թթ. Արևմուտքում լույս տեսան բազմաթիվ գրքեր, որոնց հեղինակները ոչ միայն դատապարտում էին հանցագործներին, այլև պահանջում էին նրանց դատական պրոցեսը կազմակերպել Անտանտի և ԱՄՆ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ։

Կ. Պոլսի «Սաբահ» թերթը 1919-ի հունվարի 31-ին հրապարակեց ձերբակալված իթթիհադական պարագլուխների ցուցակը։ Պատասխանատվության կանչվածների մեջ էին Ջավիդը (նախկին ֆինանսների մինիստր, պառլամենտի փոխնախագահ), Շյուքրին (իթթիհադի կենտկոմի գլխավոր քարտուղար), Կարասոն (դեպուտատ Կ. Պոլսից), Ջամփոլադը (նախկին ներքին գործերի մինիստր), Սաբրին (կենտկոմի պատասխանատու քարտուղար), Զիա Գյոք Ալփը (իթթիհադի կենտկոմի անդամ) և բազմաթիվ ուրիշներ։

1919-ի փետրվարի 12-ին, Փարիզի վրա հենվելով, «Նյու Յորք Թայմսը» հաղորդում էր թուրքական զինվորական դատարանի աշխատանքի սկսման մասին. «Դիարբեքիրի նահանգապետը առաջինը պետք է պատասխանատվության կանչվեր կոտորածի համար»։ Բացելով դատը գլխավոր մեղադրողը խոսում էր աշխարհը սարսռեցրած կոտորածի հեղինակներին պատժելու անհրաժեշտության մասին։

Նախկին մեծ վեզիր Թեֆիկ փաշան մի իտալական թերթի տված իր հարցազրույցի մեջ («Նյու Յորք Թայմս», 13. 3. 1919) պահանջեց ստեղծել միջազգային հանձնաժողով, պարզելու և հաստատելու համար հայերի ոչնչացման փաստերը։ «Միայն այդ ճանապարհով Եվրոպան կարող է իմանալ ճշմարտությունը։ Մենք ոչ միայն չենք ժխտում Հայաստանում տեղի ունեցած ծանր իրադարձությունները, այլև խորապես ցավում ենք դրանց համար։ Մենք այժմ դատում ենք նրանց, ովքեր պատասխանատվություն են կրում»։

Էնվերը, Թալեաթը, Ջեմալը և մյուսները հանցագործ էին ճանաչվում ոչ միայն հայկական ջարդերի, այլև Քութ էլ-Ամարայի ճակատամարտում թուրքական բանակին գերի ընկած անգլիացի զինվորների և սպաների նկատմամբ կիրառված դաժանությունների համար («Ճակատամարտ», 13. 2, 1920, Կ. Պոլիս)։

Երբ Բեռլինում թուրքական դեսպան Ռիֆաթ փաշային հաջողվեց կազմակերպել Թալեաթի, Բեհաէդդին Շաքիրի, դ-ր Նազըմի և մյուսների ձերբակալությունը և ուղարկում Կ. Պոլիս, վարչապետ Դամադ Ֆերիդ փաշան անձամբ հեռագրեց նրան, հայտնելով, թե նա պաշտոնանկ է արված։ Բանն այն է, որ Գերմանիայի արտաքին գործերի մինիստր դ-ր Զոլֆը Թալեաթի և մյուսներին ձերբակալելու համար համոզիչ հիմքեր էր պահանջում։

Դատավարության նյութերի իսկական բնագրերը կարելի է գտնել «Թաքվիմ-ի Վաքայի» թուրքական պաշտոնական պարբերականի և նրա հավելվածների էջերում։ Զինվորական դատարանի նիստերի պաշտոնական արձանագրությունների հրապարակումները կրում էին հետևյալ վերնագրերը «Թաքվիմ-ի Վաքայի», «Դիվան-ի Հարբի-ի», «Օրֆի Մուհաքեմեթ-ի», «Զաբիթ Ջերիդեշի»։

Տես՝ «Թաքվիմ-ի Վաքայիի» հետևյալ համարները.

3540 (5. 5. 1919), էջ 1—14
3571 (10. 6. 1919). էջ 127—140
3604 (22. 7. 1919), էջ 217—220
3616 (6. 8. 1919), էջ 103
3617 (7. 8. 1919), էջ 1—2
3771 (9. 2. 1920), էջ 1—2
3772 (10. 2. 1920), էջ 3—6

Դատարանի նիստերը շարունակվեցին ամիսներ։ Զինվորական տրիբունալի անդամները 5 հոգի էին. բոլորն էլ թուրքեր (կորպուսի հրամանատար՝ նախագահ, պատերազմի մասնակիցների գեներալ և մի մայոր)։

Երիտթուրք ղեկավարներին ներկայացվել էր երկու մեղադրանք. Թուրքիայի ներքաշումը պատերազմի մեջ և հայ ժողովրդի բնաջնջումը։ Սա արդեն պաշտոնական ճանաչումն էր հրեշավոր ոճրագործության, որ կատարել էին երիտթուրքական պետական մարմինները։

Այսօրվա թուրքական պրոպագանդան, «պատմագիտությունը» ջանք չեն խնայում աղավաղելու պատմական փաստերը, սերունդներից թաքցնելու թուրքական պետականության կատարած անընդգրկելի ոճրագործությունը։ Նրանք

փորձում են շրջանցել այն ճշմարտությունը, որ թուրքական պետական մարմինները 1919-ի սկզբից իրոք ձեռնամուխ եղան երիտթուրքական ոճրագործների դատավարությունը կազմակերպելուն։ Այն իհարկե կիսատ-պռատ բան էր 1945—1946 թթ. Նյուրնբերգի միջազգային դատարանի համեմատությամբ, բայց էական գործողություն, որի հանգամանքների իմացությունն անհրաժեշտ է այսօրվա թուրքական աղավաղումները ըմբռնելու և դատապարտելու համար։

Դատարանի առջև ցուցմունքներ էին տալիս ոչ միայն հանցագործություններին մասնակից պետական և զինվորական բարձրաստիճան գործիչներ, այլև վկաներ, ականատեսներ։ Հրապարակ էին հանվում վանդալիզմի բազմաթիվ նոր օրինակներ։

Ուրեմն, պատերազմից հետո Կ. Պոլսի թուրքական կառավարությունը, որի գլուխ կանգնած էր Թեֆիկ փաշան,[1] ձերբակալեց իթթիհադի 63 բարձրաստիճան գործիչների, այդ թվում Սայիդ Հալիմ փաշային, Վեհիբ փաշային, Միդհատ Շյուքրի, Քյուչուկ Թալեաթ, Ջավիդ բեյերին և այլոց (13, էջ 320—322)։

Որոշ ֆրանսիական, հայկական աղբյուրներ տեղեկացնում են, որ զինվորական դատարան էր հրավիրվել նաև գեներալ Մուստաֆա Քեմալը։ 1918-ի ավարտի ու 1919-ի սկզբի խառնակ շրջանում թուրքական քաղաքական կյանքի ասպարեզում Էնվերին ու նրա գործակիցներին հակառակորդ ամեն մի գործիչ ակտիվություն էր հանդես բերում։ Դատարանին Մ. Քեմալի տված վկայությունները խիստ մեղադրական փաստեր էին պարունակում երիտթուրքական կառավարողների հասցեին։ Նա դատապարտում էր իթթիհադ կառավարության պարագլուխներին, նրանց կատարած հանցագործությունները։ Այլ աղբյուրներ ժխտում են այս փաստը։

[1] Թուրքական կառավարությունը գլխավորեց 1918-ի նոյեմբերի 9-ից, անգլիական զավթարարների ցանկությամբ։ Թեֆիկ փաշան արտաքին գործերի մինիստր էր սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք, իսկ 1908-ի հեղաշրջումից հետո Թուրքիայի դեսպանն էր Լոնդոնում։ 1919-ի մարտի սկզբից վարչապետի պաշտոնում կարգվեց հայտնի անգլոֆիլ, Օքսֆորդի համալսարանավարտ, թուրքական «Ազատություն և համաձայնություն» կամ ինչպես ընդունված է ասել «Ահրար» կուսակցության պարագլուխ Դամադ Ֆերիդ փաշան։

Անհավասիկ հատված Մուստաֆա Քեմալի ելույթից Կոստանդնուպոլսի գերագույն ատյանի առաջ 1919-ի հունվարի 27-ին. «Փաշաները, որոնք իրագործեցին անասելի և աներևակայելի ոճիրներ և որոնք այդպիսով երկիրը հասցրեցին ներկա վիճակին, իրենց անձնական շահերն ապահովելու համար նորից հրահրում են խռովություններ։ Նրանք հիմք դրեցին ամեն տեսակի բռնակալության, կազմակերպեցին տեղահանություններ և ջարդեր, նավթով այրեցին ծծկեր երեխաներին, ծնողների ներկայությամբ բռնաբարեցին կանանց և երիտասարդ աղջիկներին, կապկպեցին, վիրավորեցին և բաժանեցին երիտասարդ աղջիկներին իրենց հայրերից և մայրերից, բռնագրավեցին նրանց շարժական և անշարժ գույքը, ողբալի վիճակով աքսորեցին կանանց մինչև Մոսուլ՝ կատարելով ամեն տեսակի բռնություններ։ Նրանք նավերի վրա բարձեցին հազարավոր անմեղների ու ծովը նետեցին։ Մունետիկների միջոցով նրանք հռչակել տվեցին, որ օսմանյան կառավարությանը հավատարիմ ոչ մահմեդականները պարտավոր են հրաժարվել իրենց հավատքից ու ընդունել իսլամը։ Նրանք պարտադրեցին դավանափոխությունը, ամբողջ ամիսներով սոված քայլել տվեցին ծերերին և ստիպեցին կատարել տաժանակիր աշխատանքներ։ Նրանք կանանց նետել տվեցին անտանելի պայմաններում գտնվող հասարակաց տներ։ Դեպք, որ աննախադեպ է որևէ այլ ազգի պատմության մեջ» (34ա, էջ 54; 35, էջ 121—122)։

Դատարան էր կանչվել և իթթիհադի դեմ վկայություններ տվեց արդարադատության նախկին մինիստր Սայիդ Մոլլա բեյը։ Սրա ասածները տպագրվել էին «Փեյամ» թերթում (17. 8. 1922)։ Սա կոչ էր անում զատել թուրք ժողովուրդը իթթիհադից ու նրա գեոնմե ղեկավարներից։ «Թուրք ընելու տեղ,— ասում էր նա,— պետք է դուրս հանել սելանիկցի գեոնմեները և այդ գեոնմեների կողմե կազմակերպված ոճիրները ու իթթիհադը»։

Ավելի ուշ, 1926-ին, երբ բացահայտվեց արդեն պրեզիդենտ դարձած Մուստաֆա Քեմալի դեմ երիտթուրքերի կազմակերպած դավադրությունը, «Լոս Անջելես էկզամիները» թերթին տված հարցազրույցի մեջ ինքը՝ Քեմալ փաշան սպառնում էր կախել և գնդակահարել այն բոլոր մեծ և փոքր

պաշտոնյաներին, որոնք մասնակցել էին նրա դեմ կատարված մահափորձին։ Նա հայտարարել էր, թե «պիտի կոտորեմ բոլորը և պիտի ջնջեմ իթթիհադի բոլոր անդամներին: Այս կուսակցությունն էր, որ իր տխուր քաղաքականության պատճառով կոտորել տվեց և տեղահան արեց մեկ միլիոն քրիստոնյաներ» (12, № 59, 1926)։ Տվյալ դեպքում ճշմարտությունն ասելը համապատասխանում էր նրա քաղաքական շահերին։

Դատական պրոցեսի ընթացքում ի հայտ էին բերվում նոր փաստեր, նոր ոճրագործություններ։ Ամեն մի հիշատակություն առիթով դատարանն անում էր նոր հարցումներ տեղեկության ստանալու համար ...

նաև եվրոպական ու ռուսական հասարակական կարծիքի համար։ Գենոցիդի վերաբերյալ հիմնական վավերագրերն ամբողջությամբ կամ մասնակիորեն ընթերցվում էին զինվորական դատարանում այն անձանց ներկայությամբ, ովքեր ստորագրել էին կամ առնչություն ունեին վավերագրերի մեջ հիշատակված դեպքերին։ Այդ փաստաթղթերի հավաստիությունը ճշտելուց հետո նրանք տեղ էին գտնում դատական արձանագրությունների մեջ։

Հայոց կոտորածին վերաբերող վավերաթղթերը ընթացքի մեջ էին դրվում (կամ կցվում էին գործին) նրանց հավաստիությունը հաստատվելուց հետո։

Ներքին գործերի մինիստրությունը, ինչպես նաև փոստի և հեռագրի մինիստրությունը, Թուրքիայի զինվորական դատարանն ինքը պաշտոնապես պահանջում էին թուրքական նահանգական իշխանություններից հայերին վերաբերող փաստաթղթերը։ Տեղական (կամ նահանգական) ինչպես քաղաքացիական, այնպես և զինվորական իշխանությունները, ինչպես նաև օսմանյան կայսրության փոստի ու հեռագրի տեղական մարմիններն սկսեցին ուղարկել ուղիղ թուրքական զինվորական դատարան կամ ներքին գործերի մինիստրությանը տեղերում առկա փաստաթղթերը։ Թուրքական և դաշնակից տերությունների քաղաքացիական և զինվորական մարմինները փաստաթղթերից շատերը հայտնաբերում էին որոշակի պաշտոնական հետաքննություններ կատարելով։

Վավերագրերը կարելի է բաժանել երկու խմբի՝ գենոցիդին վերաբերող բնագիր փաստաթղթեր, իրավասու մարմինների և անհատների կողմից վավերացված պատճեններ, ինչպես նաև զինվորական ատյանի արձանագրություններից հանված փաստաթղթեր։ Բոլոր վավերագրերը, ինչպես բնագրերը, այնպես և վավերացված պատճենները վերականգնըվում էին նահանգական քաղաքացիական և զինվորական մարմինների կողմից, նախքան ներքին գործերի մինիստրության զինվորական դատարան՝ հետաքննական հանձնաժողովին ուղարկելը։ Անհրաժեշտության դեպքում ներքին գործերի մինիստրությունն ինքն էր վերծանում գաղտնագրված հեռագրերը։ Ներքին գործերի մինիստրությունում նահանգական իշխանություններից ստացված փաստաթղթերը պաշտոնապես ուղարկվում էին զինվորական դատարան։

Բարսամ բեյը, Մարդինի նահանգապետը (Դիարբեքիրի վիլայեթ), 1918-ի դեկտեմբերի 17-ին հեռագրով հաղորդում էր Մարդինի հետաքննական հանձնաժողովի նախագահին այն կոտորածների մասին, որ կազմակերպել և իրագործել էր Դեր Զորի մյութեսարիֆ Զեքի բեյը և 7 այլ փաստաթղթեր, որոնք պետք է փոխանցվեին Կ. Պոլսի հետաքննչական հանձնաժողովի նախագահին։ Մի այլ հեռագրով նա ուզում էր իմանալ տրված հեռագրերի տեղ հասնելու մասին։

1919-ի փետրվարի 9-ին Անկարայի գեներալ նահանգապետ Ազմի բեյը պատասխանելով 1919-ի փետրվարի 2-ի զինվորական դատարանի նախագահի հեռագրին, հայտնում էր նրան, որ «վավերացված փաստաթղթերի պատճենները հղվել են փոստով»։ Նա փոստով ուղարկել է 42 հեռագրերի պաշտոնապես վավերացված պատճենները...

Սըվասի նահանգապետության առաջին քարտուղարը 1918-ի դեկտեմբերի 13-ին ուղարկել էր Կ. Պոլսի հետաքննչական հանձնաժողովի նախագահին 16 հեռագրերի պաշտոնապես վավերացված պատճենները, որոնք փոխանակել էին ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան, Սըվասի գեներալ նահանգապետ Մուհամմեդ բեյը և Էրզինջանի, Գարահիսարի և Աղվանիսի այլ բարձրաստիճան պաշտոնատար անձինք։

Ի պատասխան զինվորական դատարանի նախագահի 1919-ի փետրվարի 2-ի № 2851 հեռագրի, Յոզգաթի նահանգապետը հայտնում էր, որ Յոզգաթի բանտից ազատված 65 հանցագործներին զինել են, նրանց հետ անցկացրել են հատուկ պարապմունքներ Անկարայի նահանգի խորում քաղաքում և մտցրել են «Թեշքիլաթը Մախսուսե» հատուկ կազմակերպության անդամների ցուցակների մեջ, նպատակ ունենալով նրանց հանձնարարել հայ տարագիրների սպանությունը ճանապարհներին։ Զինվորական դատարանի նախագահին է ուղարկվել նաև այդ 65 հանցագործների ցուցակը։

Գլխավոր դատախազի 1919-ի ապրիլի 12-ի մեղադրական արձանագրությունը պարունակում է բազմաթիվ պաշտոնական վավերագրեր, որոնք վկայում են, որ թուրքական

կառավարությունը խնամքով կազմակերպել և վավերացրել է բազմաթիվ հայերի գենոցիդը։ «... 1914-ի հուլիս... զինվորական տեղաշարժերից անմիջապես հետո նրանք՝ Թալեաթը, Էնվերը և Ջեմալը սկսեցին իրենց գաղտնի նպատակների իրագործումը։ Նրանք կազմակերպեցին «Թեշքիլաթը Մախսուսե», որը կազմված էր բանտերից ազատված հանցագործներից։ Վերջիններս կազմում էին «հատուկ հրամաններով և առաջադրանքներով գործող բանդաների կորիզը»։ Զորահավաքի սկզբում լուրեր տարածվեցին, որ բանդաները պետք է մասնակցեն պատերազմին և արվեց ամեն ինչ, որպեսզի դյուրահավատ ժողովրդին համոզեն, որ այդ է եղել բանդաների ստեղծման բուն նպատակը։ Բայց ապացույցները և բանդաների վերաբերյալ վավերագրերը վկայում են, որ նրանք ստեղծվել են հենց տարագիր հայերին ոչնչացնելու համար (գլխավոր դատախազի մեղադրական արձանագրությունից, տրված 1919-ի ապրիլի 12-ին «Թաքվիմ-ի Վաքայի» թերթի № 3604-ում)։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներն ու ղեկավարները ինչպես կենտրոնում (Կ. Պոլսում), այնպես էլ գավառներում ստեղծեցին մի հատուկ կազմակերպություն («Թեշքիլաթը Մախսուսե»)։ Հենց այս կազմակերպության միջոցով էլ բնաջնջում էին ժողովրդին, կողոպտում գիակները, ավերում գյուղերը, անարգում ու տանջամահ անում կանանց (թուրքական զինվորական դատարանի 1919-ի մայիսի 26-ի դատավճռից, տպված թուրքական «Թաքվիմ-ի Վաքայի» պաշտոնական լրագրում № 3571, 1919 թ.)։

«... Սպանությունները կատարվում էին Թալեաթի, Ջեմալի և Էնվերի հրամաններով...» (դատարանի դատավճռից, թուրքական «Թաքվիմ-ի Վաքայի» պաշտոնական թերթ, № 3543, 1919 թ.)։ Այս երեք մինիստրներն էլ Թուրքիայի զինվորական դատարանի կողմից մահվան դատապարտվեցին։

Զինվորական դատարանում տրված վկայություններն ապացուցում են, որ Տրապիզոնի, Յոզղաթի և Բողազլյանի կոտորածները կազմակերպված են եղել «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարության կողմից

(«Թաքվիմ-ի Վաքայի» թերթի № 3604 համարում, 1919-ի հուլիսի 5)։

Զինվորական դատարանի արձանագրությունները պարունակում են բազմաթիվ փաստեր, որոնք հաստատում են թուրքական կառավարության կատարած հանցագործությունները (Կ. Պոլսում հրատարակվող «Թերջիմանի Հաքիքաթ» օրաթերթից 1920-ի օգոստոսի 5, թարգմանված Հայկ Կ. Ղազարյանի կողմից «The Genocidal Turk», 1968, Բեյրութ, Լիբանան)։

Քեմալ բեյի դատապաշտպան, Յոզղաթի գործող նահանգապետ Սաադեդին բեյը զինվորական դատարանի առաջին նիստում (1919-ի փետրվարի 5) հայտարարեց. «Այս մեղադրյալները արժանի են ներողամտության, քանի որ նրանք կատարել են հրամաններ։ Առաջին հերթին պետք է պատժել մինիստրներին, կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին ու նրանց մեղսակիցներին, այնուհետև անցկացնելով համապատասխան քննություն, պարզել նրանց ենթակա անձանց դերը («La Renaissance», Կ. Պոլիս, № 58, 1919 փետրվարի 6)...» Այնուհետև պաշտպանը նշեց, որ «հայերին վտարելու հրամանը հավանություն է արժանացել մինիստրների խորհրդում և օրինականություն է ստացել Սուլթանի մի կայսերական «իրադեով» («Ժամանակ», Կ. Պոլիս, 6 փետրվարի 1919 թ.)։

Թուրքական զինվորական դատարանի գլխավոր դատախազ Սամի բեյը իր մեղադրական արձանագրության մեջ արեց հետևյալ հայտարարությունը. «Ճիշտ է, ամեն ոք պարտավոր է կատարել իր վերադասի հրամանը, բայց նա պետք է կշռադատի, արդյոք տրված հրամանը չի՞ հակասում օրենքին և արդարությանը և պե՞տք է այն կատարել, թե ոչ։ Ելնելով դրանից, որոշ պաշտոնյա անձինք չեն կատարել ստացված հրամանները և դեմ են դուրս եկել դրանց»։ Անկարայի վալի Մաժար բեյը պատասխանելով Աթիֆ բեյին, որը բերել էր նրան գենոցիդի հրամանը, ասաց. «Ոչ, Աթիֆ բեյ, ես նահանգապետ եմ, ոչ թե հանցագործ։ Ես քեզ եմ թողնում իմ պաշտոնը, ինքդ կատարիր այդ հրամանը»։

Թուրքական զինվորական դատարանի նախագահ Հայրեթ բեյն ասաց Յոզղաթի ֆինանսական դեպարտամենտի աշխա-

տակից Վեհիբ բեյին. «Սահմանադրությունն արգելում է կատարել վերադասի հրամանը, եթե այն օրինական չէ։ Դուք պետք է հրաժարվեիք ձեր պաշտոնից» («Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919 թ., մարտի 28)։

Թուրքական սպա Ահմեդ բեյը դատարանում ասաց. «Գիշերն ինձ արթնացրին ինչ-որ զինված մարդիկ։ Նրանք ինձ հանձնեցին մի փակ ծրար, որի մեջ գտնվում էր հայերին արտաքսելու հրամանը։ Քաղաքացիական մի ծառայող կոչված էր իմ հրամանները կատարելուն։ Ինձ իրավունք էր վերապահվում սպանել նրան, եթե նա դեմ կանգներ իմ հրամաններին։ Նույնը կարող էին անել և ինձ հետ, եթե ես չկատարեի իմ վերադասի հրամանները։ Հրամանը վերջնական էր և ես, որպես զինվոր, ենթարկվեցի («Ռենեսանս», Կ. Պոլիս, № 114, 13 ապրիլի 1919 թ.)։

Թուրքական զինվորական դատարանը պարզեց, որ քաղաքացիական ծառայողները զինվորականների նման օգտագործելով համապատասխան գաղտնագրերը, փոխանցում էին հեռագրեր, գաղտնի հրամաններ և առաջադրանքներ, որոնք վերաբերում էին հայերի ոչնչացմանը։ (Թուրքական «Թաքվիմ-ի Վաքայի» պաշտոնական թերթ, № 3771, 1920 թ. հունվարի 13։)

Անկարայում գործող 5-րդ բանակի հրամանատար Միրալի Խալիլ Ռեջայի բեյը 1919-ի փետրվարի 19-ին կայացած զինվորական դատարանի 7-րդ նիստի ժամանակ վկայություն տվեց, հայտարարելով. «Ես ստացա մի գաղտնագրված հեռագիր Կայսերիի հրամանատար գնդապետ Շեհաբեդդին բեյից։ Հեռագրով նա հայտնում էր, որ Բողազլյանում կոտորվել են 300 հայեր։ Այդ հեռագիրը հիմա Անկարայի հրամանատարի մոտ է։

Գլխավոր դատախազ—Ինչո՞ւ էր գնդապետ Շեհաբեդդին բեյը ձեզ հեռագրում այդ մասին։

Խալիլ Ռեջայի—Համաձայն գլխավոր հրամանատարի ցուցումների։ Հեռագիրը ես ուղարկեցի նրան։

Նախագահ—Այսպիսով, կա՞ր հայերին վերաբերող հատուկ հրաման։

Խալիլ Ռեջայի բեյ—Այո։

Նախագահի պահանջով ընթերցվեց այդ հեռագիրը («Ռե-

նեսանս», № 69, հինգշաբթի, 20 փետրվարի 1919)։ 1919-ի դեկտեմբերի 8-ին Յոզղաթի Մուխթար բեյը կապվեց Կ. Պոլիսի Հետաքննչական հանձնաժողովի նախագահ Մաժար բեյի հետ, որպեսզի հայտնաբերի գենոցիդի մեղավորներին։ Պաշտոնական փաստաթղթերից և արձանագրություններից պարզվեց, որ Յոզղաթի ժանդարմերիայի հրամանատար Թեֆիկ բեյը սպանելով 8500 հայ և յուրացնելով նրանց ողջ ունեցվածքը, տեղափոխվել է գյուղերը։ Հայտնի է, որ նա իր ժանդարմների հետ միասին Կում Կույու գյուղում սպանել է 600 հայ և հրկիզել է 150 տուն։ Նա հրամայել է մասնատել երեխաներին ինչպես ճտերի, գտնել թաքնված կանանց, երեխաներին, սպանել և նետել ճանապարհների վրա։

Ահա թե ինչպիսի տեղեկություն էր տպագրել «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցության ղեկավար անդամների դատավարության մասին թուրքական «Թաքվիմ-ի Վաքայի» պաշտոնական պարբերականը 1919-ի ապրիլին։

«Վերջապես, երկար տատանումներից հետո, երեկ կեսօրին սկսվեց կուսակցության անդամների դատավարությունը։ Զինվորական դատարանին հատկացված փոքր սենյակում հավաքվել էր մի հոծ բազմություն։ Թուրք կանայք և բարձր պաշտոնյաներ եկել էին ականատես լինելու այս դատավարությանը, որը թուրքական մամուլը կոչում է պատմական։ Այն իհարկե կլինի «պատմական», բայց ի՞նչ իմաստով։ Առայժմ հայտնի չէ։ Մեղադրյալի աթոռին նստած էին նախկին Մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, սենատի նախագահ գեներալ Խալիլ բեյը, Ահմեդ Նեսիմի բեյը, Զիա Գյոքալփը, Միդհատ Շուքրին, Ահմեդ Շուքրին, Ջավիդը, Քեմալը, Իբրահիմը, Յուսուֆ Ռիզան և Աթիֆը։ Ներկաների հայացքների ներքո նրանք ասես շփոթված լինեն։ Նախագահը խնդրում է հաստատել իրենց ինքնությունը, այնուհետև կարդում են դատական արձանագրությունը։ Արձանագրության ընթերցումից հետո ձայնը տրվում է գլխավոր դատախազին։ Նա խնդրում է դատարանին մեղադրյալներին դատել պաշտոնական մեղադրանքի հիման վրա, ավելացնելով, որ դա, նաև նորին մեծություն սուլթանի կամքն է. պատժել մարդասպաններին առանց կրոնական կամ ռասայական խտրա-

կանության և այսպիսով ապահովել կայսրության տարբեր տարրերի միջև փոխըմբռնման հաստատումը»:

Մեղադրական արձանագրություն.

«Մենք ծանոթացանք զինվորական դատարանի գլխավոր դատախազի եզրակացությանը, ինչպես նաև կցված արձանագրություններին և դատական զեկուցագրերին, որոնք վերաբերում են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի նախագահ Սայիդ Հալիմ փաշայի գործի հետաքննությանը (կոմիտեն հայտնել է իր կազմալուծվելու մասին)։ Ուսումնասիրել ենք նաև գլխավոր խորհրդի հետևյալ անդամներին վերաբերող արձանագրությունները. Թալեաթ, Ջեմալ, Իբրահիմ Շուքրի, Խալիլ, Էնվեր, Ահմեդ Նեսիմի, գլխավոր քարտուղար Միդհատ Շուքրի և ազգային շտաբի անդամներ Քեմալ (Կ. Պոլսի ներկայացուցիչ), Զիա Գյոք Ալփ, դոկտոր Նուսուհի, Քուչուկ Թալեաթ, «Թեշքիլաթը Մախսուսե» հատուկ կազմակերպության նշանակված ազգային շտաբի անդամներ դոկտոր Բեհաէդդին Շաքիր, դոկտոր Նազըմ, Աթիֆ, Ռիզա, կոմիտեի վարչությանը ենթակա անդամներ, քրեական հետախուզության բաժնի նախկին դիրեկտոր Ազիզ և տեղի նախկին հրամանատար Ջավիդ»:

Այս փաստաթղթերից պարզ է դառնում, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն ընդհանուրի կողմից ճանաչված, հետևապես պաշտոնապես գործելու հետ միաժամանակ, գործել է որպես գաղտնի կազմակերպություն՝ ղեկավարվելով միայն բանավոր ցուցումներով:

Վկայություններ կան, որ այս կոմիտեների կորպորատիվ կազմակերպությունը մեղադրվում է մի շարք կոտորածների, կողոպուտների ու կաշառակերության մեջ և, որ այս կոմիտեի վերը նշված ազդեցիկ ղեկավարների պատասխանատվությունը հաստատված է։ Եվ հանցագործությունը, որի մեջ նրանք մեղադրվում են, հաստատված է հետևյալ փաստերով.

1914-ի հուլիսին, կոմիտեի ղեկավարության նիստին հաջորդած զորահավաք հայտարարելուց անմիջապես հետո, կոմիտեի ազդեցիկ անդամներ Էնվերը և Ջեմալը (երկուսն էլ դատավարության ժամանակ հեռացված էին զինվորական ծառայությունից), ինչպես նաև Թալեաթը, օգտվեցին համաշխարհային պատերազմից, որը համակել էր ողջ Եվրո-

պայի ուշադրությունը։ Նրանք փորձում էին բռնի ուժով լուծելու դեռևս անորոշ մնացած այնպիսի հարցեր, որոնք պետք է համբերատարությամբ և տրամաբանական պահանջներից ելնելով լուծվեին դատարանների կողմից։ Գործողության այդպիսի ընթացքին խոչընդոտելով նրանք ծանր լուծ դրեցին բնակչության վրա, իրենց դաժան գործողություններով առաջացնելով բազմաթիվ անկարգություններ։

Արտաքինից ձևացնելով, թե ծառայում են ազգային շահերին, նրանք իրականում ցանկանում էին պատերազմի սարսափների մեջ խեղդել ազգի ձայնը։ Օգտվելով ստեղծված իրադրությունից, նրանք անցան բռնակալական գործողությունների և անձնական հարստություն կուտակելուն։ Ահա թե ինչու նրանք, թակարդ լարելով, կայսրությանը ներքաշեցին պատերազմի հորձանուտը, նախքան դա կդառնար կատարված փաստ։

Զորաշարժերից անմիջապես հետո նրանք սկսեցին իրենց քողարկված գործողությունները՝ նախատեսված գաղտնի կոմիտեների համար, որպեսզի իրականացնեին իրենց մութ մտադրությունները։ Նրանք կազմակերպեցին «Թեշքիլաթը Մախսուսե» (Հատուկ կազմակերպություն), որտեղ ընդգրկված էին բանտից ազատված հանցագործներ։ Սրանք էլ ստեղծեցին ավազակախմբերի կենտրոնը՝ հատուկ հրահանգներով և կանոններով:

Այս կազմակերպությունը ղեկավարում էին Ազիզ բեյը՝ քրեական հետախուզության դիրեկտորը, Աթիֆը և դոկտոր Նազըմ բեյը, իսկ Կ. Պոլսի զինվորական նահանգապետ Ջավիդ բեյը վավերացնում և իրականացնում էր նրանց որոշումները։ Մեծ գումարներ էին հատկացվում գործակալներին և իրենց ծառայությանը կցված մարդկանց՝ նրանց գործուղելով երկրի տարբեր շրջաններ։

Դոկտոր Բեհաէդդին Շաքիրը «Միություն» կուսակցության ղեկավարներին տվեց ծածկագրերի բանալին, նրանց տրամադրեց մեծ քանակությամբ մեքենաներ, փող և ոչնչացման միջոցներ։ Այսպիսով, գաղտնի պայմանավորվածության համաձայն նա կատարում էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարների կամքը։

Այս կոմիտեի կողմից գավառներն ուղարկված անդամ-

ներից մի քանիսը՝ իրենց ղեկավարների հրահանգներին համապատասխան կազմակերպեցին ջարդեր և կողոպուտներ, հրդեհում էին տները, տեղի բնակչությունը ենթարկում տանջանքների։ Նման գործողություններից ամենից շատ տուժեցին հայերը, բայց քիչ չէին նաև թուրք զոհերը։

Տարվող հետաքննությունից բխող կարևոր փաստն այն է, որ հայերին տարբեր ժամանակներում տարբեր տեղեր քշելու ժամանակ կատարված հանցագործությունները մեկուսացված փաստեր չեն։ Վերը նշված անձանցից բաղկացած մի կենտրոնացված ուժ նախօրոք կշռադատել է անելիքը և ի կատար ածել այն գաղտնի հրամաններով կամ բանավոր հրահանգներով։ Բեհաէդդին Շաքիրն ուղևորվեց Էրզրում ղեկավարելու արևելյան վիլայեթների զինված ուժերը, Ռիզա բեյը գնաց Տրապիզոնի կողմի շրջանները, իսկ Ազիզ, Աթիֆ և Նազըմ բեյերը գործում էին Կ. Պոլսում։ Տեղի հրամանատար Ջավիդ բեյին վստահված էր ի կատար ածելու վերջիններիս կողմից ընդունած որոշումները։

Խալիլի, Նազըմի, Աթիֆի և Ազիզի կողմից ստորագրված № 50 գրությունը ուղղված Միդհատ Շուքրի բեյին, հաստատում է, որ Էնվերի հորեղբայր Խալիլը նույնպես «Թեշքիլաթը Մախսուսեի» անդամ էր։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ այդ կազմակերպությունը կապված էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հետ։ Նույն Խալիլ բեյը № 67 հեռագիրը (ուղղված Իզմիրի նահանգապետին), վկայում է, որ վարձել էին բանդաների ղեկավարներ և բանտերից դուրս բերված հանցագործներ։ Նույն Խալիլ բեյի կողմից 1914-ի նոյեմբերի 16 ամսաթվի տակ գրված № 68 թեզքերեում, ուղղված ռազմական մինիստրին, նշվում է, որ «Թեշքիլաթը Մախսուսեն» զենք և զինամթերք է ստացել։ Նման փաստաթղթերի կարելի է հանդիպել այս կազմակերպության նաև այլ արձանագրություններում. բայց և այնպես հետաքննության ընթացքում պարզվեց նաև, որ այս հատուկ կազմակերպությանը պատկանող փաստաթղթերի մի կարևոր մասը և կենտրոնական կոմիտեի բոլոր փաստաթղթերը գողացել են Ներքին գործերի մինիստրության թեզքերեի (սերիա 31) կետերի բովանդակությունից, ինչպես նաև վստահելի ցուց-

մունքներից կարելի է եզրակացնել, որ կարևոր փաստաթղթեր և նամակներ պարունակող թղթապանակները կազմակերպությունից տարել է քրեական հետախուզության նախկին պետ Ազիզ բեյը Թալեաթի հրաժարական տալուց ոչ շատ առաջ։ Պաշտոնը թողնելուց հետո Ազիզ բեյը չվերադարձրեց այդ թղթապանակները։

Կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհատ Շուքրի բեյի 1914-ի օգոստոսի 17-ի ծանուցագրում (Էրզրումի գլխավոր նահանգապետի միջոցով ուղարկված Բեհաէդդին Շաքիր բեյին) ասված է, որ «ռազմական գործողությունները պլանավորված են եղել պատերազմի սկսվելուց շատ առաջ և որ դա եղել է կոմիտեի նպատակն ու ցանկությունը»։ Այն փաստը, որ Դիարբեքիրում կատարված կոտորածներն ու գազանությունները տեղի են ունեցել Թալեաթ փաշայի դրդմամբ, ապացուցում է Ջորի նահանգապետին ուղղված մի գաղտնագրված հեռագիր. «Ալի Սուադ բեյը Թալեաթին». Նրանում քննարկվում էր Դիարբեքիրի վալիին, իր համհարզին և կոմիսար Մեմդուհին մահվան դատապարտելու անհրաժեշտությունը։ Այս հեռագրի վրա գրվեց, «պահպանել» մակագրությունը և մի կողմ դրվեց։ Ներքին գործերի մինիստրի գաղտնի շարքի պետ Իհսան բեյը պնդում է, որ իր Քիլիսի կայմակամ եղած ժամանակ Աբդուլ Ահմադ Նուրին Կ. Պոլսից Հալեպ ուղարկվելուց հետո հայտարարել է, որ աքսորումների նպատակը եղել է բնակչության ոչնչացումը։ Նա ավելացրեց. «Ես կապ էի պահպանում Թալեաթ բեյի հետ։ Կոտորածների հրամանները ես նրանից ստանում էի անձամբ։ Դրանում էր կայանում երկրի փրկությունը»։

«... Խարպուտ վիլայեթի գլխավոր նահանգապետը հայտնում է, որ ճանապարհները լիքն են կանանց և երեխաների դիակներով և ինքը ի վիճակի չէ թաղել դրանց (սերիա 8, փաստաթուղթ 8)»։ Փախստական Թալեաթին վերաբերող թղթապանակի այս հեռագիրը պահվում է պառլամենտի հինգերորդ դեպարտամենտում և այն փաստը, որ Ջորի նշված նահանգապետի ուղարկած հեռագիրը պետք է պահպանվեր և ոչնչացվեր, հաստատվում է վերը ասվածին վերաբերող հեռագրում։

Ահա «Թեշքիլաթը Մախսուսեի» Էրզրումի բաժանմունքի նա-

խագաղ Բեհաէդդին Շաքիր բեյի Խարպուտի վիլայեթի գլխավոր նահանգապետ Սաբիթ բեյին ուղղած հեռագրից մի հատված (ֆոտոպատճեն). «ոչնչացվա՞ծ են արդյոք հայերը, որոնք նավերով հեռացվեցին այնտեղից։ Արդյոք այն վտանգավոր անհատները, որոնց վտարման մասին հայտնել եք, ոչնչացվա՞ծ են, թե՞ պարզապես աքսորված։ Եղբայրս հայտնիր ինձ ճշգրտորեն»։ Այս փաստաթուղթը հաստատում է Նազըմ բեյի կապը կոմիտեի հետ։ Այդ ժամանակ նա աշխատում էր որպես Խարպուտի «Միություն և առաջադիմություն» կոմիտեի տեսուչ։ Ներկայումս փախստական է։

Ահա մի այլ հեռագիր Սամսունում պատասխանատու քարտուղար Ռուշդիի կողմից՝ ուղղված կոմիտեի ազգային շտաբին։ Միդհատ Շուքրի բեյն այն ներկայացրել է 1914-ի դեկտեմբերի 16-ին դոկտոր Նազըմի քննարկմանը, որը գլխավորում էր «Թեշքիլաթը Մախսուսեն»։ Հեռագիրը հայտնում է հասցեատիրոջը, որ «Թուֆան աղայի գլխավորությամբ 55 հոգուց բաղկացած 5-րդ բանդան ավտոմեքենաներով դուրս է եկել։ Այն նկարագրում է «Թեշքիլաթը Մախսուսեի» և կոմիտեի գործունեությունը, որոնք պատասխանատու են եղել այդ բանդաների ստեղծման համար»։

Զորահավաքի սկզբում լուրեր էին տարածվել, թե այդ բանդաները պետք է մասնակցեին պատերազմին։ Այդպես աշխատում էին համոզել դյուրահավատ ժողովրդին։ Այնուամենայնիվ, փաստաթղթերը և ապացույցները ցույց են տալիս, որ բանդաները վարձված են եղել սպանելու և ոչընչացնելու տեղահանվող բնակիչներին։

Որ սպանությունները կատարվել են Թալեաթ, Ջեմալ և Էնվեր բեյերի կողմից, նրանց ցուցումով ու համաձայնությամբ, ապացուցում է մի ծածկագրված հեռագիր, որը 1915-ի հուլիսի 11-ին Թալեաթ բեյն ուղարկել է Դիարբեքիրի, Խարպուտի, Ուրֆայի և Զորի վալիներին ու մյութեսարիֆներին ճանապարհներին մնացած դիակները փոսերը, լճերն ու գետերը գցելու փոխարեն, թաղելու մասին։ Հրամանը նաև պարտավորեցնում էր այրել այն անձնական իրերը, որոնք մնացել են ճանապարհին։ Մի ուրիշ հեռագիր շտապ և անձամբ նշումով, ուղարկված 1915-ի հուլիսի 1-ին 5-րդ բանակի հրամանատար Ջեմալ բեյի (փաշայի) կողմից

Դիարբեքիրի վալիին, նշում էր, որ դիակները, հավանական է, որ եղել են ապստամբության ժամանակ սպանված հայերի։ Ջեմալ բեյը գրում է, որ անհրաժեշտ է բոլոր դիակներն անհապաղ թաղել և չթողնել ոչ մի դիակ դուրս։ 1915-ի հուլիսի 3-ին Ջեմալ բեյին ուղղված պատասխան ծածկագրված հեռագրում, որը կրում էր «անձամբ» նշումը, ասվում է. «Եփրատը շատ քիչ է մոտենում մեր վիլայեթին. Հավանական է հոսանքով եկող դիակները Էրզրումի և Խարպուտի վիլայեթներից են։ Այստեղ մեռնողներին գցում են խուլ ու խոր անձավները կամ ավելի հաճախ այրում։ Հազվադեպ է անհրաժեշտություն լինում դրանք թաղել։ Զորի նախկին նահանգապետ Ալի Ֆուադ բեյը տեղեկություն է տալիս այն հայերի ճակատագրի մասին, որոնք նախկինում բերվել են այս շրջանը։ Նա ասում է, որ այդ տեղեկությունն ինքը ստացել է Ազուսի բեյից, «Թասֆիր—էֆքիար» լրագրի նախկին ավանդատուից և Հալեպի Միլլի գործակալության նախկին հեռագրային խմբագրից, երբ նա ասում էր Զորի նահանգապետին. «Հաղորդում են, որ դուք ոչնչացրել եք 10.000 հայ»։ Վերջինս պատասխանել է. «Ես ունեմ իմ հպարտությունը և չեմ բավարարվում 10. 000-ով, պետք է ավելացնել»։

Խարպուտի գլխավոր նահանգապետի ծածկագրված հեռագրով Մալաթիայի կայմակամությանը ուղարկած հրամանում ասվում էր. «Չնայած հաճախակի հրամաններին, տեղեկանում ենք, որ բազմաթիվ դիակներ մնում են ճանապարհներին։ Նման վիճակից ծագող տհաճությունները ոչընչով չպետք է բացատրվեն և ներքին գործերի մինիստրը տեղեկացրել է, որ նրանք, ովքեր չեն ենթարկվում, դաժանորեն կպատժվեն։ Ձեր շրջանում գտնված բոլոր դիակների թաղումը ապահովելու համար այդտեղ պետք է ուղարկվեն անհրաժեշտ թվով ժանդարմներ և պաշտոնյաներ»։

1915-ի սեպտեմբերի 15-ին ներքին գործերի մինիստրին ուղղված ծածկագրված հեռագիրը հայտնում էր, որ Դիարբեքիրից վտարված հայերի թիվը հասնում է 120.000-ի։ Այս տեղեկությունը բավարար կերպով ցույց է տալիս դեպքերի կարևորությունը և ծավալը։ Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլի ստորագրած մի հեռագրում ասվում է,

որ «յուրաքանչյուր մահմեդական ով կփորձի պաշտպանել հային, կկախվի իր տան առաջ և տունն էլ կհրդեհվի»։ Այստեղից պարզ է դառնում, թե ինչու, այս շրջանի մահմեդականները չկարողացան կանխել գաղանությունները։

Տրապիզոնի նախկին ներկայացուցիչ Հաֆիզ Մահմեդ բեյի վկայությունը մանրամասներ է պարունակում այն մասին, թե ինչպես նստեցնելով փոքր նավակներ, հայերին հեռացնում էին Սև ծովի ափերից։ Նա նաև նշում է, որ իմանալով այս ողբերգությունների մասին Թալեաթ բեյը ոչինչ չձեռնարկեց գլխավոր նահանգապետ Ջեմալ Ազմիի դեմ, մի փաստ, որն ապացուցում է Թալեաթ բեյի մեղքը։

Էրզրումի վալի Մյունիր բեյի 1918-ի դեկտեմբերի 14-ին ուղարկված մի ծածկագրված հեռագիր հաստատում է, որ «հարուստ հայերի Էրզրումից Քղի ուղարկված մի քարավան, հակառակ նախկին գլխավոր նահանգապետ Թահսին բեյի կամքի, ոչնչացվել և կողոպտվել է Դերսիմի բնակիչների և «Միություն և առաջադիմություն» կենտրոնական կոմիտեի անդամ Բեհաէդդին Շաքիր բեյի կազմակերպած բանդաների կողմից»։

Ջեմալ Ասսաֆ բեյի գրավոր վկայությունը նկարագրում է աքսորյալների մի մասի կոտորումը քուրդ Ալոյի բանդայի կողմից։ Այս բանդան Քենդիրիում հիմնել էր նախկին վաճառական Ջեմալ Օգուզ բեյը։

Կաստեմունի վիլայեթի գլխավոր նահանգապետ Ռեշիդ փաշան հայտարարել է, որ ինքը Բեհաէդդին Շաքիր բեյից ստացել է մի ծածկագիր-հեռագիր, որում քննարկվել է աքսորների և այդ վիլայեթում «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի Էֆենդիի կատարած հանցագործությունների բացահայտման հարցը։ Կուսակցական մի ժողովում նա խնդրագիր է տվել նախագահ Թալեաթ բեյին, որում հաղորդել է հայերի հանդեպ կատարված գաղանությունների մասին և խնդրել է հետաքննել ինչպես բոլոր պատասխանատու քարտուղարներին, այնպես էլ Ռեշիդին, Ջեմալ Ազմիին, Սաբիթին, Մուհամմեդին, Աթիֆին և բանտապետ Իբրահիմ բեյին։ Թալեաթ բեյը խնդրագրի մի անկյունում արել է «պահպանել» նշումը։ Սմիրնայի (Իզմիրի) մարզական ակումբում նա ասել է.

«Այստեղ գտնվողներին ես ես նույն բախտին կարժանացնեի»։ Սմիրնայի ներկայացուցիչ Իհսան Ռիֆդ Էֆենդին հայտարարել է, որ այդ վայրագությունների դրդողներն են եղել դոկտոր Նազըմը և նրա համախոհները։ Ըստ Վեհիբ փաշայի հայտարարության, հայերի սպանությունների և կոտորածների ակունքը պետք է որոնել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ազգային շտաբի որոշումներում։

3-րդ բանակի շրջանում Բեհաէդդին Շաքիր բեյը վարձել է մարդասպանների և գլխավորել նրանց գործունեությունը։ Ղեկավարները կատարել են նրանց տված բոլոր հրամանները և առաջադրանքները։ Նա եղել է բոլոր խարդավանքների, արհավիրքների ու մութ գործերի հեղինակը։ «Առաջինը նախապատրաստում էր արյունոտ ձեռքերով ու աչքերով ժանդարմների, մինչդեռ մյուսները աշխատում էին կախաղանից փախած իրենց զինակիցների հետ...»։ Այս հայտարարությունները դատավճիռ են հանդիսանում գլխավոր խորհրդի և ազգային շտաբի անդամների համար։

Բեհաէդդին Շաքիր բեյի կենսագրության մեջ կարդում ենք. ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ավարտել է բժշկական զինվորական ուսումնարանը: Աշխատել է Փարիզի հիվանդանոցներից մեկում, այնուհետև, 1908-ից հետո, Կ. Պոլսի բժշկական ֆակուլտետի պրոֆեսոր: Իթթիհադի կենտկոմի անդամ է դարձել բալկանյան պատերազմներից հետո: Կենսագիրները հատուկ շեշտում են, որ թեև նա մինիստր չէր նշանակվել, բայց կուսակցության վերնախավի մեջ ուներ «նախայական ազդեցություն» և համընդհանուր հայերի «տեղահանման ու ոչնչացման գլխավոր կազմակերպիչներից մեկը». «նա Թալեաթի, Էնվերի և դ-ր Նազըմի աջ ձեռքն էր»: Կ. Պոլսի զինվորական դատարանում ապացուցվեց, որ նա բանտերից արձակված քրեական հանցագործներից հատուկ ջոկատներ ստեղծելու հեղինակներից մեկն էր: Բացի այդ, ականատեսները վկայություններ ավեցին այն մասին, որ նա Տրապիզոնում թունավորել է հիվանդանոցների հիվանդ հայերին:

Սուլեյման Նազըմ բեյին վերաբերող փաստաթղթերի 7-րդ էջում ասվում է, որ ճանապարհվելով Բաղդադից, երբ նա հասնում է Դիարբեքիրի սահմաններին, ստիպված է լինում փակել քիթը փտող դիակների գարշահոտությունից։ Կոնիայի վիլայեթի գլխավոր նահանգապետ Ջելալ բեյին

վերաբերող փաստաթղթերի 7-րդ էջում ասվում է՝ բանակի հրամանատար Ջեմալ փաշան հարցում է արել Հալեպ իմանալու Թալեաթ բեյի կարծիքը հայկական հարցի վերաբերյալ։ Վերջինս իր պատասխանում ընդգծել է կարծիքների այն տարբերությունը, որ եղել է իր և կառավարության կենտրոնական ապարատի միջև։ Ջելալ բեյը պաշտպանել է Կոնիայի հայերին։ Երբ Ջելալ բեյը Կ. Պոլսում հայտնեց Թալեաթին և Նազըմին իր միտքը աքսորի թերությունների մասին, վերջիններս ասացին, որ իրենք համոզված են եղել տվյալ գործի անհրաժեշտության և օգտակարության մեջ։ Դոկտոր Նազըմ բեյը նույնիսկ ասաց, թե այդ ձեռնարկը կլուծեր Արևելքի հարցը։ Ինչ վերաբերում է Ժաիրի էֆենդուն, նա ասաց, որ չնայած իր ջանքերին, իրեն չհաջողվեց դեմ կանգնել այդ որոշմանը։ Հետաքննության հանձնաժողովի նախագահ Համիդ բեյի հայտարարությունները վերաբերում են Անգորայի նախկին գլխավոր նահանգապետ Մաժար բեյին (իրեղեն ապացույցներ, էջ 17), որը հեռացել էր պաշտոնից աքսորի և սպանությունների վերաբերյալ հրամանները չկատարելու համար։ Բեհաէդդին Շաքիր բեյը Էրզրումից մի ծածկագրված հեռագիր ուղարկեց Ադալիայի նահանգապետին, որում հայտնում էր, թե ինչ է անում հիմա, երբ բոլոր հայերը Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սըվասի և Տրապիզոնի շրջաններից աքսորվել են Մուսուլ և Զոր։ Ադալիայի նախկին նահանգապետ Սաբուր բեյը հայտնում է, որ այդ հեռագրի մի օրինակը նա ուղարկել է Թալեաթ բեյին, բայց պատասխան չի ստացել։ Բեհաէդդին Շաքիր բեյի ծածկագրված հեռագրի պատասխանը վերծանվել և ի հայտ է գալիս «Թեշքիլաթը Մախսուսե» թղթապանակներում։ Գրության ետևի կողմում գրված են հետևյալ բառերը. «Քանի որ այստեղ այլևս անելիք չկա, անմիջապես մեկնեցեք Տրապիզոն ստանալու մի ավելի կարևոր առաջադրանք, քան Արդվինի գործն էր։ Հակոբ բեյը, որը շուտով կմեկնի այստեղից, կտա անհրաժեշտ բացատրություններ և առաջադրանքներ»։

Ստորև բերում ենք մի օրինակ, թե ինչպես էին երիտթուրքական հանցագործությունների մասին տեղերը հղված հարցումներին պատասխանում նահանգային իշխանությունները։

Կոնիայի նահանգապետության քարտուղարության գրասենյակ

№ 197

Ներքին գործերի մինիստրին

Գաղտնի

Ձերդ գերազանցություն

Ի հավելումն իմ № 184 հեռագրի, թվագրված 1919-ի մարտի 25։

Փնտրելուց հետո մենք գտանք հեռագրերը։ Կից ուղարկում ենք Ձեզ հեռագրերի վավերացված պատճենները։ Մենք հաղորդում ենք Ձեզ, որ այլևս նոր հեռագրեր չենք գտել։ Ձեր իրավունքն է մեզ հրամայել։

1919-ի մարտի 27

Կոնիայի գործող գեներալ-նահանգապետ
Կնիք գանձապահ

Հատուկ գրասենյակի գրանցման
1919 մարտի 31

Օսմանյան երրորդ բանակի շտաբից հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշայի հղած շրջաբերականն է հասցեագրված իր տնօրինությանը ենթակա Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի, Սըվասի, Վանի և Դիարբեքիրի նահանգների գեներալ նահանգապետներին այն մասին, որ յուրաքանչյուր մահմեդական պետք է մահապատժի ենթարկվի տեղում, եթե իր տանը պատսպարի որևէ հայի։ Այս շրջաբերականը որպես փաստաթուղթ հիշատակվել էր թուրքական զինվորական դատարանում (տես թուրքական պաշտոնական «Թաքվիմ-ի Վաքայի», № 3540, էջ 7)։

1919-ի ապրիլի 2-ին Թուրքիայի ներքին գործերի մինիստր Ջեմալ բեյը հեռագրով (№ 5083) հաղորդում էր թուրքական զինվորական դատարանի գլխավոր դատախազին, որ մի պաշտոնատար անձ հատկապես նշանակվել է 1915-ի մայիսից մինչև 1917-ի ապրիլի վերջը հայերի տեղահանության մասին հեռագրերը ընտրելու և վերհանելու համար։ Նա հաղորդում էր, որ ինքը Անկարայի գեներալ նահանգապետից ստացել է քառասուներկու հեռագրեր, ինչպես նաև Կոնիայի նահանգապետությունից այլ հեռագրերի պատճեններ, որոնք ուղարկում է նրան։ Ներքին գործերի մինիստրը խոստանում



Photocopy

Certified Copy of the ciphered circular, dated July 10, 1915, from Tortum, Head-quarter of the Third Ottoman Army, signed by Mahmut Kâmil Pashe, Commander in chief of the Third Army ordering the Governors-General of six provinces under his military jurisdiction: Trebizond, Erzerum, Bitlis, Sivas, Van and Diarbekir, to execute in front of his house every and each Moslem, who would hide Armenians in his house.

The circular of Mahmut Kâmil Pasha is quoted in the files of the Turkish Court Martial, see: in Turkish Official Gazette "Takvim-i Vakayi", No 3540, page 7, column 1 and 2, lines 11-21

էր անմիջապես զինվորական դատարանին տրամադրել բոլոր այն փաստաթղթերը, որոնք ստանալու էր այլ նահանգներից։

Այս վավերագրերն ընթերցվել էին զինվորական դատարանում Յոզղաթի շրջանում, Անկարայում կատարված չարագործությունների մեղավորներին և նրանց գործակիցներին դատապարտելիս (նյութերը տպվել էին «Թաքվիմ-ի Վաքայի» ամսաթերթում, № 3617, 1919 ապրիլ)։

Photocopy
of the original of the
ciphered telegram

dated Erzerum April 21, 1915 by Dr. Behaeddin Shakir Bey, President of the Special Organization and Chairman of Three member Executive Committee for genocide. The telegram had been despatched to Sabit Bey, Governor-General of Mamuret-Ul-Aziz to be remitted to Nazim Bey of Resné, Responsible Delegate of Union and Progress in Mamuret-Ul-Aziz, sentenced to 15 years of hard labor.

The photocopy represents:

Decoding of the ciphered telegram, and the figures each composed of four digits under the corresponding term or syllabe. The author is askig for information about the extermination of Armenians deported from Mamuret-Ul-Aziz.

Մամուրեթ ուլ-Ազիզի նահանգում կատարված գենոցիդի հեղինակների ու նրանց գործակիցների դատավարության («Թաքվիմ-ի Վաքայի» № 3771, 1920 հունվար, էջ 48—49) արձանագրության ֆոտոպատճենը։



Trial of the
authors and accomplices
of genocide in Trebizond area
Judgement in Turkish Official Gazette "Takvim-ı Vakayi", No 3616, pages 50-52, dated May 22, 1919.

The Turkish Court Martial sentenced to death in absentia Jemal Azmi Bey, Governor-General of Trebizond, who had formed gangs of "Teshkilat-ı Mahsoose", releasing from jail criminals to kill Armenian women and children, and he had given specific orders to massacre and plunder the Armenian deportees.

Transcription into modern Turkish
see page:
English translation
see page:

Դատավճիռ

Տրապիզոնի շրջանում կատարված ջարդի հեղինակների ու նրանց գործակիցների (տպագրված «Թաքվիմ-ի Վաքայի» № 3616, էջ 50—52, 1919-ի մայիսի 22)։

Թուրքական զինվորական դատարանը մահվան դատա-

պարտեց ի բացակայություն Ջեմալ Ազմի բեյին[1], Տրապիզոնի գլխավոր նահանգապետ, որը կազմել էր «Թաշքիլաթը Մախսուսե» բանդաները, ազատելով բանտերից քրեական հանցագործներին՝ սպանելու համար հայ կանանց ու երեխաներին, տվել էր հատուկ հրամաններ հայ տեղահանվածներին կոտորելու վերաբերյալ։

Թուրքական զինվորական դատարանը մահվան դատապարտեց ի բացակայություն 1920-ի հունվարի 13-ին դոկտոր Բեհաէդդին Շաքիր բեյին[2], «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի անդամ, «Թաշքիլաթը Մախսուսե» (հատուկ կազմակերպություն, որի անդամներն էին հայ կանանց ու երեխաներին սպանելու նպատակով բանտերից ազատ արձակված քրեական հանցագործները), ինչպես նաև ցեղասպանության համար ստեղծված եռյակ կոմիտեի նախագահ։

1915-ի ապրիլի 21-ին Բեհաէդդին Շաքիրը հեռագրով հանձնարարում էր Մամուրեթ ուլ-Ազիզի նահանգապետ Սաբիթ բեյին «Միություն և առաջադիմություն» կուսակցության այդ նահանգի պատասխանատու քարտուղար Ռեսնեի Նազըմ բեյից տեղեկանալ և իրեն հաղորդել Մամուրեթ ուլ-Ազիզից տեղահանված հայերի ոչնչացման մասին։

Ստամբուլի զինվորական դատարանում հրապարակվեց ականատեսի հետևյալ վկայությունը. 1918-ի դեկտեմբերի 1-ին Յոզղաթից ոմն Մուհտերի Ռիֆաաթ գրում էր Կ. Պոլիս, ներքին գործերի մինիստրին Յոզղաթի ժանդարմերիայի նախկին պետ Թեֆիկ բեյի հակահայկական խժդժությունների, կանանց ու աղջիկների բռնաբարությունների և բացահայտ կողոպուտի մասին։ Նամակագիրը պատմում էր հանցագործներից կազմված չեթեների խմբերի ու նրանց կատարած ոճիրների մասին։

Ժանդարմերիայի պետը սեփական սրով էր անդամահատում գերի հայերին՝ կանանց ու աղջիկներին։ Ականատեսը շարունակում է. «Ակ-Դաղ-Մադենին ու Բողազլյանին սպառկանող բազմաթիվ հայկական գյուղերի տներն ու բնակչությանը կրակ տալուց հետո այս հրեշը գնաց դեպի Տերզիլի

---

1 1922-ին սպանվեց Բեռլինում հայ վրիժառուների ձեռքով։

2 1922-ին սպանվեց Բեռլինում հայ վրիժառուների ձեռքով։

...نجی دیوان حرب عرفی

48

معمورة العزيز تقتيلی محاكمه لری

[illegible]

Photocopy

Trial of authors and accomplices of genocide in the province of Mamuret-Ul-Aziz.

In Turkish Official Gazette "Takvim-i Vakayi", No 3771, January 1920, pages 48-49.

The Turkish Court Martial sentenced to death in absentia on January 13, 1920, Dr. Behaeddin Shakir Bey, a member of the Central Committee of Union and Progress Party in power, President of "Teshkilat-i Mahsoose", Special Organization composed of criminals released from jail to massacre Armenian women and children, and also Chairman of the Three-member Executive Committee ~~of~~ for genocide.

See Text in modern Turkish transcription: page

See: English translation: page

և Տեհատի գյուղերը։ Այս գյուղերի հայերը գլխահակ շրջապատել էին նրան, աղաչում էին. «Խփիր մեզ,— ասում էին նրանք,— բայց ազատիր կանանց ու երեխաներին, խնայիր նրանց»։ Այս բառերը լսելով նա անխղճորեն կոտորում էր նրանց բոլորին։ Հարևան մահմեդական գյուղերի բնակչությունը մի պատվիրակություն է ուղարկում Թեֆիկ բեյի մոտ,

խնդրելով չսպանել կանանց ու երեխաներին։ Նամակագիրը ամփոփում էր հետևյալ ձևով. «Անհնարին է կազմել Թեֆիկ բեյի կատարած հանցանքների, կոտորածների ցուցակը, որ կատարել էր նա կամ նրա հրամանով»։ Թեֆիկ բեյը հայտնվում էր արյան ծարավի հրեշ։ Նամակագիրը ներքին գործերի մինիստրությունից պահանջում էր միջոցներ ձեռք առնել հանցագործին ըստ արժանվույն դատապարտելու համար։

Հետաքննություն կատարելու համար 1918-ի դեկտեմբերին Յոզգաթ ուղարկված հանձնաժողովը (6 հոգի, ղեկավար Օսման Նուրի) հաղորդում էր Կ. Պոլիս՝ հայկական կոտորածները հետաքննող կոմիտեի նախագահ Մաժհար բեյին այն մասին, որ սանջակի ժանդարմերիայի պետ Խուլուսի էֆենդին ինքն էր իրականացրել հայերի զանգվածային կոտորումը, յուրացրել նրանց ունեցվածքը։ Հաղորդվում էր նաև, որ ժանդարմերիայի պետն անձամբ ինքն էր կազմակերպել բանդաներ՝ կազմված քրեական հանցագործներից ու դասալիքներից և նրանց միջոցով էր իրականացնում կողոպտիչ հարձակումները հայերի վրա։ Այս Խուլուսի էֆենդին աքսորվել էր ընդամենը երկու ամիս ժամանակով։ Փաստաթուղթը կազմվել էր Յոզգաթում 1918-ի դեկտեմբերի 8-ին, հասցեատիրոջն էր հանձնվել 1918-ի դեկտեմբերի 28-ին։ 1918-ի դեկտեմբերի 24-ին քաղաքացիական տեսուչը պատասխանելով մի այլ տեսուչի՝ Էմին բեյի հարցմանը Բողազլյանի հայերի աքսորի մասին, գրում էր, որ կոտորածները կատարվել էին Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյի հրամանով։ Նա հաղորդում էր, որ դեռ 1917-ի մայիսին հայոց կոտորածների հետաքննության ժամանակ հաստատվել էր, որ Քեմալ բեյը զբաղվել է բռնաբարություններով և կողոպուտներով։ Մարդինի դատավոր Հասան Ցեհմին 1918-ի դեկտեմբերի 16-ի իր գրավոր հայտարարության մեջ ապացուցում էր, որ Դեր Զորի նախկին մութեսարիֆ Զեքի բեյն անձամբ էր հետապնդում հայ կանանց, գլխավորում նրանց ոչնչացման գործը։

1919-ի փետրվարի 10-ին Յոզգաթից մյութեսարիֆը պատասխանելով Կ. Պոլսի զինվորական դատարանի նախագահի 1919-ի փետրվարի 2-ի № 2851 հարցմանը, հաղորդում էր հետևյալը. 1915-ի մայիսի 15-ին նախկին նահանգապետ

Մուհաէդդին փաշայի հրամանով նոր կազմակերպության՝ «Թեշքիլաթը Գեդիդայի» մեջ հավաքել էին 65 հանցագործների՝ գողերի, բանդիտների, մարդասպանների, նախապես դրանց ազատելով բանտերից։ Սրանց կենտրոնն էր Զորումը։ Իթթիհադի Անկարայի պատասխանատու քարտուղարը՝ Նեջաթի բեյը երկու անգամ եկել էր Յոզգաթ. առաջին անգամ հայերի տեղահանության նախօրյակին, երկրորդ անգամ՝ տեղահանության պահին։ Նա այդտեղից ծպտյալ գնացել էր Զորում, հետո գիշերով վերադարձել։ Այս ամենը պատասխան բացատրության մեջ հաստատված էր ոստիկանության գրառումներով։ Հետո, ըստ նախկին դատավոր Ռեմզի բեյի հայտարարության, նա ետ էր գնացել։ Նեջաթի բեյը հեռագրով կապվել էր Սըվասի կուսակցական պատասխանատու Գանի բեյի հետ, նրան հայտնել տեղահանված հայերի քարավանի շարժման ժամանակի և ուղերթի մասին։ Այս բանը հաստատվել էր հեռագրի դեպարտամենտի արխիվի նյութերով։ Փաստաթղթերով հաստատվում էր, որ մյութեսարիֆ Ջեմալ բեյն իր իսկ խոստովանությամբ հանվել էր աշխատանքից Նեջաթի բեյի «անլեգալ և ոչ պաշտոնական գործողություններին» մասնակցելուց հրաժարվելու համար։ Նեջաթի բեյը փորձել էր համոզել Ջեմալ բեյին, թե հայերին արմատախիլ անելը հայրենասիրական գործ է, թե յուրաքանչյուրի պարտքն է կատարել ներքին գործերի մինիստրի հրամանը ճշտորեն։

Սըվասի բանտից ազատվել էր հայտնի բանդիտ Մահիր բեյը և 123 այլ հանցագործներ իբր ռազմաճակատ ուղարկվելու համար։ Իրականում նրանց կազմակերպել էր «Թաշքիլաթը Մախսուսե» գաղտնի կազմակերպությունը հայ կանանց և երեխաներին ոչնչացնելու համար։ Վերը հիշատակված Մահիր բեյը մարդասպանության համար 15 տարվա բանտարկության էր դատապարտվել 1912-ի հունիսի 26-ին, և փաստորեն երկու տարի ինն ամիս անց ազատ էր արձակվել մարդ սպանելու առաքելությամբ։ Այս մարդասպանի առաջին զոհերից մեկը դարձավ Էրզինջանի հոգևորական Մկր. Սահակ Օդաբաշյանը, որը տեղահանվելուց հետո անցնում էր Սըվասով և սպանվեց 1915-ի դեկտեմբերի 18-ին։ Այս խնդրի

շուրջը երկար ու բարակ գրագրություններ էին փոխանակվել պատերազմի հանցագործներին դատող զինվորական դատարանի և Սըվասի իշխանությունների միջև։ Պետական մեղադրողն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրում էր փաստաթղթերը, հարցումներ անում, փորձում հասու լինել իսկությանը, գտնել թաքնված մեղավոր անձանց։ Մասնավորապես փնտրում էին Սըվասի ժանդարմերիայի նախկին պետ կապիտան Քեմալ էֆենդիին։

Ռեսս-ուլ-Այնում չեչենների մի ջոկատ էին ստեղծել տեղահանված հայերի քարավանները հարձակումներից պաշտպանելու պատրվակով։ Հետաքննությունը ցույց տվեց, որ հենց այդ ջոկատն էր կազմակերպում հայերի ալան-թալանը։ Բանդիտների այդ խմբի գլուխ կարգված էր Ասլան բեյը։

Մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ Մամուրեթ ուլ-Ազիզ վիլայեթի Մալաթիա սանջակի Բեհեսնի կազայի կայմակամ Էդհեմ Կադրի բեյը կազմակերպել էր 5 հազար հայերի սպանությունը։ Այս ոճրագործն աճուրդով վաճառքի էր հանել 400 տուն, 123 խանութ, ստացված գումարը գրպանել։ Նա սեփականացրել էր հարյուրավոր գլուխ անասուն, վաճառում էր կողոպտված գյուղատնտեսական մթերքները։ Ներքին գործերի մինիստրության հեռագրի մեջ (հղված Կ. Պոլսից Դիարբեքիր 1915-ի դեկտեմբերի 31) նա մեղադրվում էր այն բանում, որ չէր ապահովել բռնագրավված ունեցվածքի նկատմամբ պետական շահերի պաշտպանությունը։

Էրզրումի հինգ հարյուր ունևոր հայ ընտանիքների քարավանը կողոպտվեց Մալաթիայում։ Մյութեսարիֆ Ռեշիդ բեյը, տեղական գնդի հրամանատար Համդի բեյը, ժանդարմերիայի հրամանատար Աբդուլահ էֆենդին նախապես ազատել էին տվել զինվորական բարակները։ Հայ տղամարդկանց փակեցին այստեղ, իսկ կանանց ու աղջիկներին դպրոցի շենքում և մի քանի խանութներում։ Նրանց բոլորին խուզարկեցին, նրանցից խլեցին դրամը, ոսկեղենը և բոլոր արժեքավոր իրերը։ Մինչ այդ քարավաններն անցել էին Մալաթիայից անվնաս։ Դեպքը գրավել էր կրտսեր պաշտոնյաների ուշադրությունը։ Այս անգամ ամբոխը, ոգևորված բարձր պաշտոնյաների կատարածից, ինքը հարձակվեց քարավանի

կանանց վրա, նրանցից խլելով ամեն ինչ։ Ականատեսը վկայում է, որ ներկա գտնված մյութեսարիֆը և հրամանատարները պասսիվ դիտորդների դերում էին։

Ծառերին կողոպտեցին ու բռնաբարեցին ժանդարմներն ու զինվորները, ապա քրդերը՝ Հասան Ջելեբի ամրոցի և Աքչա դաղի մոտ գտնվող Հեքիմ խան գյուղի շրջակայքում։

Մի այլ փաստաթղթում ասվում էր այն մասին, որ անհաշիվ ոսկի դրամ էր խլվել Մալաթիայում տեղահանված հայերից, բայց միայն 62 հազար պիաստր (21. 710 դոլար) էր մուտք արվել պետական գանձարանը։

Բրակոնում Ռեշիդ բեյը գրպանել էր 175 հազար դոլար, Մեհմեդ էֆենդին՝ 350 հազար։ Աբդուլահ էֆենդին սպանել էր 1200 հայ Մալաթիայի նահանգապետարանի բակում, գլխատել Մալաթիայի հայ կաթոլիկների առաջնորդին։ Համդի էֆենդին կացնով գլխատել էր 210 հայի Ին-Դերեյում և ոչնչացրել հազարավոր հայերի, բայց զինվորական դատարանի առջև չէր կանգնել։

Բերենք զինվորական դատարանի նիստերից մեկի արձանագրությունը։ Այդ նիստը գումարվել էր 1919-ի մարտի 8-ի սուլթանի խորհեյով։

Դատարանի Նախագահ Մուստաֆա Նազըմ փաշա։

Անդամներ՝ բրիգադային գեներալ Ջեքի փաշա, բրիգադային գեներալ Մուստաֆա փաշա, բրիգադային գեներալ Ալի Նազըմ փաշա, գնդապետ Ռաջեբ Ֆերդի բեյ, արձանագրող քարտուղար

Մեղադրյալներ՝ Մուսա Քյազիմ էֆենդի, նախկին Շեյխուլ-իսլամ Էսադ էֆենդի (սենատի նախկին նախագահ), Հուսեյին Հաշիմ բեյ (փոստի, հեռագրի և հեռախոսի ծառայության նախկին մինիստր)

Մեղադրյալներ, որոնք դատվում են ի բացակայություն. Թալեաթ փաշա (նախկին մեծ վեզիր), Էնվեր էֆենդի (նախկին ռազմական մինիստր), Ջեմալ էֆենդի (նավատորմի նախկին մինիստր), դոկտոր Նազըմ բեյ (հասարակական կրթության նախկին մինիստր), Ջավիդ բեյ (ֆինանսների նախկին մինիստր), Ոսկան էֆենդի (փոստի, հեռագրի և հեռախոսի ծառայության նախկին մինիստր), Սուլեյման էլ

Բուստանի էֆենդի (առևտրի և գյուղատնտեսության նախկին մինիստր), Մուստաֆա Շերիֆ բեյ (առևտրի և գյուղատնտեսության նախկին մինիստր)

Դատավճիռ

«Դատարանը ուսումնասիրեց և քննարկեց մեղադրյալների հետ կապված բոլոր նյութերն ու փաստաթղթերը։ Քանի որ մեղադրյալները և նրանց փաստաբանները մերժում էին որևէ մեղադրանք և իրենց մեղավոր չէին ճանաչում, քանի որ դատախազը իր 1919-ի մայիսի 2-ի, 20-ի և 22-ի, հունիսի 8-ի, 10-ի և 25-ի մեղադրական ակտով ցույց տվեց, որ «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը (այժմ լուծարքի ենթարկված) մեղավոր է եղել բազմաթիվ հանցանքների համար, որ նրա ղեկավարները հանդիսացել են այդ մեղքերի հեղինակները, և որ նրանք պետք է պատժվեն.

Դատարանը որոշում է, որ մեղադրանքները պետք է վերաբերեն նախ և առաջ այդ կազմակերպությանը, դատարանն արձանագրում է, որ այդ կազմակերպության ղեկավարներն այլևս չունեն այն հայրենասիրական զգացումները, որ նրանց հատուկ էին հեղափոխությունից առաջ»։

Այնուհետև դատարանը ցույց էր տալիս 1908 թվականի հեղափոխական հեղաշրջման առաջադիմական և անհրաժեշտ բնույթը, մեղադրում համիդյան շրջանի «սխալները», որպեսզի ցույց տար հասարակական կարծիքի մեջ անցի ունեցած այն հուսախաբությունը, որն արդյունք էր երիտթուրքերի անհաջողության Լիբիայում և Բալկաններում, ներքին կյանքը բարելավելու անկարողության և այլն, դատարանը փաստերով ցույց էր տալիս, որ ազատության և խաղաղ կյանքի հույսերն ի դերև ելան։

Դատարանը երիտթուրք պարագլուխներին մեղադրում էր ինքնագլուխ որոշումներ ընդունելու մեջ, որոնք հակասում էին երկրի և ժողովրդի շահերին, նրանց մեղադրում էր անօրեն գործողությունների մեջ՝ մինիստրների փոփոխում, այնպիսի քայլերի իրագործում, որոնք հիշեցնում էին Համիդի շրջանի գործողությունները։

Դատարանը արձանագրում էր, որ ոչ մահմեդական ժո-

ղավուրդներից հատկապես դժգոհ էին հայերը, որոնք եկան այն եզրակացության, որ սխալվել են հավատալով սահմանադրական կառավարության պարգևելիք խաղաղությանն ու արդարությանը և կանգնեցին իրենց նախկին ազգային ձգտումների դիրքի վրա։ Օսմանյան միասնությանը հասցված հարվածի մեղքը դրվում էր իթթիհադի վրա։

Հետաքրքրական է, որ մեղադրյալների փաստաբանները երիտթուրքերի կատարած հանցանքները փորձում էին բացատրել երկրում մեկ կուսակցության ռեժիմով։

Դատարանն իր առաջադրած մեղադրանքներն ամփոփել էր հինգ կետերում.

1. Տրապիզոնում, Յոզղաթում և Բողազլյանում կատարված կոտորածները պլանավորվել և իրականացվել են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պարագլուխների կողմից։ Նույնիսկ, եթե նրանցից ոմանք պնդում էին, թե կոտորածի մասին տեղեկացել են միայն post factum, դատարանը նրանց մեղադրում էր այն բանի համար, որ տեղեկանալով կոտորածների մասին, նրանք չէին փորձել խոչընդոտել դրանց, պատժել հեղինակներին։

2. Ինչպես հաստատվեց գրավոր հայտարարություններից, նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան փորձել էր իր մոտ հրավիրել երիտթուրքերի պարագլուխներին և համոզել նրանց, որ Թուրքիայի համար վտանգավոր կլինի մասնակցել պատերազմին, որ անհրաժեշտ է չեզոքություն պահպանել։ Նրա տեսակետը մերժվեց և Թուրքիան մխրճվեց պատերազմի հորձանուտը։ Դատարանում երիտթուրքական երեսփոխան Ռիզա բեյը խոստովանեց, որ մինչև պատերազմի հայտարարումը ինքը Տրապիզոնի վրայով Ռուսաստանի տերիտորիան ողողում էր բանդաներով:

Դատարանը արձանագրում էր այն փաստը, որ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը, հասարակական աշխատանքների մինիստր Չուրուկ Սուլու Մահմադ փաշան, առևտրի մինիստր Բուստանին հրաժարական տվին ի նշան բողոքի, որ առանց կառավարության որոշման Թուրքիան ներքաշվել էր պատերազմի մեջ։

3. Դատարանը մեղադրում էր իթթիհադի ղեկավարությանը նախկին մեծ վեզիրին ռազմական մինիստրի պաշտոնից ազատելու մեջ։

4. Դատարանը արձանագրում էր Կ. Պոլսից դեպուտատ, երիտթուրքական ղեկավար գործիչ Քեմալ բեյի կողմից պաշտոնը չարաշահելու և սպեկուլյացիայով զբաղվելու փաստը։

Դատարանն առանձնակի հետևողականությամբ պարզում էր և դատապարտում այն փաստերը, որոնք ցույց էին տալիս, որ երիտթուրքերի կուսակցությունը դիմազրկում էր կառավարությանը, կատարում նրա դերը։ Իթթիհադը մեղադրվում էր սահմանադրությունը ոտնահարելու մեջ։

5. Շեյխ-ուլ-Իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին մեղադրվում էր երկրի «արդարադատությունը» իթթիհադին հանձնելու մեջ։ Նա խոստովանում էր, որ իրավազուրկ էր դարձել ու ամեն անգամ պատասխանում էր. «Մի հարցրեք իմ կարծիքը։ Կուսակցությունն ուզում է այդ և դա այդպես պետք է լինի»։

Դատարանն առանց այլևայլության որպես սկզբունքային մեղավորներ մեղավոր ճանաչեց՝

Թալեաթին, ի բացակայություն
Էնվերին, »
Ջեմալին, »
Դոկտոր Նազըմին »
նաև Ջավիդ բեյին,

Մուստաֆա Շերիֆ բեյին (առևտրի և գյուղատնտեսության մինիստրին) նույնպես ի բացակայություն։

Շեյխ-ուլ-Իսլամը՝ Մուսա Քյազիմ էֆենդին ամբաստանվում էր կրոնը իթթիհադի նպատակներին ծառայեցնելու, նրա հետ գործակցելու մեջ։ Նա նույնպես մեղավոր էր ճանաչվում։

Մեղադրանքի հիմքում դրվում էր քրեական օրենսդրության 45-րդ հոդվածը և 55-րդ հոդվածի վերջին պարագրաֆը։ Ըստ այդ պարագրաֆի վերը հիշատակված անձինք մեղադրվում էին սահմանադրությունը ոտնահարելու մեջ և դատապարտվում էին մահվան (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, դոկտոր Նազըմ)։

1919-ի հուլիսի 13-ին «Նյու Յորք Թայմսը» հաղորդեց, որ «Թուրքիան դատապարտում է ռազմական ժամանակի իր պարագլուխներին», որ զինվորական տրիբունալը մահվան է դատապարտել Էնվեր փաշային, Թալեաթ փաշային և Ջեմալ փաշային։ «Երեքն էլ փախուստի մեջ են»։ Թերթը հաղորդում էր, որ Ջավիդ բեյը և մի քանի ուրիշներ (այդ թվում նախկին Շեյխ-ուլ-Իսլամը) դատապարտվել են 15 տարվա տաժանակրության։

1921-ի հունիսի 2—3-ին Բեռլինի օկրուգային դատարանը դատում էր Թալեաթին սպանող Սողոմոն Թեհլերյանին։ Վերջինս իր խոսքում ցույց էր տալիս, որ Թալեաթին մահվան դատավճիռ հեռակա կարգով կայացրել էր Ստամբուլի զինվորական տրիբունալը։ Այս առիթով ամբաստանյալի պաշտպաններից Իոհաննես Վերդաուերը դատարանում հայտարարեց հետևյալը. դուք այստեղ իմացաք այն մասին, թե Թալեաթը դատապարտվել էր մահվան։ Դատավճիռները կամ ճանաչվում են, կամ չեն ճանաչվում։ Եթե մենք չճանաչենք դատավճիռները, որ կայացրել են մյուս դատարանները, ապա մենք չենք կարող պահանջել, որպեսզի ուրիշներն էլ ճանաչեն մեր դատավճիռները։ Թալեաթի դատավճիռը կայացրել էր զինվորական տրիբունալը։ Ես ընդհանրապես զինվորական հաստատությունների կողմնակից չեմ։ Ես գտնում եմ, որ և սովորական դատարանը, եթե այն լավն է, բավական է և կարիք չկա այլ կարգի դատական հիմնարկների։ Բայց այնտեղ, որտեղ կան զինվորական տրիբունալներ, անպայման կան և կարգին դատավորներ, որոնք ճշտությամբ դատել են Ստամբուլի հանցագործներին և կայացրել են նրանց արդարացի դատավճիռ (14, էջ 176)։

1919-ի մայիսի 24-ին զինվորական դատարանը որոշում կայացրեց Բույուքդերեյի նախկին ոստիկանապետ Աբդուլ Քերիմ փաշայի, սալոնիկցի վաճառական Ռեֆիկ բեյի և այլոց գործով։ Նրանք մեղադրվեցին հայոց տեղահանումների ժամանակ կատարած չարաշահումների, կողոպուտի, բռնություններ գործադրելու մեջ։ Դատարանը նրանց դատապարտեց տարբեր ժամկետների աքսորի։ Այս մասին թուրքական պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի Վաքային» հաղորդագրություն էր տպագրել 1919-ի № 3618-ում։

Ըստ «Թաքվիմ-ի Վաքայիի» (1920-ի № 3771) դատավարության ընթացքում լսել էին տարբեր վկաների, քննել, համադրել նրանց ցուցմունքները, ընթերցվել բազմաթիվ փաստաթղթեր, որից հետո դատարանը եկել էր այն եզրակացության, որ դոկտոր Բեհաէդդին Շաքիրը ուղարկվել էր Տրապիզոն ու Էրզրում հանցագործների բանդաներ կազմակերպելու, տարագրված հայերի քարավանների վրա հարձակումներ կազմակերպելու, կողոպուտի ու սպանությունների համար։ Կազմվել էին գաղտնի հրահանգներ և շրջաբերականներ, որոնցով երիթթուրքական ոճրագործը ուղղություն էր տալիս կողոպուտին ու արյունահեղությանը։ Հատկապես նա էր կազմակերպել Էրզրումից դուրս բերված հայ հարուստ մարդկանց քարավանի վրա կատարված հարձակումը Քղիի ճանապարհի վրա։ Դատարանում փաստացի ապացույցներ մեջտեղ բերվեցին։ Դրանք գլխավորապես Բեհաէդդին Շաքիրի հեռագրերի փաստային հիմքերն էին։ Ոչ անհայտ ընդհանուր Վեհիբ փաշան տվեց հետևյալ վկայությունը.

«Հայերի կոտորածը և արմատախիլ անելը, նրանց ունեցվածքից զրկելը երրորդ բանակի իրավասության տակ գտնվող տարածքի վրա որոշվում էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կողմից։ Դա տարածվում էր Էրզրումի, Վանի, Տրապիզոնի, Բիթլիսի, Մամուրեթ ուլ-Ազիզի, Դիարբեքիրի և Սեբաստի վրա։ Այս բանակի շտաբը գտնվում էր Թորթումում (Էրզրումի նահանգ)։ Երրորդ բանակի նախկին հրամանատար Մահմուդ Քեամիլ փաշան Թորթումից շրջաբերական հեռագրեր էր հղում բոլոր զինվորական հրամանատարներին, նրանց հրամայելով արմատախիլ անել հայ ժողովրդին»։

Դատարանն արձանագրում էր, որ բոլոր փաստերը հաստատվեցին վկաների ցուցմունքներով։ Հաստատվեց, որ դոկտոր Բեհաէդդին Շաքիր բեյը գլխավոր մեղավորն էր կատարված հանցագործությունների մեջ։

Դատարանն արձանագրեց, որ մեղադրվողների շարքում դոկտոր Բեհաէդդին Շաքիրի հետ առանձնապես սերտ համախմբվածությամբ է գործել Ռեսնեյի Նազըմ բեյը։ Վերջինս 1915-ի ապրիլի 21-ին Բեհաէդդին Շաքիրից ստացել է գաղտանգրված հեռագիր հայերին ոչնչացնելու վերաբերյալ։

Նազըմ բեյը հայերին ոչնչացնելու հանցավոր գործերում համագործակցել էր Մամուրեթ ուլ-Ազիզի գեներալ նահանգապետ Սաբիտ բեյի և Իթթիհադի կենտկոմի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրիի հետ։ Թե՛ դոկտոր Բեհաէդդին Շաքիրը և թե՛ Ռեսնեյի Նազըմ բեյը տեղեկանալով իրենց սպասվող դատաստանի մասին, խույս էին տվել դատարանից։ Քաղաքացիական օրենսդրության 181 և 171 հոդվածներով դոկտոր Բեհաէդդին Շաքիրը դատապարտվում էր մահվան։ Ռեսնեյի Նազըմ բեյը դատապարտվում էր 15 տարվա տաժանակիր աշխատանքի։ Դատավճիռը ստորագրել էին Մուստաֆա Քերիմը և մյուսները 1920-ի հունվարի 13-ին։

Կ. Պոլսի թերթերից մեկը տպագրել էր մի ականատեսի պատմածները։ Վերջինս, մասնավորապես, ասել էր. «Տրապիզոնի նահանգի զինվորական հրամանատար Ավնի փաշան սեփական աչքերով տեսել էր հայերի կոտորածը։ Ինչո՞ւ Վեհիբ փաշայի նման նա զինվորական դատարանին զեկուցագիր չներկայացրեց իր տեսածի մասին» (31, № 108, 1919)։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում զինվորական դատարանի 1919-ի ապրիլի 8-ի դատավարության արձանագրությունը։

Նախագահ. Գեներալ (Ֆերիկ) Զեքի փաշա

Անդամներ. *Միրլիվա (գեներալ) Մուստաֆա փաշա*
Միրլիվա (գեներալ) Ալի Նազըմ փաշա
Միրալայ (գնդապետ) Ռեջեբ Ֆերդի բեյ

Դատավարությանը ներկա էին մեղադրյալներ.

1. Քեմալ բեյը, Յոզղաթի գործող մյութեսարիֆ և Բողազլյանի կայմակամ։
2. Թյուֆիկ բեյը, Յոզղաթի ժանդարմերիայի պետ։

Դատավարության կարգի համաձայն սկզբից լսեցին երկու կողմերին, այնուհետև խոսեցին դատապաշտպանները։ Դատարանն ուսումնասիրելով գործին վերաբերող բոլոր փաստաթղթերը երկար խորհրդածություններից հետո որոշեց.

Բողազլյանի սանջակի կայմակամ և Յոզղաթի մյութեսարիֆ Քեմալ բեյը (Անկարայի շրջան), ինչպես նաև սանջակի

ժանդարմերիայի պետ Թյուֆիկ բեյը հրաման ստացան տեղահան անել կանանց և անպաշտպան մնացած անչափահաս տղաների ու աղջիկների, ինչպես նաև նույնիսկ այն հայերին, որոնք պաշտոնապես ազատված էին աքսորից։ Աքսորյալներից նախապես խլվում էին փողերը, զարդեղենը և այլ արժեքավոր իրեր...

Մարդկանց քշում էին ըստ իրենց հայեցողության և նրանցից ոմանց էլ տալիս էին գաղտնի կարգադրություններ (որպեսզի սպանեն նրանց)։ Ոչ որ հոգ չէր տանում տեղահան արվածների մասին. ավելին, նրանց զրկում էին ինքնապաշտպանության ամեն միջոցից. հավաքում էին մեկտեղ բոլոր տղամարդկանց, որպեսզի ավելի հեշտ կատարեին իրենց պլանավորված հանցագործությունը։

Երբ դատի ժամանակ մեղավորներից պահանջվեց բացատրություն տալ, նրանք թաքցրին ճշմարտությունը։ Հանցագործությունը կանխելու փոխարեն նրանք դրդում էին ժանդարմերիային կատարելու այն։ Նրանց կատարած ոճիրները անհարիր են մարդկության և քաղաքակիրթ աշխարհի սկզբունքներին։

Մեղադրյալները ժխտեցին բովանդակությունն այն հեռագրերի, որոնք, ըստ վկաների ցուցմունքի, փոխանակել էին զինվորական պաշտոնյաները։ Հարցաքննություններից պարզվեց, որ կանայք և երեխաները մնացել էին առանց իրենց ամուսինների և ծնողների։ Իրենց ելույթներում մեղադրյալների պաշտպանները շեշտեցին (հայերի) կազմակերպած հուզումները։ Ուշադրություն էր հրավիրվում այն փաստի վրա, որ (հայկական) կոմիտեների որոշ անդամներ թշնամու կողմից գրավված շրջաններում քաջալերում էին նրանց (հայերի) անցումը թշնամու կողմը։ Վերը նշված դեպքերն ամենևին չեն թեթևացնում կատարված հանցագործությունները, և եթե նույնիսկ հայերի որոշ տոկոսը կամավոր է գրվել ռուսական բանակում, նրանց մնացածն ապացուցել են իրենց նվիրվածությունը և պաշտոնյաները չպետք է դիմեին դաժան արարքների կամ անձնական վրեժի մոլուցքի։

Իր պաշտպանության խոսքում վերը նշված Քեմալ բեյը փորձեց մեղադրել Վանի, Էրզրումի և Բիթլիսի հայերին, որոնք վատ են վարվել մահմեդականների հետ։ Յոզղաթի

հայերի համար, որոնք երբեք խռովություններ չեն սարքել, պաշտպանյալի խոսքերն անհիմն են և իրավաբանորեն, և բարոյապես։

Մինչ այս մեղադրյալները վրեժ լուծելու և անձնական շահ ստանալու համար հայերի դեմ էին հանում մահմեդականությանը, նրանք կարծում էին, թե կոտորածները բնական և անհրաժեշտ հետևանք են։

Փաստերն ու ապացույցները լրիվ հաստատում են մեղադրյալների մեղքը և պաշտպանության բերած փաստարկները ոչ մի արժեք չունեն։ Կայսերական մեղադրողը խնդրում է մեղավորներին դատել համաձայն քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի։

Քեմալ բեյը, Յոզղաթի սանջակի ամենաբարձր քաղաքացիական պաշտոնյան կազմակերպել է սպանությունները, կողոպուտներն ու գողությունները։ Նա է հրամայել, որ աքսորյալներին ուղեկցեն անպատասխանատու անձինք։ Որպես աքսորյալների ուղեկցող նշանակել է սերժանտ Զուրի Զավուշին։ Վերջինս համարվում էր գլխավոր մեղսակիցներից մեկը։

171-րդ հոդվածում ասվում է. «Այն անձինք, որոնք զբաղվում են մթերքների կողոպուտով և վաճառքով՝ զինված կամ անզեն, ենթարկվում են մահապատժի։ 170-րդ հոդվածում ասվում է. «Նա, ով կատարում է կանխամտածված սպանություն, լինի դա հայր, մայր, տատ թե պապ, մեղադրվում է կանխամտածված սպանության մեջ և ենթարկվում է մահապատժի»։ Վերը բերված հոդվածների հիման վրա Քեմալ բեյը դատապարտված է մահապատժի։

45-րդ հոդվածի 2-րդ մասում ասվում է. «Եթե գլխավոր հանցագործը պատժվում է մահապատժով կամ ցմահ բանտարկությամբ, նրա մեղսակիցը պատժվում է ոչ պակաս, քան 15 տարվա տաժանակիր աշխատանքով»։

Դատարանը միաձայն հավանություն տվեց այս որոշումներին։

8 Նիզան 1334 (6 Ռեջեբ 1337)

Դատավորների ստորագրություններ, գեներալ Նազըմ Ջեքի, Մուստաֆա Ալի Նազըմ Ռեջեբ Ֆերդի

Դատական հանձնաժողովի պատասխանատու պաշտոնյա
Արեգին Դավեր
«Թարվիմ-ի Վաքայի» № 3617, 1919 թ.։

Քեմալի մահավճիռը վավերացվեց սուլթանի կողմից։ Նրան կախեցին Կ. Պոլսի Բայազետի հրապարակում 1919-ի ապրիլի 11-ին։ «Ալեմդար» թերթն Ալի Քեմալ բեյի դատապարտումը բաղդատում էր թուրք ազգի դատապարտության հետ, գտնում էր, որ «մեզ համար փրկության միակ միջոցն է... բարձր աղաղակել քաղաքակրթված աշխարհին, թե ինկապես և փաստացի կերպով արդարություն պետք է կիրառենք բոլոր նրանց նկատմամբ, ովքեր հանցավոր են։ Եթե Բայազետի հրապարակը մեր ոճրագործների կախաղանները չտեսնի, Փարիզը (նկատի ունի 1919-ի խաղաղության կոնֆերանսը) մեր պետության և ազգային դատապարտության վայրը պետք է դառնա» («Ռենեսանս», № 116, 16. 4. 1919)։ «Ալեմդարը» գրեց. «Մենք՝ թուրքերս ամբաստանված ենք մի ոճիրով և վարակված ենք մի անբուժելի հիվանդությամբ, որ ժանտախտից ավելի սոսկալի է... Դրա համար հաստատենք մի արտակարգ զինվորական ատյան, պատժելու համար հանցավորներին հանուն արդարության» («Ռենեսանս», № 128, 1. 5. 1919)։

1919-ի ապրիլի 14-ին «Նյու Յորք Թայմսը» հաղորդում էր, որ նահանգապետ Քեմալ բեյը հրապարակորեն կախաղան հանվեց Կ. Պոլսի Բայազետի հրապարակում։ Դատարանը հաստատել էր, որ նա Յոզղաթի շրջանում հայերի տեղահանման և ոչնչացման գլխավոր մեղավորն էր։

Թուրքական մամուլում հրապարակված դատական պրոցեսի արձանագրություններից, դատավճիռներից կարելի է քաղել բազմաթիվ փաստեր, իրազեկ դառնալ բազմապիսի իրողությունների, որոնք վերաբերում են հայ ժողովրդի դահիճների չարագործություններին։

Չհանգրիի (գյուղ Կյորեն) վարչական խորհրդի անդամ Հասան էֆենդին, նույն քաղաքի երիտթուրքական կազմակերպության պատասխանատու Ջեմալ Օղուզ բեյը մեղադրվում և դատապարտվում էին հայերի զանգվածային տեղահանումների ժամանակ կատարած գողությունների, բռնագրավումների համար։

Կաստամոնիի նախկին նահանգապետ Շյուքրի բեյը, ոստիկանապետ մայոր Լութֆի բեյը, նրա օգնական Ցեհմի էֆենդին (կոչում էին նաև Մահիր), «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պատասխանատու քարտուղար Հասան Ցեհմի էֆենդին, նահանգային ժողովի (էնջումենի) նախկին անդամ Թուշի Զադե Ջեմալ էֆենդին մեղադրվում էին քրեական հանցանքներ կատարելու մեջ, բայց չէին բանտարկվել։ Նրանք հայ ընտանիքներին ստիպել էին փոխել կրոնը, կատարել էին բռնություններ նրանց նկատմամբ։ Սաբրի էֆենդին, նախկին նահանգապետ՝ մյութասարիֆ Շյուքրի բեյը մեղադրվում էին նաև այլ ընտանիքներ կողոպտելու մեջ։

Լքված իրերի հանձնաժողովի անդամ Ալի էֆենդին և նախկին մուֆթի (կրոնական գլխավոր) Աթա էֆենդին, հասարակական հարկահավաքման նախկին գլխավոր քարտուղար Հաթըմ էֆենդին, ոստիկանության կոմիսար Ռեզմի էֆենդին, նրա օգնական Մահիր էֆենդին, վաճառական Հաջի Տաքիր էֆենդին և նրա գործընկեր Իսմայիլ էֆենդին մեղադրվել և դատի էին տրվել հայոց լքված ունեցվածքը յուրացնելու և աճուրդի հանելու համար։

Դատարանում Վարուժանին, Սևակին սպանած հանցագործ Օղուզը խենթ էր ձևանում («Ճակատամարտ», Կ. Պոլիս, 4. 2. 1920)։ Զինվորական դատարանի նիստերը, նրանց ընդունած որոշումները լայն արձագանք գտան մամուլի էջերում։ Հրապարակվեցին նամակներ, որտեղ նոր ճշմարտություններ ավելացին երիտթուրքական չարագործությունների մասին։

Երբ թուրքական զինվորական դատարանն արձակեց առաջին մահապատժի վճիռը Բ. Դռան և սուլթանի պալատի բանբեր կիսապաշտոնական «Ալեմդար» օրաթերթը հետևյալ կերպ ձևակերպեց հայոց նկատմամբ կատարվածի իր բնութագրումները. «Տեղահանության և կոտորածների դատավարության ժամանակ հաստատված խժդժությունները երևան հանեցին իրենց ամբողջական մերկությամբ թե այս երկրում տիրապետողը ոչ թե իրավունքն ու արդարադատությունն են, այլ կեղեքումը և ոճիրը, որոնք հենց կառավարության որդեգրած վարքագիծն են»։ Թերթը շեշտում էր ու մուսուլման ազգերի նկատմամբ «պետական որոշակի անարդարացի

քաղաքականության կիրառումը», ցույց էր տալիս, որ արաբները նույնպես «նկատելով որպես ոչ թուրք», արժանացած էին միևնույն վերաբերմունքին։ «Չփորձենք հայերին վերագրել հանցանքը, որովհետև չկարծենք, որ աշխարհը ապուշ է»,— հայտարարում էր «Ալեմդարը»։ Այս ճշմարիտ գնահատականը կարծես թե մոտ 65 տարի առաջ ասվել է այսօրվա թուրք կեղծարարների համար։ «Կողոպտեցինք ինչքերն այն մարդկանց, որոնց տեղահանեցինք ու ջարդեցինք»,— շարունակում էր թուրքական թերթը։ Նույն համարում խստագույնս քննադատվում էին թուրքական «պառլամենտը», այնտեղ հաստատված խայտառակ բարքերը։ «Մեր արդարադատության նախարարը բանտերի դռները բացեց», «կազմակերպեցինք հրոսակախմբեր մորթելու համար հայ մանուկներ, ծերեր, այրեր և կանանց»։ «Այս բոլորը մենք արինք»։ Թերթն այսպես էր եզրափակում երիտթուրքերին դատապարտող իր խոսքը. «Իթթիհադականների անկումից հետո ի՞նչ պետք է անենք մենք վերջնականապես հեռանալու համար այս անցյալից։ Ապացույց կտա՞նք ազգային մի կորովի, որ հնարավոր լիներ օրենք կիրառել արդարությունը ոտնակոխ արած և մեր պատիվն ու ազգային գոյությունը քրջի վերածած հրոսախմբի պետերի դեմ» (արաբատառ թուրքերեն «Ալեմդար» թերթի տպագրած հոդվածի ֆրանսերեն թարգմանությունը, տե՛ս «Ռենեսանս», № 139, 14.5. 1919)։ Ժամանակն է «Ալեմդարի» ու «Ռենեսանսի» այս նյութերի քսերոպատճենները նվեր ուղարկել բոլոր այն թուրք հեղինակներին, որոնք մեր օրերում բռնել են պատմական ճշմարտություններն անտեսելու, սուտ ու կեղծիքի ուղին։

Հայ ժողովրդի դեմ կիրառված վայրագ մեթոդների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում հայ որբ երեխաների նկատմամբ կատարված բժշկական փորձերը։ Սրանք II համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիստների կատարած չարագործությունների նախօրինակներն են, որ իրականացվում էին թուրքավարի, թուրք «բժիշկների» ձեռքերով։ Այս բանը հաստատող վկայություններին՝ «ցուցակագրված վավերական փաստերով» մենք հանդիպել ենք ինչպես արխիվային գործերում (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1. գ. 273,

մ. 2), ինչպես և Կ. Պոլսի թուրքական և հայկական մամուլի էջերում։

Հիշատակենք դրանցից մի քանիսը, առանց փոխելու այդ թղթերի ոչ ոճը, ոչ ուղղագրությունը։

Ա. Տրապիզոնի առողջապահական տեսուչ Ալի Սայիպ՝ 1914—1915-ի ջարդերու ատեն, գործակցելով Ջեմալ Ազմիի՝ քիմիական թույներով թունավորած է հայ մանուկներ, որոնց ծնողքներն արդեն սպանված էին, ինչպես նաև հիվանդանոցներ տեղափոխված հայ հիվանդները։ Վկա են ամբողջ Տրապիզոնի ջարդեն ազատվող հայերը և տեղին նույն ժողովուրդը։ Մնաց որ առողջապահական տեսուչ Ատնան պեյ թուրք թերթերու մեջ քննիչ հանձնաժողովի տեղեկություններուն վրա հիմնվելով, հաստատած է այս մարդուն ոճրապարտ արարքները (Հայ բժշկության տված զոհերը. ցուցակագրված վավերական փաստերով, Կ. Պոլիս, «Կիլիկիա» գրատուն, թիվ 37, 1919)։

Թիֆուսի (տիֆի) շիճուկը պատրաստութեան առիթով գործված գիտական ոճիրները 1915-ի ընթացքին։ Թիֆուսը կըսկսի ամենամեծ համեմատություններով ավեր գործել թուրք բանակին մեջ։ Թուրք բժշկական մարմինը կխորհի հիվանդութեան առաջքն առնել՝ շիճուկի մը պատրաստությամբ։ Խորհուրդն ինքնին որքան գիտական՝ նույնքան գնահատելի պիտի կարենար համարվիլ, եթե սակայն այս առիթով թուրք բժշկական մարմնին կարևոր մեկ քանի անդամները ցույց չտային գիտական-մարդասիրական գործերու հանդեպ խորունկ անընդունակություն և ոճրապարտ թեթևամտություն։

— Հայ տարաբախտ զինվորներ և տարագիրներ իբր փորձի կենդանի կգործածվին։ Ահա թե ինչպես։ Գիտական աշխարհին ծանոթ է, որ թիֆուսի դեմ շիճուկ պատրաստելու համար հիվանդին արյունը defibrine ընելե վերջ, պետք է մեկ ժամ ենթարկել 56 աստիճանի, ակարացնել (inactiver) ու հաջորդական ներարկումներ կատարել փորձի կենդանիներու, մինչև որ կենդանիին մեջ բավական immunité առաջ գա և անիկա հանդուրժե հետզհետե ավելի քիչ inactivé եղած ներարկումներու։ Եթե հակառակ, այսինքն առանց արյան շիճուկը 56 աստիճանի ենթարկելու ներարկվի՝ կենդանին թիֆուսով կվարակվի և կենթարկվի հիվանդության բոլոր հետևանքներին։ Արդ, խնդրո առարկա ենթականերուն inactivé չեղած շիճուկ ներարկված է ու անոնք մեռած են։ Փորձերը՝ կատարված են 1915-ի ձմեռը, Գ. Զորաբանակի բժշկապետ Թեֆիք Սալիմի իրավասության շրջանակին մեջ գտնվող Երզնկա քաղաքին մեջ թուրք բժիշկ, վարժարանի Anatomic Pathologique- -ի ուսուցիչ Համտի պեյի և օգնականներու կողմե։

Գիտական մեկե ավելի խորհրդաժողովներու մեջ խնդիր եղած է մարդոց վրա գիտական փորձեր կատարելու հարցը։ Եզրակացությունը այն եղած է, նույնիսկ մահվան դատապարտվածները՝ պետք չէ փորձի առարկա ընել։ Կարգ մը թուրք բժիշկներ նկատի չեն առած սակայն խղճի օրենքները ու բժշկական բարոյագիտությունը, ապացուցելով այսպես, թե իրենց մտայնությունն ու հոգեկան դաստիարակությունն ալ ոչնչով կտարբերի կարգ մը թուրք պաշտոնական մարդոց մակարդակեն։

Այս առթիվ մեջ կբերենք թուրք բժիշկներու վկայությունները՝ որոնք մամուլի մեջ արտահայտված են։

Ա. Ներքին գործոց նախարարության.

Վսեմաշուք Տեր,

Երբ հայոց խնդիրը կքննվի, կտեսնեմ որ ամբողջ պատասխանատվությունը միջնա կուսակալներուն և հրամանատարներուն կվերագրվի։ Հայոց վրա ի գործ դրված խժդժությունները կրնան կարճատես քաղաքական ըմբռնումներու գեշ հետևանքներն ըլլալ։

... Նպատակս Ձեզի հաղորդելիքը Հայոց վրա գիտականորեն ի գործ դրված վայրագություններն են։

... Պատասխանատուներուն հանդեպ պետք եղածը տնօրինելը «Խժդժության Քննիչ Հանձնաժողով»-ին պատվին ու խղճին կըհանձնեմ։ 1915-ի դեկտեմբերին Երզնկայի մեջ Գ-րդ բանակի բժշկապետ Թեֆիք Սալիմի հրամանով, թիֆուսե վարակված հիվանդներեն առնված արյունը առանց "inactivé" ընելու և բժշկականորեն միայն փորձի կենդանիներուն վրա ներելի եղող գիտական փորձերը՝ զարգացնելու սահմանված անմեղ հայերուն կներարկվին և այս պատճառով շատ մը խեղճ հայեր հիվանդանալով կմեռնին։ Ներարկումները կատարված ատեն՝ զոհերը խաբված են, հավատալով, որ հիվանդութենե զերծ կացուցանելու համար է։ Այս փորձը կատարողը՝ Օսմ. Բժշ. Վարժարանի «Anatomic Patholog»-ի ուսուցիչ Համտի Սուատ՝ «Զինվորական բժիշկ» թերթին մեջ իր փորձերը հրապարակած պահուն՝ փորձերը սպանվելու դատապարտվածներու վրա կատարված են կըսեր, իսկ նըվաստս՝ հիշյալ ուսուցչին սպանիչ փորձերուն ենթականերուն հայ ըլլալեն զատ ուրիշ հանցանք չունենալուն մոտեն վկան եմ։ Այս խնդիրին մոտեն տեղյակ են այն ժամանակ Երզնկայի կենտրոնական հիվանդանոցի բժշկապետը դոկտոր Րեֆեք բեյ և իրեն մոտ աշխատող երկու հայ բժիշկներ, նույնպես Երզնկայի Կարմիր Մահիկի բժշկապետը Տր. Սելահետին պեյ։

Ահավասիկ նվաստս, ոչ միայն քաղաքական, այլև գիտականորեն հայերուն վրա ոճիրներ կատարած ըլլալը, հայտնելով, այս մասին պետք եղած բացատրությունները տալու պատրաստ եմ։ Տոքտ. օբերաթոր Հայտար Ջեմալ (Նույն տեղում, էջ 80—81. «Թյուրքճէ Ստամբուլ» 45-րդ թիվ, 23(12)1918)։

Բ. «Ժյուրնէ Ստամբուլ» հայերէն օրաթերթին.

Երէկ օրէրաքար Հայաստ Ջեմալ պէյի կողմէ ներքին գործոց նախարարութեան ուղղուած բաց տեղեկագրին մէջ իրեն մէկ ցոյց տրուած ըլլալ տեսայ:

Երզնկայի կեդրոնական հիվանդանոցին մէջ «կատարուած այդ դեպքերուն դժբախտաբար բոլորովին տեղեակ ըլլալով, խնդիրը աւելի լուսաբանել՝ խիղճի պարտք կը համարեմ... Արդարեւ, մարդկութեան և բժշկութեան համար ամօթալի եղող այս դեպքերուն երբ բուն պատասխանատուները մէկ առ մէկ երևան հանէին, արատաւորուած բարձր բժշկութիւնը մեծ բեռ մը ազատած կ՚ըլլայ:

1915-ին հազարաւոր դժբախտութիւններով Երզնկան ապաստանող հայերէն մաս մը, ախտէն ոչխար զատելու պես սեփրյաքեն առնելով Երզնկայի կեդրոնական հիվանդանոցը կը դրկվին և հոն, մանրէաբանութեան մէջ միայն հնդկախոզի և ճագարի պես կենդանիներուն վրա փորձվելիք գործողութեանց ենթակա կ՚ըլլան: Այսպիսով շատ մը հայեր մեռնելով հանդերձ... խնդիրն ալ բոլորովին անլուծելի մնացած է...: Որևէ օգուտ չունեցող մեթոդի մը՝ միայն հայերու հանդեպ կիրակվիլ ի՞նչ կը նշանակե: Անոնց կյանքին՝ կենդանիի մը կյանքին չափ իսկ կարևորութիւն չի տրվող խեղճ հայերը այս տեղերով ալ զոհված են: Կըկարծեմ, թէ թիֆուսի բռնված հայերեն առնված արյունը, «inactivé» ընելե վերջ հիշյալ ուսուցիչը որպես «preventive» Կարնո կուսակալ Թահսին բեյին ներարկած է: Տոքթ. Սեյաննետին («Ժյուրնեն Ստամբուլ», 46 թիվ, 24. 12, 1918)

Գ. «Իթթիհատ և թերաքքի» կառավարության օրով՝ խիղճ, բարոյական, պատիվ, վերջապես բոլոր արժանիքներու ի՞նչ ստորին արժեք ունեցայր, երբ նկատի առնվի, ընդ. պատերազմի տարիներուն՝ հայերուն վրա ի գործ դրված ոճրագործներուն և անզգայութիւններուն ինչպես վատ մտածումներուն տակ տեղի ունեցած ըլլալը կհաստատվի: Միայն այն պարագան որ, այդ տառեններուն, ոչ մեկ անհատի կատարած վայրագութիւններուն համար կհարցվեր, կարծել տված էր թէ ամեն մարդու բռածը հավես անպատիժ պիտի մնար:

Անա, այս մտայնությամբ էր, որ Երզնկայի մեջ հայերու վրա թժավոր ժանտախտի մասին փորձեր կատարվեցան: Մեր բառը հաստատելու համար ունինք բավականաչափ փաստեր:

Ինչպես հայերու տարագրության, ջարդին և կողոպուտին պատասխան եղողները՝ նույնպես ալ այս գործին մասնակցողները պատասխանատու են: ...Ճշմարտությունը ոչ թե օրաթերթերու սյունակներու մեջ, այլ դատարանի առջև երևան պիտի ելլե: Տոքթ. Սեյաննետին. («Ալեմտար», 8. 1. 1919):

Այսպիսին են պատմության փաստերը։ Նրանք հարգանք են պահանջում։ Կարծես թե այդ փաստերը չհարգող այսօրվա թուրքական պաշտոնական դեմքերի ու մյուս թուրք հեղինակների մասին էր գրել «Ժյուրքշե Սաամբուլ» թերթը 1919-ին. «Մեր՝ թուրքերիս կողմից առաջ քաշված պատճառաբանությունները, ըստ որոնց Վանի մեջ հայերը մեր վրա նախահարձակ եղան և հետո մենք Անատոլիայում փոխվրեժի դիմեցինք, գոհացում կարող են տալ միայն նրանց, ովքեր «զգացումներով» են ղեկավարվում և ոչ թե գիտական ու իրավական պատճառներով։ Այդպիսի մոտեցումը չի կարող մեր դատը պաշտպանել Եվրոպայի և Ամերիկայի հանրային կարծիքի առջև» («Ռենեսանս», № 77, 1. 3. 1919)։

Ով չի ամաչում իր արածներից, նա կրկնակի մեղավոր է։ Սամսունում տպագրվեցին բազմաթիվ այլ նամակներ։ Նրանցում, օրինակ, նախկին մյութասարիֆ Մերի բեյը և ոստիկանապետ Լյութֆի բեյը մեղադրվում են հայերին պատկանող ունեցվածքը յուրացնելու, աքսորական հայերին և հույներին այլուր չտալու մեջ, այն բանի համար, որ նրանք բազմաթիվ հայ կանանց ասել էին՝ «ընացեք և զբաղվեք պոռնկությամբ» և պատվազուրկ էին արել, անարգել ու անվանարկել նրանց։ Նրանք նաև մեղադրվում էին զինվորական սեփականություն դարձած և պետական իրավասությունից դուրս գտնվող ունեցվածքը բռնագրավելու մեջ։

Թուրքական բանակի բազմաթիվ ծառայողներ մեղադրվում էին հայոց ունեցվածքը կողոպտելու և յուրացնելու մեջ։ Դրանցից մեկը հայերի տներից իրեր էր բռնագրավել, այնուհետև խոստացել ազատել դեպորտացիայից և 385 կտոր ոսկյա իրեր խլել։ Մեկ ուրիշը մեղադրվում էր Ղազար Նշանյանի գրպանից դրամ հանելու մեջ։ Քեմալ Օղուզը (Զանկըրի երիտթուրքերի պատասխանատու քարտուղարը) և նրա գործընկերները օրենքի անունից հայերից դրամ էին պահանջել։ Սրանք բռնվեցին և բանտարկվեցին 1919-ի մարտի 31-ին։ 1919-ի ապրիլի 20-ին որոշվեց նրանց ազատել, սակայն վճռաբեկ դատարանը չեղյալ հայտարարեց այդ որոշումը և 1919-ի մայիսի 5-ին նրանք նորից ձերբակալվեցին։

Մի 69-ամյա ծերունի Հասան Ցեհմի անունով, Օրեն գյուղից, ձերբակալվել և ռազմական դատարանի իրականաց-

րած հետաքննությունների միջոցով մեղադրվում էր հայերի զանգվածային կոտորածներ կազմակերպելու մեջ։

Մի այլ փաստաթղթում կարդում ենք. «Մեծարգո ներքին գործերի մինիստրին.

1915-ի դեկտեմբերի 26-ին մենք գնացինք Դեր Զոր, նպատակ ունենալով ուսումնասիրել փախստականների վիճակը և հետաքննել այն անօրինականությունները ու չարաշահումները, որոնք տեղ էին գտել հայերի տեղահանման ժամանակ, որ իրականացվում էր զինվորական և կարգապահական հարկադրանքի հետևանքով, ինչպես նաև ուսումնասիրելու գաղտնի օրինազանցությունների հանգամանքները։

Մենք մեր խնդրի իրականացմանը ձեռնամուխ եղանք՝ բացատրություններ պահանջելով մյութասարիֆաթից՝ Դեր Զորի սանջակի գրանցված, հաշվառված մյուս հայերի մասին, որոնք այլ վիլայեթներից ու սանջակներից այստեղ էին բերվել, որտե՞ղ էին տեղաբաշխվել ու բնակեցվել, ինչպի՞սի հանցագործություններ են կատարված հայերի դեմ ճանապարհին կամ նրանց հաստատված բնակավայրում։ Ըստ մյութասարիֆաթի ներկայացրած տեղեկանքի Դեր Զորի սանջակում տարբեր վիլայեթներից և սանջակներից ուղարկված 29. 673 հայերը բաշխված էին հետևյալ չափերով.

Սանջակի կենտրոնում	—	15.000 հայ
Անայի կաղայում	—	3.000 »
Աբու Քեմալի կաղայում	—	2.411 »
Աշհարայի »	—	4.000 »
Սուարի նահիեյում	—	331 »
Մուհնշի »	—	567 »
Կեսրեի »	—	323 »
Մերատի »	—	479 »
Քեֆքեբի »	—	62 »
Սեբկայի »	—	2.500 »
Շհեմբեթայի »		

Բացի սրանից, մեզ նաև իրազեկ պահեցին, որ տասը օրվա մթերքը մի կողմ է դրված, կեսը փողով, մյուս կեսը՝ մթերքով, հայկական այն քարավանների համար, որոնք

շարունակելու են իրենց ճանապարհը, անցնելով Բայիդիի և Սուարի նահիեների շրջակայքով, քանի դեռ գտնվում էին սանջակի տարածքի վրա, շարժվելով դեպի Մոսուլ՝ որպես իրենց բնակության գոտի։ Քարավաններին ուղեկցում էին բավականին թվով պահակային զորամասեր դեպի Մոսուլի վիլայեթի Սինջար կազա անցնելու ճանապարհին։

Ինչ վերաբերում է փախստականներին և հայերի դեմ կատարված հարձակումներին, նման ոչ մի բան չի կատարվել Զորի սանջակում[1]։

Նման փաստերի, վկայությունների շարքը կարելի է շարունակել։ Սակայն բավարարվենք այսքանով։ Ասենք միայն, որ երիտթուրքական կառավարության անկումից հետո քաղաքական պետական իշխանությունները իրենք են բնդունել հայոց նկատմամբ կատարված ցեղասպանությունը, իրենք են դատել և դատապարտել նրանց անմարդկային գործողությունները։ Ինչ խոսք, որ դատական պրոցեսը չի եղել կատարյալ, երիտթուրքերի նկատմամբ չի իրականցվել հետևողական հետապնդումների և պատժի քաղաքականություն։ Մի փոքր անց նույն երիտթուրքերը համայրելու էին ազգայնական բանակի շարքերը, կրկնելու էին իրենց հակահումանական, հակահայկական չարագործությունները։

Սակայն մենք չեշտում ենք, որ երիտթուրքերին դատապարտել են (թույլ տված) իրենք՝ թուրքական պետական մարմինները։

Ի վերջո, բերենք ևս մի բնորոշ փաստ. 1919-ի մայիսի 10-ին Ելիզավետպոլի քաղաքագլուխ Ալասքեր բեկ խասմամեդովն իր մոտ է հրավիրում Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներին և վարդապետ Սյունուն։ Նրանց պատմելով Կ. Պոլսում բանտարկության մեջ գտնվող Նուրի փաշայի և Մուրսել փաշայի վատ վիճակի մասին, որ նրանց ծանր պատիժ է սպասվում, քաղաքագլուխը պահանջում է

---

[1] Ալի Սուադ բեյը (Դեր Զորի մյութասարիֆը) մերժեց հայերին կոտորելու մասին հրամանները։ Հալեպի վալի Աբդուլհալիկ բեյի՝ ներքին գործերի մինիստր Թալեաթին ուղղած բողոքի հիման վրա Ալի Սուադ բեյը հեռացվեց պաշտոնից և նրան փոխարինեց Սալիհ Զեքի բեյը, որը թուրքական պաշտոնական վիճակագրության համաձայն կոտորեց 195. 750 հայ, մեծ մասամբ կանայք և երեխաներ։

հեռագիր տալ Կ. Պոլիս իշխանություններին. գովել Նուրի փաշային, ցույց տալ, որ նա չի մասնակցել հայերի կոտորածին և դրանով նպաստել նրա ազատմանը։

Ելիզավետպոլի հայոց ներկայացուցիչները մերժում են քաղաքագլխի պահանջը և պատասխանում, թե անգլիական դատական իշխանությունների կողմից հարցում ստանալու դեպքում նրանք կպատասխանեն Նուրիի և մյուսների վարքագծի մասին իրենց ձեռքի տակ եղած տեղեկությունների հիման վրա (18, № 94, 1919)։

Մի կողմից, տեղի էր ունենում երիտթուրքերի դատավարությունը, մյուս կողմից՝ Դամադ Ֆերիդ փաշայի ու անգլիացիների հովանավորությամբ ստեղծվեցին «Իսլամի վերածնության լիգա», «Կովկասյան մահմեդական լիգա» և այլ հետադիմական կազմակերպություններ։

Նույն Թեֆիկ փաշան 1919-ի փետրվարին «մահմեդական» տերիտորիա էր հռչակում Հայաստանը։ Դաշնակիցներին ներկայացրած իր հուշագրերում սուլթան Համիդի նախկին այդ գործակիցը, որ այժմ վարչապետ էր դարձել, առանց ամոթի ստում էր, գրելով, թե մինչև «ցարի բանակների ներխուժումը արևելյան նահանգները», մինչև «հայերի տեղահանությունը» իբր «հայկական բանդաները» մեկ միլիոն մահմեդական էին կոտորել իրենց ապստամբական ելույթներով։ Այդ ստերը շաղ տալուց հետո, Թեֆիկը թուրքական ճկուն դիվանագիտության ավանդույթներին հավատարիմ, պատրաստակամություն էր հայտնում ընդունել «ինչպես ամերիկյան, այնպես և ֆրանսիական մանդատը» (22, էջ XV)։

1919-ի հունիսի 17-ին Փարիզի խաղաղության կոնֆերանսի ամբիոնից ճառում էր թուրքական պատվիրակության ղեկավար Դամադ Ֆերիդ փաշան։ Իրեն հռչակելով 300 միլիոն մահմեդականության պատվիրակ, նա վերջին հինգ տարիներին թուրքական քաղաքականության բոլոր ձախորդությունների պատասխանատվությունը դնում էր երկրում իշխանությունն առևանգած երիտթուրքերի ղեկավարների վրա։ Շեշտելով, որ երիտթուրքերը դատապարտված են, որ իբր Թուրքիան, թուրք ժողովուրդը մեղք չունեն պատերազմի ու նրա դառը հետևանքների մեջ, նա աշխարհի մեծերից աղեր-

սում էր դաժան պատիժ չկիրառել իր երկրի նկատմամբ (22, էջ XV)։

Հին թե նոր թուրքերի թուրքիզմը նույնն էր։ Նրանց դիրքորոշումը հակահայկական էր, հայամերժ։

□

1919-ին Կ. Պոլսում ֆրանսերեն ասպարեզ բերվեց մի կեղծագիր, որը վերնագրված էր «Փաստաթղթեր մուսուլման բնակչության նկատմամբ հայերի կատարած զազանությունների մասին» (29, էջ 73)։ Այս ժողովածուի հեղինակները փորձում են սևը սպիտակ ներկայացնել և ցույց տալ, թե հայերն են գենոցիդ սարքել թուրք բնակչության նկատմամբ։ Հայ հայդուկների հակասուլթանական, ժողովրդապաշտպան կռիվը թուրքական կեղծարարներն այստեղ ներկայացնում են որպես թուրք ժողովրդի դեմ ուղղված պայքար։

Ազգային-ազատագրական պայքարի, թե դասակարգային, սոցիալական պայքարի հողի վրա մղված կռիվներն անընդունելի, մերժելի բաներ են թուրքական հետամնաց պետականության փաստաբանների տեսադաշտում։ Գրքույկի երրորդ գլուխը նույնիսկ վերնագրված է այսպես՝ «Կովկասում հայերի կատարած զազանությունները»։

Թուրքական պաշտոնական հրատարակություններում սկսեցին անցկացնել այն գիծը, որ բոլորն անմեղ էին, միայն չարագործ էին երիտթուրքերի պարագլուխները։ Մեր հիշատակած պաշտոնական գրության մեջ ասվում էր հետևյալը. «...Թուրք-հայկական վեճի մեջ թուրք ժողովուրդը մեծ մեղք չուներ, ինչպիսին նրան վերագրել են. նրա գործողությունը հայ ժողովրդի դեմ հանկարծակի պայթյուն չէր, որ առաջացել էր առանց մոլեգնության ու բարբարոսության, այլ ինքնապահպան բնազդական մի ռեակցիա, որն ուժեղացել էր նրա վրա 30 տարի շարունակված սիստեմատիկ գրոհների հետևանքով, չնայած խաղաղություն հաստատելու ուղղությամբ ձեռնարկված բազմաթիվ փորձերին» (29, էջ III—IV)։

Հայոց ողբերգության հարցում միևնույն դիրքն էին

րոնում ինչպես Ստամբուլի անգլոֆիլ կառավարողները, այնպես և թուրք ժողովրդի ազգայնական շարժումը գլխավորողները։

1919-ի սեպտեմբերի առաջին օրերին Սեբաստիայում տեղի ունեցած համաժողովում Մուստաֆա Քեմալն արդեն հայերին էր վերագրում «չարդի քաղաքականությունը», մոռանալով դատարանին տված իր ցուցմունքները։ Նա արդեն իր ունկնդիրներին համոզում էր, որ հայերն են վիրավորել թուրք «ազգի արժանապատվությունը»։ Արևելյան սահմանային նահանգները նա համարում էր «սգավոր» ոչ թե հայերի տեղահանության ու կոտորածի պատճառով, այլ այն բանի համար, որ մահմեդականները «պատերազմի ժամանակ ամեն տեսակի չարիքներ և վշտեր» էին կրել մանավանդ հայոց վայրագությունների և զուլումների ասպարեզ լինելով (8, 14. XI. 1919)։

Ահա այսպիսին էր ապագա թուրքական հանրապետության ղեկավարի հարափոփոխ կեցվածքը մի քանի ամսվա ընթացքում։

Թուրքական որոշ պաշտոնական թղթեր, հեռագրեր մեզ հասան շնորհիվ այն բանի, որ Հալեպը գրավվեց անգլիացիների կողմից և երիտթուրքերը չկարողացան ոչնչացնել այնտեղ գտնվող հայերի «Տեղահանության կոմիտեի» արխիվը (28, հուլիս, 1921)։

Շուտով հրապարակ եկան եզակի մի քանի անուններ, որոնք փորձեցին հասարակությանը պարզել իսկությունը, ընթերցողներին պատկերացում տալ կատարվածի մասին։ Դրանցից մեկը՝ մեր հիշատակած Նաիմ բեյն էր, որի հուշերը՝ «Թուրքական պաշտոնական փաստաթղթեր հայերի տեղահանության և կոտորածների մասին» վերնագրով լույս տեսան արդեն 1920-ին Լոնդոնում (25)։

Իթթիհադի կատարած համապարփակ չարագործության ճշմարիտ պատկերը ամփոփված է այդ գրքի էջերում՝ բերված երիտթուրքական կուսակցության և պետական մարմինների հրամաններում, ցուցումներում և շրջաբերականներում։ Նայիմ բեյը թուրքական պետական պաշտոնյա էր և Հալեպում հայերի տեղահանության կոմիտեի վերջին գլխավոր քարտուղարը։ Նրան ուղարկել էին այդտեղ վերջ դնելու

տեղահանված հայերի խմբերին Մեսկենում։ Արամ Անտոնյանը վկայում է, որ նա խղճով մարդ էր և նույնիսկ օգնել էր հայ ընտանիքներին։ Արամ Անտոնյանը նրանից էր ստացել բազմաթիվ մինիստրական հրամանների, պաշտոնական փաստաթղթերի պատճենները, թեև Նաիմ բեյը դրանք պետք է ոչնչացրած լիներ Իթթիհադի կենտկոմի խիստ ցուցումներին համապատասխան (25, էջ X—XII)։

Նաիմ բեյը գրում է. «Հայոց եղերական տարագրության և սպանության խնդիրը, որ թուրք անունը մարդկության անեծքին արժանի կդարձնե, անանկ կկարծեմ թե համաշխարհային պատմության մինչև այսօր արձանագրած զարհուրելի դեպքերեն ոչ մեկուն կնմանի։ Թուրքիո ընդարձակ հողամասին որ անկյունն ալ որոնվի, որ ամենամութ խորշն ալ խուզարկվի, ամենաանգութ կերպով խողխողված հազարավոր հայու դիակներ և կմախքներ պիտի գտնվին» (2, էջ 19—20)։

Ահա թե ինչպես է բնորոշում երիտթուրքերին նույն կուսակցության նախկին ղեկավար անդամ Մևլյան Զադե Ռիֆաթը։ Նրանց «սնունդը՝ մարդկային մարմիններ», «խմածը՝ արյուն-արցունք», շնչածը՝ «վառոդի ծուխ», «արդարությունը՝ կախաղան», եղբայրությունը՝ տարագրություն, հավասարությունը՝ սպանություն, ազատությունը՝ բանտ։ Նրանք «ավելի քանդեցին, քան շինեցին», «մեռյալների ոսկորներով ապարանքներ շինեցին»։ Նրանց կարդացածը միայն «մահավճիռներ» էին, գրածը՝ «պատերազմական հրահանգներ», իսկ ծրագրերը՝ «դավադրություն և ընդհանուր չարդ» (13, էջ 288—289)։

Ջեմալ փաշան «Ֆրանկֆուրտեր Ցայտունգ» թերթում հայտարարում էր, թե ինքը «պատասխանատու չէ հայկական կոտորածների համար»։ Նա համոզված էր, որ Թալեաթն ու Էնվերը նույնպես կարող են ապացուցել, որ առնչություն չեն ունեցել հայկական կոտորածների հետ (8, 27. XI. 1919)։ Նման վարքագիծը հատուկ էր երիտթուրքական լկտի պարագլուխներին։

1918-ի նոյեմբերի կեսերից Գերմանիա հաստատված Թալեաթն ապրում էր մշտական վախի մեջ, ծպտյալ, սալոնիկյան ժամանակների իր հին կեղծանունով՝ որպես Ալի

Սամի բեյ։ Գերմանական հեղափոխության օրերն էին։ Մեծ մարդասպանը սարսափում էր փողոց դուրս գալ, թեև գերմանական բանվոր դասակարգի գործի դավաճան սոցիալ-դեմոկրատ էբերտը նրան օժտել էր հատուկ անցագրով։ 1919-ի հունվարին, երբ Կ. Պոլսում սկսվեց երիտթուրքական հանցագործների դատավարությունը, Բեռլինում օսմանյան դեսպան Ռիֆաթ փաշան իր կառավարությունից հանձնարարություն ստացավ նրան ձերբակալելու և երկիր ուղարկելու մասին։ Բեռլինի թուրքական ակումբը եռում էր գերմանական հեղափոխական զինվորների ազդեցության տակ նույնպես հեղափոխական հովերով տարված Քիլի և Ջելենապուրգի ծովային ուսումնարանների թուրք կուրսանտների հավաքներից։ Թուրքական ակումբի գլուխ կանգնած էր Համդուլլահ Սուբհի բեյը, որը համակրում էր գերմանական հեղափոխությանը, քաջալերում թուրք զինվորների հակառազմական տրամադրությունները։ Այստեղ ձևավորվեց մի մարմին, որը կազմել էր պատերազմի թուրք հանցագործների ցուցակ և գերմանական կառավարությունից պահանջում էր նրանց ձերբակալումը և հանձնումը թուրքական կառավարությանը։ Բեռլինում թուրքական դեսպանատան աշխատողներն իրենք էին մասնակցում ակումբի ժողովներին, պահանջում Թալեաթի և մյուսների ձերբակալումը։ Այդ պահանջը նրանք պատճառաբանում էին նաև 800 հազար հայերի սպանության փաստով։ Նույն բովանդակությամբ հոդվածներ երևացին գերմանական թերթերի էջերում։ Մեկ անգամ, «ժողովին գումարումը լրանալու մոտ՝ վերջին խոսքը ըսելու կարգը Համդուլլահ Սուբհի բեյի եկած էր, որ իրեն հատուկ պերճախոսությամբ խոսելէ և կատարված ոճիրներն անգամ մըն ալ նկարագրելէ ետք, ընդհանրային և մասնավոր ծովային զինյալ ուսանողներուն հուզումը ավելցուց։ Իսկույն սվինները հրացաններուն անցվեցան և ձեռնառումբերը սկսան հոս-հոն նետվիլ, տղու խաղալիքներու պես։ Ո՞ւր են այդ հերիֆները, ըսեք, երթանք, սատկեցնենք, ձայներ կբարձրանային» (3)։ Թալեաթն ստիպված էր փոխել բնակարանները, անցնել ընդհատակ։

1922-ի մայիս-հունիսին իր մի շարք համարներում Կ. Պոլսի «Վերջին լուր» թերթը արտատպեց Թալեաթի համախոհ ու մտերիմ Արիֆ Ջեմիլի «Ինչպես փախան իթթիհադի պետերը և ինչ կյանք վարեցին արտասահմանի մեջ» նյութը։ Այն մի շարք մանրամասներ է պարունակում, որոնք լույս են սփռում Բեռլինում Թալեաթի կյանքի ու նորից հակահայկական գործունեության վրա։ Նյութը տպվում էր հատվածաբար, տարբեր վերտառությունների ներքո. «Թալեաթի Բեռլին անցուցած կյանքը և իր հիշատակները», «Թալեաթ և հայկական խնդիրը», «Թալեաթի դիմումը Լլոյդ Ջորջին կմնա անհետևանք», «Մուստաֆա Քեմալի առաքելությունը», «Բեհաէդդին Շաքիրի և Էնվեր փաշայի արկածալից ուղևորությունը դեպի Մոսկվա» և այլն։

Երբ «Բեռլիներ Տագեբլատ» թերթի խմբագիր Թեոդոր Վոլֆը օբյեկտիվ հոդվածաշարք նվիրեց հայկական հարցի ու կոտորածի պատմությանը, անմիջապես կազմակերպվեց Թալեաթի գաղտնի հանդիպումը նրա հետ։ Այն պահին Պոտսդամի Ջեյնի սանատորիայում հաստատված, արտակարգ դեպքերում Բեռլին իջնող գլխավոր դահիճը պաղատում էր չհրապարակել իր այդտեղ գտնվելու փաստը։ «Կրնա ըսվիլ թե Բեռլինի մեջ անցուցած երկուք ու կես տարվան միջոցին հազիվ մեկ-երկու անգամ թատրոն գացած է։ Իր միակ հաճույքն էր կեսօրերե ետք ընկերներուն հետ պոկեր խաղալը։ ...Օրվան միջոցին շահած կամ կորսնցուցած 15—20 մարքը այդ օրվան խոսակցության նյութը կըլլար»։

Ինքրին իրազեկ թուրք ականատեսը (Արիֆ Ջեմիլ) պատմում է. «Եվ երբ առեն մը վերջ Պոլսո պատերազմական ատյանը սկսավ դատել իթթիհադի պետերը և վճիռներ արձակել սկսավ... այդ միջոցին Թալեաթ փաշա կըսեր թե իր հիշատակները պիտի գրեր հանրային կարծիքը լուսաբանելու համար...» Նախ նա ձեռնամուխ է լինում գրելու մի փոքր նախաբան, նպատակ ունենալով այն տպագրել թուրքերեն, ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն։ Սակայն նախապես եվրոպացիներին (Լլոյդ Ջորջին և այլոց) ուղղած իր դիմում— «բացատագրերի» պատասխաններից հուսախաբվել էր։ Նույն պահին Էնվերը դիմում էր Չերչիլին՝ ձգտելով ի նպաստ Թուրքիայի բարեփոխել Անգլիայի քաղաքականությունը։

Ճոստով Բեռլինում Թալեաթը երկու սենյակ վարձեց,

որոնք դարձան նրա գրասենյակն ու իթթիհադական ղեկավարների հավաքատեղին։ Այստեղ քննարկվում էին մամուլի նյութերը, Թուրքիայի հետ կապված բոլոր խնդիրները։ Այստեղ կազմվում էր մի հատուկ տեղեկագիր, որն ուղեկցվում էր բազմաթիվ հասցեներով։ Որոշվել էր հիմնադրել «Reveil d' Orient» ֆրանսերեն թերթը, Ահմեդ Ռիզա բեյի խմբագրությամբ։ Սակայն վերջինիս հանկարծամահ լինելը խափանեց այդ որոշման կատարումը։

Թալեաթը ուղևորություններ էր կատարում Շվեյցարիա, Իտալիա, Դանիա, Շվեդիա, Հոլանդիա, փորձում համախմբել իր համախոհների ցաք ու ցրիվ ուժերը։ Սա 1919—1920 թթ. էր, երբ դահիճը թաքնվում էր Ալի Սամի բեյ անվան տակ։ 1920-ի մարտ-ապրիլին Հռոմ կատարած ուղևորության ժամանակ «Ճամփա չելած սեխերը ածիլած էր։ Այն ատենները Հռոմի կառավարության դիրքը հայտնի չըլլալով, փաշան ինքզինքը չճանաչելու համար այդպիսի միջոցի մը դիմելու պետք զգացած էր»,— պատմում է նրա մտերիմներից մեկը։

Թե ի՞նչ գործնական խնդիրներ էր հետապնդում ու լուծում մեծ դահիճը, մանրամասները չգիտենք։ Բայց նույն թուրք մտերիմը գրում է. «Իր սպանութենեն մեկ երկու ամիս առաջ, 1921-ի հունվարին, երկրորդ անգամ գացած էր Հռոմ և հոն կարգ մը անձերու հետ տեսակցելե ետք, Բեռլին վերադարձած էր։ Այս բոլոր ուղևորությանց մասին ավելի բացատրություններ տալ կարելի չէ այժմեն։ Առաջիկային, երբ կարգը գա, պիտի խոսիմ ատոնց մասին»։ Սակայն հայտնի է, որ նույն պահին Մալթայի աքսորավայրից անգլիական իշխանությունները ազատ էին արձակում իթթիհադական գործիչներին, որոնք Թուրքիա էին անցնում Իտալիայի վրայով։ Բացառված չէ, որ Թալեաթը նրանց հետ էր հանդիպում, հանձնարարականներ տալիս, խորհրդակցում և այլն։

Սպանվելու նախօրյակին հասարակական կարծիքը շեղելու փորձեր էր անում ինքը՝ Թալեաթը, որը բացառիկ ճրծված կեղծարար էր։ Նա ընդունում էր, որ հայերի նկատմամբ չարաշահումներ եղել էին տեղահանումների ժամանակ։ Բայց նա ժխտում էր հայոց ազգը ոչնչացնելու իթթիհադական ծրագրի գոյությունը։ Նա չարաշահումները վերագրում էր պաշտոնատար մարդկանց անկարողությանն ու հետամնա-

ցությանը։ «Ես դա խոստովանում եմ։ Ես խոստովանում եմ նաև, որ կառավարության պարտականությունն էր խոչընդոտել այդ չարաշահումները և կոտորածները, կամ ծայրահեղ դեպքում բռնոտել և խստորեն պատժել դրանց հեղինակներին» (37)։ Ահավասիկ երեսպաշտության թալեաթյան տիպիկ օրինակ։ Այնուհետև նա շարունակում էր. «Նման ապահովական միջոցներ ձեռք էին առնվել պատերազմի ընթացքում ամեն երկրում, բայց, մինչդեռ, ցավալի արդյունքները լռության էին մատնվել այլ երկրներում, մեր գործողությունների արձագանքը լսելի եղավ ամբողջ աշխարհում, որովհետև բոլորի աչքերը մեր վրա էին» (37)։

Թուրքական «Փեյամ» թերթը 1922-ի օգոստոսի 17-ին (№ 1328) տպագրել էր մի նյութ, հետևյալ վերնագրի տակ. «Թուրքիայի արդարադատության նախկին մինիստր Սայիդ Մոլլա բեյի ուսանելի խոստովանությունները Կ. Պոլսի քրեական դատարանում»։ Դատական պրոցեսի ժամանակ նա հայտարարել էր. «Ինչքան մարդ են սպանել իրենց սեփական ձեռքով պետական քարտուղարի օգնականը և նույնիսկ երկիրը ղեկավարող մինիստրները։ Նրանց լկտիությունն այնտեղ էր հասել, որ երբ նրանք կատաղում էին, ապա ժողովների ժամանակ միմյանց նկատմամբ օգտագործում էին «կատիլ»՝ հանցագործ տերմինը։ Զրուցակիցն առարկում էր, ասելով «եթե ես մեկ մարդ եմ սպանել, ապա դու սպանել ես հարյուրների ու հազարների, նշանակում է դու ես իսկական հանցագործը»։

1946-ին Ստամբուլում լույս տեսան Թալեաթի հուշերը Հուսեին Ջահիդ Յալչընի նախաբանով։ Հրատարակիչը (Էնվեր Բոլպիր) մեծ մարդասպանին հռչակում է «մեծ թուրք», «հայրենասեր», «ուշիմ», «շիտակ» սադրազամ (4, էջ 5)։

Թալեաթն իր հուշերում փորձում է արդարացնել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի չարագործությունները՝ ամեն ինչ պայմանավորելով «օրենքներով, պետության շահերով» (4, էջ 36—37)։ Նա փորձում է անմեղ ձևանալ, շատախոսում է մեղավորներին պատժելու ուղղությամբ իր ձեռնարկած միջոցառումների մասին, ամեն ինչ վերագրում է անպարախիղճ, «անխիղճ» անհատների, «մի շարք պաշտոնյաների» և ժողովրդի (4, էջ 78—79, 129—130)։

Թալեաթը Բեռլինում տարբեր մարդկանց հետ հանդիպումների ժամանակ, երբ խոսք էր բացվում հայոց սարսափների մասին, անմիջապես մեղադրում էր զինվորական իշխանություններին (1, էջ 365—366)։ Հասել էր պատասխան տալու ժամը և նրանք մեկը մյուսի վրա էին բարդում մեղքը։

*Հետաքրքրական է հետևյալ փաստը. Թալեաթը սպանվելուց մի քանի շաբաթ առաջ, 1921-ի փետրվարին, Համ քաղաքում (Գերմանիա) բրիտանական հայտնի պահպանողական գործիչ Օբրի Հերբերտի (*Aubrey Herbert*) հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարում էր, թե «ինքը միշտ դեմ է եղել հայերի ոչնչացմանը...», որ «ինքը երկու անգամ բողոքել է այդ քաղաքականության դեմ, բայց մերժվել է գերմանացիների կողմից»։ Այս փաստը Ուոկերը քաղել է նույն իր՝ Օ. Հերբերտի մի գրքից, որը կոչվում է՝ «*Aubrey Herbert, Ben Kendim (London, 1924)»: *Հետաքրքրական է, որ անգլիացի Օ. Հերբերտը գիրքը վերնագրել է թուրքերենով՝* Ben Kendim: *Թուրքերեն նշանակում է ես ինքս (46, էջ 233)։*

Թոյնբին նշում է, որ նույնիսկ 1921-ին նա երբեմն հանդիպում էր թուրքերի, որոնք բացորոշ արդարացնում էին վեց տարի առաջ հայերի դեմ սարքված սարսափելի կոտորածները (43, էջ 354)։ Սրանք կարծես թե տակավին չէին ըմբռնել խայտառակության ու ամոթի անհրաժեշտությունը։ Մի փոքր անց Հալիդե Էդիբը նույնպես սկսեց արդարացնել հայոց տեղահանությունները (30, էջ 338)։ Պատերազմից հետո հակահայկական պրոպագանդան ուժեղացնելու նպատակով Բ. Դուռը Շվեյցարիայում ֆրանսերեն թերթի հիմնադրման համար 50 հազար ոսկի գումար տրամադրեց (13, էջ 329)։ Թուրք հեղինակ Սինա Ակշինը հայոց տեղահանության վնասակարությունը բացատրում է սովի, եղանակի անբարենպաստության, հիվանդությունների փաստերով։ Նա հիշատակում է նաև կողոպուտի և վրեժխնդրության նպատակով կատարված սպանությունները և չարագործությունները (39)։

Թուրքերը շարունակում էին ստել ու կեղծել։

«Բռնագաղթը կշարունակվեր անողոք թափով, բարձրացող փոշիի թանձր ամպերուն մեջ կնշմարվեին մարդկային կարավաններ, որոնք կշտապեին հեռանալ ժանդարմներու մահացու հարվածներուն առջև՝ հայրենի օջախներե» (7, էջ 19)։ Այս տողերը գրված են 1922-ին գողգոթայից փրկվածի ձեռքով։

Մեկ այլ ականատես հիշում էր «... Դեր Զորի կամուրջէն ցեղին բյուրավոր քարավաններեն մին, փոշեթաթախ... կանգներ դեպի անէության սահմանը... Մերթ անդրշիրիմյան մռունչներ և մերթ խաղաղ, ճնշիչ համաքայլ... իրենց ցավագար եռեփման մեջ են խարազանն ու սվինը, զենքի կոթն ու տիգը... Քարավանը կքալե միշտ...» (7, էջ 15)։ Իսկ սրա մասին ի՞նչ կասի այսօրվա թուրք պատմաբանը։

«Կանխամտածված, ծրագրված քաղաքական ոճիր մը գործեցին թուրքերը հայ ժողովրդի վերաբերմամբ,— գրել է սփյուռքահայ ծանոթ հեղինակ Լևոն Զորմիսյանը։— Ոչ միայն բյուրավոր մարդկային վկայություններով, դատերով ապացուցված է ոճիրը, այլ անոր անհերքելի և անվիճելի փաստերեն մեծագույնը կկազմե հայերեն ամբողջապես ամայացած այսօրվան Թուրքահայաստանը։ Ամեն ոճիր ընական ու արդար պատիժ կկրե, թուրք չարագործ իր զոհին հանդեպ հատուցում մը վճարելու նյութական, ֆիզիկական ու բարոյական հարկադրանքին տակ կգտնվի» (6, 25. IV. 1963)։

Լևոն Զորմիսյանը հարց է տալիս. «Լսեցի՞ք որևէ առթիվ, որևէ տեղ գեթ զղջում մը, բարոյական ինքնաքննադատություն մը իրենց արարքին համար, թուրք պետական, քաղաքական գործիչներե որևէ մեկուն կողմե, թուրք մտավորականներեն, պրոֆեսորներեն, գրագետներեն, գիտուններեն որևէ մեկուն կողմե, թուրք քաղաքական կուսակցություններուն, մշակութային և նույնիսկ գյուղացիական և բանվորական կազմակերպություններուն, տնտեսական, առևտրական, ճարտարվեստական, արհեստակցական որևէ սինդիկատի կամ անհատի կողմե որևէ զիջումի, ցավի արտահայտություն և հայերուն հանդեպ գործված անարդարություններուն, բռնագրավումներուն փոխարեն նվազագույն հատուցում մը

կատարելու որևէ տրամադրություն և մտածում» (6, 25. IV. 1963)։

Հիրավի, տակավին ոչ Թուրքական կողմը բռնեց կոծկելու, թաքցնելու, կեղծելու ուղին։

Ստորև կտեսնենք, որ թուրքական իրականության մեջ աստիճանաբար անհետացան երկչոտորեն ճշմարիտ խոսքասողները և ասպարեզը բռնեցին ընդդիմակաց կեղծարարները։ Թուրքիայում հրատարակվող հայկական հարցին նվիրված գրքերը ամեն ինչ կոծկելու, խեղաթյուրելու նպատակ են հետապնդում։

1. Ամենուն տարեցույց, ԺԶ տարի, 1922, Հայ միտքը երեկ և այսօր, Կ. Պոլիս։
2. Անտոնյան Արամ Մեծ ոճիրը, հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Բոստոն, 1921։
3. Աքիֆ Ջեմիլ բեյ, Ինչպես փախան Իթթիհատ—Թերաքի պետերը և ինչ կյանք վարեցին արտասահմանի մեջ, «Վերջին լուր» թերթ, Կ. Պոլիս, 1922 մայիս-հունիս։
4. Թալեաթ փաշայի հուշերը (թարգմ. թուրքերենից), Արևելագիտության ինստիտուտ, 1963։
5. Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, գլուխ երրորդ։
6. «Լրաբեր» թերթ, Նյու Յորք։
7. Կիլիկյան տարեցույց, 1922, Կ. Պոլիս, 1922։
8. «Հայրենիք» թերթ, Բոստոն։
9. Հակոբյան Ստ. Ազգամիջյան հարաբերությունները Արևմտյան Հայաստանում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում։ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիր» 6, 1962։
10. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 237, մաս 1, էջ 51—64, «Les process des Unionistes»— Իթթիհադականների դատական պրոցեսը (Հայաստանի հանրապետության արտաքին գործերի նախարարությանը ստացել է 2. 5. 1919)։
11. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142։
12. «Մշակ» թերթ, Թիֆլիս։
13. Ռիֆաթ, Մևլան Զադե Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը (թարգմանություն թուրք.), Բեյրութ, 1938։
14. Սողոմոն Թեհլերյանի Դատական պրոցեսը։ Սղագրական հաշվետվություն, թարգմ. գերմաներենից, Վիեննա, 1921։

15. **Арипов Р., Мильштейн Н.** Щит и меч революции (из истории органов госбезопасности Узбекистана, 1918—1924), сб. «Чекисты», Ташкент, 1978.
16. **Габидуллин Х. З.** Младотурецкая революция. 1936.
17. «Известия», газета.
18. «Наше Время», газета, Баку.
19. **Никольсон Г.** Как делался мир 1919 г., М., 1945.
20. Раздел Азиатской Турции по секретным документам Министерства иностранных дел, под редакцией Е. А. Адамова, М., 1924.
21. **Саакян Р. Г.** Геноцид армян в оценке передовой общественности, «Известия» общественных наук АН Арм. ССР, Ереван, № 4, 1965.
22. Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, изд. НКИД, М., 1927, со вступительной статьей проф. Ю. Ключникова.
23. **В. И. Шпилькова** Империалистическая политика США в отношении Турции (1914—1920), уч. пособие М., 1960, стр. 8.
24. **Черчиль У.** Мировой кризис, М., 1932.

25. **Andonian Ar.** The Memoirs of Naim Bey, Turkish Official Documents Relating to the Deportations and Massacres of Armenians. London, 1920.
25a Armenia and the Settlement. Report of Public Meeting... june 19th 1919, London, p.38.
26. **Bryce V.O.M.** The Future of Armenia. Reprinted from the "Contemporary Review", December, London, 1918.
27. **Bryce V.O.M.** The Settlement of the Near East, Reprinted from "The Contemporary Review", London, 1920.
28. "Current History", Magazine, N.Y.
29. Documents Relatifs aux atrocites Commises par Armeniens sur la Population Musulmane, Publication du Congrès National, Constantinople, 1919.
30. Edib, Halide Memoirs of Halide Edib, N.Y., 1926.
31. "La Renaissance", Constantinople.
32. Marquart, Die Entstehung und Wiederherstehung der armenischen Nation. Berlin-Schönsberg, 1919, s., 54/55.
33. Montgomery, George R., The Massacres of Armenians in 1915, "The New York Times Current History", N.Y., october, 1922.
34. **Morgenthau H.** Ambassador Morganthau's Story. N.Y., 1926.
34a **Paul du Vèou,** La Passion de La Cilicie, 1919-1922, Paris, 1954.

35. **Paul du Vèou,** Le désastre d'Alexandrette, Paris, 1938;
36. Parliamentary Debates.-House of Lords, November 13, 1918, House of Commons, October 23, 24, 30, 31, november 6, 7, 12, 14, 1918, London.
37. Posthumous memoirs of Talaat pasha, "Current History", XV, November, 1921, p., 294-295.
38. Pour la libération de L'Arménie, Discours, Paris, 1920.
39. **Sina** Aksin 100 Sordua Jön Türkler ve Ittihat ve Teraki. 1980. Istanbul.
40. **Stuermer, Harry,** The War Years in Constantinople. Sketches of German and Young Turkish Ethics and Politics, N.Y., 1917.
41. "The New York Times".
42. The Turco-Armenian Question. The Turkish Point of View, Constantinople, 1919.
43. **Toynbee A. I.** Turkey: A past and a Future, N. Y.
44. **Toynbee A.J.** Armenian Atricities, The Murder of a Nation London, New York, 1915.
45. Vérité sur la mouvement révolutionnaire Armenien et les mesures gouvenmentales, Constantinople, 1916.
46. **Walker Christopher,** Armenia. The Survival of a Nation N.Y., 1980.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՏԱԿՎԵՑ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵՑ

«Հին կամ նոր Թուրքիա՝ մեկ քաղաքականություն ունի հայոց հանդեպ. բնաջնջել՝ խափանելու համար անոր իրավապահանջումը»: Քեմալական շարժման նախաիմպերիալիստական քաղաքականությանը զուգընթաց, այն «տանիկ սպառաքուշ փաշաների, ազդեցիկ պաշտոնյաների և զանազան բալանչիների ձգտումն է պահպանել իրենց անբաժան գերիշխանությունը»: Ազգայնականները երիտթուրքերի գործի շարունակողներ: Նա «նեոլիբերալ նախակոմունիստ էր»: 1919-ի Վերաքի կոնֆերանսը: Սովետական Ռուսաստանը հայ ժողովրդի նեոլիբերալ պաշտպան: Չկա արևմտյան դիվանագիտության պաշտոնական և ոչ մի նոտա, հայտարարություն, որը դատապարտեր 1920-ի աշնան թուրքական հարձակումը Հայաստանի վրա: «Թուրքերն սկսեցին հարձակումը Հայաստանի վրա, նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ հետո գուցե նաև Բաքուն (Վ. Ի. Լենին): Քեմալ-երիտթուրքեր առնչությունները 20-ական թթ.:

Ազգայնականները «հայկական հարցում ըստ էության շարունակում էին սուլթանների և երիտթուրքերի քաղաքականությունը»։ Այս ճշմարիտ բնորոշումը մենք կարդում ենք սովետական մեծ հանրագիտարանում (40, էջ 530)։

Այս միտքն ահա թե ինչպես է ձևակերպված 1921-ին Կ. Պոլսում լույս տեսած «Հայաստանի վերջին աղետը» գրքում. «Հին կամ նոր Թուրքիա՝ մեկ քաղաքականություն ունի հայոց հանդեպ—բնաջնջել՝ խափանելու համար անոր իրավապահանջումը» (33, էջ 4)։

Հիրավի, երիտթուրքերի խայտառակ ձախողումը, օսմանյան կայսրության խորտակումը կարծես թե հնարավորություն էին ընձեռում արևմտահայությանը շունչ առնելու, ոտքի կանգնելու, սեփական հայրենիքը վերստանալու և վերա-

շինելու համար։ Սակայն Թուրքիան կործանումից փրկելու նշանաբանով վեր բարձրացած թուրքական ազգային-ազատագրական շարժման ալիքն ուղղվեց ոչ միայն իմպերիալիստական տերությունների դեմ, այլև՝ հայ ժողովրդի օբյեկտիվ, բնականոն շահերի դեմ։ Որքանով արդարացի էր թուրք ժողովրդի պայքարը սեփական հայրենիքի համար, այնքանով անարդարացի էր ոչնչացված, աշխարհի տարբեր կողմերը ցրված արևմտահայության բեկորներին սեփական հողից զրկելու քաղաքականությունը, որ իրագործեց Թուրքիան 1920—1922 թթ.։ Պատմագիտության մեջ չի կարելի անտեսել թուրքական ազգայնական շարժման դասակարգային-բուրժուական հակաժողովրդական էությունը և միայն շեշտել լոկ նրա հակաիմպերիալիստական դրսևորումները։

1919-ի հունվարի 30-ին Անտանտի տերությունները հայտարարեցին, որ օսմանյան կայսրությունը պաշտոնապես դադարում է գոյություն ունենալուց։

1918-ի դեկտեմբերին արդեն մտահոգություն կար այն առնչությամբ, որ ընդհանուր քայքայվածության ու անկազմակերպվածության պայմաններում՝ զորացրված թուրք զինվորները դառնալու էին ավազակներ, թալանչիներ, խանգարելու էին հայերին վերաշինելու իրենց հայրենիքը (75, էջ 6)։

Ազգայնական շարժման բանակի կորիզը կազմեց Յակուբ Շևքիի 19 հազարանոց զորամասը։ Սա 1918-ին ճշտությամբ կատարում էր Թալեաթի հրահանգները Կովկասի հայությանը ոչնչացնելու վերաբերյալ։ Նա այն ժամանակ 2-րդ բանակային կորպուսի հրամանատարն էր։

Մյուս, 22 հազարանոց, զորամասի գլուխ կանգնած էր Ալի Իհսան փաշան։ Պատերազմի տարիներին նա իր հրամանատարության ներքո գտնվող 5-րդ դիվիզիայի կազմից հեռացրեց և ոչնչացրեց բոլոր հայ սպաներին, իսկ հետո, երբ 6-րդ բանակային կորպուսի հրամանատարն էր, տեղահանեց և կոտորեց Մոսուլի հայության մի ստվար հատված։ 4-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնում նա խայտառակ վայրենություններ էր արել Ուրմիայի շրջանի հայության նկատմամբ։ Նրան դատել և աքսորել էին Մալթա, որտեղից նա Իտալիայի վրայով վերադարձավ Անկարա և դարձավ Մ. Քեմալի համախոհը (84)։

Մարքսիստ-լենինյան Ս. Կասյանը ճիշտ ըմբռնելով թուրքական միլիտարիզմի էությունը դեռևս 1919-ին գրում էր. «Նա ոչ թե հետզհետե է քամում նվաճած, բռնագրաված երկրի հյութերը, կաթիլ-կաթիլ ծծում ժողովրդի արյունը և որոշ չափով օգնում երկրի տնտեսությունը պահպանելուն, ոչ։ Տաճկական իմպերիալիզմը թալանի և ավերածության, ջարդի և կոտորածի է մատնում երկիրը հենց առաջին մոմենտից»։ Ազգայնական շարժումը, որին քեմալականներն անվանում են «ազգային»— դա տաճիկ պորտաբույծ փաշաների, տզրուկ պաշտոնյաների և ղաչաղ թալանչիների ձգտումն է պահպանել իրենց անբաժան գերիշխանությունը... Տաճկաստանում, նրանց շարժումն է դեպի Անդրկովկաս (4, էջ 23, 49)։

Այս բանը շուտով ևս մեկ անգամ հաստատվեց կյանքում, երբ Կարաբեքիրի հորդաները ներխուժեցին Հայաստան։

Պատմագիտական գրականության մեջ երբեմն փորձել են շրջանցել Հայաստանին ազգայնականների պատճառած ծանրակշիռ վնասների խնդիրը: Ոմանք հարթում են պատմական պրոցեսի սուր անկյունները, կիրառում օբյեկտիվիստական մոտեցում, ինչը հակասում է մարքս-լենինյան պատմագիտության պահանջներին: Սակայն սրանց շարքում կան հրապարակումներ, որոնք օբյեկտիվ լույս են սփռում հայ ժողովրդի կենսական շահերին քեմալիզմի պատճառած վնասների վրա: Սրանց շարքում պետք է հիշել Կաղիչևի (51), Աղասի Եսայանի (8), Երվանդ Սարգսյանի (28), Ռուբեն Սահակյանի և այլոց հրապարակումները: Սովետական ուսումնասիրողները բազմիցս նշել են, որ Մ. Քեմալի ճառերի ժողովածուների նյութերը մշտապես միակողմանի ընտրության արդյունք են: Վ. Շպիլկովան, օրինակ, մատնացույց է անում 1946-ին Ստամբուլում հրատարակված ժողովածուն, որը կազմված է անճշտեցված դիրքերից (67):

Մեր ուսումնասիրության շրջանակներում հարկ ենք համարում պատմության փաստերի ճշգրտությամբ ցույց տալ, որ թուրքիզմը շարունակվեց ազգայնականների իշխանության օրոք, ունեցավ նաև պանթուրքիստական դրսևորումներ:

Պատմականորեն ճիշտ չէ պնդել, թե ազգայնականները ամբողջապես խզեցին օսմանյան կայսրության գաղափարների և պրակտիկայի հետ, թե մերժելով պանիսլամիզմի ու պանթուրքիզմի գաղափարախոսությունը նրանք իրենց դատապարտեցին այդ դոկտրինաների վրա հիմնված ագրեսիվ արտաքին քաղաքականությունը (34,

էջ 22)։ Մի՞թե պանթուրքիզմը չէր այն խթանը, որը թուրքական տիրապետությունը Հայաստանի վրայով հրում էր դեպի Ադրբեջան։ Կամ մի՞թե հայ ժողովրդի հողերը զավթելու ագրեսիվ քաղաքականության դրսևորում չէր։ Ճիշտ չէ պրոֆ. Ս. Փ. Միլլերը պնդելով, թե թուրքիզմն անջատելով պանթուրքիզմից, Մ. Քեմալը թուրքական նացիոնալիզմին հաղորդեց «նոր», «դրական քաղաքական բովանդակություն»։ Թուրքական մահաշունչ նացիոնալիզմը երբեք իր բնույթը չի փոխել։

Չի կարելի համաձայնվել այնպիսի հիմնազուրկ պնդումների հետ, թե Թուրքական «նացիոնալիզմն ագրեսիվ ուղղվածություն չուներ, ուղղված չէր Թուրքիայի սահմաններից դուրս» (35)։ Այդ նացիոնալիզմն ուղղված էր նախ և առաջ հայոց իրավունքները ոտնահարելուն, հայոց պետությունը վերացնելուն, հայ ժողովրդին ոչնչացնելուն։ Այլապես ինչպես բացատրել 1920-ի աշնանը երկու հարյուր հազար հայերի կոտորածը, Կարսի, Արդահանի, Սուրմալուի, Արևմտյան Հայաստանի բռնագրավումը։ Թուրքիզմը շարունակվում է նաև այսօր, անկախ այն բանից, թե անձամբ ով և որ կուսակցությունն է կանգնած իշխանության գլուխ։

1918-ի ավարտից Թուրքիայում պայքար էր գնում իշխանության համար։ Առանց սխալվելու կարելի է ասել, որ ոչ մի էական տարբերություն չկար իշխանության համար պայքարող բուրժուակալվածատիրական խմբերի, կազմակերպությունների ու կուսակցությունների միջև։ Բոլորն էլ համակված էին թուրքիզմով, պանթուրքիզմով և պանիսլամիզմով։ Ազգայնական վերնախավը, թե երկրից փախած երիտթուրքերի ղեկավարները, Եվրոպայի ու ԱՄՆ-ի հետ երկրի բախտը կապելուն ձգտող մտավորականների առանձին խմբերը աշխատավոր թուրք գյուղացիությանը հող տալու և ոչ մի մտադրություն չունեին։ Բանվոր դասակարգը չափազանց փոքրաթիվ էր և էական դեր չէր խաղում ազգայնական շարժման մեջ։ Մուստաֆա Քեմալը և նրա համախոհները Սովետական Ռուսաստանին դիմեցին, օգնություն հայցեցին լոկ իրենց համար ստեղծված ծանր պահին։ Սա միջոց էր խուսափելու վերջնական կործանումից։ Նրանք չունեին և հարգանքի նշույլ անգամ Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած սոցիալ-քաղաքական, տնտեսական և ազգային քաղաքականության սկզբունքների նկատմամբ։ Մեր հեղափոխության սկզբունքները նրանք քանիցս հրապարակավ անհամատեղելի համարեցին մահմեդական և բուն թուրքական իրականու-

թյան հետ։ Ազգայնականների մի մասը հանդես էր գալիս երկիրն ամերիկյան մանդատի տակ դնելու օգտին, ձգտելով այդ միջոցով կանխել ժողովրդական շարժման հետագա խորացումը (64, էջ 190)։ Սրանք չէին խորշում ԱՄՆ-ի օգնությունից, նրա հովանու տակ մտնելուց և այդ միջոցով ձգտում էին շարունակել իրականացնել միևնույն պանթուրքիստական նպատակները։

1919-ի վերջին Ստամբուլում գործում էին «Վիլսոնյան լիգա» և «Ազգային կոնգրես» կազմակերպությունները, որոնք հանդես էին գալիս ամերիկյան մանդատն ընդունելու օգտին։ Սրա անդամներն են կոմպրադորներ, մտավորականներ։ «Ազգային կոնգրեսը» միավորում էր 53 թուրքական կուլտուր-լուսավորական և հասարակական-քաղաքական կազմակերպություններ։ Ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության նախկին պարագլուխները։ Ռեշաթ Հիքմեթ բեյը գլխավոր դեմքն էր, որը որպես արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղարի տեղակալ կնքել էր Մուդրոսի զինադադարի պայմանագիրը։ Սրանք ԱՄՆ-ի օգնության մեջ էին տեսնում Թուրքիայի փրկությունը։ «Թուրքիան համաշխարհային տրիբունալի առջև» գրքում շարադրված էին նրանց գլխավոր տեսակետները։ Հատուկ ուղերձ էր հղվել Վիլսոնին (67)։

Բեռլինում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջերարդը 1919-ի ավարտին արտասանած իր մի ճառում ասում էր, թե «այժմ թուրքերը ձգտում են ձեռք բերելու այն, ինչ նրանք չկարողացան ձեռք բերել պատերազմի ընթացքում» (18, 16. XII. 1919)։ Նա չէր մոռանում, որ Թուրքիայի գլխավոր խնդիրը մնում էր Թուրանի ճանապարհին հայկական խոչընդոտի վերացումը։ Մուստաֆա Քեմալի կենսագիր Արմստրոնգը գրում է. «Նա մի թուրք էր և հպարտ էր, որ թուրք է։ Նա ատում էր մնացյալ աշխարհը» (72, էջ 34)։ «Ինչ վերաբերում է բոլշևիզմին,— հայտարարում էր Մուստաֆա Քեմալը պրեզիդենտ Վիլսոնի բանագնաց Ջեյմս Հարբորդին,— ապա այդ ուսմունքն անընդունելի է մեր երկրի համար, եթե ուշադրության առնենք մեր կրոնը և սովորույթները, ինչպես և մեր սոցիալական կառուցվածքը, որը խոչընդոտում է նրա

թափանցումը մեզ մոտ։ Թուրքիայում չկան ոչ կապիտալիստներ, ոչ էլ միլիոնավոր բանվորներ։ Մենք չենք կանգնած նաև ագրարային պրոբլեմի առջև։ Սոցիալական տեսակետից մեր կրոնական սկզբունքները խանգարում են մեզ ընդունելու բոլշևիզմը։ Թուրք ժողովուրդը պատրաստ է նույնիսկ վիճարկելու այն, եթե դրա ժամանակը գա» (48)։

Նրա կարծիքով «բոլշևիզմն իր մեջ մարմնավորել էր իսլամի ամենաբարձր հիմքերը և սկզբունքները» (34, էջ 101, 107)։ Նա բոլորովին հետաքրքրություն չդրսևորեց ժամանակի առաջավոր քաղաքական ուսմունքների նկատմամբ։ Նա իսլամի պատմությունն էր ուսումնասիրում, համոզված լինելով, որ մի օր գլխավորելու էր մեծ Թուրքիան (72, էջ 143)։ «Կոմունիզմը վերաբերում է սոցիալական պրոբլեմների,— ասում էր նա։— Մեր երկրի սոցիալական պայմանները բացարձակապես բարենպաստ չեն բոլշևիզմի գաղափարները մեզ մոտ կիրառելու համար»։ Երբ Մ. Քեմալը իր բարեկամ Թեֆիկ Ռյուշտյուին հանձնարարեց պաշտոնապես կոմունիստական կուսակցություն ստեղծել, նա արդեն որոշել էր ոչնչացնել իսկական թուրք կոմունիստներին։ Ռյուշտյուն հայտարարություն հայտարարության ետևից էր անում այն մասին, թե իսլամը իր մեջ պարունակում է սոցիալիզմի բոլոր տարրերը, դրանով իսկ ապացուցելով, որ կոմունիզմը կրոնական և էթիկական կատեգորիա է։ Իսլամի և կոմունիզմի միջև դրվեց հավասարության նշան։ Իսկ թուրքական կոմունիստական կուսակցության հիմքը դրել էր Մուստաֆա Սուբխին 1918-ի հուլիսին թուրք նախկին ռազմագերիներից։ 1919-ին մուսուլմանական բյուրոյի միջոցով (Ղրիմ) նա փորձում էր կապեր հաստատել Մուստաֆա Քեմալի հետ, ձգտելով իսկական հայրենասերների մասնակցությունը բերել թուրք ժողովրդի պայքարին։

Մուստաֆա Սուբխին գաղտնաբար սպանվեց 1921-ի հունվարի 28-ի լույս 29-ի գիշերը, Տրապիզոնի մոտ։ Թուրք պատմաբանների հրապարակումները վկայում են, որ այդ սպանությունը կազմակերպել էին պետական իշխանությունները (45, էջ 117)։

Թուրք հեղինակ Ջեթին Ալթանը «Աթաթուրքի սոցիալական հայացքները» գրքում (Ստամբուլ, 1965) ցույց է տվել,

որ Աթաթուրքը հետևողական հակակոմունիստ էր։ Կոմունիզմի տարածումը մանրէների տարածման նման բան համարող էրզրումի երեսփոխանին պատասխանելիս նա վստահեցնում էր, թե «կոմունիզմի դեմ միջոցներ կան» (2, էջ 136)։

Դեռևս 1920-ին, Ազգային մեծ ժողովում արտասանած ճառերից մեկում նա «հատկապես մերժում էր ինտերնացիոնալիզմը» (2, էջ 7)։ 1959-ի սեպտեմբերին Իսմեթ Ինենյուն ամերիկացի պատմաբան Ռիչարդ Ռոբինզոնի հետ ունեցած հանդիպման ժամանակ վկայակոչելով Մուստաֆա Քեմալին, նսեմացնում էր Սովետական Ռուսաստանի օգնության նշանակությունը թուրքական հեղափոխության հաղթանակի գործում (97, էջ 73)։ Պայքարելով իմպերիալիստների և սուլթանական կառավարության դեմ հանուն անկախության և Թուրքիայի վերափոխման, թուրքական ազգային բուրժուազիան միևնույն ժամանակ հանդես էր գալիս բանվորների և գյուղացիների կենսական պահանջների, պետության կառավարմանը նրանց մասնակցության դեմ (63, էջ 167)։ Ազգայնական Թուրքիայի կառավարող շրջանների մեջ կալվածատերերը հզոր խումբ էին կազմում։ Սրանք գյուղացիներին շահագործում էին առաջվա նման։ «Քեմալականները չէին էլ մտածում խոշոր ֆեոդալակալվածատիրական հողատիրության վերացման, հողային ռեֆորմի իրականացման մասին»,— գրում է սովետական թուրքագետ Շամսուտդինովը (64, էջ 255, 256)։ Թեզերի մեծամասնությունը Քեմալի գլխավորած ազգային պատերազմը նկարագրում էր որպես իսլամի պատերազմ՝ ընդդեմ քրիստոնեության, (42, էջ 32)։

Սովետական պատմաբան Ե. Ֆ. Լուդշուվեյտը մի հատուկ հոդված է նվիրել թուրքական պատմագիտության քննադատությանը, ցույց տալով, որ թուրքական հեղափոխությունը Մուստաֆա Քեմալի անձին վերագրելը բացահայտ խաբեություն է։ Ժամանակակից թուրք պատմաբանները ամեն ինչի սկիզբ համարում են նրա Անատոլիա ժամանելու պահը (1919-ի մայիսի 19)։ Լուդշուվեյտը ցույց է տալիս դրանից շատ առաջ Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ Թուրքիայում սկիզբ առած ազգային-

ազատագրական հուժկու շարժման էությունը, հետապնդած նպատակները (54)։ Կոմինտերնի IV կոնգրեսում Թուրքիայի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչ Օրհանն ասում էր. «Երբեք չպետք է մոռանալ, որ Անգորայի կառավարության գլխավոր նպատակն էր վերահաստատել թուրքական բուրժուազիայի նախկին դիրքը։ Երբ այդ նպատակն իրականանա, նա պիտի փնտրի իր հաշտությունը կապիտալիզմի հետ և պիտի դադարեցնի ազատական շարժումը» (24, № 5, 21. 2. 1923)։ Երիտթուրքերից հետո ազգայնական Թուրքիայի ամենաբնորոշ քաղաքական հատկանիշը նորից նացիոնալիզմն էր, ոչ թուրք ազգերի (մասնավորապես հույների, հայերի, քրդերի) նկատմամբ թշնամական քաղաքականությունը։ Թուրքիզմն իր ողջ էությամբ նորից գործողության մեջ էր դրվել այդ օրերին։ Ամերիկացի Ռ. Ռոբինզոնը գտնում է, որ ազգայնականներն իրականացրին Զիյա Ալփի նացիոնալիզմը, չափավորելով պանթուրքիստների տերիտորիալ հավակնությունները (97, էջ 19)։

«Միության և առաջադիմության» փառասեր ղեկավարները՝ «ինչպես Էնվերը, Թալեաթը և Մուստաֆա Քեմալը շատ արագ զգացին, որ լիբերալիզմը տանում է ազգերի զարթոնքի, զարթոնք, որը ճակատագրական էր դառնում թուրանցիների գերաղանցության համար։ Նրանք շատ արագ վերադարձան միահեծանության ռեժիմին ինչպես քաղաքականության, այնպես և գաղափարների աշխարհում» (70)։

Սովետական թուրքագետ Լուցշովեյտը գրում է. «Կապը կալվածատիրական, հողային մագնատների հետ պայմանավորեցին նաև քեմալականների ռեակցիոն կուրսը ազգային քաղաքականության մեջ։ Քեմալականները ոչ միայն չլուծեցին ազգային հարցը, այլև չկարողացան նույնիսկ ինչ-որ չափով թուլացնել նրա սրությունը։ Ավելին, հենց շովինիստական ազգային քաղաքականության մեջ նրանք կանգնեցին կամ բռնի ասիմիլացման, կամ Թուրքիայում փրկված ազգային փոքրամասնությունների գազանային ոչնչացման ուղու վրա» (54)։ Երբ ազգայնականներն իրենց գլխավոր շտաբով հաստատվեցին Անկարայում, անմիջապես «ուսի սկիզբը հայերի դեմ բացված հռչակեցին» (102, էջ 113)։

Արևմտահայության բեկորների հալածանքի, ոչնչացման քաղաքականությունը շարունակվեց և 1921-ին, և 1922-ին ամբողջ Թուրքիայի տարածքի վրա։ Երիտթուրքերի գործելակերպն ամբողջապես փոխանցվել էր ազգայնականներին։ Ազգայնականների ներքին քաղաքականության բազմաթիվ մութ էջեր ցավոք վատ են լուսաբանված սովետական թուրքագիտական գրականության մեջ։ Մասնավորապես տիրապետել է ազգային փոքրամասնությունների նկատմամբ նրանց թշնամական գործողությունները շրջանցելու պրակտիկան։ Իզմիր քաղաքի հրդեհման ու նրա հույն և հայ բնակչության ոչնչացման փաստը լռության էր մատնվում։ Մինչդեռ այդ բարբարոսության գլուխ կանգնած էին հենց իրենք՝ ազգայնական պարագլուխները (79)։

Իզմիրի աղետի վերաբերյալ հարուստ նյութեր կան Փարիզի Նուբարյան մատենադարանում։ Իր «Զմյուռնիո ահավոր աղետին առթիվ» համառոտ տեղեկագրում առաջնորդ Զմյուռնիո Ղևոնդ եպսկ. Դուրյանը (Աթենք, 23. 11. 1922) հանգամանորեն նկարագրել է տեղի ունեցած անցքերը։ Նպատակ չունենալով խորանալ այս խնդրի քննարկման մեջ, բերենք լոկ մի քանի վկայություններ։ «Հայոց թաղին բոլոր անկյունները հետզհետե գրավվեցան նախկին պոլիսներու և քեմալական զինվորներու կողմե, որոնք պատահաբար անցնող-դարձող բոլոր թաղեցիներուն վրա կհարձակվեին և ազգությունները ստուգելե վերջ հրեաները ազատ կարձակեին, իսկ քրիստոնեաները կողոպտելե վերջ ահռելի չարչարանքներով կսպանեին»։ Հունական և հայկական թաղերը «նշավակ եղան թրքական վայրագության», «սկսավ շարքը քեմալական անլուր և աննախընթաց խժդժությանց»։ Ահա թե ինչ է ասված «համայնակուլ ահավոր հրդեհի» մասին. 1922-ի «սեպտեմբերի 13 չորեքշաբթի կեսօրեն առաջ հայոց թաղին մեջ երևցած թուրք մունետիկներ բարձրաձայն կաղաղակեին հայ տուներու մեջ սլքտացող թուրքերուն, թե փութով դուրս ելնեն տուներեն և հեռանան հայոց թաղեն։ Այս ազդարարության նշանակությունը հասկցվեցավ թուրքերու հեռանալեն հետո, երբ կեսօրեն հրդեհի սկզբնավորությունը երևցավ հայ թաղին մեջ»։ «... Հրձիգներ չէին բավականանար շուկայի... հրդեհներով, իրենց կարգին ամեն միջոց ի գործ կդնեին

հրդեհը արծարծելու և ճյուղավորելու և վերջապես հասցնելու այն հեռավոր թաղերը, ուր գտնվող օտար հաստատություններու մեջ պահված կային մեծ թվով հայեր և հույներ։ Կրակը արծարծելու համար հրդեհվեցան հարյուրավոր տուներ, բենզինով օծվեցան հազարավոր շենքեր, այնպես որ մինչև առտու արդեն իսկ մոխրակույտի վերածված էին 5000 է ավելի շենքեր, որոնց մեջ կգտնվեին 21 եկեղեցի, 32 վարժարան, 5 հյուպատոսարան, 7 քլուպ, 5 դրամատուն, 5 հիվանդանոց և այլ կարևոր շենքեր...»

«**Զարհուրելի գիշեր**.— Ահավոր հրդեհի արշավանքին առջև ինսող բոլոր տուներ և օտար հաստատություններ պարպվեցան, ժողովուրդը ստիպված էր դուրս գալու և դիմելու դեպի քարափ։ Քարափը այդ գիշեր կներկայացներ դժոխային վիճակ մը. հոն շվարած հասարակությունը լեղապատառ վեր վար կվազեր հեւսհեւոե, երբ հրդեհը քարափին մոտեցավ, ժողովրդին վիճակը շատ ավելի աղետալի դարձավ. սարսափահար ժողովուրդը առաջ չէր կրնար երթալ հոն, որովհետև ալեկոծ, ալ ծով մը կար. ետ չէր կրնար դառնար, հոն որովհետև ահավոր հրդեհ մը կար, իսկ երկու կողմերեն դաժան խուժանին և զինվորին սվինները կային...»

Մեկ այլ ականատես, դոկտոր Կարապետը Իզմիրի առաջին հայ փախստականների հետ Մարսել հասնելով, պատմել էր (1922-ի սեպտեմբերի 20) քեմալականների հակահայկական վայրագությունների մասին։ «Ընդհանրապես,— գրում է նա,— ջարդարարներ հայեր կփնտրեին, բայց գտած հույներին նույնպես կսպանեին։ Շատ հայեր կարծելով, որ հույներու դեմ բան մը չպիտի ըլլա, անոնց տուները ապաստանած էին։ Բայց երբ ջարդը կընդհանրանա, այլևս հայու հույնի խտիր չի մնար, և այնպես կենթադրվի թե հույներուն անձի կորուստը տասն անգամ ավելի եղած է հայերեն»։

Ազգային պատվիրակության դիվանատան համար պ. Հրանտ Մամուրյանի պատրաստած տեղեկագրի համաձայն սպանված հայերի, առևանգված հայ կանանց ու աղջիկների անհետ կորած մարդկանց թիվը հասնում էր 13 500-ի, նյութական վնասը հասնում էր 11 միլիոն 420 հազար ֆունտ ստեռլինգի։ Բոլոր ականատեսները միաբերան վկայում են, որ հրդեհողները թուրք սպաներն ու զինվորներն էին։ Սրանք

քարաշեն շենքերը նախապես պայթեցնում էին ռռնակներով և հետո բենզին լցնում ու հրդեհում։ Իզմիրի 200 հազար քրիստոնյա բնակչությունն ամբողջապես անօթևան դարձավ։ Նորից դառնանք ականատեսի պատմածին. «Հինգշաբթի, 14 սեպտեմբեր, Մուստաֆա Քեմալ փաշա, որ Իզմիր իջած էր ձիով և իր սպայակույտին հետ, կհառաջանա մինչև Բունթու, Տիոյի բաղնիքին առջև, ուր խռնված էր փախստական հայերու, հույներու և զինվորներու ահագին բազմություն մը։ Փաշան կարճ ատենախոսություն մը կընե, ըսելով թե կըմեղքնա քրիստոնեաները, որոնց տուները կվառին և կապահովցնե զանոնք, ավելցնելով.

— Ալ ազատ եք, հոգ մի ըներ։ Նույն գիշերը,— մինչդեռ Մուստաֆա Քեմալ փաշա կվերադառնար Քորտելլիո, ուր իջած է Սարյաններու տունը,— Կոնստանտին թագավորին երբեմնի բնակավայրը,— խուժանը նոր ջարդ մը կը սարքեր, այս անգամ քարափին վրա, որմէ սոսկումի ու ցավի աղաղակներ կբարձրանա երկար ժամեր»։

1922-ի ամբողջ ընթացքում, երբ քեմալական ուժերի հաղթանակներն ուղեկցվում էին հակաքրիստոնեական արյունոտ գործողություններով, անգլիական «Դեյլի տելեգրաֆը» (15, 16 մայիսի, 2, 3 հունիսի, 11 հուլիսի, 19 և 23 օգոստոսի, 26 հոկտեմբերի 1922-ի), «Թայմսը» (26. 8, 30. 8, 21. 9. 1922) մշտապես հիշում էին 1915-ի կոտորածները, դրանք համեմատում քեմալականների սարքած ցեղասպանությունների հետ։ Ըստ ամերիկացի Ալբերտ Մակենզիի տվյալների, քեմալականներն Արևմտյան Անատոլիայում 1921-ի մայիսից մինչև 1922-ի սեպտեմբեր ոչնչացրել էին ոչ պակաս 225 հազար հույներ՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ (875, էջ 31)։

Քրիստոնյա բնակչության տեղահանությունը Փոքր Ասիայից շարունակվեց նոր թափով։ Հազարավոր մարդիկ թողնում էին իրենց օջախները, ազատվելու համար տեռորի և բռնության ռեժիմից։ Իզմիրի հրդեհը մի չնչին մասն էր այն հսկայական հրդեհի, որի միջոցով թուրքերը մտածում էին արագ և արմատապես լուծել էթնիկական փոքրամասնությունների պրոբլեմը։

Հալիդե Էդիբ թրքուհի գրողը խոստովանել էր նորվեգացի

լրագրողին, թե ազգայնական բռնակալական ռեժիմը ամենուրեք չարիքներ է գործում։ «Մենք վտարեցինք մեր հելլեն հպատակներին,— ասում էր նա,— մենք ամեն ինչ արեցինք նրանց արմատախիլ անելու համար։ Հայերի հետ մենք անում ենք միևնույն բանը։ Նպատակին հասնելու համար մենք դիմում ենք միջնադարյան մեթոդների։ ... Կառավարիչները, պրեֆեկտները, պաշտոնյաները, որոնք օգտվում էին բացարձակ իշխանությունից, դեռևս այսօր էլ կատարում են գարշելի հանցագործություններ»։ Նա Անկարայի ղեկավարների արածը համարում էր «հանցագործ ոճրագործություն»։

Անկարայի կառավարությունը ոչինչ չէր ձեռնարկում կոտորածը կանխելու և «նոր դարաշրջան» հաստատելու համար, որի մասին քեմալականները շատախոսում էին։ Ընդհակառակը, նույնիսկ Անկարայում գործում էին «քրիստոնեական փոքրամասնություններին վերացնելու կազմակերպություններ» (102)։

«Near East Relief»— Խարբերդի ամերիկյան հիվանդանոցի տնօրեն Մարկ Հ. Վարդը կազմել է մի հուշագիր 1921-ի մայիսից մինչև 1922-ի հունվարը հույների տեղահանության մասին, այնուհետև նույն ժամանակամիջոցի անցուդարձի վերաբերյալ գրել է օրագիր։ Այս փաստաթղթերը տվյալներ են պարունակում այդ տարիներին Թուրքիայի ներքին գավառներում վերապրած հայերի հետ կատարված դեպքերի մասին (104)։ Նա գրում է, որ տասնյակ հազարավոր տեղահանված հույների հետ միասին կային նաև Խարբերդ բերված հայեր, որոնք իրենց մշտական բնակության վայրով երկրի տարբեր մասերից էին։ Վարդը նկարագրում է տարափոխիկ հիվանդությունների հետևանքով զանգվածային մահացության պատկերները։ Նա նկարագրում է ճանապարհներին, բաց երկնքի տակ կատարված ծննդաբերությունների փաստեր (104, էջ 5)։ Ահավասիկ Վարդի օրագրից մի քանի նմուշներ.

1921-ի մայիսի 26։ Հիսուն մարդ ժամանեցին քաղաք պահակների հսկողությամբ՝ Կոնիայից, Կեսարիայից և Ամասիայից։ Դրանց մեջ վեցը՝ հայեր։ Մեկը՝ Տիգրան Թրաշյան Պոլսից։ Ավելի ուշ նրանք ուղարկվելու են Բիթլիս։ Երկու

որ բանտում պահելուց հետո նրանց ուղարկեցին Դիարբեքիր։

Մայիսի 29։ Հարյուր քառասուն մարդ բերվեցին Բիլեջիկից. 30 հայ, 110 հույն։ Ճանապարհվելու սկզբին նրանց թիվը եղել էր 300, բայց շատերը մեռել էին ճանապարհին։ Մնացյալից շատերն էլ տիֆից մեռան Խարբերդի հիվանդանոցում։ Եվ այսպես շարունակ, ամբողջ 1921-ի, 1922-ի առաջին ամիսների ընթացքում։

Սամսունի հույն բնակչությունը ոչնչացվեց Օսման աղայի հրոսակների ձեռքով։ Սամսունով անցած ուկրաինական պատվիրակությունը սարսափել էր կատարված վանդալիզմից և բողոք էր հայտնել իշխանություններին։

«Դեյլի տելեգրաֆը» 1922-ի մայիսի 17-ին գրում էր, որ քրիստոնյաների հետապնդումների նոր ալիքը բարձրացել էր 1919-ի մայիսին։ Ականատեսները պնդում էին, որ ազգայնականների ժանդարմերիայի 80 տոկոսը համալրված էր բանդիտներից։ Ազգայնական պարագլուխները, գրում էր թերթը, «հեղինակներն էին այն սիստեմի, որը շատ բանով նման էր Թալեաթի 1915-ի սիստեմին»։ Ամերիկյան ականատեսի վկայությամբ քրիստոնյա կանանց սպանում էին կացիններով։ Թերթը բերում է բազմաթիվ այլ ապացույցներ (83, էջ 50—51)։

1922-ի մայիսի 15-ին «Դեյլի տելեգրաֆի» դիվանագիտական թղթակիցը մի նյութ հրապարակեց, որը կոչեց «Սարսափելի»։ Նրա նախաբանում ասված էր. «Ես համոզված եմ, որ երբ քեմալականների հսկողության տակ գտնվող Փոքր Ասիայի տերիտորիայի վրա կատարվող անցքերի մասին այս նյութը դառնա լայն հասարակության իմացության առարկա, այն կցնցի ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, թեև վերջին ութ տարիներն առանց այն էլ լի էին դաժանությունների շուրջը պատմություններով»։

Թղթակցության մեջ կարդում ենք. «Փոքր Ասիայում կատարվող ներկայիս դեպորտացիան և կոտորածը աննախադեպ են Թուրքիայի պատմության մեջ։ Իրենց նշանակությամբ դրանք գերազանցում են Գլադստոնի ժամանակների իրադարձությունները և նույնիսկ նրանք, որ կատարվել էին 1915-ին։ Դրանք համապարփակ բնույթ ունեն և նպատակ

ունեն իսպառ ոչնչացնել քրիստոնյա ժողովուրդներին։ Դրանք դարձան առավել ինտենսիվ և ուժեղացան վերջին շաբաթներս, երբ ծագեց զինադադարի ու խաղաղության պայմանագրի հետ կապված ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցը։ Աչքի ընկնող մի քեմալական գործիչ վերջերս հայտարարեց, թե խաղաղություն կնքելու պահին այլևս չպետք է մնան ազգային փոքրամասնություններ, որպեսզի հարկ չլինի պաշտպանելու նրանց իրավունքները և 1915-ին կատարված սխալը, այսինքն՝ այն, որ մեկընդմիշտ արմատախիլ չէր արվել Թուրքիայի ամբողջ քրիստոնեությունը, այսօր պետք է ուղղվի»։

Թղթակիցը ցույց էր տալիս, որ ազգայնականների կողմից իրականացված տեղահանությունները ընդգրկում էին մի հսկայական տարածք՝ Սև ծովի ափերից, հյուսիսարևելյան մասերից սկսած մինչև Ադալիա՝ հարավ-արևմուտքում։ Ոչնչացման մեթոդները նույնն էին ու երեսպաշտական։ Օրինակ, Տրապիզոնի արու հույն բնակիչները զորակոչված էին «բանվորական գումարտակների մեջ» և ուղարկված Կարս ու Սարիղամիշ։ Իսկ նրանց կանանց, զավակներին, ծնողներին ոտքով ուղարկել էին միանգամայն այլ վայրեր՝ Ամասիա, Կեսարիա, այնուհետև Խարբերդ ու Դիարբեքիր։ Թղթակիցը գրում էր, որ տեղահանվածների մեծամասնությունը մեռնում էր ցրտից և ուժասպառությունից։ Թղթակիցը բերում էր թվական տվյալներ սպանվածների մասին։ 1922-ի մայիսի 11—15-ին Համայնքների պալատում Չեմբեռլենը խոսում է քրիստոնյաների «պլանավորված ոչնչացման» թուրքական քաղաքականության մասին, որը շարունակվում էր 7 տարի՝ 1915-ից սկսած։

Անգլիական պառլամենտում հրապարակվեցին քրիստոնյա բնակչության դեմ քեմալականների կիրառած հակամարդկային գործողությունների վերաբերյալ բազմաթիվ հեռագրեր, վկայություններ, փաստաթղթեր։ Խարբերդի լուսավորության գործի տնօրենը հայտարարել էր, թե 1915-ին մաքրագործությունը լրիվ չէր կատարվել, որ այժմ նրանք քրիստոնյաներից ազատելու էին ամբողջ երկիրը։

1922-ի մայիսի 16-ին «Դեյլի տելեգրաֆի» թղթակիցը

հրապարակեց Կարմիր խաչի գծով Անատոլիայի խորքերում աշխատած մի ամերիկացու նամակից հատվածներ։ Ահավասիկ մի քանի կտոր նրանից. «...Դա 1915-ի առավել սարսափելի պատկերների կրկնությունն է, այն տարբերությամբ, որ այսօր տառապողը հույն ազգն է, թեև առանձին շրջաններում երկու ազգն էլ (նկատի ունի հայերին և հույներին) բառիս բուն իմաստով գտնվում են լրիվ ոչնչացման սահմանին»։ Այնուհետև. «Հայ և հույն ազգությանը պատկանող տղամարդկանց, կանանց և երեխաների շարունակվող դաժան տեղահանումները... տեղի են ունենում Սև ծովի ափերից մինչև Դիարբեքիր»։ Ասվում էր այն մասին, որ դա «ոչ թուրք բնակչության ոչնչացման» «պլանի շարունակությունն էր»։ Խարբերդի և Մալաթիայի ճանապարհներին թափված էին 1921-ին այստեղից անցած տեղահանվածների դիակները։ Ոչ պակաս 200 հազար մարդ էր անցել Խարբերդի վրայով դեպի Բիթլիս և այլուր։ Անգլիացի թղթակիցը նկարագրում էր վերապրող հայերի անհանգստությունը, որոնք ամեն ժամ, ամեն օր կոտորած էին սպասում (83, էջ 31—40)։

Ըստ Պատրիարքարանի տեղեկատու-գրասենյակի կազմած հուշագրի (1922-ի սկիզբ, Փարիզի Նուբարյան մատենադարան, ֆրանսերեն) զինադադարից հետո քեմալականները Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի տարբեր մասերում կոտորել էին 45 000 հայ (90)։

Ազգայնական իշխանության առաջին տարիներին թուրքիզմի մեծ ծանոթ գաղափարախոս Յուսուֆ Աքչուրան իր հրապարակային դասախոսություններում սուր էր ճոճում Արևմուտքի, անատոլիական հույների և հայերի դեմ, նրանց հռչակում իմպերիալիզմի գործակալներ։ Այս շովինիստը կեղծում էր փաստերը, փորձում էր տնտեսական զարգացման բարդ պրոցեսները բացատրել պարզունակ դատողություններով։ Թուրքերի տնտեսական հետամնացության գլխավոր պատճառները նա որոնում էր օտարերկրյա կապիտալի ու նրա «հույն-հայկական գործակալության» առկայության մեջ (38, էջ 65, 67), առանց լրջորեն վերլուծելու թուրքական սոցիալ-տնտեսական պայմանները, ավանդույթները։ Մուստաֆա Քեմալն այդ խնդիրներում ուներ ավելի

ռեալիստական մոտեցում։ Խոսելով Թուրքերի ավանդական արատների, արդյունագործություն չսիրելու մասին, նա հիշեցնում էր նախկին պրակտիկան. «Օսմանցիները կազմակերպել էին թալանի մի մեթոդ. նեղ դրության մեջ ընկնելիս արշավանքի էին գնում և քաղաքները պաշարած իրենց զինվորներին ասում էին. կողոպուտի բաժինը ձերն է, հարկը գանձելու բաժինը մերը։ Թալանը կատարելուց և պարտված երկիրը հարկատու դարձնելուց հետո նրանք վերադառնում էին։ Օսմանցիների մեջ ստեղծագործելու և առևտուր անելու, այսինքն արդյունաբերելու, վաճառականություն կազմակերպելու ունակություն համարյա չկա» (73, էջ 81)։

Այս բոլորից հետո նա տուրք էր տալիս Թուրքերի ազգային բացառիկությանը, ըստ էության ռասիզմին, ազգային ժողովի բարձր ամբիոնից հայտարարելով (1921 մարտի 1), թե «մեր ազգը օժտված է բացառիկ ընդունակություններով» (34, էջ 153)։

Ազգային հարցում ազգայնականները երիտթուրքերի ուղղակի ժառանգորդներն էին։ Ահա թե ինչ էր հաղորդում ծովակալ Բրիստոլն ԱՄՆ-ի պետական քարտուղար Հյուզին 1922-ի նոյեմբերի 19-ին. «Վերջին տեղեկություններից պարզ է դառնում, որ ազգայնական կառավարությունը ցանկանում է վերացնել Անատոլիայի և Կ. Պոլսի ամբողջ հունական և հայկական բնակչությանը», ցանկանալով այդ խնդիրն իրագործված տեսնել մինչև Լոզանի կոնֆերանսում ազգային փոքրամասնությունների հարցի քննարկումը (92, հ. II, էջ 961)։

Խոսքը վերաբերում էր նախ և առաջ ներքին Թուրքացման մասին, թեև ավելի մեծ պետություն ունենալը երբեք մոռացության չէր տրվում քեմալականների կողմից։ Այն օրերին Կ. Պոլսի «Փեյամ—Սաբահ» թերթը գտնում էր, որ Թուրք մտավորականի համար դժվար էր հրաժարվել «օսմանյան կայսրություն» տերմինից, քանի որ դա կնշանակեր «զոհել օսմանյան կայսրության փառավոր անցյալն ու ներկան» (24, № 1, 1922)։

Հունաստանում լույս տեսած «Էքսոդոս» գրքի տվյալների համաձայն (այն նվիրված է փոքրասիական խնդիրների

ուսումնասիրմանը) Թրակիայում և Փոքր Ասիայում ոչնչացված հելլենների թիվը հասնում էր՝ 1914—1918 թթ. 280 հազարի և 1919—1922 թթ.՝ 640 հազարի, ընդամենը 920 հազար։ Գրքում ասված է, որ ազգայնական շարժման ղեկավարները միայն «ոճիրների բարոյական պատասխանատուն չեն, այլև ոճիրների գործադրիչներ»։ 1919-ին նրանք էին ուղղություն տվել ու հրահանգել ավազակապետ Օսմանի չեթեների խմբին Պոնտոսում և Նուրեդդինի խմբին՝ Իզմիրում մաքրազարդելու երկիրը հույներից։ Այս մասին հանգամանալի մենագրություն է հրապարակել Մարջրիտ Հովսեփյանը (79)։

1979-ի սեպտեմբերին եկեղեցիների համաշխարհային խորհրդի հրապարակած մի տեղեկագիր հաղորդում էր, որ 1922-ին ազգայնականները սպանել էին հազարավոր սիրիացի ուղղափառների (գլխավորապես Թուրքիայի հարավարևելյան շրջանի Մարդին քաղաքում)։ Թոյնբին գրել է, թե հույները տեռորից սարսափած մեկ օրվա ընթացքում Միտիլի կղզին անցան, իրենց շալակին տանելով ով ինչ կարող էր։

Ս. Ա. Ջաֆարովան գրում է հունական բանակի վայրենաբարո գործողությունների մասին, միակողմանիորեն լռության մատնում Թուրքական չարագործությունները հույների, հայերի նկատմամբ (46, էջ 68)։ Իսկ ո՞ւր մնաց Իզմիրի կոտորածը, ո՞ւր մնաց կանխամտածված հրդեհը։

Մ. Քեմալի անվտանգությունը պաշտպանող ջոկատի գլուխ կանգնած էր վերը հիշատակված Օսման աղան։ Սա աչքի էր ընկել քրիստոնյաների նկատմամբ կատարած վայրագություններով։ Միայն 1922-ին նա հինգ հարյուր հույն կոտորեց մի քանի ժամում, երբ Թուրքերը գրավեցին Իզմիրը։ Արմստրոնգը գրում է, թե Օսման աղան վեներական հիվանդությամբ էր տառապում, որն արդեն ազդել էր նրա ուղեղի վրա և նրա համար ոչինչ էր մարդու արյուն թափելը։ Սա իր ձեռքով սպանեց ազգային ժողովում Մ. Քեմալի դեմ ճառեր արտասանած դեպուտատ Ալի Շյուքրիին (72, էջ 219)։

Սովետական թուրքագետ Ե. Լուդշուվեյթը գրում է. «Քեմալական հեղափոխության վերնախավային բնույթը, Թուրքիայում իշխանության պավթումը բուրժուազիայի կողմից», նրա դիկտատուրայի հաստատումը, պայմանավորեցին այն, որ հետագայում Թուրքիան չընթացավ ազատ դեմոկրատական զարգացման ուղիով (54)։

Ազգայնական շարժման վերնախավի ամբողջ շրջապատը նախկին իթթիհադականներից էր կազմված։ Նրանք նախկին էին միայն ձևականորեն։ Էությամբ նրանք նույն պանթուրքիստներն էին, թալանչիներ և ձրիակերներ։

1918-ի հոկտեմբերին, երբ իթթիհադի կառավարությունը հեռացավ իշխանությունից, կուսակցությունը «Թեջեդդուդ» անունն ընդունեց, ժառանգելով նախորդի կազմակերպչական կառուցվածքը, ֆինանսները, կադրերը։ Լուծարքի ենթարկված «Իթթիհադ վը Թերաքքը» կուսակցությունը քողարկվել էր նաև «Իթթիհադ վը Թերաքքը—Խալք Շուրալար Ջեմիյեթի» (Առաջադիմության ժողովրդական սովետների կուսակցություն) անվան տակ (24, № 2, 1922)։

Երիտթուրքերի մնացորդներն այնուհետև համախմբվեցին «Մուդաֆայի հուկուկ մի մուհաֆզայի մուքադեսաթի» (իրավունքների պաշտպանության և սրբությունների պահպանման կազմակերպություն) շուրջը, որին կրճատ «Մուդաֆաի հուկուկ Ջեմիեթի» անվանումն էին տալիս։ Սրա ղեկավարությունը բաղկացած էր բարձրաստիճան զինվորականներից, կրոնավորներից, կալվածատերերից։ Այս կազմակերպությունը հալածում էր ամեն մի սոցիալիստական միտք ու շարժում, տեռորի միջոցով հաշվեհարդար էր տեսնում առաջադեմ մարդկանց հետ։

Մևլան Զադե Ռիֆաթը փաստերով է ցույց տվել, որ Մուստաֆա Քեմալի «գործը միշտ անոր խոսքերը հերքած են», որ նա խոսքով դեմ էր իթթիհադին, բայց իրականում հենվում էր նրանցից շատերի վրա (օրինակ, Ռեուֆ բեյի վրա) (27, էջ 294—295)։

«Մուստաֆա Քեմալը չէր ուզում, որ իրեն հռչակեն «Միության և առաջադիմության» ակումբի գործի շարունակող։

Փաստորեն այս ակումբն իր գործողություններով դարձել էր անընդունելի ինչպես թուրքերին, այնպես և եվրոպացիներին, բայց գործնականում իթթիհադի անդամները համախմբվեցին Քեմալի շուրջը։ Կուսակցությունը միայն փոխեց իր անունը և կոչվեց ազգայնական կամ քեմալական» (70, էջ 254—258)։

Բացի այդ, էնվերի հետ Մուստաֆա Քեմալի անձնական հարաբերությունները լարված էին վաղուց ի վեր։ Պատերազմի թունդ պահին բացահայտվեց ռազմական դիկտատուրայի դեմ ընդդիմադիր-դժգոհների խմբի առկայությունը (Ահմեդ Ռիզա բեյ, էնվերի նախկին համհարզ գեներալ Յակուբ Ջեմիլ, գեներալ Մուստաֆա Քեմալ և ուրիշներ)։ Նրանք էնվերին մեղադրում էին երիտթուրքական հեղափոխության ազգայնական սկզբունքներին դավաճանելու մեջ։ Յակուբ Ջեմիլը գնդակահարվեց։ Մուստաֆա Քեմալին փրկեց գերմանական գեներալ Լիման ֆոն Սանդերսը, որը նրան համարում էր Գերմանիային հավատարիմ զինվորական։ Նրան սկզբում ուղարկեցին Միջագետքի ճակատ, հետո նորից ետ կանչեցին Կ. Պոլիս (91, էջ 37—38)։ Սակայն, մի փոքր անց, մեծ թվով երիտթուրքեր կազմեցին Մուստաֆա Քեմալի կողմնակիցների զգալի մասը (36, էջ 286)։

1919-ի զինվորական տրիբունալի դատավճռով իթթիհադական ղեկավար գործիչների մեծ մասը աքսորվեց Մալթա։ «Մալթայի մեջ այդ աքսորականները կերան, խմեցին, հղփացան և մեկ-մեկ գործիչներ դարձան Անգլիայի ձեռքում՝ անոր քաղաքական և տնտեսական շահերը ապահովելու համար Թուրքիո մեջ»։ «Մալթան արդարության օջախը չհանդիսացավ։ Մալթան ամոթի և նախատինքի համազոր թատերաբեմը եղավ միայն» (23, № 64,1926)։

Մուստաֆա Քեմալը Մալթայի աքսորավայրից իթթիհադականներին վերադարձնելու կազմակերպիչներից մեկը հանդիսացավ։ Նրանցից շատերին պատասխանատու պաշտոնների կարգեց, պատվոնշաններ շնորհեց։ Անգլիական մամուլը նկատում էր, որ իթթիհադը խոր և լայն տարածում ունի և հեշտ չի լինի նրան արմատախիլ անել ամբողջությամբ (99, 7. VIII. 1919)։

1921-ի օգոստոսի 15-ին Փարիզի «Echos de L'Islam»

պարբերականում հրապարակված հարցազրույցի մեջ Մ. Քեմալի համախոհ Բեքիր Սամին պաշտպանության տակ էր վերցրել Մալթա աքսորված ոճրագործներին։

Բեքիր Սամի բեյը Լոնդոնում համաձայնության էր եկել Անգլիայի հետ Մալթայի երիտթուրք 64 աքսորականների ազատ արձակման վերաբերյալ։ Դրա դիմաց Անկարայի կառավարությունը գերությունից ազատելու էր անգլիացի զինվորականներին (32, 20. 5. 1921)։ Թերթը հաղորդում էր, որ «Մալթա պիտի մնային այն թուրքերը, որոնք ծանրապես ամբաստանված են քրիստոնեաներու դեմ ոճիրներու համար»։ Իրապես, ապրիլի 29-ին անգլիական շոգենավով Պոլիս անցան Հյուսեյին Ջավիդը, Սայիդ Հալիմ, Աբբաս Հալիմ փաշաները, իսկ հետո ապրիլի 30-ին՝ Խալիլ Հաճի Ադիլ, Զիա Գեոք Ալփ, Աթըֆ, Ռիզա, Ահմեդ Նեսիմի, Ագաօղլու Ահմեդ, Ռուհմի, Ջանփոլադ բեյերը, Հաջի Ահմեդ փաշան և ուրիշներ։ Այնուհետև թերթը հաղորդում էր, որ Մալթա կղզում ազատ շրջում էին Ջեմալ և Ջևադ փաշաները, Սուլեյման Նազիֆ, Ջելալ Նուրի, Ալի Ջինանի, ծովային նախկին նախարար Ռեուֆ, Քարա Վասըֆ, ոստիկանության քաղաքական ճյուղի նախկին տնօրեն Մուամմեր, Աքա Գյունդուզ, Միդհատ Շյուքրի, ծերակուտական Սեիդ բեյերը և այլն։ Մալթայում էին մնում նախկին կուսակալ Թահսին, Աբդուլ Խալիք, Գետրի, Սուլեյման Նեճմի բեյերը, պարենավորման նախկին նախարար Քեմալ բեյը և շատ ուրիշներ։

Թուրք հեղինակ Օմեր Քյազիմը 1921-ին Փարիզում ֆրանսերենով հրապարակված իր գրքում մի հատուկ գլուխ նվիրել էր քեմալականների ու երիտթուրքերի առնչություններին (91, էջ 35—47)։ Այստեղ նա հանգել էր այն եզրակացության, որ «Անգորայի քեմալականները և Սալոնիկի երիտթուրքերը ինքնությամբ իրար նման են, նույն մտադրությունն ունեն, նույն ձգտումները, նույն նպատակներն են հետապնդում, նույն տակտիկան են գործադրում և նույն միջոցները գործածում»։ Օմեր Քյազիմն այն կարծիքին էր, որ Մուստաֆա Քեմալն իրեն հեռու էր պահում երիտթուրքական քաղաքական ժառանգությունից, քանի որ անհրաժեշտ էր ձերբազատվել կատարված ոճիրներից, «որոնք մի քիչ շատ ծանր էին», պետք էր «քաղաքակիրթ աշխարհին ներ-

կայանալ առանց հանցանքի, անմեղ և շնորհներով բարձված» (91, էջ 35)։ Այս նպատակով քեմալական թերթերը դատափետում էին Էնվերին ու նրա զինակիցներին, նրանց տալով «ծանր էպիտետներ»՝ «Թուրքիայի ավերիչներ», «Թուրք ազգի ծաղկի մարդասպաններ»։ Ըստ թուրք հեղինակի դիտումների, նման մոտեցման նպատակն էր ցույց տալ, թե անատոլիական Թուրքիան ոչ մի առնչություն չունի երիտթուրքերի հետ, որոնք դավաճանել էին 1908-ի հեղափոխության գաղափարներին (91, էջ 36)։ Այս ձևով ներկայացված քեմալական շարժումը կարող է մի ինչ-որ չափով ընդունվել բուրժուական Եվրոպայի կողմից, նկատվելով իբրև չարիքների փոքրագույնը։

Իրականում, կարդում ենք Օմեր Քյազիմի գրքում. «Անգորայի մարդկանց մեծ մասը հին անդամներն են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի և իրենք են, որ համաշխարհային պատերազմի ժամանակ ամենաչար գործունեությունը դրսևորեցին։ Անգորայի ամբողջ հասարակական վարչակազմի կադրերը, մանավանդ զորքինը, ընտրում են երիտթուրքերից։ Կառավարության անդամները մեծ մասամբ երիտթուրքեր են» (91, էջ 38)։ Օմեր Քյազիմը հիշատակում է Մուստաֆա Քեմալի հիմնած կուսակցության նախագահ Սերիֆ բեյին, որը Թալեաթի մերձավոր համախոհն էր և ինչպես ինքն է գրում, «հազարավոր հայերի դահիճը»։ «Նա, հիմա, ինչպես ասում են, Անգորայի կառավարության առանցքն է» (91, էջ 39)։ Այնուհետև հիշատակվում են նեոթուրքիզմի նշանավոր տեսաբան Զիա Նուրը (արտաքին գործերի մինիստրի խորհրդական), ֆինանսների նախկին մինիստր Ջավիդ բեյը, որը դարձել էր Լոնդոնի կոնֆերանսում (1921) Բեքիր Սամի բեյի առաքելության աջ ձեռքը։ Յունուս Նադի բեյը, իթթիհադական հայտնի գործիչը դարձել էր Քեմալի «Ենի Գյուն» թերթի խմբագիրը, նախկին իթթիհադականներ, Թալեաթի կառավարության անդամներ Նեսիմի բեյը, Սամի բեյը մինիստրական պաշտոններ էին վարում Մուստաֆա Քեմալի առաջին կառավարությունների մեջ։ Սրանց շարքում էր նաև Յուսուֆ Քեմալը, որը իթթիհադի գագաթներից էր, իսկ հետո՝ Մուստաֆա Քեմալի արտաքին գործերի մինիստրը (91, էջ 39—40)։ «Ասոշեյտեդ պրես»

գործակալության թղթակցին արած իր մի հայտարարության մեջ Մուստաֆա Քեմալն ասաց. «Թուրքիան թուրքերին, ահա այն լոզունգը, որը ժամանակին եղավ իթթիհադականների խանդավառ անդամների գաղափարաբանությունը և որն այսօր նորից ազգայնականների դևիզն է» (91, էջ 41—42)։ Թուրքիան շարունակում է ներշնչվել միևնույն ազգայնական մարտաշունչ սկզբունքներով։ Թուրքիայի տարածքի վրա բոլորը պետք է իրենց տեղը զիջեին թուրքերին։ Ազգայնական քեմալականները և երիտթուրքերը գաղափարապես միևնույն բաներն էին։ Երևութապես տարբեր ներկայանալով, քեմալականները խաբում էին արտաքին աշխարհին (91, էջ 42)։

Անգլիացի Մ. Վարդը 1922-ին գրում էր, որ նույն երիտթուրքերը քողարկվել էին քեմալականների ցուցանակների տակ։ «Թալեաթի ոգին,— նշում է այդ հեղինակը,— մինչև հիմա ոգեշնչում է իր նախկին համախոհներին և ենթականերին, որոնցից շատերն այժմ գտնվում են իշխանության գլուխ Անկարայում» (104)։

Մուստաֆա Քեմալի առաջին կաբինետը համարյա ամբողջությամբ կազմված էր երեկվա իթթիհադականներից։ Ո՞վքեր էին դրանք. Ռեուֆ բեյ, հայտնի իթթիհադական, որը 1918-ին Իզզեթ փաշայի հետ Տրապիզոնում զավթողական, ագրեսիվ պայմաններ էր պարտադրում Անդրկովկասին։ Նա համարվում էր պանթուրքիզմի տեսաբան, Բեհաէդդին Շաքիրի գործի հավատարիմ շարունակող։ Մուսա Քյազիմը շեյխ ուլ իսլամ էր և իթթիհադականների հետ միասին խրախուսում էր քրիստոնյաների ոչնչացման գործը պատերազմի տարիներին։ Նա դատվեց 1919-ին զինվորական դատարանի կողմից։ Հասան Ֆեհմին, որ դարձել էր Մուստաֆա Քեմալի աջ ձեռքը, մասնակցել էր Կ. Պոլսի մտավորականների աքսորի ու Կաստամոնիի հայության ոչնչացման կազմակերպման գործին։ Նա աքսորվել էր Մալթա (90), բայց վերադառնալուց հետո մեծ դեր էր խաղացել Պոնտոսի հույներին արմատախիլ անելու ծրագրի իրականացման մեջ և արժանացել բարձր գիրքի՝ ներքին գործերի մինիստրի պաշտոնին։

Նեջատի բեյը 1915-ի հուլիսի Անգորայի չարագործությունների գլխավոր հեղինակներից էր, զինվորական դատարանից խույս էր տվել, թաքնվել Անատոլիայում, ապա միացել Մ. Քեմալին։ Վերջինիս զինակից Յունուս Նադին 1908-ից հետո գործում էր դոկտոր Նազըմի ձեռքի տակ, խմբագրում էր իթթիհադականների «Ռումելիա» պաշտոնական պարբերականը, որի էջերում խրախուսում էր սերբերին, հույներին, բուլղարներին ճնշելու, կոտորելու հակաժողովրդական գիծը։ 1911-ին նա Կ. Պոլսի «Թասֆիր էֆքիարի», ապա «Ենի Գյունի» խմբագիրն էր։ Նա դարձավ քեմալական, շարունակելով իր ազգայնական-շովինիստական պրոպագանդան։

Բեքիր Սամին հայերի տեղահանությունների պահին Հալեպի նահանգապետն էր և պատասխանատու ոճրագործությունների համար։ 1920-ի հունիսին նրան դատապարտել էին մահվան Կ. Պոլսի դատարանի կողմից, բայց նա թաքնվել էր Անատոլիայում։ Յուսուֆ Քեմալը տակավին 1909-ին գործել էր հայերի դեմ, փորձելով Ադանայի կոտորածի հանցանքը հեռացնել իթթիհադից և մասնակցություն էր ունեցել Ադանայի խայտառակությունը մերկացրած Պապիկյանի խորհրդավոր սպանության կազմակերպման գործին։ 1915—1916-ին ակտիվորեն մասնակցել էր հակահայկական չարագործություններին, ինչի համար 1920-ի հունիսի 6-ին Կ. Պոլսի զինվորական դատարանը նրան մահապատժի էր դատապարտել։

Երբ Մալթայում արգելափակված 120 երիտթուրքական ոճրագործները փոխանակվեցին թուրքական գերության մեջ գտնված 25 անգլիական զինվորների հետ, անգլիական պառլամենտի համայնքների պալատի 1922-ի մարտի 27-ի նիստում Տ. Պ. Օ՛Կոննորը խոսում էր թուրք ոճրապարտների վրա տարեկան 25 հազար ֆունտ ստեռլինգ ծախսի, թուրքական գերության մեջ եղած անգլիական զինվորականների մահացության բարձր տոկոսի և այլնի մասին, արդարացնում կատարված գործարքը։ Դատապարտելով դեպուտատ Ջ. Վարդին, հռետորը փոխանակվածների շարքում հիշատակեց Սըվասի նահանգապետ Մուամեր բեյին, որը հրահրել էր 30 հազար հայերի կոտորածը, Խոջա Իլիասին Մուշից,

որը պատասխանատու էր Մուշի և Բիթլիսի կոտորածի համար, իսկ ապա մեծ պաշտոն էր ստացել Անկարայի կառավարության մեջ։ Փոխանակվածների մեջ էր Էրզրումի նահանգապետ Թահսին բեյը, որը այդ շրջանում կատարված վայրագությունների գլխավոր պատասխանատուներից մեկն էր։ Սրանց շարքում էին ոճրագործներ Ջավուշ Մուստաֆան (Տրապիզոնից), զինվորական Ալի Իհսան փաշան՝ արևելյան վիլայեթներում կոտորածների կազմակերպման մասնակից, որին Մ. Քեմալը բարձր պաշտոնի կարգեց իր գլխավորած բանակում։ Անգլիացի Օ՛Կոննորը ծաղրում էր նման մարդկանց հետ կապերի մեջ մտած ֆրանսիացի Ֆրանկլին Բույոնին և հայտարարում. «Ես բացարձակապես չեմ վստահում թուրքերի հավաստիացումներին, երբ նրանց ղեկավար մարմիններում նիստեր են անում նման մարդիկ»։ Նա մի շարք փաստեր բերեց Կիլիկիայում քեմալականների կատարած վայրագությունների մասին. գերեզմանների պղծում, ֆրանսիական գրպող հաճախող երեխաների քարկոծում, հայերի կախաղաններ Մերսինում, սպանություններ Ադանայում (83, էջ 19—21)։ Ազգայնական ղեկավարությունը ուզում էր օգտվել երիտթուրք փորձված դեմքերի ծառայությունից։ Սրանք էլ դեմ չէին նորից ասպարեզ իջնելուն, գործի գլուխ կանգնելուն։ Էնվերը, Ջեմալը, Թալեաթը և մյուսները Եվրոպայում թե Միջին Ասիայում, Անդրկովկասում թե այլուր իրենց գործակալների հետ միասին ակտիվ գործունեություն էին ծավալել հանուն Թուրքիայի հաջողության։

Էնվերի մերձավոր համախոհներից երիտթուրք Ֆեթհի բեյը ազգայնականների կողմից ուղարկվեց Բեյրութ, Լոնդոն, Փարիզ բանակցություններ վարելու եվրոպական կառավարությունների հետ (11, 10. 9. 1922)։

Երիտթուրքական կազմակերպության ակտիվ անդամներ, զինվորականներ Մուստաֆա Ֆևզին (Չակմակ), Իսմայիլ Խակին, Ալի Իհսանը, Ալի Ֆուադը (Ջեբեսոյ), Քյազիմ Կարաբեքիրը, Իսմեթը (Ինենյու) և ուրիշներ դարձան Մուստաֆա Քեմալի համախոհներ, բոլորովին էլ չհրաժարվելով իրենց կուսակցական, գաղափարական սկզբունքներից (65, էջ 85)։

Փարիզի «Էկո Նասիոնալ» թերթը ավել էր քեմալական պաշտոնատար անձանց ճշգրիտ նկարագիրը։ Մուստաֆա Արդոլ Խալիկ. Անկարայի ներքին գործերի մինիստրության խորհրդական, նախկինում Բիթլիսի հայության տեղահանության և կոտորածի կազմակերպիչ։ Արժանացել էր Թալեաթ փաշայի խրախուսանքին։ Խոջա Իլիաս, Անկարայի պառլամենտի անդամ, նախկինում Մուշի հայոց կոտորածի կազմակերպիչ։ Խալիդ բեյ. Երզնկայի կոտորածի կազմակերպիչ, իսկ քեմալականների օրոք՝ Սևերեկի կառավարիչ. Դիարբեքիրի կոտորածի կազմակերպիչ Ֆևզի բեյը դարձել էր Անկարայի կառավարության անդամ (98)։

Մուստաֆա Քեմալի կողմն անցավ Սեյֆի բեյը, որը «Միություն և առաջադիմություն» կուսակցության իշխանության օրոք բանակի շտաբի տեղեկատու բյուրոյի դիրեկտորն էր և իր ձեռքով էր պատրաստել ու տեղերը հղել հայոց բնաջնջման մասին գաղտնի շրջաբերականը։ Քեմալի ձեռքով նա ներում է ստանում, ընդհուպ համագործակցելով նրա հետ։ Սեյֆի բեյը հրավիրվում է գլխավորելու դատարանի միջոցով նախկին երիտթուրքական պաշտոնատար անձանց համապատասխան փաստաթղթերի վկայակոչումով արդարացնելու գործը (102, էջ 109)։

«Թասֆիրը էֆքյարի» խմբագրապետ Յունուս Նադին, որը մոլի երիտթուրք էր, Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու կողմնակից, բազմաթիվ հակաթուրանական հոդվածներ էր տպագրել, խիստ հակահայկական դիրք էր բռնել, պատերազմից հետո խույս տվեց պատժվելուց, փախավ Անկարա և Քեմալի հովանավորության ներքո սկսեց հրատարակել «Ենի Գյուն» թերթը միևնույն հարցադրումներով, միևնույն պրոպագանդայով («Ազգ», Բոստոն, № 79, 1921)։

1919-ի դեկտեմբերի 10-ին «Հայրենիք» թերթի Կ. Պոլսի թղթակից Հ. Ամատունին հաղորդում էր. «Այս պահին իթթիհադի ամենաուժեղ գործակալները տարածված են Ադրբեջանում և Կենտրոնական Ասիայում, և հույս ունեն, թե մթության մեջ պետք է մնան աննկատ և զանազան ազգերի ինքնորոշման պատրվակի տակ պիտի ստեղծեն քաղաքական այնպիսի շարժումներ, որ պետք է առաջնորդեն թուրանական ցեղի վերջնական միության»։

Ազգայնական իշխանության օրոք կառավարական «Հաքիմիեթ-ի-Միլիե» թերթը խմբագրում էր միևնույն Ահմեդ Աղաևը։ Սա մեկն էր նրանցից (Մեհմեդ Էմին և Ռասուլ Զադե), որոնք դեռևս 1913-ին Բայազետում հրավիրել էին պանթուրքիստների համագումար, որտեղ մշակվել էր 40 միլիոնանոց թուրանական պետություն ստեղծելու արկածախնդրական ծրագիրը։ Այդ պետության բաղկացուցիչ մասեր պետք է դառնային Թուրքիան, Կովկասը, Ղրիմը, Պովոլժիեն և Թուրքեստանը (42, էջ 32)։

Ահմեդ Ռիզան մեկ Լոնդոնում, մեկ Փարիզում հանդիպում էր անգլիական ու ֆրանսիական պետական գործիչների հետ, համոզում էր նրանց պաշտպանել Մուստաֆա Քեմալին։ Առանձնապես մեծ եղավ նրա դերը Ֆրանսիայի պետական գործիչ Բրիանին Քեմալի օգտին տրամադրելու, գեներալ Գարպի միջոցով Կիլիկիան վերջնականապես թուրքերին զիջելու գործում։ Նույն հեղինակը նշում է, որ երիտթուրքերը շատ ամուր պահպանում էին իրենց դիրքերը (102, էջ 287—290)։

1922-ի հունիսի 6-ին «Դեյլի տելեգրաֆ» թերթի դիվանագիտական թղթակիցը հաղորդում էր, որ «վերջին ամիսներին Անկարայի քաղաքագետների առավել ազդեցիկ խումբը նախկին երիտթուրքական ղեկավարներն են» (83, էջ 79)։

«Միություն և առաջադիմություն» ծափահարությունների ներքո էր Մուստաֆա Քեմալը ծածանում Օսմանի դրոշը։ Չէ որ սուլթանն այլևս ի վիճակի չէր պաշտպանելու կայսրության ամբողջականությունը։ Չէ որ նա կոչ էր անում թուրքերին «ազգային սուրբ պատերազմ մղելու հայրենիքը հույներից ու հայերից փրկելու համար» (102, էջ 103)։ Ֆրանսիացի պատմաբան Պոլ Վեռն համոզված է, որ ազգայնական շարժումը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գործունեության շարունակությունն էր, քանի որ նրանց վարդապետությունները միևնույնն էին։ Նա ասում է, որ պետությունը իսլամից անջատելու (լաիցիզմ) մասին Քեմալի հայտարարությունը բավական էր, որ եվրոպացիները հավատ ընծայեին նրան ու մոռանային քրիստոնյա զոհերին (102, էջ 32)։

1921-ին իթթիհադի պարագլուխներն ինը կետից բաղկացած մի նոր ծրագիր էին մշակել։ Թալեաթ փաշան Բեռ-

լինից թղթակցում էր Մուստաֆա Քեմալի հետ և անցուդարձի մասին կանոնավոր տեղեկություններ էր ուղարկում Անկարա, խորհուրդ տալիս զիջումներ չանել Հայաստանին և արագացնել նրա վերացման գործը (26, էջ 21, 26)։

1918-ին Բեռլինում Կ. Ռադեկը էնվերի միջոցով 9 օր պատսպարվել էր Թալեաթի հարկաբաժնում, խույս տալով Ռոզա Լյուքսեմբուրգի և Կարլ Լիբկնեխտի դեմ տեռոր ձեռնարկած Լյուդենդորֆի հետապնդումներից։ Ըստ թուրք հեղինակ Ջ. Քութայի, Ռադեկը բացասական էր արտահայտվել հայկական հարցի շուրջը և համերաշխել թուրք դահիճ Թալեաթի հետ։ Նա խորհուրդ էր տալիս թուրքերին սեփական ուժերով «կարգադրել» Հայաստանի հետ կապված խնդիրները (26, էջ 26)։ 1919-ի սեպտեմբերին, երբ Դենիկինը մոտենում էր Օռյոլին, Թալեաթ փաշան արտասահմանում սովետական ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ կեղծ հեղափոխական էր ներկայանում, համակրանքով էր խոսում սովետական իշխանության օգտին և Ռուսաստանի հետ Թուրքիայի մերձեցման խնդիր էր հարուցում (11, № 179, 1922)։

1919-ի նոյեմբերին թերթերը գրեցին, թե Թալեաթը Շվեյցարիայում էր, զբաղված երիտթուրքական նոր դավադրություններով (18, 13. 11. 1919)։

Երբեմն Թալեաթը ճանապարհորդում էր իբրև «Կարմիր մահիկի» պատվիրակ։ Շվեյցարիայում, թե Դանիայում նա ձեռքերը ծալած չէր նստում, այլ ամեն ինչ անում էր թուրքական պետականությունն արդարացնելու համար։ 1919-ին Հոլանդիայում II Ինտերնացիոնալի համագումարի պատգամավորների շրջանում նա նույն պրոպագանդան էր մղում։ Նա փորձում էր ապացուցել, թե ոչ թուրքերի պայքարը օտարերկրյա գրգռությունների արդյունք են և փորձում էր թուրքական պետականության համար ապահովել սոցիալ-դեմոկրատների պաշտպանությունը։

Պատահական չէր, որ նախկին իթթիհադականներն Ադրբեջանն էին համարում գործունեության ակտիվ վայր։ Այստեղ էին մուսավաթականները Թուրքիայի հետ միավորվելու իրենց պանթուրքիստական պլաններով։ Այստեղից էր հնարավոր կամուրջ գցել դեպի Թուրքեստան։ Նրանք նավթ-

առատ Բաքվի հարստությունները զավթելու մեջ էին տեսնում իրենց հաջողության հեռանկարը։

1920-ի սեպտեմբերին թուրքական թերթերը գրում էին, թե «Ադրբեջանը Թուրքիայի օրգանիզմի անբաժանելի անդամն է», թե այն «կրնկնի նրա մայրական գիրկը» (68, էջ 131)։ Գ. Մակինցյանը ժամանակին գրել է, թե «մեր հարևան Ադրբեջանը իր ողջ գիտական և գրական պաշարը այսօր ստանում է Թուրքիայից» (21, էջ 202)։

Խալիլ փաշան 1918-ին ղեկավարել էր թուրքական բանակի գործողությունները Կովկասում և լավ ծանոթ էր մարդկանց, պայմաններին, պրոբլեմներին։ Ազգայնական շարժման պարագլուխները սրան առաջինը հանձնարարեցին անցնել Կովկաս («Դեմիր Ալի»— երկաթյա Ալի անվան տակ)։ Նախ, նա պետք է Բաքվում համաձայնություն հաներ մուսավաթի հետ քեմալական շարժմանը ֆինանսական օգնություն, փոխառություն կազմակերպելու գործում։ 1919-ի սեպտեմբերից Բաքվում էր գտնվում ազգայնականների մի այլ բանագնաց՝ դոկտոր Ֆուադ Սաբիթը։ 1919-ի նոյեմբերին Սըվասի քեմալական կոնգրեսին մասնակցում էին նաև մուսավաթական Ադրբեջանի զինվորական ներկայացուցիչները, որոնք հայտարարել էին, թե իրենց բանակը մասն է թուրքական ընդհանուր բանակի (18, 6. 2. 1920)։

Երիտթուրքական նախկին սպաներ Սալիհ Շամիլը, Յուսուֆ Ջեմալ բեյը և ուրիշներ 1920-ի սկզբին հակասովետական խռովություններ էին հրահրում սովետական իշխանության դեմ Հյուսիսային Կովկասում։ Բաքվից Դաղստան էր անցել ախրահռչակ Նուրի փաշան։ Բեքիր Սամին, որ նախկին երիտթուրք էր, Լլոյդ Ջորջին խոստումներ էր տալիս հակասովետական պայքարի մեջ ներքաշել Հյուսիսային Կովկասի լեռնականներին (78, էջ 255)։ 1920-ի Բաքվի կոնֆերանսին մասնակցում էր Քյազիմ Կարաբեքիրի ուղարկած քսան հոգանոց մի պատվիրակություն։

Բազմաթիվ փաստեր վկայում են էնվերի ակտիվությունը ազգայնականների վրա ներազդելու, նրանց հետ համագործակցություն ստեղծելու, սովետա-թուրքական հարաբերություններում ակտիվ դեր ստանձնելու գործում։

էնվերն էր ապահովում սպաների, մասնագետների, զենքի, ռազմամթերքի, դեղորայքի հայթայթումը և առաքումը (Իտալիայի վրայով) դեպի Անկարա (91, էջ 43)։ Թուրք հեղինակ Օմեր Քյազիմը նրան համարում է Մ. Քեմալի ամենալավ գործակիցը։ էնվերը մեկ երևում էր Բեռլինում (Ալի բեյ անվան տակ) անատոլիական բանակի համար զենք հայթայթելու նպատակով, մեկ մեկնում Բաքու մասնակցելու Արևելքի ժողովուրդների համագումարին (1920-ի սեպտեմբեր), մեկ հայտնվում Բաթումում, փորձելով անձնական կոնտակտներ հաստատել թուրքական ազատագրական շարժման ղեկավարի հետ։ Միայն անձնական հակակրանքը, հին մրցակցության փաստը Մ. Քեմալին ստիպում էին հեռու մնալ էնվերի ծառայություններն ընդունելուց, ինչի կարիքն իհարկե նա ուներ։ էնվերը համոզված էր, որ Սաքարիայի մոտ Քեմալը պարտվելու էր, շտապում էր Բաթումի վրայով (1920-ի աշնանը) անցնել Անատոլիա և գործի գլուխ կանգնել (48)։

Ապրելով Բեռլինում, էնվեր փաշան փորձում էր իր շուրջը համախմբել «Միություն և առաջադիմություն» կուսակցության թափթփուկներին։ Նա իր համախոհների հետ միասին հիմք դրեց «Մուսուլմանական հեղափոխական ընկերության», որը պանիսլամիզմի և պանթուրքիզմի պրոպագանդա էր մղում։ Նա իր ճյուղերը տարածեց Ռուսաստանի թաթարների, Անդրկովկասի և Միջին Ասիայի մուսուլմանների շրջանում։ Անդրկովկասում գործը նախապես իրականացնում էր Խալիլ փաշան, որն անցել էր Տրապիզոն, այնտեղից կապեր հաստատել մուսավաթի հետ։ Սա այն Խալիլ փաշան էր, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 6-րդ բանակի հրամանատարն էր և կռվել էր արաբական երկրամասերում։ «Ի՞նչ են մեզ համար արաբները,— ասել էր նա մի առիթով։— Թողնենք այդ անիծյալ անապատը անգլիացիներին և գնանք Թուրքեստան։ Այնտեղ ես կստեղծեմ մի կայսրություն իմ փոքրիկ Չինգիզի համար»։ Նրան թվում էր, որ հասել է այդ ծրագրի իրականացման պահը (14, էջ 116)։

Մուսավաթի ներսում պայքար էր գնում մի կողմից թուրքական, մյուս կողմից՝ անգլիական կողմնորոշումների

միջև։ Պարսկաստանի քաղաքական դեմքերն էլ քնած չէին. սրանք էլ իրենց հերթին Ադրբեջանը Թեհրանի իշխանությանը ենթարկելու գիծն էին իրականացնում։

Մոսկվայից Բաքու անցած Էնվերը Արևելքի ժողովուրդների համագումարում հանդես եկավ կեղծ հեղափոխական ճառով։ Նրա նպատակը սակայն այստեղ խմբված բուրժուական նացիոնալիստներին կազմակերպելն էր։ Գաղտնի բնակարանում Էնվերը հավաքել էր մի շարք կատաղի պանիսլամիստների ու պանթուրքիստների՝ նրանց կոչ անելով ստեղծել սովետական իշխանության դեմ կռվելու հատուկ կազմակերպություն։ Նա այդ հավաքում ներկայացավ որպես Միջին Ասիայում արդեն գործող նման մի կազմակերպության պարագլուխ և հակահեղափոխական հավաքի մասնակիցներին տվեց համապատասխան հրահանգներ (37, էջ 18)։

Պանիսլամիզմի ու պանթուրքիզմի ջատագովությամբ էր համակված Էնվերի ճառը, երբ նա ոգևորված խոսում էր Բաքվի համագումարի ամբիոնից։ Նրան ամբիոնից ցած բերին թուրք կոմունիստ Մուստաֆա Սուբխին ու իր ընկերները։ Գոտհարդ Եշկեն նկատում է, որ Բաքվի համագումարում (1920-ի սեպտեմբերի 4-ին) Էնվեր փաշան անբարյացակամ վերաբերմունքի արժանացավ (48)։

1920-ին Էնվեր փաշան որպես թուրքական ազգային-ազատագրական շարժման ներկայացուցիչ եկավ Մոսկվա։ «Չեկիստներ» գրքում Ռ. Արխիպովը և Ն. Միլշտեյնը գրում են, որ Էնվերը մասնակիցն էր ու ղեկավարը «միջազգային ռեակցիայի» կազմակերպած հակասովետական արկածախնդրության։ «Լինելով կատաղի պանթուրքիստ, Էնվեր փաշան հենվում էր Թուրքեստանի պանթուրքիստական և պանիսլամիստական բուրժուաազգայնական խմբերի վրա»։ Նա ոգեշնչում էր «գազավաթը» կամ «ջիհադը (անհավատների դեմ մահմեդականների սրբազան պատերազմը), կրոնական մոլեռանդություն գրգռում ընդդեմ սովետական իշխանության (37, էջ 17)։

Էնվեր փաշան չէր հրաժարվել իր պանթուրքիստական պլաններից։ Մի կողմից նա փորձում էր իսլամի դրոշի տակ իր «կանաչ բանակը» ստեղծել ու նրա ազդեցությունը տա-

րածել Միջին Ասիայում, նաև Կովկասում ու Ադրբեջանում, մյուս կողմից, նա հույս էր փայփայում իր շուրջը համախմբելով հին իթթիհադականներին ու Մուստաֆա Քեմալի համախոհ ազգայնականներին, վճռական դեր խաղալ Անկարայի գործերում։

Նախ Անկարայի տարբերակի մասին։ 1920-ի ամռան, աշնան ամիսներին Էնվեր փաշան երեսպաշտորեն փորձում էր վստահություն նվաճել Մոսկվայում, ցույց տալ, թե ինքն ավելի վստահելի էր, քան Մուստաֆա Քեմալը։ Այն ժամանակ հեշտ չէր կռահել, որ Միջին Ասիա անցնելով, նա ապստամբություն էր բարձրացնելու Սովետական Ռուսաստանի դեմ, մոլլաների անունից ամենալկտի «վերջնագիր» հրապարակելով սովետական իշխանությանը։ Անկարայի հարցում Էնվերի աղմուկ-աղաղակը հաջողություն չունեցավ։ Սակայն հիշատակության արժանի է Մուստաֆա Քեմալին նրա հղած մի նամակի (1920 հուլիսի 26) բովանդակությունը (45)։ Այն հրապարակեց Մոսկվայում Թուրքիայի նախկին դեսպան Ալի Ֆուադ Ջեբեսոյը իր «Մոսկվա Հաթիրելերի» հուշերի գրքում (Ստամբուլ, 1955)։ Էնվերը (թղթակցում էր Ալի բեյ կեղծանունով) գրում էր Քեմալին, որ արտասահման էր գնացել վարչապետ Իզզեթ փաշայի խորհրդով, եղել էր Ղրիմում, Կովկասում (իհարկե ծպտյալ), հետո Թալեաթի կանչով անցել էր Բեռլին։ Բանտարկվել էր, ենթարկվել օդային արկածների։ Նա պատմում էր, որ համիսլամական, համաթուրքական նպատակներով Խալիլ փաշան ուղարկվել էր Պարսկաստան։ Ջեմալ փաշան գնացել էր Աֆղանստան, որ ինքը նամակ էր հղել Կարաբեքիրին (1920-ի ամառ), նրան թելադրելով շուտափույթ հարձակվել Հայաստանի վրա, քանի դեռ Սովետական Ռուսաստանը զբաղված էր սպիտակ լեհերի և Վրանգելի հետ կատաղի մարտերով։ Նա Կարաբեքիրին հիշեցնում էր, որ «Կովկասը եռում էր ինչպես կաթսա», որ այնտեղ «մենք համացեղակիցներ և մուսուլմաններ ունենք, որոնք անհամբեր (?) սպասում են թուրքերի վերադարձին» (49, էջ 43—44)։

Էնվերը փորձում էր ազգայնականների վստահությունը շահել, ապացուցել, որ երկու տարուց ավելի ինքն ու իր ընկերները գործում էին իսլամի և թուրքական հայրենիքի

համար, որ իր նպատակը մուսուլմանների շարժման ղեկին էր: Նա Մ. Քեմալից իրավունք էր պահանջում երկիր վերադառնալ, հայրենիքին համառեղ ծառայելու համար։ Սակայն այս բանը նրան չհաջողվեց։ Նա փորձեց դավադրության միջոցով, Տրապիզոնի վրայով երկիր մտնել, սակայն այստեղ նույնպես տապալվեց։

1921-ի հոկտեմբերին Էնվերն անցավ Բուխարա։ Այստեղ նրան դիմավորեցին «Կեցցե Թուրանը», «Կեցցե իսլամը», «Կեցցե Էնվեր փաշան» լոզունգներով։ 1921-ի նոյեմբերին նա միացավ բասմաչներին, անցավ նրանց գլուխ և կռիվ հայտարարեց Սովետական Ռուսաստանին։ 1921-ի դեկտեմբերին նա արդեն հարձակում էր գործել կարմիր բանակի զորամասի վրա։ Բուխարայի էմիրը նրան խորհուրդ էր տվել գնալ Թուրքիան ազատագրելու, իսկ պանթուրքիստ Էնվերը պատասխանել էր, թե Միջին Ասիան «իր հայրենիքի մի մասն է», որ այնտեղի մարդկանց արյունը իր երակների մեջ հոսող արյունից է։ Նրա պանիսլամական, պանթուրքական դոկտրինայի էությունն էր ստեղծել մի «կայսրություն», որի մեջ մտնելու էին Պարսկաստանը, Բուխարան, Խիվան, Աֆղանստանը և Թուրքիան (88, էջ 288)։

Բուխարայում Էնվերն իրեն անվանում էր «իսլամի բոլոր զորքերի հրամանատար», «խալիֆի փեսա», «Մահմեդի փոխարքա», հանդես էր գալիս պանիսլամիստական լոզունգներով և պահանջում էր միավորել բոլոր մուսուլմաններին մեկ միջինասիական մուսուլմանական պետության մեջ։ Նա անգլիացիների ցուցումով փորձում էր համախմբել բոլոր հակասովետական ուժերին։ Նրա զորքի թիվը հասնում էր 20 հազարի։ Էնվերի հրահանգավորած Ջանազակովը, Աբդաբաշիտովը և ուրիշներ շուտով Թուրքեստանում ստեղծեցին մի հատուկ՝ «Ազգային միավորման կոմիտե», որը պետք է ակտիվացներ բասմաչությունը։ Իթթիհադականները լայն գործունեություն ծավալեցին սովետական իշխանության դեմ, կապեր հաստատելով անգլիական, ճապոնական գործակալների հետ։

1922-ի մայիսի 19-ին «Բուխարայի, Խիվայի և Թուրքեստանի զինված ուժերի» ընդհանուր հրամանատար Էնվեր փաշան վերջնագիր էր տալիս Մոսկվային՝ ճանաչելու այդ

երկրների անկախությունը, հետ քաշելու կարմիր բանակը և ներփակ վերադարձնում էր 1922-ի ապրիլի 11-ին Համառուսաստանյան Կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից իրեն տրված մանդատը։ Նրա այդ կետի վերջնագիրը տպվել էր «Իզվեստիա» թերթում (16, № 3, 1922)։ Էնվերը սպանվեց 1922-ի օգոստոսի 4-ին Աֆղանստան անցնելու փորձ կատարելիս (37, էջ 22)։

Երբ 1921-ի ապրիլին Թեհլերյանը սպանեց Թալեաթին (7), Անկարայում լույս տեսնող ազգայնական «Ենի Գյուն» և «Հուքիմիեթ-ի Մելիե» երկու թերթերն էլ ողբում էին մեծ մարդասպանի մահը։ «Ենի Գյունը» նրան անվանում էր «հայրենիքի համար զոհված մեծ հայրենասեր», համարում էր «քաղաքական գիգանտ» և կոչ էր անում «ողջույն տալ նրա թարմ շիրիմին և խոնարհվելով համբուրել նրա աչքերը»։ Թերթը նրան համարում էր «հանճարեղ, չէր տարակուսում, որ պատմությունը նրան արդարացնելու էր» որպես Թուրքիայի ամենամեծ մարդու։ Թերթը կոչ էր անում թուրքերին շարունակել Թալեաթի և երիտթուրքերի գործը «միևնույն ոգով, միևնույն ավանդույթով ու եռանդով» (79, էջ 84)։

1921-ի հուլիսին ամերիկյան «Քարրնտ հիսթրի» ամսագիրը տպագրեց «Ինչու Թալեաթի սպանողն արդարացվեց» հոդվածը։ Նրա հեղինակն էր Ջորջ Ռ. Մոնտգոմերին։ Հոդվածագիրը նկարագրելով Բեռլինում կայացած Սողոմոն Թեհլերյանի դատական պրոցեսի մանրամասները, գրում է, որ «հայի դատը վերածվեց սպանված Թալեաթ փաշայի՝ պատերազմի մեծագույն հանցագործի դատի։ Այն վերածվեց դատի ընդդեմ գերմանական զինվորական իշխանությունների, որոնք թույլ էին տվել իրականացնելու կոտորածները, համենայն դեպս չբողոքելով դրանց դեմ»։ Դատավարությունում գերմանական գեներալ Լիման ֆոն Սանդերսը հանդես էր եկել որպես վկա և հաստատել թուրքական իշխանությունների վայրենաբարո գործողությունները։

Թալեաթի սպանության համար Թեհլերյանի դեմ հարձակումներ կատարած թուրք հեղինակներին առաջին հակահարվածը տրվեց սովետական մամուլի էջերում։ «Նովի Վոստոկ» ամսագիրը հատուկ գրախոսական դրեց թուրք հեղինակի ստահոդ պնդումների դեմ։ Թուրք Մանսուր Ռիֆաթը

Թալեաթի սպանությունից և Թեհլերյանի դատավարությունից հետո լույս ընծայեց երկու քաղաքական-հրապարակախոսական ակնարկ «Թալեաթ փաշայի սպանության գաղտնիքը» և «Թալեաթ փաշայի սպանողին պրոցեսը ինչպես այն ընթացավ և ինչպես ավարտվեց» (96)։ Այս երկու ակնարկն էլ գրված են կեղծ ու ստահոդ փաստերի հիման վրա։ Հայկական հարցի էությունը, ծագումն ու զարգացումը Մանսուր Ռիֆաթը բացատրում է անգլիական ու ցարական ինտրիգներով ու պրոպագանդայով։ Նա միսիոներներին է վերապահում հայ հեղափոխականների գործունեությունը «ղեկավարելու» պատիվը։ Ըստ այս հեղինակի, անգլիական եկեղեցականներն էին իրականացրել հայ երիտասարդության հեղափոխական դաստիարակությունը։ Նա չի ժխտում հայ ժողովրդի հետապնդումներն ու կոտորածը Արևմտյան Հայաստանում։ Նա լոկ փորձում է ժխտել երիտթուրքական կառավարությանը վերագրվող պլանային, ծրագրված գենոցիդը։ Անդրադառնալով այս պնդումներին, սովետական հեղինակ Ս. Միրնին տակավին 1923-ին գրում էր, թե հիշատակված վկայությունները հաստատում են այն, ինչ փորձում է ժխտել Ռիֆաթը, այսինքն, որ «հայկական կոտորածը կազմակերպել էր թուրքական կառավարությունը» (55, էջ 499—500)։

Թեհլերյանի դատավարությունը վերածվեց մի մեղադրական ցույցի՝ ընդդեմ երիտթուրքական մարդասպանների։

Համաշխարհային հասարակական կարծիքը շարունակում է դատապարտել Թալեաթին։ Իսկ թուրքական պետականությունը Թալեաթին հիշում ու պատիվներ է տալիս ինչպես անում են ազգային հերոսների նկատմամբ։

* * *

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիան այնքան խեղճացած, պառակտված ու թուլացած նկարագիր ուներ, որ Արևմուտքում ոմանք կարծում էին, թե բավական է Թուրքիային թողնեին միայնակ, այն ինքն իրեն կփլվեր և կբաժանվեր կտորների։ Լլոյդ Ջորջի խորհրդականները լավատեսորեն կարծում էին, որ առանց մեծ ջանք գործադրելու հնարավոր էր տեր դառնալ հսկայական երկրամասերի (72, էջ 96)։

Արևմտյան տերությունների ղեկավարները փարիսեցիաբար առաջին համաշխարհային պատերազմի նպատակներից մեկը հռչակել էին նաև հայերի ազատագրումը թուրքական լծից։ 1918-ի նոյեմբերի 6-ին Համայնքների պալատում հայկական հողերի մասին արած հայտարարության մեջ Բալֆուրն ասաց, որ հայերի ազատագրումը թուրքական կամայականությունից քննարկվում է որպես Անգլիայի մերձավորարևելյան քաղաքականության մի կարևոր մաս և համոզմունք արտահայտեց, որ այդ գործը կպսակվի բարեհաջողությամբ (93, էջ 10)։ Վուդրո Վիլսոնն ասում էր. «Հայերը կստանան այն, ինչ նրանց պարտք է պատմությունը»։

Այն ժամանակ բոլորը միաձայն ասում էին. «Թուրքը՝ որպես կառավարող, անհնարին բան է։ Քրիստոնյա ազգերի նկատմամբ թուրքական կառավարչությունը պետք է վերացվի» (71, էջ 136)։ Նույն ոգով էին արտահայտվել անգլիական պետական գործիչները՝ Լլոյդ Ջորջն ու Քերզոնը, ֆրանսիացիներ Կլեմանսոն և Բրիանը։ Բայց միայն խոսքով, հրապարակավ, իսկ գործով, գաղտնի համաձայնագրերով նրանք հետապնդում էին իրենց պետությունների իմպերիալիստական ծրագրերի իրականացման նպատակներ։

Երբ դաշնակիցների միջև տարակարծությունները հարթելու, 1916-ի «Սայքս Պիկո» համաձայնագրում նախատեսված ազդեցության ոլորտները դաշնակիցների միջև ճշտելու նպատակով պրեզիդենտ Վիլսոնի նշանակած Հենրի Չ. Կինգի (Օհայոյի Օբերլին կոլեջի պրեզիդենտ) և Չարլզ Ռ. Կրեյնի (Հայաստանում և Սիրիայում ամերիկյան «Ռիլիֆի»՝ նպաստամատույց կոմիտեի տնօրեն) հանձնաժողովը մի քանի ամիս Թուրքիայում, Սիրիայում, Հայաստանում շրջագայելուց, ուսումնասիրություններ կատարելուց հետո ներկայացրեց իր զեկուցագիրը, այնտեղ Թուրքիայից հայերի անջատվելու «գլխավոր և առաջնային» պատճառն արձանագրված էր հայկական կոտորածը *(74, էջ 222—223)։*

Հանձնաժողովի ուսումնասիրությունը տևեց 41 օր՝ 1919-ի հունիսի 10-ից մինչև հուլիսի 21-ը։ Հանձնաժողովի

ներկայացրած զեկուցագրի առաջին կետում հիշատակվում էր հայերի փոքրամասնության փաստը, իսկ երկրորդ կետում անհրաժեշտ էր համարվում Միջագետքը, Սիրիան, Պաղեստինը Թուրքիայից անջատելու հետ մեկտեղ անջատել նաև Հայաստանը, որը ենթարկվել էր վատ կառավարման և աննկարագրելի կոտորածների սարսափներին (74, էջ 222—227)։ Ընդ որում, Թուրքիայից հօգուտ Հայաստանի անջատվող տերիտորիան ճշտելիս պետք է հաշվի առնվեին 1894—1896, 1908—1909, 1915—1916 թթ. կոտորածների կորուստները (74, էջ 238)։

Թուրքական տիրապետությունից Հայաստանն ազատագրելու պաշտպանությամբ հանդես էին գալիս Եվրոպայի ու Ամերիկայի դեմոկրատական հասարակական շրջանները (Անատոլ Ֆրանս, Մեյե, Բերտրան Ռասսել, Մարկվարտ, Կարլ Լիբկնեխտ և շատ ուրիշներ)։

1919-ի հուլիսին Լյուցեռնում գումարված II Ինտերնացիոնալի կոնֆերանսի 5-րդ բանաձևն արտահայտում էր սոցիալիստական ու բանվորական կուսակցությունների տեսակետը։ Այնտեղ համերաշխություն էր հայտնվում կոտորածի ենթարկված հայ բնակչությանը։ Բանաձևը խաղաղության կոնֆերանսի մասնակից պետություններից պահանջում էր միջոցներ ձեռք առնել բարբարոսական սիստեմի հետևանքների դեմ, մի բան, որ արդեն թափանցել էր նաև Կովկաս։ Կոնֆերանսը դաշնակից կառավարություններից պահանջում էր գործնական միջոցներ ձեռնարկել Հայաստանում, մինչև որ կկայունանար իրադրությունը, անվտանգություն կերաշխավորվեր այս շրջանի բոլոր բնակիչներին (85, էջ 11)։

1919—1920 թթ. դաշնակցական կառավարության քաղաքական-դիվանագիտական ամբողջ գործունեությունը նպատակադրված էր Անտանտի տերությունների օգնության վրա հենվելուն, նրանց միջոցով «միացյալ, անկախ Հայաստան» ստեղծելուն։ Դրանով իսկ ոտնահարվում էր հայ ժողովրդի համար ավանդական բախտորոշ ռուսական կողմնորոշումը։

Հայկական երկու պատվիրակություններ էին ուղարկված Փարիզ՝ խաղաղության կոնֆերանս (1919 հունվար—1919 հունիս)։ Մեկը գլխավորում էր Պողոս Նուբար փաշան, որը

դեռևս 1912-ից կաթողիկոսի կողմից պաշտոնական հանձնարարությամբ առաքելություն ուներ եվրոպական պետությունների մոտ պաշտպանելու հայոց դատը, մյուսը գլխավորում էր Ավ. Ահարոնյանը որպես հայկական հանրապետության, այսինքն՝ Ռուսահայաստանի լիազոր ներկայացուցիչ։ Սրանցից ոչ մեկը կոնֆերանսին մասնակցելու իրավունք չունեցավ, որովհետև Հայաստանը՝ Անտանտի այդ «փոքրիկ դաշնակիցը» (ինչպես նրան անվանում էին) պատերազմող կողմ չճանաչվեց (92, հ. I, էջ 362—363)։ Նշենք, որ սրանք երբեք միասնաբար հանդես չեկան, համաձայնեցված ծրագիր առաջ չքաշեցին, ավելի շատ կռվեցին ու վիճեցին, ընկան նաև ծիծաղաշարժ իրավիճակների մեջ, չկարողանալով համատեղել արևմտահայության և արևելահայության շահերը։ Նրանց գործողություններն իրարամերժ էին։ Պողոս Նուբարը չէր ճանաչում Երևանի դաշնակցական կառավարությանը իբրև ամբողջ հայության ղեկավար, դաշնակներն էլ չէին ճանաչում նրա լիազորությունները։

Երբ հայոց պատգամավորներին թույլ չտվին մասնակցելու խաղաղության կոնֆերանսին, 1919-ի փետրվարի 28-ին մի բողոքի ժողով հրավիրվեց Փարիզում, որին մասնակցում էին Ա. Չոպանյանը, Հերբերտ Ադամս Գիբբոնսը, Թ. Վեյլիանտխին, դ-ր Ս. Դլուցկին, Մ. Վարանդյանը և ուրիշներ։ Նախագահում էր «Collège de France-ի դասախոս հայագետ Անտուան Մեյեն։ Ա. Չոպանյանը մասնակիցներին հիշեցնում էր թուրքական դաժանությունները, կոտորածը, աքսորը։ Նա ասում էր, որ «հայ ազգը չնայած վերքերով ու արյամբ է պատված, բայց դեռ կանգուն է», որ «մեռյալը օսմանյան կայսրությունն է»։ Նա պահանջում էր՝ «Հայաստանը պետք է ճանաչվի որպես դաշնակիցների կողքին կռված պետություն, ճանաչվի նրա անկախությունը, նրա պատվիրակներին թույլ տրվի մասնակցելու խաղաղության կոնֆերանսի նիստերին»։

Արդեն 1919-ի փետրվարի 28-ին Փարիզում գումարված մի ժողովում Մ. Վարանդյանը բողոքում էր Արևմուտքի դիվանագետների բռնած դիրքից. «Մեծ անարդարություն է, որ Հայաստանին թույլ չի տրվում մասնակցելու խաղաղության կոնֆերանսին։ Ոչ մի երկիր նրա չափ չի տուժել

պատերազմից, չի թափել այնքան արյուն իր ազատագրման ու դաշնակիցների հաղթանակի համար»,— հայտարարում էր նա (94, էջ 24)։ Հայ ազգային գործիչները տեսնում, հասկանում էին Անտանտի տերությունների քաղաքականությունը, նրա ոչ հայանպաստ բովանդակությունը, բայց և շարունակում էին հին ընթացքը։ Մ. Վարանդյանը բողոքում էր, բայց ինքն էլ չգիտեր թե ում. «Բոլորն ընդունում են, որ հայերը սկզբից մասնակցել են պատերազմին, բոլորը ճանաչում են հայկական պետությունը, բայց ոչ մեկը այդ մասին պաշտոնապես չի ուզում հայտարարել. Ճիշտ է, կոնֆերանսում հայերին լսեցին, բայց լսելու են նաև թուրք-թաթարներին, որոնք դավաճանեցին ու պայքարեցին դաշնակիցների դեմ։ Նրանք նույն ընդունելությունն են վայելելու ինչ որ հայերը։ Դա անարդարացի է, դրա դեմ պետք է բողոքել ամբողջ ուժով» (94)։

Թուրքական հարցը Փարիզի կոնֆերանսում քննարկվում էր որպես «ռուսական հարցի» հետ սերտորեն առնչվող խնդիր և լուծվում էր իմպերիալիստական տերությունների հակասվետական ինտերվենցիայի ընթացքին համապատասխան։ Կոնֆերանսում խոր հակամարտություն կար ինչպես հաղթողների և պարտվողների, այնպես էլ հաղթողների միջև (անգլո-ֆրանսիական, անգլո-ամերիկյան ախոյանություն)։ Պայքարը մղվում էր աշխարհը վերաբաժանելու, նոր երկրների, ժողովուրդների ստրկացումը դիվանագիտորեն ձևակերպելու շուրջը, որի հիմքը դրվել էր տակավին 1916-ին կնքված Սայքս-Պիկոյի գաղտնի պայմանագրով։

Տալով Վերսալի հաշտության պայմանագրի գնահատականը, Վ. Ի. Լենինն ասում էր. «Դա չլսված, թալանչիական հաշտություն էր, որը տասնյակ միլիոն մարդկանց, այդ թվում ամենաքաղաքակիրթ մարդկանց դնում է ստրուկների վիճակի մեջ» (1, հ. 31, էջ 402—403)։ Անտանտի երկրների ղեկավարները՝ Լլոյդ Ջորջը և Կլեմանսոն, Վուդրո Վիլսոնը և Սոնինոն ձգտում էին մեկը մյուսից առաջ անցնել օսմանյան կայսրության ժառանգությունը բաժան-բաժան անելիս։ Անգլիան գրավել էր Բաղդադի և Մոսուլի վիլայեթները (այժմյան Իրաքը), Պաղեստինը, այժմյան Հորդանանը, պայքարում էր դրանք իր ձեռքում պահելու, Կ. Պոլսի և

նեղուցների վրա իր հսկողությունը հաստատելու համար։ Ֆրանսիան գրավել էր Լիբանանը և Սիրիայի մի մասը, Կիլիկիան և աշխատում էր այդ զավթումները ձևակերպել կոնֆերանսում։ ԱՄՆ-ը հավակնում էր Կ. Պոլսին, նեղուցներին և Հայաստանին, փորձում էր ստանալ դրանց մանդատը։ Ըստ պետական դեպարտամենտի պատրաստած քարտեզի, Թուրքիան բաժանվում էր երեք մասի՝ 1) բուն Թուրքիա, 2) Կ. Պոլիս և նեղուցներ, 3) Հայաստան։ Եղավ մի պահ, երբ Վիլսոնը հարց էր դնում իրեն հանձնել ամբողջ Թուրքիայի մանդատը. Հունաստանը, Իտալիան հավակնում էին Արևմտյան և Հարավարևմտյան Անատոլիայի առափնյա տերիտորիաներին։

Դեռևս 1919-ի փետրվարի 4-ի Քե դ'Օրսեյի մինիստր Պիշոնի առանձնասենյակում գումարված նիստում քննարկվում էին Հունաստանի, փոքրասիական տերիտորիաների հարցերը։ Նիստին մասնակցում էին Վիլսոնը, Լանսինգը Լլոյդ Ջորջը, Բալֆուրը, Կլեմանսոն, Պիշոնը, Օրլանդոն, Սոնինոն, բարոն Մակինոն, Վենիզելոսը և ուրիշներ։ Երբ խոսք բացվեց Տրապիզոնի շրջանի հույների կողմից պրեզիդենտ Վիլսոնին հղված խնդրագրի շուրջը, որով նրանք Թուրքիայից անջատվելու խնդիր էին հարուցում, Վենիզելոսն առանց երկբայության հայտարարեց, որ Տրապիզոնի վիլայեթը պետք է հայկական վեց վիլայեթների, Ադանայի և ռուսաց Հայաստանի հետ միասին մաս կազմի նոր ստեղծվող հայոց պետության։ Երբ Լլոյդ Ջորջն իր տարակուսանքն արտահայտեց Կիլիկիայի վերաբերյալ, Վենիզելոսը նորից պնդեց, որ Հայաստանը պետք է ներառնի Արարատ լեռան շուրջը գտնվող բոլոր տերիտորիաները (92, հ. III, էջ 873)։

1919-ի մայիսին ձգտելով փաստի առաջ կանգնեցնել Փարիզի կոնֆերանսի մասնակիցներին, ներգործել նրանց վրա, Երևանում՝ Հայաստանի հանրապետության առաջին տարեդարձի օրը Հայաստանը հռչակվեց «Միացյալ և անկախ»։ Այսինքն, հայկական կառավարությունը հրապարակեց իր պահանջախնդրությունը Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի նկատմամբ։

Սակայն Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի կնքումը ձգձգվեց (մինչև 1923-ի Լոզանի կոնֆերանսը)։ Սա

պայմանավորված էր միջիմպերիալիստական հակասություններով և մրցակցությամբ, հակասովետական ինտերվենցիայի առկայությամբ, Թուրքիայում սկիզբ առած ազգային-ազատագրական շարժման փաստով։

Օսմանյան կայսրության ժառանգությունը յուրովի տնօրինելու իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը հանդիպեց լուրջ խոչընդոտների։ Արևելքի նկատմամբ Սովետական Ռուսաստանի հռչակած նոր սկզբունքները լայն արձագանք գտան աշխարհում։ Սովետական Ռուսաստանի դեմ Անտանտի սանձազերծած դաժան կռիվն օրգանապես միահյուսվում էր հակագաղութային պայքարը խեղդելու իմպերիալիստական պլանների հետ։ Հենվելով հեղափոխական Ռուսաստանի հզոր հակաիմպերիալիստական պայքարի վրա, քեմալական շարժումը բռնեց Անտանտի թելադրանքին չենթարկվելու, նրա կողմից պարտադրված պահանջները մերժելու ուղին։

1920-ի հունվարի 28-ին Կ. Պոլսում թուրքական պառլամենտի ընդունած «Թուրքական ազգային ուխտը» բանաձևեց 1919-ի հուլիս-սեպտեմբերին Էրզրումի և Սըվասի քեմալական շարժման համաժողովների ծրագրային հարցադրումները, ազգայնական պայքարի նպատակներն ու ծրագրային դրույթները։ Ակնբախ էր քեմալական շարժման երկակիությունը. անկախության համար, իմպերիալիզմի դեմ պայքարի արդարացի բնույթը և թուրքական կայսրության ամբողջականությունը փրկելու, ճնշված ժողովուրդների իրավունքները դաժանությամբ ոտնահարելու, մահմեդական ռեակցիոն խալիֆաթը, սուլթանի իշխանությունը պահպանելու ձգտումը։ Մուստաֆա Քեմալն այդ օրերին Կ. Պոլիս՝ սուլթանին հղած մի հեռագրում շատ բացորոշ էր արտահայտվում. «Ազգային շարժումը ծայր առավ նվիրական հայրենիքն ու ազգը մասնատելու վտանգից փրկելու և հույների ու հայերի մտադրություններին չզոհաբերելու նպատակով»։

Առանձնապես շեշտում էր հակահայկականությունը, փորձում էր հաստատել Թուրքիայի «անվիճելի» իրավունքն այն տերիտորիաների նկատմամբ, որոնք օսմանյան կայսրության փլուզման պայմաններում պետք է անցնեին սուլթանական բռնապետության դարավոր լուծը թոթափել ցանկա-

ցող ժողովուրդներին։ Այդ օրերին Քեմալն անհնարին էր համարում գեթ մի թիզ հող հանձնել Հայաստանին կամ որևէ այլ պետության։ Ազգայնականներն ինքնուրույն և անկախ պետական գոյություն էին պահանջում թուրք կամ թուրքալեզու ժողովուրդների համար և վճռականորեն հանդես էին գալիս արաբների, հույների, քրդերի, հայերի ինքնորոշման դեմ։ Մուստաֆա Քեմալն ասում էր. «Մենք կապրենք կամ կկործանվենք ազգային ուխտի հետ միասին»։

Արդեն 1919-ի կեսերից Անատոլիայի վրա իր հսկողությունը հաստատած Մուստաֆա Քեմալից որևէ բան ստանալ զինված ուժի միջոցով Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի չէր։ Դիվանագիտական ուղին, որևէ ուղղակի կապի հաստատումը նրանց միջև երբևէ չէր քննարկվում։ Միակ ուղին դաշնակցական գործիչները շարունակում էին որոնել տասնամյակների ընթացքում հայ ժողովրդին ոչինչ չտված Անգլիայի ու Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և Իտալիայի կառավարությունների մոտ, վերսալյան դիվանագիտության ֆորումներում։

1920-ի ապրիլի 18—26-ը Սան-Ռեմոյի (Իտալիա) Դևաշան ապարանքում գումարվեց Անտանտի տերությունների գերագույն խորհրդի նիստ։ ԱՄՆ-ի ներկայացուցիչը կոնֆերանսին մասնակցում էր որպես դիտորդ։

Այստեղ քննարկվեցին Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի կնքման, տերիտորիալ հարցեր, այդ թվում Հայաստանին վերաբերող մանրամասները։

Հայաստանին վերաբերող հարցերի քննարկման նիստերին հրավիրվում էին Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը և ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը։

Դա 1920-ի ապրիլին էր, երբ հաղթական կարմիր բանակը ազատագրելով Հյուսիսային Կովկասը, մոտենում էր Անդրկովկասի սահմաններին։ Իմպերիալիստական շրջանները ձգտում էին կանխել սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում։ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի «անկախությունը» շեշտելու Անտանտի դիրքորոշումը այս փաստով էր պատճառաբանվում։ Իսկ այդ դիրքորոշումը հանգեց այն բանին, որ Հայաստանին խոստացան և պայ-

մանագրի նախագծի մեջ մտցրին արևմտահայկական վիլայեթները, թեև սահմանների վերջնական ճշգրտումը հանձնարարվեց պրեզիդենտ Վիլսոնին։ Վերջինս միայն 1920-ի դեկտեմբերին հրապարակեց իր եզրակացությունը, ըստ որի ամբողջ Հայաստանի տերիտորիան կազմելու էր մոտ 130 հազար կմ²։ Այս տերիտորիայի գերակշիռ մասը գտնվում էր թուրքական բանակի ձեռքում և այն վերստանալու համար ուժ էր հարկավոր։ Թեև 1918-ի հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի 5-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվել էր ցրել բանակը և միայն աննշան ուժեր ունենալ ներքին կարգ ու կանոնի պահպանման համար, սակայն նա ոչ միայն անտեսում էր իր պարտավորությունը, այլև բանակը վերակազմելով ձգտում էր նոր տերիտորիաների զավթման Անդրկովկասում։

Սան-Ռեմոյում գլխավոր կռիվը նավթի համար էր։ ԱՄՆ-ի կառավարողները ջգրոհ էին Մոսուլի նավթից զրկվելու համար։ Անգլիան և Ֆրանսիան տակավին 1919-ի ապրիլին «Բերանժե-Լոնգ» համաձայնագրով միմյանց միջև բաժանել էին այդ նավթը, իսկ այժմ Սան-Ռեմոյում ձևակերպեցին այն «միջազգային իրավունքով»։

Շուտով ֆրանսիական զորքերի թիվը Մերձավոր արևելքում հասավ 80 հազարի։ Ֆրանսիան իր հարվածներն ուղղեց արաբների դեմ։ Այստեղ ֆրանսիական կառավարողները չէին տրտնջում ուժերի պակասությունից, ինչը նրանք անում էին ամեն անգամ, երբ քննարկվում էր թուրքական ոտնձգությունների դեմ Հայաստանի հանրապետությանը զինված ուժով օգնելու հարցը։ Ֆրանսիական բանակը Լիբանանում ցրում էր արաբական ազգային ժողովները, Սիրիայում իր հսկողությունը տարածում Դամասկոսի և Հալեպի վրա՝ կախաղան բարձրացնելով արաբ հայրենասերներին։ Նույն բանն անգլիացիներն անում էին Պաղեստինում և Իրաքում։

Այս իսկ տեսակետից արևմտյան դիվանագիտության գործողությունները Հայաստանի նկատմամբ մասնավոր բան չէին. այն պետք է տեսնել և մեկնաբանել Սովետական Ռուսաստանի դեմ ընդհանուր իմպերիալիստական քաղաքականության և Մերձավոր արևելքում նվաճողական պլանների լույսի տակ։ Հայաստանի հարցը երբեք լոկալ խնդիր չէր

արևմտյան դիվանագիտության համար և վերջինս չէր ղեկավարվում հայասիրական, ֆիլանտրոպիական մղումներով: Տվյալ դեպքում Հայաստանը նրանց հետաքրքրում էր. ա) հակասովետական պլանների իրականացման, բ) մերձարևելյան քարտեզը իմպերիալիստական տերությունների ռազմաքաղաքական, տնտեսական շահերին համապատասխան վերաձևելու առումով: Ընդ որում, այդ խնդիրներն իրականացնելու համար մանր դրամի դեր պետք է կատարեին Հունաստանն Արևմուտքում, իսկ Հայաստանը՝ Արևելքում։ Այս միջոցով պետք է ճնշում գործադրվեր Թուրքիայի վրա՝ համաձայնվելու Անտանտի «խաղաղության» պայմաններին։

Մուստաֆա Քեմալի համախոհ դիվանագետները, քաղաքագետները ճարպկորեն խաղում էին անգլո-ֆրանսիական հակասությունների վրա, ձաղկում Անգլիայի քաղաքականությունը, նրա պարագլուխների (Լ. Ջորջ, Քերզոն) հակաթուրքական գործողությունները, հայհոյում Վիլսոնին, հույներին մեղադրում բարբարոսության մեջ, արդարացնում երիտթուրքերին, նաև Աբդուլ Համիդ II-ին, փորձում ապացուցել, որ պանիսլամիզմը առաջացել էր Անգլիայի «սխալ» քաղաքականության մեղքով (86, էջ 3—5)։ Այս գործիչները ճկուն ձևով օգտագործեցին Մերձավոր արևելքում Անգլիայի հաջողություններից ջգրոհ ֆրանսիացի տնօրեններին, կայունացնելու համար ազգայնական ռեժիմը։

Լլոյդ Ջորջի և Քերզոնի, Կլեմանսոյի և Միլյերանի, ամերիկյան պետական գործիչների խոսքի ու գործի տարբերությունն ակներև է դառնում, երբ ծանոթանում ենք Մերձավոր արևելքի տարբեր մասերում Անտանտի տերությունների գաղութային ռեժիմը հաստատելու մանրամասներին, զորքերի տեղաշարժերին, դիվանագիտական փաստաթղթերին։

Գերագույն խորհրդում 1920-ի ապրիլին նախագահ Կլեմանսոն ամփոփելով նիստը, եզրակացնում էր. «Ֆրանսիան ոչինչ չի կարող անել, ներկայումս Ամերիկան ևս ոչինչ չի կարող անել։ Մնում է տեսնել որպես արդյունք այս ամենի, արդյոք հայերը կմնա՞ն»։

Լլոյդ Ջորջն ապրիլի 20-ի նիստում ուղղակի հայտարարում էր, եթե հայերը «ի վիճակի չեն պաշտպանել իրենց սեփական սահմանները, ապա ինքը կարծում է, որ աշ-

խարհում նման մի ժողովրդից ոչ մի օգուտ չկա և դաշնակից կառավարություններից ոչ մեկը պատրաստ չի լինի օգնելու նրանց թեկուզ մեկ գումարտակով»: Ահա սա էր իմպերիալիստական քաղաքագետների բարոյականությունը: Առանց մի գումարտակ տալու, արևմտյան դիվանագիտությունը Սևրի սեղանին էր դնելու Սան-Ռեմոյի նախագիծը, նախապես իմանալով, որ այն գործնականում դատապարտված է ձախողման:

Սան-Ռեմոյում հիշատակվում էր այն կողմը, որ «Ներկայումս Էրզրումը թուրք ազգայնականների կենտրոնն է: Որևէ մեկը պետք է թուրքերին դուրս քշի այնտեղից: Նա գտնում էր, որ հայերը, որոնք չկարողացան պաշտպանվել կոտորվելուց, չեն կարողանա գրավել մի ամրոց, որը ռուսական բանակներին է դիմադրել: «Եթե կոնֆերանսը հռչակեր պայմանագրում, որ Էրզրումը պատկանում է Հայաստանին, գործարքը կմնար գործարք թղթի վրա, առանց կենսագործելու հույսի...»: Պատասխանելով Հայաստանի հանրապետության պատվիրակների պնդմանը, թե առանց Էրզրումի հայերը չեն կարող գոյություն ունենալ, Լլոյդ Ջորջն ասում էր. «Եթե Հայաստանը չի կարող գոյություն ունենալ առանց Էրզրումի, հայերը չեն կարող գոյություն ունենալ առհասարակ: Տերությունները չեն կարող վերցնել այն և հանձնել նրանց, իսկ նրանք էլ իրենք չեն կարող վերցնել»: Սա այն Լլոյդ Ջորջն էր, որ 1917-ի գարնանը Գլազգոյում արտասանած իր ճառում պահանջում էր «ազատագրել» Միջագետքը և Հայաստանը թուրքական լծից և նրանց բախտը հանձնել «ավելի արդարացի կառավարման» (44, էջ 63): 1920-ի մայիսին ԱՄՆ-ի կոնգրեսի սենատին հղած իր ուղերձում պրեզիդենտ Վիլսոնը շեշտում էր հայ ժողովրդի նկատմամբ կատարված չարագործությունը, նրա կրած տանջանքներն ու զրկանքները: Նա ասում էր, որ հաստատված է զանգվածային կոտորածների մասին ճշմարտությունը (76): Բայց գործնականում իմպերիալիստները զբաղված էին իրենց գործերով: 1920-ի հունիսին ԱՄՆ-ի կոնգրեսն արդեն ձևականորեն մերժեց Հայաստանի և Կ. Պոլսի մանդատի ստանձնումը ԱՄՆ-ի կողմից: Երբ ամերիկյան եկեղեցու ղեկավարները բրիտանական կառավարական մարմին-

ների հետ միասին հանդես եկան հույներին և հայերին զարթող Թուրքիայի ազգայնական իշխանություններին կարգի հրավիրելու պահանջով, ԱՄՆ-ը մերժեց փոքրամասնություններին պաշտպանության տակ վերցնելու խնդրանքը (79, էջ 82—83):

1920-ի մայիսի 11-ին Փարիզում Կ. Պոլսի սուլթանական կառավարության պատվիրակ Թեֆիկ փաշային հանձնվեց խաղաղության պայմանագրի դաշնակիցների նախագիծը և պատասխանի համար տրվեց մեկ ամիս ժամանակ: 1920-ի հուլիսի 22-ին սուլթանի նախագահությամբ հավաքված «Մեծ դիվանը» որոշեց ստորագրել խաղաղության պայմանագիրը: Վերջապես 1920-ի օգոստոսի 10-ին Սևրում կնքվեց խաղաղության պայմանագիր, մեկ կողմից, Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և մի շարք այլ պետությունների և, մյուս կողմից, Թուրքիայի միջև: Պայմանագրի տակ դրված էր նաև «Հայկական հանրապետության պատվիրակության» նախագահ Ավ. Ահարոնյանի ստորագրությունը: Պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող գլխավոր հոդվածներում ասված էր.

«Հոդված 38. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը ինչպես այդ բանն արդեն արել են դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն»:

«Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ» (15, էջ 672—680):

Սևրի պայմանագիրն ազդարարեց, որ Ֆրանսիան Կիլիկիան «զիջում է» Թուրքիային: Կիլիկիայի հայությունը թողնվում էր բախտի քմահաճույքին, թուրքական մարտաշունչ նացիոնալիզմին դեմ հանդիման:

Սակայն Սևրի պայմանագրի տակ ստորագրեցին սուլթա-

նի ներկայացուցիչները, որոնք փաստորեն չէին ներկայացնում Թուրքիան։ Կ. Պոլսում սուլթանը 1920-ի մարտի 16-ից դաշնակից օկուպացիոն բանակի գերին էր, իսկ Անատոլիայում (Անկարա կենտրոնով) ռեալ իշխանությունը Անտանտին հակադրված Մուստաֆա Քեմալի ձեռքում էր։ Այնուամենայնիվ, Կ. Պոլսի կառավարությունը նույնպես չէր շտապում այն ռատիֆիկացնել։ Պայմանագիրն այդպես էլ չվավերացվեց։ ԱՄՆ-ի ներկայացուցիչները հրաժարվեցին ստորագրել Սևրի պայմանագիրը։ Ֆրանսիական կառավարությունն առաջինը բոյկոտեց Սևրի պայմանագրի կատարումը, դժգոհ լինելով անգլիական դաշնակցի ավելի մեծ ավարառությունից։ Ֆրանսիական դիվանագետները գաղտնի կապերի մեջ մտան Մ. Քեմալի հետ, բռնեցին զիջումների ուղին, միայն թե «աշխարհում միակ ուժեղ բանակը» (թուրքականը) հանդես գար բոլշևիկների դեմ։

Անգլիական բանագնացները շփման մեջ մտան Անկարայի հետ, հանդիպումներ ունեցան Մ. Քեմալի հետ դեռևս 1920-ի ապրիլին, իսկ ֆրանսիացիները՝ մայիսին։ Թուրքիան իրենց կողմը քաշելը, Անտանտի պլաններին ծառայեցնելը, սովետական իշխանությանը հարվածելը, Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից հեռու պահելը նրանց գլխավոր նպատակն էր։ Անտանտի տերությունները Վրաստանի և Ադրբեջանի ինքնուրույն գոյությունը ճանաչեցին դե-ֆակտո 1920 հունվարի 12-ին, Հայաստանի հանրապետությունը՝ հունվարի 19-ին։ Անտանտի երկրորդ արշավանքի խորտակումից հետո տակտիկան փոխվել էր։ 1920-ի հունվարի սկզբին Չերչիլը Լոնդոնում Ավ. Ահարոնյանին զինամթերք էր խոստանում (65)։

1920-ի նոյեմբեր-դեկտեմբերին Լոնդոնում կայացած կոնֆերանսում, 1921-ի հունվարին Փարիզում գումարված Անտանտի գերագույն խորհրդի նիստում Ֆրանսիան հանդես էր գալիս Սևրի պայմանագիրը փոփոխելու պահանջով։ Մինչև 1923-ի Լոզանի կոնֆերանսը Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան նահանջեցին Սևրի դրույթների պաշտպանության դիրքերից։ 1921-ի մարտին Լոնդոնի կոնֆերանսի արձանագրություններում «Հայկական անկախ պետություն» արտահայտությունը փոխարինվեց Թուրքիայի տերիտորիայի վրա

«Հայոց ազգային օջախ» ստեղծելու անորոշ հարցադրումով, որը նույնպես ջնջվեց Լոզանի կոնֆերանսում Անտանտի պետությունների նույն դիվանագետների ձեռքով։ Արդեն 1920-ի հոկտեմբերին ֆրանսիական մամուլը աղմուկ էր բարձրացրել Սևրի պայմանագրի վերանայման անհրաժեշտության մասին։ Հատկապես դա ուժեղացավ կարմիր բանակի կողմից լեհ ինտերվենտներին և Վրանգելին ջախջախելուց հետո։

Միայն տգետներն են անիրազեկ, որ Հունաստանի դեմ պատերազմի թունդ պահին (1920-ի աշնանը) ֆրանսիական և իտալական նավերը զենք ու զինամթերք էին հասցնում թուրքական ազգայնական բանակին։ Տխրահռչակ հետախույզ Ալեն Դալլեսը, որը Մերձավոր արևելքում ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի ներկայացուցիչն էր, ծովակալ Բրիստոլի հետ ձեռք ձեռքի տված գործում էին ընդդեմ հայերի ու հույների շահերի։ Սրանք արգելում էին, որ հայերի ու հույների դեմ կատարված անօրինականություններն ու վայրենությունները հանրությանը հանձնվեին մամուլի միջոցով (79, էջ 79—80)։

«Համաձայնական պետությունները շատ ավելի պատասխանատու և մեղսակից են քեմալականներու սարքած ջարդերուն, քանի որ իրենք Թուրքիա մտան հաղթական և եթե ուզեին ոչ միայն կրնային արգելել ջարդերը, այլև միանգամ ընդմիշտ խորտակել թուրքերու ջարդարար ձեռքը...» (30, էջ 194)։

Անմիջապես ստեղծվեցին ֆրանս-թուրքական հարաբերությունների բարելավմանը նպաստող կոմիտեներ, ընկերություններ։ Աբդոն Բուասոն անունով ֆրանսիացին, որը ֆրանս-թուրքական կոմիտեի գլխավոր քարտուղարն ու հիմնադիրն էր, ամպագոռգոռ ճառեր էր ասում Մուստաֆա Քեմալի, նրա հաղթանակների, հունական գործերում անգլիական մեղքերի, Թուրքիայի վեհության ու այլ բաների մասին (86, էջ 3)։ Ֆրանսիական կապիտալիստների մի որոշակի խումբ ձեռնամուխ էր եղել տնտեսական կապերը Թուրքիայի հետ վերականգնելու և զարգացնելու գործին։

Ի՞նչ տարբերություն ամերիկյան ծովակալ Բրիստոլի և շովինիստ երիտթուրքերի միջև։ Հայ բուրժուական շրջանները

հույսեր էին կապել ամերիկյան այս օկուպանտի հետ, չիմանալով, որ սա գրում էր, թե հայերն այնպիսի ռասա են, որ արժանի չեն հարգանքի, թե նրանք նման են հրեաներին, ունեն շատ չնչին ազգային ոգի և աղքատիկ բարոյական կերպար և այլն (79, էջ 60—61)։

Հայաստանն առաջինն էր, որ տուժեց, գրել է դիվանագետ Անդրե Մանդելշտամը։ Նա դարձավ առաջին զոհը, որ դաշնակիցներն առաջարկեցին Անկարային։ Նրանք հաշվի չառան այն ծառայությունը, որ կարող էր անել ուժեղ Հայաստանը քաղաքակիրթ աշխարհին պանթուրքիզմի ագրեսիվության դեմ պայքարում։ Այն լուռ խոստումները, որ դաշնակիցները տվել էին հայերին պատերազմի ժամանակ այլևս այն դերը չունեին դաշնակիցների հաշվեկշռում, ինչ որ Սևրի պայմանագրի կնքման պահին։

Մասնակցելով Լոնդոնի կոնֆերանսին, պարտված Թուրքիայի պատվիրակներն ունեին հստակ պատկերացում հաղթողների այդ նոր դիրքորոշման մասին և դրան համապատասխան մշակեցին իրենց վարվելակերպը։ Մանդելշտամը գտնում է, որ թուրքերը ճանաչել տվին ազգային ուխտը, իսկ դաշնակիցները հրաժարվեցին Հայաստանի անկախության մտքից (89, էջ 179)։

Քաղաքականության մեջ զգացումներն ամենախաբեբա ներշնչողներն են։ Նրանք չեն կարող ազդեցություն ունենալ իրականության վրա, որը լծորդված է հաշիվների հետ։ Մի անգլիացի զինվորական Անդրանիկին ասել էր, թե «եվրոպական պետությունները եթե չամաչեին մարդկությունից, մինչև հիմա հազար անգամ լքած կլինեին Հայաստանն էլ, Հայոց հարցն էլ» («Ազգ», Բոստոն, 1921, № 22)։ «Նավթն ավելի ծանր կշռեց, քան հայոց արյունը»,— ավելի ուշ խոստովանել է Քերզոնը։

□

1918—1922 թթ. երիտթուրքերի թե քեմալականների մահաբեր հարվածներից հայ ժողովուրդը կորցրեց 500 հազար մարդ։ Թուրքիզմի գլխավոր նպատակներից մեկը հայ ժողովրդին հայրենիք ունենալու իրավունքից զրկելն էր։

Թե ինչ էր իրենից ներկայացնում 1919—1920 թթ. դաշ-

նակցական Հայաստանը, դա հայտնի բան է։ Դա մի դժոխք էր բառիս կատարյալ իմաստով. սով, անարխիա, սպանություններ, անտուն-անտեր գաղթականություն, տնտեսական կյանքի չգոյություն, ավանդական կապերի (հատկապես Ռուսաստանի հետ) բացակայություն, քաղաքական տեռոր, ազգամիջյան բախումներ, պատերազմական բախումներ մենշևիկյան Վրաստանի և մուսավաթական Ադրբեջանի հետ վիճելի տերիտորիաների շուրջը և այլն, և այլն։ Բավարարվենք ականատեսի նկարագրածը վերհիշելով։ «Երկրագնդի վրա թերևս ոչ մի տեղ ժողովուրդն այնպիսի ողբալի, այնպիսի օրհասական և սոսկալի օրեր չի ապրում, ինչպիսին ապրում է ժողովուրդը Հայաստանի տերիտորիայի վրա։ Կյանքի բոլոր ասպարեզներն էլ արտաշնչում են դառն ու լեղոտ օդ և թունավորում ամբողջ երկիրը, սպանելով նրա կենսունակ ուժերը, խեղդելով նրա ձգտումներն ու կամքը։ Մի հսկայական մութ տխրության և մռայլության, տանջանքի և մրմունջի կնիք է գամել այդ դժբախտ երկրի արյունաներկ ճակատին։ Շնչավոր էակները, թե անշունչ իրերը, մերկ լեռներն ու անտառազուրկ սարերը, թե գանգերով լեցուն ձորերն ու արյունով ողողված դաշտերը, ամայի դարձած գյուղերն ու ավերված քաղաքները, դաշտերում ու բարձրավանդակներում ապրող չունևոր գյուղացիները, թե քաղաքների խուցերում ու ավերակներում գոյությունը քարշ տվող քաղքենիները, տեղական բնիկ՝ խեղճացած ու թշվառության մատնված ազգաբնակչությունը, թե թալանված ու սովալլուկ, լքված ու վայրենացած գաղթականությունը— բոլորն էլ վշտալից հայացքը արճճապատ երկնակամարին հառած՝ օգնություն են հայցում, ելք են որոնում։ Հայաստանում գոյությունը դարձել է անեծք, կյանքը՝ դժոխք» (4, էջ 3)։

Հեռու էր Ռուսաստանը, բռնված քաղաքացիական պատերազմով, շրջափակված իմպերիալիստական Անտանտի ինտերվենցիայի կրակի օղակով:

1919-ի գարնանը սկսվեց Անտանտի առաջին արշավանքը (Կոլչակ, Դենիկին, Լեհաստան, Յուդենիչ)։ Այս շրջանում Ռուսաստանը կրիտիկական պահ էր ապրում (կտրված էր հացի շրջաններից—Ուկրաինա, Սիբիր, Հյուսիսային Կովկաս. և վառելիքից—Դոնեցկի ավազան, Գրոզնի, Բաքու),

հարկադրված էր վեց ճակատի վրա կռվելու։ 1919-ի աշնանը սկսվեց Անտանտի երկրորդ արշավանքը (Դենիկին, պանական Լեհաստան, Յուդենիչ)։ Ծանրության կենտրոնը գտնվում էր հարավում։ Դենիկինը Հյուսիսային Կովկասից հասավ Տուլա։ Անդրկովկասում տնօրինում էին Անտանտի իմպերիալիստները։ Հակահեղափոխությունը Հայաստանից հեռացրեց սովետական իշխանության ազատարար, փրկարար ձեռքը և հայ ժողովուրդը նորից գահավիժում էր անդունդը։ Թուրքական մահաբեր վտանգը նորից ռեալություն դարձավ։ Քեմալականներն ագրեսիվ նպատակներ էին հետապնդում ամբողջ Անդրկովկասում (50, էջ 751—752)։

Պանթուրքիզմն ուզում էր խեղդել Հայաստանը։ Նրա մունետիկներն ամենուրեք գործում էին հանուն թուրքականության։ Սեբաստիայում գործում էին Մ. Քեմալը, Ռեուֆը, Աֆղանստանում՝ Նազըմը, Բաքվում՝ Խալիլը (18, 6. II. 1920)։ 1919-ի սկզբին Կարսի մարզից թուրքերը կողոպտում և դուրս էին տանում ամեն ինչ, նույնիսկ տների լուսամուտներն ու դռները (59, թ. 99)։

Առաջինը անգլիական զորքերը տեղ հասան։ Նրանք էլ փորձեցին Կարսի մարզի վրա հաստատել իրենց գերիշխանությունը։ Անգլիացիները նույնիսկ հռչակեցին «Կարսի մահմեդական հանրապետություն», որը մի քանի շաբաթվա կյանք ունեցավ։ Կարսի ամրոցից անգլիացիները կողոպտեցին և դուրս տարան ռուսական բանակի հարուստ գույքը, քանդելով նույնիսկ տեղակայված թնդանոթները։ Միայն 1919-ի մարտին-ապրիլին նրանք Կարսը զիջեցին Հայաստանի հանրապետությանը։ Այդ պահին նրա տերիտորիան կազմում էր 47 հազար կմ²։

1919-ի հունիսին Սարիղամիշի, Մերդենեկի շրջաններում գործում էր Էյուբ խանի շայկան՝ մինչև 1500 մարդ։ Սրանք խառնակություններ ու պրովոկացիաներ էին սարքում, հետո աղմուկ տարածում, թե հայերն են ճնշում թուրքերին (22, ց. 1, գ. 458, թ. 1)։

1919-ի հուլիսի 23-ին Էրզրումում ընդունված որոշումների մեջ շեշտվում էր, որ Տրապիզոնը, Էրզրումը, Սըվասը, Բիթլիսը և Դիարբեքիրը հանդիսանում են օսմանյան կայսրության բաղկացուցիչ մասը և մերժվում էին հայերի ու

հույների տերիտորիալ պահանջները։ Եթե թուրքական (Կ. Պոլսի) կառավարությունը ստիպված կլինի հրաժարվել արևելյան վիլայեթներից և խաղաղության պայմանագիր կկնքի այդ ոգով, ապա այդ հողերի պահպանման համար պետք է ստեղծել ժամանակավոր կառավարություն, թույլ չտալու համար հայերին և հույներին գրավելու դրանք։ Ով կընդդիմանա այս որոշումների դեմ, նրանց համարել հայրենիքի թշնամի (43, № 54, 1919, էջ 5)։ «Ճշմարտություն էր, որ Արևմուտքից եկած այդ գեներալը (Մուստաֆա Քեմալը) հրապարակավ արտահայտվում էր հայկական պետության ստեղծման դեմ» (81, էջ 178)։

1919-ի օգոստոսին Էրզրումից 12-րդ և 20-րդ կորպուսների հրամանատարներին հղած իր մի ծածկագրում Մուստաֆա Քեմալն արտահայտվում էր երկրի արևելյան նահանգները Հայաստանին հանձնելու դեմ։

Նա հիշատակում էր քրդերի առկայությունը (73 էջ 100)։ Իսկ ա՞յժմ։ Այդ ո՞ւր անհետացան քրդերը։ Մ. Քեմալն ընդունում էր քրդերի գոյությունը, իսկ նրա անունից այսօր խոսողները պնդում են քրդերի չգոյության վրա։ Նա խոսում էր Երզնկայի և Սեբաստիայի միջև բնակվող «ղաղա» քրդերի մասին, իսկ այսօ՞ր։

Երբ 1919-ի հոկտեմբերի 31-ի համարում «Թասվիրե էֆքյար» թերթում Մահմուդ փաշան հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասված էր, թե «հայերի պահանջներին շատ ընդառաջելու, սահմանային որոշ ուղղումների համար կարող ենք համաձայնվել», Մ. Քեմալը 1919-ի նոյեմբերի 17-ին անհրաժեշտ համարեց մի հեռագիր հղել Ստամբուլի կառավարությանը։ Այնտեղ ասված էր, որ «ազգը բովանդակ աշխարհին հայտարարել է իր հաստատակամությունը, իր իրավունքները անձամբ պաշտպանելու» քանի որ «Էրզրումի և Սըվասի կոնգրեսների որոշումներով վճռված է ոչ մի թիզ հող չտալ Հայաստանին» (73, էջ 307)։

Քեմալ Աթաթուրքի անգլիացի կենսագիր լորդ Քինրոսը, որը թուրքականության եզակի ջատագովներից մեկն է, խոստովանում է, որ ոչ մի բանակ չէր կարող այլևս գոյություն ունենալ այդ երկրում, որտեղ պատերազմի սկզբնական շրջանում հայերը կոտորվել էին կամ տեղահանվել զանգվա-

ծարար, հողը թողնելով անապատային վիճակում, առանց բերք աճեցնող գյուղացիների և ծառայություն մատուցող արհեստավորների (81, էջ 100)։ 1919-ի դեկտեմբերին «Մեր դատին թշնամիները» առաջնորդողում «Հայրենիքի» դաշնակ գրիչները կարծում էին, որ Թուրքիան արդեն «ամենեն նվազ վտանգավորն է։ Թուրքիայի մահավճիռն արդեն ստորագրված է, և թուրքերի օրհասական գալարումները մեզ չեն ահաբեկելու» (18, 16. 12. 1919)։

Հայաստանը մի խոչընդոտ էր ասիական մահմեդականության և Թուրքիայի միացման ճանապարհին։ Այդ միացումը պետք է կատարվեր միմիայն Հայաստանի վրայով, նրա հաշվին։ Հայաստանի բնաջնջումը մի միջոց էր գլխավոր նպատակին՝ դեպի արևելք թուրքիզմի ճանապարհը բաց պահելու համար։

Քյազիմ Կարաբեքիրը Մուստաֆա Քեմալի հրամանատարության տակ կռվել էր Կովկասյան ճակատում (1917) և միմյանց հետ նրանք կապված էին մարտական համերաշխությամբ (72, էջ 67)։ 1917-ի գարնանը, երբ ուժեղացավ վտանգը Սիրիայի ճակատում, Մուստաֆա Քեմալը Արևելյան ճակատի հրամանատարությունը հանձնեց Կարաբեքիրին, «հրամայելով մաքրել, հաշվեհարդար տեսնել հայերի հետ և ամրացնել ռազմաճակատը» (72, էջ 68)։ Նա մեկնեց Կ. Պոլիս Սիրիա գնալու համար։ Կովկասյան ճակատում Կարաբեքիրը չկատարեց դաշնակիցների հետ կնքված Մուդրոսի զինադադարի պայմանները։ Նա իր հրամանատարության տակ կազմ ու պատրաստ պահեց վեց դիվիզիա (72, էջ 97)։ Թուրքական բանակը վերակազմվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանը վերագրավելու, այլև Անդրկովկաս ներխուժելու և Ռուսաստանի տարածքները, Արարատ լեռը հայ ժողովրդից խլելու համար։ Անտանտի իմպերիալիստները լուռ դիտողների դեր ստանձնեցին։

Երբ 1919-ին սուլթանը հրամայեց Կարաբեքիրին ցրել հավաքույթները, ձերբակալել նրան, նա տատանվում էր։ Նրանից էր կախված շարժման հետագա բախտը։ Նա լոյալ էր սուլթանի նկատմամբ, բայց և Քեմալին ու Ռեուֆին խոսք էր տվել գործել համատեղ։ Կարաբեքիրը որոշեց համ-

գործակցել նրանց հետ և չկատարել սուլթանի հրամանը (72, էջ 109—110)։ Կարաբեքիրի որոշումը ամենավճռական դերն է կատարել ազգայնական շարժման հաջողության մեջ։ Նա զորահրամանատար էր, իր ետևից տարավ կանոնավոր զորքը, որը և դրվեց Մուստաֆա Քեմալի տրամադրության տակ։

1920-ի գարնանը, Դենիկինի ջախջախումից հետո, Հյուսիսային Կովկասում վերականգնվեց սովետական իշխանությունը։ Դեռևս 1920-ի ապրիլին Գ. Կ. Օրջոնիկիձեն դաշնակցական կառավարության ներկայացուցիչներին պարզորոշ բացատրում էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը բարյացակամորեն է վերաբերում հայկական հարցին և պատրաստ է բանակցություններ սկսել Հայաստանի հանրապետության հետ։ Մայիսի 17-ին Գ. Վ. Չիչերինը հեռագրում էր Երևան. «Սովետական կառավարությունը սիրով ձեզ հայտնում է իր համաձայնությունը Հայաստանի կառավարության հետ պայմանագիր կնքելու՝ երկու ժողովուրդների միջև բարեկամական և ամուր հարաբերություններ հաստատելու նպատակով» (3, էջ 97)։

1920-ի ապրիլի 28-ին սովետական հռչակվեց Ադրբեջանը. 11-րդ կարմիր բանակն ընդհուպ մոտեցավ Հայաստանի սահմաններին։ Փաստերը հաստատում են, որ այդ պահին քեմալական Թուրքիան ծրագրել էր ներխուժել Հայաստան, այդ նպատակով ձեռնարկել բոլոր նախապատրաստական միջոցները։ Նրանց նպատակն էր նախ գրավել Կարսի և Արդահանի շրջանները, այնուհետև, Հայաստանն իրենց ենթարկելով, միանալ մուսավաթականներին։ Սա պանթուրքական ծրագրի իրականացման նախնական փուլն էր, որին հաջորդելու էին տարածողական հետագա քայլեր։ Դեռևս 1919-ին Բաքվում մուսավաթական պարագլուխների հետ ձեռք ձեռքի տված գործում էին նախկին երիտթուրքական գործիչներ, այժմ Մ. Քեմալին ընկերացած Խալիլ և Նուրի փաշաները։ Սրանք ստեղծել էին «Թուրքական շտաբ» կոչվող կազմակերպությունը, հեղափոխական ֆրազների ծխածածկույթի տակ համագործակցության առաջարկներ էին անում կոմունիստական կուսակցության Անդրերկրկոմին (15, էջ 478)։ Նրանց նույնիսկ հաջողվեց գործի անցնել

Դաղստանում։ Սակայն, սպիտակների դեմ պարտիզանական կռվի կազմակերպման անվան տակ Նուրի փաշան այստեղ հակասովետական, պանթուրքական գործունեություն ծավալեց։ Դաղստանի բոլշևիկյան ընդհատակյա կենտրոնը նրան ստիպեց հեռանալ։

1920-ի գարնանը, երբ Դաղստանում էր գտնվում 11-րդ կարմիր բանակը, խալիլ փաշան Ս. Մ. Կիրովին առաջարկում էր համատեղ ուժերով գրավել Հայաստանի հանրապետությունը։ Կիրովը վճռական հակահարված է տալիս պանթուրքիստին (20, թ. 256)։

1920-ի մայիսին Հայաստանը բռնված էր հակադաշնակցական ապստամբությամբ։ Հայ աշխատավորները կոմունիստների գլխավորությամբ ոտքի էին ելել տապալելու ատելի իշխանությունը։ Սակայն Սովետական Ռուսաստանի միջազգային դրությունը նորից բարդ էր և նա չկարողացավ զինված օգնություն ցույց տալ Հայաստանի հեղափոխական ուժերին։ Ապստամբությունը պարտվեց։ Բանն այն է, որ 1920-ի ապրիլի վերջին պանական Լեհաստանը ներխուժեց Սովետական Ուկրաինա և մայիսի 6-ին գրավեց Կիևը։ Ապրիլի վերջին անգլիական նավատորմը գնդակոծեց մեր երկրի սևծովյան նավահանգիստները։ Ապրիլի 25-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Քերզոնը հեռագրով սպառնում էր սովետական կառավարությանը՝ պատերազմ սկսել ՌՍՖՍՀ-ի դեմ, եթե չդադարեցվեին ռազմական գործողությունները Կովկասում և Վրանգելի դեմ։

Վ. Ի. Լենինը համաձայնվում էր Չիչերինի կարծիքի հետ՝ Կովկասում ռազմական գործողությունների դադարեցման հարցում (53, հ. 51, էջ 191)։ Մայիսի 5-ին և 6-ին Կենտկոմի քարբյուրոն քննարկում է Անդրկովկասի դրության և Քերզոնի նոտային պատասխան տալու հարցը (53, հ. 41, էջ 619—621)։ Որոշվում է Կովկասից զինվորական մասեր տեղափոխել Արևմտյան ռազմաճակատ։ Գ. Կ. Օրջոնիկիձեն կարգադրություն է ստանում Վ. Ի. Լենինից կարմիր բանակի զորամասերը հետ քաշել Վրաստանից, ձեռնպահ մնալ հարձակումից (53, հ. 51, էջ 191)։ ՌԿ(բ)Կ Կենտկոմը մայիսի 25-ի որոշմամբ դիրեկտիվ տվեց ռուսական զորամասեր չմտցնել, զորքի օգնությամբ սովետական իշխանություն

հաստատելու փորձեր չկատարել, բոլոր միջոցներով Նախիջևանը պաշտպանել Թուրքիայի և Անտանտի ազդեցությունից։

1920-ի մայիսի վերջին հակասովետական խռովություն բռնկեց Գյանջայում, այնուհետև Ղարաբաղում (Շուշի), որի գլուխ կանգնած էր Նուրի փաշան։ 1920-ի հունիսի 2-ին Լենինը հեռագրում էր Կրեմենչուգ՝ Ստալինին, որ Արևմտյան ճակատում դրությունը վատացել է, որ Ստալինի պահանջած դիվիզիաները պետք է այնտեղ ուղարկել, իսկ Կովկասյան ճակատից այլևս զինված ուժեր չհանել, քանի որ այնտեղ ապստամբություններ են և չափազանց տագնապալի վիճակ (53, հ. 51, էջ 205)։ Լենինի առաջարկով 1920-ի հունիսի 22-ին Կենտկոմի քաղբյուրոն որոշում ընդունեց «Կովկասում քաղաքականության մասին» և հանձնարարեց արտաքին գործերի ժողկոմատին դրա հիման վրա հրահանգ պատրաստել Կավբյուրոյի, Վրաստանում, Հայաստանում և Թուրքիայում ՌՍՖՍՀ պատասխանատու զինվորական աշխատողների և լիազոր ներկայացուցիչների համար։ Այս հրահանգը հաստատվեց Կենտկոմի քաղբյուրոյի կողմից հուլիսի 7-ին։ Այնտեղ ասված էր, որ «ՌՍՖՍՀ-ը պետք է խաղաղ և բարիդրացիական հարաբերություններ պահպանի Վրաստանի և Հայաստանի բուրժուական պետությունների հետ» (60 էջ 43)։

Լորդ Քինրոսը հաստատում է, որ Քեմալ Աթաթուրքը Սովետական Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու հենց սկզբից ձգտում էր Հայաստանը նվաճելու ազատություն ստանալ։ Կարաբեքիրն անհամբեր էր դարձել և ըստ Քինրոսի, ճնշում էր գործադրում Մուստաֆա Քեմալի վրա։ Վերջինս հարձակումը Հայաստանի վրա հետաձգել էր մինչև 1920-ի հունիսը։ Կարաբեքիր փաշան ստիպված էր իր տասնյոթ կազմ ու պատրաստ գնդերը զորախաղերով զբաղեցնել (81, էջ 24)։ Յուրովի վերլուծելով սովետա-թուրքական հարաբերությունների խանձարուրը, լորդ Քինրոսը խեղաթյուրում է Սովետական Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը։ Սակայն նա անում է նաև, մեր կարծիքով, շատ ուշագրավ դիտողություն, գրելով, թե ստանալով Սովետական Ռուսաստանի օգնությունը, Մուստաֆա Քեմալը

Հայաստանի դեմ իր ընդունած գործողությունների ծրագրի իրականացմանը ձեռնամուխ եղավ «անկախ Մոսկվայի համաձայնությունից և այլ հանգամանքներից» (81, էջ 242)։

Գ. Եշկեն փաստերով ցույց է տալիս, որ Մ. Քեմալն ու իր համախոհները չէին ըմբռնել հայերի օգտին սովետական կառավարության հռչակած ինքնորոշման իրավունքի նշանակությունը։ Նրանք պատկերացում չունեին նաև «Թուրքահայաստանի մասին դեկրետի» վերաբերյալ։ Ահա թե ինչու, գրում է Եշկեն, 1920-ի ապրիլի 26-ի նամակին Չիչերինի պատասխանը (մասնավորապես Հայաստանում, Քուրդիստանում, Լազիստանում և Արևելյան Թրակիայում հանրաքվե անցկացնելու մասին հարցադրումը) ցնցեց Ազգային մեծ ժողովը։ Առավել տարօրինակ համարվեց Անկարայում Հայաստանին տերիտորիալ զիջումներ անելու սովետական պահանջը (48)։ Բեքիր Սամի բեյը, որ Մոսկվա էր ժամանել 1920-ի հուլիսի 19-ին, այս հարցադրումները շատ ավելի սև գույներով էր ներկայացրել Անկարայում։

Մայիսյան ապստամբության հաղթանակը Հայաստանում նախ և առաջ ի դերև կհաներ Անդրկովկաս ներխուժելու թուրքական ազգայնականների ծրագրերը։ Սակայն ռուս-լեհական պատերազմը ստիպեց սովետական կառավարությանը կանգնեցնել 11-րդ կարմիր բանակի առաջխաղացումը Երևան։ Մուստաֆա Քեմալին 1920-ի հունիսի 4-ին գրած իր նամակում Խալիլը պատմելով Չիչերինի, Կարախանի և Կամենևի հետ իր ունեցած զրույցների մասին, այլ հարցերի շարքում շեշտում էր, որ նրանք պահանջում էին հրաժարվել Հայաստանի դեմ ուղղված գործողություններից (48)։ Կարաբեքիրի բանակի հարձակումը Հայաստանի վրա նախապես նշանակված էր 1920-ի հունիսի 23-ին։ 1920-ի հուլիսի 25-ին Փարիզի «Թանը» գրել էր, որ Մ. Քեմալը հրամայել էր Կարաբեքիրին զորքը շարժել Հայաստանի վրա (43, № 31, 1920, էջ 31)։

Հունիսի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն քննարկեց 11-րդ կարմիր բանակի առաջխաղացումը դեպի Հայաստան դադարեցնելու հարցը և հանձնարարեց Չիչերինին հրահանգ տալ այն մասին, որպեսզի կովկասյան ընկերները խուսափեին թուրքական հարձակման համար առիթներ տալուց։

Պանական Լեհաստանի դեմ կարմիր բանակի հակահարձակման ժամանակ (1920-ի հուլիս) Անգլիան Սովետական Ռուսաստանին նորից սպառնալից նոտաներ էր հղում, իսկ ավելի ուշ (օգոստոսին) Անդրկովկասին սպառնում էր Իրանի հյուսիսից։

Ահա այսպիսի պայմաններում 1920-ի հունիսին Մոսկվայում բանակցություններ սկսվեցին Սովետական Ռուսաստանի կառավարության և «Հայաստանի հանրապետության» պատվիրակության (Լևոն Շանթ, Լևոն Զարիֆյան, Համբարձում Տերտերյան և ուրիշներ) միջև։

Թուրքիայում ծավալված ազգայնական շարժումն Անտանտի դեմ ուղղելու, քեմալականների ուշադրությունը Հայաստանից հեռացնելու նպատակով ՌՍՖՍՀ կառավարությունը ձգտում էր կարմիր բանակի զորամասերը մտցնել հայ-թուրքական սահմանը՝ կանխելու համար թուրքական հարձակումը Հայաստանի վրա։ Այս խնդրի բարեհաջող լուծման դեպքում Անտանտը կզրկվեր Հայաստանը հակասովետական հենարան դարձնելու, հայ-թուրքական միությունը Սովետական Ռուսաստանի դեմ օգտագործելու հնարավորությունից։ Փաստերը վկայում են, որ Սովետական Ռուսաստանը մշակել էր կոնկրետ ծրագիր լուծելու համար հայ-թուրքական տերիտորիալ վեճերը, կազմվել էր հատուկ քարտեզ, որով նախատեսվում էր Հայաստանին միացնել արևմտահայկական տերիտորիաներ։ Ելք պետք է տրվեր դեպի Սև ծով։ «Չիչերին կխոստանա հայերուն գոհացում տալ Թրքահայաստանի որոշ հողամասերը միացնելով Հայաստանին և ապահովելով ելք մը դեպի Սև ծովը»,— պատմել է հայկական պատվիրակության անդամներից մեկը (31, էջ 26)։ Նախիջևանը և Զանգեզուրը նկատվում էին անվերապահ հայկական հողամասեր, իսկ Ղարաբաղի հարցը վճռվելու էր հանրաքվեով։ Չիչերինը և Կարախանը Սովետական Ռուսաստանի կառավարության անունից համաձայնվում էին Հայաստանին հանձնել երկրի տարբեր մասերում սփռված հայկական կուլտուրայի արժեքները, հայ գաղթականներին իրավունք էին ստանում իրենց շարժական գույքով փոխադրվել հայրենիք։ Ռուսաստանը Հայաստանին անվճար տրամադրելու էր մի քանի տասնյակ շոգեքարշեր և վագոն-

ներ, մեծ քանակությամբ նավթ, երկու տեքստիլ ֆաբրիկա, երկրագործական գործիքներ, հացահատիկ, երկու և կես միլիոն ոսկի ռուբլի փող և այլն։ Պատմիչ Համբարձում Տերտերյանը Լ. Կարախանի առանձնասենյակում քարտեզի վրա նշմարում է, որ Անդրկովկասի երեք հանրապետություններից ամենամեծը Հայաստանն էր (31, էջ 34—35)։ Գ. Եշկեն հաստատում է, որ սովետական կառավարությունը հույս ուներ ոչ միայն Կարսի շրջանից Թուրքիայի հրաժարվելու, այլև Վանի և Բիթլիսի վիլայեթների մի մասը Հայաստանին հանձնելու վրա (48)։

Սակայն պարզվեց, որ դաշնակցական կառավարությունը հայկական պատվիրակությանը չէր օժտել համապատասխան լիազորություններով և որդեգրել էր քաշքշուկի անպատասխանատու գործելակերպ։ Թիֆլիսում Հայաստանի հանրապետության դեսպան Տ. Բեկզադյանը հուլիսի 6-ին իր կառավարությանը խորհուրդ էր տալիս հասարակական կարծիքը հեռու պահել Մոսկվայի բանակցությունների մանրամասներից։ Նա գրում էր. «Մենք ժամանակ կվաստակենք, մինչև կստանանք Անգլիայից եկած ռազմամթերքը և այն ժամանակ կարող կլինենք դիմադրել նույնիսկ ռուս զորքերին...» (20, գ. 769 ա, թ. 93)։

Բանակցությունները Մոսկվայում շարունակվեցին երկու ամիս։ Հայաստանի հանրապետության կառավարողները ձգտում էին ժամանակ շահել մինչև կնքվեր Սևրի պայմանագիրը։ Անգլիական և ֆրանսիական կառավարությունները, նրանց ներկայացուցիչները Թիֆլիսում և Երևանում անում էին ամեն ինչ ներգործելու դաշնակցական կառավարության վրա, ձախողելու սովետա-հայկական հարաբերությունների կարգավորումը և պայմանագրի կնքումը։

Հուլիսի 19-ին Չիչերինը նշում է, որ բանակցությունները մնում են մեռյալ կետում, որ դրանք անհույս են։ Նույն օրը Հայաստանի հանրապետության կառավարությանը հղած հեռագրում ՌՍՖՍՀ արտգործժողկոմը նորից պարզում էր հայ ժողովրդի նկատմամբ սովետական քաղաքականության իմաստը։ «Այն բարեկամական հարաբերությունները, որ սովետական կառավարությունը փորձում է հաստատել Փոքր Ասիայում թուրքական ազգային կառավարության հետ, նա,

ի միջի այլոց, օգտագործում է, որպեսզի հայ ժողովրդի համար հնարավորություն ապահովի իր զարգացման համար բավականաչափ տերիտորիա ձեռք բերելու Փոքր Ասիայում և, վերջապես, դուրս գալու հարևան մուսուլմանական բնակչության հետ ունեցած մշտական ճակատագրական թշնամանքից,— հայտարարում էր Չիչերինը։

— Բացառապես սովետական կառավարության խաղաղասիրական ձգտումների ազդեցության տակ թուրք նացիոնալիստները դադարեցրին իրենց իսկ սկսած զորակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին, և պատրաստակամություն հայտնեցին խաղաղ ելք գտնել ու հաստատուն բարիդրացիական հարաբերություններ հաստատել մուսուլմանական և հայ բնակչության միջև»։ Այնուհետև Չիչերինը հավաստիացնում էր, որ «հայ ժողովուրդը կարող է հույս դնել» Սովետական Ռուսաստանի «մշտական բարեկամական վերաբերմունքի», «նրա ուժերի սահմաններում օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար» (19, էջ 352—353)։

Մոսկվայում բանակցությունները հայկական պատվիրակության հետ ընդհատվեցին։ Որոշվեց դրանք շարունակել Երևանում, ուր Վ. Ի. Լենինի և Լ. Կարախանի կողմից տրված լիազորագիր-մանդատով ուղարկվում էր սովետական լիազոր ներկայացուցիչ Բորիս Վասիլևիչ Լեգրանը։ Չիչերինի առաջարկով Լեգրանը և Սահակ Տեր-Գաբրիելյանը Մոսկվայում հանդիպում են հայկական պատվիրակության հետ, նորից ընդգծում սովետական կառավարության դիրքորոշումը։ Սակայն, ինչպես վերհիշում է պատմիչ Հ. Տերտերյանը, Երևանի կառավարությունը լուռ էր, ոչ մի հրահանգ չէր տալիս հետագա անելիքի մասին։ Հուլիսին Լեգրանը մեկնում է Երևան, իսկ Լևոն Շանթն իր պատվիրակությամբ շարունակում է մնալ Մոսկվայում անորոշ անգործության մեջ, ապա ժամանակ վատնում Ռոստովում և այլուր (31, էջ 44)։ Անդրկովկաս հասած Լեգրանին դաշնակցական կառավարությունը Երևան չընդունեց, պատճառաբանելով, թե մինչ այդ պետք է լսի Մոսկվայից վերադարձող պատվիրակության հաշվետվությունը (այն տեղ հասավ սեպտեմբերի 14-ին) և հետո միայն ձեռնամուխ լինել բանակցությունները շարունա-

կեյուն Երևանում (5, էջ 42)։ Սա բացահայտ քաշքշուկ էր, ճակատագրական անպատասխանատվություն, դավաճանություն հայ ժողովրդի նկատմամբ։ 1920-ի հուլիսի 20-ին Թիֆլիսից Լեգրանը հեռագրում էր Հայաստանի արտաքին գործերի մինիստրին, պահանջում էր բանակցությունների վերսկսումը չկապել Մոսկվայից Շանթի պատվիրակության վերադարձի հետ, որ «Սովետական Ռուսաստանի բարեկամական և խաղաղ մտադրությունները չեն համընկնում Հայաստանի կառավարության այն արձագանքին, որը դառնար սկսված հաշտության բանակցությունների շուտափույթ և հաջող ավարտման գրավականը» (19, էջ 360—361)։

Նույն միջոցին Թիֆլիսում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Մ. Կիրովը փորձում էր ներազդել մենշևիկյան Վրաստանում Հայաստանի հանրապետության դեսպան Տ. Բեկզադյանի վրա, նրան բացատրել դրության բարդությունը, բանակցությունները շարունակելու անհրաժեշտությունը։

Երբ 1920-ի օգոստոսի 10-ին Թիֆլիսում, մի կողմից, Լեգրանի և, մյուս կողմից, դաշնակցական կառավարության ներկայացուցիչներ Ջամալյանի և Բաբալյանի միջև զինադադարի համաձայնագիր կնքվեց Ղարաբաղում և Զանգեզուրում կարմիր բանակի զորամասերի և դաշնակցական զորամասերի միջև զինված բախումները դադարեցնելու մասին, շատ ավելի ակնհայտ դարձավ, որ Հայաստանի հանրապետության կառավարությունն իսկական խաղալիք էր անգլո-ֆրանսիական իմպերիալիստների ներկայացուցիչների ձեռքին (Մարտել, Կորբել, Ստոքս, Լուկ և ուրիշներ) (5)։ Սրանք բոլոր միջոցներով ձգտում էին խորացնել կոնֆլիկտը, արգելակել հարաբերությունների կարգավորումը Հայաստանի հանրապետության և Սովետական Ռուսաստանի միջև, ռազմական և տնտեսական օգնություն էին խոստանում։

□

Մոսկվայում բանակցությունները թուրքական պատվիրակության հետ նույնպես ընդհատվեցին։ Սովետա-թուրքական հարաբերությունների նորմալացման ձգձգումը, պայմանագրի կնքման հետաձգումը (մինչև 1921 թվականի մարտի

16-ը) որոշակիորեն պայմանավորված էր հայ-թուրքական բարդ հարաբերություններով, թուրքական կողմի ցանկությամբ՝ տերիտորիալ ոչ մի զիջում չանել Հայաստանի հանրապետությանը։ Քեմալական Թուրքիայի պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամին 1920-ի հուլիսի 14-ին պատասխանելով Հայաստանի հետ սահմանները որոշելու մասին Չիչերինի առաջարկներին, պնդում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վրա, (չեղյալ էր հայտարարված Սովետական կառավարության կողմից 1918 թվականի նոյեմբերի 20-ին) և Բաթումի (1918 թվականի հունիսի 4-ի) կոնֆերենցիայի որոշման վրա (15, էջ 449), որով Հայաստանին թողնվել էր 9 հազար քառակուսի կիլոմետր տարածություն։ Թուրքական կողմն ամբողջապես ոտնահարում էր հայ ժողովրդի կենսական շահերը, ի հակադրություն Սովետական Ռուսաստանի, որը ձգտում էր պաշտպանել Հայաստանը թուրքական զավթողական պահանջախնդրություններից։

Մոսկվայի բանակցությունների ժամանակ չհամաձայնելով հայկական տերիտորիաների հարցում սովետական հարցադրումներին, Բեքիր Սամի բեյի պատվիրակությունն առանց պայմանագիր կնքելու վերադարձավ Անկարա։ Այնուամենայնիվ, պայմանագրի նախագիծն Անկարայում ստացվեց սեպտեմբերի 18-ին։ Նախագծում բաց մնացած թուրք-հայկական տերիտորիալ և մյուս վիճելի հարցերը կարգավորելու նպատակով Մոսկվայից Անկարա էր մեկնելու սովետական պատվիրակությունը։ Սակայն օգոստոսի 10-ին ստորագրվել էր Սևրի պայմանագիրը (Հայաստանին վերաբերող համապատասխան կետերով) և դաշնակ կառավարողները լրիվ փարվեցին Անտանտին։

Մինչ այդ, դաշնակցական կառավարության և քեմալական կառավարության միջև հուլիս-օգոստոս ամիսներին կատարված նոտաների փոխանակությունը նույնպես հայ-թուրքական փոխհարաբերությունների մեջ պարզություն չմտցրեց, քանի որ Անկարայի տնօրենները ոչ մի մտադրություն չունեին հարգելու հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը։

«... Իսկ մենք որոշեցինք,— հայտարարում էր Մուստաֆա Քեմալը,— որ Կարսի, Սարիղամիշի, Օլթիի և Արդահանի

վրա հարձակվելը ևս հարցի լուծում է՝ դիվանագիտական ճանապարհով։ Այդպես էլ մենք վարվեցինք, չնայած այն բանին, որ Մոսկվայից արդեն մեկնել էր սովետական միսիան՝ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանային հարցերի որոշման գործում միջնորդելու համար, բայց պատվիրակությունն արդեն ուշացել էր» (12, № 143, 1920)։

Սովետների 8-րդ համագումարին ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի 1919—1920 թթ. տարեկան հաշվետվության մեջ ասված էր, որ տակավին 1920-ի մայիս-հունիսին թուրքական կառավարությունն արդեն հայտարարել էր զորակոչ՝ Արևելյան ռազմաճակատում, այսինքն՝ Հայաստանի հանրապետության տերիտորիայում ստրատեգիական կետեր գրավելու համար, բայց ընկ. Չիչերինի նամակը (խոսքը 1920 թվականի հունիսի 3-ի Թուրքիայի Ազգային մեծ ժողովին հղված նամակի մասին է) ստանալուց հետո հետաձգել էր այդ ծրագրի իրականացումը (15, էջ 480)։ Կարելի է բազմաթիվ այլ վկայություններ և փաստեր բերել, որոնք ցույց են տալիս սովետական կառավարության մտահոգությունը հայ ժողովրդի ապահովության, անվտանգության նկատմամբ, թուրքական հարձակողական, տարածողական քաղաքականությունից նրան զերծ պահելու հարցում։

Տեղին ենք համարում մեջբերել արտգործժողկոմատի տարեկան հաշվետվության, մեր կարծիքով, կարևոր մի հատված, չվերաշարադրելու համար նրա բովանդակությունը։

«Այն ժամանակ լիակատար համաձայնության հասնելու համար գլխավոր դժվարությունը Արևելքում Թուրքիայի սահմանների որոշումն էր։ Բանակցություններ վարելով, մի կողմից, թուրքական պատվիրակության և, մյուս կողմից, հայկական դաշնակցական կառավարության պատվիրակության հետ, որին գլխավորում էր բանասեղծ Լևոն Շանթը (մայիս-հուլիս), սովետական կառավարությունն իրերի բերումով ստիպված էր միջոցներ որոնել՝ երկու կառավարությունների տերիտորիալ պահանջախնդրությունները համաձայնեցնելու համար։ Այդ խնդիրը, ըստ էության, անիրագործելի էր։ Այն ժամանակ դաշնակցական կառավարությունն արդեն հրաժարվել էր Անտանտի կողմից առաջ քաշվող մեծ

Հայաստանի պլանից, ըստ որի Հայաստանն ընդգրկելու էր Փոքր Ասիայի կեսը և պետք է դեպի ծով ելք ստանար բուն Սիրիայի մոտ։ Սակայն դաշնակցական կառավարության տերիտորիալ պահանջախնդրությունները դեռևս բավական զգալի էին՝ ընդգրկում էին Էրզրումը, Լազիստանը՝ Տրապիզոնով հանդերձ և մի քանի թուրքական վիլայեթներ։ Դեռևս Խալիլ փաշայի հետ բանակցություններ վարելիս սովետական կառավարությունն առաջ էր քաշում ազգագրական սահմանագծի սկզբունքը, սահմանագիծ, որը հիմնված էր լինելու մինչև մեծ պատերազմը գոյություն ունեցող ազգային փոխհարաբերությունների վրա և առաջարկում էր կատարել փոխադարձ վերաբնակեցում՝ երկու կողմերում համատարր ազգագրական տերիտորիա ստեղծելու համար։ Սկզբունքորեն այդ բանն ընդունում էր նաև դաշնակցականների պատվիրակությունը, բայց երբ փորձ արվեց կոնկրետացնել այդ սկզբունքը, պարզվեց, որ դաշնակցականների պահանջախնդրությունները դեռևս անչափ մեծ են, որ անհնար է նրանց հետ Հայաստանի սահմանների հարցը լուծել ընդունելի կերպով։ Լևոն Շանթի պատվիրակությունը մեկնեց, չհասնելով արդյունքների։ Բեքիր Սամիի պատվիրակության հետ բանակցելիս սովետական կառավարությունն առաջ էր քաշում հին թուրքական սահմանագծի ռեկտիֆիկացիայի (ուղղորդման) մի այնպիսի սկզբունք, որի դեպքում մուսուլմանական գերակշիռ բնակչությամբ հողերը, մի կողմից, կանցնեին Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թ. եղել է հայկական մեծամասնություն, կանցնեին Հայաստանին։ Բայց այդ դեպքում ևս հաջողություն չունեցան ազգագրական խնդրին կոմպրոմիսային լուծում տալու փորձերը։ Ավելին, ինքը՝ Բեքիր Սամին, որն իր հայացքներով խիստ տարբերվում էր Թուրքիայի նոր կառավարող խավից և պատկանում է հին թուրքական իշխող վերնախավին, դրանից հետո թուրքական սահմանագիծը շտկելու մասին ընկ. Չիչերինի հետ ունեցած իր զրույցներն օգտագործեց այն բանի համար, որպեսզի Անկարա վերադառնալուն պես փորձի ազգային Թուրքիային սադրել Սովետական Ռուսաստանի դեմ։

Այն ժամանակ, երբ Մոսկվայում սկսեց պարզ դառնալ կոմպրոմիսային ազգագրական սահմանագիծ հաստատելու փորձերի անհուսալիությունը, թուրքական կառավարությունը որոշեց սրով կտրել գորդյան հանգույցը (15, էջ 480—482)։

Թուրքական զորքերն արդեն 1920-ի հուլիսին մտան Նախիջևան, փորձելով այն միացնել Թուրքիային (39, էջ 45—52)։ Ռուս հեղինակ Վ. Տարխովը «Վոեննի վեստնիկ» ամսագրում 1922-ին նկարագրել է Խալիլ փաշայի, թուրքական բանակի զինվորական ջոկատի մուտքը Նախիջևան, նրանց հետապնդած նպատակները, կատարած գործերը (57, էջ 33)։ Գլխավոր խնդիրը նրանց համար երկրամասի գրավումն էր և միացումը ազգայնական Թուրքիային։

1920-ի օգոստոսին արևելյան վիլայեթների մի խումբ դեպուտատներ, որոնց գլխավորում էր Էրզրումի ներկայացուցիչ Դուրակ բեյը, մեջլիսում պրովոկացիոն հարցապնդում արեց «հայերի և վրացիների կողմից» ծագած վտանգի մասին և պահանջեց շարժել թուրքական զինված ուժերը «գրավելու համար բոլոր նրանց հողերը»։ Փաստորեն խոսքը վերաբերում էր Կովկասը գրավելուն։

1920-ի օգոստոսի 4-ին պատասխանելով այդ հարցադրմանը Մուստաֆա Քեմալը պարզաբանում էր Հայաստանի Հանրապետության դեմ թուրքական զորքերի հարձակման պլանները։ Ազգային ժողովի ամբիոնից նա բացատրում էր. քանի որ հայերը փորձելու են գրավել Էրզրումը,— ասում էր նա,— ապա ինքը հրամայել է գրավել Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերով Թուրքիային անցած տարածքները (խոսքը Կարսի, Արդահանի, Բաթումի մասին է)։ Ազգային ժողովն այդ ագրեսիվ գործողությանը տվել էր իր համաձայնությունը։ Քեմալն ասում էր, որ արևելյան բանակին հրամայվել էր ձեռնամուխ լինել ռազմական գործողությունների նախապատրաստմանը։ Այնուհետև նա պատմում էր, որ Մոսկվայից վերադարձած թուրքական պատվիրակության անդամներից մեկը իր հետ բերել էր Չիչերինի նամակը, որտեղ շեշտվում էր Հայաստանի, Իրանի և Թուրքիայի միջև սահմանային հարցը բանակցությունների միջոցով լուծելու անհրաժեշտությունը։ «Սովետական կառավարությունը մեր հետագա հարձակումը հայերի վրա համարում

է անցանկալի և աննպատակահարմար»,— խոստովանում էր Մ. Քեմալը (34, էջ 99—100)։

Մ. Քեմալի և նրա համախոհների համար դաշնակցական կառավարության բռնած դիրքը իսկական գյուտ էր, համապատասխանում էր իրենց ծրագրերին։ Նրանք գիտեին, որ Անտանտը գործնական ոչինչ չէր անելու Հայաստանն իրենց մագիլներից ազատելու համար, իսկ դաշնակ պարագլուխները չէին լսում Մոսկվայի խորհուրդները։ Մ. Քեմալը շտապում էր, նա գիտեր, որ որոշված էր հայ-թուրքական բանակցությունները շարունակել տեղում՝ Անդրկովկասում և սովետական միջնորդ պատվիրակությունն արդեն մեկնել էր Մոսկվայից ու ժամ առաջ որոշեց նենգությամբ իրագործել իր պլանը։ 1920-ի սեպտեմբերի 23-ին թուրքական բանակն անցավ հարձակման։ Դաշնակցական «քաղաքագետները» լավատեսորեն կարծում էին, որ Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Իտալիան անմիջապես ասպարեզ էին իջնելու իրենց կողմում, հարվածելու Թուրքիային հանուն Սևրի պայմանագրի իրագործման։ Ջուր հույսեր։

Սեպտեմբերի 25-ին Ավետիս Ահարոնյանը դիմեց Ազգերի լիգայի խորհրդին Հայաստանի հանրապետությունը լիգայի անդամ ընդունելու, Սևրի դաշնագիրը հարգելու նպատակով Թուրքիայի նկատմամբ սանկցիաներ կիրառելու խնդրանքով։ Եվ ի՞նչ պատասխան։ Ազգերի լիգայի խորհուրդն անտարբերությամբ արձանագրում էր, թե Սևրի պայմանագիրը տակավին ուժի մեջ չէ, իսկ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարություններն Ազգերի լիգայի իրենց ներկայացուցիչներին հեռագրում էին քվե չտալ Հայաստանին այդ կազմակերպության անդամ դառնալու համար։ Քվեարկությանը մասնակցած 29 պետությունների ներկայացուցիչներից 21-ը դեմ արտահայտվեցին Հայաստանը լիգայի մեջ ընդունելուն և միայն 8-ը (Կանադա, Պերու, Պորտուգալիա, Ռումինիա, Սալվադոր, Շվեյցարիա, Ուրուգվայ, Վենեսուելա) կողմ քվեարկեցին։

1920-ի սեպտեմբերի 25-ին Անկարայի լուսավորության մինիստրությանը (Ռըզա Նուր և Նեջաթի բեյերին) հղած հեռագրում Քեմալի զինակից Հյուսեին Ավնին իրազեկ էր պահում, որ «հայերին պատժելու նպատակով» արդեն հունիս

ամսին զորակոչվել են մինչև 1888 թվականի ծնվածները։ Նա հիշատակում էր, որ Չիչերինի հայտնի նամակի պատճառով ռազմական գործողությունները դադարեցված են, իսկ հայերը, քաջալերված դրանից, բռնություններ են գործադրում մուսուլման ժողովրդի նկատմամբ։ Նա գրում էր, որ թուրքական բանակը «կորցրել է իր համարձակությունը», զգալով «հայ և բոլշևիկյան միասնության» հնարավորությունը, որ Քյազըմ փաշայի (Կարաբեքիր) «ուժերից վեր է» հաղթահարել հայերին։ Նա հեռագրում նշում էր եղանակների աննպաստ լինելը, հանդերձանքի, պարենի պակասությունը, այն, որ զինվորականները, պաշտոնյաները չորս ամիս աշխատավարձ չեն ստացել և այլն (73, էջ 483)։

Հայաստանի ղեկավարներին հայտնի էր, որ «թե Թոմսոնի և թե մյուս գեներալների (անգամ մեզ մոտ հայասեր համարված Բիչի) ղեկուցումները, մասնավորապես Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերող խնդիրներում, միշտ եղել են ի վնաս մեզ»: Որ «Անգլիան ամեն տեղ, ինչպես և Կովկասում վարում է քողարկված մուսուլման քաղաքականություն», որ «անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ» (22, գ. 458, թ. 2)։ Եվ այնուամենայնիվ, նրանք շարունակում էին քարշ գալ անգլիական քաղաքականության ետևից, իրենց բախտը կապելով գաղութատիրության միջնաբերդի հետ։

Անգլիական խառնակիչները ցույց էին տալիս, թե իբր հովանավորում էին հայերին, այնինչ ամեն ինչ անում էին Անդրկովկասում ազգամիջյան հակամարտություններ առաջ բերելու համար։ 1920-ի հունիս-հուլիսին, ձգտելով սրել սովետա-թուրքական հակասությունները, այդ գործում օգտագործել արյունաքամ Հայաստանը, անգլիական գաղութարարները 40 հազար համազգեստ և 25 հազար հրացան տրամադրեցին դաշնակցական կառավարությանը։ Անգլիական կոշիկներով հայ զինվորները քայլել չէին կարողանում, իսկ հրացաններից կրակել չէր լինում։ «Զինվորը հրազեններեն միայն կգանգատեր։ Անոնք անգլիական շատ հին հրացաններ էին, գործածութենե լքված...» (33, էջ 88)։

1920-ի սեպտեմբերի 29-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշը, ապա Արդահանը, հոկտեմբերի 30-ին՝ Կարսը և

հարձակումը շարունակեցին Ալեքսանդրապոլի վրա։ Նոյեմբերի 7-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը։

«Թուրքական սահմանի վրա թուրք զորքերը կամ չկան, կամ շատ քիչ են. զինվորները լքում են և հեռանում, մինչև իսկ Կարինը դատարկվում է»։ Այս ապահովիչ հեռագրերի հիմանքով, որը թուրքական խորամանկության արդյունք էր, հայկական կառավարությունը «իր զորքերը կղրկեր դեպի Ադրբեջանի սահմանները»։ Սա նույնպես արհեստականորեն էր հրահրվում։ Թուրքերը բավականաչափ լրտեսներ ունեին Երևանում։ Սրանք օր օրի լիակատար տեղեկություններ էին հաղորդում Կարաբեքիրի սպայակույտին։ Իսկ դաշնակցական կառավարողները «անտեղյակ կմնային այս ամենեն, որովհետև իր լրտեսներու խումբը կգործածվեր ոչ թե ծանոթություններ քաղելու թշնամի բանակին ռազմական պատրաստություններեն ու շարժումներեն, այլ լրտեսելու հայ պաշտոնյան և հայ զորքը, հասկանալու համար, թե արդյոք անոնց մեջ որևէ շարժում կա՞ հակադաշնակցական»։

«Ուրեմն,— 1920-ի դեկտեմբերի 14-ին Ալեքսանդրիայից հաղորդում էր «Ազգ» թերթին Մուշեղ Արքեպիսկոպոսը (ճանաչված պատմաբան, մի շարք աշխատությունների հեղինակ),— թուրքերը հայկական կառավարության գլխին խաղացին ռազմագիտական չափազանց պարզ խաղ մը. Արևելքի ճակատին վրա խլրտումներ ձևացնել տվին իրենց բարեկամ և դաշնակից թաթարներուն, որպեսզի հայկական զորքերը դեպի այն կողմը փոխադրվին և իրենք հանկարծ, փոքր ուժերով զինվորական պտույտ մը կատարեցին և գրավեցին բերդաքաղաքներն ու կարևոր դիրքերը և հայերը հարկադրեցին հաշտության» («Ազգ», Բոստոն, № 22, 1921)։

Ահա թե ինչպես էր նկարագրում «Հայրենիքը» դաշնակցության կառավարության քաղաքականության «գոհարները»։ «Մենք ձգտում ունենք գրավել Օլթիի ամբողջ շրջանը և ձգվել դեպի Սև ծով՝ մեր փրկության հանգրվանը»։ Մենք «կամեցանք գրավել Բարդուսը, առանց որի անկարելի է Բասեն մտնել»։ Մենք «պատրաստվում ենք ուժեր կենտրոնացնել Կարսում, կամենալով գարնան Սևրի դաշնագիրը մեր ուժերով իրագործել»։ «Պատերազմը սկսվելուն՝ բնավ չաշխատեցինք թշնամու հետ բանակցել և առաջխաղացման

առաջն առնել. և կարծես ուրախ էինք, որ առիթ է լինում չափվելու թշնամու հետ»,— այսպես էր գրում և «ո՞վ սկսեց պատերազմը» հարցին պատասխանում «Հայրենիքի» էջերում Արտ. Բաբալյանը (17, № 12, 1923, էջ 63)։

Գնահատելով 1920-ի նոյեմբերի 22-ին Լեգրանի բանակցությունների առիթով դաշնակցական կառավարության ներքին գործերի նախարար Սարգիս Արարատյանի հայտարարությունը, Հակոբ Տեր-Հակոբյանը գրում է, որ նա արտահայտում էր կառավարության տեսակետը, «տեսակետ մը, որ ավելի հարմար էր կուսակցության մը վարիչներուն, քան արյունաքամ ժողովրդի մը ճշմարիտ բարեկամներուն, վասն զի, մինչև բոլոր աշխարհի քաղաքագետ վարիչները կը ծռին մեծ վտանգին առջև՝ հեռավոր շահը առժամաբար զոհելով, մեր նախարարը, հայկական նկարագիրը հատկորոշող համառությամբ մը, Հայաստանի սահմաններուն վրա բռնկումն սկսած այդ պահուն, չէր վարաներ հեռավոր «բարեկամներու» վրա երազներ հյուսել և կրսեր. «Հիշելով Արևելքի մեջ Ռուսաստանի ձեռնարկած աշխատանքը և այդ աշխատանքի ընթացքին հայ ժողովրդին վիճակված պատմական դերը, մենք պետք չէ մոռանանք, որ նման կացության մեջ կը գտնվինք նաև հանդեպ Արևմուտքի. Արևելքի կռիվն Արևմուտքի դեմ է, և մեզի վիճակված է այդ կռվի ընթացքին վրա որևէ ազդեցություն ունենալ. ապա ուրեմն մեր առաջ կանգնած է նաև Արևմուտքը՝ հանձին դաշնակիցներու, իր պահանջներով և հետապնդած նպատակներով» (33, էջ 107)։

Հայ-թուրքական պատերազմն ընթանում էր հայ ժողովրդին նորանոր աղետներ պատճառելով։ Թուրքական սուրը սպառնում էր կոտորել, ոչնչացնել մնացյալը, եթե Հայաստանում չհաղթանակեր սովետական իշխանությունը, եթե կարմիր բանակը օգնության չհասներ մեր բազմաչարչար ժողովրդին։

Այդ օրերին դաշնակցական կառավարության եվրոպական «դաշնակիցները» դիտորդների դերում էին։ Անգլիական գնդապետ Ստոքսը 1920-ի հոկտեմբերի սկզբին Հայաստանի հանրապետության նախարարապետին հաղորդում էր, որ

«Անգլիան անզոր է ռեալ օգնություն հասցնել Հայաստանին» (6, էջ 32)։

Թուրքերն ամեն ինչ անում էին Սևրի պայմանագիրը տապալելու համար։ Նրանք ճկունորեն խաղում էին միջիմպերիալիստական հակասությունների վրա, մերձեցել էին Ֆրանսիային, հաջողությամբ առաջ էին մղում պատերազմը Հայաստանի դեմ։ 1920-ի դեկտեմբերին Ֆրանսիայի պրեմիեր մինիստր Լեյգը հրապարակավ արտահայտվեց Սևրի պայմանագրի միջոցով Թուրքիայի հետ խաղաղություն հաստատելու անհնարինության մասին։ Վիլսոնը մոռացության տալով իր խոստումները, Մերձավոր արևելքում գերագույն կոմիսար կարգված ծովակալ Բրիստոլին հրահանգում էր պայքարի դրոշ պարզած Քեմալ փաշային հավաստիացնել, որ Ամերիկան երաշխավորում է Թուրքիայի սահմանների անձեռնմխելիությունը, բացի արաբական հողերից (52, էջ 395)։ 1920-ի հուլիսին նույն Բրիստոլը Կ. Պոլսում Ալ. Խատիսյանին խորհուրդ էր տալիս Վիլսոնի խոստումների նկատմամբ «պատրանքներ» չտածել, չափավորել պահանջները, դրանք հասցնելով նվազագույնի, «մերձեցման ուղիներ» գտնել թուրքերի հետ, այլապես հայերին «կսպասի ծանր ապագա»։ 1920-ի հոկտեմբերի սկզբին, երբ Խատիսյանը Հայաստանի վրա քեմալական Թուրքիայի հարձակման առթիվ Կ. Պոլսում նորից այցելում է Բրիստոլին, խնդրում նրան միջնորդի դեր ստանձնել Հայաստանի և Թուրքիայի միջև, վերջինս բավարարվում էր ամառվա իր ասածը հիշեցնելով, ավելացնելով միայն, թե «հիմա արդեն ուշ է»։

Միջազգային բարդ իրադրության պայմաններում հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ հանդես էր գալիս միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը: Ոչ մի գործնական օգնություն չստանալով Անտանտի տերություններից, դաշնակ կառավարողները ուշացած էին գլխի ընկնելու, որ «Եվրոպան կամ չի ուզում, կամ չի կարող մեզ օգնել և մենք պետք է մեր գլխի ճարը տեսնենք» (5, էջ 60)։

Հայաստանի դեմ 1920-ի գարնանից սկսված քեմալական Թուրքիայի անզիջում, մարտաշունչ կեցվածքը պայմանավորված էր հենց անգլո-ֆրանսիական դիվանագիտության խորամանկ խաղերով։ Վերջին հաշվով հակասովետական

ինտերվենցիայի կազմակերպիչների համար միևնույնն էր, թե Սովետական Ռուսաստանի դեմ՝ Հայաստանը, թե Թուրքիան ավելի շատ անախորժ պրոբլեմներ կհարուցի։ Հայ-թուրքական բախման ժամանակ Սովետական Ռուսաստանի հայանպաստ, ժողովրդապաշտպան դիրքորոշումը, նրանց կարծիքով, պետք է հասցներ սովետա-թուրքական կոնֆլիկտի Անդրկովկասում։ Սա էր գլխավոր նպատակը։ Արևմուտքի քաղաքականության հեղինակներն ավելի ընդհուպ զբաղվեցին խնդիրը սրելով, երբ Հայաստանը մխրճվեց պատերազմի հորձանուտը և Անտանտի քաղաքագետների տեսակետով շատ ավելի ռեալ դարձավ սովետա-թուրքական բախումը։ Մեկ ձեռքով երկու ձմերուկ։ Թուրքիան կռվում էր երկու ճակատում. Արևմուտքում թուլանում էր հօգուտ Անտանտի, Արևելքում դժվարություններ էր հարուցում, բախվում Սովետական Ռուսաստանի հետ՝ նորից հօգուտ Անտանտի։ Ահա նրանց սխեման։ Իսկ հայ ժողովո՞ւրդը, կհարցնի նոր սերունդը։ Նա միայն արժանանում էր Արևմուտքի «ֆիլանտրոպների» պլատոնական սիրուն, իսկ գործնականում՝ լոկ արհամարհանքին։

Մուստաֆա Քեմալն ինքն է խոստովանել, որ հայ-թուրքական պատերազմում նախահարձակը Թուրքիան էր։ Հիշեցնելով նախորդ ամիսների անցուդարձը, 1920-ի նոյեմբերին նա Ազգային մեծ ժողովում հայտարարում էր, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համաձայն իրենք պետք է գրավեին Կարսը և մյուս շրջանները, որ դեռ հուլիսին որոշել էին ռազմական գործողություններ սկսել Հայաստանի դեմ։ Այնուամենայնիվ, թուրքական կողմը փորձելով շոշափել Մոսկվայի դիրքը, ճնշում գործադրել նրա վրա, պատվիրակություն է ուղարկում Մոսկվա։ Սա նույնպես ավարտվում է Սովետական Ռուսաստանի վճռական պահանջով՝ Հայաստանի հետ վիճելի խնդիրները լուծել միայն դիվանագիտական միջոցներով, բանակցություններ սկսելով, հիմք դնելով մինչ այդ մշակված նախագիծը և ապահովելով Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությունը։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը համբերությամբ և հետևողականությամբ պաշտպանում էր հայ ժողո-

վրդի կենսական շահերը, փորձում էր կանխել ազգայնական Թուրքիայի ագրեսիան։ Իսկ դաշնակցական կառավարությունը շարունակում էր իր անհեռատես և ժողովրդի համար կործանարար ընթացքը՝ հայացքը հառած դեպի Անտանտը, խաղալիք դարձած անգլո-ֆրանս-ամերիկյան դիվանագետների սուտ խոստումներին, ինչը և հասցրեց նոր աղետի։ Հայ ժողովուրդը նորից դարձավ թուրքական ավանդական հակահայկական քաղաքականության զոհը։

□

1920 թվականի սեպտեմբերի 14-ին Մուստաֆա Քեմալը գրում էր Ալի Ֆուադ Ջեբեսոյին. «Հայերի հետ սկսել բարենպաստ պատերազմ այն հաշվով, որպեսզի Ադրբեջանը միացվի Թուրքիային»։ Այս նամակն իր հուշերում մեջ է բերում Ջեբեսոյը։ Անտանտը թուրքերին հրահրելով Հայաստանի դեմ՝ Բաքուն գրավելու համար, շատ լավ գիտեր, որ Սովետական Ռուսաստանը ամեն գնով պետք է պաշտպաներ Բաքուն։ Արևելքում համաթուրանական ծրագիրն իրականացնելու համար Քեմալը ձգտում էր օգտվել Անտանտի օժանդակությունից ,իսկ Արևմտյան Անատոլիան հույներից նույն Անտանտի ուժերից ազատագրելու համար՝ փորձում էր օգտվել Սովետական Ռուսաստանի օգնությունից։ Թուրքական ավանդական խորամանկ դիվանագիտությունը գործի էր կպցված։

1920-ի հոկտեմբերի 9-ին Վ. Ի. Լենինը նշում էր. «Վերջերս թուրքերն սկսեցին հարձակումը Հայաստանի վրա, նպատակ ունենալով զավթել Բաթումը, իսկ հետո, գուցե նաև Բաքուն» (53, հ. 41, էջ 339—340)։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ Թուրքիան էր հարձակվել, որ նա ուզում էր գրավել Բաթումը և Բաքուն։ Իսկ այս նպատակով նա չէր կարող զենք տալ ազգայնական կառավարությանը։ Իրապես 1920-ի օգոստոսի 24-ի մասնավոր համաձայնությամբ ՌՍՖՍՀ կառավարությունը ռազմական օգնություն էր ցույց տալու Անատոլիայի արևմուտքում Անտանտի ինտերվենցիայի, հունական բանակի հարձակման դեմ կռվելու նպատակով։ Սակայն զենքի առաջին քանակու-

թյունը նոր էր տեղ հասել, երբ Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա։ Այդ պահից սկսած մատակարարումը դադարեցվեց և այն շարունակելը սովետական կառավարության կողմից պայմանավորվում էր Հայաստանի դեմ թշնամական գործողությունները դադարեցնելով, սովետական միջնորդությունն ընդունելով։ Դաշնակցական պրոպագանդան, մամուլը աղմուկ հանեցին, թե իբր Հայաստանը գործ ուներ սովետա-թուրքական միացյալ ճակատի հետ և դրանով իսկ քայքայեցին բանակը, հարվածեցին նրա մարտունակությանը։ Սա տրամաբանական էր, որովհետև հայ ժողովրդի զավակները Սովետական Ռուսաստանի մեջ տեսնում էին իրենց փրկարարին։ «Զախողված այդ ագիտացիան ճակատագրական դեր կատարեց հայ-թուրքական սկսված պատերազմի ընթացքում դաշնակցականների կրած պարտության մեջ, թշնամուն դիմադրելու նպատակով հայ ժողովրդին պայքարի կոչող կուսակցությունը, դրանով քայքայում էր սեփական բանակը, թուլացնելով նրա դիմադրական կարողությունը։ Մեծ չափով դա էլ հենց պատճառ դարձավ հայ-թուրքական պատերազմում Կարսի և Ալեքսանդրապոլի անկմանը»,— գրել է դեպքերի ականատես Աշ. Հովհաննիսյանը (13, № 11, 1970, էջ 39)։

1920-ի հոկտեմբերի 5-ին Օրջոնիկիձեն հեռագրում էր Լենինին և Չիչերինին, անհրաժեշտ համարելով առաջարկել Հայաստանի կառավարությանը թույլատրել կարմիր բանակի մուտքը Հայաստան՝ թուրքական բանակի առաջն առնելու համար։ Դաշնակները մերժում են այս առաջարկությունը։

1920-ի հոկտեմբերի 14-ին քաղբյուրոն, Լենինը հավանություն տվեցին Չիչերինի առաջարկներին՝ 1) Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու, 2) թուրքերի հետագա առաջխաղացումը կանգնեցնելու և 3) Հայաստանի նոր, սովետական կառավարությունը պաշտպանելու մասին (53, հ. 54, էջ 717)։

Թուրքական հարձակման առթիվ ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամ Ա. Մռավյանը 1920-ի հոկտեմբերի 19-ին մի նամակ հղեց ՌԿ(բ)Կ Կենտկոմ, նկարագրելով կատարված չարագործությունները հայոց երկրում։ 1920-ի աշնան սարսափները

նա համեմատում էր 1918-ի «երիտթուրքական գլխակտրողների» ոճրագործությունների հետ։ Նա հարց էր դնում միջամտել «հայ-թուրքական արյունոտ վեճին» (6, էջ 34—35)։

1920-ի հոկտեմբերի 28-ին ՌՍՖՍՀ-ի և Հայաստանի Հանրապետության հաշտության պատվիրակությունների միջև եզրափակիչ արձանագրություն ստորագրվեց, ըստ որի ՌՍՖՍՀ-ի և Ադրբեջանի ՍՍՀ կառավարությունները ճանաչում էին «վիճարկելի մարզերի՝ Նախիջևանի և Զանգեզուրի գավառների տերիտորիաների նկատմամբ Հայաստանի Հանրապետության անսասան իրավունքը»։ ՌՍՖՍՀ-ը ուշադրության առնելով Հայաստանի աշխատավոր ժողովրդի աղետալի դրությունը, որպես անվերադարձ փոխատվություն տալիս էր ոսկով երկու և կես միլիոն ռուբլի։ Այնուհետև փաստաթղթում նշված էր, որ «Հայաստանի Հանրապետությունը, ելնելով թուրքական Հայաստանի մարզերում վիճարկելի տերիտորիալ հարցերը Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարության հետ բարեկամաբար լուծելու դիտավորություններից, պատրաստ է այդ հարցերի լուծման գործում ընդունել ՌՍՖՍՀ-ի կառավարության օժանդակությունն այն բանից հետո, երբ՝

1) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն իր զորքերը ետ կքաշի մինչև 1914-ի ռուս-թուրքական նախկին սահմանագիծը։

2) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը կհրաժարվի Բրեստ-Լիտովսկի պայմանագրից ու Բաթումի կոնֆերենցիայից։

3) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն անվերապահորեն ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունն այն սահմաններում, որոնք որոշված են ՌՍՖՍՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված հաշտության պայմանագրով» (15, էջ 457—458)։

Վերոհիշյալ արձանագրության ստորագրման պահին թուրքական կանոնավոր զորքերը Հայաստանի Հանրապետության դեմ հարձակման էին անցել ամբողջ ճակատով։ Հոկտեմբերի 30-ին ընկավ Կարսը։ Դաշնակ կամակոր վարիչների վրա մեծ էր անգլիական ներկայացուցիչ Ստոքսի ազդեցությունը։ Լոնդոնի կարծիքով նման պայմանները ան-

խուսափիլիորեն հասցնելու էին սովետա-թուրքական բախման։ Պատահական չէր, որ Վ. Ի. Լենինը (1920-ի նոյեմբերի 21-ին) անհանգստանում էր. «Հնարավոր է, որ հանգամանքներն ուղղակի մեր վզին պատերազմ փաթաթեն կամ անուղղակի կերպով հասցնեն դրան» (1, հ. 31, էջ 570)։ Սովետական կառավարությունը փորձում էր ակտիվ միջամտությամբ քակել հանգույցը։

Մի կողմից, Հայաստանի հանրապետության կառավարությունը 1920-ի նոյեմբերի 19-ի հայտարարության մեջ ընդունում էր, որ «Թշնամին ոչ միայն ցանկություն չունի հաշտվելու մեզ հետ, այլև ձգտում է հիմնահատակ կործանել Հայաստանը և բնաջնջել հայ ժողովրդին» (6, էջ 39), մյուս կողմից, շարունակում էր չըմբռնել Սովետական Ռուսաստանի որոշիչ դերը։

1920-ի նոյեմբերի 23-ին Անդրկովկաս ուղարկված Ստալինը վերադարձավ Մոսկվա և նոյեմբերի 27-ին Կենտկոմի քաղբյուրոն լսեց նրա զեկուցումը Կովկասի դրության մասին։ Քաղբյուրոյի որոշման մեջ, որի նախագիծը կազմել էր Վ. Ի. Լենինը, ասված էր. «Վրաստանի, Հայաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի նկատմամբ վարել մաքսիմալ հաշտվողական քաղաքականություն, այսինքն՝ ամենից ավելի նպատակաուղղված այն բանի, որպեսզի խուսափել պատերազմից» (53, հ. 42, էջ 47)։

1920-ի նոյեմբերի 11-ին, Ալեքսանդրապոլը թուրքական զորքերի գրավումից հետո (նոյեմբերի 7-ին), ՌՍՖՍՀ կառավարությունը նոտա հղեց Թուրքիայի և Հայաստանի կառավարություններին՝ իր պատրաստակամությունը հայտնելով միջնորդի դեր ստանձնելու թուրք-հայկական պատերազմը դադարեցնելու գործում։ Բայց թուրքական և դաշնակցական կառավարողները առանձին բանակցություններ սկսեցին Ալեքսանդրապոլում, որն ավարտվեց դեկտեմբերի 2-ին խայտառակ պայմանագրի ստորագրումով։ Իրավական տեսակետից այդ պայմանագիրը ոչ մի ուժ չուներ, քանի որ 1920-ի նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակվել էր սովետական և ուներ իր կառավարությունը։ Դաշնակների այս նոր դավաճանությունը ծանր նստեց մեր ժողովրդի վրա։ Անգ-

լիան խորհուրդ էր տվել գերադասել պայմանագիր կնքել Թուրքիայի, քան Սովետական Ռուսաստանի հետ։

Պատահական չէր նաև, որ 1920-ի նոյեմբերին դաշնակցական կուսակցությունը մամուլի իր օրգաններում սկսեց թմբկահարել թուրքական կողմնորոշման «փրկարար» դերը հայ ժողովրդի համար։ Տաճկաստանը հռչակվում էր «Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպան»։ «Ռուսաստանը ձգտում էր փրկել Հայաստանը»,— 1920-ի նոյեմբերի 13-ին գրում էր Լոնդոնի «Նեյշնը»։— Բայց Հայաստանի ղեկավարները կամավոր հրաժարվում էին ընդունել նրա բարեկամական առաջարկությունները (43, № 48, 1920, էջ 28)։

Այդ ժամանակ իմպերիալիստական ագրեսիվ շրջաններում հասունանում էր այն մտայնությունը, որ պետք է ճանաչել Քեմալին, նրան զիջումներ անել և նա կարմիրներին դուրս կքշի Բաքվից։ Այդ օրերին Վ. Ի. Լենինը գրում էր Ստալինին (որն այն ժամանակ ուղարկված էր Կովկաս), որ անկասկած Վրաստանը Բաթումը կհանձնի Անտանտին, իսկ Անտանտը՝ կհարձակվի Բաքվի վրա։ Նա գրում է, որ «...թուրքական հարձակումն ուղղված էր մեր դեմ։ Անտանտը մեզ համար փոս էր փորում և ինքն ընկավ նրա մեջ, որովհետև մենք ստացանք Սովետական Հայաստանը։

Թուրքիայում իշխանության գլուխ կանգնած են կադետները, օկտյաբրիստները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին» (53, հ. 42, էջ 125)։

1920-ի նոյեմբերի 29-ին Ստալինը Մոսկվայից Բաքու՝ Օրջոնիկիձեին հղած հեռագիր-հրահանգում կարմիր բանակի զորամասերը Հայաստան մտցնելու մասին գրում էր. «Շտապել պետք չէ, հարկավոր է համալրման սպասել։ ...Ամենայն հավանականությամբ թուրքերը Հայաստանում գործում են Անտանտի գիտությամբ, դրա համար էլ նրանց չի կարելի վստահել»։

Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ թուրքերը մերժեցին թույլ տալ Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությունը։ Բացելով առաջին պաշտոնական նիստը Կարաբեքիր փաշան առաջարկեց ընտրել նախագահ։ Ալ. Խատիսյանը պատասխան ճառում ներկաներին

հիշեցրեց 1878-ի Բեռլինի կոնգրեսի նախագահ ընտրելու դեպքը, երբ ավստրո-հունգարական արտաքին գործերի մինիստր Անդրաշին առաջարկեց Բիսմարկի թեկնածությունը այն պատճառաբանությամբ, թե կոնգրեսը տեղի է ունենում գերմանական հողում։ «Այժմ էլ ինքը՝ Խատիսյանը միևնույն նկատառումներով առաջարկում էր, որ նախագահի Կարաբեքիր փաշան»,— կարդում ենք Բոստոնի «Ազգ» թերթում (1921, № 50)։ Ահավասիկ արգահատելի վարքագծի մի տիպիկ օրինակ ևս։

Ալեքսանդրապոլում բանակցություններ վարելու առաջին պայմանը, որ պահանջեց Կարաբեքիր փաշան, Սևրի դաշնագրից հրաժարումն էր։

1920-ի դեկտեմբերի 3-ին Չիչերինը Թուրքիայում ՌՍՖՍՀ ներկայացուցիչ Մդիվանու համար դիրեկտիվ-հրահանգի հարցով դիմեց քաղբյուրոյին։ Մդիվանուն հանձնարարվում էր սանձահարել քեմալական Թուրքիային և չափավորել նրա պահանջները Հայաստանի նկատմամբ, կանխել նրա հարձակումը մենշևիկյան Վրաստանի վրա։ Չիչերինը դնում էր նաև Կարսի հարցը, շեշտելով նրա ստրատեգիական նշանակությունը։ Նա գտնում էր, որ թուրքերի հետ այնպիսի պայմանագիր պետք է կնքվի, որ նա չխանգարի ՌՍՖՍՀ և Անգլիայի միջև համաձայնություն կնքելուն, որ պետք է երաշխավորվի Հայաստանի անկախությունը, որ պետք է ձգտել ապահովել անկախություն Թուրքահայաստանի մի մասի համար, բայց ոչ վերջնագրով, որպեսզի դա չխանգարեր թուրքերի հետ բարեկամական հարաբերություններին։ Իսկ վերջապես պահանջվում էր, որ ՌՍՖՍՀ-ը մասնակցեր հայ-թուրքական սահմանները որոշող խառն հանձնաժողովին (60, էջ 51)։

1920-ի դեկտեմբերի 15-ի իր նոտայով Մուխթար փաշան Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության անունից լկտիորեն հայտարարում էր Չիչերինին, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը «ոչ թե բռնի հաշտություն է, այլ հաշտություն, որը հիմնված է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա, և մենք ցանկացել ենք անեքսիայի ենթարկել սոսկ թուրքական բնակչություն ունեցող տերիտորիաները...»։

Թուրքերի կողմից օկուպացված Ալեքսանդրապոլի և հայկական մյուս շրջաններում թուրքերի կատարած բռնությունների մասին Սովետական Հայաստանի արտգործժողկոմ Ա. Բեկզադյանի 1921-ի հունվարի 8-ի նոտային Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամին 1921-ի փետրվարի 5-ին պատասխանեց մի վերամբարձ նոտայով, հայերին մեղադրելով ամեն ինչի մեջ, իսկ Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին հայտարարեց, որ այն «մարմնավորում է իր մեջ ոչ թե բռնություն, այլ արդարություն և, որ նրա կատարումն անհրաժեշտ է Կովկասում կայուն խաղաղություն հաստատելու համար» (15, էջ 489)։ 1921-ի հունվարի 12-ին Չիչերինը գրում էր Ստալինին, որ թուրքերը դաշնակների հետ բանակցություններ են վարում և կարող են նորից իշխանության գլուխ անցնել։ Հիրավի, 1920-ի աշնանից Անտանտի շրջանները, ինչպես նաև թուրքական գործակալները որոշակի աշխատանք էին տանում Թուրքիայի պրոտեկտորատի տակ կովկասյան հանրապետությունների բուրժուական ֆեդերացիա կազմելու օգտին։ 1920-ի դեկտեմբերին Թիֆլիսում Բեքիր Սամի բեյը շփման մեջ մտնելով դաշնակ գործիչների հետ, շողոքորթում էր, թե նոր Թուրքիան ուզում է շտկել հայերի նկատմամբ նախկին սխալները, «մոդուս վիվենդի» է փնտրում նրանց հետ, պատրաստ է իբր Հայաստանին զիջելու Կարսը, Վանը, Ալաշկերտը, միայն թե նա միավորվի մնացյալ Կովկասի հետ և անկախանա Ռուսաստանից։ Սա պատահական չէր։ Նույն ժամանակ Քերզոնը, Լլոյդ Ջորջը քեմալական Թուրքիայի մասնակցությամբ կոնֆերանս էին հրավիրում Լոնդոնում, օգտագործելու համար Ալեքսանդրապոլի և հայկական մյուս հողերի շուրջը հասունացող սովետա-թուրքական կոնֆլիկտը և կանխելու հարաբերությունների նորմալացումը Սովետական Ռուսաստանի, Սովետական Հայաստանի, մի կողմից, և Թուրքիայի միջև, մյուս կողմից։ Ավելի ուշ Լլոյդ Ջորջը նույն Բեքիր Սամիին առաջարկում էր թուրքական զինված ուժերը շուռ տալ Սովետական Ռուսաստանի դեմ, գրավել Անդրկովկասը, Բաքուն։ Իսկ թուրք դիվանագետը համաձայնվում էր դրան։ Թուրքիան մերժեց սովետական կառավարության առաջարկությունը միջնորդի դեր ստանձնելու թուրք-հայկական հա-

րաբերությունների կարգավորման հարցում։ Չիչերինը 1921-ի հունվարի 13-ին թուրքական արտաքին գործերի մինիստրի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարին գրում էր այդ առթիվ ապրած «խոր հիասթափության զգացումի մասին» (15, էջ 484)։

Օգտվելով դաշնակցության փետրվարյան արկածախնդրությունից (1921-ի փետրվար) Թուրքիան առաջ տարավ իր հակահայկական քաղաքականությունը։ Այն պահին, երբ Մոսկվա ժամանած Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Բեկզադյանը Սովետական Հայաստանին վերաբերող խնդիրների շուրջը բանակցում էր արտգործժողկոմ Չիչերինի հետ, ռադիոգիրը հաղորդեց Սիմոն Վրացյանի գլխավորած «փրկության կոմիտեի» ստեղծման մասին խայտառակ բոթը։ Թուրքական կողմը, պատճառաբանելով դաշնակցության պարագլուխների կողմից Երևանում իշխանությունը վերականգնելու փաստը, այն հանգամանքը, որ վերջինիս հետ ունեն կնքված 1920-ի դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը, պահանջեց, որպեսզի Սովետական Հայաստանի ներկայացուցիչը չմասնակցի այն կոնֆերանսի աշխատանքին, որի օրակարգի զգալի մասը հենց Հայաստանին էր վերաբերում։

Սովետական Հայաստանի ներկայացուցիչները մասնակցություն չունեցան 1921-ի մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրի կնքմանը։ Թեև Մոսկվայի պայմանագրով Ալեքսանդրապոլի թալանչիական պայմանագիրը չեղյալ հայտարարվեց, բայց հայ-թուրքական պատերազմի ժամանակ Հայաստանի տերիտորիաները (Կարս, Սուրմալու, Արդահան) մնացին Թուրքիայի կազմում։ Ախուրյան գետը դարձավ սահմանագիծ։ Պայմանագրի մեջ հատուկ հոդված մտցվեց, ըստ որի Նախիջևանի մարզը պետք է ինքնավար տերիտորիա կազմեր Ադրբեջանի «խնամակալության ներքո» (15, էջ 501)։ Այս քայլը ցույց էր տալիս, որ Թուրքիան չէր հրաժարվել պանթուրքական ծրագրից։ Մանավանդ հետագայում Թուրքիան հսկայական տերիտորիա զիջեց Պարսկաստանին, դրա փոխարեն ստանալով Նախիջևանի հետ անմիջական սահման ունենալու հնարավորություն։

Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո էլ Թուրքիան շարունակում էր իր ագրեսիվ քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ։ Սովետական Ռուսաստանի և Սովետական Հայաստանի բազմիցս արած զգուշացումներից հետո միայն, 1921-ի ապրիլի 22-ին թուրքական զորքերը դուրս բերվեցին Ալեքսանդրապոլից։ Չիչերինը Կարաբեքիրի վարքագիծը համարում էր խուլիգանական (1921-ի ապրիլի 8-ին)։ Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադի ուշադրությունն էր հրավիրում Ազգային մեծ ժողովի կառավարության ռազմական մինիստր Քեմալ Ֆեզի փաշայի այն հայտարարության վրա, որն ասել էր, թե «Արևելյան ռազմաճակատի թուրքական բանակը, մնալով Կովկասում, պետք է այնտեղ կատարի հավասարակշռության տարրի դեր»։ Չիչերինը Թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև պատերազմը համարում էր պատերազմ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև (15, էջ 508)։ Նույն օրը Չիչերինը Օրջոնիկիձեին հանձնարարում էր Կարաբեքիր փաշայից պահանջել անհապաղ ազատելու Ալեքսանդրապոլը։ Թուրքական կողմը ձգձգում էր Մոսկվայի պայմանագրի ռատիֆիկացիան (այն վավերացվեց միայն 1921-ի հուլիսի 31-ին), լարված վիճակ պահելով սովետա-թուրքական սահմանին։

1921-ի հոկտեմբերի 13-ին Կարսում, ՌՍՖՍՀ-ի մասնակցությամբ պայմանագիր կնքվեց մի կողմից՝ ՀՍՍՀ, ԱՍՍՀ և ՎՍՍՀ և, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև։ Այս պայմանագիրը կրկնում էր Մոսկվայի պայմանագրի դրույթները։

Սովետական պատմաբան Ա. Խեյֆեցը գրում է, որ Անկարայում մտածում էին ամբողջ Սովետական Ադրբեջանը «խաղաղ» ճանապարհով Թուրքիային միացնելու մասին։ Անկարայում Ադրբեջանական ՍՍՀ լիազոր ներկայացուցիչ Ի. Աբիլովը 1921-ի նոյեմբերի 8-ին հանրապետության արտաքին գործերի ժողկոմ Մ. Դ. Հուսեյնովին հաղորդում էր. «Թուրքական որոշ շրջաններում դեռևս գերակշռում են պանթուրքական գաղափարները... Իմ կողմից կազմակերպված մի փոքր երեկույթում փոստի և տելեգրաֆի կոմիսարը (այն ժամանակ թուրքական կառավարության մինիստրներն իրենց կոմիսար էին կոչում—Ջ. Կ.) իր պանթուրքական ճառի վերջում ցանկություն արտահայտեց մոտ ապագայում անգորա-

կան պառլամենտում տեսնել Ադրբեջանի դեպուտատներին» (61, էջ 28)։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման հաջորդ օրը, 1920-ի նոյեմբերի 30-ին, Բաքվի «Կոմունիստ» թերթում տպագրվեց Սովետական Ադրբեջանի կառավարության նախագահ Ն. Ն. Նարիմանովի հոդվածը «Մենք թույլ չենք տալիս...» վերնագրով, որը լուրջ նախազգուշացում էր թուրքական ագրեսիվ շրջաններին, որոնք ձգտում էին զավթողական քաղաքականություն իրականացնել ոչ միայն Հայաստանի նկատմամբ, այլև երազում էին Ադրբեջանի «միացման» մասին։ «Մենք թույլ չենք տալիս դա,— ասված էր հոդվածում,— բայց եթե քեմալականները ներքաշվեն այդ ավանտյուրայի մեջ, ապա մենք, կարմիր Ադրբեջանի բանվորները և գյուղացիները, անխնա կխփենք քեմալականներին մինչ այն ժամանակ, քանի դեռ նրանք չեն հասկացել մեր նպատակը, մեր ձգտումները։... Մենք մտադիր չենք կոմունիստական կարգ պարտադրել ոչ մեկի, բայց ոչնչացնել մեր կարգը մեր տանը ոչ ոքի թույլ չենք տա»։

Ինչպես գրում է սովետական պատմաբան Ա. Բ. Կադիշևը, ոչ լրիվ տվյալներով 1920-ի աշնանը միայն թուրքերի կողմից օկուպացված շրջաններում Հայաստանը կորցրեց 198 հազար մարդ։ Թուրքերը կողոպտեցին և ոչնչացրին 18 միլիոն ռուբլու (ոսկով) ունեցվածք (50, էջ 753)։ Երևանի պետական համալսարանի պրոֆ. Ա. Եսայանը ցույց է տվել, որ Հայաստանի տերիտորիայի օկուպացիան թուրքական զորքերի կողմից ինչպես 1918-ին, այնպես էլ 1920—1921 թթ. միջազգային իրավունքի տարրական նորմերի ամենակոպիտ խախտումն էր։ Նա ապացուցել է, որ երիտթուրքերի հակահայկական գործողություններից, բռնություններից, զանգվածային սպանություններից, բռնաբարումներից ոչնչով չէին տարբերվում քեմալական զավթիչների գործողությունները։ Դրանք միևնույն թուրքական ավանդական հակահայկական քաղաքականության բաղկացուցիչ մասերն էին (47)։ Ալեքսանդրապոլի հեղկոմի անդամ Նուշիկ Զավարյանը 1920-ի դեկտեմբերի 25-ին Հայաստանի հեղկոմին զեկուցում էր, որ Ալեքսանդրապոլը գրավելուց հետո «ավելի

հստակ պարզվեց քեմալականների իսկական քաղաքական ֆիզիոնոմիան» (6, էջ 39)։

1921-ի հունիսի 6-ի անգլիական «Դեյլի Տելեգրաֆ» թերթի դիվանագիտական թղթակիցը հաղորդում էր, որ Ղարաքիլիսայում (այժմ Կիրովական) ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչ Չարլզ Պ. Գրանդը մի քանի մարդկանց ուղեկցությամբ այցելել էր Աղբուլաղ գյուղը, որից ոչ հեռու հայտնաբերվել էր 12 հազար դիակ։ Դրանք հիմնականում երեխաների հոշոտված մարմիններ էին։ Կարսի ու Ալեքսանդրապոլի փախստականներին թուրքական չարագործները դանակներով ու սրերով մորթել էին 1921-ի սկզբներին (74, էջ 151—152)։

Սիմոն Վրացյանը, այդ ազգադավ վնասարարը, փոխանակ գետինը մտներ իր փետրվարյան արկածախնդրությամբ ու «փրկության կոմիտեով», 1921-ի ամառը անմիջական կապի մեջ էր մտնում մի աչքանի Սուլթանովի հետ, «զգայացունց զինակցություն» կապում նրա հետ։ «Աֆֆարիմ երկուսներուդ ալ։ Թե քեզ «բժիշկ» Սուլթանով և թե քեզ Սիմոն Վրացյան»,— այսպես էր ավարտում Նիկողայոս Քալանթարը իր թղթակցությունը, գրված Բեռլինից 1921-ի հուլիսի 19-ին Բոստոնի «Ազգ» թերթին (3. 8. 1921, № 178)։

«Հայկական հարցը և միջազգային իրավունքը» իր աշխատության մեջ սփյուռքահայ ուսումնասիրող, իրավագետ Շավարշ Թորիկյանը մի հատուկ գլխում (9-րդ, միջազգային օրենքի խախտումներն ազգայնական Թուրքիայի կողմից) ցույց է տալիս, որ թուրքական ազգային ուխտը ոտնահարեց հայ ժողովրդի կենսական շահերը, ինքնորոշելու նրա իրավունքը։ Թուրք ազգայնականները շարունակեցին կոտորածների թուրքական ավանդական քաղաքականությունը։ Նա հիշեցնում է 1920-ի աշնանը Կարսի, Ալեքսանդրապոլի փաստերը, հայ գերիների ոչնչացումը, «պատերազմական բանտարկյալներու դեմ գործված ոճիրները», «բռնի տեղահանությունները», փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ Լոզանի պայմանագրի հոդվածների խախտումները և այլն (10, էջ 173—189)։

Փարիզի «Ժուռնալ դը Դեբայի» 1922-ի ապրիլի 2-ի համարում ֆրանսիացի Պ. Ժ. Լա-Շրնեն մի ընդարձակ, փաս-

տահարուստ հոդված էր տպագրել ամերիկյան նպաստամատույցի հավաստի վկայությունների հիման վրա։ Հոդվածագիրը ցույց էր տալիս թուրքական զավթիչների կողմից Հայաստանում, մասնավորապես Աղբուլաղի շրջանում կատարված վայրենությունների մասին։ Նյութերը պարզ ցույց էին տալիս, որ խաղաղ բնակչության կոտորածը կատարվել էր 1921-ի հունվարին։ Իսկ Անկարայի ներկայացուցիչը Փարիզում՝ Հյուսեին Ռահիբը, մի հայտարարություն էր հղել թերթի խմբագրությանը, փորձելով ցույց տալ, թե ավելի շատ տուժել էր մուսուլմանական բնակչությունը։ Թերթը ցույց էր տվել, որ օկուպանտները թուրքերն էին և ինչպե՞ս կարող էին թշվառ հայերը մուսուլմաններին կոտորել (16, № 2, 1922)։

Պատերազմից հետո Կիլիկիայում հավաքվեց մոտ 125 հազար հայություն։ Զեյթունի, Հաճնի, Ադանայի, Մարաշի, Դյորթ Յոլի, Ջեբել Մուսայի շրջաններում վերաշինության աշխատանքներ էին սկսվել։ Թուրք ազգայնականները հրով ու սրով մոխրակույտի վերածեցին, ցաք ու ցրիվ արեցին հայրենի վայրերը վերադառնալու հայերի ջանքերը։

Թուրքական բանդիտ-կամավորների ջոկատի հրամանատար Սելֆուլլահը 1920-ի ապրիլի 28-ին վերջնագիր է հղում Այնթապի հայությանը, պահանջելով հանձնվել իր զինված ջոկատի ողորմածությանը։ Նա խոսում էր թուրքերի «մարդասիրությունից», «մեծահոգությունից», հետո տալիս էր 24 ժամ ժամանակ և իր վերջնագիրն ավարտում էր Մարաշի հայ բնակչությանը ոչնչացնելու փաստը հիշեցնելով, թե «Մարաշ քաղաքի դասը խիստ ուսանելի է»։ Չէ որ ընդամենը երկու ամիս առաջ, 1920-ի փետրվարին ամենայն դաժանությամբ ոչնչացվեց Մարաշի հայ բնակչությունը։ 1921-ի հունվարին բելգիական «Le Flambeau» գրական-քաղաքական ամսագրի № 1-ում մի ականատեսի կողմից հրապարակվեց 1920-ի փետրվարին Մարաշի հայության նկատմամբ քեմալական մարդասպանների գործած չարագործության նկարագրությունը (100)։ Այս նյութի բովանդակությունը կասկած չի թողնում, որ 6 հազար հայ մարդիկ նախապես նշանակետ էին դարձել թուրքական կանիբալության համար։

Արդեն 1920-ի աշնանը, հայկական հարցին նվիրված իր մենագրության մեջ, որ 1920-ին լույս էր տեսել անգլերեն

Լոնդոնում, բազմավաստակ պատմաբան Նիկողայոս Ադոնցը նկատում էր, որ դաշնակից զորքերը գործում են Միջագետքում և Սիրիայում. ֆրանսիական գեներալները Կիլիկիայում տարված են սիրախաղերով ու մրցակցությամբ թուրք ազգայնականների հետ՝ հայ բնակչության հաշվին (69, էջ 7, 8)։

Ժան Ժորեսի բարեկամ ու հետնորդ, սոցիալիստ Թոմասը խստագույնս քննադատում էր Կիլիկիայի հարցում Ֆրանսիայի դիրքորոշումը, ցույց տալիս ֆրանսիական «Թան» թերթի բռնած դիրքը։ Նա հարց էր տալիս. «Ֆրանսիացիներ կա՞ն արդյոք Կիլիկիայում»։ Հայաստանը պետք է նեք ունենա Միջերկրականի վրա, Կիլիկիայում, հայտարարում էր սոցիալիստ Թոմասը։ «Ցեղերի բազմազանության մեջ հայերը հաշվերական մեծամասնություն են կազմում։ Նրանց կազմակերպվածությունը, մշակույթի մակարդակը, ազգային գիտակցությունը իրավունք են տալիս միավորելու այն հսկայական տերիտորիան, որ տարածվում է Տրապիզոնից մինչև Ալեքսանդրետ» (94, էջ 49)։

1922-ի ապրիլի 20-ի օրերով քեմալական կառավարությունը սեփականացնում էր Կիլիկիայի հայության անշարժ ու շարժական ունեցվածքներն ու հարստությունները։ Կիլիկիո Զավեն պատրիարքը, հայ բողոքականների առաջնորդ Զենոր Բեզջյանը, կաթոլիկների առաջնորդ եպիսկոպոս Ժան Նագլյանը 1922-ի հունիսի 4-ին Կ. Պոլսից դիմում էին Ազգերի լիգայի նախագահին, օգնություն ու պաշտպանություն խնդրում։ Բայց իզուր։ Քեմալական Թուրքիան յուրացնում էր հայ ժողովրդի քրտինքով ու տաղանդով ստեղծված բարիքները։

1922-ի հունիսի 4-ից 8-ը Պրագայում տեղի ունեցավ ազգային փոքրամասնություններին նվիրված միջազգային մի կոնֆերանս։ Եղան բուռն քննարկումներ։ Ընդունված մի բանաձևում ասվում էր, որ Ազգերի լիգան երաշխավորում է Փոքր Ասիայի, Հայաստանի, Սիրիայի ազգային փոքրամասնությունների անվտանգությունը (100, էջ 10)։ Ասվում էր այն մասին, որ օսմանները քանիցս դիմել են հայերին ոչնչացնելու պրակտիկային։ Կոնֆերանսի մասնակիցներն արձանագրում էին Կ. Պոլսում, Իզմիրում, Սիրիայում

և Փոքր Ասիայի տարբեր մասերում 800 հազար հայության առկայության փաստը, կոչ էին անում դիմելու բոլոր միջոցներին՝ նրանց փրկելու համար (100, էջ 79):

Հայ ժողովրդի բարեկամ, մեծ հումանիստ Նանսենի համախոհ Ա. Կրաֆտ-Բոնարը գրում էր, որ «Հայ ժողովրդի բնաջնջման վճիռ կայացրած թուրքական կառավարությանը մենք հակադրում ենք այդ ժողովրդի ապրելու իրավունքը, որովհետև նա գոյություն ունի, որովհետև նա դիմադրում է, ուզում է ապրել» (82, էջ 7):

1921-ի հոկտեմբերին համաձայնություն կնքելով Մուստաֆա Քեմալի հետ, ֆրանսիական «քաղաքակիրթ» գաղութարարները «լքեցին իրենց հայ բարեկամներին Թուրքիայի հարավում» (97, էջ 74):

1921-ի նոյեմբերի 22-ին Ֆրանսիայի ներկայացուցիչ Ֆրանկլին Բույոնի, քեմալական Թուրքիայի քաղաքացիական ու զինվորական ներկայացուցիչներ Համդի բեյի ու Մուհեդդին փաշայի ստորագրած կոչի մեջ քրիստոնյաներին կյանքի ու ապահովության երաշխիքներ էին տրվում. «Ընդհանուր ներումն իր լրիվ ուժի մեջ է և ընդգրկում է բոլորին: Անցյալը մեռած է և մոռացված»: Թուրքական իշխանությունները խոստանում էին հարգել հայերին ֆրանսիացիների տված անցագրերը: Եվ բազմաթիվ այլ խոստումներ ազատ ճանապարհորդելու և առևտուր անելու մասին: Բայց շատ չանցած, Ադանայում հրատարակված այդ հայտարարությունը մոռացված, ֆրանսիացիները քեմալական գազանություններին հանձնեցին Կիլիկիայի հայությանը:

1922-ի հոկտեմբերի 25—27-ին Ֆրանսիայի ազգային ժողովը քննարկում էր Թուրքիայի ազգային փոքրամասնությունների հարցը: Հռետորները տարբեր դիրքերից փորձում էին լուծումներ գտնել հույների, հայերի և մյուս քրիստոնյաների համար: Հռետորներից մեկը նշեց, որ պատերազմից առաջ ասիական Թուրքիայում 2,5 միլիոնից ավելի քրիստոնյա կար, իսկ նրա ավարտին միայն 300 հազար մարդ: Նա դեմ էր արտահայտվում Մուստաֆա Քեմալի պահանջին այդ մնացյալն էլ երկրից դուրս անելու մասին: Դեպուտատ Ռենե Դյուոն իր ձայնն էր միացնում Մոտայի, Ռոբերտ Սեսիլի, Ֆրանսիայի նախկին պրեզիդենտ Հելվեցիուսի պա-

հանջին՝ հայոց պապենական հողերի վրա հայերի համար օջախ ստեղծելու մասին: Նա ազգային ժողովի նախագահին կոչ էր անում պաշտպանել այդ հարցադրումը (95, էջ 47—49): Իսկ դեպուտատ Էդուարդ Սուլիերը հայտարարում էր. «Ֆրանսիան մուսուլմանական մեծ երկիր է»: Նա զգուշության կոչ էր անում մահմեդական աշխարհի, մասնավորապես Թուրքիայի, Մուստաֆա Քեմալի նկատմամբ:

Ա. Կրաֆտ-Բոնարը Լոզանի կոնֆերանսի որոշումները բնութագրեց որպես «անհերևակայելի անարդարության վերջին ակտ»: Օսմանյան դիվանագետները ոչ միայն հրաժարվեցին հիշատակել հայ ժողովրդի որևէ օրինական պահանջ, այլև նրա անունը: Խոստումները լքվեցին, պարտավորությունները չկատարվեցին, հայ ժողովուրդը ուխտադրժության զոհ դարձավ, պայմանագիրը (խոսքը Սևրի 1920-ի օգոստոսի պայմանագրի մասին է—Ջ. Կ.) պատռվեց: Անարդարությունը կատարյալ է, եզրակացնում էր նա (82, էջ 20—21): «Ոչ,— ասացին թուրք լիազոր-ներկայացուցիչները,— հայերը քրիստոնյաներ են... մեզ համար այլևս հայկական հարց գոյություն չունի»: Լոզանի պայմանագիրը, նրանց կարծիքով, վերջակետ էր դնում թուրքական կառավարության 1915-ի ծրագրին, որը նախատեսում էր Թուրքիայում հայ ցեղի բնաջնջում:

Փարիզի «Հայաստանի ձայն» շաբաթաթերթը (տնօրեն դոկտոր Նեյրուզ, 1922-ի դեկտեմբերին, № 2) գրում էր. «Տաճիկ պետական մարդիկ պետք է հասկանան, որ քանի բռնությունն ու կոտորածը կմնան սխալ և քանի հայ ժողովրդի իրավունքները կարհամարհվեն, հայերի «արտասահմանյան գործունեությունը» վերջ չի ունենա, նրանք կշարունակեն բախել քաղաքակիրթ աշխարհի դռները»:

Հայ մարդիկ պետք է ձգտեին դեպի Ռուսաստանը, դեպի փրկությունը: Չէ՞ որ կովկասյան ռուսական բանակի, այնուհետև կարմիր բանակի սպաներն ու զինվորները կերակրում էին, խնամում սովյալներին (20 ա): Ռուսական հողում նրանք գտնում էին հաց, ապահովություն, խաղաղ կյանք: Եվ, ընդհակառակը, թուրքական իշխանությունները 1914-ից մինչև 1920 թվականը, պատերազմի ու ինտերվենցիայի բռ-

լոր փալերում միայն հետապնդում, լկում, տանջում էին հայ մարդկանց (20 բ)։

Սովետական իշխանությունը կործանումից փրկեց հայ ժողովրդին, նրան դուրս բերեց սոցիալիստական վերածննդի փրկարար ափը։

□

Շուտով գզվռտեցին Մ. Քեմալն ու նրա իթթիհադական մտերիմ համախոհները։ Երիտթուրքերի պարագլուխները մեղադրվում էին ինչպես պետական դավաճանության մեջ, այնպես և քրեական գործերով, մեղադրվում էին գողության ու կողոպուտի մեջ։ Այդ ժամանակ էր, որ փոխադարձ մեղադրանքների հեղեղ տեղաց։ «Իզմիրի մեջ կատարվելիք մահափորձը պատճառ մը եղավ, որ Քեմալ անվախ և աներկյուղ կերպով մաքրագործե իթթիհադի երբեմնի պարագլուխները...» (23, № 80, 1926)։ Մահափորձը ծրագրողներն ու կազմակերպողները դատավարության ընթացքում հրապարակ հանեցին թուրքականության էությունը բացահայտող հետաքրքիր փաստեր։ Խուզարկությունների շնորհիվ մեջտեղ բերվեցին հին ու նոր թղթեր, վավերագրեր։ Սրանք ապացուցում էին, որ իթթիհադն անլեգալ աշխատանք էր տանում Մ. Քեմալի իշխանությունը տապալելու ուղղությամբ։ Գործակալներ ու լրտեսներ ուղարկվեցին Կ. Պոլիս, Իզմիր և գավառ։ Ապացուցվում էր, որ Մալթայի աքսորավայրից վերադարձած իթթիհադականները չորս տարի շարունակ (1922—1926) հյուսում էին իրենց դավադրության ոստայնը։ Մեջտեղ էին բերվում հին թղթեր՝ նոր հաշիվները մաքրելու համար։ 1921-ի նոյեմբերին Բեռլինից Կ. Պոլիս՝ դոկտոր Նազըմին գրած իր մի նամակում Ազմի փաշան ասում էր, թե «Մուստաֆա Քեմալից անպատճառ հաշիվ պետք է ունենք, բայց հիմա ժամանակը չէ» (23, № 61, 1926)։

Հեղաշրջումը հաջող գլուխ բերելու դեպքում սրանք ծրագրում էին «ջարդել և կողոպտել Պոլիս և գավառները ապրող հայերին ու հույներին» (23, № 68—69, 1926)։ Երբ Իզմիրում դատում էին Ջավիդ բեյին, նա խոստովանում էր, որ Կ. Պոլսում դոկտոր Նազըմի, Վեհիբի, Շյուքրիի հետ

դաղտնի հավաքներ էին գումարել Մ. Քեմալի դեմ (23 № 59, 1926)։ Սա նամակագրական կապի մեջ էր Հալաճյան էֆենդու հետ, որը օսմանյան պալատի վարչության իրավական խորհրդականն էր եղել և ընկերություն արել Ջավիդի հետ։ Դատարանի առաջ էին կանգնել Կարաբեքիրն ու Ալի Ֆուադ Ջեբեսոյը՝ Մուստաֆա Քեմալի երեկվա ամենամտերիմ համախոհները։ Իզմիրի մեջ կախաղան բարձրացան իթթիհադի առաջնորդ համարված և պատասխանատու պաշտոններ վարած մի շարք փաշաներ ու բեյեր։ Այնուհետև «Իթթիհադ թերագգը» կուսակցության տասնվեց անդամների դատը տեղի ունեցավ Անկարայում։ Դրանց մեջ էին Ջավիդ բեյը, Նազըմ բեյը, Միդհատ Շյուքրին։

1926-ի դատավարության ժամանակ ապացուցվեց, որ էնվերը մի մեծ ադամանդ (400 հազար ոսկի արժողությամբ) Եվրոպա էր տարել վաճառելու։ Իթթիհադի կողոպտած դրամից մեկևկես միլիոն ոսկին Բեհաէդդին Շաքիրի, Միդհատ Շյուքրիի, դոկտոր Նազըմի և այլոց անուններով դրված էր շվեյցարական և հոլանդական բանկերում։ Եվրոպա անցնելուց հետո այս դրամը բաժանվեց ղեկավար մի քանի գործիչների վրա և դրվեց առևտրական ձեռնարկների մեջ։ Այս փողն օգտագործվեց նաև քեմալական Թուրքիայում, մասնավորապես Կ. Պոլսում համալների, նավավարների շրջանում անլեգալ աշխատանք ծավալելու համար (23, № 64, 1926)։ Անկարայի դատարանը մահվան դատապարտեց ֆինանսների նախկին մինիստր Ջավիդ բեյին, կրթական նախկին մինիստր Նազըմ բեյին, նախկին երեսփոխան Հիլմի բեյին, իթթիհադի նախկին քարտուղար Նայիլ բեյին։

Թուրքական բանակի հազարապետ Չերքեզ Մեհմեդ Արիֆը Կահիրեում դաշնակցական «Հուսաբեր» թերթին հղել էր մի նամակ ու խնդրել այն հրապարակել։ Այնտեղ նա ավել էր երիտթուրքերի աչքի ընկնող դեմքերի ճշգրիտ բնութագրությունը, քանզի ճանաչել էր նրանց մոտիկից։ Ռյուշտին Էրզրումի երեսփոխանն էր և հայերին բնաջնջելու համար ստեղծված մասնավոր հանձնաժողովի նախագահ։ «Սարսափելի հայատյաց անպիտան մը»,— գրում է նրա մասին թուրք հազարապետը։ Նա Շյուքրիին համարում է Թալեաթի «աչքի լույսը»։ «Իզմիրի այս ոճրագործ երեսփոխանը»

«Հայկական ջարդերն ու սարսափները կազմակերպող ու գործադրող անխիղճ թշվառականը»։ Ջանփոլադին նա անվանում էր ավազակ, Թալեաթի «ամենասիրելի գործիքը»։ Սա Անատոլիայում «Հայկական եղեռնին և կողոպուտին կազմակերպողը, գործադրողը եղած է» (23, № 68—69, 1926)։

Հիրավի, հանրապետական Թուրքիան ցնցվում էր դասակարգային սուր հակասություններից: Դժվարին էր առաջընթացի ուղին: Կոմունիստներն անլեգալ դրության մեջ էին: Ներքին հետադիմական ուժերն ընդդիմանում էին բարեփոխումների քաղաքականությանը: Իթթիհադականները ձգտում էին ներսից պայթեցնել նոր իշխանության հիմքերը: Նրանց պաշտպանում էին օտարերկրյա տերությունների գաղտնի ծառայությունները: Ահավասիկ այս պայմաններում ազգայնականների իշխանությունը դիմեց խիստ միջոցների, կիրառեց պատժի առավել ծայրահեղ մեթոդներ՝ պահպանելու և ամրապնդելու համար իր դիրքերը: Ահա թե ինչու կառափնարան էին գնալու նաև երեկվա համախոհներն ու ժամանակավոր ուղեկիցները:

Մ. Քեմալը դատեց 49 իթթիհադականների։ Դատախազը նրանց մեղադրանք ներկայացրեց Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու, Քեմալի դեմ մահափորձ անելու և պետական հեղաշրջում կազմակերպելու համար։ Ամբաստանյալները հերքում էին իրենց ներկայացված մեղադրանքները, առաջին համաշխարհային պատերազմի հետ կապված խնդիրներն ամբողջությամբ բարդում էին վաղուց արդեն սպանված Էնվերի, Թալեաթի, Ջեմալի, Սայիդ Հալիմ փաշայի վրա (23, № 62, 1926)։ Բնորոշ է, որ իր քաղաքական ախոյաններին մեղադրելիս Մ. Քեմալը նորից հիշել էր հայոց կոտորածները, սակայն իր շահերին համապատասխան մոռացության տալով 1920-ի աշնանը իր և այժմ դատվող Կարաբեքիրի հակահայկական «քաջագործությունները»։ Հայտնի

երիտթուրք գործիչ, նախկին ֆինանսների մինիստր, մահմեդական-հրեա Ջավիդ բեյը կախաղան բարձրացվեց, թեև նրան ներելու օգտին միջամտեցին սպայակույտը, նախարարների խորհուրդը, Ֆևզի փաշան և ուրիշներ։ Մահապատիժը գործադրվեց Իսմեթ փաշայի, Քեմալ փաշայի և Ալի բեյի խորհրդակցական ժողովից հետո (23, № 80, 1926)։ Իթթիհադական գործիչների մահապատիժների առիթով հայոց թերթերը գրում էին, որ «մինչև իսկ Մուստաֆա Քեմալի կախաղաններու պիղծ չվանների վերևը կտեսնենք արդարության հաղթանակը» (23, № 73, 1926)։

Կախաղան հանվեցին Մուստաֆա Քեմալի անձնական ախոյանները, իթթիհադականները, բայց ոչ թուրքիզմն ու պանթուրքիզմը։

Քեմալիզմի հակահայկական քաղաքականությունը շարունակվեց 20-ական և 30-ական թվականներին։ Լոզանի կոնֆերանսում, թե նրանից հետո թուրքական պետականությունը վարեց շեշտված հակահայկական գիծ, վնաս պատճառելով Սովետական Հայաստանի, աշխարհի տարբեր երկրներն անցած հայոց գաղթականության շահերին։

«Հայաստանի մանդատին» նվիրված իր գրքում Ջեյմս Ջիգնեյը փաստաթղթերի միջոցով ցույց է տալիս, որ մանդատատեր տերությունը պարտավորվելու էր բացահայտել և պատժել կոտորածների ու դաժանությունների կազմակերպիչներին, բոլոր այն մեղավոր անձանց, ովքեր դեր էին խաղացել արևմտահայության ողբերգության մեջ։ Առանձնապես շեշտվում էր կոտորածների և ավերածությունների համար Թուրքիայի վարձահատույց լինելու անհրաժեշտությունը (77, էջ 81—82)։

Մանդատատեր պետությունը պետք է պատասխանատու լիներ թուրքական վարչության վերացման, բնակչության զինաթափման, կոտորածների մեղավորներին պատժելու, ժողովրդական ցեղերին հսկողության տակ վերցնելու, Համիդի և երիտթուրքերի օրոք հայերի հողերի վրա բնակեցված մուհաջիրների (վերաբնակիչների) խնդիրը կարգավորելու, քրիստոնյա կանանց հարեմներից ազատելու, դպրոցները, եկեղեցիները և վանքերը քանդած թուրքերից փոխհատուցում ստանալու համար։ Հայկական ծագում ունեցող յուրաքանչ-

յուր անձ կարող էր հինգ տարվա ընթացքում վերահաստատել իր և իր զավակների ազգությունը։ Այսինքն, հաստատվում էր մի կարգ, ըստ որի բռնի ձևով ազգափոխ, կրոնափոխ արված մարդիկ կարող էին առանց վախենալու վերադառնալ սեփական ազգության գիրկը (77, էջ 81—82)։

Սակայն Մուստաֆա Քեմալի կառավարությունը շարունակում էր իր նախորդների թշնամական գիծը հայ ժողովրդի նկատմամբ, թե երկրի ներսում, թե դրսում։ Մի շովինիստ թուրք հրապարակախոս կասկածի տակ էր վերցնում դեպի Սովետական Հայաստան հայ գաղթականների ներգաղթի բուն նպատակը «Վագըթ» թերթի էջերում։ Նա ներգաղթի փաստի մեջ թշնամական տրամադրություն էր որոնում Թուրքիայի նկատմամբ (9, № 10, 1925)։

1926-ին դեռ շարունակվում էր Վանի մեջ հայապատկան լքյալ տների, այգիների և արտերի աճուրդը (9, № 44, 1926)։

Կահիրեի «Հուսաբերում» 1926-ին տպագրած իր նամակում նույն Ջերքեզ Մեհմեդ Արիֆը գրում էր. «Հարգելի հայեր, ձեր ձեռքեն եկածեն ու կարողության ներածին չափ աշխատեք հայ չձըգել Թուրքիո մեջ, որովհետև բոլոր թուրքերուն, անոնք ըլլան իթթիհատ, թե Բերազգը փերվեր, խալքճի, հանրապետական, թե խալիֆայական, բոլորին ալ քաղաքականությունը, վերաբերումը դեպի հայերը մեկ է»։ «... Անոնք որևէ ատեն չեն հրաժարիր հայերու, հույներու արյունը հոսեցնելե և անոնց հարստությունը թալանելե։ Մի հավատաք անոնց խոսքին և մի վստահեք անանոց պատվին ու արժանապատվության»։ Նա օրինակ է բերում Բալըքեսիր քաղաքի դեպքը, երբ թուրք տնօրենները հայերին ապահովություն խոստացան Քեմալի բանակի քաղաք մտնելուց հետո։ Սակայն խոսքը դրժեցին և տասը հազարի չափ հայությունը կողոպտեցին ու լլկեցին։ Մյուս օրինակը, որ բերում էր թուրք զինվորականը, վերաբերում էր Բանդըրմա քաղաքի մատույցներում կատարված հրեշավոր դեպքին. քաղաքին մոտեցող թուրք բանակին դիմավորում են հայ պատվիրակները թուրքական դրոշով, շնորհավորում հաղթանակը։ Թուրք հրամանատարը հրամայում է զինվորներին «գնդակահարել զանոնք և դիակները շարել ճամբուն եզերքը»։ Քաղաք մտած զորքը նույն ոճրագործությունը կա-

տարեց հայ բնակչության նկատմամբ։ Նա եզրակացնում էր, որ «հինգ հարյուր տարվան թուրքական բարբարոսությանց և վայրագությանց մեջ իթթիհատի և Քեմալի կառավարության ըրածներն ամեն չափ ու սահման անցուցած են» (23, № 68—69, 1926)։

Մուստաֆա Քեմալի կառավարման տարիներին նույն Թեքին Ալփը, երիտթուրքերի կողմից սիրված պանթուրքիստը, իր ակտիվ դերի մեջ էր։ Նախորդ գրքում մենք անդրադարձել ենք նրա ռեակցիոն-շովինիստական հայացքներին։ Նորից հիշեցնենք, որ այդ կեղծանունի տակ թաքնվողը 1883-ին Սալոնիկում ծնված հրեա Մոյիզ Քոհենն էր, որը թուրքերենի, եբրայերենի իմացությունից բացի, օգտվում էր եվրոպական լեզուներից և միաժամանակ դարձել էր Եվրոպայում երիտթուրքական տեսության ու գործի ակտիվ պրոպագանդիստը։ Քեմալական կառավարությունը երիտթուրքերի օրինակով շարունակեց հրապարակել նրա պանթուրքիստական գրվածքները։ 1928-ին Ստամբուլում լույս տեսավ նրա հոդվածների ժողովածուն, որը վերնագրված էր «Թուրքացման քաղաքականություն»։ Սա մի կոչ էր թուրքական պետությանը՝ վերջնականապես թուրքացնելու երկրի բոլոր բնակիչներին, որտեղ պարզում էր թուրքացման «առավելություն», սկզբունքների, նպատակի իմաստը։

1936-ին Թեքին Ալփը հրապարակեց իր «Քեմալիզմ» գիրքը։ Այն լույս տեսավ նաև ֆրանսերեն, Ֆրանսիայի պառլամենտի նախագահ Էրիոյի առաջաբանով, հետո չեխերեն՝ Պրագայի համալսարանի ռեկտորի առաջաբանով (Մ. Քեմալի հակակոմունիզմը ոգևորել էր նրանց)։ Սա Մուստաֆա Քեմալի անձի գովերգություն էր։ Հեղինակն ապացուցում էր, որ թուրքիզմի գաղափարներն ու գործը հուսալի ձեռքերում էին։ 1944-ին արդեն լույս տեսավ Թեքին Ալփի ամենաասանձարձակ գործերից մեկը՝ «Թուրքական ոգի», որտեղ ազգային ու ռասայական բացառիկության դիրքերից առաջ էր քաշվում թուրք ազգի դերը մեծացնելու, նրա իշխանության ներքո այլ ժողովուրդների հավաքագրելու, սուլթանների, օսմանյան կայսրության փառքը վերահաստատելու գաղափարները։

Թալեաթի այրու՝ Հայրիե Թալեաթ խանումի պատմածներից տեղեկանում ենք, թե Մուստաֆա Քեմալն ինչպես էր բնութագրում մեծ մարդասպանին, նրա մատուցած ծառայությունները թուրքական պետականությանը. «Գիտեք Հայրիե հանըմ, Թալեաթ փաշայի դեմ որևէ թշնամություն չունիմ։ Առաջին աշխարհամարտի մեր մասնակցության մեջ զայն հանցավոր չեմ նկատեր, պատերազմի մասնակցելու ստիպված էինք։ Անկախության պատերազմի միջոցին, մեզ կռնակեն հարվածել ջանացող փոքրամասնությունները փոխադրելու գործին մեջ փաշան մեզի մեծ օգտակարություններ մատուցանեց» («Հառաջ», 7. 12. 1982)։

Ահա թե ինչ էր բարբաջում Մուստաֆա Քեմալի զինակից Ռիզան 1936-ին (այն ժամանակ նա կառավարող ժողովրդահանրապետական կուսակցության քարտուղարն էր). «Անկեղծորեն ցանկանում ենք, որպեսզի հայը դառնա իսկական թուրք քաղաքացի... Ազգայնական Թուրքիան ձգտում է աճեցնել լիարժեք թուրք քաղաքացիների։ Հայերին մնում է թեթևացնել մեր գործը։ Դա ճիշտ է, որ մենք նացիոնալիստներ ենք, բայց մենք ռասիստներ չենք, մի շարք այլ երկրների նման»։ Նշելով, որ «հայերն ամենուրեք դատապարտված են ասիմիլյացիայի», նա ասում էր, թե «թուրքերը ձգտում են ստեղծել «միասնական ազգ» և որ «հայերը պետք է մասնակցեն այդ բարձր նպատակի իրագործմանը» (49, էջ 47)։ Իսկ ինչո՞վ սա ֆաշիզմ չէ։ Ընթերցողին հիշեցնենք, որ սա իտալական ու գերմանական ֆաշիզմի վերելքի պահն էր և քեմալականները նրանց նմանվելու շատ նշաններ էին ցույց տալիս։

Իր կառավարման տարիներին Մուստաֆա Քեմալը քրդերին կոտորում էր այնպիսի դաժանությամբ, ինչպես սուլթանի թուրքերը կոտորում էին հույներին, հայերին և բուլղարներին։ Նրա ուղարկած «Անկախության տրիբունալները» կախում էին, գնդակահարում, բանտարկում հազարավոր անմեղ մարդկանց։ 46 քուրդ ղեկավարների կախեցին Դիարբեքիրի մեծ հրապարակում (72, էջ 223)։

Պանթուրքիզմի կենսունակությունն աշխուժացավ Եվրոպայում հիտլերյան ֆաշիզմի ակտիվության ու Սովետական

Միության դեմ նրա սանձազերծած ագրեսիվ պատերազմի տարիներին։

Պանթուրքիզմի պարագլուխները կապեր էին հաստատել ինչպես գերմանական ֆաշիստների, այնպես և իտալական, ճապոնական իմպերիալիստական շրջանների հետ, նրանց միջոցով փորձում էին իրականացնել իրենց ցնդաբանական պլանները։ Ջելալ Նուրին այս առիթով գրել է. «Եթե Ճապոնիան համաձայնության մեջ մտնի իսլամի հետ, ապա... պատմությունը կսկսի իր նոր ժամանակաշրջանը» (58, էջ 73)։

1935-ին պանթուրքիստ Նիհալ Ատսըզը հրապարակեց մի սանձարձակ հակակոմունիստական գրքույկ, որը վերնագրված էր այսպես. «Կոմունիստական Դոն Քիշոտին՝ պրոլետարական բուրժուական ընկեր Նազըմ Հիքմեթին», որտեղ ամենակոպիտ կերպով հարձակումներ էր գործում Թուրքիայի կոմունիստների և բոլոր դեմոկրատական ուժերի վրա, զրպարտում Սովետական Միությանը» (45, էջ 102—103)։ Հենց այդ ժամանակ էր, որ Քեմալ Աթաթուրքն ասել էր, թե «չպետք է մոռանալ, որ թուրքական աշխարհի ամենակատաղի թշնամին կոմունիզմն է»։ Այժմ ոմանք փորձում են ապացուցել, թե նրան իբր վերագրված են այդ խոսքերը, որ նա այդպիսի բան չի ասել (45, էջ 105)։

Սակայն պատմական իրողություն է, որ 30-ական թթ. կեսերից Քեմալ Աթաթուրքն ամբողջապես հակվեց դեպի կապիտալիստական Արևմուտքը, 1936-ի Մոնտրեյի կոնֆերանսում հակասովետական գործարք կնքեց նրա հետ և, ընդհանրապես, բացահայտ տուրք տվեց հակակոմունիզմին։ Ինչպես գրում է սովետական թուրքագետ Է. Հասանովան, «ամբողջապես չքացավ թուրքական կառավարության իդեոլոգիական «չեզոքությունը»։ Իշխանությունների թողտվությամբ և ուղղակի խրախուսումով երկրում ծավալվեց հակակոմունիզմի սանձարձակ պրոպագանդա, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելով հակակոմունիզմն ընդունեց բացահայտ հակասովետական բնույթ» (45, էջ 103)։

1919-ին Ստամբուլում գերմանացիների ստեղծած «Թուրք-մուսուլմանական լիգան» որն իր շուրջն էր համախմբել ինչ-

պես երիտթուրքերի, այնպես և Սովետական Ռուսաստանին թշնամաբար տրամադրված վտարանդի թափթփուկների, տարբեր անունների տակ գոյություն ունեցավ մինչև 1937-ը։ Վերջում կազմակերպությունը կոչվում էր «Թուրքեստանյան երիտասարդության միություն»։ 1941-ին պանթուրքիստները ասպարեզ եկան նոր ցուցանակի տակ։ Նրանց կազմակերպությունը կոչվում էր «Թուրքական կուլտուրայի լիգա» (41 էջ 80—81)։ 1943-ին պանթուրքիստները լույս ընծայեցին «Իսլամո-թուրքական հանրագիտարանը», որը բազմահատորանոց մի ռասիստական-ազգայնական հակաժողովրդական հրապարակում էր։

1941-ի հուլիսին, թուրքական «Բոզկուրտ» (գորշ գայլ) ամսագրի 11-րդ համարում տպագրվել էր «Թուրքիզմը սպասում է» հոդվածը, ապագա «Մեծ Թուրանի» քարտեզով, որի կազմի մեջ էին մտցված Սովետական Անդրկովկասը և Միջին Ասիան։ «Չինարալթի» ամսագրում պանթուրքիստական բանաստեղծները գոչում էին. «Թուրքերը կնվաճեն Կովկասը և Ղրիմը, և կվռնդեն թշնամիներին», «կգա օրը, երբ թուրք ազգը կքանդի Կովկասի, Ղրիմի և Բուխարայի ամրոցները» (41, էջ 82—83)։

1941-ի օգոստոսի 5-ին ֆոն Պապենը գրում էր Բեռլին, որ թուրքական կառավարությունը չափազանց մեծ հետաքրքրություն է դրսևորում իրենց արյունակիցների, «մասնավորապես Ադրբեջանի թուրքերի նկատմամբ»։ Դեսպանը գրում էր, թե թուրքերը հիշել ու վերլուծում են 1918-ի դեպքերը, մտածում են Ադրբեջանը, Բաքվի նավթահանքերը զավթելու մասին։ Նա հաղորդում էր, որ այս նպատակով մի հատուկ կոմիտե էր ստեղծել, որը մշակում էր Ադրբեջանը, Իրանի և Կասպից ծովի ափերը թուրքացնելու, Թուրքիային կցելու հանգամանալի պլանները։ Մի տարի անց, 1942-ի օգոստոսի 5-ին, երբ նացիստական բանակներն արշավում էին Արևելք, նույն տոնով արդեն հրապարակով հանդես էր գալիս թուրքական վարչապետ Շյուքրի Սարաջօղլին (103, էջ 358)։

1942-ի նոյեմբերին պանթուրքիստ Իզմայիլ Ջյուխտուն «Գեկ Բերյու» ամսագրում գրում էր. «Մեր մայրը մեկն է, հայրը՝ մեկը։ Ադրբեջանը մեզ համար հարազատ եղբայր է։

հիմնականում մենք միասնական ենք, բայց վաղը մենք վերջնականապես կձուլվենք» (41, էջ 84)։

1944-ի հունվարին Անկարայում մեծ տպաքանակով լույս ընծայվեց «Նացիոնալիզմի ուղու վրա» գիրքը, որի էջերում անսքող կերպով թուրքական նացիոնալիզմը համեմատվում էր ֆաշիզմի հետ, կոչ էր արվում հարձակվել Սովետական Միության վրա (41, էջ 84)։

Ստալինգրադի տակ ֆաշիստական հորդաների նկատմամբ սովետական զինված ուժերի պատմական հաղթանակը չափավորեց Սովետական Միության դեմ պանթուրքիստների սանձարձակ ծրագրերը։ Պանթուրքիստները ստիպված եղան բավարարվել միայն մեծ Թուրանի երազի շուրջը շատախոսություններով։ Նրանց գործնական քայլերը դատապարտված էին պարտության։

1. Լենին Վ. Ի. Երկեր, 4-րդ հրատ.։
2. Ալպան Չեքին Աթաթուրքի սոցիալական հայացքները, Ստամբուլ, 1965 (թարգմ. թուրքերենից)։
3. Ալիխանյան Ս. Ս. Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1964։
4. Առենյան (Կասյան) Ս. Ո՞ւր է ելքը, Նոր Նախիջևան, 1920։
5. «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, 1967։
6. Բայիկյան Օ., Էվոյան Վ., Սարգսյան Գ., Թուրքիայի նվաճողական քաղաքականությունը Հայաստանում, փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1 (28), 1971։
7. Դատավարություն Թալեաթ փաշայի, սղագրական զեկույցում, Վիեննա, 1921։
8. Եսայան Ս. Հայաստանի միջազգային իրավական դրությունը, Երևան, 1967։
9. «Երևան», թերթ, Փարիզ։
10. Թոռիկյան Շ. Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976։
11. «Խորհրդային Հայաստան», թերթ, Երևան։
12. «Կոմունիստ», թերթ, Բաքու։
13. «Լենինյան ուղիով», ամսագիր, Երևան։
14. «Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ, 1967, № 7։
15. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972։

16. «Հայաստանի ձայն», թերթ, Փարիզ։
17. «Հայրենիք», ամսագիր, Բոստոն։
18. «Հայրենիք», թերթ, Բոստոն։
19. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Նյութերի և փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1960։
20. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 68/200, ց. 1, գ. 769։
20 ա. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57. ց. 1, գ. 625։
20 բ. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 634։
21. Մակինցյան Պ. Նոր Թուրքիան, «Նորք», Երևան, 1924, գիրք 4-րդ։
22. ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1։
23. «Մշակ», թերթ, Ֆրեզնո։
24. «Նոր Արևելք», թերթ, Երևան։
25. Զորմիսյան Լ. Կուսակցությունները, Բեյրութ, 1965։
26. Ջեմալ Քութայ Կարաբեքիրն ինչպես բնաջնջեց Հայաստանը», 1956 (թարգմ. թուրքերենից Խ. Ամիրյանի), 1964։
27. Մելան Ջաղե Ռիֆար Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, Բեյրութ, 1938։
28. Սարգսյան Ե. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964։
29. Սարգսյան Ե. Ղ., Սահակյան Ռ. Գ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, Հայպետհրատ, 1963, էջ 96։
30. Սերոբյան Մ. Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937։
31. Վենապետյան Ի., Նոր սերունդը՝ քավության նոխազ Ա., Հայաստանի վերջին անկյունադարձը, 1920-ին, Բեյրութ, 1961։
32. «Վերջին լուր», թերթ, Կ. Պոլիս։
33. Տեր-Հակոբյան Հ. Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921։
34. **Ататюрк, Кемаль.** Избранные речи и выступления, М., 1966.
35. **Алибеков, Ингилаб В.** Ататюрк — «Отец турок», «Курьер Юнеско», декабрь 1981, стр. 36.
36. **Алиев Г. З.** Турция в период правления младотурок (1908—1918 гг.), М., 1972.
37. **Арипов Р., Мильштейн Н.,** Щит и меч революции (Из истории органов госбезопасности Узбекистана, 1918—1924), сб. «Чекисты», Тешкент, 1978.
38. **Астахов Г.,** От султаната к демократической Турции, М.—Л., 1926.
39. **Багиров Ю. А.,** Из истории советско-турецких отношений в 1920—1922 гг. (по материалам Азербайджанской ССР), Баку, 1965.

40. Большая Советская Энциклопедия. т. 30, М., 1930.
41. «Большевик», журнал, Москва.
42. **Бутаев И.,** Национальные революции на Востоке, Проблема Турции, Л., 1925.
43. Бюллетень Народного Комиссариата Иностранных дел, М.
44. **Васюков В.,** Внешняя политика временного правительства, М., 1966.
45. **Гасанова Э. Ю.,** Антикоммунизм в Турции, сб. «Национально-освободительное движение и современная идеологическая борьба», Баку, 1973.
46. **Джафарова А. А.,** Турецкие женщины в национально-освободительной борьбе 1918—1923 гг., сб. «Страны Ближнего и Среднего Востока», М., 1972.
47. **Есаян А.,** Режим турецкой оккупации территорий Армении в свете международного права, Ученые записки Ереванского Университета, серия юрид. науки, т. 86, выпуск 4, 1963.
48. **Ешке, Готтхард,** Роль коммунизма в русско-турецких отношениях (1919—1922), Публичная лекция, прочитанная на фр. языке 26 апреля 1963 г. в ин-те по изучению Турции Парижского университета, «Орьен» журнал, Париж, 1963, № 26.
49. **Инджикян О. Г.,** На суд истории, Известия АН Арм. ССР, Общ. наук, № 4, 1965.
50. **Кадышев А. Б.,** Армяно-турецкая война 1920, «Историческая Энциклопедия», т. I., М., 1961.
51. **Кадышев А. Б.,** Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960.
52. **Кемаль М.,** Путь Новой Турции, т. 3, М.. 1929—1934:
53. **Ленин В. И.,** ПСС:
54. **Лудшувейнт Е. Ф.,** Послеоктябрьский революционный подъем в Турции (ноябрь 1917-май 1919), Вестник Московского Университета, серия общ. наук, выпуск 3, № 7, июль, 1949.
55. «Новый Восток», М., № 1. 1923.
56. «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне», (вступительная статья проф. Ю. В. Ключникова), М., 1927.
57. **Тархов В.,** Занятие г. Нахичевани и первая встреча Красной армии с войсками Кемаль-паши, «Военный вестник» (двухнедельный журнал), № 8, М., 15. IV. 1922 г.

58. **Тверитинова А. С.,** Младотурки и пантюркизм, «Краткие сообщения института Востоковедения», № XXII, М., 1956.
59. **Туманов А.,** «Дипломатическая история республики Армения» (рукопись), Архив грузинского филиала ИМЛ, ф. 2914, д. 503.
60. **Хармандарян С.,** Ленин и становление Закавказской федерации, Ереван, 1969.
61. **Хейфец А. Н.,** Советские республики и народы Востока (1918—1922 гг.) «Вопросы истории», № 11, 1972 г.
62. «Чекисты», сборник, Ташкент, 1978.
63. **Шамсутдинов А. М.,** Кемалистская революция, «Историческая энциклопедия» т. 7, М., 1965.
64. **Шамсутдинов А. М.,** Национально-освободительная борьба в Турции, 1918—1923, М., 1966.
65. **Шпилькова В. И.,** Имп. политика США в отношении Турции (1914—1920), стр. 115 М.Г.П.И. им. Ленина, уч. пособие, М., 1960.
66. **Шпилькова В. И.,** Младотурецкая революция, М., 1977.
67. **Шпилькова В. И.,** Турецкий вопрос на Парижской мирной конференции 1919 г., Моск. пед. и-т им. Ленина, уч. записки, т. CIX, выпуск 6, М., 1957.
68. **Юст К.,** Анатолийская печать. Тифлис, 1922.
69. **Adonz N.,** Professor of Petrograd University, Towards the solution of the Armenian question, London, 1920, p. 7, 8.
70. **André P.I.** L'Islam et Les Races, tome premier, Paris, 1922.
71. Armenia and the Settlement. Report of Public Meeting to express simpathy with the Armenian Cause, London, 1919.
72. **Armstrong H.C.** Gray Wolf, The Life of Kemal Ataturk, N.Y., 1961.
73. **Ataturk Kemal,** NUTUK, Cifl 1, 1919-1920, Istanbul, 1969.
74. **Boyajian D. H.,** Armenia: The Case for a Forgotten Genocide New Jersey, 1972.
75. **Bryce V.,** The Future of Armenia. Reprinted from the "Contemporary Review", December, 1918, London.
76. Congressional Record, May 24, 1920.
77. **Gidney, B. James** A mandate for Armenia, Kent, Ohio. The Kent State University press, 1967.
78. Halide, Edip The Turkish Ordeal, London, 1928.
79. **Housepian M.** Smyrna 1922. The Destruction of the City London, 1972.

80. **Kempner, Von Robert M. W.** (Deputy US — chief accuser during Nurenberg Tribunal) Ein jude Kämpfte die Rettung Von einer Million armenisher Chrishen, "Emuna", Israeiforum, (Federal Republik, issue 3, 1978).
81. **Kinross, Lord** Atatürk — The Rebirth of a Nation, London, 1965.
82. **Krafft A.** Bonnard, le Probleme Armenien, Genève, 1924, p. 7.
83. L'Extermination Des Chrètiens d'Orient, Paris, 1922.
84. L'Armee. La Chambre et Le Cabinet Kemaliste en mars 1922 Նուբարյան մատենադարան, Փարիզ.
85. **C. Leonard Leese** Armenia and the Allies, London, 1920, p. 11
86. Les Revendications Turques. La gerre Turco-Grecque et la Question de Smyrne. La Politique de l'Angleterre en Orient L'Accord d'Angora. Les Intérêts Vitaux de la France. Conférence faite au Comité "France-Orient" Par Salih Gourdji. 4 janvier 1922, p. 3-5.
87. **Mackenzie,** Crimes of Turkish Misrule, "The New York Times Current History" N.Y., october, 1922, p. 31.
88. **Maemun G.,** Afganistan from Durius to Ammanullah, London, 1923.
89. **Mandelstam,** Andre La Société des Nations et les Puissances Devant le problème Armenien 2-ėm èdition, Liban, 1970.
90. **Memoire** Sur les origines L'Organisation et le developpement du Kemalisme en Turquie, Նուբարյան մատենադարան, Փարիզ.
91. Omer Kiazim, L'Aventure Kémaliste Elle est un danger:
pour L'Orient
pour L'Europe
pour La Paix
Paris, L'Edition Universelle, 1921.
92. Papers Relating to the Foreign Relations of the United States vol. II, III, 1922, Washington.
93. Parliamentary Debates House of Lords, November 13, 1918, House of Commons, October 23, 24, 30, 31, November 6, 7, 12, 14, 1918, The Pelican Press, London, 1918, p. 1-5.
94. Pour la Liberation de L'Arménie. Discours de Mm. A. Meillet, A. Tchobanian, M. Varandian, Mgr. Balakian, Th. Vellianitis, Dr. C. Dluski, Herbert Adams Gibbons, Albert Thomas, prononeés à la grande Réunion organisée par L'Union Intellectuelle Arménienne de Paris à la Salle des Agriculteurs le 28 Février 1919, Paris, 1920.

95. **Puaux, Rene** La Question D'orient Devant Le Parllement, Seance du 27 October 1922, Paris, 1922, p.47-49.
96. **Rifat, Von D-r Mansur'** Das Geheimis der Ermordung Talaat Paschas 985; Talaat Paschas Prozess. Sein Verlauf und Sein Ende. Ein letztes Wort zur Armenischen Frage, 60s, Berlin 1921.
97. **Robinson, Richard,** The First Turkish Republic, A Case Study in National Development, Harvard University press, Cambridge, Massachusetts, 1963.
98. **Savadjian Léon,** L'Agonie des Chrétiens, Paris, 1923.
99. The Times, London.
100. Un Episode de la Tragédie arménienne. Le Massacre de Marache (Février 1920), par le R.P. Materne Muré, superieur du couvent et curé de la paroisse des Péres Franciscains de Terre — Sainte à Marache. Rapport trasmis par le R. P. Lappan, de l'Ordre des Fréres Mineurs, Commissaire Général de Terre — Sainte. "Le Flambeau", revue belge des questions politiques et littéraires, 4e année N 1, janvier, 1921.
101. Union Internationale des Associations pour la société des Nations. Les Minorités Nationales. Rapport de la commission speciale sur les Minorités de Race, de Langue § De Religion. Présenté a la conférence plénière De L'Union Internationale des Associatione pour la Société Des Nations. Prague 4 — 8 Juin 1922, Bruxelles, 1922, p. 10.
102. **Véou, Paul** La Passion de La Cilicie 1919-1922, Paris, 1954.
103. **Walker, Christ**, Armenia: The Survival of a Nation, N. Y., 1980.
104. **Ward, Mark H. MD.** The Deportations in Asia Minor, 1921-1922, London, 1922.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԸՆԴԴԵՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Երիտթուրքական ոճրագործների նորագույն փաստաթղթերը։ «Գենոցիդը կանխելու և այն կատարելու համար պատժի մասին» ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 1974-ի մարտի 6-ի հուշագիրը։ Թուրքական քաղաքական պրոպագանդան փորձում է կեղծել այն ամենը, ինչը կապված է հայկական հարցի հետ։ Թուրքիայում մեկը մյուսի ետևից լույս են տեսնում հայերին, հայ-թուրքական քաղաքական առնչություններին նվիրված ստահոդ գրքեր։ Թուրք պատմաբանները փորձում են արդարացնել արևմտահայությունը ոչնչացնելու սուլթանների ու երիտթուրքերի քաղաքականությունը։ Համաշխարհային հասարակական կարծիքը դատապարտում է պատմության կեղծարարներին։

Տասնամյակների ընթացքում թուրքական պետականությունը երբեք չընդունեց արևմտահայության գենոցիդի փաստը։ 1919-ի դատավարությունը մոռացության տրվեց։ Մեր դարի 20-ական, 30-ական թվականներն անցան թուրքական իրականության մեջ ամեն ինչ խեղաթյուրելու, կեղծելու նշանաբանով։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական հասարակական-քաղաքական միտքը դարձել էր սանձարձակ շովինիստական, պանթուրքիստական։ Դեպի Արևելք արշավելու, Թուրան հասնելու գաղափարները համակել էին թուրքական տաք գլուխներին, որոնք ֆաշիստական Գերմանիայի առավել ակտիվության պահին պատրաստվում էին իրենց ժանգոտած ժանիքները նույնպես խրել Սովետական Միության մարմնի մեջ։

Ամերիկահայ պրոֆ. Վահագն Տատրյանը նշում է, որ «մինչ բազմաթիվ գերմաններ ամոթի ու զղջումի զգացումներով ջանացին քավել նացիստների կողմից գործված մեղ-

քերը և արդար հատուցում անել հրեաներին, ցարդ ոչ մեկ ծանոթ կամ անծանոթ թուրք հրապարակ չիջավ՝ ընդունելու համար հայկական կոտորածներու մեջ իր պատասխանատվությունն ու մեղքը» (19, 27. 6. 1964)։

Իրանական «Քեյհան» թերթը 1972-ին (№ 8650) ընթերցողներին հիշեցնելով արևմտահայության ոչնչացման երիտթուրքական սև գործերի մասին, շեշտում էր, թե թուրքերը փորձում են եղեռնի հետքերը կոծկել։ Թերթը գրում էր, որ պատմությունը ճշմարտությունն է հետևում։ Օսմանցիները ֆաշիստների նման ձգտել են ամեն ինչ թաքցնել, ծածկել (13, № 10, 1972, էջ 58, 60)։

1928-ից ի վեր թուրքական պետական իշխանությունները հատուկ ծրագրով երկրի հայկական տեղանունները փոխում են թուրքականով. Անին՝ Քեմալիե, Զեյթունը՝ Սուլեյմանլը, Էվերեկը՝ Դևելու, Վահկան՝ Սամանհա, Այնթապը՝ Գազիայնթեպ, Հաճընը՝ Սաիմպեյլի, Արարատը՝ Աղրիդաղ, Հայ Եղեկը՝ Էլիաոլու, Զըրնիկը՝ Աղալըսերի և այլն։ 1959-ին մի որոշում ընդունվեց նահանգների, քաղաքների, գյուղերի անունների փոփոխման վերաբերյալ։ Շատ փոքրաթիվ տեղանուններ են (Վան, Բիթլիս և այլն) մնացել նույնը։

Եվրոպական ու ամերիկյան գրադարաններից անհետանում են հայոց գենոցիդին նվիրված գրքերը։ Թուրքերն այդ ճանապարհով ուզում են կորցնել երիտթուրքական չարագործության հետքերը։

Մատենադարանի փոխտնօրեն Բաբկեն Չուգասզյանին հղած իր մի նամակում բեյրութցի հայագետ Գևորգ Թոփուզյանը Մյունխենի գրադարաններում «Իսրայել Օրին Բավարիայում» իր թեմայի վրա աշխատելիս նկատել էր, որ հայոց գենոցիդին վերաբերող բազմաթիվ գրքեր անհետացել էին գրապահոցներից վերջին 7 տարիների ընթացքում։ Նամակում նա չի թաքցնում իր տարակուսանքը, որ թուրքական չարագործությունների հետքերը թաքցնելու այդ գործողությունները կատարվում են թուրքական կազմակերպությունների միջոցով։

Երբ 1934-ին «Մետրո-Գոլդվին-Մայեր» կինոստուդիան ձեռնամուխ եղավ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի կինոէկրանացմանը, քեմալական Թուրքիայի դի-

վանագիտական ներկայացուցիչներն աղմուկ բարձրացրին։ Այն բանից հետո, երբ թուրքական կառավարությունը հայտարարեց, թե կալանք կդնի ամերիկյան բոլոր ֆիլմերի վրա, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը տեղի ունեց։ 1935-ին Վաշինգտոնում թուրքական դեսպան Մյունիր Էրթեգյունը պարծենում էր, խորին շնորհակալություն հայտնում ամերիկյան իշխանությունների կայացրած որոշման համար (43)։ «Մարդկային պատմության քաղաքակիրթ էջերուն մեջ,— գրում է Ա. Գրաճյանը «Սևան» թերթում,— դժվար թե արձանագրված ըլլա այնպիսի արնաներկ ողբերգություն մը, որ պետականորեն ծրագրված և անգթորեն գործադրված ըլլա ժողովրդի մը զավակներուն վրա, անոնց իրավունքներից առնակոխ ընելու և պապենական հողերը հափշտակելու նպատակով և մնացած ըլլա անպատիժ» (20, 24, 4. 1963)։

Ֆրանսահայ Լևոն Չորմիսյանը գտնում էր, որ «անհրաժեշտ է, կենսական, որ թուրքերը ձևը գտնեն հատուցումով մը հանդարտացնելու հայ խիղճը և նույնիսկ թուրք խիղճը, եթե ըմբռնելի է նման բացատրություն։ Լավ է, որ այդ ձևն իրենք գտնեն ու իրենք առաջարկեն» (9, 25. 4. 1963)։

Այնինչ այսօր Թուրքիայում բացահայտ փաստաբանում են երիտթուրքերի գործերը, արդարացնում նրանց բոլոր հակամարդկային արարքները։ Երեկ եթե ակնբախ չէր նման վերաբերմունքը, ապա այսօր բացորոշ կարելի է ասել, որ նրանց գաղափարական ու քաղաքական ժառանգորդները ժամանակակից թուրքական հետադիմական ուժերն են։

1981-ի հոկտեմբերի 17-ին ֆրանսիական «Ֆիգարո մագազինի» թղթակցի հետ հանդիպման ժամանակ գեներալ Քենան Էվրենը հայտարարում էր, թե «հայկական հարցը չինծու մի նյութ է՝ հորինված միջազգային ահաբեկչական օջախների կողմից»։ «Թուրքիայում հայկական հարց գոյություն չունի»,— ճչում էր գեներալը։

Իհարկե, եթե կային ազնիվ ու ճշմարտախոս մարդիկ, որոնք ամբողջ խորությամբ գիտեին փաստերը, դառն ճշմարտությունները, ապա թուրքական դժնի իրականության պայմաններում չէին համարձակվում խոսք ասել այդ ամենի մասին։

Թուրք կոմունիստ բանաստեղծ Նազըմ Հիքմեթը՝ թուր-

քական իշխանությունների կողմից հալածված, մահաբեր գնդանից մի կերպ մազապուրծ իր ճշմարիտ խոսքն ասաց, երբ հեռու էր վտանգից, գտնվում էր վտարանդիության մեջ։ Եվ նա ասաց դիպուկ, մատը դնելով վերքի վրա.

«Նպարավաճառ Սուրենի խանութում կրակներ վառվեցին։

Նա հայկական կոտորածը չի մոռացել։

Նա հորը սպանողներին չի ների մինչև վերջ, մինչև մահու դուռ։

Բայց նա սիրում է քեզ, որովհետև դու էլ չես ներել նրանց, ով օգնել է Թուրքիայի ճակատին դրոշմելու այդ խարանը» (34)։

Կան թուրք հեղինակներ, որոնք կամա թե ակամա ստիպված են ճշմարիտ խոստովանություններ անել։ 1962-ի հոկտեմբերի 25-ին գյուղատնտեսական տեսուչի ասիստենտ Գյունայ Էրինալը Ստամբուլի «Միլլիեթ» թերթի էջերում ահա թե ինչ էր գրում «Արևելյան Թուրքիայի» Բուլանըխի (Մուշ) կազայի գյուղացիների, տնտեսությունը վարելու նրանց կուլտուրայի մասին։ Սահիմբեյլի (նախկինում Հաճըն) գյուղի բնակիչները հոդվածագրին պատմել էին, թե հայերի օրոք այնտեղ բնակչությունը մեծաթիվ էր, նրանց խաղողն ու գինին շատ լավ հռչակ ունեին։ Կար նաև դպրոց, որն «անհետացավ հայերի հետ միասին»։ Խաղողի այգիներն ու գինեգործությունը ոչնչացված են, որի հետևանքով բնակչությունը հեռացել է այդ վայրերից։ «Հայերի նախկին տներում գինու մառանները դեռևս պահպանվում են»։

Թուրք գյուղատնտեսը գրում է, թե այս վայրերում նա շատ վաղուցվանից և հաճախ լսում է միևնույն արտահայտությունը՝ «Հայերի օրերին այստեղ...»։ Հետո նա նկարագրում է երկու թուրքական գյուղերի բնակիչների արյունոտ կռիվները ջրից օգտվելու համար ու ավելացնում. «Երբ հայերն այստեղ էին, նրանք գետի վրա ջրապատնեշ ունեին և ջրի պակաս երբեք չէին զգում»։ Այնուհետև թուրք հեղինակը գրում է, թե Հեքիարիում նույնպես հայերին հիշում էին նույն ձևով, հատկապես չէին մոռանում նրանց խաղողի տեռասները սարերի վրա։ «Բայց այդ բանն այժմ այլևս գոյություն չունի» (56, էջ 113—114)։ Ընդհանրապես 60-ական թվականների կեսերին եղան նաև ավելի ուշագրավ

խոստովանություններ։ Թուրք պետական գործիչներ Գյուրսելը թե Սունայը, մի շարք լրագրողներ, պատմագիրներ այն ժամանակ ընդունում էին հայ ժողովրդի հետ կատարված անարդարությունը, բայց սահմանափակելով 1915-ի ողբերգությունից, շեշտում էին այն միտքը, թե թուրքական այսօրվա հանրապետությունը կապ չունի այդ իրադարձությունների հետ։

Հետո, մի փոքր անց սկսվեց ամեն ինչ կեղծելու, թուրքական դահիճներին արդարացնելու, հակահայկական սանձարձակ ոտնձգությունների շրջանը։

Թուրքական «Ենի Իսթիքլալ» շաբաթաթերթում 1963-ի հունվարին Նիճիպ Ֆազըլ Քասաքյուրեքը կոտորածների հարցում արդարացնում էր թուրք ժողովրդին և մեղադրում երիտթուրքերին։ «Հայը միայն իթթիհադին և քիչ մըն ալ իր սեփական կուսակցության զոհն էր, իսկ թուրքը եղավ այդ երեքին զոհը»,— գրում էր նա և եզրակացնում, թե «...բովանդակ պատասխանատվությունը և հանցանքի առաջնությունը կմնա իթթիհադի վրա» (8, 26. 1. 1963)։

Մոսկվայում հավատարմագրված դեսպանների խմբի հետ 1963-ին Սովետական Հայաստան այցելած ՍՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Ֆահրի Կորութուրքը (ավելի ուշ պրեզիդենտ) մամուլի ներկայացուցչին հայտարարեց, թե «ես շատ գոհ եմ, որ այցելեցի Հայաստան։ Ինձ ապշեցրին Մատենադարանը և գիտության զարգացման մակարդակը, շինարարության մասշտաբները և ժողովրդի բարձր կուլտուրան» (4, 4. 5. 1963)։

Սակայն թուրքական իշխանություններն ամեն ինչ անում են, որպեսզի միջազգային ասպարեզում, ՄԱԿ-ում, ՅՈՒՆԵՍԿՕ-ում և այլ կազմակերպություններում թույլ չտրվի հայոց օգտին որևէ դրական խոսք, որևէ դրական որոշում։

1974-ի մարտի 6-ին Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հանձնաժողովն իր 39-րդ նիստում քննարկեց «գենոցիդը կանխելու և այն կատարելու համար պատժի մասին» հուշագիրը, որ կազմել էր Ռուանդայի ներկայացուցիչը։ Հուշագիրը գաղափար էր տալիս գենոցիդի ակունքների, տարբեր դրսևորումների մասին։ Այս խնդրի շուրջ վեճ առաջացավ։ Թուրքիայի ներկայացուցիչ Օսման Օլչայը առաջարկեց հուշագրից հանել 30-րդ պարա-

գրաֆը, որտեղ հիշատակվում էր 1915-ի հայերի զանգվածային կոտորածի՝ XX դարի առաջին գենոցիդի փաստը:

Օսման Օլչայը հայտարարեց, թե այդ պարագրաֆն արտահայտում է հայկական որոշակի շրջանների տեսակետը, թելադրված է ազգային-կրոնական ատելությամբ և պայմանավորված է որոշակի նպատակներ հետապնդող պրոպագանդայով: Խեղաթյուրելով փաստերը, Օսման Օլչայը հայերի կոտորածը անվանեց «պաշտպանական միջոցառում»: Թուրք պատվիրակի առաջարկությունը պաշտպանեցին ԱՄՆ-ի, Իտալիայի, Ֆրանսիայի, Իրանի, Պակիստանի, Հնդկաստանի, Ավստրիայի, Նիգերիայի, Թունիսի և Իրաքի ներկայացուցիչները: Սովետական Միության ներկայացուցիչը հավանություն չտվեց Թուրքիայի պատվիրակի դիրքին և առաջարկեց հուշագիրը վերադարձնել համապատասխան ենթահանձնաժողով վերանայելու համար:

ՄԱԿ-ի հանձնաժողովի կողմից հուշագրի 30-րդ պարագրաֆի մերժումը և ԱՄՆ-ի ու մյուս հիշատակված պետությունների ներկայացուցիչների թուրքանպաստ դիրքը դժգոհության և բողոքի ալիք առաջացրին արտասահմանի հայության լայն շրջաններում: Լիբանանում, Իրանում, ԱՄՆ-ում Ֆրանսիայում, Արգենտինայում և այլ երկրներում տեղի ունեցան ցույցեր և բողոքի միտինգներ: Որոշ երկրներում ԱՄՆ-ի դեսպանատները հուշագիր-բողոքներ ստացան, որոնցում խստիվ դատապարտվում էր ամերիկյան քաղաքականությունը: Հայկական մամուլը դրվատանքի խոսք էր ասում Սովետական Միության ներկայացուցչի հասցեին, որը հանուն պատմական ճշմարտության կանգնեց հումանիստական դիրքում:

ԱՄՆ-ում «Հայկական ազգային կոմիտեի» ներկայացուցիչները հանդիպումներ ունեցան մի շարք կոնգրեսմենների, պետական դեպարտամենտի պատասխանատու աշխատակիցների հետ և պահանջեցին փոխել ԱՄՆ-ի դիրքը ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովում՝ հայերի գենոցիդի մասին հարցի վերաքննարկման ժամանակ: «Կոմիտեն» բողոքի հեռագրեր հղեց ԱՄՆ-ի պրեզիդենտին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին: ԱՄՆ-ի պրեզիդենտը և նրա վարչությունը քննադատվեցին այն բանի համար, որ

նրանք հանդես էին գալիս Թուրքիայի պաշտպանությամբ, մերժում հայերի պատմական իրավունքները:

1974-ի մայիսի 25-ին ամերիկյան «Հերալդ Տրիբյուն» թերթում տպագրվեց «Հայկական ազգային խորհրդի» հայտարարությունը «Անմարդկայնությունը մարդու իրավունքների հանձնաժողովում» վերնագրով: Նրանում դատապարտվում էին այդ հանձնաժողովի անդամները, որոնք պաշտպանել էին թուրք ներկայացուցչի առաջարկը, ասվում էր, որ 1915-ի հայերի գենոցիդը կատարվել էր թուրքական իշխանությունների միջոցով, որ պատմությանը հայտնի առաջին պլանավորված ու կազմակերպված չարագործություն էր:

Հայկական թերթերում շեշտվում է այն միտքը, որ հայկական հարցն ազգային ողբերգություն չէ, այլ միջազգային խնդիր է, որովհետև հայկական հարցի չլուծված լինելը խախտում է համաշխարհային օրենքները: Հայկական հարցը ոչ թե ազգային, այլ միջազգային հարց է: Գրվում է այն մասին, որ ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանը բռնի ուժով ամբողջովին դատարկվել է հայերից, որ հայ ժողովուրդը, հանձին սփյուռքահայության, պահպանել է իր ազգային ինքնագիտակցությունը և պատմական Հայաստան վերադառնալու կամքը, որ հայոց գենոցիդը պաշտոնապես դատապարտված չէ ոչ միջազգային կազմակերպությունների և ոչ էլ հասարակության կողմից: Այսօրվա Թուրքիայում ապրող հայերն ազգային առումով հալածվում են և եվրոպական պետությունները պարտավոր են ճանաչելու նրանց որպես իրավահավասար հայեր, այլ ոչ թե թուրքեր, քաղաքական ապաստան տալու հարցում կիրառելով նրանց նկատմամբ համապատասխան միջազգային օրենքներ:

Սփյուռքահայությունն այլևս ապրիլի 24-ը չի նշում որպես սգի օր, այլ՝ «Հայ դատի օր», շեշտը դնելով հայության արդար իրավունքների պաշտպանության վրա:

1978-ի սեպտեմբերի վերոհիշյալ հարցի քննարկումը նորից արդյունք չտվեց:

1979-ի փետրվար-մարտ ամիսներին Ժնևում մարդկային իրավունքների հանձնաժողովը պետք է կրկին քննարկեր տեղեկագիրը, և պարզ պետք է դառնար՝ ցեղասպանության հարցը հանվո՞ւմ է տեղեկագրից, թե՞ պահպանվում

Ռուանդայի ներկայացուցիչ Ռուհաշանկիկոյի նախկին ձևակերպումով։ Հանձնաժողովը նպատակահարմար գտավ զեկույցն ուղարկել վերջինիս, խնդրելով, որ վերանայման ժամանակ հաշվի առնվի պատգամավորների բողոքները պարբերությունը հանելու կապակցությամբ։

Հարկ է նշել, որ բացի Թուրքիայի և Պակիստանի ներկայացուցիչներից, մյուս ելույթ ունեցողներն արտահայտվեցին հայության օգտին։ Դրանց թվում էին Ավստրիայի, Կիպրոսի, ՍՍՀՄ-ի, Ավստրալիայի և Ֆրանսիայի պատվիրակները։ Հօգուտ հայության արտահայտվեցին նաև Մարդկային իրավունքների ֆեդերացիայի և եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչները։ Հանձնաժողովի պրեզիդենտ պր. Բոլնը խնդրեց, որպեսզի 30-րդ պարբերությունը վերականգնվի տեղեկագրում։

Սփյուռքահայ կյանքի կարևորագույն լուրը համարվեց այն, որ Ժնևում՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների ընթացիկ հանձնաժողովում քվեների ջախջախիչ մեծամասնությամբ վերականգնվել է հայոց եղեռնին վերաբերող 30-րդ պարբերությունը, որ հանվել էր Թուրքիայի պահանջով:

Հանձնաժողովի նիստում 30-րդ պարբերությունը վերականգնելու օգտին քվեարկեցին նաև ՍՍՀՄ-ի ներկայացուցիչները։ Քննարկումը տևել էր մեկ շաբաթ և անցել խիստ վիճաբանությունների պայմաններում։ Որոշվեց ՄԱԿ-ի ցեղասպանության տեղեկագրում նշել 1915-ի Թուրքիայի կառավարության կողմից հայերի դեմ գործադրված եղեռնը որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն։ Այդ հոդվածի վերականգնման համար հետևողական և ուժեղ պայքար մղեցին սփյուռքահայության քաղաքական, ազգային ու կրոնական կազմակերպությունները։ Խնդրին լայնորեն արձագանքեց արտասահմանյան մամուլը։ Բրուսելյան թերթերից մեկը «Մեռյալները, որոնք նորից են սպանվում» խորագրով մի հոդված էր նվիրել հայ դատին, հայության դեմ գործադրված և շարունակվող անարդարություններին ու հայ ժողովրդի պահանջներին։

Թուրքիայի նախկին փոխվարչապետ Օրհան Էյուբօղլուն Ստամբուլ գնաց հանդիպելու թրքահայոց պատրիարք Շնորհ արքեպիսկոպոս Գալուստյանին, առաջարկելով, որ նա սփյուռ-

քահայությանը հորդորի ետ կանգնելու 30-րդ պարբերությունը վերականգնելու պահանջից։ Պատրիարքը հայտնել էր, թե թուրք իշխանությունների կողմից արված խոստումներից շատերը մինչև հիմա չեն իրագործվել (հինգ տարուց ի վեր թույլ չի տրվում, որ վերսկվեն ազգային հիվանդանոցի վերանորոգման աշխատանքները)։ Թուրքիայի փոխվարչապետը և խորհրդարանի անդամներից մեկը հորդորել էին նրան այցելելու ԱՄՆ-ի և Եվրոպայի սփյուռքահայ կենտրոնները՝ ետ պահելու նրանց 30-րդ պարբերության պահանջներից։

Արտասահմանյան մամուլի էջերում, հասարակական, քաղաքական շրջաններում վերջին ժամանակներում բավական մեծացել է հետաքրքրությունը հայոց հարցի, արևմտահայության գենոցիդի, 1915-ի երիտթուրքական չարագործության դատապարտման և հայ ժողովրդի երեկվա ու այսօրվա քաղաքական կյանքի խնդիրների նկատմամբ։ Դա պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնցից առաջինը սփյուռքահայ գաղթավայրերում քաղաքական նոր կազմակերպությունների, պայքարի նոր մեթոդների առաջացումն է, Թուրքիայի ներքին լարված դրությունը, քրդական ազատագրական պայքարի ուժեղացումը, թուրք դիվանագետների նկատմամբ ահաբեկչության չդադարող փաստերը։

Հայկական մի շարք կազմակերպությունների գործունեության ուժեղացումը, միանգամայն նոր պարբերականների («Հայաստան», «Հայ պայքար», «Ազատ հայ», և այլն) լույս ընծայումն իրենց հետ բերել են արևմտահայության քաղաքական ճակատագրի նոր ընկալումներ, գործողության նոր չափանիշներ, նոր մոտեցումներ ու մեկնաբանություններ։

Արևմտաեվրոպական և ամերիկյան թերթերի էջերում ավելի հաճախակի են դարձել Հայաստանին նվիրված ամենաբազմապիսի նյութերը։ Թուրքական մամուլի երեկվա լռության փոխարեն այսօր առկա է աշխույժ, բայց և տենդենցիոզ հակահայկական նյութերի առատություն, ռադիոհեռուստատեսային հաղորդումների հաճախացում։ Թուրքական պրոպագանդան ամեն ինչ հակահայկական գրքերից է մատուցում, «արդարացնում» ինչպես համիդյան շրջանի, այն-

պես և երիտթուրքական իշխանության տարիներին արևմտահայության նկատմամբ կիրառված հակաժողովրդական գործողությունները։

Այս առումով խիստ կարևոր է իմանալ, թե մեր օրերում արևմտաեվրոպական, ամերիկյան բուրժուական մամուլը, գիտական, հասարակական-քաղաքական շրջաններն ինչպես են ընկալում ու մեկնաբանում հայ ժողովրդի քաղաքական պատմության պրոբլեմները, ինչ չափով են դատապարտում կամ արդարացնում սուլթանական Թուրքիայի հայասպան քաղաքականությունը, ինչ վերաբերմունք ունեն սփյուռքահայ կազմակերպությունների, կուսակցությունների գործունեության նկատմամբ, ինչպիսին է նրանց մոտեցումը Սովետական Հայաստան—սփյուռք փոխհարաբերության այսօրվա դրսևորումներին։ Այս ամենի իմացությունը խիստ կարևոր է հանրապետության աշխատավորության գաղափարական-քաղաքական դաստիարակության խնդիրները ՍՄԿԿ XXVI համագումարի պահանջների ոգով հաջողությամբ իրականցնելու համար։

Ինչպես թուրքական, այնպես և ամերիկյան ու արևմտաեվրոպական բուրժուական լրագրողների հրապարակումների շարքում կան նյութեր, որոնք մեզ պարզում են հայ ժողովրդի երեկվա ու այսօրվա մասին թուրքական ու Արևմուտքի հասարակական կարծիքի ծալքերը։ Ուշագրավ էր Լոնդոնի «Թայմս» (26 մարտի 1981) թերթի նախկին դիվանագիտական թղթակից Բերնարդ Լևինի «Ինչ է հիշում հայը» հոդվածը։ Այդ թղթակիցը հեռացավ թերթից թուրքական կառավարության ճնշման տակ։ Նույն թերթում տպագրվեց Լոնդոնում թուրքական դեսպանի պատասխան նամակը, որտեղ խախուտ ու լղարիկ փաստարկներով փորձ էր արվում արդարացնել թուրք դահիճներին։

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ֆրանսիական մամուլի մեկնաբանությունները։ Գաղտնիք չէ, որ ֆրանսահայ գաղութի կողմից 1915-ի գենոցիդի ոգեկոչման խընդրում ֆրանսիական պաշտոնական շրջանների դիրքորոշումը բարդություններ առաջացրեց ֆրանս-թուրքական հարաբերություններում։ «Յումանիտե», «Կոմբա», «Ֆիգարո» թերթերը, «Պարի մատչ» պարբերականը վերջերս հաճախակի անդրադարձան հայոց հարցին։

Թուրք հեղինակները, քաղաքական հրապարակախոսությունն ու պատմագրությունը ստիպված ավելի հաճախ են անդրադառնում ոչ հեռու անցյալի դեպքերին, բայց, որպես կանոն, միտում ունենալով կեղծել ճշմարտությունները։

Թուրքական պատմաքաղաքական գրականության մեջ պատմական եղելությունների նկատմամբ հետաքրքրության աճը, մի կողմից, բնականոն հետաքրքրություն է, ձգտում՝ գտնել հարցերի պատասխանը, փնտրել համապատասխան գրքեր, աղբյուրներ, մյուս կողմից, դա թուրքական իշխանությունների կողմից արհեստականորեն ամեն ինչին միակողմանի պատասխան տալու ջանքեր են, որ վերածվում են մեծ թվով կեղծագրերի։

Խոսենք փաստերով։ Վերջին տարիներս Թուրքիայում լույս տեսած մի շարք գրքերի, հրապարակումների բովանդակության քննարկման միջոցով ցույց տանք, որ թուրքական քաղաքական, պատմագիտական միտքը խարսխված է խեղաթյուրումների, պատմական իրողությունները շրջանցելու, բմահաճորեն անտեսելու կամ կեղծ հայելու մեջ ներկայացնելու պրակտիկայի վրա։ Համառոտակի ցույց տանք, թե ինչ է գրվում, ինչ է մատուցվում թուրք ընթերցողին հայ ժողովրդի, նրա պատմության, Սովետական Հայաստանի մասին։ Պատմագիտական, թե հանրամատչելի հրապարակումներում ամեն ինչ ներկայացվում է խեղաթյուրված և, որ հատկանշական է, խիստ թշնամական դիրքերից։

Թուրքական քաղաքական պրոպագանդան փորձում է կեղծել, վերանայել այն ամենը, ինչը կապված է հայկական հարցի ճըշմարիտ մեկնաբանությունների հետ: Հայտնի է, որ Հիտլերը 1939-ի օգոստոսին սլավոններին, հրեաներին կոտորելու էր ոգեշնչում, հիշեցնելով հայոց ջարդը երիտթուրքերի ձեռքով: Նա ասում էր. «Վերջին հաշվով ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածի մասին»: Մի շարք թուրք հեղինակներ իրենց հրապարակումներում փորձում են հերքել այդ բանը, ապացուցել, որ Հիտլերն այդպիսի խոսք չի ասել: Իհարկե ֆաշիստների պարագլխի ասելուց կամ չասելուց ոչինչ չի փոխվում. փաստ է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հիտլերականներն ավելի մեծ մասշտաբներով կատարեցին այն, ինչ երիտթուրքերն իրենց գերմանական համա-

խմբերի հետ կատարեցին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Հիտլերի վերը նշված ֆրազն առաջին անգամ հրապարակվել է 1945-ի նոյեմբերի 24-ին Լոնդոնի «Թայմս» թերթում:

Նյուրնբերգի պրոցեսի այն փաստաթղթերում (NN PS/798 և PS/1014), որտեղ հիշատակվում է 1939-ի օգոստոսի 22-ին Օբերզալցբերգում գերմանական բանակի գլխավոր շտաբի ընդլայնված նիստում Հիտլերի արտասանած ճառի բովանդակությունը, իրապես չկա հայոց կոտորածի մասին նրա հայտնի արտահայտությունը (81): Մինչդեռ այդ ֆրազը նա արտասանել է: Այդ օրը Հիտլերը խոսել է ցերեկվա ժամը 12-ից 15-ը: Նրա զեկուցումն ընդհատվել է թեթև նախաճաշով: Երբ նա ցած է իջել ամբիոնից, առաջացել են խմբեր և գտնվելով քանի գեներալների կենտրոնում, նա արտասանել է հայտնի այդ խոսքը, ինչի մասին աշխարհին տեղեկացրել է «Թայմսը» 1945-ի նոյեմբերի 24-ին:

Որո՞նք են այս բանի ապացույցները:

ա) Այդ մասին 1939-ի օգոստոսի 25-ին Ֆորին օֆիս հեռագիր էր հղել Բեռլինում բրիտանական դեսպանատան աշխատակից Ջորջ Օգիլվի—Ֆորբսը: «Ասոշեյտեդ Պրես» ամերիկյան գործակալության ներկայացուցիչ Մ. Լոկները հայտարարում է, որ նա այդ ինֆորմացիան ստացել է գերմանական բանակի շտաբի սպաներից մեկից, որն իր հերթին այն ստացել էր Օբերզալցբերգի խորհրդակցությանը ներկա գտնված և կատարվածից սարսափած մի գեներալից:

բ) 1939-ի օգոստոսի 27-ին հղված համանման մի դեպեշա հաստատում է Լոկների ինֆորմացիան: Այդ դեպեշայի հիմքն էր ծառայել գերմանական ավիացիայի մի սպա (53, էջ 14—15):

Պատերազմից մի քանի տարի անց, ամերիկացի հեղինակ Ջոզեֆ Գուդմանը մի գիրք հրապարակեց՝ նվիրված 20-րդ դարի առաջին գենոցիդին՝ հայոց կոտորածին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Այստեղ նա հատկապես անդրադարձավ Հիտլերի ֆրազին, ուղղակի կապ տեսնելով երիտթուրքական ու ֆաշիստական մարդակերական մեթոդների միջև (48):

1978-ին Նյուրնբերգի պրոցեսի ԱՄՆ-ի գլխավոր մեղադրողի տեղակալ Ռոբերտ Կեմպները (արևմտագերմանական «Emuna» ամսագիր, № 3, 1978) ապացուցում էր 1915-ի երիտթուրքական չարագործությունների համանմանությունը ֆաշիստական մարդասպանների կատարած հանցագործությունների հետ:

Ահմեդ Վեֆա թուրքը իր «Ճշմարտություն հայերի մասին» գրության մեջ, որ թուրքական իշխանությունները ցրել են ամբողջ աշխարհում, հայերին վատաբանելու իր մոլուցքի մեջ հասնում է խելագար զառանցանքների: Հիշատակելով Հիտլերի 1939-ի ասույթը հայերի ոչնչացման փաստի մասին, այս թուրք կեղծարարը փորձում է համոզել իր ընթերցողներին, որ ֆաշիստների պարագլուխը ոչ թե ակնարկում էր հայերին արմատախիլ անելու թուրքական քաղաքականությունը, այլ 7-րդ դարում (մ. թ. ա.) հայերի կողմից Ուրարտու պետությունը «կործանելու» փաստը:

Թուրքիայում մեկը մյուսի ետևից լույս են տեսնում Հայերին, Հայկական Հարցին, Հայ-թուրքական ազգային ու քաղաքական առնչությունների պատմությանը նվիրված գրքեր։

Դատելով այդ Հրատարակություններով, կարելի է ասել, որ առկա է որոշակի տեղաշարժ, որոշակի ակտիվություն օսմանյան կայսրության ոչ վաղ անցյալի պատմության այն դեպքերի ու իրադարձությունների լուսաբանման ասպարեզում, որոնք վերաբերում են արևմտահայության քաղաքական ճակատագրին, նրա ազգային-ազատագրական պայքարին, նրա նկատմամբ իրականացված սուլթանական ու երիտթուրքական դաժան քաղաքականությանը։

Թուրք հեղինակների գրքերը որպես կանոն միտում ունեն անվերապահորեն արդարացնել արևմտահայության ոչնչացնելու Համիդի ու երիտթուրքերի գործողությունները։ Նրանց գրվածքներին օտար են ինչպես հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացման օրինաչափությունների ըմբռնելու ունակությունը, քննական-վերլուծական մեթոդը, այնպես և տարրական օբյեկտիվությունը։ Նրանց գրելաձևը պարզունակ է, անսիստեմ։ Հախուռն մոտեցումներն ու չհիմնավորված գնահատականները, զգացական, քաղցր-մեղցր, կեղծավոր շեղումները սովորական բան են այդ հրապարակումների էջերում։ Փաստերը, փաստաթղթերը վկայակոչվում և քննարկվում են կամայականորեն, երբեմն առանց կապակցելու բուն հարցադրման, կոնկրետ ասելիքի հետ։

Թուրքական կեղծարարները նորից սկսում են իրենց հին, աբդուլհամիդյան մեթոդիկայից, նախ և առաջ կեղծել հայ ազգաբնակչության թիվը, ապա նոր «հերքել» զանգվածային կոտորածի ու ոչնչացման փաստը։ Վերջերս շրջանառության մեջ դրված թուրքական մի պաշտոնական գրություն կառուցված է նույն այդ «սկզբունքի» հիման վրա։ Այնտեղ ասվում

է, թե 1910-ի օսմանյան 20 միլիոն 706 հազար 107 մարդու փոխարեն (ուշադրություն դարձրեք թե որքան «ճշգրիտ» թվերի կարոտ են թուրքական պետական այրերը) 1914-ին բալկանյան պատերազմներից հետո և հետևանքով, բնակչությունը դարձել էր 18 միլիոն, 520016 մարդ։ «Օսմանյան կայսրության փաստաթղթերում, ուր մտցվում էին ամենաճշգրիտ գրառումները (ուշադրություն դարձրեք այս վերջին բառերի վրա. հենց ճշտությունն էր պակասում թուրքական մարդահամարներին։— Զ. Կ.), հայ բնակչությունը 1914-ին հաշվվում էր 1 294 851 մարդ»,— կարդում ենք թուրքական այդ կեղծագրում։ Այնուհետև օրինակներ են բերվում ֆրանսիական «Ռևյու դե մոնդից» (Փարիզ, 15. 4. 1914), ըստ որի Թուրքիայում հայերի թիվը եղել է 1,3 միլիոն, անգլիական մի արխիվային փաստաթղթից, ըստ որի այդ թիվը եղել է 1,5 միլիոն և ֆրանսիական դեղին գրքից (1893—1897 թթ. հայկական ռեֆորմների մասին), որտեղ այդ թիվը ցույց է տրվում 1,475 011 մարդ միայն Անատոլիայում (առանց Կ. Պոլսի և Եվրոպական Թուրքիայի)։

Այս ամենից հետո թուրքական կեղծարարները փորձում են հավատացնել, թե քանի որ հայոց բնակչության թիվը 1,5 միլիոն չի եղել, ապա 1,5 միլիոն մարդ չէր կարող սպանվել։ Ահավասիկ կեղծարարության տեխնոլոգիան։

Առ այսօր չենք հանդիպել և ոչ մի թուրք հեղինակի, որը ամենահանրահայտ ու հավաստի թվերի հիման վրա խոսեր Արևմտյան Հայաստանի հայ բնակչության, Փոքր Հայքի ու Կիլիկիայի հայոց թվի, կամ Կ. Պոլսի ու Եվրոպական Թուրքիայի հայերի քանակության մասին։ Մի՞թե այսօր նրանք հիշատակում են Թուրքիայի քուրդ, լազ կամ այլ ազգաբնակչության մասին, երբեք։ Այդ նրանց ձեռնտու չէ։

Օսմանյան կայսրությունում 1913-ին 2,1 միլիոն հայության մասին հրատարակված թվերի դեմ Թալեաթն ու K° երբեք էլ չեն առարկել 1914-ի հունվարին հայոց բարենորոգումների նախագիծը քննարկելիս, ռուս-թուրքական պայմանագիրը կնքելիս։ Վերը հիշատակված թվից մոտ 1,2 միլիոն ապրում էր Արևմտյան Հայաստանի հողերի վրա։ Մնացյալը բնակվում էր Կիլիկիայում, Անատոլիայի տարբեր

մասերում, Կ. Պոլսում, Ադրիանոպոլում, Ռոդոստոյում և այլուր։

Թուրքական կեղծագրի հեղինակներն ամեն ինչ խեղաթյուրում են, միայն թե ապացուցեն գենոցիդի բացակայությունը։

«Այդպիսի իրադրության մեջ, որը երկարատև պատերազմական գործողությունների հետևանքով բարդացել էր սովի, զրկանքների, հիվանդությունների առկայության պայմաններում, դժբախտաբար շատ անձինք զոհվեցին։ Բայց դա երբեք գենոցիդ չէր»։ Այսպես են մատուցում արևմտահայության ողբերգության հանգամանքները այսօրվա թուրք պատմիչները։ Նրանք ժխտում են Թալեաթի հակահայկական հեռագրերի առկայությունն իսկ։ Մինչդեռ, մյուսները չեն թաքցնում, որ իբր Թալեաթի հեռագրերի շնորհիվ է փրկվել օսմանյան պետությունը։ Կեղծագրի մեջ կարդում ենք. «Իրականում օսմանյան կառավարությունը հսկայական հոգատարություն է դրսևորել, որպեսզի խանգարի դեպորտացիայի ժամանակ հայերին վնաս պատճառելուն»։ Սրանք գրում են հայերի համար «կոմֆորտ» ստեղծելու, նոր բնակավայրերում տներ կառուցելու և այլնի մասին։

Թուրք դիվանագետ Ալթեմուր Քիլիչը 1950-ին հրատարակած իր գրքում փորձում էր հայերի նկատմամբ կիրառված «սահմանափակ դեպորտացիան» բացատրել նրանց՝ «օտար պետության» «լրտեսներ» լինելու հանգամանքով։ Եվ սա ստում էր լուրջ տոնով, մի ամբողջ աշխատավոր, հողագործ ժողովրդի հասցեին։ Թուրք կցորդն անում էր այսպիսի համեմատություն. «Հայոց նկատմամբ կատարված էքսցեսները համեմատելի կլինեին, ես կարծում եմ, այն բանին, թե ինչպիսին կլիներ ամերիկյան պատասխանատվությունը, եթե Մինեսոտայի և Վիսկոնսինայի գերմանացի-ամերիկացիները ապստամբեին Հիտլերի կողմում համաշխարհային 2-րդ պատերազմի ժամանակ»։ Նա գոհունակություն էր հայտնում, որ Թուրքիայի նկատմամբ վատ տրամադրված համարյա բոլոր հայերն անհետացան և նույնիսկ «խեղճ ու քաղցած հայերն» ամբողջությամբ մոռացվեցին։ Ահավասիկ մեր դարի 50-ական թթ. թուրքական լկտիության ցցուն օրինակներից մեկը (55, էջ 18, 141)։

Ոչ, չմոռացվեցին, պարոն Կցորդ։ Երիտթուրքական չարագործությունը հիշվում է և պետք է հատուցվի։

Առանց խղճի խայթի, առանց ամոթի թուրքական պրոպագանդան պնդում էր, թե «օսմանյան կայսրությունը միշտ այն անկյունն էր, որտեղ աշխարհի բոլոր ճնշվածները գտնում էին իրենց ապաստանը»*։

Օսմանյան կայսրությունն իր չարիքներով, ժողովուրդների հանրաբանտ լինելու հանգամանքով, հետամնացությամբ, բռնություններով ու հակաժողովրդական էությամբ թուրք հեղինակների համար «սիրելի հայրենիք է»։ Նրանք ափսոսում են, ողբում նրա կործանումը, չարությամբ արտահայտվում այն բոլոր ժողովուրդների հասցեին, որոնք պայքարի ու արյան գնով հարթեցին իրենց ազատագրության ուղին, անջատվեցին թուրքական պետությունից։ Թուրք հեղինակները հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը քննարկում են հակագիտական դիրքերից, ժխտում ինքնորոշվելու, սեփական հայրենիք ստեղծելու նրա օրինական իրավունքը։ Այդ ամենի մեջ թուրք հեղինակները տեսնում են «դավաճանություն», «երախտամոռություն», օտարերկրյա պետությունների «սադրանքներ»։ Նրանք չուրջ խնդիրները քննարկում են պարզունակ, մակերեսային կատեգորիաներով, դիմում են հեքիաթանման դատողությունների, կեղծում և աղավաղում պատմության փաստերը։ Նրանք պաշտպանության տակ են առնում սուլթանների, իթթիհադականների խոսքն ու գործը, ըստ էության հանդես են գալիս հակաժողովրդական, հետադիմական քաղաքականության ժառանգորդների և փաստաբանների դերում։

Թուրք հեղինակների գործերը ներծծված են հակառուսականությամբ, հակակոմունիզմով և պանթուրքիզմով։ Նրանք փորձում են անտեսել հայ ժողովրդի սովետական պետականությունը, ռուս ժողովրդի և սովետական մյուս եղբայրական

* Թուրք հեղինակների մի շարք գրքերի վերաբերյալ մենք տակավին 1977-ին Մերի Քոչարի, Խաչիկ Ամիրյանի և ուրիշ ընկերների մասնակցությամբ ԳԱ-ի հասարակական գիտությունների ինֆորմացիայի բաժնի հրատարակությամբ հրապարակել էինք մի շարք ռեֆերատիվ գրքույկներ, որոնց որոշ նյութեր տեղ են գտել ներկա հատորի մեջ։

ժողովուրդների հետ համատեղ ձեռք բերած մեծ նվաճումները։

Թուրք ժամանակակից պատմաբան պրոֆ. Էնվեր Զիա Քարալը, 1975-ին հայկական հարցին նվիրված մի գրքույկ հրապարակեց (54), որտեղ պատմության հարցերին փոքր-ինչ ծանոթ յուրաքանչյուր ընթերցող կարող է տեսնել տարրական ճշմարտությունների բացահայտ խեղաթյուրումները։ Նա հայկական հարցը համարում է արհեստական մի բան, այլ ոչ թե թուրքական տիրապետությունը թոթափելու ժողովրդի ձգտում։ Քարալը գիրքը բաժանել է հինգ հետևյալ մասերի՝ 1. Հայերի դրությունը օսմանյան կայսրության մեջ. 2. Արտաքին ազդեցություններ և պրովոկացիաներ. 3. Հայկական գաղտնի հեղափոխական խմբերի կազմակերպությունն ու գործունեությունը. 4. Հայկական հարցը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ. 5. Փարիզի կոնֆերանսը և Հայաստանի ինքնավարությունը կամ անկախությունը։

Այստեղ հեղինակը հայոց կյանքը ներկայացնում է առանձնապես դրախտային։ Նա Ստամբուլն ու որոշ քաղաքներ շփոթում է Արևմտյան Հայաստանի հետ, կրկնում է հայոց փոքրամասնություն լինելու մասին ծամծմված թեզը։ Նա գրում է, որ «հայերը օսմանյան կայսրության առավել բարգավաճող համայնքն էին»։ Նա չի թաքցնում հայերի ընդունակությունները արհեստների բնագավառում, հիշատակում է նրանց աշխատասիրությունը, մեծ վեզիրների հայազգի բազմաթիվ խորհրդականների, մինիստրների, նահանգապետների, դեսպանների մասին է հիշեցնում։ Հենց որ նա «ապացուցում» է, թե հայերը ոչ միայն ճնշումների չէին ենթարկվում, այլև օգտվում էին արտոնություններից ու օրենքներից, անմիջապես ձեռնամուխ է լինում գտնելու թուրք-հայկական հարաբերությունների վատացման պատճառները։ Նախ նա հայտարարում է, որ հայերի «էթնիկական ծագումը անորոշ է մնում» և հետո հայտարարում, թե հայերը... նույնպես թուրքեր են։

Հայոց հարցի ծագումը նա վերագրում է արևմտյան տերություններին, մանավորապես Ռուսաստանին։ Նա արդա-

րացնում է սուլթան Համիդի հայասպան քաղաքականությունը 1895—97 թթ.

Հայոց բարենորոգումները չիրագործելու սուլթանի քաղաքականությունը պատճառաբանում է նրա՝ բոլոր մահմեդականների խալիֆ լինելու հանգամանքով, որ նա չէր կարող խախտել թուրքերի և Անատոլիայի մահմեդականների միասնությունը։ Նա հայերի կոտորածը «առասպել» է հռչակում, խոսում է միայն փոխադարձ կորուստների մասին։ Էնվեր Զիա Քարալը ուղղակի կեղծել է, կրճատել, աղավաղել ու ավելացումներ արել ամերիկացի գեներալ Ջեյմս Ջ. Հարբորդի հաշվետվության տեքստից մեջբերումներ անելիս։ Նա տեքստից դուրս է գցել հայերին վերաբերող «կոտորածներ» բառը և իրենից ավելացրել «ապահով» բառը։ «Քրեական հանցագործությանը հավասարազոր» այս կեղծիքը Էնվեր Զիա Քարալն ու նրա թուրքական պետական հովանավորողները եվրոպական ու ամերիկյան հասարակությանն են ներկայացնում որպես ճշմարիտ պատմագրություն։ Մինչդեռ Հարբորդը հանգամանորեն նկարագրել է հայոց կոտորածի մանրամասները, Թալեաթի դերը և այլն (75, էջ 7, 11)։

Խոսելով առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքերի կազմակերպած հայերի գենոցիդի մասին, նա գրում է. «Թուրքերը ստիպված էին պաշտպանել իրենց պետության գոյությունը։ Դաշնակից պետությունների հետ հայերի համագործակցությունը կանխելու համար անհրաժեշտ համարվեց նրանց դուրս բերումը մարտական գործողությունների գոտիներից»։ Էնվեր Զիա Քարալը փորձում է ընթերցողին համոզել, որ իթթիհադի կողմից նախապես և ոչ մի ծրագիր չկար մշակված արևմտահայության ոչնչացման մասին։ Նա մեկ միլիոն հայերի բռնի տեղահանությունը «ֆանտաստիկա» է հռչակում, առանց փորձելու պատասխան տալ այն տարրական ճշմարտությանը, թե ո՞ւր կորան օսմանյան կայսրության հայերը։ Նա պաշտպանության տակ է առնում մարդասպան Թալեաթին։ Գիրքը նա ավարտում է պաթետիկ հայտարարությունով այն մասին, թե «Հայկական հարցն այսօր պատկանում է պատմությանը»։ Սակայն չմոռանանք ասել, որ նույն հեղանակն արդեն 1981-ի գարնանը

Անկարայի հեռուստատեսության ամբիոն էր բարձրացել խոսելու հայոց հարցի նոր ակտիվացման փաստերի մասին։

Ծանոթանալով Էնվեր Զիա Քարալի գրքույկին դժվար չէ համոզվել, որ այն զուրկ է պատմական փաստերի և երևույթների նկատմամբ տարրական հարգանքից։ Նա հեշտությամբ շրջանցում է թուրքական պետության հասարակական զարգացման բոլոր պրոցեսները, նույնիսկ մոտ չի գալիս դասակարգային պայքարի, ազգային հարաբերությունների պրոբլեմներին, թուրքական հասարակության տնտեսական և քաղաքական զարգացման ամբողջ պրոցեսին և փորձում է քմահաճ բնութագրումներով իր ընթերցողներին պարզաբանել հայոց հարցի էությունը։

Նա մշտապես հանդես է գալիս թուրքական «Թերջյուման» օրաթերթի «կլոր սեղանի» հավաքներին, արդարացնում երիտթուրքերին, ցեղասպանության մեղքը դնում հայերի վրա (12, 30. 10. 1981)։

Թուրք պատմաբան Ալթան Դելիորմանն իր «Հայկական կոմիտեականներն ընդդեմ թուրքերի» գրքում (42) ոչ միայն պաշտպանության տակ է վերցնում սուլթան Աբդուլ Համիդ II-ին, իթթիհադականների պարագլուխներին, արդարացնում նրանց հակահայկական քաղաքականությունը, այլև նրանց մեղադրում է թուլության, անհետևողականության մեջ, որ նրանք դեռ ուշացել և թերացել էին արևմտահայությանը կարգի հրավիրելու հարցում։ Հեղինակը փոքրածավալ ներածականում թեև խոստանում է լինել օբյեկտիվ, ճշմարտախոս, սակայն հենց սկզբից շրջանցում է պատմական կարևոր իրողությունները, գլխավորը, էականը և իր ընթերցողին զբաղեցնում հեքիաթանման բաներով։ Հայոց հակասուլթանական պայքարի ու հրահրման պատիվը նա վերագրում է ամերիկյան միսիոներներին (sic), Անգլիան և Ռուսաստանը հռչակում հայոց հարցի հեղինակներ (42, էջ 21—22)։

Ըստ Դելիորմանի հայ կոմիտեականներին գլխավորում էին «ռուսական գործակալները», որոնք իբր համատեղ «ճնշում էին մահմեդական բնակչությանը և ոչ ոք չէր հոգում նրանց պաշտպանության մասին» (42, էջ 32)։

Թուրք հեղինակը «Համիդիե» գնդերի ստեղծման նպատակը հռչակում է որպես... Սասունի 15 հազար մահմեդական

ընակչության պաշտպանություն հայ «կոմիտեականներից» (42, էջ 34)։ Նա նույնիսկ արյունկզակ սուլթանին վերագրում է «փափուկ քաղաքականություն» (42, էջ 47—48), թե իբր սուլթանը չափից ավելի մեղմ էր վարվում հայերի հետ (42, էջ 73), որից տուժում էին թուրքական մայրաքաղաքում և այլուր հայերի հարձակումներից տանջվող «խեղճ» թուրքերը։ Գրքի վեցերորդ գլխում հեղինակը երիտթուրքերին քննադատում է հայկական կազմակերպությունների հետ համագործակցելու ուղեգծի համար։ Այստեղ նա ստիպված խոստովանում է, որ «թուրքական մտավորականների մոտ ազգային ինքնագիտակցությունն այնքան զարգացած չէր, ինչպես հայ մտավորականների մոտ» (42, էջ 76)։ Առանց այլևայլության Դելիրմանն արդարացնում է Ադանայի կոտորածը (42, էջ 95)։ Առաջին համաշխարհային պատերազմի հարցերը քննարկելիս հեղինակը նորից ստիպված է ընդունել, որ «հայերը գերադասում էին ռուսներին» (42, էջ 140), արդարացնում է ցեղասպանության պրակտիկան, իսկ Թալեաթ փաշային համարյա դարձնում հայ ժողովրդի բարերար (42, էջ 166—167)։

Այսպիսի կեղծիքների վրա է այսօր դաստիարակվում թուրքական երիտասարդությունը։ Վերջիններս համոզում են, թե «հարյուր հազարավոր անզեն և անմեղ թուրքեր» զոհվեցին (42, էջ 168)։ Գրքի 14-րդ գլխում հեղինակը փորձում է ընթերցողներին համոզել, թե հայոց ողբերգության պատասխանատվությունը պետք է փնտրել ռուսական քաղաքականության մեջ (42, էջ 176—177)։

17-րդ, 18-րդ, 19-րդ գլուխներում նա վիճարկում է երիտթուրքերի պարագլուխների նկատմամբ իրականացված դատավարության օրինականությունը, ողբում, որ անզեն հայերի խմբերի գազանային սպանությունների մեջ ամբաստանված Քեմալ բեյը կախաղան էր հանվել։ Այս մարդասպանը գրքում հռչակվում է անմեղ, քաջ և թուրք ժողովրդին նվիրված հերոս (42, էջ 227)։ Նա համակրանքով է խոսում Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Ադանայի, Դիարբեքիրի մի շարք թուրք հանցագործ պաշտոնյաների հասցեին, որոնք նույնպես 1919-ին թուրքական զինվորական դատարանի կողմից դա-

տապարտվել էին հայերի սպանության ամբաստանությամբ (42, էջ 219—220)։

Գրքի 19-րդ գլխում հեղինակն անպատկառ կերպով իր վրդովմունքն է արտահայտում, որ այն ժամանակվա Կ. Պոլսի թերթերում հայտարարություններ էին տպագրվել հայերի արտաքսման վկաներին փնտրելու և հարցաքննելու վերաբերյալ։ Նա դեպքերի ականատեսներին համարում է սուտ վկայություններ տվողներ (42, էջ 240), հիշատակում հայերի դահիճներից մեկի՝ Նուսրեթ բեյի խոսքերը, որ նա արտասանել էր մահապատժից առաջ՝ «անատոլիական հերոսները» վրեժ կառնեն հայերից իր մահապատժի համար (42, էջ 242)։ Ըլթան Դելիրմանը համերաշխում է հայ ժողովրդի դահիճների հետ։ Նա «արդարացնում է» սրանցից մեկին, որը մահապատժից առաջ հայտարարել էր. «Այո, ես կոտորել եմ հայերին» (42, էջ 243)։

Գրքում գովասանքների են արժանանում դահիճներ Բեհաէդդին Շաքիրը և Ջեմալ Ազմին։

Թուրք հեղինակը հայհոյում է Սևրի պայմանագիրը, որով «Թուրքիան պետք է ճանաչեր Հայաստանը»։

1920—1921 թթ. իրադարձությունները, սովետա-թուրքական հարաբերությունները, միջազգային իրավական ու պայմանագրային խնդիրները հեղինակը քննարկում է կատաղի հակասովետիզմի դիրքերից։ Այսօրվա սփյուռքահայության ակտիվ հասարակական-քաղաքական կյանքը ներկայացվում է որպես «կոմունիստական գործակալների ձեռքի գործ»։ Լիբանանի հայկական կազմակերպությունների խրախուսողները նույնպես ռուս գործակալներն են, հայտարարում է նա (42, էջ 308)։ Նա թուրք երիտասարդներին որպես արգահատելի փաստ է ներկայացնում այն հանգամանքը, որ օսմանյան կայսրությունում «առաջին սոցիալիստները եղել են հայ կոմիտեականները» (42, էջ 323), հայտարարում է, որ օսմանյան պառլամենտի հայ դեպուտատներն ունեին սոցիալիստական համոզմունքներ, իսկ թուրք և մահմեդական դեպուտատների շարքում ոչ մի սոցիալիստ չկար (42, էջ 324)։

Նախապես ասենք, որ այս ու մյուս հրատարակությունները միմյանց նման են ինչպես ինկուբատորի ճտերը։

Արհան Յալլընը (80) նույնպես հայերի համար օսմանյան կայսրության բարեբարության մասին է պատմում, որ իբր հայերը «վայելել են օսմանյան հայրենիքի բոլոր բարիքները», ունեցել են «կրոնական և վարչական որոշակի իրավունքներ» (80, էջ 9—10), կոչվել են «հավատարիմ ազգ» (80, էջ 88)։ Արևմտյան Հայաստանի հայ աշխատավոր զանգվածների կյանքի ծանր պայմանների՝ սոցիալական ու կրոնական հալածանքների մասին գրքում ոչինչ չի ասվում։ Այստեղ նույնպես իդեալականացվում է օսմանյան իրականությունը։ Հայկական հարցի ծագումը նորից վերագրվում է Ռուսաստանին, Ադանայի ողբերգությունը՝ «հայ հեղափոխականներին» (80, էջ 89)։ Ըստ հեղինակի, երիտթուրքերն ամբողջ կայսրությունում ազգերի հավասարության ջատագովներ էին և այլն։ Հեղինակը Արևմտյան Հայաստանի հայերի թիվը ցույց է տալիս 1 միլիոն և ասում է. «Մենք ընդունում ենք. Թուրքիայում հայեր կան, բայց Հայաստան չկա» (80, էջ 60)։ «Անարդարությունը հենց այն է, որ թուրքերին մեղադրում և դատապարտում են մի այնպիսի մեղքի մեջ, որ նրանք ակամա են գործել հայերի դեմ»։ «Մարդկության և թուրք ժողովրդի դեմ կատարած ոճրի համար միակ պատասխանատուն հայերն են» (80, էջ 91)։ Ահավասիկ պատմագիտության նմուշ՝ à la turque «հայերը դարեր շարունակ իրենց ապրած կայսրության հողերից ուզեցին իրենց համար բաժին խլել։ Ահա մի բան, որը չէինք կարող թույլ տալ։ Մենք հեշտ էի՞նք նվաճել այդ հողերը...» (80, էջ 239)։

Աբդուլլահ Յամանը «Հայկական հարցը և Թուրքիան» գրքի (79) հիմքում դրել է 1916-ին օսմանյան կայսրության ներքին գործերի մինիստրության կողմից հրապարակված «Հայկական հեղափոխական շարժումների» ու կառավարության ձեռնարկած միջոցառումների մասին վերը արդեն հիշատակված սուտ ու պատիր նյութերը (76)։ Ժամանակին Թալեաթի ստեղծած այս կեղծագրի վերահրատարակումը միտում ունի արդարացնելու երիտթուրքական չարագործությունները, կեղծիքի և ստի միջոցով արևմտահայության ողբերգության պատասխանատուներ հռչակել գենոցիդի զոհերին։ Գրքի ներկա հրատարակության կազմակերպիչնե-

րը հանդես են գալիս սուլթանների, թալեաթների ու էնվերների հակաժողովրդական քաղաքականության փաստաբանների դերում։

Հայ ժողովրդի ծագման, պետականության պատմության հարցերն ամբողջապես աղավաղված են։ Հեղինակը գրում է, թե իբր մինչև 19-րդ դարը քարտեզների վրա «Հայաստան» անուն գոյություն չի ունեցել (79, էջ 49)։ Ըստ հեղինակի, եթե առաջին համաշխարհային պատերազմից առաջ Անատոլիայի նահանգներում հայերի թիվը 1193394 էր, ապա 1960-ի տվյալներով այնտեղ ապրում էր միայն 53173, իսկ Ստամբուլում՝ 41 311 հայ։ Չփորձելով պատասխան տալ, թե ուր անհետացան արևմտահայերը, թուրք հեղինակը շտապում է հռչակել, որ հայերի բացակայությունն իսկ ցնորք է դարձնում «մի շարք հայ հայդուկների» երազած Հայաստանը (79, էջ 49)։ Անդրադառնալով Կիլիկիայի, Բիթլիսի, Էրզրումի, Դիարբեքիրի, Վանի, Տրապիզոնի, Ուրֆայի, Շապին-Գարահիսարի հայության տեղահանության, ջարդի խնդիրներին, հեղինակը փորձում է ապացուցել երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների «օրինականությունը»։

Նիյազի Բանօղլուի «Հայերի զուլումն ընդդեմ հայերի» (38) «ուսումնասիրությունն» իր էությամբ, ոգով ու հետապնդած նպատակով վերը հիշատակված թուրք պատմաբանների գրվածքների մի տարատեսակն է, թեև նրանցից տարբերվում է իր հավակնոտությամբ ու կառուցվածքով։ «Թուրք ազգը բռնություն գործադրե՞լ է հայերի նկատմամբ» (38, էջ 6),— հարց է տալիս Բանօղլուն և սկսում յուրովի «հերքել» բռնության փաստը։

Անցնելով փաստաթղթերի «վերլուծմանը», նա թուրքերին ներկայացնում է որպես անմեղսակից այն ամենին, ինչ տեղի էր ունեցել 20-րդ դարի առաջին քառորդում արևմտահայության հետ և որը որպես «գենոցիդ» վերագրում են թուրքերին։

Թուրք հեղինակն այնպիսի վիճակագրական տվյալներ է մատուցում ընթերցողին, ըստ որոնց հայերի սարքած «խառնակչությունների» հետևանքով կորուստների 99 տոկոսը բաժին էր ընկել թուրքերին ու քրդերին և միայն մեկ տո-

կոր՝ հայերին։ Ահավասիկ թուրքական պատմագիտական «բարեխղճության» մի նմուշ ևս։ Հետո Բանօղլու կոչված «պատմագիրը» հնչակներին անվանում է «թալանչիներ», ժխտելով իր իսկ «պատմագիր» գործընկերոջ միտքը, թե նրանք առաջին սոցիալիստներն էին թուրքական իրականության մեջ։

Գրքի ամբողջ իմաստն այն է, որ հայերը պետք է շարունակեին ապրել թուրքերի հետ պետական մի տանիքի տակ, որ նրանք իզուր ձգտեցին ինքնուրույնության, որ իրենք էին իրենց անհաջողության, ոչնչացման պատճառը։ Բանօղլուն խոստովանում է, որ հայկական թերթերը թվով ու տպաքանակով ավելի շատ էին, քան թուրքականը, որ թուրքահայերը դպրոցական գործի, ուսման առումով առաջ էին անցել թուրքերից և որ հարկ չկար չենթարկվել թուրքական պետության պահանջներին։

Գրող, ուսուցչուհի Նեշիդե Քերեմ Դեմիրին 1976-ին Անկարայում լույս է ընծայել «Հայերի հարցը Թուրքիայում. սպանվածի պատմածները իր մորը» գիրքը։

Ինչպես տեսնում ենք վերնագրից, հեղինակն ընտրել է իր ասելիքը մատուցելու մի ուրույն ձև։ Գրքի շարադրանքից պարզվում է, որ 1974-ին Կալիֆոռնիայի Սանտա Բարբարա փոքրիկ քաղաքում Մկրտիչ Յանիկյանի ձեռքով սպանված երկու թուրք դիվանագետներից մեկն իր մորը անդրշիրիմյան աշխարհից պատմում է իր սպանության պատճառների, հայ ժողովրդի «անմարդկային», «զզվելի» գծերի մասին։ Գրքի առաջաբանը գրված է Լոս Անջելեսի թուրքական հյուպատոսարանի սպանված գլխավոր հյուպատոս Մուսավինի Բահայր Դեմիրի մոր անունից։ Ինչպես երևում է գրքի հետագա շարադրանքից, հակահայկական կեղծագրեր պատրաստելու տարիների փորձ ունեցող մի որոշակի կազմակերպություն կարող էր միայն թխել մի այսպիսի Նողկալի գրվածք։

Նախ, Թրքուհի «հեղինակը» ճշմարտախոս լինելու, խաղաղասեր մնալու, հայերի արյունը չոթելու խոստում է տալիս, որպեսզի հետո ամեն քայլափոխի դրժի իր խոսքը, ատելություն ու թշնամանք սերմանի երկու ժողովուրդների միջև։

Նա կատաղի չարությամբ է խոսում Մայքլ Արլենի (Տիգրան Գույումչյան) «Ճանապարհորդություն դեպի Արարատ» գրքի մասին։ Նրան դուր չի գալիս, որ Մայքլ Արլենը այցելել է Սովետական Հայաստան, ուսումնասիրել պատմական ճշմարտությունները և դրանց մասին պատմել աշխարհին։ Թրքուհի հեղինակն այս գրքից կարծես թե ավելի շատ է նյարդայնացել, քան որդու կորստից և հայտարարում է. «Ժամանակը եկել է, որ բացենք աշխարհի ականջները և խոսենք Թուրքի բերանով»։

Գիրք-կեղծագիրը բաղկացած է երեք մասից։ Առաջին մասում հեղինակը նպատակ է հետապնդում սևացնել հայոց պատմությունը, հայ ժողովրդին վերագրել վատ գծեր, թուրքերին օժտել բարեմասնություններով ու առաքինություններով։ Հեղինակն առանձնակի կրքոտությամբ հիշատակում ու դրվատում է այն տիրակալներին, որոնք վերացրել են հայոց թագավորությունները, հայերին զրկել հեռավոր երկրներ։ Այս նպատակով նա խորասուզվում է պատմության խորքերը՝ հռոմեական, բյուզանդական ու պարսկական տիրապետության ժամանակները, սելջուկյան ու օսմանյան ասպատակությունների դժնի դարերը։ Հեղինակը հայերին մեղադրում է և Քաղկեդոնի ժողովի համար, և այն բանի համար, որ XX դարի սկզբին Սամսոնի հայկական մի թաղամասում բռնկված հրդեհի ժամանակ հայոց տներից 40 դաշնամուր էին փողոց դուրս բերել։ Թրքուհին հենվում է Էսադ Ուրասի, Արիչինիի, Էլիզե Ռեկլյուի և այլ հեղինակների աշխատությունների վրա և փորձում է ցույց տալ հայերի համար օսմանյան կայսրությունում եղած կրոնի ազատությունը (!), կյանքի ապահով (!) պայմանները։ Նա թվարկում է թուրքական պետական ծառայության մեջ բարձր պաշտոնների հասած հայազգի մարդկանց անուններ, խոսում նրանց նկատմամբ թուրքական «մեծահոգության» մասին, հայտարարում, թե «աղայությունը և թույլերի» պաշտպանությունը թուրք ազգի բնավորությունն է», Կ. Պոլիսը շփոթում գավառի կիսավայրենի կացության հետ և, ընդհանրապես, օսմանյան դժոխային իրականությունը ներկայացնում մի տեսակ դրախտ հայ ժողովրդի համար։ Նա

Թուրքիան հռչակում է որպես «փրկարար երկիր» հպատակ ժողովուրդների համար, թուրքերին՝ «բարձրաստիճան, մեծահոգի ժողովուրդ», իսկ հպատակ պարսիկների ու արաբների, հայերի ու մյուսների հասցեին ցեխ շպրտում։ Գրքում կարդում ենք, թե իբր սուլթանները հայերին շնորհել էին «սոցիալական բոլոր ազատությունները», օգտվում էին «հանգիստ ու խաղաղ» կյանքի պայմաններից։ Ահավասիկ թուրք գրողի ու ուսուցչուհու խոստացած ճշմարտախոսության գոհարները։

Պատմության իրողությունների փաստաբանի ու մեկնաբանի դերն ստանձնած թուրք ուսուցչուհին առանձին թշնամանքով է խոսում հայոց ազատագրական բաղձանքների, Խրիմյան Հայրիկի գործունեության մասին։ Նա դժգոհում է, որ հայոց թերթեր հիմնադրվեցին, որ նրանց էջերում «հեղափոխություն ու անկախություն էին քարոզում», որ թատրոնների բեմերից ինքնուրույնության ու ազատության սեր էին արթնացնում հայ մարդկանց հոգում։

Գրքի երկրորդ մասն ամբողջությամբ ներծծված է ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը սև գույներով ներկայացնելու, ամենաթունդ հակառուսականության ոգով։ Ռուսաստանի օգնությունը սլավոններին ու հայերին պատկերվում է իբրև չարիք։ Նա փորձում է Հայկական հարցը ներկայացնել որպես ռուսական ստեղծագործություն, որը ծառայելու էր Ստամբուլին տիրելու, Միջերկրական ծով դուրս գալու ցարիզմի պլաններին։ Թրքուհին շփոթում է եվրոպական տերությունների իմպերիալիստական քաղաքականությունը և ճնշված ժողովուրդների հակաթուրքական ազգային-ազատագրական պայքարը։ Այդպիսի դիրքերից է նա քննարկում 1878-ին Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագիրը, նրանցում Հայաստանին նվիրված հոդվածները։ «Հայկական հարցը մեջտեղ բերելով, նրանց միակ նպատակն էր կործանել օսմանյան Թուրքիան»,— հայտարարում է Նեշիդե Դեմիրը։

Գրքում կարդում ենք. «Հայերի նպատակն էր աշխարհի վրայից ջնջել թուրքերին և ստեղծել հայկական պետություն»։ «Հայերը չէին գիտակցում, որ Թուրքիայի տիրապետությունն

իրենց համար ավելի շահավետ էր, քան Ռուսաստանինը»։ Ըստ հեղինակի, հայերը Թուրքիայում մշտապես «պատվի ու հարգանքի են արժանացել», թե իբր մուսուլմանական կրոնը միշտ էլ հեռու է մնացել շովինիստական քաղաքականությունից։ Այս դեպքում ապա ինչպե՞ս է բացատրում այսօրվա Թուրքիայում հայերի բացակայության փաստը։ Ո՞ւր անհետացան միլիոնավոր հայերն այդ երկրից։ Այդ մասին հեղինակը լռում է։ Հեղինակը դժգոհ է, որ Շահումյանի անունը կրող սովետական նավ կա Սև ծովում և անդրադառնալով 1918-ի դեպքերին, Շահումյանին վերագրում է թուրքերին կոտորելու գործը գլխավորելու հրեշավոր կեղծիքը։

Անդրադառնալով 1917-ի Հոկտեմբերյան հեղափոխության, Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարցերին, հեղինակը փորձում է խեղել հանրահայտ ճշմարտությունները, սովետական իշխանությանը վերագրում է էքսպանսիոնիզմ, Թուրքիան նվաճելու ձգտումներ, թուրքական պետականությունը վերացնելու նպատակներ։ Մասնավոր չարությամբ է խոսվում Չիչերինի հասցեին։

Թուրք ուսուցչուհին պաշտպանության տակ է առնում հայ ժողովրդի դահիճ Թալեաթին։ 1918-ի դեպքերը, թուրքական ինտերվենցիան այնպիսի գույներով են նկարագրված, որ կարծես թե մեղավոր են բոլորը, բացի թուրքական մարդասպան ագրեսորներից։ Ճշտության և ոչ մի հետք։ Ամբողջը կեղծիք է։

«Վերջին խոսքում» թրքուհի հեղինակը ցեղասպանություն կազմակերպելու մեջ մեղադրում է հայերին, փորձում է պաթետիկ հայտարարությունների միջոցով նվաճել պատմությանն անծանոթ թուրք ընթերցողների համակրանքը։ Նա եզրակացնում է. «Ես կարող եմ զենք վերցնել ձեռքս, սպանել երկու հայ և ձեռք բերել «քաջ մայր» մականունը։ Բայց ես դիմեցի այլ ուղու, օբյեկտիվորեն (!) նկարագրեցի ամբողջ պատմությունը, մարդկությանը ցույց տալով իրողությունը։ Եվ եթե մենք թույլ տանք մեր ազգի նկատմամբ կատարված բոլոր կեղեքումները և լույս աշխարհ չհանենք դրանք, մեզ սպասում է դառը ճակատագիր։ Զարթնեցեք»։

Հիրավի, հարկավոր է թուրք ընթերցողին զարթեցնել ճշմարիտ գրվածքներով, ժողովուրդների միջև բարեկամություն հաստատելու անհրաժեշտության մասին ճշմարիտ խոսքով։ Իսկ այսօրվա Թուրքիայում հրատարակվող գրքերով ցանկանում են բորբոքել ազգամիջյան ատելությունը, հայերի դեմ տրամադրել թուրք ժողովրդի նոր սերունդը։ Մեր խնդիրն է հետևել թուրքական քաղաքական մտքի այս վնասակար դրսևորումներին, հնարավոր միջոցներով հակահարված տալ նրանց նորագույն չարագործություններին։

1978-ին Անկարայում լույս տեսավ «փաստաթղթերի» մի ժողովածու (անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն), որի կազմողը Սալահի Ռ. Սոնիելն է (70)։ Այս հրատարակության նպատակը պատմական եղելությունների բացահայտ աղավաղումն է։ Նա գրում է օսմանյան կայսրությունում հայերի համար կյանքի «լավ» պայմանների մասին, սուտ և կեղծիքի միջոցով փորձում արդարացնել երիտթուրքերի հայակուլ քաղաքականությունը։ Ըստ այս պատմաշինարարի թուրքական պետությունը պլանավորել էր «որոշ» (ուշադրություն դարձրեք այս բառի վրա) հայ քաղաքացիների վերաբնակեցնել երկրի այլ մասերում, «ձեռք առնելով ամենահումանիտար միջոցներ»։ Այսպիսի հակապատմական հիմքի վրա նա ընտրել ու դասավորել է որոշ պաշտոնական հեռագրեր, գրություններ, նրանց բովանդակությունը մեկնաբանելով ամենաշեշտված քմահաճությամբ։ Բերենք օրինակներ. մի գրության մեջ ֆինանսների մինիստր Թահսին փաշան (22. 07. 1915) տեղական իշխանություններից պահանջում է հետաձգել տեղահանված հայերից հարկերի գանձումն ավելի ուշ ժամանակ։ Մի այլ փաստաթղթում (23. 07. 1915) Թալեաթը պահանջում է «հայ կաթոլիկներին բացառել տեղափոխման պրոցեդուրայից», իսկ 1915 թ. օգոստոսի 2-ի հեռագրով պահանջում է նույնը անել հայ բողոքականների նկատմամբ։ 1915-ի մայիսի 24-ին Անտանտի տերությունները Պետրոգրադի նախաձեռնությամբ մի նոտա հրապարակեցին, որի մեջ հայերի կոտորածի ամբողջ պատասխանատվությունը դրվում էր երիտթուրքերի կառավարության վրա։ Վերջինս վախեցած դրանից իրապես դիմեց որոշ ձևական, ցուցադրական քայլերի։ Իսկ թուրք «պատմաբանը» Թալեաթի գոր-

ծողությունները որակում է հումանիտական։ Նա հումանիստական է համարում նաև բանվորական գումարտակներում հայ զինվորներին հավաքելու փաստը, բայց լռության է մատնում Թալեաթի ստորագրությամբ հայ երեխաներին մահմեդականացնելու մասին կարգադրությունը (29—30. 7. 1915)։

Մինիստր Ալի Ֆեզիի ստորագրած հեռագրի մեջ (30. 8. 1915) ասվում է երկաթուղիով թուրքական զորքերի տեղափոխման դժվարությունների մասին, ինչը տեղահանված հայերի կուտակումների հետևանք էր։ Ֆեզին կարգադրում էր միջոցներ ձեռնարկել խոչընդոտները վերացնելու, երկաթուղու աշխատանքները նորմալացնելու համար։ Այս ակտը Սոնիելը մատուցում է, որպես հայերի նկատմամբ բարյացակամության արտահայտություն։ 1915-ի օգոստոսի 4-ին Թալեաթը ստիպված էր պահանջել ձեռք չտալ երկաթուղու հայ աշխատակիցներին, որովհետև առանց նրանց գործը տուժում էր։ Իսկ թուրք «պատմաբանը» սրա մեջ հայանպաստ քայլ է տեսնում։ Նման օրինակները կարելի է շարունակել։ Բայց բավականանանք այսքանով։ Ինչն է կարևորը թուրք վայ պատմաբանի համար, ճշմարտությո՞ւնը թե՞ սուտը։ Նրա համար, իհարկե, սուտը։ Երբ խոսում է պատմությունը, նման կեղծ պատմաբանները պետք է լռեն։ Սոնիելը կեղծարար է։ Ահա թե ինչու նա կատաղում է, երբ Արևմուտքում գտնվում են ազնիվ և ճշմարտացի դիրքերից գրող հեղինակներ, որոնք հասարակությանը ծանոթացնում են հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերին։

Սոնիելը մեկ բաց նամակով դիմում է անգլիացի ճանաչված պատմաբան, Հայաստանին նվիրված մի շարք գրքերի հեղինակ Դավիդ Մարշալ Լանգին (58, 59), մեկ նրա դեմ բողոքում Լոնդոնի համալսարանի ղեկավարությանը, պահանջում կովկասագիտության ամբիոնի վաստակաշատ գիտնականին ազատել իր գրաված պաշտոնից իր հրատարակած վերջին գրքի համար (37, 26. XII. 1981, 5, VI. 1982)։

Սոնիելը կրակ է ժայթքում անգլիացի երիտասարդ պատմաբան Քրիստոֆեր Ուոկերի դեմ, որովհետև վերջինս գիրք

է նվիրել թուրքական ոճրագործությունից վերապրող հայ ժողովրդին (77)։

Թուրք պատմաբանների գրվածքներում և ոչ մի լուրջ բան չպետք է փնտրել։ Չէ որ Բայուրը, թե Սոնիելը առանց ամաչելու հայտարարում են, որ «հայոց տեղահանության ժամանակ» օսմանյան «բարեխնամ» կառավարությունը «նրանց հանգիստն ապահովելու համար ամեն զոհողության դիմեց»։ Սրանք չեն կարդում նույնիսկ իրենց ավագ գրչակից եղբայրների գրվածքները։ Չէ որ Ահմեդ էմին Յալմանը տակավին 1930-ին հրատարակած գրքում սևով սպիտակի վրա գրել է. «Աքսորը սկզբում նկատի էր առնվել իբրև զինվորական ժամանակավոր միջոցառում։ Բայց մի շարք ազդեցիկ թուրք քաղաքագետների վկայությամբ այն նկատի էին ունեցել իբրև հայ փոքրամասնության բնաջնջում Թուրքիայում, այն մտքով, թե դա պետք է հիմք ստեղծեր Փոքր Ասիայում միայն մի ցեղի գոյության համար» *(ընդգծումը մերն է— Զ. Կ.) (78, էջ 320)։*

Բացի առանձին գրքերից, պատմության հարցերին նվիրված բազմաթիվ հոդվածներ են լույս տեսնում թուրքական պարբերական մամուլի էջերում։ Սրանք նույնպես կոչված են խեղաթյուրելու ճշմարտությունը, ապակողմնորոշելու թուրք ընթերցողին։

«Հայերին առաջին գրգռողը եղել է Մեծն Պետրոս։ Ուրեմն, հայկական հարցը սկիզբ առել է 1720-ին»,— այսպես է մատուցում հայոց պատմությունը թուրք ընթերցողին թուրք պատմաբան Ռեշադ Իլերին «Հյուրիեթ» թերթի էջերից (22 և 23 օգոստոսի 1982)։ «Ռուսները, այդ ատեն, հայկական մեծ պետություն մը խոստացած էին իրենց» (12, 25. VIII. 82)։

1980-ին Ստամբուլում լույս ընծայվեց 150 էջանոց մի հավաքածու՝ «Իրողություններ՝ Թուրքիո հայերեն» վերնագրով (անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն)։ Այստեղ Պողոս Քիրեճյան արքեպիսկոպոսը, դոկտոր Կարապետ Արմանը, Թորգոմ Ստեփանյանը փորձում են համոզել ընթերցողին (հավանաբար նաև իրենց), թե «Թուրքիո հայերը շատ հանգիստ և ապահով» կյանք ունեն, թե արտասահմանի հայերը «մոլորված են» և «անճիշտ վերագրումներ են անում» «բարեխնամ» Թուրքիո հասցեին։ Գրքի էջերը լի են վերջին

15 տարիների ընթացքում թուրքական մամուլի էջերում լույս տեսած երեսպաշտ, կեղծավոր նյութերից քաղված մեջբերումներով։ Այստեղ «ապացուցվում է, որ 1) հայերը ապաստագրվեցին արաբների, բյուզանդացիների, պարսիկների լծից շնորհիվ այն բանի, որ անցան օսմանցիների տիրապետության տակ. 2) հայերը վեց հարյուր տարի վայելեցին օսմանցիների «մարդկային» ու «մեծահոգի» հովանավորությունը, բարգավաճելով բոլոր մարդկերի մեջ. 3) 1915-ի դեպքերը հետևանք էին «օտարների դրդման» և «արկածախնդրական հովերով տարված» հայ ըմբոստների գործողությունների, որոնց դեմ օսմանյան կառավարությունը «ակամա դիմեց պարպումի» քաղաքականության, անշուշտ՝ «մարդկային ամեն միջոցառում ապահովելով»։

Ահավասիկ թուրքական դժոխքի հայ մեծահոգի փաստաբանների հակազգային գոհարներից մի քանիսը։ Գրքում գրվում է նաև թուրքական պետականության մեջ բարձր պաշտոններ գրաված հայազգի գործիչների, ազգային խարականության «բացակայության» և այլ սուտ ու սխալ բաների մասին։ Թուրքահայ փաստաբանները «մոռանում են» հիշատակել ինքնավարության ու ինքնորոշման, օսմանյան պետությունից դուրս ապրելու հայ ժողովրդի զավակների ձգտումների միանգամայն օրինաչափ բնույթի մասին։ Այդ փաստաբանները խիղճը կորցրած մասնակցում են ճշմարտությունը խեղաթյուրելու թուրքական պետական մարմինների հակահայկական ոտնձգություններին։ Սրանք գրում են, թե «կոմիտաճի մի քանի խմբեր» հանդես գալով հայերի անունից «ուզում են հավատացնել, թե Արևելյան Անատոլիայի հայերը բռնի վտարված են իրենց հայրենիքից, թե ցեղասպանության ենթարկված են»։

Սովետական գիտնականներ Գ. Հարությունովը, Հ. Ենիկոլոպովը, «Նովոյե վրեմյա» շաբաթաթերթում (№ 49, 1981) «Հիշողության առևանգողները» իրենց նամակում համոզիչ կերպով մերկացրել են թուրքական իշխանությունների լույս ընծայած այս կեղծագիր ստահոդությունը։ Թուրք կառավարողները պատմության փաստերն աղավաղելու իրենց ջանքերին հավաստիություն հաղորդելու միտումով այս անգամ դիմել են Ստամբուլի փողատեր, թրքացած ու ծախու

որոշ «հայերի» փաստաբանություններին՝ իբր հերքելու 1915-ի գենոցիդի իրողությունը։ «Նովոյե վրեմյա» քաղաքական շաբաթաթերթը քարը քարի վրա չթողեց Facts from the Turkish Armenians, Istanbul, 1980 անամեջ հրատարակությունից։

Թուրքական մամուլը մշտապես շեշտում է, թե «հրեական ցեղասպանությունից բացի ուրիշ ցեղասպանություն չկա»։ Երբ ֆրանսիական պատմագիտական «Լ'Հեսթուար» ամսագիրը տպագրեց ֆրանսիացի Մարք Ֆերոյի մի ակնարկը հայոց գենոցիդի վերաբերյալ, թուրք հեղինակ Օսման Քիպարը շտապեց «հերքել», աղմկել, չարախոսել նույն ամսագրի էջերում (№ 37, սեպտեմբեր 1981)։ Մարք Ֆերոն փաստերի հիման վրա ցույց էր տալիս, որ թուրքերն անգիտանում են, թաքցնում հայերի անհետացումը, ոչնչացումը օսմանյան կայսրությունում։ Թուրք Քիպարը թուրքական հանրապետությունն անջատելով սուլթանի պետությունից, ճչում է «ժառանգական հանցապարտությունը» մերժելու, ընդհանրապես գենոցիդը ժխտելու դիրքերից։ «Մարք Ֆերո, նույն էջին վրա, կպատասխանե թուրքական այս տեսակետին ու կսկսի այսպես. «Օսմանյան Քիպարի դրությունը զարմանալի է։ Միաժամանակ վեճ մը կբանա ու կըգոցէ։ ...Հիշենք սակայն, թե մեծ պատերազմի սկզբեն, թե գերմանացիք, թե անգլիացիք կոգեկոչեն այդ ջարդին հսկա ծավալը, որ կարգ մը գնահատումներու համաձայն մեկ միլիոն երեք հարյուր հազարը կանցնի» (12, 1. 9. 1981)։

Թուրք «պատմաբան» Օղուզ Թյուրիքանը 1980-ի մայիսի 26-ին թուրքական «Թերջյուման» աջակողմյան թերթում հրապարակած «Կոմունիզմի թափանցումը Թուրքիա» հոդվածում մեղադրում է հայերին, նրանց քաղաքական կուսակցություններին, որոնք թուրքական հողում արմատավորում էին «օտար», թուրքական բնավորությանն անհարիր գաղափարներ» (8, 18. 6. 1980)։ «Սուտը, կեղծիքը և ուրացումը կշարունակեն տիրապետել Թուրքիո ղեկավար ու մտավորական շրջաններուն մեջ»,— գրում է Վ. Աբրահամյանը «Լրաբեր» թերթում (9, 21. 11. 1981)։

Թուրքական «Ջումհուրիեթ» թերթում Ալի Սիրմենը «Խենթություն» վերնագրով իր հոդվածում գրում էր, թե «ժամանակը եկել է անցյալի դեպքերը վերաքննելու»։ Սակայն այդ վերաքննությունը նա սկսում է հին մարզանքներով. նա գրում է Անգլիայի և ցարական Ռուսաստանի կողմից XIX դարի վերջին և XX սկզբին գրգռված «հայկական հրոսակների» և թուրք ժողովրդի միջև տեղի ունեցած ցեղասպանության, պետության շահերի «ապահովության մտահոգություններով» գործադրված հայկական տեղահանությունների և այլնի մասին։ Նա ճչում է, թե «թուրք պետությունը օսմանյան կայսրության բարիքների ու չարիքների ժառանգորդը չէ»։ Հոդվածագիրը սուր է ճոճում «Մոնդ» թերթի այն հարցադրման դեմ, ըստ որի պահանջվում է ներողություն խնդրել հայոց դեմ գործված ոճիրների համար (6, 18. 4. 1980)։

«Միլլիեթը» գրում է. «Հայկական հարց կոչված հարց մը գոյություն չունի ըսելը՝ մեր արտաքին քաղաքականության կողմե ցայսօր վարված «ջայլամի» դատապարտելի քաղաքականություն մըն է։ Ասոնք, այս հարցին առնչությամբ Թուրքիո իրավասությունն ու անմեղությունը փաստող հաստատուն քաղաքականություն մը հիմնելե խուսափելու համար եղած ջանքեր են... Արտաքին գործոց նախարարության գետնահարկերուն մեջ գտնվող 70 սնդուկ փաստաթղթեր ալ, այս պատճառով փտումի ենթարկված են...» (12, 30. 9. 1981)։ Նույն թերթը 1981-ի հոկտեմբերի 3-ի համարում տպագրել էր Էրսան Յամենի «Բեռլին 1921» հոդվածը, որտեղ հիշեցնում էր, որ ինչպես Թեհլերյանի դատն իր ժամանակին վերածվեց Թալեաթի դատավարության, այնպես էլ այժմ Փարիզում թուրքական հյուպատոսարանը գրաված չորս հայ ահաբեկիչների դատը կարող է մեջտեղ բերել 66 տարվա հին թղթերը։ Թերթը մտահոգվել էր, որ հայկական հարցը դարձել է օրակարգի հարց» (12, 10. 11. 1981)։ «Բայրամ» թերթի էջերում 1981-ի օգոստոսի 3-ին Ջաֆեր Աթայը խոստովանում էր, թե «ամենեն խելքը գլուխը հեղինակներն» անգամ կողմնակից են հայկական հարցին։

Փարիզի թուրքական դեսպանատան մեկ պատասխանատուն, ի պատասխան այն հարցումին, թե 1915-ի ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից արդյոք լավագույն միջոցը չէ վերջ տալու հայկական բիրտ ուժին, պատաս-

խանել է. «Մեր դիմաց խոսակից չունինք, որ խոսի հայերի ամբողջության անունից, հետո, այդ ջարդերը ընդունած ենք 1919-ին։ Հանցավորները պատժված են։ Ճիշտ է որ անկե ի վեր վերապատված ենք Թալեաթ փաշան, հա քայլ չենք կրնար ընել» (12, 1. 12. 1981)։

Հայոց պատմությունն ամենալկտի կերպով նենգափոխելու քայլ հանդիսացավ աշխարհի համալսարաններին ուղղված Ստամբուլի համալսարանի հայտարարությունը (74)։ Այն մի քանի լեզուներով հրապարակ բերվեց 1981-ին։ Այդ պրովոկացիոն հորինվածքն ամեն ինչ ներկայացնում է ծուռ հայելու մեջ, միևնույն սխեմայով։ Հայերը օսմանյան կայսրությունում լավ էին զգում իրենց, բայց ընկան ռուսների ազդեցության տակ, փորձեցին անջատվել Թուրքիայից, դրա համար էլ պատժվեցին։ Ահա այդ «դեկլարացիայի» բովանդակությունը։ Ամենահրեշավոր նորությունը խնդրի գիտակների համար այն է, որ առաջին անգամ այս «փաստաթղթում» 1915-ի գենոցիդի հեղինակները հռչակված են... հայերը։

Թուրքական իշխանությունները ժամանակ առ ժամանակ Անկարայի «Թուրք-իսլամական հետազոտությունների կենտրոնի» անունից աշխարհի տարբեր մասերն են հղում թռուցիկներ, կոչեր, որոնց մեջ խեղաթյուրում են պատմական իրադարձությունները, ապակողմնորոշում հանրային կարծիքը։ Դրանցից մեկի մեջ կարդում ենք. «Իմպերիալիստներու խեղաթյուրված պատմությունն է զոր հայեր կկրկնեն։ Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին՝ իմպերիալիստներու դրդումով գրգռությամբ, հայերը հանկարծակիի բերելով հարձակեցան օսմանյան զորքերի վրա, որոնք կըկռվեին Անատոլիայի արևելյան շրջաններուն մեջ։ Թուրքական գյուղեր ավերակվեցան և թալանվեցան... Հայկական հարցը պատմության անցած երևույթ է» (5, 28. 5. 1981)։

«Թուրք-ամերիկյան ընկերակցություն» կազմակերպությունը 16 էջանոց իր մի թերթիկով ասպարեզ էր հանել կեղծիքների ու աղավաղումների մի կեղտոտ խառնուրդ։ «Հայերի դեմ ցեղասպանություն չի կատարվել օսմանյան կայսրությունում համաշխարհային պատերազմի ժամանակ։ Օսմանյան կառավարության կողմից ծրագրված

կամ հրահանգված ցեղասպանություն մը երբեք չէ գործադրված։ Վերջերս կատարված ակադեմիական ուսումնասիրություն մը կըհաստատեր, թե ջարդերու կապակցությամբ ջարդերու պատմությունները հնարված են հայ ազգայնականներու... կողմե, որոնք այդ շրջանին Փարիզ և Լոնդոն կգտնվեին։ Այդ շինծու պատմությունները տարածվեցան Բրիտանական կայսերական լրտեսական գործակալության կողմե, լորդ Բրայսի և Առնոլդ Թոյնբիի անմիջական հսկողության տակ» (5, 28. 5. 1981)։ Նույն թռուցիկը հակաթուրքական գործունեության մեջ մեղադրում էր ամերիկահայ պրոֆեսորներ Նինա Գարսոյանին, Ռիչարդ Հովհաննիսյանին, Վարդան Գրիգորյանին (վերջերս նշանակվել է Նյու Յորքի հանրային գրադարանի տնօրեն) և ուրիշների, նրանց հռչակելով «կոմունիստներ», Սովետական Միության «գործակալներ»։

Վերջին ժամանակներս թուրքական կեղծարարներին օգնության են շտապում Արևմուտքի որոշ երկրների քաղաքագետները և տարբեր տեսակի գրչակները։ Սրանք շահագրգռված են այն բանում, որպեսզի Թուրքիան ավելի հաստատուն դիրք գրավի ՆԱՏՕ-ի հակասովետական, ռազմաքաղաքական ամբողջ սիստեմում։ Դելիորմանի, Բանիօղլույի, Բիրանդի, Սոյսալի, Սոնիելի և այլոց շարքերը լրացրել են ամերիկյան (Շոու), ֆրանսիական (Մոզեր) և ուրիշ կեղծարարներ, որոնք հանուն իմպերիալիստական տերությունների ռազմաքաղաքական շահերի, հանգիստ խղճով զոհաբերում են պատմական ճշմարտությունը, գիտական օբյեկտիվության սկզբունքները։

Կեղծարարներ կային նաև առաջներում, նրանց մեջ նաև ամերիկացիներ։ Օրինակ, ամերիկյան ծովակալ Կոլբի Մ. Չեստերը, որը հայերի տեղահանության փաստը լկտիորեն համեմատում էր Ֆլորիդա կամ Կալիֆոռնիա ճանապարհորդող Նյու Յորքի միլիոնատերերի ուղևորությունների հետ, որ կատարվում էին հանգստանալու համար, առողջական նպատակներով (40)։ Նրա դեմ հանդես եկան բազմաթիվ ազնիվ մարդիկ, հակահարված տալով կեղծարարներին։ Ապացուցելով Չեստերի հիմնազուրկ պնդումները, Ջորջ Մոնտգոմերին (հայ-ամերիկյան ընկերության ղեկավարը) հիշա-

տակում էր Արմին Վեգների՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին հղած նամակի (Բեռլին, 1912-ի հունվար) փաստերը, որոնք տալիս են ահավոր չարագործության ճշմարիտ պատկերը (61, էջ 25—26)։

Ստենֆորդ Շոու ամերիկացի պատմաբանն իր թրքուհի կնոջ հետ միասին ավերածություններ է գործում պատմական ճշմարտությունները նենգափոխելու բնագավառում։ Նա հայտարարում է, թե շատ է ջանացել, բայց թուրքական արխիվներում հետք անգամ չի գտել հայկական ջարդերի մասին։

Ուշագրավ է, որ անգլիացի պատմաբան Ուոկերը կոնկրետ փաստերով քննադատում է ամերիկյան պրոֆ. Ստենֆորդ Շոուի և նրա թրքուհի կնոջ՝ Էզել Քուրալ Շոուի գրքում[1] առաջ քաշված կեղծ հիմնավորումներն ու փաստարկները, ըստ որոնց երիտթուրքական իշխանությունների հրահանգներն իբր նպատակ էին հետապնդում պատերազմի խառնակ պայմաններում հայերին պաշտպանել վայրենաբարո մահմեդական բանդաների հարձակումներից։ Շոուները շարունակում են ստել։ Ինչպես ասում են, բոլոր կամակորները հիմար են այնպես, ինչպես և բոլոր հիմարները կամակոր են։

Ձնայած թուրք-ամերիկյան ռազմաքաղաքական համագործակցությանը, ԱՄՆ-ում նույնպես գտնվում են պաշտոնատար թե մտավորական մարդիկ, որոնք հրապարակավ իրենց ձայնն են բարձրացնում ճշմարտության օգտին։ Հայ ուսանողների ցույցերի հետևանքով էր, որ Լոս Անջելեսի համալսարանի պրոֆ. Ստենֆորդ Շոուն ստիպված էր դադարեցնել արդի Թուրքիայի պատմության դասընթացը (9, 13. 02. 1982)։ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանի մի ելույթի կապակցությամբ, երբ միտումնավոր աղավաղվել էին արևմտահա-

[1] St. J. Shaw and E. K. Shaw History of the Ottoman Empire and Modern Turkey, volume I—II, 1976—1977; Cambridge, London, New York, Melbourn. Այս գիրքը հանգամանալի քննադատության է ենթարկել Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը The Armenian question — The Critic's view. Beyond revisionism հոդվածում ("International Journal of Middle East Studies" vol. 9, August 1978, N 3. p. p. 379—388, Cambridge).

յության վերաբերող պատմական փաստերը, Կալիֆոռնիայի նահանգային կառավարության ներկայացուցչական տան անդամ Մարտինեզը մի նամակ էր հրատարակել, որտեղ ասված էր. «Ես, որպես ամերիկացի մի պաշտոնյա հաստատում եմ, որ հայկական ցեղասպանությունը փաստացի և պատմական մի իրողություն է, բայց հասկանալի չէ, թե ինչն է պատճառը, որ Թուրքիան այնքան ճիգ ու ջանք է թափում իր նախորդի՝ օսմանյան կայսրության գործած արարքները ծածկելու համար»։

1980-ին Փարիզում ոմն Փիեր Մոլեր հրատարակեց մի կեղծագիր՝ «Հայեր—ո՞ւր է ճշմարտությունը» վերնագրով (Arméniens—ou est la réalité), որտեղ ամբողջապես ծուռ հայելու մեջ է ներկայացվում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արևմտահայության նկատմամբ երիտթուրքերի կատարած հրեշավոր ոճրագործությունը։ «Հյուրիեթ» թուրքական թերթը շտապեց իր լրագրի առաջին էջում հրապարակել ֆրանսիացի կեղծարարի հետ թղթակից Էոզքարայի ունեցած հարցազրույցը։ Նպատակը պարզ է. որքան հնարավոր է արևմտաեվրոպական երկրների նոր սերունդների աչքում խճողել պարզ ու հասկանալի խնդիրները, թաքցնել պատմական ճշմարտությունները։ Նախ հարցականի տակ է վերցվում հայոց կոտորածի նկատմամբ «ցեղասպանության» տերմինի կիրառման նպատակահարմարությունը, հետո հայերին մեղադրում թուրքական պետականության դեմ ապստամբական կեցվածքի համար։ Նա գրում է. «Այն օրերին հայերը կռնակից զարկեցին թուրքերին» (8, 3. 2. 1981)։ Այնուհետև ֆրանսիացի թուրքաֆիլը իր ընթերցողներին տեղեկացնում է, թե շուտով լույս է ընծայելու իր նոր գիրքը՝ «Աթաթուրքի վերադարձը»՝ նվիրված 1980-ի սեպտեմբերի պետական հեղաշրջմանը։

Արևմտյան երկրներում այժմ էլ տպագրվում են գրքեր, որտեղ ծուռ հայելու մեջ է ներկայացվում պատմական իրականությունը։ Օրինակ, ամերիկացի հեղինակ Ռ. Ռոբինզոնն իր գրքի առաջաբանում գրում է. «Թուրքերը փորձված են վարչական արվեստում. հարյուրամյակների ընթացքում նրանք մեծածավալ կայսրություն են կառավարել և ժամա-

նակի պահանջներին համեմատ լավ են կառավարել» (67, էջ IX)։

Ղեկավարվելով այսօրվա քաղաքական ու ռազմական պահանջներով, Սովետական Միության դեմ Թուրքիան օգտագործելու ՆԱՏՕ-ի պլաններով, ամերիկյան հեղինակները թուրք կառավարողներին, մտավորականությանը դուր գալու համար գովասանքներ են շռայլում թուրքականության հասցեին։

Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի համալսարանի պրոֆ. Ա. Հ. Չարտերիզը (A. H. Charteris) տակավին 1932-ին ապացուցում էր, որ հայերի նկատմամբ կատարված է ահավոր անարդարություն Թուրքիայում։ Վկայակոչելով միջազգային երեսուն երեք իրավաբանների կարծիք-եզրակացությունը՝ հայ ժողովրդին կոտորելու, հայրենի հողից զրկելու թուրքական պետական քաղաքականության դատապարտման, հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների պաշտպանության անհրաժեշտության մասին, ավստրալիացի պրոֆեսորը շեշտում էր միջազգային օրենքը նման ձևով բռնաբարելու անթույլատրելիությունը։ Նա հույս էր հայտնում, որ միջազգային արդարադատությունը կհաղթանակի (71)։

1946-ին արևելագետ Մինորսկին անգլիական պառլամենտի անդամ Թոմ Դրիբերգի միջոցով հրապարակած իր հայտարարությամբ ծաղրում էր Անգլիայի արտաքին գործերի մինիստր Բևինին այն բանի համար, որ վերջինս համերաշխել էր Թուրքիայի վարչապետ Սարաջօղլուի հետ, թե Կարսի ու Արդահանի մարզերում հայեր չկան։ Մինորսկին հիշեցնում էր Հիտլերի հայտնի խոսքերը՝ «Ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածը» և մատնացույց էր անում, որ մարդկության հիշողությունը կարճ չէ և նրան հայտնի է, թե ինչ է կատարվել հայության հետ (77, էջ 362)։

1963-ին լեհ գրող, հրապարակախոս Բոգդան Գեմբարսկին գրեց իր «Նամակ թուրք բարեկամիս», որտեղ պահանջում էր՝ «տուր ինչ որ պարտք ես»։ Նա պահանջում էր համաշխարհային մասշտաբով նշել 1915-ի ողբերգության 50-ամյակը, դատապարտել ցեղասպանության հեղինակներին և նրանց աշակերտներին։ Բոգդան Գեմբարսկին Հնդկաստանի նախկին պրեզիդենտ Ռադհակրիշնանին հղած ուղերձի

մեջ դատապարտում էր երիտթուրքերի չարագործությունը, դիմում նրան ձայն բարձրացնել 1915-ի հայոց ողբերգությունը համաշխարհային առումով դատապարտելու, երիտթուրքերին անարգանքի սյունին գամելու համար։

1965-ի ապրիլի 23-ին ֆրանսիական «Մոնդ» թերթում հրապարակած իր հոդվածում աշխարհահռչակ հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին գրում էր.«Բոլոր մարդերուն մեջ հակառակ իրենց փոքր թվին հայերը կնպաստեն քաղաքակրթության համաշխարհային գործին» (8. 30. 4. 1965)։

Ժան Մարի Գառզուն իր «Մի իսկական ցեղասպանություն» հատորի մեջ տալիս է եղեռնի ու նրա հետևանքների համոզիչ բնութագիրը։ Հեղինակը վեճի չի բռնվում «այս կամ այն թուրք պատմաբանի հետ, որովհետև այդ պատմաբանների կատարած նենգափոխումները համարում է ոչ թե առանձին հեղինակների գրչի գործ, սուբյեկտիվ կարծիք կամ վրիպում, այլ պաշտոնական թուրքական իշխանությունների կողմից որոշակի նպատակով պարտադրված «տեսություն», որն ապացուցելու անշնորհակալ գործին է լծված համարյա ամբողջ թուրքական պատմագիտությունը» (7)։

Իսկ ֆրանսիացի Իվ Տեռնոնը Հայաստան այցելելուց հետո հրատարակեց «Հայերը—մի ցեղասպանության պատմություն» հատորը, բաղկացած երկու մասից՝ ա) հայկական հարցը և բ) երիտթուրքերը, որտեղ համոզիչ փաստերով ֆրանսիացի ընթերցողներին է ներկայացրել խնդրի էությունը։

Անդրեյ Թոյնբին 1969-ին հրատարակած իր «Փորձառություններ» գրքում նորից անդրադառնում էր 1915-ի հայերի բնաջնջմանը և մեղավոր ճանաչում «Առաջադիմություն և միություն» կոմիտեի հետադիմական վարչակարգը և գլխավոր ոճրագործներ Թալեաթին ու Էնվերին։

Թուրքական կեղծարարությանն այսօր հակահարված են տալիս աշխարհի բոլոր ճշմարտասեր մարդիկ, կոմունիստները, բոլոր նրանք, ովքեր հանուն մարդկության շահերի անհրաժեշտ են համարում գենոցիդի բոլոր դրսևորումների ու նրա պատասխանատուների դատապարտումը։

Մոտեցումների մեջ, ինչ խոսք, որ առկա են բազմազանություն, տարբերություններ։ Ոմանք կարծես թե գյուտ են

անում, ճիշեր արձակելով հին թղթերին ծանոթանալուց հետո։ Մյուսներն առավել բանիմաց են։ Երրորդները խիստ պրագմատիկ են, ամեն ինչ անում են պահի հարմարությանը նայելով, իրենց շահախնդրության համեմատ։

Ապրիլյան եղեռնի 60-ամյակի առթիվ Լիբանանի կոմունիստական կուսակցությունը 1975-ի ապրիլին իր հրապարակած հայտարարության մեջ համերաշխություն էր արտահայտում հայ ժողովրդի նկատմամբ. «Թուրքական ազգայնամոլ խմբակցության և օսմանյան իշխանությունների կողմից հայ ժողովրդի դեմ ի գործ դրված ցեղասպանության 60-ամյակի նախօրյակին, Լիբանանի կոմունիստ կուսակցությունը, բանվորների, գյուղացիների ու հեղափոխական մտավորականների կուսակցությունը խոնարհվում է հիշատակի առջև քաջարի հայ ժողովրդի մեկուկես միլիոն նահատակների, որոնք ընկան ի պաշտպանություն իրենց ազգի ազատության, անկախության, ավանդությունների, մշակույթի և մայրենի լեզվի» (10, 14. 11. 1981)։

Ահա թե ինչ էր պատասխանել Մարսելի «Արմենիա» ամսաթերթին ֆրանսիական կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ժորժ Մարշեն հայոց գենոցիդի կապակցությամբ իրեն հղված հարցի առթիվ։

«Պարոն տնօրեն

Ապրիլի 24-ի ոգեկոչումը այս տարի ևս ցույց տվեց, որ 62 տարի վերջ մարդկության հանդեպ գործած նման ոճիր մը չէր կարող մոռացության կամ անտարբերության մեջ ընկղմիլ, ինչ որ ոմանք պիտի ուզեին։

Մեր ժողովրդին, իր գործավոր դասակարգին մարդկայնական համերաշխության ավանդությունը պիտի չթույլատրեր արդեն։

Քանի որ կը մաղթեք ձեր ընթերցողներուն ծանոթացնել իմ տեսակետս այս տխուր դեպքերու մասին, թույլ տվեք վերհիշել, որ այն շրջանին այս բարբարոս արարքը դատապարտելու և հատուցում պահանջելու ուղղությամբ բարձրացող մեծ ձայներու մեջ կգտնվեին Մարսել Քաշենի, Անատոլ Ֆրանսի և Անրի Բարբյուսի ամենաուժգին շեշտով ձայները։

Նույնպես վերհիշել, որ 1920 թվականեն ի վեր ֆրանսիական համայնավար կուսակցությունը հստակ և պայծառ

դիրքավորում ունեցած է այս հարցին արդար և նպաստավոր լուծումի մը հայ ժողովուրդի ի նպաստ. հանդիսավորապես հայտարարելով, որ մոռացումը համահավասար է ոճրի մը, երբ ան նպատակ ունի 1915—1922 թվականի ջարդերը՝ իր սեփական հողերուն վրա ժողովրդի մը բնաջնջումը։

Պարտք կհամարեմ հաստատել, որ այսօր տակավին հայ ազգային հարցը արդար դատերու շարքին է և մենք համայնավարներս պիտի շարունակենք պաշտպանել ազգային, թե միջազգային գետնի վրա։

Ֆրանսիական կառավարութենեն և միջազգային ատյաններեն ցեղասպանության դատապարտումը կարևոր հանգրվան մը պիտի ըլլար այս հարցին արդար լուծում մը տալու ուղղությամբ։

Քանիցս համայնավար երեսփոխանները այս ուղղությամբ միջամտություններ ըրին Ազգային ժողովին մեջ և կառավարության մոտ. վերջին անգամ 1975-ին, Եղեռնի 60-րդ տարեդարձի առիթով։ Բայց ավաղ առանց հաջողության. պարզ այն պատճառով, որ ֆրանսիական մեծ բուրժուազիան և իր քաղաքական իշխանությունը մոռցնել տալ կուզեն մարդկության դեմ գործված ոճիրները դրամատիրության և աշխարհակալության կողմե։ Ինչպես օրինակ նացի Գերմանիո գործած ոճիրները։

... Ձեր ուշադրությունը կհրավիրեմ այն բանի վրա, որ հայաշատ քաղաքներու մեջ մեր կուսակցության ներկայացուցած քաղաքական ծրագրին մեջ առաջնական կարգով ճշտակված էր հայկական ցեղասպանության ճանաչման առնչությամբ եղած գործունեությունը, ինչպես նաև անհրաժեշտ միջոցառումները իրենց ավանդությունները և մշակույթը պահպանելու և զարգացնելու համար:

Քանի մը տարի առաջ Ս. Հայաստան այցելած ըլլալով հոն հանդիպեցա դինամիկ ժողովուրդի մը, ապահովված իր հեռանկարներու զարգացումով և վայելելով կյանքի կատարյալ ապահովություն։ Միայն սոցիալիզմի արժանիքն է, որ այս ազգին գոյության միջոցները ապահովելե վերջ անոր հնարավորություն կուտա դեպի իր ապագան վստահությամբ նայելու։ ...Վաղվան դեմոկրատական Ֆրանսայի

մեջ այն հեռանկարներով որ պիտի ընծայե հասարակաց ծրագրի կիրառումը, ձախակողմյան կառավարության մը կողմե.— որուն մեջ համայնավարները պիտի ստանձնեն իրենց ամբողջ պատասխանատվությունը—կը փափագինք, որ անոնք իրենց արժանի տեղը բռնեն առանց բան մը զիջելու իրենց մշակույթեն և ազգային հատկանիշներեն մեր երկիրը ընկերային առաջադիմության, դեմոկրատի և անկախության, ազատ և ֆրանսիական երանգներով օժտված դեմոկրատիկ ընկերվարության միությունին մեջ դնելու համար։

Հաճեցեք ընդունել, պարոն տնօրեն հարգո ողջույններս։

Ժորժ Մարշե (17, հուլիս 1977)»։

«Արմենիա-Կիպրոս» վերտառությամբ 1975-ի մարտին Նիկոզիայում տպագրվեց մի գրքույկ, որտեղ փաստերի հիման վրա զուգահեռներ են անցկացվում 1915-ին Արևմտյան Հայաստանում և 1974-ին Կիպրոսում թուրքերի կողմից կատարված բարբարոսական, հակամարդկային գործողությունների միջև։

1978-ի ապրիլի 7-ին «Եվրոպա» իտալական ամսագրում իտալացի Ջանկարլո Մաձինին մի հոդված էր հրապարակել, որտեղ զուգահեռ է անցկացնում հայերի տեղահանման, ջարդերի ու պաղեստինցի փախստականների միջև։ Նա գրում է, որ հրեաներն ուզում են, որպեսզի ինչքան հնարավոր է շատ տարիներ անցնեն 1948-ից թափառական կյանք վարող և ճամբարներում իրենց կյանքն անցկացնող փախստականների ու նոր սերունդների միջև։ Վերջիններս կարող են նույնիսկ մոռանալ իրենց հայրերի տառապանքները։ «Մոտավորապես այնպես, ինչպես դա տեղի ունեցավ հայերի հետ։ Ո՞վ է հիշում այժմ այն մասին, որ նրանք քշված են իրենց հողից։ Քանի՞ երիտասարդ է այժմ բողոքում դրա դեմ։ Այսպիսով, յուրաքանչյուր օր, որ շահում է Իսրայելը, այդ տեսակետից ձեռնտու է նրան»։

Փարիզի քաղաքապետ Շիրակը 1979-ին իրավունք տվեց մի հուշակոթող կառուցել Ֆրանսիայի մայրաքաղաքում 1915-ին զոհված հայերի հիշատակին։ Հուշակոթողը կառուցվելու է Փարիզի հայոց եկեղեցուն մոտիկ մի հրապարակում։ «Երիտթուրքերու գազանաբարո ղեկավարները,— գր-

րել է ֆրանսահայ առաջադիմական գործիչ Միհրան Մավյանը,— ուզեցին, ջանացին, ի գործ դրին բոլոր դիվային միջոցները, որպեսզի հայ ժողովուրդը բախտ չունենա ունենալու իր հայրենիքը» (4. 28. 4. 1919)։ Սակայն, «քաղաքակիրթ աշխարհը» իր դիվանագիտական բոլոր տեսակի պարձվածքներով, իր կողմնակցական բոլոր մտահղացումներով չի կարող, չպետք է կարողանա սփյուռքահայությանը մոռացնել տալ Արևմտյան Հայաստանի մեր սեփականությունը լինելուց, որը դեռ անհիշատակ դարերից ի վեր եղել է և մնում է որպես մեր պապենական հայրենիքը՝ հավերժական Հայաստանը։ Սփյուռքահայությունն ապրում է այս հույսով։ ... Անտարակույս, սփյուռքահայությունն ունի իր գոյատևման մի անփոխարինելի հենարան, որը Խ. Հայաստանն է։ Բայց մեկը չի կարող փոխարինել մյուսը, դրանք երկուսը միասին կազմում են մի անբաժանելի ամբողջություն» (4, 28. 4. 1979)։

1979-ի ապրիլի 24-ին 25 հազար թեհրանահայեր խաղաղ ցույցով ուղևորվեցին թուրքական դեսպանատուն և պահանջեցին Թուրքիայի այսօրվա կառավարությունից ճանաչել հայերի դեմ իր նախնիների գործած ցեղասպանության պատասխանատվությունը։ Թափորին միացել էին նաև պարսիկներ՝ «Մեր միասնությունը հայ քրիստոնյաների հետ անխախտելի է» մակագրությամբ պաստառներով։

1980-ի ապրիլի 25—27-ը Արևմտյան Գերմանիայի Բադ Մարիենբերգ քաղաքի «Եվրոպա Հաուզի» մեջ տեղի ունեցավ XX դարի առաջին ցեղասպանությանը նվիրված մի կոնֆերանս։ Մասնակիցների թիվը 80 հոգի էր, որոնց թվում կային նաև Ֆրանսիայից։ Զեկուցողները դատապարտեցին երիտթուրքերի չարագործությունը, քննարկեցին հայկական հարցի բազմաթիվ ասպեկտները (4, 5. 7. 1980)։

1979-ի մարտի 7-ին ԱՄՆ-ի կոնգրեսում հայոց գենոցիդի խնդրին անդրադարձավ Կալիֆոռնիայի երեսփոխան Դանիելսոնը։ Առիթը ՄԱԿ-ի մարդկային իրավունքների հանձնախմբի բանաձևի մեջ 30-րդ պարագրաֆի խնդիրն էր։ Դանիելսոնի խոսքը տպագրվեց «Congressionàl Record House»-ի 1979-ի մարտի 7-ի համարում։ Ամերիկյան սենատորը մաս-

նավորապես ասաց. «Հայ ժողովրդի զավակները ծրագրված ոճիրի՝ ցեղասպանության ողբալի զոհերն էին»։ Նա նշում էր, թե այդ ամենից հետո զոհերի զավակները դեռ ջանքեր են գործադրում, որ կատարված չարագործությունը դատապարտվի ՄԱԿ-ի կողմից։ «Ինչպիսի հեգնանք, որքան անգթություն և ինչպիսի ծաղրանք կներկայացնեն այս բոլորը՝ ուղղված արդարության դեմ»,— հայտարարեց սենատորը (8, 26. 4. 1979)։ Նա առաջ քաշեց այն միտքը, որ ժամանակին հայոց գենոցիդի դատապարտումը, միջազգայնացումը կարող էր կանխել Հիտլերի գործած ահավոր չարիքը։ Դանիելսոնը լավատես է. նա չի տարակուսում, որ «պիտի գա օրը, երբ հանցապարտ Թուրքիո կառավարությունը հարկադրված պիտի ըլլա ընդունելու իրողությունն այն դեպքերուն, որ տեղի ունեցան օսմանյան կայսրության մեջ», որ «Թուրքիան նաև պիտի ստիպվի իր սխալները սրբագրել սկսել և հատուցումներ կատարել հայ ժողովրդին»։ «Սակայն հարկ է, որ Թուրք կառավարությունը շրջադարձ մը կատարե ցարդ իր որդեգրած ուղիեն, որ տևապես կմիտեր ուրանալ ցեղասպանության երբևիցե պատահած ըլլալը»։ Դանիելսոնը քննադատում էր ամերիկյան իշխանություններին հայոց գենոցիդը նշող միջոցառումներն արգելակելու համար։

1979-ի հոկտեմբերի 13-ին «Էր Մաթեն» թերթը Հոլանդիայում թուրքական դեսպանի որդու սպանության առթիվ գրում էր. «Դաշնակիցների Դարդանել ցամաքահանման և ռուսական առաջխաղացման սպառնալիքի տակ թուրք կառավարությունը հրահանգեց 1915-ի ապրիլի 24-ին, օսմանյան կայսրության մեջ ապրող երկու միլիոն 100 հազար հայերի զանգվածային տեղահանումը։ Մեծ մասը ջարդվեցավ, բայց Թուրքիա միշտ կուրանա այս դեպքը»։ Եվրոպական թերթերը մշտապես նշում են, թե հայերը չեն ներել։

«Ուղևորություն դեպի Արարատ» (Passage to Ararat) հանրահայտ գրքի հեղինակ Մայքլ Առլեն կրտսերը 1980-ի մարտի 11-ին հանդես եկավ մի հոդվածով «Նյու Յորք Թայմս» թերթի էջերում, դատապարտելով ահաբեկչությունը որպես «ցեղասպանության մի նողկալի ճյուղ»։ Նա դեմ է թուրք դեսպանների սպանություններին։ Բայց գրում է, թե «նույնքան տխուր եմ, երբ գիտակցում եմ, որ այսքան տա-

րիներ անց թուրքերը չեն ուզում ամբողջ այս հարցը տեսնել այնպես, ինչպես որ է»։ Մայքլ Առլենը հույս է հայտնում, որ թերևս մոտ ապագայում թուրքական իրականության մեջ գտնվեն մարդիկ, որոնք առաջ գան և ընդունեն, որ սարսափելի դեպքն իրապես պատահել է։

Հունաստանի կոմկուսի Կենտկոմի օրգան «Ռիզոսպաստիս» թերթը (19. 4. 1980) գրել է. «1915-ի ապրիլի 24-ը հայ ժողովրդի համար մռայլ ու ողբերգական տարեթիվ է։ Այն հիշատակի օրն է 1 500 000 հայերի, որոնք սպանվեցին ու դարձան վայրի ցեղասպանության զոհեր, որը նրանց նկատմամբ իրագործեց թուրքական պետությունը։ Դա հարատև ոճիր է և ջնջման ենթակա չէ»։

Լոնդոնում ստեղծված «Փոքրամասնությունների պաշտպանության կոմիտեն», վերջին տարիներս գրքույկներ է հրատարակում միջազգային հասարակական կարծիքին ներկայացնելով անիրավված փոքրամասնությունների դատը։ Այդ գրքույկներից 32-րդը նվիրված է հայ ժողովրդին։ Այստեղ բացահայտված են թուրք պատմաբանների կեղծիքները Հայաստանի, հայ ժողովրդի, նրա ծագման մասին։ Գրքույկի հեղինակները ցույց են տալիս, որ զանգվածային սպանությունները «կազմակերպված պատահարներ» չէին. «սպանդը, եթե ոչ տարիներ, ամիսներ առաջ մեծ զգուշությամբ մտածված և ծրագրված էր» (16. 14. 6. 1980)։

1980-ին, Մեծ եղեռնի 65-ամյակին, անգլիացի երիտասարդ պատմաբան Քրիստոֆեր Ուոքերը հրապարակեց իր «Հայաստան—մի ազգի վերապրումը» վերնագրով գիրքը (60)։ Այն պարունակում է 12 քարտեզներ և Վան, Կարս, Անի, Սովետական Հայաստան, Մերձավոր արևելք, Եվրոպայի և ԱՄՆ-ի հայաշատ գաղութները կատարած հեղինակի ուղևորությունների ու ուսումնասիրությունների արդյունքն է։ Հեղինակը ցույց է տալիս, որ չնայած ջարդերին ու հալածանքներին, հայերը վերապրում են իբրև ազգ։ Հեղինակը շրջանառության մեջ է դրել անգլիական արտաքին քաղաքականության արխիվների բազմաթիվ նոր վավերագրեր, որոնք լրացուցիչ լույս են սփռում թուրքական պետականության հայահալած քաղաքականության վրա, պատկերացում են տալիս արևմտաեվրոպական դիվանագիտության գործողու-

թյունների մասին։ 1915-ի համար հեղինակը չի խորշում Անգլիայի քաղաքականության հասցեին խստագույն քննադատությունից։

Անգլիացի Բերնարդ Լևինը «Թայմսի» (26 մարտի 1981) էջերում տպագրած իր «Ինչ են հիշում հայերը» հոդվածում գրեց. «Քառորդ դարի ընթացքում, 1895-ից 1920 թթ., հայ ազգը կորցրեց մեկուկես միլիոն մարդ, որոնց գնդակահարեցին և մորթեցին, քաղցամահ արին, մատնեցին զրկանքների և տարափոխիկ հիվանդությունների։ Դա սկսվեց XIX դարի վերջին, երբ քրիստոնյա հայ փոքրամասնությունն օսմանյան կայսրությունում Աբդուլ Համիդ սուլթանի կարծիքով վտանգ դարձավ իր կառավարմանը (հավանաբար նա խելագարվել էր)։ 1895-ին Աբդուլը շղթայազերծ արեց իր շներին. մոտ 300 հազար թուրքահայեր կոտորվեցին ծայրահեղ գազանային մեթոդներով»։ Այնուհետև նա գրում է. «Հնարավոր չէ ճշտորեն որոշել զոհերի թիվը, բայց ոչ մի տարակույս չկա, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և առաջին հետպատերազմյան տարիներին ոչնչացվեց 1,5 միլիոն հայ»։ Բերնարդ Լևինը գրում է, որ սկսած Աբդուլ Համիդի ժամանակներից հայերի կոտորածները չէին դադարել մինչև մեր դարի 20-ական թվականները։ (73, 26. 3. 1981)։

1980-ի ապրիլի 24-ին Լիոնի Թուրքական հյուպատոս Օքան Ժեզերը չնայած պայմանավորվածությանը, հրաժարվեց ընդունել ֆրանսիացիների պատվիրակությանը, որոնք ուզում էին նրան հանձնել հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության կոմիտեի խնդրագիրը։ Այդ խմբի մեջ էին Ռոնայի դեպարտամենտից պառլամենտի անդամ Շարլ Էռնյուն՝ Վիլլերբանի քաղաքագլուխը (ներկայիս պաշտպանության մինիստր), Ժան Պոպերենը՝ Մեյզնյոյի քաղաքագլուխը և Ռոնայից դեպուտատ Միշել Նուարը։ Այդ օրը Լիոնի ցույցին մասնակցեց երեք հազար մարդ. սրան հակառակ Թուրք հյուպատոսը կազմակերպեց հակահայկական ցույց, գրեց թռուցիկներ, որոնք վիրավորական էին Էռնյուի, Պոպերենի և Նուարի՝ որպես պառլամենտի անդամների համար։ Սրանք հասան այն բանին, որ արտաքին գործերի մինիստր Ֆրան-

սուա Պոնսեն և պրեզիդենտ Վալերի Ժիսկար դ՚Էստենը երկրից վտարեցին Թուրք հյուպատոսին (2, 6. 8. 1981)։

1980-ի դեկտեմբերի 13-ին Մարսելում բացվեց «1915 ապրիլի 24» փողոցը։ Մինչ այդ նման անվանումներով փողոցներ էին կոչվել Ֆրանսիայի հայաշատ Վիեն, Դեսին և այլ քաղաքներում։

Ֆրանսուա Միտտերանը պրեզիդենտ դառնալու նախօրյակին հայտարարեց, որ հայկական հարցն ուղղակիորեն վերաբերում է ֆրանսիական պետությանը։ Նա կշտամբեց Ժիսկարի կառավարությանը «հայկական գենոցիդը և հայկական հարցը» չճանաչելու համար։ Նա հայտարարեց. «Մենք՝ սոցիալիստներս պետք է պահանջենք, որպեսզի Ֆրանսիան ճանաչի 1915-ի հայերի գենոցիդը և հանդես գանք հայկական հարցի արդարացի լուծման համար։ 1981-ի ապրիլին նա այցելեց Մարսելի «Ապրիլի 24» եղեռնի կոթողին։

1981-ի աշնանը Ֆրանսիայի արտաքին հարաբերությունների մինիստր Կլոդ Շեյսոնը ափսոսանք էր հայտնում, որ Անկարան շարունակում է ժխտել հայոց գենոցիդի փաստը («Ֆիգարո», 18. 11. 1981)։ Պատասխանելով ֆրանսիական պառլամենտի վերոհիշյալ դեպուտատ Միշել Նուարի (Ռոնայից) գրավոր հարցումին (1981, հուլիսի 13), Կլոդ Շեյսոնը հայտարարեց. «Կառավարությունը չի բաժանում այսօրվա Թուրքական իշխանությունների դիրքորոշումը, որոնք պնդում են այն բանի վրա, որպեսզի 1915-ի իրադարձությունները դիտվեն ոչ թե որպես Արևելյան Անատոլիայի հայ բնակչության ոչնչացման նպատակին ուղղված գենոցիդ, այլ որպես խռովության ճնշում, որ բարձրացվել էր միաժամանակ ռուսական բանակի հարձակմանը զուգահեռ» (62, 18. 9. 1981)։

Ֆրանսիայի կոմկուսի հայ անդամներն իրենց անհամաձայնությունը հայտնեցին Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Շեյսոնին, որն ընդունելով գենոցիդի փաստը, միաժամանակ, ասել էր, թե «ներկայիս Թուրքական կառավարությունը պատասխանատվություն չի կրում 60 տարի առաջ հայ ժողովրդի կրած ողբերգության համար»։ Նրանք հայտարարեցին, որ «ներկայիս Թուրքական կառավարությունն ըստ էության այնպիսին է, ինչ որ էր 1915—1922 թթ.։

Այն փաշիստական է»։ Եվրոպական, թուրքական մամուլում ուշադրության դարձրին Ֆրանսիայի ներքին գործերի մինիստր, Մարսելի քաղաքապլուխ Դեֆերի այն հայտարարությունը, թե «Ֆրանսիան կօգնի Ձեզ (հայերին) Ձեր գործի հաղթանակի համար»։

Քանիցս «Յումանիտեն» պահանջել է, որպեսզի Ֆրանսիան իր ձայնը բարձրացնի 20-րդ դարի առաջին և մեծագույն գենոցիդը ՄԱԿ-ի կողմից ճանաչվելու ու դատապարտելու օգտին։

«Մոնդը» գրեց հայոց հարցի նկատմամբ ներքին գործերի մինիստր Գաստոն Դեֆերի, պաշտպանության մինիստր Շարլ Էռնյուի «հետաքրքրության» ու «համակրանքի» մասին, որ նրանք ունեցել են մինչև սոցիալիստական կուսակցության իշխանության գլուխ անցնելը, մշտապես մասնակցել են ապրիլի 24-ին հայերի կողմից Մարսելում, Վիլլերբանում, Դեսինում անցկացված միջոցառումներին։ 1981-ի ապրիլի 24-ին Լիոնում Շարլ Էռնյուն հայտարարեց. «Հայոց գենոցիդի ճանաչումը անհետաձգելի պարտականություն է, մի քայլ դեպի խաղաղությունը, արդարության ակտ աշխարհում ապրող 7 միլիոն հայերի համար»։

Շարլ Էռնյուն սոցիալիստական կուսակցությանը, պրեզիդենտ Միտտերանին հիշեցնում էր հայ դատը հետապնդելու գործում ֆրանսահայերին տրված խոստումները կատարելու անհրաժեշտության մասին (12, 16—18, XI, 1981)։ Այս հայտարարությունը մեծ աղմուկ և իրարանցում առաջ բերեց թուրքական մամուլում։ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թուրքմենը Էռնյուի ելույթն անվանեց «անգիտակից» ու «խելագար», իր մոտ հրավիրելով Անկարայում Ֆրանսիայի դեսպանին։ Ֆրանս-թուրքական հարաբերությունները այն աստիճան վատացան, որ «Հյուրիեթ» թերթը 1981-ի հոկտեմբերի 15-ին լույս տեսավ Էռնյուի, Դեֆերի, Պոպերենի, Ֆրանչեսկիի, Մերմազի ֆոտոներով՝ «Հինգ ֆրանսիացի երկվորյակները—Թուրքիայի թշնամիներ» վերնագրով («Էքսպրես», 20—26. 11. 1981)։

Պատասխանելով թուրքական թերթերի հարձակումներին, «Պարի Մատչը» գրեց (4. 11. 1981). 1914-ին Թուրքիայում կար 2 400 000 հայ։ 1927-ին մնացել էր 65 հազար։ Առաջին

համաշխարհային պատերազմից ու նրանում օսմանյան կայսրության պարտությունից հետո Թուրքիայում հաստատված Քեմալ Աթաթուրքի «աշխարհիկ դիկտատուրան» ավարտեց հայերի «խաղաղեցումը»։ «Նոր «հեղափոխական» Թուրքիան բոլոր տարբեր էթնիկական խմբերն իրար հետ ցեմենտելու կարող նացիոնալիզմի կարիքն ուներ»։ «Թուրքական Հայաստանը գործնականում ջնջվեց աշխարհագրական քարտեզի երեսից»։

1981-ի ապրիլի 24-ին «Մոնդը» տպագրեց հայկական հարցին նվիրված մի հավելված, որտեղ ասվում էր. Թուրքիան շարունակում էր օկուպացնել հայկական, քրդական տերիտորիաները, Կիպրոս կղզու մի մասը։ Թուրքիան ազգային հերոս է համարում Թալեաթ փաշային, որը ծրագրեց և իրականացրեց 1915-ի հայոց գենոցիդը։ Թուրքական պետությունն անմահացրեց այդ գենոցիդի հիմնական պատասխանատուին։ 1943-ին Թալեաթի աճյունը տեղափոխվեց Բեռլինից Ստամբուլ, որտեղ «Ազատության մարտիկների» բլրի վրա կառուցվեց նրա դամբարանը։ Վերջերս Անկարայում բացվեց Թալեաթի անվան գրոսայգի։ Եվ վերջապես, Ստամբուլում բացվեց Թալեաթի անվան դպրոց։ Համեմատելով Թալեաթին Ադոլֆ Հիտլերի հետ, հավելվածի հեղինակները հարցնում են. «Որտե՞ղ է գտնվում Հիտլերի անվան դպրոցը»։ «Գերմանիայի ո՞ր քաղաքում է գտնվում Ադոլֆ Հիտլերի պողոտան։ Որտե՞ղ է գտնվում Հիտլերի դամբարանը»։

Արևմտաեվրոպական մամուլը մշտապես մատնացույց է անում այն փաստը, որ ժամանակակից Թուրքիայում հայերը «շարունակում են ենթարկվել բազմաթիվ զազրելի ճնշումների. նրանց կրոնական ակտիվությունը գտնվում է մշտական սպառնալիքի տակ, կրթություն ստանալու նրանց հնարավորությունները խիստ սահմանափակ են, նրանց պատմական շատ հուշարձաններ քանդված են» (73, 26, 3. 1981)։

Գրվում է այն մասին, որ տակավին չի փոխհատուցված միլիոնավոր մարդկային զոհերի դիմաց, հայ ազգի մտավոր վերնախավի ոչնչացման դիմաց, վեց միլիոն պանդխտների դիմաց, որոնք կոտորածի զոհերն էին, սպանված՝ ծնվելուց առաջ։ Դոմոգրաֆները հաշվել են, որ 1914-ին հինգ միլիոն

հայ կար աշխարհում։ Հիսուն տարի անց կար ընդամենը չորս միլիոն, մինչդեռ այդ թիվը պետք է լիներ 10 միլիոն։ Վեց միլիոնի պակասը գենոցիդի անմիջական արդյունքն էր։

Պատասխանելով թուրքական մամուլի գործակալության թղթակցի հարցերին Անկարայում Ֆրանսիայի դեսպան Թուսիայի կառավարությունը պարզորոշ բացատրել է թուրքական իշխանություններին, որ նա համաձայն չէ օսմանյան կայսրության ծանր շրջանում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին նրանց տված գնահատականին։ Այդ դիրքավորումը ոչ մի կերպ չի նշանակում, որ մենք հավանություն ենք տալիս կամ ըմբռնողությամբ ենք ընկալում հայերի էքստրեմիստական գործողությունները» («Միլիեթ», 6. 03. 1982)։

Թուրք-ֆրանսիական հարաբերություններն ավելի սրվեցին 1981-ի ապրիլին, երբ Մարսելում 1915-ին զոհված հայերին նվիրված մի ծիսակատարության ժամանակ Ֆրանսիայի ներքին գործերի մինիստր Գաստոն Դեֆերը հայտարարեց. «Ֆրանսիական կառավարությունը ճանաչում է գենոցիդը, որին զոհվեցին հայերը»։ (72, 23. VIII. 1982)։

Ֆրանսիացի Ժան Լուի Ռիշարդոն ինչպես ֆրանսիական հեռուստատեսությամբ ունեցած իր ելույթի մեջ, այնպես էլ Փարիզում լույս տեսնող «Վի» (կյանք) քրիստոնեական շաբաթաթերթի էջերում ցույց է տալիս գենոցիդը չընդունելու վերաբերյալ թուրքական մոտեցումների սխալականությունը։

1981-ի ապրիլի 29-ին Կիպրոսի հանրապետության պառլամենտը (ներկայացուցչական տուն) հատուկ մի բանաձև ընդունեց հայոց ցեղասպանության համար Թուրքիան դատապարտելու մասին։

Անգլիական «Էկոնոմիստ» շաբաթաթերթը (2. 5. 1981) «Հայկական տեռորիզմը և նրա արմատները» հոդվածում նշում էր հայկական կազմակերպությունների հակաթուրքական գործողությունների մի քանի դրդապատճառներ. ա) որպեսզի Թուրքիան ընդունի հայ ժողովրդի նկատմամբ 1915-ին օսմանյան Թուրքիայի դեմ կատարված հանցագործությունների փաստը, թերթը գրում էր, որ հայերի համար

սա այնքան կարևոր է, որ եթե թուրքերը դա ընդունեն, հայկական շարժումը կզրկվի իր հիմնական շարժիչ ուժից։ Միաժամանակ թերթը քիչ հավանական է համարում դա։ բ) Հայերը պահանջում են վերացնել Թուրքիայում ապրող հայերի նկատմամբ առկա խտրականությունը։ Սակայն քանի որ թուրքական իշխանությունները միշտ էլ ժխտել են որևէ խտրականության գոյությունը, դժվար թե որևէ բան անեն նրա վերացման ուղղությամբ։ գ) Հայերը պահանջում են վերադարձնել հայկական հողերը։ Թերթը կասկածի տակ է առնում նման լուծման հնարավորությունը մոտիկ ժամանակներում։ Թերթը հիշատակում է քրդական հարցի գոյությունը։

«Միդլ Իստ» ամսագրի քաղաքական խմբագիր Ջուդիթ Պերերան ահա թե ինչպես է բնորոշում հայոց գենոցիդի դրդապատճառները։ Նա գրում է. «Օսմանների անկումով և երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելով, 1908-ին, հայերի պրոբլեմները շատացան։ Թուրքական նացիոնալիզմը դարձավ այլամերժ և պանթուրանիզմի գաղափարները տարածում գտան առանձնապես առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից հետո։ Հայերը դիտվեցին որպես Ռուսաստանին օգնող հինգերորդ զորասյուն և նրան դաշնակիցներ ու պանթուրանիստական գաղափարների տարածումը խոչընդոտողներ։ Ահա այս պայմաններում տեղի ունեցան 1915-ի կոտորածները» (66, էջ 23)։

«Պարի մատչ» պարբերականը (21. 3. 1981) տպագրեց Ժորժ Մենանի ընդարձակ հոդվածը հայկական հարցի, «հայերի սառը վրեժխնդրության» մասին, որտեղ ցույց էր տրված, որ թեև «համակենտրոնացման ճամբար» հասկացությունը շրջանառության մեջ դրվեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, բայց դա մարդկությանը հայտնի էր հայկական ցեղասպանության օրերից, երբ թուրքերը Միջագետքի ողջ տարածքում ստեղծել էին համակենտրոնացման ճամբարներ։ Հեղինակն ուղղակի համեմատություն է անցկացնում ֆաշիստական ու թուրքական չարագործությունների միջև, Դախաուի, Օսվենցիմի և հայկական ջարդերի թուրքական մեթոդների միջև, նշելով լոկ այն տարբերությունը, որ հայերը տակավին բարոյական, նյութական փոխհատուցում չեն ստացել, չկան թուրքական վանդալիզմը

դատապարտող հուշարձաններ, երիտթուրքերի նկատմամբ նյուրնբերգի դատավարություն չի կազմակերպվել, մինչև «շնորհակալ Թուրքիան» դամբարան է կառուցել ի պատիվ ջարդերի ոգեշնչող Թալեաթ փաշայի «փառքի»։

1981-ի մայիսի 11-ին ամերիկյան «Նյուսվիկ» շաբաթաթերթը տպագրեց Հասան Ցելյմերսի նամակը (Ստոկհոլմից), որտեղ մասնավորապես ասված էր. «Ինձ համար սարսափելի է, երբ թուրքական իշխանություններն իրենց երկիրը կոչում են դեմոկրատական և լիբերալ, և միևնույն ժամանակ բանտարկության են դատապարտում հասարակական աշխատանքների նախկին մինիստր Շերաֆեդդին Էլչինին լոկ այն բանի համար, որ նա ասել է. «Ես քուրդ եմ. Թուրքիայում քրդեր են ապրում»։ Յուրաքանչյուրի համար, ով հավատում է դեմոկրատիային և ելույթների ազատությանը, դա թուրքական արդարադատության ռասիստական և ֆաշիստական էության ցցուն ցուցադրում է։ Ես զարմացած եմ, որ մինչև այժմ ՄԱԿ-ը չի արտահայտել իր դատապարտման խոսքը Թուրքիայում քուրդ ժողովրդի նկատմամբ կատարվող ճնշումների դեմ»։

Արևմտաեվրոպական, ամերիկյան, արաբական մամուլը, հասարակական-քաղաքական շրջանները շարունակում են աշխուժորեն քննարկել արտասահմանում հայ-թուրքական կոնֆլիկտի զարգացումները։ Ինչպես շատ տասնամյակներ առաջ, հայոց հարցի պատմության, նրա էության շուրջը սուտ ու սխալ հարցադրումների ու մեկնաբանությունների, աղավաղումների կողքին առկա է համակրանքի, ըմբռնման, տիպիկ բնութագրումների որոշակի մթնոլորտ։ Մարդկության առաջադիմական, հումանիստական, դեմոկրատական, սոցիալիստական միտքն ամբողջապես պաշտպանում է հայոց արդարացի դատը։

«1915-ի հայկական կոտորածը հանդիսացավ պետության կողմից կազմակերպված գենոցիդի առաջին փորձը»,— 1981-ի հունիսին «Միդլ Իստ» պարբերականում գրեց Յուդիտ Պերերան։ Նա առանց տատանման իր ընթերցողին մատուցեց ճշմարտությունը. Թուրքիայի 2,5 միլիոն հայությունից (19-րդ դարի ավարտ) այսօր մնացել է 50 հազար մարդ, 1,5 միլիոն մարդ զոհվել են, 500 հազար՝ արտաքսվել

Բելգիական «Le Soir» թերթը (26. 9. 1981) գրեց. «Պատվի հարցերը կեղծ գրքերից ըմբռնելու հետևանքով Թուրքիան ժխտում է գենոցիդի ակնհայտությունը և անհարկի վեճեր է մղում զոհերի թվի շուրջը»։

Իսկ թուրքական բուրժուական մամուլը շարունակում է իր հին ընթացքը։ «Միլիեթի» թղթակից Մեհմեդ Ալի Բիրանդը մասնակցել էր Էքսան Փրովանսի դատավարությանը, որից հետո մի բաց նամակ էր հրապարակել, ուղղված Հրայր Քիլինչյանին։ Նամակում թուրք լրագրողը սպառնալիք էր կարդում ոչ միայն հայ երիտասարդին, այլև բոլոր հայերին (12, 18. 2. 1982)։

«Եանկի» շաբաթաթերթի հարցումին պատասխանած դասախոս Արթին Ինսալը շարանում է, որ «մոլեռանդ հայեր ներողություն խնդրելե զատ, հողային պահանջ ալ կներկայացնեն» (12, 27—28. 2. 1982)։ Նա պետական մարմիններին ակտիվություն, «օսմանյան արխիվները բանալու» կոչ է անում, «հայ գիտնականներու կողքին», «Միջին Արևելքի պատմության մասնագետ ամերիկացի, ֆրանսիացի, անգլիացի, գերման և մյուս ազգերի լուրջ բանասերներու հետ» 19-րդ դարի կեսերից սկսած մինչև «հանրապետության շրջան» «անկողմնակալ պատմության» խնդիրներն ուսումնասիրելու։

Թուրք ծանոթ լրագրող Ահմեդ Գապաքլը, որ մասնագիտացել է հայերի հասցեին ափեղ-ցփեղ բաներ գրելու մեջ, այս անգամ (1982-ի փետրվարի 11-ին) «Թերջյումանի» մեջ Թալեաթի հայտնացան հեռագրերի գովքն է անում, դրանք համարում «պետությունը և ազգը ազատելու համար» արված քայլ, թե «Թալեաթ փաշան իր հեռագիրը ճիշտ ժամանակին էր քաշած»։ «Այս հրամանով թե՛ Անատոլիան հայոց զուլումից ազատվեցավ և թե՛ յոթը ճակատների վրա կռվող մեր բանակը կռնակից զարկվելու վտանգից»,— ամփոփում է իր մարդատյաց տեսությունը թուրք գրչակը։ Նա կոչ է անում ուժեղացնել հակահայկական պրոպագանդան։ Նա քիչ է համարում Թուրքիայի արտաքին գործերի հրատարակած երկու գրքույկները. «9 հարցում և պատասխան, հայկական հարցը», «Հայերի հակաթուրքական քարոզչությունը և իրականությունը»։ Նա պահանջում է դրանք տպագրել չորս-հինգ

լեզուներով, առատորեն տարածել ամենուրեք, լույս ընծա-
յել հակահայկական վեպեր, պատմվածքներ, թատերական
գործեր, ժողովածուներ։ Նա գտնում է, որ մինչև «արյան
լեզվով խոսելու օրը գա», «հայկական պնդումներն ու իրա-
կանությունն իմանալն էլ բավական խնդիր է»։ Այս նպա-
տակով նա պահանջում է բոլոր քարտեզներից, դասագրքե-
րից ջնջել «Հայաստան» անունը։ Ինչո՞ւ Կապադովկիա և ոչ
թե Գյորեմե—Յուրկյուպ»,— հարց է տալիս նա կարդալով
թուրքական հանրագիտարանի 6-րդ հատորի 908 էջը։ «Քանի
անգամ գրեցի. Թուրքիայի քարտեզները, մանկական հրա-
տարակությունները, հանրագիտարանները գիտական հանձ-
նաժողովի բովով անցնո՞ւմ են արդյոք»,— բղավում է թուրք
կեղծարարը։

Հայոց գենոցիդի խնդիրները «լուսաբանելու» թուրքական
հանձնաժողովի նախագահ ծովակալ Սեպայի Օրքունդը «Գու-
նայդըն» թերթում հայտարարեց, թե «թուրք պատմության
մեջ հայկական ջարդ տեղի չի ունեցած» (14, 7. 04. 1982)։

Թուրքական հեռուստատեսությունը ժխտում է Թալեաթի
ստորագրած հեռագրերի իսկ գոյությունը, մինչդեռ Կ. Պոլսի
համալսարանի թուրք պրոֆ. Նեժադ Գոյունչիի հոդվածում
(«Եանկի» քաղաքական շաբաթաթերթ, Անկարա, 10. 2.
1982) կարդում ենք հակառակը։ Թուրք պրոֆեսորը չի ժխ-
տում, որ Թալեաթի 1915-ի մայիսի 13-ի թվակիր հրամա-
նով Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգների և Ադանայի
շրջանի հայերը ենթարկվել էին տեղահանության («Հառաջ»,
25. 2. 1982)։ Նեժադ Գոյունչին հավաստում է, որ «թուրքա-
կան արխիվներում էլ անշուշտ այս նյութին շուրջ փաստա-
թղթեր գոյություն ունեն։ Ասոնց երկու հատը, բնագաղթի,
այսինքն՝ տեղահանության մասին Թալեաթ փաշայի հրա-
հանգներն են (12, 25. 2. 1982)։

Չենք կարող մեր գոհունակությունը չհայտնել այն բանի
համար, որ ֆրանսահայ պատմաբան Ա. Պեյլերյանը հան-
գամանալի պատասխան-հերքում տպագրեց ընդդեմ թուր-
քական հեռուստատեսության հաղորդումների, Թուրքիայի
արտաքին գործերի մինիստրության հրապարակած հակա-
հայկական կեղծագրերի (17)։ Արթուր Պեյլերյանը ցույց է
տալիս «Միլիեթի» անհիմն լավատեսությունը, երբ վերջինս

շտապել էր հայտարարել, թե «արտաքին գործոց նախարա-
րության կողմից պատրաստված այս գրքույկը (Certains
aspects de la realité sur les allégations arméniennes)
հաջողած էր հայ ժողովրդի հանդեպ կատարված ցեղասպա-
նության անհիմն պնդումները ջրել»։

Բացառությունների շարքը պետք է դասել նաև վերջերս
ֆրանսիական սոցիալիստների «Լիբերասիոն» թերթի էջերում
հանդես եկած թուրք լրագրող Ահմեդ Ցուպի խոստովանու-
թյունները։ Թուրք հեղինակը իր հոդվածը վերնագրել էր
«Կամիկաձե» (ճապոներեն է, որ նշանակում է նախախնա-
մական փոթորիկ) և փորձել վերահասու լինել հայկական
ահաբեկչության էության։ Ա. Ցուպն այսպես էր սկսել իր
հոդվածը. «Էնվեր և Թալեաթ փաշաները, որ օսմանյան
կայսրությունը առաջին աշխարհամարտի արկածախնդրու-
թյան մեջ առաջնորդեցին, մտքներուն չէին անցներ ան-
շուշտ, թե իրենց թոռները օր մը պիտի կրեն 1915-ին հայ
ժողովրդի դեմ իրենց ձեռնարկած ցեղասպանության հետե-
վանքները։ Վարպետի ձեռքով գործված ջարդը, ուրիշին մի-
ջոցով, ինչպես քուրդ ավազակապետներուն, որոնց հիվանդ
կայսրությունն առատաձեռնորեն կխոստանար հայերու
«լքած» հողերը։ Այս ամբողջը ազգայնական գաղափարա-
բանության մը վրա, ընդգրկված, օսմանցիներուն զինակից
գերման խորհրդականներու ազդեցության տակ։ Եվ առանց
մոռանալու, որ այս նույն քուրդերը, իրենց կարգին, բնա-
ջնջվեցան հետագա ցեղասպանության մը առեն, 1937-ին,
այս անգամ հանրապետության օրոք, որի հետևանքով Դեր-
սիմ քաղաքը ջնջվեց քարտեզի երեսից» (12, 10. 08. 1982)։

«Հյուրիեթ» թերթն անդրադառնալով հայ-թուրքական
հարաբերություններին, այժմյան թուրքական իրականու-
թյան մեջ տիրապետող մտայնությանը, մի առիթով շատ
տեղին գրեց, թե «այսպիսի կեցվածք մը որդեգրվեր է, որ
կարծես թե բնավ հայկական հարց մը գոյություն չըլլար»։
Թերթը գրում էր, թե այլևս խոսիլ կսկսինք», թե «արտա-
քին գործոց նախարարության խորհրդական Քեամուրան
Գյուրուն» «հայկական հարցին վրա կարևորությամբ կըհակի.
հայկական հարցի մասին գրքույկ մը հրատարակած է»,
«հայկական հարցի մասին վեց հարյուրե ավելի օտար լեզ-

վով հրատարակված գիրք է կարդացեր» և այլն: Թերթը դժգոհություն էր հայտնում թուրքական հեռուստատեսությունից, որի «Հայատագիրը օտար երկրներու մեջ պիտի կրկնվի և անհիմն պնդումները պիտի գտնին իրենց պատասխանը»: Հիրավի թուրքական անհիմն պնդումներն ամենուրեք հակահարված են ստանում:

1982-ի հունիսի 17-ին Նյու Յորքի «Արմենիեն Ռիպորտեր» շաբաթաթերթը տպագրեց մի նյութ, որը վերնագրված է. «Բավականաչափ փաստաթղթեր կան, որոնք ապացուցում են հայերի գենոցիդը թուրքերի կողմից»: Այնտեղ ասված էր, որ ամերիկյան ու կանադական մամուլի էջերում բազմաթիվ նյութեր են հրապարակվում, որոնք պատրաստված են թուրքական կազմակերպությունների կողմից, նպատակ ունենալով ցույց տալ, թե օսմանյան կայսրությունում 1915—1923 թթ. հայերին չեն ոչնչացրել, այլ ընդհակառակը հայերն են գազանություններ կիրառել թուրքերի նկատմամբ:

Թերթը մատնացույց էր անում հսկայածավալ այն աղբյուրներն ու գրականությունը, որ առկա են աշխարհի բազմաթիվ լեզուներով և որոնք հեշտությամբ հերքում են թուրքական կեղծիքները: Թերթը խորհուրդ էր տալիս ծանոթանալ Վաշինգտոնի արխիվներում գտնվող թեկուզև ամերիկացիների գրածներին, թուրքական մամուլի և այլ աղբյուրների նյութերին:

Մի՞թե 1915-ի օգոստոսի 25-ին, թե հոկտեմբերի 13-ին «Ժուրնալ դը Ժընևը» փաստեր էր հորինում հայոց ցեղասպանության մասին, երբ արևմտահայության ոչնչացմանը նվիրված նյութերը վերնագրում էր «Կոտորածը Հայաստանում», «Ահավոր ոճիրը»: «Ամբողջ Փոքր Ասիայի տերիտորիայի վրա չի կարելի գտնել որևէ քաղաք, ուր հալածանք ու հարստահարություններ կատարված չլինեն»,— գրում էր շվեյցարական թերթը: «Հյուսիսային Փոքր Ասիայի ամբողջ ազգաբնակչությունը, Էրզրումից մինչև Երզնկա, անցավ այս վերջին քաղաքով. գերիների մի շուկա էր հաստատված քաղաքի մուտքի մոտ և թուրքերը կանայք ու երեխաներ էին հայթայթում այնտեղ»,— նկարագրում էր թերթը: Էրզրումի և Երզնկայի քարավանները, ըստ «Ժուրնալ դը Ժընևի», Խարբերդ էին հասել հուլիսի սկզբին, ցնցոտիապատ, կեղտոտ, սովա-

հար, հիվանդ: Երկու ամիս էր տևել այդ ճանապարհը: Մարդիկ քայլել էին առանց սնունդ ու ջուր ստանալու: Թուրքական կեղծարարները լավ հակահարված ստացան, երբ 1982-ի ապրիլի 23-ին այս թերթի շվեյցարական ընթերցողները որպես միջուկ ստացան նույն թերթի 1915-ի օգոստոսի 25-ի տպարանային պատճենները: 67 տարի առաջ գրված ճշմարտությունը հայոց կոտորածի մասին ընթերցողին հասավ կուսական ձևով:

Մի՞թե ժամանակակից թուրք կեղծարարների կարծիքով Մեծ Բրիտանիայի պառլամենտի համայնքների ու լորդերի պալատների անդամների ելույթները, հարցապնդումները, վիճաբանություններն ու արձանագրությունները նույնպես հայերն են հորինել: Հիշատակենք անգլիական պառլամենտի 1918-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների մի շարք նյութեր, ընթերցողին ցույց տալու համար, թե հայոց կոտորածի խնդիրը որքան լայն արձագանք էր գտել աշխարհում, որ բուրժուական պառլամենտի անդամները ստիպված էին այդքան հանգամանորեն զբաղվել այդ խնդրով:

1918-ի նոյեմբերի 18-ին համայնքների պալատում «Հայաստանի ապագան» հարցի շուրջը ելույթ ունեցավ Անեուրին Վիլյամսը: Բնութագրելով հայերի վիճակը, նա նկատեց, որ հայերի համարյա յուրաքանչյուր սերունդ տանջվել է կոտորածից ու թուրքական անկարգ կառավարությունից: «Նրանց տանջանքներն այն բանի հետևանքն էին, որ նրանք չէին հաշտվում թուրքական լծի տակ գտնվելու հետ: Նրանք երազում էին ու ձգտում բարելավումների ու ռեֆորմների, ինչը հանցագործություն էր ներկայանում թուրք տերերին»: Վիլյամսը բացատրում էր հայոց վրա թուրքական կառավարման հնարավորությունը: Նա անհրաժեշտ էր համարում հայտարարել թուրքերին. «Դուք ձգտում էիք տարի առ տարի ոչնչացնել հայ ժողովրդին: Դուք դրան հասաք և հայերին պատկանող տերիտորիան նոր է բնակեցված հայերով: Նա պահանջում էր հայերին հավաքել իրենց հայրենիքում, հիշեցնում էր, որ Անգլիան պարտք է Հայաստանին, քանի որ 40 տարի առաջ խանգարեց Ռուսաստանին ազատագրել նրան թուրքական բռնակալության լծից: Դեպուտատ Ջորջ Գրինվուդը թուրքական կառավարումն անվանեց «կազմակերպ-

ված բանդիտիզմ» (65, էջ 12—19)։ Դեպուտատ Դիլը հիշեցնում էր պառլամենտին, որ մարդկության ամբողջ պատմությունը ինչպես անցյալում, այնպես և ապագայում չգիտի և չի իմանա մի այնպիսի սարսափելի հանցագործություն, ինչպիսին կատարածն էր Հայաստանում» (65, էջ 21)։ Ահա այսպիսին էին այն ժամանակվա բնորոշումներն ու գնահատականները։ Ժամանակակից թուրքական գրչակները փորձում են մոռացության տալ այդ ամենը, յուրովի են հյուսում պատմության եղելությունները։

Հռետոր Սպիրը հիշեցնում էր, որ պատերազմի ժամանակ եղել են ողբերգություններ և տանջանքներ, բայց ոչ մի բան այնպես չի ցնցել «մեր ժողովրդին, որքան Թուրքիայի գործողությունները, երբ հազարավոր հայերի խեղդեցին ծովում։ Ահա արդեն շատ տարիներ է, ինչ նորից ու նորից կրկնվում է հայկական կոտորածի ողբերգությունը և հիմա իսկական պահն է կանգնեցնել այն հանուն մարդկության» (65, էջ 25)։

Սեսիլ Ռոզը պատասխանելով դեպուտատների հարցապնդումներին, ասում էր, որ «կոտորածի յուրաքանչյուր հայ զոհ ոչ թե թուրք բանդիտների պատահական դաժանության հետևանք էին, այլ Կ. Պոլսից հղված հրամանի արդյունք։ Սա է գլխավորը, որ մենք պետք է ընդունենք ներկա կացության մեջ։ Թուրքական կառավարությունն ինքն է անկարգություն տարածում ամենուրեք, որպեսզի հետո դրանք ճնշի։ Դա ամենևին էլ կրոնական հարց չէ։ Արաբներն, օրինակ, միշտ էլ հանդես են եկել ի պաշտպանություն հայերի և, երբ մենք հասանք Հալեպ, ապա հանդիպեցինք արաբների պաշտպանության ներքո ապրող հայերի։ Ճիշտ այդպես էլ, պատճառ չկա այն բանի համար, որպեսզի հայերն ու քրդերը չապրեն բարեկամաբար, երբ արդեն չլինի թուրքական իշխանությունը։ ...Թուրքական քաղաքականության բնորոշ կողմը այն էր, որպեսզի նպաստեր իր տերիտորիայի վրա ապրող ազգերի պառակտմանը, նրանց թալանելու և յուրաքանչյուր պահի դաժանության կիրառումն արդարացնելու համար։ Այնպես որ թուրքական կառավարությունն ապացուցել է իր անկարողությունը կառավարելու ազգերին» (65, էջ 31)։

Ահավասիկ ինչպես էր արտահայտվում թուրքական

ավանդական քաղաքականության մասին անգլիացի հեղինակ Էմիլի Ռոբինզոնը դեռևս 1918-ին։ «Նորից ու նորից թուրքական կառավարությունը դիմում էր ոչնչացման, մինչև որ 1915-ի գարնանը նա հասավ իր սարսափելի նպատակին՝ Թուրքիայում հայ ազգի լրիվ արմատախիլ անելուն։ Անմարդկային դաժանությունը, որ ուղեկցվում էր ավելի քան մեկ միլիոն անօգնական քրիստոնյաների կոտորածին ու դեպորտացիային դեպի անապատային վայրերը, լավ հայտնի է բոլոր նրանց, ովքեր թերթ են կարդում» (45)։ Այսօր թուրք պատմաբանները, պետական ղեկավար գործիչները, զինվորականները այդ թերթերը, պատմության ճշմարտությունները կարդալ չեն ուզում։

Թուրք հեղինակները շրջանցում են այն պարզ ճշմարտությունը, որ մինչև Բեռլինի կոնգրեսը (1878) և նույնիսկ նրանից հետո օսմանյան կառավարությունը այսօրվա Թուրքիայի հյուսիսարևելյան շրջանները «Էրմենիստան»— «Հայաստան» էր անվանում իր բոլոր պաշտոնական գրագրությունների մեջ։ Նրանց պետք է խորհուրդ տալ չզլանալ, նայել սեփական դիվանների սնդուկները և տեսնել «Հայաստան» անունը կրող սեփական ու եվրոպական քարտեզները։

Թուրքական հակահայկական կեղծարարությունը շարունակվում է։ Վերջերս այն ընդունում է աննկարագրելի ծավալներ, այլանդակ ձևեր։ Տպագրվում են հակահայկական գրքեր։ Թուրքական մամուլը լի է հակասովետական, հակահայկական ցապաստուրներով։ Աստիճանաբար թուրքական պետական շրջանակները 1915-ի հայոց տեղահանության ու կոտորածի մասին իրենց խնկարկած հակապատմական պնդումները փորձում են լայնորեն տարածել աշխարհով մեկ, իրենց «տեսակետները» պարտադրել ամերիկյան, արևմտաեվրոպական մամուլին։ Առանձնապես ակտիվացել են թուրքական դեսպանատները, որոնք չեն խորշում մեծ գումարներ ծախսելուց, միայն թե բուրժուական մամուլի ազդեցիկ օրգանները հրապարակեն քանիցս մեջտեղ բերված ու ծեծված շարժած սուտախոսության տարբերակները։ Ըստ այդ «տեսակետի» հայերը ոչ թե զոհեր էին, այլ «ագրեսորներ»։ Թուրք հեղինակներն ավելի շուտ խաբում են իրենք իրենց։ Ստախոսները չափազանց դյուրահավատ են. նրանք հավատում են, թե

իրենց հավատում են։ Եվ այսպես շարունակ մեր աչքի առաջ մի սուտը ծնում է մի այլ, ավելի այլանդակ սուտ։ 1983-ի մարտի 15-ին «Լոս Անջելես Թայմսի» մեջ ոմն Նիկոլս Լուտինկտոն գրեց, թե թուրքական «պաշտոնական անձինք վախենում են, որ որևէ հանրային անկեղծ ու ճիշտ հաստատում կարող է հատուցման առաջարկների տեղիք տալ»։

1983-ի ապրիլի 23-ին «Նյու Յորք Թայմսը» տպագրել էր Կ. Մեյերի փոքրիկ հոդվածն արևմտահայության ողբերգության մասին։ Նրա ձևակերպումներն ընդհանուր առմամբ ճիշտ պատկերացում են տալիս կատարվածի մասին. Թուրքիայի հայկական մեծ համայնքը 1915-ին դարձավ 20-րդ դարի առաջին գենոցիդի զոհը։ Դա մի սարսափելի միջոցառում էր, որի հետևանքով ոչնչացվեց կամ աքսորվեց 1,5 միլիոն արևմտահայ, գրում է նա, դատապարտելով ներկայիս թուրքական կառավարությանն այն բանի համար, որ նա հրաժարվում է ընդունել կատարվածը։ Այս երևույթը շատ դիպուկ գնահատված է որպես «հիշողության կորուստ»։ Թեև ընդունված է կարծել, որ ստախոսն ավելի լավ հիշողություն պետք է ունենա։

1983-ի մայիսի 5-ին «Նյու Յորք Թայմսը» տպագրեց Վաշինգտոնում Թուրքիայի դեսպան Շուքրու Էլեքդաղի նամակը։ Այստեղ կարելի է ասել հին են սուտ պնդումները, կամ սուտ են հին պնդումները։ Դեսպան Շուքրու Էլեքդաղը դժգոհում է, որ ժամանակին (1919-ին) թուրքական զինվորական դատարանը (որին նա «ցուցադրական» է անվանում) դատել է երիտթուրքական հանցագործներին։ Ըստ դեսպանի, հայ ապստամբների մեղքն այն էր, որ ուզում էին Ռուսաստանի օգնությամբ ստեղծել «հայկական պետություն թուրքական տերիտորիայի վրա»։ Նա փորձում է հերքել արևմտահայ բնակչության վերաբերյալ Կ. Մեյերի հիշատակած թիվը՝ 2 միլիոն 3 հարյուր հազար և ցույց է տալիս մեկ այլ թիվ՝ 1 միլիոն 3 հարյուր հազար։ Որ ճիշտ չէ դեսպանը՝ գիտեն բոլոր նրանք, ովքեր ծանոթ են պատմությանը, ովքեր չեն կեղծում այն, ովքեր ծանոթ են ամենատարրական աղբյուրներին։ Բայց կարելի է հարց տալ թուրք դիվանագետին. իսկ ո՞ւր անհետացան թեկուզ այդ 1,3 միլիոնը։ Չէ որ այդ թիվը վեց տասնամյակների ընթացքում պետք է

եռապատկված, նույնիսկ քառապատկված լինել։ Թուրք դեսպանը ծաղրում է Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը, նրանում հիշատակված եղելությունները համարելով ոչ արժանահավատ բաներ։ Դեսպան Էլեքդաղի բնութագրությամբ հայերի «վերաբնակեցման» մասին կառավարության որոշումն «իրականացվել էր հայերի համար լավագույն պայմաններում»։ Ահավասիկ հայ ժողովրդի ոչնչացման ժամանակից թուրքական մեկնաբանման անհնար լինի ցուցման մի բնորոշ օրինակ։ Դեսպանն այսօրվա ամերիկյան հակասովետիզմի, հակառուսականության ակտիվ խնկարկուներից է։ Նա հիշատակում է «Նյու Ռիպաբլիկ» թերթում տպագրված մի ոմն Ջոն Դեուլիի հոդվածն այն մասին, թե «հայերը դավաճանորեն թուրքական քաղաքները հանձնում էին ռուս զավթիչներին»։ Թե՛ ամերիկացին, թե՛ թուրք դեսպանը պատմության անցքերը տեսնում են ամերիկյան իմպերիալիզմի, ՆԱՏՕ-ի այսօրվա հակասովետական պրիզմայի միջով։ Նրանց պետք է խորհուրդ տալ դիմել Վաշինգտոնի ազգային արխիվին, որտեղ հազարավոր փաստաթղթեր կան պատմական իրողությունները ճիշտ ըմբռնելու համար։

Մայիսի 2-ին Փարիզի «Մոնդը» մի ամբողջ էջ նվիրեց արևմտահայության գենոցիդի խնդրին։ Բուրժուական այս ազդեցիկ թերթը նախ հիշատակում է Ֆրանսիայի արտաքին հարաբերությունների մինիստր Կլոդ Շեյսոնի տեսակետն այն մասին, թե «օսմանյան կայսրության բնակիչ հայերը գենոցիդի զոհ դարձան, ինչը Ֆրանսիան դատապարտում է. փաստերը մնում են փաստեր և ոչ որ իրավունք չունի դրանք փոխելու կամ ստիպելու մոռանալ։ Ֆրանսիական կառավարությունը ցավ է հայտնում թուրքական կառավարության բռնած դիրքի առթիվ, որը համառում է, այդ իրադարձությունները դիտելով որպես ռուսական բանակի հարձակման հետևանքով առաջացած ապստամբության ճնշում»։ Մինիստրը միաժամանակ այն կարծիքն է հայտնել, թե այսօրվա թուրքական կառավարությունը չպետք է պատասխանատվություն կրի այն ողբերգության համար, որին հայ ժողովուրդը ենթարկվել է ավելի քան 60 տարի առաջ։

Նույն էջի վրա «Մոնդը» տեղադրել է Փարիզում Թուրքիայի դեսպան Ադնան Բուլաքի հոդվածը՝ «Անկարայի տեսակե-

որ» վերատուության ներքո, «Օտարերկրյա շահերի ծառայության մեջ» վերնագրով։ Իր նամակում ֆրանսահայ հայրենասեր գործիչ Հակոբ Վեզիրյանը գրում է, որ ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչները բողոքի հեռագիր են հղել «Մոնդի» խմբագրությանը։ Ըստ դեսպանի միշտ էլ «մեղավորը» հայերն են եղել։ Նրա կարծիքով մեղքն արտահայտվել է Զեյթունի և Սասունի ապստամբությունների, բարենորոգումներ պահանջելու, Ռուսաստանին հարելու, նրա բանակին օգնելու և այլնի մեջ։ «Երբ 1915-ի սկզբին ռուսական զորքերը մտան թուրքական տերիտորիան,— գրում է նա,— ապա նրանց առաջնորդում էին հայ կամավորների զորամասերը»։ Այսօր Ադնան Բուլաղ անուն ազգանունով թուրք դեսպանը երիտասարդ թուրքերի մարդակերական գործողությունները արդարացնող պաշտպան-փաստաբանի դերում է։ Նա խոսում է ռազմաճակատամերձ շրջաններից հայերին տեղահանելու և նրանց Սիրիա տեղափոխելու անհրաժեշտության մասին, բայց փորձում «մոռանալ», ֆրանսիական ընթերցողից թաքցնել, որ Ադաբազարն ու Բրուսան, Անկարան ու Մալաթիան, Խարբերդն ու Կայսերին, Արաբկիրն ու Վանը ճակատամերձ չէին, բայց ենթարկվեցին միևնույն ջարդարարական հարվածներին։ Ավելորդ է անդրադառնալ նրա բոլոր հիմնազուրկ պնդումներին։ Այսօրվա Թուրքիայի զինվորական խունտայի գաղափարախոսներից այլ բան սպասել չի կարելի։ Չէ որ այսօր «ռեպրեսիաները քուրդ ժողովրդի դեմ որոշ շրջաններում ընդունում են գենոցիդի մասշտաբներ» (տե՛ս ֆրանսիական ամսագիր «Վի Ուվրիեր», 1983-ի մայիս)։

Զվիճենք դեսպանների հետ, բայց հիշեցնենք նրանց, որ ամենավտանգավոր սուտն աղավաղված ճշմարտությունն է։ Հիրավի, դիպուկ է ամերիկացի լրագրող Ռիչարդ Քոհենի նկատառումը, թե «ցեղասպանության վերջին զոհը ճշմարտությունն է» (9, 11. 5. 1983)։

Ընդառաջելով Թուրքիային, ԱՄՆ-ի պետական քարտուղարությունը փորձեց հարցականի տակ դնել հայոց գենոցիդի պատմական իրողությունը։ Այդ նպատակն էր հետապնդում 1982-ի օգոստոսին լույս ընծայված գրքույկը։ Այն աղմուկ հանեց որպես կեղծագիր։ Նրա դեմ բողոքեցին հայկական

շրջանակները։ Պետական դեպարտամենտը շտապեց հայտարարել, թե գրքույկն իր տեսակետի արտահայտությունը չէ։ Պետական դեպարտամենտի քննադատությամբ հանդես եկավ ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատի նախագահ, դեմոկրատ Օ՛Նիլը։ «Մեկուկես միլիոն անմեղ հայերի կոտորածը,— ասաց նա,— մի կանխամտածված ծրագիր էր հայ ազգը բնաջնջելու, որը չի կարող մոռացության ենթարկվել, կամ անտեսվել» («Զարթոնք», 29. 5. 1983)։

Ահա թե ինչպես է նկարագրում հարցը ամերիկուհի Մերի Քեյ Լանդոնը «Սիտի» (Սան Ֆրանցիսկո, 1980-ի ապրիլ) ամսագրում տպագրած իր «Հայերը» հոդվածում. «Թուրքերի կողմից 1915-ին իրագործված հայ ժողովրդի գենոցիդը, որի հետևանքով զոհվեց ավելի քան 1,5 միլիոն մարդ, մինչև հիմա պաշտոնապես չի ճանաչված որոշ կառավարությունների կողմից, այդ թվում և մեր կառավարության (ԱՄՆ-ի) կողմից։ Բայց փաստը մնում է փաստ, մինչև առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայի արևելյան շրջաններում և Արարատ լեռան մերձակայքում բնակվող հայերի թիվը երկու միլիոնից ավելի էր։ Այժմ այնտեղ իրականում հայեր չկան։ Ո՞ւր են նրանք անհետացել»։

1. «Ազատ օր», թերթ, Աթենք։
2. «Ազատամարտ», թերթ, Փարիզ։
3. «Ալիք», թերթ, Թեհրան։
4. «Աշխարհ», թերթ, Փարիզ։
5. «Ասպարեզ», թերթ, Լոս Անջելես։
6. «Արարատ», թերթ, Բեյրութ։
7. Բայբուրդյան Վ., Թոփուզյան Հովհ. Ֆրանսիացի հեղինակը հայկական կոտորածների ու ցեղասպանության մասին, «Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, № 1, 1979։
8. «Զարթոնք» թերթ, Բեյրութ։
9. «Լրաբեր» թերթ, Նյու Յորք, Լոս Անջելես։
10. «Կանչ», թերթ, Բեյրութ։
11. Կիրակոսյան Ջ., Քոչար Մ. Ժամանակակից թուրք հեղինակները հայերի և հայկական հարցի մասին, ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտոր, Երևան, 1977։

12. «Յառաջ», թերթ, Փարիզ։
13. «Հույս», ամսագիր, Թեհրան։
14. «Մարմարա», թերթ, Ստամբուլ։
15. Մսրլյան Գ., Հայկական դատի հետապնդման ճամբուն վրա, «Զարթոնք», 1. 2. 1980։
16. Յափուճյան Ա. Մեծ եղեռնը օտար մտավորականության գնահատումով, «Արև», 14. 6. 1980։
17. Պեյլերյան Ս. Թրքական ակնոցով հայկական հարցը և մեր պատասխանը, «Յառաջ», 30, 31 հուլիսի, 3, 4, 5 օգոստոսի, 1982 թ.
18. «Շաղկապ», թերթ, Փարիզ։
19. «Սփյուռք», թերթ, Բեյրութ։
20. «Սևան», թերթ, Բուենոս Այրես։
21. Շնորհք պատրիարք, Թուրքիո հայության մասին, «Հայաստան» ամսագիր, հուլիս-օգոստոս, 1980, Փարիզ։
22. **Айзенштейн Н. А.**, Некоторые аспекты изучения культуры современной Турции, журнал «Народы Азии и Африки», № 3, 1980.
23. **Гасанова Э. Ю.**, Антикоммунизм в Турции., сб. «Национально-освободительное движение и современная идеологическая борьба», Баку, 1973.
24. **Григорянц А.**, Люди без будущего., «Известия», 3. X. 1980.
25. **Заманова Э. Э.**, Идеология антикоммунизма в современной турецкой буржуазной эстетике., сб. «Национально-освободительное движение и современная идеологическая борьба», Баку, 1973.
26. «Известия», газета, М.
27. Из истории армянского вопроса (реферативный обзор турецких изданий), составители Дж. Киракосян, М. Мелкумян и другие, АН Арм. ССР, Ереван, 1977.
28. **Карабаев Б. М.**, Пантюркизм как часть идеологии антикоммунизма в Турции., сб. «Национально-освободительное движение и современная идеологическая борьба», Баку, 1973.
29. «Комсомольская правда», газета, М.
30. «Правда», газета, М.
31. **Саркисов Е. Г.**, Рецензия на книги проф. А. Ф. Миллера, «Краткая история Турции», «Очерки новейшей истории Турции», Вестник АН СССР, № 8, 1949.
32. **Старченков Г.**, Терроризм в Турции, журнал «Азия и Африка сегодня», № 11, 1981.

33. **Филиппов А.**, Вспышка терроризма. «Правда», 18. VI. 1980.
34. **Хикмент Назым**, Избранное, изд. иностранной лит-ры, М., 1953.
35. **Шпаров В. А.** Эгейский конфликт., журнал «Вопросы истории», № 11, 1979.
36. "The Armenian Reporter", N.Y.
37. "Azparez", Les Angeles.
38. **Banoglu N. A.**, Ermeninin ermeniye Zulmü, Ankara, 1976.
39. "Baris".
40. **Chester, Colby M.**, Admiral Turkey Reinterpreted, "The New York Times Current History", September, 1921.
41. "Cumhuriyet".
42. **Deliorman A.**, Türklere Karsi Ermeni komitecileri, Istanbul, 1973.
43. Departament of State, Papers Relating to the Foreign Relations of the United States. Diplomatic Papers, 1935, I, Washington, 1953, p. 1053-1055.
44. "Dünya".
45. **Emily J. Robinson**, The Armeniens, London, 1918.
46. **Erkmen H.**, Contemporary Turkey, "Newsweek", 23. 6. 1980.
47. **Garzou Jean-Marie**, Un genocide exemplaire Armenie 1915, Paris, 1975.
48. **Guttman Joseph**, The beginings of genocide, N. Y., 1948.
49. A Brief Account of the Armenian Massacres in World War I, N.Y., 1948.
50. "Gunaydin".
51. **Hakopyan M.**, Türkie Ermenileri, Istanbul, 1925.
52. "Hürriyet".
53. Justicier du Genocide Armenien. Le Proces de Tehlirian, Paris, 1981, p. 14 — 15.
54. **Karal, Enver Ziya**, Armenian Question (1878 — 1923), Ankara, 1975.
55. **Kilic Altemur**, Turkey and the World, Washington, 1959, p.p. 18, 141.
56. **Krikorian M. K.**, Armenians in the service of the Ottoman Empire, 1860 — 1908, London, 1977.
57. **Lanne, Peter** Armenia. The First Genocide of the XX Century. Translated from the German Original, Mûnchen, 1977.
58. **Lang, D. M.**, Armenia: Cradle of Civilisation, London, 1978.
59. **Lang D. M.**, The Armenians. A people in Exile, London, 1981.
60. "Milliet".
61. **Montgomery, George R.** The Massacres of Armenians in 1915, "The New York Times Current History", N.Y., October, 1922.
62. "Le Monde", Paris.

63. "Newsweek" N.Y., USA
64. "Paris Match", Paris.
65. Parliamentary Debates House of Lords, November 13, 1918, House of Commons, October 23, 24, 30, 31, November 6, 7, 12, 14, 1918, The Pelican Press, London, 1918, p. 12-17.
66. **Perera Judith**, Young armenians; «Armed strudgle is our answer», «The Middle East», june, 1981.
67. **Robinson, Richard D.**, The first Turkish Republic. A case study in National Development, Harvard University press, 1963.
68. **Sarkisian Ar.**, Genocide in Turkey., "History of the First World War", no. 3, p.p. 1321—1327.
69. Shaw St. J. and Shaw E. K., History of the Ottoman Empire and Modern Turkey, vol. 1—2, 1976—1977, Cambridge—London, N.Y., London.
70. **Sonyel Salahi R.**, Displacement of the Armenians. Documents Ankara, 1978.
71. The British Year Book of International Law, 1932, Thirteenth year of Issue, p.p. 207—209.
72. "Time", N. Y., 25. 5. 1981, no. 21.
73. "The Times", London.
74. Universite d'Istanbul. Declaration du Senat de l'Universite d'Istanbul. A propos des crimes commis par les terroristes Armeniens.
75. USA, Congress, 66th Cong., 2d sess., Senate document no. 266, Major General James G.Harbord, Conditions in the Near East: Roport of the America, Washington, 1920, p. 11.
76. Verite sur le mouvement revolutionnarie Armenien et les mesures gouvernementales., Constantinople, 1916.
77. Walker, Christopher, Armenia: The survival of a nation, N.Y., 1980.
78. **Yalman A. E.**, Turkey in the World War, New Haven, 1930.
79. **Yaman A.**, Ermeni Maselesi ve Türkiye., Istanbul, 1973.
80. **Yalçhin A.**, Belgelerin Isiginda Türk-Ermeni meselesinin Içyüzü., Istanbul, 1975.
81. Zur Anspache Hitlers vor de Fuhrern der Wehrmacht, 1968, Heft 2; 1971, Heft 3.

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԹՈՒՐՔԻԶՄԻ ԱՅՍՕՐ

Թուրքիայում քիչ բան է փոխվել: Թուրքիան ՆԱՏՕ-ի «գլխավոր զինվոր»: 1980-ի սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումը: Թուրքական ֆաշիզմի սև գործերը: Թյուրքեշին դատեցին, բայց թուրքական ֆաշիստները շարունակում են գործել: Համաշխարհային առաջադեմ հասարակական-քաղաքական միտքը դատապարտում է զինվորական խունտայի հակաժողովրդական գործելակերպը: Թուրքական պետականության հակահայկական քաղաքականությունը շարունակվում է:

Տասնամյակները շատ քիչ բան են փոխել Թուրքիայում։ Երիտթուրքական ոճրագործությունից հետո բավական ժամանակ է անցել. ոմանք իսկապես չգիտեն ճշմարտությունն այդ մասին, որովհետև թուրքական պետականությունը շարունակ նոր սերունդներից թաքցրել է պատմական իրողությունները։ Մյուսները, զարկ տալով պանթուրքիստական գաղափարախոսությանը, փորձում են միլիտարիստական, ագրեսիվ, հակասովետական աղմկարարության մեջ կորցնել երեկվա չարագործությունների հետքերը։

Ժամանակակից Թուրքիայում տասնամյակների ընթացքում իշխանության գլուխ մշտապես կանգնած է եղել միևնույն բուրժուակալվածատիրական բլոկը։ Երկրի ներքին իրադրությունը բարդ է և անկայուն։ Սա պայմանավորված է ինչպես սոցիալ-դասակարգային, տնտեսական ու քաղաքական ցնցումներով, կառավարող շրջանների հակաժողովրդական քաղաքականությամբ, այնպես և արտաքին քաղաքական սուր պրոբլեմներով, ՆԱՏՕ-ին Թուրքիայի մասնակցությամբ և այլն։

Մինչև 1980-ի սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումը, երբ իշխանությունն առևանգեցին թուրքական բանակի հրամանատարները, չնայած միջկուսակցական մրցապայքարին, թուրքական քաղաքական կուսակցությունների գերակշռող մասը ծրագրային հիմնական հարցադրումներում չի տարբերվել մեկը մյուսից։ Սրանք բոլորն էլ ՆԱՏՕ-ի կողմնակից են, օտարերկրյա կապիտալը օգտագործելու ջերմեռանդ պաշտպաններ։ Կուսակցությունների շարքում առանձնանում էին Ժողովրդահանրապետական կուսակցությունը (ժամանակին հիմնված Մուստաֆա Քեմալի կողմից) և արդարության կուսակցությունը, որոնք մեծաթիվ էին ու ազդեցիկ։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ժողովրդահանրապետական կուսակցությունը կորցրեց իր մենաշնորհ դիրքը և քանիցս տանուլ տվեց ընտրությունների ժամանակ մեկ դեմոկրատական, մեկ արդարության կուսակցություններին, մեկ զինվորական հեղաշրջումների միջոցով իշխանության գլուխ անցած գեներալներին ու ռազմականներին։ 1977-ի հունիսին պառլամենտական ընտրություններում հաղթանակ տարավ Ժողովրդահանրապետական կուսակցությունը։ Սոցիալ-դեմոկրատի պատմուճան հագած Էջևիթը բարեհաջողության ու երջանկության սարեր խոստացավ թուրք ընտրողներին, արտաքին քաղաքականության բնագավառում չափավորության նշաններ ցույց տվեց՝ ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի միջև խաղալու բացահայտ դրսևորումներով։ Բայց շատ շուտով Էջևիթի քաղաքականությունը բացարձակ սնանկ դուրս եկավ։ Թուրքիայի տնտեսական դրությունն ավելի ծանրացավ, ֆինանսները սպառվեցին, արտաքին առևտուրը լղարեց, քաոսն ու տեռորը հասան աննախընթաց չափերի։ Նացիոնալիզմն ու հակակոմունիզմը դարձան տիրապետող տենդենց թուրքական քաղաքական կյանքում։ Աշխուժացան Թյուրքեշի գլխավորած ֆաշիստական կազմակերպությունները, Էրբականի պանիսլամիստական քարոզներն ու գործերը։

Դեմիրելն արդարության կուսակցության ծրագրային դրույթ հռչակեց պայքարը կոմունիզմի դեմ։ «Մենք կոմունիզմը վտանգավոր ենք համարում ոչ միայն մեր երկրի,

այլև ամբողջ աշխարհի համար»,— բղավում էր նա ընտրությունների նախօրյակին։

Հասարակական կյանքը դեմոկրատացնելու, սոցիալ-տնտեսական բարեփոխումներ իրականացնելու, ազգային շահերին համապատասխան արտաքին քաղաքականություն ունենալու համար Թուրքիայի առաջադիմական ուժերի ջանքերը խաթարվում էին մանրբուրժուական հոսանքների («մահմեդական», «թուրքական» սոցիալիզմի կողմնակիցների) ու կուսակցությունների էքստրեմիստական, տեռորիստական մեծաթիվ խմբերի գործունեության հետևանքով։ Սրանից օգտվեց բանակի հրամանատարությունը, որը չափազանց մոտ է կանգնած ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի զինվորական շրջաններին և զինված ելույթով գրավեց իշխանությունը։ Կուսակցությունների գործունեությունը դադարեցվեց։ Պառլամենտն արձակվեց։ Թուրքիայում հասարակական կյանքը դրվեց զինվորի սապոգի տակ։

Հեղաշրջումը կատարվեց երկրի տիրապետող դասակարգերի շահերին համապատասխան։ Այն կրում է պարզ արտահայտված աջ բնույթ և հակակոմունիստական բովանդակություն։ Իրականացնելով իր դասակարգային ֆունկցիան, զինվորական ղեկավարությունը «քաղաքական տեռորիզմի, անարխիայի և սեպարատիզմի դեմ պայքարի» լոզունգի տակ հիմնական հարվածը հասցրեց ձախ դեմոկրատական և քըրդական շարժմանը, առաջադիմական քաղաքական, հասարակական և արհմիութենական կազմակերպություններին, որոնք իրենց պրակտիկ գործունեության մեջ կողմնորոշվում էին դեպի գիտական սոցիալիզմի գաղափարները կամ համակրում էին նրանց։

Ծանր կորուստներ ունեցան հատկապես քրդական ազգային կազմակերպությունները՝ «Ափոջուլար», «Քուրդիստանի ազգային-ազատագրական բանակը», «Թուրքական Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությունը», «Թուրքական Քուրդիստանի սոցիալիստական կուսակցությունը» և այլն։ 1981-ի աշնանը թուրքական բանտերում 150 հազար քաղաքական բանտարկյալ կար։

Հարյուր հազարավոր թուրքեր հեռանում են երկրից, աշխատանք փնտրում Եվրոպայում, քանի որ Թուրքիայի իշխող

մակաբույծ կառավարողները երբեք չկարողացան ամենատարրական պայմաններ ստեղծել հասարակության սոցիալ-տնտեսական նորմալ զարգացման համար։ Միայն Արևմտյան Գերմանիայում աշխատող թուրքերի թիվը հասնում է 1 միլիոնի։ Սրանք կատարում են ամեն տեսակի սև աշխատանքներ՝ մաքրում են փողոցները, թափում են աղբ, լվանում են ճաշարանների ամանեղենը, ածուխ են քանդում հանքահորերում և այլն (15)։ Սրանց անվանում են «գաստարբայտերներ»։ Սրանք այստեղ երկրորդ տեսակի մարդիկ են, որոնց արհամարհում են ամենուրեք։ Նրանք քիչ են վաստակում, բայց, այնուամենայնիվ, կարողանում են օգնել իրենց հարազատներին Թուրքիայում, որոնք շատ ավելի վատ պայմանների մեջ են։ Թուրքական հասարակությունը հևում է, նա երբեք նորմալ չի շնչում։ Թուրքական կառավարողներն արտահայտում են մի բուռ մակաբույծների, շահագործողների շահերը։

Տնտեսական համագործակցության եվրոպական կազմակերպության անդամ հանդիսացող կամ նրան հարող պետությունների մեջ Թուրքիան ամենաաղքատ երկիրն է։ 1981-ի նոյեմբերին Թուրքիայի աշխատանքի մինիստրության հրապարակած զեկուցման մեջ տագնապով ասված էր, որ թուրքական բնակչության մոտավորապես կեսը մշտապես թերասնվում է, դեղորայքի պակաս է զգում և չունի կրթություն ստանալու հնարավորություն։ Ամեն տարի մոտ 500 հազար պատանիներ և աղջիկներ դժվարին կռիվ են տալիս գոյության համար (22, 25. XI. 1981)։

Թուրքիայում փոխվում են կառավարությունները, մեկը մյուսին հաջորդում են այս կամ այն կուսակցության, թե զինվորականների իշխանությունը, բայց քաղաքական կյանքի մենաշնորհ ուղղությունը պահպանվում է. դա հակակոմունիզմն է, հակասովետիզմը։ Թուրքական ուսուցչության զգալի մասը ընդգրկված է հակակոմունիստական մոլեռանդ մի կազմակերպության մեջ։ Թուրքիզմ՝ առաջին հերթին։ Նախ և առաջ այլամերժ թուրքական նացիոնալիզմ։ Քաղցած, կիսամերկ, առանց ապրուստի միջոցի՝ բայց թուրքական նացիոնալիստ։ Սա թուրքական հասարակական կյանքի բնորոշ առանձնահատկությունն է։

Ինչպես երեկ, այսօր նույնպես թուրքական ամբողջ պետական քաղաքականությունը խարսխված է ՆԱՏՕ-ի վրա։ Եթե չլիներ ՆԱՏՕ-ն, ԱՄՆ-ի հակասովետական պլաններում Թուրքիային հատկացվող առանձնահատուկ դերի օգտագործման գործելակերպը՝ Թուրքիան վաղուց խորտակվել էր ներքին հակասություններից, տնտեսական քաոսից ու անարխիայից։ Տասնյակ տարիներ Թուրքիան ապրում է իմպերիալիստական տերությունների դրամով ու օգնությամբ։

«Ցումհուրիետ» թերթը գրել է, թե «իրանական հեղափոխությունից հետո ՆԱՏՕ-ի գլխավոր զինվոր Թուրքիան պետք է «կայուն» լինի։ Այդ «կայունությունն» անհրաժեշտ է ռազմական հսկայական զինապահեստը տեղադրելու համար, որ Պենտագոնը վերջին ժամանակներս ստեղծում է Թուրքիայում, այն վերածելով վառոդի մի մեծ պահեստի՝ հակառակ նրա ժողովրդի շահերին ու ձգտումներին։

Ժամանակակից թուրք պետական գործիչները հաճախ են հիշում Նապոլեոնի խոսքերն այն մասին, թե «երկրի աշխարհագրությունն է անում նրա պատմությունը» (27, էջ 51) և փորձում են ավելի թանկ ներկայանալ ՆԱՏՕ-ի հակասովետական պլաններում։ 1981-ի հուլիսին ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրությունը մի զեկուցագիր էր պատրաստել, որի մեջ շեշտվում էր, թե Պորտուգալիայի և Անգլիայի հետ միասին ՆԱՏՕ-ի մեջ առավել մեծ ներդրումն անում է Թուրքիան (33, 22. V. 1981)։ Հանուն այն բանի, որպեսզի թուրքական տերիտորիան ծառայի ամերիկյան իմպերիալիզմի ագրեսիվ պլաններին, հանուն այն բանի, որպեսզի թուրք զինվորը լինի բարձրորակ «թնդանոթի միս»՝ ամերիկյան քաղաքական միտքը ծառայամիտ է, կեղծավոր, «թուրքասեր»։ Հանուն ՆԱՏՕ-ի, ամերիկյան միլիտարիստները պատրաստ են կատարելու թուրքական պետականության մեծերի բոլոր քմայքները։

Հունական «ՊԱՍՈԿ» սոցիալիստական կուսակցության օրգան «Էքսորմիսի» թերթը 1978-ի ապրիլի 30-ին հաղորդում էր ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջ. Լունսի մի գաղտնի շրջաբերականի մասին։ Այդ գրության մեջ կոչ էր արվում զսպել այն ազգայնական գործունեությունը, որոնց լծված են զանազան երկրների ազգային փոքրամասնությունները և,

մոտավորապես, հույները և հայերը՝ ընդդեմ թուրքական պետության, որին այսօր պարտադրվում են նախորդ սերունդների մեղքերը։ Նույն տեղեկագրում Լունսը Եվրոպայի և Ամերիկայի հայերին կշտամբում էր Ատլանտյան պակտի գործը խռովելու մեջ։ Այստեղ ասվում էր Սովետական Հայաստանի ազգակիցներին գրգռելու, Թբիլիսի, Էրզրումի և Կարսի շրջանները Թուրքիայից անջատելու հայերի պլանների մասին։ Լունսը այդ շրջանները հռչակում էր ոչ միայն կենսական թուրք պետության համար, այլև սովետական պետության դեմ Արևմուտքի շահերն ապահովելու «հիմնական նշանակություն ներկայացնող կռվաններ» (13)։ ՆԱՏՕ-ի տնօրենները միշտ էլ մոռացության են տալիս թուրքական կառավարողների երեկվա մեղքերը, անտեսում են հայ ժողովրդի կենսական շահերը։ Նրանք պատրաստ են հակակոմունիզմի շահերին զոհաբերելու մարդկային խիղճն ու բոլոր ճշմարտությունները։

1980-ի սեպտեմբերի 12-ի թուրք զինվորականների կատարած հեղաշրջումը կատարվեց ՆԱՏՕ-ի և Պենտագոնի սցենարով ու ռեժիսուրայով։ Ամեն ինչ նախապես կազմակերպված էր։ Թուրքական քաղաքական կյանքն այնքան էր շիկացած, որ ոմանք կարծում էին, թե ամեն վայրկյան կարող էր կրկնվել Իրանի օրինակը։ Սա նշանակում էր, որ ԱՄՆ-ը կորցնելու էր նաև Թուրքիան որպես հակասովետիզմի բազա։ Ամերիկյան ազդեցիկ «Նյուս ուիկ» ամսագիրը գրեց, թե հեղաշրջման նպատակն էր «շարունակել երկրի վճռական դերը ՆԱՏՕ-ի հարավային սահմանների վրա» (34, 6. IV. 1981, էջ 24)։

Ռեյգանի վարչակարգը անվերապահորեն պաշտպանում է Թուրքիայի զինվորական իշխանությունը։ Այս դիրքորոշումը պատճառ է հանդիսացել, որ ավելի խորանա այն ճեղքվածքը, որ ստեղծվել է ԱՄՆ-ի և եվրոպական դաշնակիցների միջև։

Դա ավելի պարզ դարձավ, երբ 1982-ի հուլիսին հինգ եվրոպական երկրներ Ստրասբուրգում կայացած Եվրոպայի մարդկային իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նիստում ամբաստանեցին Թուրքիային։ Դանիան, Ֆրանսիան, Հոլանդիան, Նորվեգիան և Շվեդիան հայտարարեցին,

թե 1980-ին իշխանության գլուխ անցած թուրքական զինվորական կառավարությունը ոտնահարում է «Եվրոպայի մարդկային իրավունքների պաշտպանության հանձնաժողովի» կողմից ճանաչված մարդկային իրավունքների հիմնական սկզբունքները, ինչպիսիք են՝ տանջանքների գործադրման արգելումը, անհատի ազատության և ապահովության իրավունքը, արդար և հրապարակային դատավարության իրավունքը, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքները, ազատ հայտարարության իրավունքը և խաղաղ ցույցերի ու ելույթների իրավունքը։ Ասպարեզ հանվեց 85 քաղաքացիների մի անվանացանկ, որոնք սպանվել են իրենց բանտարկության ժամանակ։ 1982-ի մարտի 16-ին թուրքական կառավարությունն ընդունեց, որ 1980 թվականից ի վեր 15 հոգի մահացել են տանջանքների հետևանքով, ավելացնելով, թե այդ մահերի պատճառ հանդիսացող պաշտոնյաները պետք է պատժվեն։

1981-ի դեկտեմբերի սկզբին ժամանելով Անկարա, ԱՄՆ-ի ռազմական մինիստր Ուայնբերգերը շեշտեց Թուրքիայի «ստրատեգիական բացառիկ դիրքը», նրա կարևոր դերը ՆԱՏՕ-ի կազմում (33, 4. XII. 1981)։ Ամերիկյան իմպերիալիստները, ՆԱՏՕ-ի տնօրենները ծրագրում են Թուրքիայի տարածքը, ռազմածովային, ռազմաօդային բազաներն օգտագործել արագ ծավալման ուժերի սպասարկման համար։ 1980-ին Արևմուտքը 1,6 միլիարդ դոլարի ռազմական օգնություն ցույց տվեց Թուրքիային։ Թուրքական մամուլն ավելի հաճախ է հիշեցնում, թե Թուրքիան ամենակարևոր «վահանն է ընդդեմ Սովետական Միության»։ «Միլլիեթ» թերթը պրովոկացիոն դիրքերից քննարկելով Աֆղանստանի իրադարձությունները, գրեց, թե կարևորը Արևմուտքի համար Պարսից ծոցի պաշտպանությունն է, որի ճանապարհն անցնում է Ադրբեջանով։ «Միակ երկիրը, որ ի վիճակի է փակել այդ ուղին, հանդիսանում է Թուրքիան։ Ահա թե ինչու մեզ համար Թուրքիայի դրությունն ավելի կարևոր է, քան Պակիստանինը»։

1982-ին Թուրքիան ԱՄՆ-ից ստացավ 703,5 միլիոն դոլարի օգնություն, ինչը 56 տոկոսով ավելի է, քան նախորդ՝ 1981-ին։

«Թուրքիայում իսկական պատերազմ է, որը դիկտատորական ռեժիմը մղում է ժողովրդի դեմ»,— 1982-ի փետրվարին գրել է «Յումանիտե» թերթը։— Բայց արդյո՞ք միայնակ,— հարց էր տալիս թերթը։ «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը (25. II, 1982) շեշտում էր, որ թուրքական զինվորականների մեջքին կանգնած են ԱՄՆ-ը, Պենտագոնը, ՆԱՏՕ-ն։ ԱՄՆ-ի ռազմական մինիստր Կ. Ուայնբերգերը Թուրքիա այցելելուց հետո հրապարակավ իր հիացմունքն արտահայտեց թուրքական խունտայի գործունեության առթիվ։ «Գեներալները չպետք է շտապեն վերադառնալ դեմոկրատիային»,— նրան երկրայում էր Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Ջ. Սպեյնը։

Այսօրվա Թուրքիայում իշխանության գլուխ կանգնած զինվորական դիկտատուրան ունի ազգայնական բնույթ և հակակոմունիստական բովանդակություն։ 1982-ի մարտի 15-ին Ստամբուլի Շիշլիի գերեզմանատան «Ազատության բլուրի վրա» նշվեց Թալեաթի սպանության 61 տարին։ Նորից ծաղկեպսակներ զինված ուժերի հրամանատարությունից, Ստամբուլի կուսակալությունից, քաղաքապետարանից... Ճառեր, հարգանքի համազարկ։ Ներկա էր զորավար Քեմալ Յուքսելը (12, 16. III. 1982)։ Իսկ այդ պահին Թուրքիայի բանտերում 81 հազար 346 բանտարկյալ կար («Գյունեշ», 24. 02. 82)։

1982-ի հունիսի 21-ին Անկարա ժամանած Ռոջերսը (Եվրոպայում ՆԱՏՕ-ի զորքերի հրամանատար) այցելեց Էրզրում, շրջեց թուրքական 3-րդ բանակի դիրքերը, որը «իր վրա կվերցնի հնարավոր ագրեսիայի առաջին հարվածը» (30, 22. 6. 82)։ «ԱՎԱԿՍ» ինքնաթիռների համար վերակառուցվեց Կոնյայի ռազմաօդային ուժերի բազան։ 1982-ի հուլիսին Թուրքիայում տեղի ունեցող անցուդարձը «Մեժդունարոդնայա ժիզն» ամսագիրը վերնագրեց «Ռեակցիան հարձակվում է»։

«Թուրքիայի՝ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ագրեսիվ ֆորպոստ դառնալու պրոցեսը շարունակվում է և դա, բնականաբար, չի կարող չանհանգստացնել նրա հարևաններին, լուրջ անհանգստություն չառաջացնել երկրի հետագա ճակատագրի համար իր իսկ թուրք ժողովրդի մոտ» (21, էջ 138)։

1983-ին Թուրքիային ամերիկյան օգնությունը կկազմի 815 միլիոն դոլար։ Սրանով Թուրքիան կդառնա Իսրայելից ու Եգիպտոսից հետո ամերիկյան օգնություն ստացող ամենամեծ երկիրը։ Սա վկայությունն է այն բանի, որ ԱՄՆ-ը հատուկ նշանակություն է տալիս Թուրքիային, որպես ՆԱՏՕ-ի հարավային թևի, հատկապես այժմ, երբ Պապանդրեուի հունական կառավարությունը նոր դիրքորոշում է որդեգրել։

Ամերիկյան իմպերիալիստներն օգնում են թուրքական իշխանավորներին, պաշտպանում նրանց հակահայկական գործողությունները։ Մյուս կողմից, Ռեյգանն ամեն ինչ անում է Թուրքիան հակասովետական ագրեսիվ պլաններում օգտագործելու համար։ Այսօր Ռեյգանի վարչակազմը ամբողջապես կանգնած է Թուրքիայի հակահայկական գործողությունները պաշտպանելու դիրքերում։

Գեներալ Էվրենն իրեն համարում է Աթաթուրքի ավանդների երկրպագու ու դրանց իրագործման ասպետ։ Նա իր բոլոր ճառերում հիշեցնում է թուրքական առաջին հանրապետության առաջին պրեզիդենտի ասույթները, սկզբունքները, խրատները։ Բայց, նախ շատ քիչ բան է մնացել Թուրքիայում Աթաթուրքի սկզբունքներից, և հետո նորընծա դիկտատորն ինքն է վերանայում մնացածը։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նախ տոնահարվեց «էթաթիզմի» (այսինքն երկրի տնտեսության մեջ պետության առաջնության) սկզբունքը։ Երկիրը դարձավ բազմակուսակցական, այսինքն՝ Աթաթուրքի ժողովրդահանրապետական կուսակցության մենաշնորհի արևը խավարեց։ «Լաիցիզմի» (կրոնի անջատումը պետությունից) սկզբունքը խաթարվեց։ Դեմիրելի կառավարման տարիներին Թուրքիայում այնքան մզկիթ կառուցվեց ու մուսուլմանական-կրոնական ակումբներ և կազմակերպություններ հիմնադրվեցին, որքան նախորդ հարյուրամյակի ընթացքում չէր ստեղծվել։

Քենան Էվրենն այսօր փակել է Աթաթուրքի հիմնադրած պառլամենտը, բայց խոսում է նրա ավանդույթներից, ցրել է կուսակցությունները, բայց խոսում է դեմոկրատիայից, ոչնչացնում է քաղաքական, դեմոկրատական կազմակերպությունները, կոտորում է հազարավոր առաջադեմ մարդկանց,

բայց ճառում է ժողովրդավարությունից, մարդասիրությունից, երկրի ներսում խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունից։ Այսօր Թուրքիան դժոխք է թուրք աշխատավոր մարդու համար։ Թուրքիայի լավագույն զավակները գնդակահարված են, զնդաններում են կամ մի կերպ խույս են տվել տեռորից և ապաստանել արտասահմանում։

Իսկ 1981-ի գարնանը Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թյուրքմենը Վաշինգտոն այցելելուց հետո հայտարարեց, թե «ամբողջապես ետևում են մնացել այն մառախլապատ օրերը, որոնք ստվեր էին ձգում ԱՄՆ-ի հետ մեր հարաբերությունների վրա»։

Ալ. Հեյգի հետ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ի. Թյուրքմենի բանակցությունների ավարտից հետո, Վաշինգտոնում Սպիտակ տան ներկայացուցիչը ժուռնալիստներին հայտարարեց, թե «ԱՄՆ-ը վճռականորեն պաշտպանում է Թուրքիայի ջանքերը երկրի տնտեսության վիճակը կարգավորելու և զինված ուժերը մոդեռնացնելու ուղղությամբ»։ ԱՄՆ-ը ցանկանում է տեսնել ուժեղ Թուրքիա, հայտարարեց Ալ. Հեյգը (33, 3. IV. 81)։ Նույն Ի. Թյուրքմենը, չափազանց բացորոշ է արտահայտում իր կառավարության հավատամքը։ Եթե «Սովետական Միությունը գրավի Լեհաստանը, — հայտարարեց նա Վաշինգտոնում,— Թուրքիան կգործի ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակիցների հետ համատեղ» (33, 8. IV. 81)։ Որքան ավելի են սերտանում Թուրքիա-ՆԱՏՕ ռազմաքաղաքական կապերը, այնքան զնգուն է դառնում թուրքական հակասովետիզմի ձայնը։ Անկարայի, Ստամբուլի, Էրզրումի ռադիոկայանների հաղորդումների որոշակի մասը մշտական ժամերի նվիրված է հակասովետական, հակահայկական չարամիտ պրոպագանդային։ Արաբերեն ու թուրքերեն, պարսկերեն ու անգլերեն մշտապես լսվում է թուրքական հակասովետիզմի միալար կռկռոցը։

Քենան Էվրենի զինվորական իշխանության վերին հարկում որոշիչ դեր էր խաղում Տուրգութ Օզալը։ Սա ճանաչված է որպես «Թուրքիայի ուժեղ մարդ»։ Մի ժամանակ նա Դեմիրելի խորհրդականն էր, զինվորական հեղաշրջումից հետո դարձավ Էվրենի աջ ձեռքը։ Նույնիսկ «առժամյա վարչապետ»։ Սրան երբեմն անվանում են Թուրքիայի Կիսինջեր։ Միջազ-

գային մամուլը հատկապես մատնացույց է արել նրա ազգայնական հայացքները, թուրքական աջերի գլխավոր տեսաբան լինելու հանգամանքը։ 1980-ի հունիսի 10-ին Բեյրութի «Աս Սաֆիր» օրաթերթի թղթակցին տված իր հայտարարությամբ Տուրգութ Օզալը պարզեց իր քաղաքական հավատամքը առանց մնացորդի։ Կարդում ենք հայտարարությունը. «Թուրքիան մի ռազմական պատվար է սովետների դեմ, բայց այդ պատճառն այժմ ենթարկվում է հարվածների։ Արևմըտյան և արաբ բոլոր բարեկամների պարտականությունն է թեթևացնել այդ ճնշումները քանի ուշ չէ»։ «Մենք կարող ենք փոխել ուժերի փոխհարաբերությունը աշխարհում, եթե մեր դաշնակիցները գիտակցեն մեր դերի կարևորությունը,— ասում է նեոպանթուրքիզմի գաղափարախոսը։— Թուրքական ծագումով 87 միլիոն հայրենակիցներ կան Խորհրդային Միության մեջ. Իրանի բնակչության կեսը թուրքեր են. Չինաստանի մեջ կան 15 միլիոն. տեսնո՞ւմ եք, Թուրքիան եթե ուզի կարող է շատ բան շարժել միջազգային մոլորակի վրա, եթե դաշնակիցները համաձայնվեն» (5, 3. VIII. 1981)։

Նոյեմբերի 6-ի ընտրություններում հաղթեց Օզալի կուսակցությունը։

Քենան Էվրենի մյուս խորհրդականը Իլհան Օզթրաքն է, որը հայտնի է, որպես փոքրամասնությունների՝ հատկապես հայերի և քրդերի հալածիչ։ Նրան համարում են խունտայի կազմակերպած հեղաշրջման, զինվորականների իշխանության հաստատման «գաղտնի ուղեղ» (3, 6. VI. 1981)։ Սա էր պահանջում զորամասեր մտցնել համալսարաններ ու ֆակուլտետներ, ճզմելու համար համալսարանական «անկարգությունները» (33, 26. VII. 1981)։ Սա նույնպես ֆաշիզմ է, որը մատուցվում է որպես տեռորիզմի դեմ մղվող պայքար։

Որոշ ճշմարտություններ պարզելու համար մեզ պետք է մի փոքր ետ գնալ ցույց տալու համար, որ թուրքական ֆաշիզմը կամ սանձարձակ թուրքիզմը հատկապես ծաղկեցին ՆԱՏՕ-ի հովանու տակ։ Երիտթուրքերի թուրքիզմի ավանդույթները տվեցին նոր թունավոր ծիլեր, տարածվեցին երկրի ներսում ու նրանից դուրս գտնվող թուրք երիտասարդության շրջանում։ Վերջին տարիներս Թուրքիան դարձավ իսկական

դժոխք իր անարխիայով, ղանգվածային սպանություններով, գաղափարաքաղաքական սանձարձակ հարցադրումներով։

Թուրք գրականագետ Ջեմալ Մերիչն առանց ամաչելու վերջերս գրեց, թե «մինչդեռ մասսաները եվրոպականանում են, մտավորականները պետք է էլ ավելի թուրք դառնան» (14, էջ 67)։ Թուրքական կյանքի ֆաշիզացման, թուրքական պետականության ագրեսիվության ամենացցուն դրսևորումը հանդիսացավ թուրքական բանակի ներխուժումը Կիպրոս։ Թուրք ասկյարը հույն խաղաղ բնակչության նկատմամբ կատարած իր բռնաբարումներով, կողոպուտով ու վայրագություններով ապացուցեց, որ թուրքական գորշ գայլերի բնազդը շարունակվում է, որ մարդու իրավունքների մասին իմպերիալիստական արևմուտքի «մարդասիրական» ճամարտակումները Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի գծով իրենց դաշնակցի համար չէ։ Կիպրոսի տերիտորիայի 40 տոկոսն օկուպացված է։ Կիպրոսի ժողովրդի կամքը բռնադատված է, իսկ միջազգային ֆորումների բանաձևերը թուրքական պետականության կողմից արհամարհվում են, որովհետև Թուրքիայի օգտին է գործում Վաշինգտոնը։ Թուրքիայի նախկին արտգործմինիստր Չաղլայանգիլը հայտարարեց մեջլիսում (երբ նա հանրապետական սենատի նախագահն էր). թե «ուր որ մեհմեդիկը մտնում է սվինով, այնտեղից նա դուրս չի գալիս գրիչով» (28, 16. II. 1980)։

Թուրքական բուրժուական նացիոնալիզմի՝ պանթուրքիզմի գաղափարախոսները երազում են «մեծ Թուրքիայի մասին, որը միավորելու է աշխարհի բոլոր թուրքախոս ու թուրքալեզու ժողովուրդներին»։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին իշխանությունների թույլտվությամբ ու անմիջական մասնակցությամբ Թուրքիայում սանձազերծվեց հակակոմունիզմի մի սանձարձակ կամպանիա, որն ուներ շեշտված հակասովետական բնույթ։ «Բոզքուրտ», «Չինարալթհ», «Օրխոն» և այլ հետադիմական թերթերի և ամսագրերի շուրջը համախմբված պանթուրքիստները գրում էին մարտնչող շովինիզմի, ֆաշիզմի, հակասովետիզմի դիրքերից (15, էջ 103)։

Պատմական կոնկրետ պայմաններին համապատասխան թուրքական հակակոմունիզմը փոխում է իր դրսևորման

ձևերը, երբեմն նաև բովանդակությունը։ Ներկա պահին թուրքական հակակոմունիզմն ամբողջությամբ ծառայում է ամերիկյան իմպերիալիզմի և ՆԱՏՕ-ի հակասովետական պլաններին։ Պանթուրքիզմի և հակակոմունիզմի պրոպագանդան Թուրքիայում հատկապես ուժեղացավ 1950-ից հետո, երբ երկրում ուժեղացել էր ամերիկյան ազդեցությունը։ Ա. Մենդերեսի կառավարությունը խրախուսում էր Ջիա Գյոք Ալփի, Նիխալ Ատսըզի, Ցեթհի Թեկտօղլիի և այլ պանթուրքիստների գրքերի տպագրությունը։ Այդ տարիներին էլ գործել սկսեցին «Թուրք նացիոնալիստների ասոցիացիա», «Թուրք վտարանդիների և վերադարձողների ֆեդերացիա» ազգայնական կազմակերպությունները։ «Թուրան» հրատարակչությունը մշտապես պանթուրքիստական գրքեր էր տպագրում։ Ամենաթունդ պանթուրքիստական հրապարակումների հեղինակը Ստամբուլի համալսարանի պրոֆ. Գ. Չաղաթայն էր (19, էջ 132—133)։

1951-ին փոփոխություններ կատարվեցին քրեական օրենսդրության մեջ, ըստ որի կոմունիստական պրոպագանդայի համար արդեն նախատեսվում էր ոչ թե 1-ից 3 տարի, այլ 10 տարի բանտարկություն։ Բոլոր այլախոհներին սկսեցին «կոմունիստ» անվանել։ Քրդերի ելույթներն իրենց ազգային իրավունքների համար նույնպես կոմունիստական հռչակվեցին (15, էջ 104)։

«Ազգայնական շարժում» կուսակցության պարագլուխ Ա. Թյուրքեշը դեռ վերջերս, մինչև իր ձերբակալվելը, քարոզում էր բացահայտ պանթուրքիստական ռասիզմ։ Նա պնդում էր, թե քանի որ բոլոր սպիտակ ժողովուրդներն իբր թուրքերից են առաջացել, ապա Թուրքիան իրավունք ունի ստեղծելու իր կայսրությունը (24, էջ 65)։ Պանթուրքիստներն այսօր էլ պահանջում են Թուրքիային միացնել Արևմտյան Թրակիան, հունական Սամոս, Քիոս, Միտիլինե, Ռոդոս և այլ կղզիները։

Ա. Թյուրքեշը պանթուրքիստական գաղափարախոսությունը հռչակեց որպես միջոց հակակոմունիստական մարտաշունչ հայացքներ քարոզելու համար (23, էջ 40)։ Պատահական չէ, որ վերջերս թուրքական «Սոն Հավադիս» թերթը տպագրեց «Ադրբեջանական թուրքերը և Աթաթուրքի

սերը» վերնագրով մի հոդված, որտեղ ասվում էր, թե Աթաթուրքը ոչ միայն անատոլիական թուրքերի, այլև աշխարհի բոլոր թուրք ժողովուրդների, մասնավորապես ադրբեջանցիների ղեկավարն էր։ Նույն թերթը միաժամանակ պարծենկոտությամբ գրում էր, թե անվտանգության ուժերի գործողությունների շնորհիվ Թուրքիայի կոմունիստական կուսակցության գործունեությունը վերջնականապես ճզմված է։

1965-ին «Արդարություն» կուսակցությունը հակակոմունիզմը հասցրեց պետական քաղաքականության աստիճանի։ Երկրում սկսեցին գործել մի շարք հակակոմունիստական կազմակերպություններ և ընկերություններ. «Կոմունիզմի դեմ պայքարի թուրքական ընկերություն», «Պանթուրքիստական օջախներ», «Սրբավայրերի կողմնակիցների ընկերություն» (Մուքքադեսաչի) և այլն (14, էջ 105)։

Ա. Թյուրքեշն ավելի սանձարձակ էր քարոզում այն, ինչ գրում էին իր նախորդները՝ երիտթուրքերն ու հետնորդ տարիների թուրք ֆաշիստները։ Ահա թե ինչ էր գրել 1942-ի մռայլ օրերին Ստամբուլի «Բոզքուրտ» (գորշ գայլ) թերթը (5 մարտի 1942-ին). «Ո՞վ ենք մենք։ Մենք գորշ գայլեր ենք, ի՞նչ է մեր գաղափարաբանությունը։ Գորշ գայլին թուրքիզմը։ Ի՞նչ է գորշ գայլերուն (թուրքին) հավատամքը։ Անոնք կհավատան, որ թուրք ցեղը և թուրք ազգը ուրիշ ցեղերե կամ ազգերե ավելի գերիվեր են։ Ի՞նչ է իրենց գերազանցության աղբյուրը։ Թուրքական արյունը։ Արդյո՞ք թուրքը գերազանց է ծնունդով։ ... Գորշ գայլերը պանթուրքի՞ստ են։ Այո։ Գորշ գայլ թուրքերու սրբազան նպատակն է տեսնել թուրքական պետության 65 միլիոնանոց ազգ մը ըլլալը։ Ի՞նչ պիտի ըլլա քու արդարացումդ ասոր համար։ Գորշ գայլերը երկար ատենա ի վեր հռչակած են՝ «արդարությունը չի տրվիր. այլ կը բռնագրավվի», սկզբունքը։ Պատերա՞զմ։ Այո, պատերա՛զմ, եթե հարկավոր է...»

Ահա մեկ ուրիշ մեջբերում, այս անգամ մեկ այլ թուրք հեղինակի գրքից. «Թուրքիո տիրամիք 20 միլիոնանոց խումբը և հյուսիսի ու արևելքի 30 միլիոնները երկար ատեն կարելի չէ զսպել։ Եթե թուրքիզմը և Թուրքիան պիտի ապրին, պետք է առանց ժամանակի կորուստի միանան և կազմեն 60 միլիոնանոց թուրք ազգ մը...» (6, 23. 8, 1964)։

1966-ի սեպտեմբերի 9-ին «Արդարություն» կուսակցության (այն ժամանակ կառավարության գլուխ էր կանգնած) «Ենի Ստամբուլ» թերթում Մեհմեդ Սադիկ Արանը (նախկին հայտնի մուսավաթական) հրապարակեց մի հոդված, որը վերնագրված էր «Երկրորդ թուրքական պետությունը, ստեղծված XX դարում. Ադրբեջանական հանրապետություն»։ Վերնագիրն ինքնըստինքյան վկայությունն է պանթուրքիստական նույն մտայնության, որին խնկարկում էին երեկ և խնկարկում են այսօր Թուրքիայում։ Եվ ոչ միայն Թուրքիայում։ Հեղինակը կատաղած է, որ կա Սովետական Սոցիալիստական Հայաստան, որ կա Երևան (ըստ հեղինակի՝ առանձնահատուկ խնամքով կառուցված Անաստաս Միկոյանի ջանքերով), որ Հայաստանը խանգարում է Ադրբեջանի անմիջական սահմանային շփմանը եղբայր Թուրքիայի հետ։ Նա ոռնում է, որ Բաքվում հուշարձան է կառուցված «չեթեջի» (պարտիզան, հայդուկ) Ստ. Շահումյանի հիշատակին, նա ողբում է, որ Բաքվում չկա այնտեղ զոհված անատոլիական թուրքերի (խոսքը 1918-ի երիտթուրքական ինտերվենտների ու մարդասպանների մասին է) հիշատակը հավերժացնող որևէ հուշարձան։ Մեհմեդ Սադիկ Արանը պանթուրքիստ է, սանձարձակ հակառուս։ Նա չի խորշում ռուս մեծ ժողովրդի հասցեին ամենափողոցային հայհոյանքներից։

«Թուրք կուլտուրա» ամսագրի հարձակումների գլխավոր օբյեկտը մեր երկրի թուրքալեզու ժողովուրդների սոցիալ-քաղաքական կյանքն է, գիտությունն ու կուլտուրան։ Հակակոմունիստական, հակասովետական ոտնձգություններով աչքի են ընկնում «Ադրբեջանական կուլտուրայի խմբակի», «Ադրբեջան», «Մուջահիդ» (Մարտիկ, Անկարա) ամսագրերը, «Պայքար կոմունիզմի դեմ» (Իզմիր) թերթը (17, էջ 142)։

Պանթուրքիզմն ագրեսիվ շովինիստական բուրժուական գաղափարախոսության ձևերից մեկն է, որը քայքայում է աշխատավորների, բանվոր դասակարգի ինտերնացիոնալ միասնությունը, ատելություն սերմանում ժողովուրդների միջև։ Պանթուրքիզմն ագրեսիայի գաղափարախոսությունն է։ Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ այն ծառայեց գերմանական իմպերիալիզմին։ Ներ-

կայուն պանթուրքիզմը խրախուսվում է ինչպես ամերիկյան, այնպես և արևմտագերմանական իմպերիալիստների կողմից։ Պանթուրքիզմի գաղափարախոսները սովետա-թուրքական բարեկամության կատաղի թշնամիներ են (19, էջ 130—131)։ Է. Հասանովան գտնում է, որ գաղափարապես ֆաշիզմին ամենամոտ կանգնած են եղել պանթուրքիստները, որ նրանց միավորում էին ռասիզմը, շովինիզմը, հակասովետիզմը (15, էջ 102)։

Լոնդոնի «Ֆայնաշնըլ Թայմս» թերթը Թյուրքեշի մասին հետևյալը գրեց. «Նրա վերաբերմունքը թուրքերի ազգային ժառանգության և նրանց նախկին մեծ կայսրությունների գործնականում հանգեցրեց մի այնպիսի ռասիզմի հրահրման, ինչպիսին չէր եղել հայերի և քրդերի կոտորածներից ի վեր» (18, 30. 6. 1979)։

Գնդապետ Թյուրքեշի գլխավորած ֆաշիստական շարժման (բոզքյուրտլեր—գորշ գայլեր) գաղափարախոս Ն. Աթսըզը դիմելով Թուրքիայի քրդերին հայտարարեց. «Եթե դուք, քըրդերդ, պետք է շարունակեք խոսել ձեր պարզունակ լեզվով, ապա թուրքերը կկոտորեն ձեզ, ինչպես իր ժամանակին ոչընչացրին հայերին, վրացիներին և հույներին։ Դուք կարող եք դիմել ՄԱԿ, որպեսզի ձեզ տրամադրեն հայրենիք Աֆրիկայի ինչ-որ մի վայրում, այլապես թուրքական ռասան կվերածվի կատաղած առյուծի, որին ոչ ոք չի կարող կանգնեցնել» (20, 2. 6. 1981)։

Թյուրքեշի նեոֆաշիստական կազմակերպությունը կոչվում է «ազգային շարժման կուսակցություն»։ Նա դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծայրահեղ աջ ազգայնական գաղափարներ էր քարոզում, ակտիվորեն համագործակցում նացիստական հատուկ ծառայությունների և, առաջին հերթին, գեստապոյի հետ։ 1944-ի հոկտեմբերի 9-ին Բեռլինի գեստապոյի պետը գրում է արտաքին գործերի մինիստրություն. «Բոլոր պանթուրքական խմբավորումների հետ կապ պահպանելը համապատասխանում է ռայխի շահերին։ Առայժմ այդպիսի կապ կա լոկ Թյուրքեշի հետ, որը սպայական ուսումնարան է ավարտել և պանթուրքական շարժման պարագլուխներից մեկն է» (20, 2. 6. 1981)։ Թյուրքեշի կազմակերպությունը ֆինանսական

օժանդակություն էր ստանում Ստամբուլի առևտրական և արդյունաբերական պալատներից, խոշոր մոնոպոլիստական «Սաբանջի» տրեստից, ԱՄՆ-ի, Արևմտյան Գերմանիայի և այլ երկրների նեոնացիստական կազմակերպություններից (22, 2. 11. 1981)։ Թյուրքեշը կապված էր ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչության, ԳՖՀ-ի նեոֆաշիստական կազմակերպությունների, Իտալիայի տեռորիստական խմբավորումների հետ (23)։

1944-ին Թյուրքեշը ձերբակալվեց հեղաշրջման փորձ կազմակերպելու համար, որի նպատակն էր Թուրքիայի մուտքը պատերազմի մեջ Գերմանիայի կողմում։ 1945-ի ապրիլին նա արդեն ազատ էր արձակված ու շարունակում էր պրոֆաշիստական կազմակերպության շարքերի համախմբման գործը։

1960-ին Թյուրքեշն ասպարեզ իջավ որպես պետական նոր հեղաշրջման ակտիվ մասնակից։ Մենդերեսի կուսակցությունը տապալած 32 սպաներից մեկը նա էր։ Մինչ այդ նա ծառայում էր Վաշինգտոնի թուրքական զինվորական միսիայում, հետո միջուկային տեխնիկայի բարձր դպրոցի սան էր Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում։ 1968-ից սկսած նա ստեղծեց իր «կոմանդոսների» կազմակերպությունը։ Ստեղծվեցին մի քանի տասնյակ ճամբարներ Անկարայում, Իզմիրում, Ստամբուլի արվարձանում և այլուր, որտեղ գլուխ կտրողներ էին պատրաստում իսկական ֆաշիստական, մարդասպան մեթոդներով։ Շուտով «կոմանդոսներին» «բոզքուրտլեր» անվանումը տվեցին։ Իր կուսակցության՝ «Ազգայնական գործողության կուսակցություն» անվանումը Թյուրքեշը փոխ էր առել Ֆրանկոյի կուսակցության անվանումից։ Իսկ պարագլուխը՝ «Բաշբուկ» գերմանական «Ֆյուրերի» իսպանական «Կաուդիլյայի» և իտալական «Դուչեի» թարգմանությունն է։

1967-ին Ա. Թյուրքեշը հայտարարում էր. «Վաղ թե ուշ Թուրքեստանը կդառնա թուրքական» (19, էջ 133)։ Նրա և կրոնականների նախաձեռնությամբ 1968-ից սկսած ամբողջ Թուրքիան պատվեց հիտլերյուգենդի նման «կոմանդոսներով», որոնք Թյուրքեշին հռչակեցին իրենց ֆյուրեր (բաշբուկ)։ Այդ կոմանդոսները ռազմական ուսուցում էին ստա-

նում հատուկ զինվորական ճամբարներում և օգտագործվում էին դեմոկրատական ուժերի միտինգները ջախջախելու, Թուրքիայի առաջադեմ գործիչներին ծեծելու և սպանելու համար (15, էջ 108)։

Արդեն 70-ական թթ. սկզբներին Թյուրքեշի «մահվան էսկադրոնները» լավ կազմակերպված զինվորական բանդաներ էին, որոնք սպանություններ կազմակերպելու, արյուն ոթելու վարպետներ էին դարձել։ Սրանք տեռոր էին անում Գերմանիայում ու Ավստրիայում թուրք առաջադեմ բանվորների դեմ (20, 2. 6. 1981)։ Այն ժամանակ Թյուրքեշի տղաները ձախերի դեմ կռվում էին դանակներով, փայտերով ու շղթաներով, իսկ հետո զինվեցին ատրճանակներով ու նռնակներով։ Թյուրքեշի տղաները խցկվել էին պետական ապարատի՝ ոստիկանության, մինիստրությունների տարբեր օղակները, իրենց ձեռքն էին վերցրել մաքսային ծառայությունները և այդ միջոցով հեշտությամբ մեծ քանակությամբ զենք ու զինամթերք էին հայթայթում (22, 2. 11. 1981)։ Նրանք կապված էին հատկապես ամերիկյան հատուկ ծառայությունների հետ, օգտվում էին նրանց հովանավորությունից ու օգնությունից։ Խաղաղության ու դեմոկրատիայի կողմնակիցների, կոմունիստների ու քրդական ազատագրական պայքարի մարտիկների ոչնչացումը հանդիսանում էր նեոֆաշիստների առաջնահերթ խնդիրը։

Ստամբուլի բնակիչները սարսափով են հիշում 1977-ի մայիսի 1-ի առավոտը, երբ մագլցած տների կտուրներին թուրք ֆաշիստները կրակում էին ցուցարարների վրա։ Մի տարի անց «գորշ գայլերը» Ղահրամանմարաշ քաղաքում անկարգություններ սարքեցին, որոնց զոհ գնացին հարյուրից ավելի մարդ։ Հռոմի պապի վրա կրակած թուրք աջ տեռորիստ Մեհմեդ Ալի Աղջան 1979-ի աշնանը «Միլիեթ» թերթի խմբագիր Իփեկչիին (փոքր ժամանակ անց սպանված նույն Աղջայի ձեռքով) գրած սպառնալից նամակում պահանջում էր միջազգային դրության հարցերը մեկնաբանել այնպես, ինչպես ինքն էր ուզում։ Նա հորջորջում էր. «Ռուս իմպերիալիստները վախենում են, որ Թուրքիան մի նոր պետություն կկազմակերպի Միջին արևելքում եղբայրական իսլամական երկրներից»։ Այն ժամանակ արդեն նա Պապ Հովհաննես

Պողոս երկրորդին համարում էր «խաչակիրների հոգևոր առաջնորդը և պարագլուխը», որին սպանելը համարում էր իր առաջնահերթ խնդիրը (36, № 21, 1981)։

Ճանաչված հայ գրագետ բեյրութցի Գառնիկ Ադդարյանը գրեց. «23-ամյա այս թուրք ֆաշիստը քալեց Պոլսո փողոցներուն մեջ ու կանգ առավ հանկարծ, դիմացը մեծ ոճրագործն էր վերածված հուշարձանի. դահճապետ Թալեաթը կարծես թե կըժպտեր իրեն ու կըսեր՝ մի վարանիր, սրբություն չկա ու չկա մարդկայնություն, ըրե՝ ինչ ուզես, սպանե՝ ով ուզես, ես ի գործ դրի ամբողջ ազգի մը բնաջնջման ծրագիրը ու տես, հիմա հուշարձան եմ արդեն՝ թրքական պետության իսկ կողմեն կառուցված, շարունակե իմ ուղիովս ու մի վարանիր, մեր մոտ ոճիրը կըվարձատրվի ու սրբապըղծումը կընկատվի սրբագործություն...» (10, 16. 5. 1981)։

Թուրք մեկնաբաններ Ալի Բիրանդը և Տ. Էրելը հանգամանորեն բացահայտեցին Հռոմի պապի վրա կրակած տեռորիստ Մ. Աղջայի կապը Թյուրքեշի գլխավորած «Ազգայնական շարժման կուսակցության» հետ։ Նրանք Աղջային որակեցին որպես թուրքական ֆաշիստ։ Աղջան հարցաքննությունների ժամանակ չթաքցրեց, որ «Միլիեթ» թերթի խըմբագրին (Ա. Իփեկչի) սպանել էր Սովետական Միության նկատմամբ նրա նպաստավոր դիրքորոշում ունենալու համար։

Թուրք ֆաշիստների պարագլուխ Ալփասլան Թյուրքեշն աքսորվելով երկրից, փորձեց անցնել սիրիական «մուսուլման եղբայրներ» հետադիմական կազմակերպության գլուխ, պղտորել սիրիահայության անդորրը, Լիբանանի մեջ կազմակերպել հակահայկական շարժում։ Սա չէր խորշում բանսարկություններից, սպանություններից։ Բազմաթիվ ձեռագիր ու տպագիր կոչեր տարածվեցին այս երկրներում հայերի դեմ, անհիմն կերպով նրանց մեղադրելով թուրքական կրոնական անձնավորություններ սպանելու, հակաթուրքական այլ գործողությունների մեջ։ «Դինիմե Սեովդյուն» (հավատքիս հայհոյեց)՝ գրվում էր այդ կոչերում։ Նպատակը՝ մահմեդական կրոնական զգացմունքների գրգռումը հայերի դեմ։

Ինչպես գրում է սովետական արևելագետ Գ. Ստարչենկովը. «Թուրքական տեռորիզմը խոր արմատներ է գցել Այն զարգացավ սոցիալ-տնտեսական տեղաշարժերի բարդ

հիմքի վրա և ստացավ թուրքական և արտասահմանյան մի շարք հետադիմական շրջանների օժանդակությունը» (23)։

Երբ 1979-ին արհմիութենական համագումարում «Ինտերնացիոնալ» երգելու համար «Դիսկ» առաջադիմական արհմիության 13 անդամներ դատապարտվեցին հինգ և կես տարվա բանտարկության, ապա այժմ թուրքական անվտանգության ուժերն ուղղակի փողոցում գնդակահարեցին նույն արհմիության ղեկավարության անդամ, կաշեգործների արհմիության նախագահ Կ. Բաղակին (33, 26. 7. 1981)։

1981-ի առաջին վեց ամսվա ընթացքում «Կարմիր փարոս» գործողության միջոցով թուրքական անվտանգության ուժերը հայտնաբերեցին և ձերբակալեցին Թուրքիայի կոմունիստական կուսակցության ավելի քան 2 հազար անդամների (30, 23. 7. 1981)։

Ստամբուլի երրորդ ռազմական դատարանը «դատեց» «Թուրքիայի ժողովրդի ազատագրության ճակատ» կազմակերպության «Մարքս-լենինյան զինված պրոպագանդա» և «Զինված մարտիկներ» միությունների ձերբակալված անդամներին։ 139 մեղադրյալներից 56-ին տրվեց մահապատիժ, իսկ 83-ին՝ 38-ից 50 տարվա բանտարկություն։ 56 կոմունիստների մահապատժի ենթարկեցին այն բանի համար, որ նրանք պատկանելով «Թյուրքիե Հալք Գուրթուլուշ Պարդիսի» կուսակցությանը իբր փորձել էին «խախտել թուրք ժողովրդի դարավոր միասնությունը, այն բաժանել «ազգությունների» ու շրջանների և ազատագրել Թուրքիայի ժողովուրդներին» (12, 24, 2. 1981)։

Կոմունիստական կուսակցությանը պատկանելու ամբաստանությամբ բանտ նետված մի խումբ մարդկանց նկատմամբ, որոնց մեջ էր հայտնի հրապարակախոս Ս. Ջոշկունը, «Ջումհուրիեթ» թերթի խոստովանությամբ կիրառվել էին տանջանքներ։ Զինվորական կառավարիչների հրապարակած հայտարարության մեջ նույնպես խոստովանում էին, որ Թուրքիայում «հետաքննության ու հարցաքննության ընթացքում» տեղ են գտել «անթույլատրելի մեթոդներ» (22, 23. 08. 1982).

Զինվորական իշխանություններն իսկական տեռոր սանձազերծեցին Արևելյան Անատոլիայի քուրդ բնակչության դեմ։

Թերթերը գրեցին, որ ոչ պահպանողական Սուլեյման Դեմիրելի, ոչ իրեն սոցիալ-դեմոկրատ համարող Բյուլենդ Էջևիթի կառավարությունները «երբեք մատնացույց չէին անում, որ Թուրքիայի արևելքում քաղաքական ակցիաները քրդերի անլեգալ շարժման գործն էր»։ Գաղտնի ծառայությունները մշտապես զգուշացնում էին «քրդական վտանգի մասին», բայց այդ խնդիրը քաղաքական տեսակետից չափազանց նրբին էր ներկայանում, որպեսզի աղմուկ բարձրացվեր նրա շուրջը։ Չէ որ 8—10 միլիոն քրդերի նկատմամբ ասիմիլյացիայի քաղաքականությունը թուրքական շովինիստները սկզբնավորել էին շատ վաղուց։ Հետո Մուստաֆա Քեմալի ձեռքը չդողաց և նա ինքնաթիռներից ռումբեր թափեց քրդական բնակավայրերի վրա։ Իսկ այժմյան կառավարությունն արդեն բացորոշ արշավ է սկսել քրդերի դեմ։

Ինքնավարության, ազգային ինքնության մասին քրդերի հարցադրումները թուրքական զինվորականները դիմավորում են սվինների վրա, կախաղաններով, դատական պրոցեսները հաջորդում են մեկը մյուսին (Սղերդում, Դիարբեքիրում և այլ վայրերում արդեն կախաղան են բարձրացվել կամ գնդակահարվել հազարավոր քուրդ հայրենասերներ)։

Քրդերի ազգային ինքնավարությունը մերժվում է. մեկ նրանց հռչակում են «լեռնաբնակ թուրքեր», մեկ «բարբառով խոսող» թուրքեր։ Վերջին ձևակերպումը կրկնեց այսօրվա Թուրքիայի զինվորական դիկտատոր Քենան Էվրենը, շրջանցելով և պատմության, և լեզվագիտության, և էթնոգրաֆիայի գիտական հիմունքները։ Քրդերին համարելով Միջին Ասիայից եկած թուրքական ցեղերի ճյուղավորումներից մեկը, նա ոտնահարեց բոլոր տարրական ճշմարտությունները՝ ընդդեմ քրդական ինքնավարության։ Նա նույնպես ազգային հարցում իրեն պահում է թուրքավարի, թուրքիզմի տառին ու ոգուն հավատարիմ։ Կամ թուրքանալ, կամ ոչնչանալ՝ ահա սկզբունքը։ Հիրավի, երիտթուրքերի ավանդներն այսօրվա Թուրքիայում գտնվում են «հուսալի» ձեռքերում։

1931-ի մայիսի 28-ին Ամասիա քաղաքում Աթաթուրքի հուշարձանի բացման արարողության ժամանակ արտասանած ճառում Էվրենն այլ հարցերում արած անհիմն պնդումներից, պատմական եղելությունների իր ծիծաղաշարժ մեկ-

նարանութ‌յուններից հետո սպառնում էր քրդերին, լազերին, ալևիներին և այլոց, որոնք իրենց թուրք չեն համարում և «նույնիսկ կըգործակցեն հայ ահաբեկիչներու հետ» (8, 7. 6. 1981)։ Քենան Էվրենը հայտարարում է, թե «Թուրքիայի դեմ օգտագործվում են միջազգային կոմունիզմի կողմից ստեղծված (?) այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հայկական և քրդական պրոբլեմները»։

Նա յուրովի է ըմբռնում պատմության իրողությունները։ Նրա կարծիքով «Թուրքիայում ոչ որակական, ոչ քանակական տեսակետից հայկական հարց գոյություն չունի։ «Որոշ հայեր արտասահմանում վերածվել են միջազգային կոմունիզմի մարիոնետների,— բղավում է նա։— Ինչ վերաբերում է քրդական հարցին, ապա Թուրքիայում թուրքերի և քրդերի միջև սեգրեգացիա երբեք չի եղել։ Նրանցից ոմանք երբեմն դարձել են հակապետական օբյեկտ արտասահմանից կատարվող հրահրումների հետևանքով» (48, 19. 5. 1981)։

Եվրոպական պառլամենտում հանդես եկած արևմտագերմանական դեպուտատ ֆոն Խասսելը հարց հարուցեց Թուրքիայից պահանջել «կուլտուրական ինքնավարություն» շնորհել ազգային փոքրամասնություններին։ Նրա զեկուցման մեջ մի հարցն էլ վերաբերում էր թուրքական բանտերում իրադրությունն ուսումնասիրելու անհրաժեշտությանը։ (29, 7. 07. 1982)։

Հոգևորական Հրանտ Քյուչուք Կյուլեյյանին թուրքական դատարանը դատեց այն բանի համար, որ նա Թուրքիայի «արևելյան նահանգներեն» Ստամբուլ բերած է «թուրք տղայի» և «Թուլայի քեմփին մեջ անոնց ջանուցած է հայկական ազգայնապաշտություն ներարկել»։ Նրան ամբաստանում էին Մարսելից «Հայ ընտանիքներու օրացույցը», «Հայ քրիստոնեաների օրացույցը» Թուրքիա բերելու մեջ (7, 31. 10. 1981)։

Այսօր Թուրքիայում դեմոկրատներին դատում են խաղաղության շարժմանը մասնակցելու, հանուն սեփական երկրի ու ժողովրդի շահերի պայքարելու համար։ Քաղաքական ռեպրեսիաների ալիքը չի հանդարտանում։ Թուրքական իշխանությունները փորձում են ճզմել առաջադիմական ու դեմոկրատական ուժերին։ Զերբակալությունները, «քայքայիչ ու կո-

մունիստական գործունեության» վերաբերյալ մեղադրանքները չեն դադարում։ Դատում են հայտնի թուրք բանաստեղծ
Ազիզ Նեսինին ու հրապարակախոս Ա. Սիրմենին, բժիշկ
Մ. Օզթեկյին ու Ստամբուլի փաստաբանների կոլեգիայի նախագահ Օ. Ապայդինին ու շատ ուրիշների։ «Այս ամենն
առաջացնում է թուրքական ու համաշխարհային հասարակայնության օրինական անհանգստությունը» (22, 7. I. 83)։
Ակամա հիշում ես Նազիմ Հիքմեթի խոսքերը.

Բայց ինչպես չզայրանալ,
երբ հիշում ես, թե
Ինչպես է ցնցվում իմ
հարազատ հողը
Մի խումբ ոճիրների ոտքերի
տակ։

Մի թուրք քաղաքական բանտարկյալ բանտից գրում էր
իր ծնողներին. «Բանտում մենք անմարդկային չարչարանքների բերումով բղավում էինք։ Ես այնպիսի վայրագ և
սոսկալի երևույթներ եմ տեսել, որ այս օրերին կյանքն ինքը
մի չարչարանք է ինձ համար։ Այս պայմաններում մահը մի
բան չէ, որ մարդ վախենա դրանից։ Մահը դարձել է չափազանց ցանկալի և ազատարար մի երևույթ» (3, № 148,
1981)։ Թուրքական հասարակությունը «լրջորեն անհանգըստացած է այն բանից, որ վերջին ժամանակներս ռեպրեսիաները ավելի ու ավելի հաճախ են կիրառվում ազգայիններն ու դեմոկրատական ուժերի նկատմամբ, որոնք մշտապես ձըգտել են էքստրեմիստական բռնության տակտիկան» (22,
2. 9, 1981)։

1981-ի հուլիսին-օգոստոսին «Թերջուման» թերթը մի
հոդվածաշարք տպագրեց Թուրքիայի կոմունիստական կուսակցության մասին։ Բացառիկ սանձարձակ հակասովետիզմի
և հակակոմունիզմի, տիպիկ թուրքական գրպարտությունների մի հավաքածու էր դա։ Ի՞նչ տարբերություն Ջիլիի դահիճ
Պինոչետի և թուրք ֆաշիստների միջև։ Առաջինի սև գործերը հայտնի են ամբողջ աշխարհին. զանգվածային
գնդակահարություններ, բանտ, աքսոր, փտարանդիություն,
պառլամենտական ազատությունների կոխկրտում։ Թուրքական զինվորականության սև գործերն իրենց հակամարդ-

կային, հակադեմոկրատական էությամբ ամբողջապես կրկրնում են առաջինին. պառլամենտը փակվեց, քաղաքական կուսակցություններն արգելվեցին, դեռևս Մուստաֆա Քեմալի արգելած թուրքական կոմկուսն այսօր ենթարկվում է ամենադաժան հետապնդումների։ Քուրդ ժողովրդի ծաղիկ երիտասարդությունը կախում են, գնդակահարում, ոչնչացնում միայն այն բանի համար, որ նրանք գիտակցել և կռվում են սեփական հայրենիքի գաղափարի համար։ Թուրքական ֆաշիզմը ոչնչով չի տարբերվում Պինոչետի ֆաշիզմից, հրեշավոր ժողովրդասպան Պոլ Պոտից։

«Ջումհուրիեթ» թերթը փակվեց իշխանությունների կողմից (երկու օրով) միայն այն բանի համար, որ այնտեղ ինֆորմացիա էր տպագրվել Անկարայում, Ջանկըրում և Կաստամոնիում արտակարգ դրության, զինվորական իշխանությունների կիրառած պատիժների, տանջանքների մասին (45, 3. 4. 1981)։

Համաշխարհային հասարակական կարծիքը դատապարտեց Թուրքիայի հեղափոխական բանվորների արհմիությունների կոնֆեդերացիայի (Դիսկ) ղեկավարների նկատմամբ թուրքական զինվորական իշխանության դաժան հաշվեհարդարը։ «Յումանիտե» թուրքական կառավարողների գործողությունները գնահատեց որպես ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի ագրեսիվ քաղաքականության օրգանական շարունակություն (22, 28. 6. 1981)։ «Միանգամայն ակնհայտ է, որ դեմոկրատական ազատությունների ճնշումը և առաջադիմական ուժերի հետապնդումները չեն նպաստում այն ճգնաժամից դուրս գալուն, որի մեջ գտնվում է «թուրքական հասարակությունը», գրեց «Պրավդան»։ Երկիրը նախկինի նման գալարվում է ներքին մեծածավալ պրոբլեմների ճանկերում։ Դրանց շարքում գործազուրկների երեք միլիոնանոց բանակի առկայությունն է, ինֆլյացիայի բարձր մակարդակը, հակայական ազգային պարտքը, ագրարային հարցը (22, 2. 7. 1981)։

Նույնիսկ Քեմալ Աթաթուրքի 100-ամյա հոբելյանը, որ անցկացվեց 1981-ին զինվորական կառավարողների հովանու տակ, ամբողջովին նպատակամղվեց հակակոմունիզմի, հակասովետիզմի դեմ պայքարի հունը։ Ամենուրեք՝ ռադիոհաղորդումներում, թե գրքերի էջերում, պատմագիտական

կոնֆերանսներում, թե թերթերի էջերում շեշտվում էր Աթաթուրքի հակասոցիալիզմը, նրա ուրույն թուրքական վարթուրքի հակասոցիալիզմը, նրա ուրույն թուրքական վարդապետության «առավելությունները»։ Ժամանակին Քեմալ Աթաթուրքի ասած հակակոմունիստական խոսքը («Զպետք է մոռանալ, որ թուրքական աշխարհի ամենակատաղի թշնամին կոմունիզմն է» (14, էջ 105), այսօր կրկնվում է ամեն քայլափոխին, բոլոր հակասովետական հրատարակությունների էջերում։ 1981-ի մայիսի 18-ին Ստամբուլում բացվեց Աթաթուրքի 100-ամյակին նվիրված միջազգային սիմպոզիում։ Թուրքիայի ներկայացուցչուհի պրոֆ. Ս. Քելին իր ելույթում շեշտում էր թուրքական հեղափոխության «առանձնահատուկ» բնույթը, ապացուցում, որ այն տարբերվում էր ֆրանսիականից, սովետականից և չինականից։ Բնութագրելով Աթաթուրքի հայացքները, Ս. Քելին հայտարարեց, որ թուրք ազգի պարագլուխը հանդես էր գալիս «կոմունիզմի», «ֆաշիզմի», «շահագործման և էքսպանսիոնիզմի դեմ» (33, 19. 5. 1981)։ Ահավասիկ թուրքական քննական-վերլուծական սոցիոլոգիական «մտքի» մի բնորոշ օրինակ։

Զնայած Անկարայի տնօրենների ջանքերին, Մուստաֆա Քեմալի հարյուրամյակին նվիրված տոնակատարությունները Թուրքիայից դուրս «չեն արժանացած ժողովրդային ընդունելության և սահմանափակված են Թուրքիո դաշնակից պետություններու կառավարության շրջանակներուն մեջ» (8, 26. 5. 1981)։

Հակաթուրքական ցույցեր տեղի ունեցան Աթենքում, Սալոնիկում և հունական այլ կենտրոններում։ Թուրքական մամուլը սանձարձակ հարձակումներ գործեց հունական պետական գործիչների վրա, որոնք մասնակցել էին Աթենքում հայերի հակաթուրքական միտինգին։ Անկարայում Հունահայերի հակաթուրքական միտինգին։ Անկարայում Հունաստանի դեսպան Պապուլիասը հրավիրվել էր արտաքին գործերի մինիստրություն, որտեղ նրան բողոքի պաշտոնական նոտա էր հանձնվել հայերի հակաթուրքական միտինգի առթիվ։

Հունաստանում կամպանիա ծավալվեց ընդդեմ Աթաթուրքի 100-ամյակի։ ՊԱՍՈԿ-ի լիդեր Պապանդրեուն (1981-ի աշնանը հաղթանակ տարավ պառլամենտական ընտրություններում և գլխավորեց կառավարությունը) հանդես եկավ այդ

Հանդիսությունների Հունաստանի պաշտոնական մասնակ-
ցության դեմ, քանի որ Կիպրոսի տերիտորիայի 40 տոկոսն
օկուպացված է թուրքական զորքերի կողմից։ Հունական
մամուլն ընթերցող հասարակությանը հիշեցրեց մեր դա-
րի 20-ական թթ. սկզբին թուրքական բարբարոսության
փաստերը։

Թուրքիայում դեմոկրատիան ոտնահարված է։ Թուրքա-
կան հասարակությունը խոր ճգնաժամ է ապրում։ Երկրի
զինվորական տնօրեններն առայժմ տեռորիզմի դեմ պայքարի
պատրվակի տակ վերացնում են թուրքական «դեմոկրատիա-
յի» լղարիկ մնացորդները։

Ինչպիսի հասարակարգ է այդպես կատաղի պաշտպանում
թուրքական զինվորական ռեժիմը, հարց է տալիս «Յումա-
նիտեն»։ Այդ երկրում 3 միլիոն գործազուրկ կա, որը աշ-
խատունակ բնակչության 15 տոկոսն է կազմում։ Նրանում
իշխում է աղքատությունը, որը ստիպում է հարյուր հազա-
րավոր թուրք բանվորների ու գյուղացիների հեռանալու հայ-
րենիքից։ Դա մի կարգ է, որի պայմաններում ծաղկում է
խոշոր բուրժուազիան, որն ստեղծում է իր հարստությունը
շահագործման, սպեկուլյացիայի և կոռուպցիայի միջոցով։
Այդ կարգը փրկելու համար էր, որ գեներալների խումբը
Վաշինգտոնի հավանությամբ և օժանդակությամբ իշխանու-
թյունը վերցրեց իր ձեռքը։ ԱՄՆ-ը ամենաշահագրգռված
կողմն է։ Չէ որ 61 ռազմական բազա, բազմաթիվ ռադիո-
լոկացիոն և այլ կենտրոններ Թուրքիայի տերիտորիայում
ստեղծվել են ընդդեմ Սովետական Միության («Коммунист»,
2. III. 1982)։

□

Հայ ժողովրդի դեմ չարագործությունները չեն սահմա-
նափակվում միայն «պատմագիտական» կամ լրագրային
ոտնձգություններով, պրովոկացիաներով։ Այսօր թուրքական
պետականությունն ակտիվ հակահայկական քաղաքականու-
թյուն է իրականացնում ինչպես երկրի ներսում, այնպես և
միջազգային ասպարեզում։ Ինչպես երեկ, այսօր նույնպես
թուրքական պետականության հարվածներն ուղղվում են հայ

ժողովրդի դեմ բուն Թուրքիայում, նրանից դուրս Լիբանա-
նում, Սիրիայում, Իրանում և այլուր։ Տասնամյակների ըն-
թացքում թուրքական պրոպագանդան թշնամական դիրք է
բռնել Սովետական Հայաստանի նկատմամբ։

Ընդհանրապես թուրքական կառավարողները չեն ճանա-
չում ազգային փոքրամասնությունների իրավունքները։ Քըր-
դերը թե հայերը, հույները թե վրացիները, բոլոր փոքրա-
թիվ ժողովուրդները Թուրքիայում զուրկ են ամենատարրա-
կան իրավունքներից։ «1923—ին երբ, Մուստաֆա Քեմալ
վերապրող կես միլիոն հայերը հալածելով հեռացուց իրենց
տունեն ու հայրենիքեն ու մնացորդները այսօր հազիվ թե
տեղյակ են իրենց հայկական ծագումեն ու մնացած են
բոլորովին անպաշտպան» (1, 12. 11. 1981)։

Հայերը շարունակում են հեռանալ Ստամբուլից։ Ժամա-
նակի ընթացքում նոսրացավ Ստամբուլի բազմադարյա
հայոց համայնքը։ Պոլսահայությունն անցավ աշխարհի
տարբեր երկրները, չդիմանալով թուրքիզմին։ Հարուստ կուլ-
տուրական կյանքը մարեց։ Այժմ այնտեղ հայության թիվը
40 հազարից ավելի չէ։ Սրանք էլ գլխավորապես գավառա-
հայության ներկայացուցիչներն են։

Թուրքիայում հակահայկական խտրական օրենքներ են
ընդունվում։ Թուրքահպատակ ամեն ոք կարող է օտար
երկրներում ժառանգության տեր դառնալ, բայց հատուկ
օրենքը օտարահպատակ հային արգելում է Թուրքիայում ժա-
ռանգություն ստանալ։ Պատահական չէ, որ համաշխարհային
մամուլը այս «օրենքը» նշավակեց, քննարկեց որպես մարդ-
կային իրավունքներին հակասող, դատապարտելի քաղաքա-
կանություն հայոց նկատմամբ։

1975-ի փետրվարի 24-ին Կիպրոսում լույս տեսնող
«Բոզկուրտ» թերթն իր խմբագրականում զգուշացնում էր
հայերեն, որ նոր դաս կտրվի նրանց, եթե նրանք շարունա-
կեն հիշեցնել իրենց հայրերի և պապերի հետ կատարվածի
մասին։ Մի հայի, որ հաստատվել է Եվրոպայում, հարցնում
են, թե ո՞րն է արդյոք իր նոր կյանքից։ Նա արցունքն աչ-
քերին, հուզված պատասխանում է. «Ամեն ինչ թողած հեռա-
ցած եմ այդ անիծյալ երկրեն. Եվրոպայի փողոցները կավ-

լեմ... ինքզինքս կսպանեմ, սակայն չեմ վերադառնար Թուրքիա»։

Հետապնդումների, թուրքացման քաղաքականության հետևանքով մեծ թվով հայեր ստիպված էին գլուխներն ազատել արտաքնապես մուսուլմանություն ընդունելով։ Միայն վերջին տարիներս հայտնի դարձավ, թե ինչպիսի սարսափելի վիճակի մեջ են եղել տասնամյակների ընթացքում այն հայերի զավակները, որոնք փրկվել էին 1915-ի կոտորածից և ապաստանել քրդական ցեղերի մոտ։ Այս կապակցությամբ չափազանց հետաքրքրական տեղեկություններ հրապարակեց Թուրքիայի արևելյան շրջաններում ծպտյալ շրջած քահանա Հակոբ Գլըճյանը իր «Քրիստոնյա փոքրամասնություններ Թուրքիայից» հոդվածաշարքում։ Պարզվում է, որ այդ հայերի շառավիղները վերածված են եղել տնային ստրուկների։ Նրանք պարտավոր են կատարել ամեն տեսակի աշխատանք իրենց տիրոջ համար՝ ճաշ պատրաստել, կերպասները ներկել, սուրճ մատուցել, երեխաներին հսկել։ Արտաքնապես իսլամացած (նրանց կոչում են «մուսուլմանի»), նրանք պահպանում են իրենց հայկականությունը։ Վերջին տարիներս նրանց մեծամասնությունը սկսեց հեռանալ դեպի Սովետական Հայաստան, Եվրոպա, ԱՄՆ (5. 21. 6. 1980)։

Թուրքիո պատրիարք Շնորհք արք. Գալուստյանը գրեց, «թե գավառի մեջ նույնիսկ մինչև մեկ միլիոն հայեր ունենք» (9, էջ 16)։ Սրանց շարքում կան այնպիսիները, որոնք ապրում են մեկուսի և չեն խառնվել թուրքերի հետ։ Նա բերում է Խնուսի շրջանի օրինակը, որտեղ բազմաթիվ հայ ընտանիքներ երազում են վերադառնալ իրենց պապերի կրոնին։ Իսլամացած հայերից ոմանք Ստամբուլ ընկնելով անձնաթղթի վրայի «իսլամ» գրությունը «էրմենիով» են փոխարինում։ Հայոց պատրիարքը գրում է, որ այսօրվա Ստամբուլի հայության ճնշող մեծամասնությունը գավառահայերից է բաղկացած, քանի որ իսկական պոլսահայերը գաղթել են Կանադա, Ավստրալիա և այլուր։ Նա հավատում է, որ Մալաթիայում հայեր կան, որոնց վիճակը տնտեսապես բարվոք է։ Բողազիլի մոտ նույնիսկ հողատեր հայեր կան։ Սրանք մնացել են, որովհետև ժամանակին կառավարու-

թյունը պարտադրել է իրացնել տեղի հողերը և քանհինգ տարի տեղից չշարժվելու և լավ արդյունքի հասնելու շնորհիվ դարձել են ունևորներ։ Խարբերդից ոչ հեռու՝ Էլազիկ վայրում հայերը եկեղեցի ունեն։ Տիգրանակերտում, Սասնա լեռներում պահպանվել են որոշ հայկական գյուղեր։ Այդ վայրերում իհարկե դպրոցներ չկան։ Օսմանյան կայսրության ժամանակների 2000 եկեղեցուց պահպանվել են միայն վեցը (Կեսարիո սուրբ Գրիգոր եկեղեցին, Տիգրանակերտի սուրբ Կիրակոսը, Դերիկի եկեղեցին, Ալեքսանդրիայի եկեղեցին, Մուսա դաղի շրջակա գյուղի եկեղեցին, Վագըֆ հայկական և Քըբք խան եկեղեցին)։ Ահա արևմտահայության ոչնչացման քաղաքականության ցցուն հետևանքներից մեկը։ Իսկ դպրոցների մասին կարելի է ասել, որ բացի Ստամբուլի աղքատիկ ու խեղճ վիճակի հասցված (հայ վարժարաններին պարտադրել են քաղաքացիական դաստիարակություն, թուրքերի ազգային պատմություն, աշխարհագրություն և անշուշտ թուրքերեն լեզու առարկաներն ուսուցանել թուրքերենով) դպրոցական հաստատություններից, այլև ոչ մի տեղ դարավոր հայկական կրթական կենտրոններից հետք անգամ չի թողնվել։ Սա հենց թուրքիզմի ավերիչ հետևանքներից ամենացայտունն է։ Երիտթուրքերի կատարած բարբարոսությունն ավարտեցին քեմալականներն ու նրանց այսօրվա հետնորդները։ Այս տեսակետից առավել «այլամերժ և անհանդուրժող քաղաքականություն էր որդեգրել» հայերի նկատմամբ Իսմեթ Ինենյուն՝ Աթաթուրքի մահից հետո Թուրքիայի պրեզիդենտը։ Նա Թալեաթի փեսան էր՝ նրա հարազատ քրոջ ամուսինը (9, էջ 17)։

Այժմ ստամբուլահայությունը դրված է ամենածանր ստրկական վիճակում։ Թուրքական իշխանությունները բանտերն են նետել Ստամբուլի հայկական համայնքի քիչ թե շատ ակտիվ դեմքերին։ Ոմանց կասկածում են ահաբեկչական գործերին մասնակցելու մեջ։ Ոմանց մեղադրում են այն բանում, որ նրանք հայ մանուկներին ներքին գավառներից Ստամբուլ են բերել և հայերեն սովորեցնելու ձեռնարկել։ Մի հայ քահանայի էլ բանտ են նետել այն բանի համար, որ իբր նա իր շանը «Աթաթուրք» է կանչել։

Թուրքական մամուլն այժմ լի է հակահայկական հար-
ձակումներով։ Ամեն ինչ գրված է մերկապարանոց, ռասիս-
տական թուրքիզմի հիմքի վրա։ Հայ է՝ վատ է, հայկական
է՝ վատ է։ Ահա թուրքական մոտեցման գլխավոր մեթոդը։
1981-ի սկզբին «Թերջյուման» թերթը հայհոյում էր ամերի-
կահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանին, որը «Միդլ
իստերն ստադիզ» ամսագրում քննադատել էր Սթենֆորդ
Շոուի և նրա թրքուհի կնոջ թրքանպաստ, կեղծիքներով լի
գիրքը։ Նույն թերթը վատաբանում էր Լոս-Անջելեսի քաղա-
քապետ նեգր Թոմ Բրեդլիին, որն իբր հովանավորում էր
հայ ահաբեկիչներին. ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի
անդամներ Փաշայանին, Դանիելսոնին, որոնք բազմիցս
հանդես են եկել 1915-ի գենոցիդի դատապարտմամբ։
«Թերջյումանը» մեղադրանքներ էր կարդում Կալիֆոռնիայի
գլխավոր դատախազ Ջորջ Դեոքմեջյանի (այժմ նահանգա-
պետ) հասցեին այն բանի համար, որ նա անտարբեր է հայ
տեռորիստների նկատմամբ (12, 2. 1. 1981)։

«Թերջյուման» թերթը կատաղած էր, որ Մարսել քաղաքի
թաղապետական խորհուրդը հայոց մեծամասնություն կազ-
մող Պոմանի շրջանի մեջ փողոցներից մեկը կոչեց «Ապրիլ
1915—Հայկական ցեղասպանության պողոտա»։ Թուրք ժուռ-
նալիստները հայհոյեցին Մարսելի քաղաքապետ Գաստոն
Դեֆերին (այժմ նաև ներքին գործերի մինիստր)։ «Հա-
յերը մեզ համբերությունից հանում են»։ Այս առիթով
Գ. Ագդարյանը (8, 30. 8. 1980) պատասխանեց. «Այլ խոս-
քով՝ համբերությամբ թուրքական բաժակը հորդելու վրա է...
Իսկ մեր բաժա՞կը։ Մեր բաժակը փշրված է... փշուրները
տարածված են աշխարհով մեկ, դարձած սփյուռք... Անոր
փշուրները պապենական սեղանին վրա ի մի հավաքելու
կամքն է ու երազը միայն... Երազը, որ օր մը, ուշ թե կա-
նուխ, պիտի մարմին առնի, թեկուզ հորդեցնելով ձեր բա-
ժակը...»։

«Հուրիեթը» (8. 8. 1980) Օքթայ Էքշիի «Արժանի ենք»
հոդվածում հայտարարում էր, թե իբր Թուրքիային մեղադրում
են ամեն ինչում, որովհետև թուրքերն անտարբերության
մատնված մատը մատին չեն խփում ամբաստանությունները
մերժելու համար։ «Արժանի ենք, ոչ թե 1915-ին մեռած հա-

յերի պատճառով, որովհետև մենք այդ դեպքերի հաշվեցու-
ցակը վճարել ենք օսմանյան կայսրության տապալումով,
անկախության պատերազմը շահելով և միլիոնավոր նահա-
տակներ տալով։ Մենք արժանի ենք, որովհետև մինչև այս-
օր Անկարայի կամ Ստամբուլի հրապարակներից մեկի վրա
չկարողացանք մի հուշարձան բարձրացնել, ցույց տալու հա-
մար այն վայրագությունները, որ ֆրանսիացիները կատարել
են Արևելքում կամ Աֆրիկայում» (12, 13. 8. 1980)։ Թուր-
քական «Բարիշ» թերթը (8. 8. 1980) կառավարությունից պա-
հանջում էր վճռական քայլերի դիմել չեզոքացնելու համար
արտասահմանյան այն հրապարակումների էֆեկտը, որոնք
հարվածում են Թուրքիայի հեղինակությանը։ Թուրք դիվա-
նագետների սպանությունից հետո պատմական թղթերի հրա-
պարակումը, ըստ թերթի, ամենազգայուն հարվածն է պե-
տության միջազգային հեղինակությանը։

«Հուրիեթ» թերթը (1980-ի օգոստոսի 11-ին) արտատպել
էր հունական մի թերթում Սպիրոս Փայաթաքիսի հոդվածը
հայոց ցեղասպանության, նրա կազմակերպիչների, վրիժա-
ռու Թեհլերյանի մասին։ «Թալեաթը նախահիտլերյան շրջանի
ամենավայրագ այս ցեղասպանության գլխավոր պատաս-
խանատուն էր,— գրում էր հույն հեղինակը։— Թալեաթ և
Էնվեր փաշա անունով երկու թուրքեր համաշխարհային
Ա. պատերազմին մեկուկես միլիոն հայ ոչնչացրին»։

1980-ի հոկտեմբերի 21-ին «Հուրիեթ» թերթը գրում էր,
որ Արևմուտքն է հրահրել հայ-թուրք արյունալի կռիվը
XX դարի սկզբին։ «Արևմուտքի մատը մի՞թե չկար այս արյու-
նոտ խաղին մեջ։ Հիմա, ինչո՞ւ նորեն Արևմուտքին մեջ հարու-
թյուն կառնե այս խաղը։ Ինչո՞ւ ընկերվարական երկրներու
թուրք դիվանագետներուն դեմ հարձակում չի գործվիր։ Խոր-
հրդային Միության մեջ հայկական հանրապետության մը
գոյությամբ հանդերձ, ինչո՞ւ հանդարտություն կը տիրե» (11,
24. 10. 1980)։ Թուրք պոլիտիկոսներին դուր չի գալիս, որ
Սովետական Միությունում, Սովետական Հայաստանում հան-
դարտություն է տիրում, որ այնտեղ տեռորիստական գործու-
նեության համար հիմքեր չկան։

Անկարայի թերթերից մեկը մեղադրում էր Թուրքիո
«վարիչներին», որոնք տարիներ ի վեր անհրաժեշտ կարևո-

րություն չեն տար հայկական հարցին և անոր դեմ ժամանակակից միջոցառումներու չեն դիմեր»։ «Ինչո՞ւ ջայլամներու նման ձեր գլուխներն ավազի մեջ թաղեցիք և հարցը անգոյ նկատեցիք...»,— այսպես էր դիմում նրանց թերթը։ «Ինչո՞ւ թե աշխարհի հանրային կարծիքին, և թե հայ հանրային կարծիքին չբացատրեցիք թե Թուրքիա ո՞ր աստիճան պատասխանատու կրնա բռնվիլ Ա. աշխարհամարտի շրջանին պատահածներեն»,— գրում էր թերթը (14, 26. 2. 1981)։

Հակահայկական մարզանքների մեջ առանձնապես աչքի է ընկնում «Թերջյուման» թերթի ոչ անհայտ տեսաբան Ահմեդ Գաբակլը։ Սա սպառնալիքներ է կարդում հայերի գլխին, պահանջում է հրաժարվել ապրիլի 24-ի ավանդական ոգեկոչումներից։ 1981-ի գարնանը նրա տպագրած հոդվածաշարն ամբողջապես հակահայկական բնույթ էր կրում։ Գաբակլը պահանջում էր, որ 1981-ի ապրիլի 24-ը լինի վերջինը, որ հայերը հրաժարվեն Էրզրումն ու Արարատ լեռը, Վանն ու Կարսը, Մուշը, Բիթլիսը և Տրապիզոնը վերստանալու մտքից, որ հարուստ հայերն իրենց զավակներին արգելեն մասնակցել հակաթուրքական գործողություններին, որ «դըժվար խնդիր է արյուն պահանջելը», որ «կախաղանն ինքը կկախվի» և այլն։ Նա պահանջում է, որ արտասահմանի հայությունը հատուկ հայտարարությամբ հրաժարվի իր հողային պահանջներից (37, 7. V. 1981)։

Աթենքում տեղի ունեցած հակաթուրքական ցույցի առիթով Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թուրքմենը Հռոմում ժուռնալիստներին հայտարարեց, թե Հունաստանի արտաքին գործերի մինիստր Միցոտակիսն իրեն հավատացրել է, որ իր երկրում հակաթուրքական գործունեություն չի թույլատրվելու։ Հույն մինիստրը տվեց հետևյալ պատասխանը. «Այս տարվա հայերի ցույցը չի տարբերվել նախորդ տարիների նման միջոցառումներից։ Մեր սահմանադրությունը և մեր օրենքները իրավունք են ընձեռում հույն քաղաքացիներին ազատորեն արտահայտելու իրենց հայացքները։ Նման ցույցեր տեղի են ունեցել բոլոր արևմտյան երկրներում։ Մեր կառավարությունը նրանցում մասնակցություն չի ունեցել և որևէ հայտարարություն չի արել։ Դա լոկ այն խմբերի գործն է, որոնք դրանում շահագրգռված են» (26, 5. 3. 1981)։

Անկարայի հեռուստատեսությունը, ռադիոն մշտապես հակահայկական հաղորդումներ են կազմակերպում։ Նրանք հայերի դեմ սանձարձակ պրոպագանդա են մղում նաև պարսկերեն, գրգռում Իրանի հոգևոր առաջնորդներին հայ համայնքի դեմ (3, 17. 5. 1981)։

Երեսպաշտության ռեկորդ սահմանեցին թուրքական իշխանությունները, երբ 1981-ի հուլիսին աղմուկ աղաղակով նշեցին Թուրքիայում գրաքննության «վերացման» 73-րդ տարեդարձը («Հյուրիեթ», 27. 7. 1981)։ Մարդասպան երիտթուրքերին է վերագրվում Թուրքիայում մամուլին ազատություն շնորհելու պատիվը։ Այդ «ազատության» պայմաններում էր թուրքական մամուլը կեղծում և հասարակական կարծիքից թաքցնում եղելությունները։ Այդ «ազատությունն էր», որ արգելում էր հայերին թերթ ունենալ Վանում, Էրզրումում, թե Արևմտյան Հայաստանի որևէ այլ հայաշատ վայրում։ Այդ «ազատության» շնորհիվ այսօր թուրքական ընթերցողը, հեռուստադիտողը, ռադիո ունկնդրողը միայն ստահոդ բաներ է կարդում ու լսում սովետական իրականության մասին։

Վերջերս թուրքական մամուլը շատ է գրում թուրք-աֆղանական համերաշխության, աֆղան բանդիտ-փախստականներին Թուրքիայի հյուսիսարևելյան նահանգներ փոխադրելու և նրանց այնտեղ բնակություն հաստատելու իրավունք ընձեռելու մասին։ Թուրքական կառավարության նախկին փոխնախագահ Տ. Օզալն այդ նպատակով այցելեց Պակիստան, հանդիպեց աֆղան թուրքախոս իր արյունակիցների հետ, արեց հակասովետական հայտարարություններ։ Այժմ արդեն թուրքական թերթերը գրում են Էրզրումի նահանգում վեց հազար աֆղան վերաբնակիչներ ընդունելու և նրանց մշտական բնակության իրավունք շնորհելու մասին։

Արևմտահայության բեկորները ցաքուցրիվ լինելով աշխարհի տարբեր մասերում, զրկվել են սեփական հողի վրա ապրելու իրավունքից, իսկ նրանց հայրենի վայրերը այսօր տրամադրում են սեփական կառավարության դեմ խռովություն բարձրացրած, հետամնաց, մոլեռանդ ու խավարամոլ մարդկանց խմբերին։ Սա հրեշավոր ու հակամարդկային միջոցառում է, որ իրականացնում են այսօրվա Թուրքիայի

գինվորական վարիչները՝ ոտնահարելով միջազգային իրավունքի տարրական կանոնները։ Ամբողջ աշխարհը գիտի թուրքական պետականության հետ հայոց կոնֆլիկտի էության մասին, գիտի, որ սփյուռքահայությունը պայքարում է իր ոտնահարված իրավունքները ետ նվաճելու համար։ Իսկ թուրքական կառավարությունը փորձում է անտեսել արդարությունը, ձեռնոց է նետում հայությանը, միջազգային հասարակական կարծիքին, փորձելով անտեսել, ոտնահարել հայրենիք ունենալու նրա սուրբ իրավունքը։ Այսօրվա թուրք վարիչները կրկնում են իրենց նախորդներին՝ սուլթաններին, երիտթուրքերին, քեմալականներին։ Նրանք ձգտում են հայ ժողովրդին զրկել իր կորուստները վերականգնելու, հայրենիք վերադառնալու հնարավորությունից։

Թուրքական պետականությունը կոպիտ կերպով խախտում է փոքրամասնությունների իրավունքների մասին Լոզանի պայմանագրի դրույթները, որոնց տակ դրված են Թուրքիայի ներկայացուցիչների ստորագրությունները։

Ամեն մի ժողովուրդ իրավունք ունի ապրելու իր պապերի հողերի վրա։

Առավել բանական թուրքերը հավանաբար բնազդորեն զգում են, որ ուրիշի հողի վրա հաստատվելն այնքան էլ անվրտանգ բան չէ և տասնյակ տարիների ընթացքում թուրքերը խուսափում են երկրի հյուսիսարևելյան մասերում հաստատվելուց, չեն ենթարկվում կառավարության հորդորներին։ Հայաստանի տարածքը շարունակում է մնալ թուրքական պետության իշխանության տակ գտնվող երկրների ամենանոսր բնակեցված երկրամասը։ Սփյուռքահայը զրկված է իր հայրենի վայրերը վերադառնալու իրավունքից։ Միայն նախկին Ռուսահայաստանի մի փոքր տարածքի՝ մոտ 30 հազար կմ²-ի վրա հաջողվեց ստեղծել հայոց նոր հայրենիքը։ Արևմտյան Հայաստանը, Կարսի մարզը, Իգդիրն ու Սուրմալուն, հայոց սուրբ լեռը՝ Արարատը մնացին թուրքերի տիրապետության տակ։

Ժամանակները փոխվել են։ Այսօր հայկական Սփյուռքում այլ աչքերով, այլ չափանիշներով են մոտենում չլուծված խնդիրներին։ Այնտեղ կորսված հողերը, հայրենիքը վերատանալու գաղափարը համարվում է գործնական խնդիր։

Վերադարձ դեպի Արարատյան երկիրը՝ այսօր դարձել է շատերի կարգախոսը։ Թուրքիան պետք է հարգի միջազգային իրավունքը, իր իսկ ստանձնած պարտավորությունները, հայերին չարգելակի վերադառնալու և ապրելու իրենց պապենական հողերի վրա, իրենց սեփական տանը։

Յուրաքանչյուր ազգության իրավունքն է մնալ իր պապենական հողերի վրա, ընդդիմանալ բռնագաղթին, պայքարել իր կորցրած հողերը ետ ստանալու համար։ Պլատոնական հայրենիքի գաղափարով ազգությունը հեռու չի գնում։ Նա չորանում է, ամլանում։ Միայն հայրենի, սեփական հողի վրա կարող է ազգը ծլարձակել, համարձակ ու արդյունավետ ապրել ու շնչել հանուն առաջադիմության, հանուն մարդկային զարգացման։

Դեպի Սովետական Հայաստան հայերի վերադարձի, հայրենադարձության խնդիրը արդեն 60 տարի է շարունակվում է։ Հայ մարդը Սովետական Հայաստանում գտել է խաղաղ և ստեղծագործ կյանքով ապրելու անհրաժեշտ պայմաններ։ Նրա ապահովությունը երաշխավորված է Սովետական Միության հզորությամբ, ժողովուրդների եղբայրական համագործակցությամբ։

Հայը սկզբում փնտրում էր, գտնում ապահով անկյուն իր համար։ Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքներից մազապուրծ, թուրքական մահաբեր հարվածներից ազատված հայ մարդկանց սովալլուկ խմբերը անցան Ռուսաստան, Անդրկովկաս, հետո մաս կազմեցին Սովետական Հայաստանի բնակչությանը, մասնակցեցին նրա սոցիալիստական վերածննդի իրականացմանը։ Թուրքական զանգվածային տեռորի մյուս զոհերը անցան Միջագետքի, Սիրիայի անապատներով, շնորհիվ արաբ ժողովրդի ասպնջականության հյուրընկալվեցին Լիբանանում ու Սիրիայում, Իրաքում ու Եգիպտոսում, փրկվեցին, գոյատևեցին ֆիզիկապես։

... Անցել են տասնամյակներ այն դժվարին օրերից։ Փոխվել են ժամանակները, փոխվել են սերունդները, փոխվել է նրանց հոգեբանությունը։ Այժմ նրանք այլ աչքերով են նայում կատարվածին, սփյուռքի որոշ հայկական կուսակցությունների երբեմն ոչ նպատակաչափ, ժա-

մանակավրեպ քաղաքականությանն ու գործելակերպին։ Նրանք տեսնում են նոր մեթոդներ, չափանիշներ կիրառելու անհրաժեշտությունը։ Այժմ ժամանակն է թուրքական պետականությանը հիշեցնելու, որ պարտավոր է վճարել իր պարտքը, փոխհատուցել հայ ժողովրդի կորուստները։ Այդ ինչպես է պատահել, որ հայերը պարտաճանաչ, ընդունելի քաղաքացիներ են ամենուրեք՝ Ավստրալիայում թե Արգենտինայում, ԱՄՆ-ում թե Ֆրանսիայում, Լիբանանում թե Սիրիայում, շինարար են, ստեղծագործ, իսկ իրենց հայրենիքում՝ Արևմըտյան Հայաստանում, թուրքական իշխանության տակ գտնվող իրենց հայրենի հողի վրա ապրելու իրավունք չունեն։ Սա կատարվել է լոկ թուրքական պետականության հակահայկական շովինիստական քաղաքականության հետևվանքով։

Այս խնդիրը նոր չէ։ Այն լավ հայտնի է Արևմուտքի դիվանագետներին։ 1920-ի օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի տապալումից հետո, որով հայոց պետությունը իր մեջ պետք է ներառներ նաև Արևմտյան Հայաստանը, այն բազմակողմանիորեն քննարկվեց 1922—1923 թթ. Լոզանի կոնֆերանսում (10), շատ տեղին հարց էր դրվում, թե «այդ ո՞ր իրավունքի զորությամբ որևէ ազգ կարող է ընդմիշտ արտաքսել հարյուր հազարավոր սեփական հպատակներին»։ Այստեղ նշվում էր, որ «միջազգային իրավունքի էական կանոններից մեկը պահանջում է, որ այդպիսի գաղթականները, եթե նրանք չեն կատարել ոչ մի հանցանք, ստանան իրենց տները վերադառնալու իրավունք»։ Արդեն այն ժամանակ Իսմեթ փաշան հանդես էր գալիս օսմանյան կայսրության, սուլթանների կատարած բոլոր չարագործությունների փաստաբանի դերում, արդարացնում նրանց գործողություններն ընդդեմ «հեղափոխական» և «խռովարար» հայերի։ Լոզանի կոնֆերանսի ռազմատերիտորիալ հանձնաժողովի տասնչորսերորդ նիստում (1922-ի դեկտեմբերի 13-ին) Իսմեթ Ինենյուն հայտարարում էր. «Ինչ վերաբերում է ներկայումս Թուրքիայում գտնվող հայերին, նրանց ոչինչ չի խանգարում իրենց հայրենակից թուրքերի հետ լիակատար փոխըմբռնումով շարունակելու ապրել աշխատանքային ու բարե-

կեցիկ կյանքով, ինչպես դա եղել է առաջներում, մինչև պատերազմը»։

Այս կապակցությամբ լորդ Քերզոնը ծաղրում էր Իսմեթ փաշային, ասելով. «Եթե երկու ժողովուրդների միջև գոյություն են ունեցել երջանիկ հարաբերություններ, ապա ի՞նչպես պատահեց, որ Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիվը նվազելով հասել է 130 հազարի»։ Այնուհետև նա ասում էր. «Ինչո՞ւ տեղահանության պատճառով այժմ հարյուր հազարավոր հայեր ցրված են բոլոր աշխարհամասերում, այն ժամանակ, երբ նրանք պետք է հետևեին Թուրքական կառավարության սիրալիր հրավերներին։ Վերջապես, ի՞նչու է հայկական հարցը հանդիսանում աշխարհի ամենամեծ խայտառակություններից մեկը»։ Հանրապետական Թուրքիայում թուրքերի բացառիկությունն ապահովելու, մյուս ազգություններին ճնշելու պրակտիկան հայտնի է բոլորին։ Հայերը շարունակեցին հեռանալ Ստամբուլից, Եղմիրից և այլ վայրերից։ «Հայրենակից թուրքերի հետ» «եղբայրաբար ապրելու», «Թուրքիայում մնալ ցանկացող» հայերին այդպես էլ ապրելու, ճնշելու պայմաններ չտվեցին։ Լոզանի կոնֆերանսում թեև Իսմեթ փաշան փորձում էր խեղաթյուրել հայկական հարցի իմաստը, նրա պատմությունը մեկնաբանում էր միանգամայն հակապատմական, հակագիտական դիրքերից, այնուամենայնիվ ստիպված էր խոստովանել, որ «Փոքր Ասիայի արևելյան մարզերում» հայ ժողովուրդը «միշտ էլ եղել է խիստ մեծաթիվ»։

Այն ժամանակ որոշակի տրամադրություն կար «հայերին խրախուսել, որպեսզի նրանք վերադառնային Անատոլիա և նորից հաստատվեին այնտեղ»։

Լոզանի կոնֆերանսի մասնակից արևմտաեվրոպական տերությունների ներկայացուցիչները նշում էին, որ «Երևանյան հանրապետության» տերիտորիան աղքատ է և գերբնակեցված, ուստի հանդես էին գալիս առաջարկությամբ, որպեսզի Թուրքիան «իր ասիական տերիտորիայի որևէ մասում, հյուսիսարևելյան նահանգներում, կամ Կիլիկիայի ու Սիրիայի հարավարևելյան սահմանագծի վրա հայերի համար գտնի նրանց ցանկացած համախմբման կենտրոնը»։ Նրանք գտնում էին, որ «հայերը արժանի են հատուկ ուշա-

գրությամբ՝ աչքի առաջ ունենալով ոչ միայն սերունդների կյանքի ընթացքում նրանց կրած դաժան տառապանքները, որոնք հարուցել են քաղաքակիրթ աշխարհի համակրանքն ու զարհուրանքը, այլև նկատի ունենալով ապագայի վերաբերյալ նրանց տրված հատուկ հավաստիացումները»։ Լոզանի կոնֆերանսում թուրքական պատվիրակությունն ինքն էր խոստովանում, որ «Թուրքիայի ծաղկման համար Թուրքիան ունի հայերի խելքի, առևտրական ընդունակությունների և ձեռներեցության կարիքը»։ Սակայն, երբ նրան 1923-ի հունվարի 7-ին առաջարկվեց որպեսզի «Ազգերի լիգայի գիտությամբ և բուն թուրքական կառավարության ընտրությամբ թուրքական տերիտորիայի որևէ տեղում հայերին (ինչպես դեռևս Թուրքիայում ապրող, նույնպես և արտասահմանում սփռված հայերին) տրվեր կենտրոնանալու և համախմբվելու հնարավորություն», թուրքական պատվիրակությունը պատասխանեց «կտրուկ ու բացարձակ մերժումով»։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ թուրքերն զգացին համաշխարհային հասարակական կարծիքի ուժը, երբ Անտանտայի երկրների ներկայացուցիչները հայասպան երիտթուրքերից հաշիվ պահանջելու խնդիր հարուցեցին, նրանք փորձում էին ապացուցել «թուրք ազգի անմեղությունը»։ Բայց երբ նրանք նկատեցին, որ Արևմուտքը խճճված է հակասությունների մեջ, որ կատարված ոճրագործությունը հետևողականապես չի դատապարտվում, մեղավորները չեն պատժվում, թուրքերն սկսեցին ամենուրեք սել. «Մենք ավելի քան մեկ միլիոն հայ ենք կոտորել և Եվրոպան ոչինչ չի անում մեզ պատժելու համար և հենց որ մի նոր առիթը ունենաք, մենք վերջ կտանք մնացյալ հայերին և երկիրը մեզ կմնա» (31, էջ 11)։ Ուրեմն դեռևս 1919-ին կային մարդիկ, որոնք ճշտորեն կռահում էին թուրքական պետական մեքենայի շարժումների հետագա ուղղությունը։

Այժմ ժամանակն է թուրքական իշխանություններին հիշեցնել այդ մասին։ Նրանցից պահանջել հարգել հայերի մարդկային, տարրական իրավունքները, նրանց իրավունք տալ ապրելու իրենց պապենական հողերի վրա։ Աֆղանըստանից Պակիստան անցած թուրքալեզու խոովարար-փախըս-

տականներին Արևմտյան Հայաստան տեղափոխելը, նրանց
էրզրումի վիլայեթում տեղավորելը հակահումանիստական
գործողություն է, որի համար համաշխարհային հասարակա-
կան կարծիքը պետք է դատապարտի նրա հեղինակներին։
Նրանց պետք է դատապարտել այն բանի համար, որ հետա-
պնդում են սեփական ազգությունը, ինքնությունը հարգող
ժողովրդին, ոչնչացնում քուրդ առաջադեմ երիտասարդներին։
Թուրքական կառավարիչներին պետք է դատապարտել, քանի
որ նրանք հայ հոգևորականներին բանտ են նետում, դատա-
կան պրոցեսներ սարքում հայ մանուկներին հայերեն սովո-
րեցնելու, հայ դաստիարակելու ամբաստանությամբ։ Նրանց
պետք է դատապարտել, որովհետև թուրքական իշխանու-
թյունները կեղծում են արևմտահայության պատմությունը,
կեղծագրեր տարածում, չքմեղացնում իրենց մարդասպան,
տեռորիստ նախորդներին։ Թուրքական կեղծարարները փոր-
ձում են ապացուցել, թե Անին հայկական չէ, այլ «խեթա-
կան», Վանը հայկական չէ, այլ «ուրարտական»։ Նրանք
փոխում են տեղանունները, քանդում հայոց եկեղեցիները,
նենգափոխում պատմական իսկությունը։ Թուրքական իշ-
խանությունները անմիջապես ձերբակալեցին «Բյուրո տեխ-
նիկ» ֆիրմայի տիրոջը (ոմն Ն. Բոլուկի) այն բանի համար,
որ նա շինարարական տեղեկատուի մեջ տեղադրել է Թուր-
քիայի քարտեզը, որի վրա Արևելյան Անատոլիայում ցույց
էին տրված Հայաստան և Քուրդիստան երկրները։ Անկարա-
յի գինվորական դատախազությունն անմիջապես դատական
գործ հարուցեց այդ ճշմարտության դեմ։ Իսկ երբ անգլիա-
ցի հայագետ և կովկասագետ Դ. Մարշալ Լանգը հրապարա-
կեց իր գիրքը (32), որտեղ հարուստ փաստերի հիման վրա
պատմում էր հայոց ցեղասպանության պատկերները, թուրք հեղի-
նակները թշնամական հարձակումների հեղեղ կազմակեր-
պեցին նրա դեմ։ Լոս-Անջելեսի «Ասպարեզը» (26. 12. 81)
հրապարակեց կիպրոսցի թուրք պատմաբան դոկտոր Ս. Ռ.
Սոնիելի նամակը, ուղղված Մարշալ Լանգի գրքի դեմ։ Սո-
նիելը փորձում է ժխտել պատմական փաստերը, օսմանյան
կայսրության հայ բնակչության թիվը իջեցնում է 1,3 միլիո-
նի, պնդում է, թե ցեղասպանություն չի եղել, Լանգին մեղադրում է
տենդենցիոզության մեջ։ Թուրք լրագրող Ահմեդ Քապաքլը

էլ «Նանք» շաբաթաթերթում չարանում է, որ «մոլեռանդ հայեր ներողություն խնդրելե զատ հողային պահանջ այլ կներկայացնին» (11, 27—28. 2. 1982)։ Թուրքիայի վարչապետ Ուլուսուն նույն բանն է երգում. «Հայկական պնդումները իրականության մեջ պարզապես պատմական դեպքերը կխեղաթյուրեն» (12, 5. 3. 1982)։

Թուրքիայում ամեն 1000 երեխայից հարյուր հիսունը մեռնում են կիսաքաղց գոյության հետևանքով։ Թուրք բանվորների 40 տոկոսն անգրագետ է։ Բայց թուրքական մամուլը թուրքական իրականության գովքն է անում։ Ավելի զգուշավորները շրջահայաց են հայոց հարցում։ «Երբ կչանանք անտեսել հարց մը, որուն մասին ամբողջ աշխարհ կխոսի արդեն, ինքնադատապարտության երևույթ մը ստեղծելե զատ ոչ մեկ իմաստ ունի»,— «Միլլիեթ» թերթում գրել է ոչ անհայտ հրապարակախոս Մեհմեդ Ալի Բիրանդը (12, 27. 2. 1982)։ Սա առաջարկում է չընդդիմանալ հայերին «հայանպաստ հաղորդումներ» կազմակերպելու «օտար հեռատեսիլի, ձայնասփյուռի կամ մամուլի մեջ», քանի որ այլապես «այն համոզումը կստեղծվի, որ իրոք թե Թուրքիա կչանա իրականությունը սքողել»։ Նույն ձևով նա պահանջում է արգելք չհարուցել, երբ օտար երկրներում հայերը հուշարձաններ են կառուցում։ Սա էլ մի ուրիշ տակտիկա է, նույնպես թուրքական։ Թուրքական չարագործ ձեռքը գործում է ամենուրեք։ «Միլլիեթի» մի այլ աշխատակից, քաղաքական գիտությունների դոկտոր Մումթազ Սոյսալն էլ Ասիայի երկրների ներկայացուցիչների մի ժողովում, որ տեղի ունեցավ 1982-ի հուլիսին Երևանում, փորձում էր հանդես գալ թուրքական պետականության «անմեղսունակության» փաստաբանի, հայոց տեռորիստական գործունեության դատապարտողի դերում։ Երբ նրան տրվեց պատմաքաղաքական հիմնավոր հակահարված, ժողովի մասնակիցները ծափահարեցին։ Իսկ Սոյսալը, համենայն դեպս, առերես զղջաց, հանդիպելով համոզիչ փաստարկների ճշմարտության օգտին Ասիայի երկրների ներկայացուցիչների բուռն արձագանքին։

Ամենուրեք հայ ժողովրդի զավակները պետք է փաստերի իմացության, մեր ժողովրդի խնդրի արդարության գիտակցության ըմբռնումով ակտիվորեն հանդես գան հայրենիքի՝

Սովետական մեծ Միության շահերի պաշտպանությամբ։ Սովետական Հայաստանը սիրելուն, պաշտելուն զուգընթաց ըմբռնեն, չմոռանան, հարգեն սփյուռքի շահերն ու իրավունքները։

□

Թուրքական պրոպագանդան չափազանց լկտի է հակահայկական ոտնձգություններ կազմակերպելու համար։ Նա փնտրում, գտնում է որևէ հակահայկական բան այն ուռճացնելու և հասարակությանը մատուցելու համար։

Թուրքական պրոպագանդայի սիրած մեթոդներից մեկը որքան կարելի է շատ թուրքասեր հայեր գտնել և նրանց մասին պատմել աշխարհին։

«Մարմարան» «Հայ և թուրք բարեկամության ձայն Մերձավոր արևելքից» վերնագրի տակ տպել էր ոմն Հովիվյանի նամակը՝ ուղղված Պոլսի պատրիարքարանին։ Շինծու նամակի հեղինակը գրում է, թե «հայերն ու թուրքերը բարեկամներ են, որտեղ էլ ապրեն հայերը, մայրենի լեզվի հետ հավասար գործածում են թուրքերենը, որն ապացուցում է, թե հայը թուրքի դարավոր ընկերն է ու նրանից հեռանալ չի կարող»։ Հովիվյանին «անկեղծորեն ուրախացնում է» այն փաստը, որ պոլսահայ Ավետիս Օհանյանը 250 միլիոն լիրայի արժողության իր ունեցվածքը նվիրաբերել է թուրքական կառավարությանը։ «Միջազգային դիվանագիտությունն է պատճառը, որ այսօր բաժան են ապրում հայն ու թուրքը,— եզրակացնում է նամակագիրը, շրջանցելով թուրքական պետության գործած չարագործությունները, հայ ժողովրդի բեկորների ազգային-քաղաքական հարցադրումները։

Երբեմն թուրքական մասսայական ինֆորմացիայի օրգանները վիրավորվածի դերք են բռնում, քննադատական խոսք ասում իրենց իշխանությունների հասցեին, որոնք թերանում են արձագանքել հայկական հարցի շուրջը համաշխարհային ասպարեզում տեղի ունեցող զարգացումներին։ «Թերջումանի» թղթակից Ահմեդ Գափակը «Արևմուտքը զորավիգ» վերտա-

ությամբ թղթակցության մեջ հավասարության նշան դնելով Արևմուտքի ու ՍՍՀՄ-ի միջև, նրանց մեղադրում էր հայերին պաշտպանելու մեջ։ Փափակը քննադատական խոսք է ուղղում թուրքական իշխանությունների, արտաքին գործերի մինիստրությանը, որոնք «մինչև օրս լուռ և անտարբեր են կատարվածի նկատմամբ»։ Նրան զայրացնում է այն փաստը, որ վերջերս Ցյուրիխի առևտրական կենտրոնում դասախոսություն է կարդացվել Թուրքիայի դեմ և ցուցադրվել են թուրքական տարբեր շրջանների և քաղաքների լուսանկարներ որպես Քուրդիստան և Հայաստան, իսկ Շվեյցարիայում թուրք ներկայացուցիչները բողոք չեն ներկայացրել առ այսօր։ Հեղինակը հիշատակում է մեկ այլ դեպք, երբ դարձյալ Ցյուրիխի խոշորագույն վաճառատներից մեկի ցուցափեղկում կախված է եղել Թուրքիայի քարտեզը վրան գրված՝ Հայաստան։

«Արմենիա Ռեպորտերը» հաղորդել էր, որ «Երիտասարդ թուրք մտավորականների ավանգարդ» խումբն իր վրա է վերցրել Լոս-Անջելեսի հայ առևտրականին պատկանող գործերի խանութում տեղի ունեցած պայթյունի պատասխանատվությունը։ Այս կապակցությամբ թուրքերի կողմից արված հայտարարության մեջ նշվում է, որ կազմակերպությունը պատերազմ է հայտարարել հայությանը։ «Թուրքիան ԱՄՆ-ի բարեկամն ու դաշնակիցն է,— ասվում է հայտարարության մեջ,— և այդ երկու պետությունները կողք կողքի պայքարում են կոմունիզմի դեմ»։

Փաստերը վկայում են, որ արտասահմանում հայ-թուրքական առնչությունը նոր չափեր է ընդունում, իսկ թուրքական պետականությունն ընթանում է հայոց եղեռնի փաստն անտեսելու, անարդարությունը շրջանցելու ուղիով։ Դրան զուգահեռ արտասահմանում ուժեղանում է թուրքական հակահայկական պրոպագանդան։ Թուրք «պրոֆեսորները» պատմությունը կեղծելու նոր ռեկորդներ սահմանեցին հայկական հարցին նվիրված սիմպոզիումում, որ գումարել էր Ստամբուլի համալսարանը 1981-ի մայիսին։

Այստեղ նույնպես թուրքական հասարակական-քաղաքական միտքը մշտապես սուրբ ավեց և ստախոսությանը, և ուրացումին։ «Հրաշք-դեղ մը՝ որուն գյուտը իրենք բրած ըլլալ

կըթվին, մասնավորապես հաչս համաշխարհային հանրային
կարծիքին՝ իրենք զիրենք չքմեղացնելու համար»,— գրում է
«Աշխարհ» թերթում Վ. Աբրահամյանը (4, 13. 6. 1981)։
Նա ցույց է տալիս, որ տասնամյակների ընթացքում չգտնվեցին ազնիվ թուրք հեղինակներ, որոնք ճշմարտություն ասեին
հայկական հարցի, տեղահանությունների, զանգվածային
ջարդերի մասին։ Ահավասիկ մի նմուշ այդպիսի մոտեցումից. խոսելով արևմտահայության գենոցիդի մասին թուրք
պատմաբան Նեժադ Գէօյանչը սիմպոզիումի ամբիոնից
ասաց. «Օտար պետություններու ազդեցության տակ կարգ
մը հայերու ստեղծած խռովություններու հետևանքով կողմերը
մեծ կորուստներ ունեցան» (12, 6. 5. 1981)։ Այն հանգամանքը, որ տասնամյակների ընթացքում առաջին անգամ
Թուրքիայում հնարավոր է համարվել հայոց հարցին նվիրված ֆորում գումարել, խոսել այն մասին, որ կա այդպիսի
ժողովուրդ, հարց, մշակույթ, քաղաքական խնդիր՝ ինքնին
հատկանշական է։ Այդպիսի ֆորումը կարող էր հրավիրվել
միայն համաշխարհային հասարակական կարծիքի մեջ հայոց շուրջը առկա հետաքրքրության զարգացման հետևանքով, այդ կարծիքը խճողելու, ապակողմնորոշելու միտումով։
«... Կեղծիք ու ստորություն և ուրացում կհանդիսանան հնամաշ զենքերը թուրքական քարոզչության, եթե անշուշտ սարսափի ավանդական մեթոդները շրջան մը հանդերձակալեն
կախված կմնան» (4, 13. 6. 1981)։
Պատասխանելով մի թուրք ուսանողի հարցումին, թե
ինչպիսին էր Աբդուլ Համիդ II-ի վերաբերմունքը հայոց
նկատմամբ, թուրք պրոֆեսոր Գէօյանչն ասաց, թե «Աբդուլ Համիդ մասնավոր ատելություն մը չուներ հայոց
նկատմամբ», թե «արտաքին նախարարության պաշտոն
հանձնված էր Նորատունկյանին։ Այդքան կարևոր պաշտոն
մը, երբ հայու մը կըհանձնվի, այլևս կարելի՞ է խոսել հայոց
հանդեպ ատելության մը մասին»։ Ահա ձեզ պատմագիտություն, ըստ թուրք պրոֆեսորի։ Հետո նա խոսեց Բեռլինի
կոնգրեսին հաջորդած իրադարձությունների մասին, նշելով,
որ այդ ժամանակ թուրքահայերն ունեին ռուսական կողմնորոշում, որի ապացույցն այն էր, որ ցարական բանակում
ընդգրկված էին մոտ 80 հազար հայ զինվորներ։ «Հայերի

Ռուսաստանին ի նպաստ գործունեությունը ստիպեց Թալեաթ փաշային հայերը տեղահանել ապահովության մտահոգություններով»,— ասաց պրոֆեսորն իր ելույթի վերջում։ Սակայն օսմանյան կայսրությունը չուներ համապատասխան միջոցներ, որպեսզի կարողանար տիրել իրադարձություններին։ Ղեկավարները մտադիր չէին կազմակերպել հայերի ցեղասպանություն։ Ինչևիցե, տեղահանությունը շուտով ստացավ ուրիշ բնույթ և կատարվեցին տհաճ գործողություններ։ «Տհաճ» բառը թուրք պրոֆեսորի վերաբերմունքի ամենախիստ գնահատականն էր։

Հայկական հարցի քաղաքական կողմի մասին խոսեց պրոֆ. Էսադ Ջամը (Ստամբուլի համալսարանի քաղաքական գիտությունների ամբիոնի վարիչ), որն անդրադարձավ 1915-ի դեպքերին՝ ժամանակի միջազգային հարաբերությունների և մեծ տերությունների պատասխանատվության լույսի տակ։ Նա նշեց, որ մեծ տերությունների նպատակը ոչ թե հայերին նպաստելն էր, այլ Թուրքիան թուլացնելը և մասնատելը՝ փոքրամասնությունների շահերը հոգալու պատրվակով։ Նա սիմպոզիումի ամբիոնից հայտարարում էր, թե «Հայաստանի անկախության հարցը, որ մեջտեղ էր դրված Սևրի դաշնագրով, բոլորովին ջնջվեց Գյումրիի համաձայնությամբ» (3, 17. 6. 1981)։ Քեմալականների 1920-ի աշնան հակահայկական ագրեսիվ, նվաճողական ջարդարարական պատերազմը թուրք պրոֆեսորը ներկայացնում է որպես արդարացի գործողություն, շրջանցելով նրա պատճառած ավերածությունների, մարդկային կորուստների փաստը։ «Ատենախոսը ավելի վերջ հայտնեց, թե Թուրքիո ներքին քաղաքականության մեջ հայկական հարց մը գոյություն չունի» (12, 6. 6. 1981)։ Երբ ունկնդիրներից մեկը հարց տվեց պրոֆ. Էսադ Ջամին, թե «հայերի համար կարելի՞ է ըսել, որ ասպարեզի ընտրության ազատություն ունեն»։ Հետևեց հետևյալ պատասխանը. հայերն ազատ են ասպարեզ ընտրելու մեջ, «եթե հայերը այսօր առավելապես ուղղություն առած են դեպի ճարտարվեստ և առևտուր, ատոր միակ պատճառն այն է, որ անոնք ավելի հարմարություն ունեն այս ասպարեզներուն, ավելի ձեռներեց են»։

Սիմպոզիումում թուրք պրոֆ. Նեժադը պնդում էր, թե «հայերն առհասարակ իրենց քրիստոնյա թուրքեր են նկատում» (3, 16. 6. 1981)։ Ահավասիկ այդ սիմպոզիումի գիտական մակարդակի մի ցցուն օրինակ։ Նրա մեթոդով էլ նման պրոֆեսորները քրդերին «բարբառով խոսող թուրքեր են համարում»։ Պատահական չէ, որ ծագումնաբանական խնդիրները «լուծելուց հետո» այս «պրոֆեսորը» հայտարարեց, թե հանուն «հայերի ապահովության» Թալեաթը հայերին տեղահան արեց իրենց պապենական հողերից։ Իսկ կատարված ողբերգությունը նա վերագրեց «կազմակերպության պակասին»։ Նույն ձևով էր խնդիրը բացատրել Թեհրանի հեռուստատեսությամբ ելույթ ունեցած Թուրքիայի դեսպանը (1981-ի ապրիլի 26), ամբողջ ժողովրդի ոչնչացումը բացատրելով «ապահովության» մտահոգությամբ։

Հայոց ազգային զարթոնքի իրական, պատմական ազդակները, դեմքերը մի կողմ էին թողնվում գիտակցաբար։ Գլխավոր խնդիրը նրանց համար դրսի, արտաքին խթանի մատնացույց անելն է։ Հայ ազգային կուսակցությունների գործունեությունը Արևմտյան Հայաստանում ներկայացվում է որպես ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքականության խառնակություն։ Թուրք պատմաբանները կրկնում են սուլթանի ու երիտթուրքերի ժամանակներում թուրքական պետականության հորինած ստահոդ թեզերը։

Հայ համայնքի ներկայացուցիչ Հ. Սվասլյանը իր ելույթում ցավով նշեց, որ մինչև օրս Թուրքիայում չի կատարվել նման քննարկում և նյութի որևէ հետազոտություն, ավելացնելով, որ այդպիսի հետազոտություններ կատարվել են միայն եվրոպական և ոչ թուրք գիտնականների կողմից, որոնք, իր կարծիքով, օբյեկտիվ չեն եղել։ Խոսելով ջարդերի պատճառների մասին, Սվասլյանը ընդգծեց, որ հայկական հարցը 1915-ին չէ, որ սկիզբ է առել, այլ շատ ավելի վաղ, այն ժամանակ, երբ Արևելքը բացվեց Արևմուտքի և եվրոպական տերությունների համար։ «Ինչպես էլ կոչենք 1915-ի դեպքերը «տեղափոխություն», թե «ջարդ», փաստը մնում է այն, որ երկու կողմից էլ եղան հազարավոր կորուստներ»։ «1915-ը արատ մըն է մարդկության համար»,— հայտարարեց նա։ Նրա կարծիքով այն ստվեր է գցել այսօրվա Թուրքիայի վրա և

«մենք պետք է միջոցներ գտնենք ջնջելու այն մեր մաքերից»։ Տարբեր մեկնաբաններ առանձնապես ուշադրություն դարձրին Սվասլյանի այն խոսքերի վրա, թե «հայերը այս երկրի հարազատ զավակներն են», «ուրիշ երկիրե մը եկած չեն», «այս հողերուն հարազատ ապրանքն են» և այլն։ Կոնֆերանսի մասնակից պրոֆ. Մ. Թուրաշն իր ելույթում հայտնեց, որ այսօրվա Թուրքիայի բնակչության 90 տոկոսը համարյա ոչինչ չգիտի հայկական հարցի մասին։ Նա նշեց, որ անհրաժեշտ է պատրաստել հարցի գիտական հետազոտություններ, մասնավորապես հարկավոր է պատրաստել հեղինակավոր գրքեր և այլ աշխատություններ, որոնք կարելի է տարածել ամբողջ աշխարհում։

Ամերիկացիներն ականջ դնելով թուրքական կառավարողների թախանձանքներին, նպաստում են Մերձավոր արևելքից և, մասնավորապես Լիբանանից հայերին հեռացնելուն։ Այս միջոցով հայ ժողովրդի թշնամիները փորձում են վերացնել լիբանանյան հայոց ազգային օջախը։ Սփյուռքահայության որոշ ոչ անհայտ «պարագլուխներ» էլ գիտակցաբար գործում են թուրքական և ամերիկյան իմպերիալիստների մութ խառնակչություններին ընդառաջ։

Պատվաբեր բան չէին թուրքական հանրապետության արտաքին գործերի մինիստր Գյունդյուզ Էոքչյունի, ապա վարչապետ Բյուլենդ Էջևիթի հետ «Արմինիեն ռիպորտեր» թերթի տնօրեն Էդդի Պողոսյանի հանդիպումներն ու զրույցները, որ տեղի ունեցան 1978-ի հունիսին Անկարայում։ Սփյուռքահայ մամուլի էջերում տպագրված հաղորդագրություններից, այդ զրույցների տեքստերից չի հասկացվում ոչ պարոն Էդդիի հետապնդած նպատակը, առավել քաշած հարցադրումների իմաստը, ոչ նրա քաղաքական հավատամքը։ Էջևիթի խորամանկ, խուսափողական պատասխանները վկայություններ են թուրքական պետականության ներկայացուցչի դիվանագիտական խաղերի, որ կիրառվում են ճարպկորեն հայկական հարցի առնչությամբ։ Այնուամենայնիվ որոշ քաղվածքների վկայությամբ ու մեկնաբանությամբ ցույց տանք, որ իրեն սոցիալիստ հորջորջող Էջևիթը ոչնչով չի տարբերվում ավանդական թուրքիստներից։ Մի՞թե սոցիալիստ մեկը, անկախ իր ազգային պատկանելությունից, թույլ կտա իրեն

ասել, թե «օսմանյան կայսրություննն այնպիսի պետություն մըն էր, որուն հովանիին տակ բազմաթիվ հանրություններ երկար ժամանակ ապրած են հաշտ ու խաղաղ»։ Ավելի մեծ սուտ կարո՞ղ է լինել։ Իսկ ո՞վ էր կոտորում բուլղարներին, սերբերին, հույներին, արաբներին, հայերին և մյուսներին, ո՞վ էր խաթարում նրանց նորմալ սոցիալ-տնտեսական, հասարակական զարգացումը։ Պատասխանը մեկն է՝ օսմանյան պետականությունը, սուլթանի իշխանությունը։

Սակայն անցնենք առաջ, ծանոթանանք Էջևիթի շուրթերից «սոցիալիստական» մյուս գոհարներին. «Այդ պեպոկված «սոցիալիստական» մյուս գոհարներին. «Այդ պետությունը,— բացատրում էր նա ամերիկահայ բանագնացին,— մեծ նպաստ մը ունեցած է աշխարհի քաղաքակրթության և մշակույթին և այդ նպաստը բնականաբար իր մեջ կընդգրկի նաև օսմանյան պետության մաս կազմած տարրերուն սատարը» (6, 28. 6. 1978)։ Ուրեմն սուլթաններ երկիրը ոչ միայն ավանդ ունի համաշխարհային քաղաքակրթության մեջ, այլև պաշտպանել է ոչ թուրք ժողովուրդներին։ Հետաքրքիր է իմանալ այդ ի՞նչ ավանդ է մուծել սուլթանական Թուրքիան մարդկության մշակույթի մեջ։ Իսկ ո՞ւմից է պաշտպանել այդ իշխանությունը ոչ թուրք ժողովուրդներին։ Այստեղ են ասում սուր, բայց չափդ իմացիր։ Բուն 1915-ի վերաբերյալ կարծիք ասելուց խուսափելով, Էջևիթն առանց ամոթի զգացումի պատասխանեց, թե «ճանռապետության հիմնադրումին նախորդած դեպքերուն առնչությամբ կառավարական պաշտոնական տեսակետ գոյություն չունի» (6, 30. 6. 1978)։

Էջևիթը մեծամտորեն մերժում էր Անիի ավերակների տերիտորիայի շուրջը Էդդի Պողոսյանի հարցադրումը։ Ամերիկահայ բանագնացի այցը Անկարա, անկասկած, ամերիկյան նախաձեռնություն էր, սփյուռքահայության որոշ մասի և Թուրքիայի միջև կամուրջ ստեղծելու մի միտում։ Սա օղակներից մեկն է ամերիկյան հակահայկական քաղաքականության, որի նպատակն է հարվածել Սովետական Հայաստանի հեղինակությանը, հայոց սովետական կողմնորոշմանը, թեթևացնել ՆԱՏՕ-ի գծով գլխավոր պարտնյոր Թուրքիայի վիճակը, որն այլևայլ քաղաքական ու տնտեսա-

կան դժվարությունների շարքում այսօր ունի նաև ոչ պակաս դժվարին խնդիր հայոց հարցում։

«Արմենիեն Ռիպորտեր» (անգլերեն), «Տեղեկատու» հայերեն երկլեզու թերթի որդեգրած ուղեգիծը, տարիների ընթացքում արտահայտած կարծիքներն ու տեսակետները կասկած չեն թողնում, որ նրա տնօրեններն ամերիկյան պետական մարմինների հետ «բարիդրացիական» հարաբերություններ ունեն։ Եվ պատահական բան չէ, որ ստանձնել են հայ-թուրքական պատմաքաղաքական թնջուկը հօգուտ թուրքերի քակելու առաքելությունը։ Թերթը համառորեն անց է կացնում այն միտքը, թե անհրաժեշտ է փոխել հայկական հարցի էությունը, ձեռք քաշել Թուրքիայի նկատմամբ թշնամական գործողություններից։ Թերթը չի տարբերում Թուրքիայի աշխատավորներին՝ նրա պորտաբույծ վերնախավից, ՆԱՏՕ-ին հավատարիմ թուրքական զինվորական արյան ծարավի խունտայից։ Էդդի Պողոսյանն ու նրա գործընկերներն առանց այլևայլության հայկական հարցի շուրջն անդորր հաստատելու միտքն են քարոզում, քանի որ այդ է պահանջում ՆԱՏՕ-ի գծով Թուրքիայի առաքելության իրականացման ամերիկյան հակասովետական քաղաքականության շահը։ 1980-ի մայիսի 8-ին թերթի խմբագրական հոդվածը Սադաթի օրինակին հետևելու կոչ էր անում, որը «վերջապես հասկացավ, որ հասել է Իսրայելի նկատմամբ թշնամական քաղաքականությունը բանակցություններով փոխելու ժամանակը»։ Թերթը ապրիլի 24-ի ելույթներին, «ինքնախարազանությանը» վերջ դնելու կոչ էր անում։ Ամենաարգահատելին այն է, որ նույն խմբագրականի հեղինակները ազգությունը մոռանալու, հայ ժողովրդի հավաքականության գաղափարը մերժում են այն պատճառաբանությամբ, թե սփյուռքի հայերը վաղուց դարձել են այն երկրների զավակները, որտեղ նրանք ծնվել են։ «Հայկական հարցը կորցրել է իր նշանակությունը ժամանակակից հայերի մեծամասնության համար»։ Մեկ ուրիշ վարձու գրչակ նույն թերթում (1980, 5 հունիսի) Թուրքիայից վերցվելիք հողերը յուրացնելու, այնտեղ նոր հայրենիք ստեղծելու խոչընդոտներն ու անհնարինությունն է քննարկում, ամեն կերպ ապացուցելով, թե ամերիկահայերը գոհ են իրենց «Ամերիկա հայրենիքից»

և Հայաստան գնալու միտք չունեն։ Ահա մի քանի օրինակներ, որոնք ցույց են տալիս թուրքական քաղաքականությանը նպաստելու Էդդի Պողոսյանի գլխավորած թերթի ուղեգիծը։ 1980-ի մայիսի 22-ին թերթի էջերում երևաց անձամբ ինքը՝ պարոն Էդդի Պողոսյանը։ Այս անգամ նա թուրքական քաղաքական «ակադեմիայի պրոֆ. Դ. Էրգիլի» այն հակապատմական պնդման փաստաբանի դերում էր, թե հայերը օսմանյան կայսրության ոչ մի մասում մեծամասնություն չեն կազմել։ Բեյրութահայ առաջադիմական գործիչ Գառնիկ Ադդարյանը զայրացուցիչ լկտիություն գնահատեց հայերի գենոցիդը հայերին վերագրելու թուրք-պողոսյանական համատեղ ջանքերը։ Զարմանալի չէ, որ թուրք պրոֆեսորը կրկնում է հայկական հարցի արհեստական բնույթի մասին իր նախորդների հեքիաթները։ Զարմանալի է, որ իր թերթում պարոն Պողոսյանն է հրապարակում ու կրկնում թուրքի հակահայկական ստերը։ «Հայերն ուզում են բաժանել և ոչնչացնել Թուրքիան»,— աղմկում է թուրքը։ Սրան յուրովի ձայնակցում է ամերիկա-թուրքասեր պարոն Էդդին։ Անդրադառնալով սրան ու թուրքանպաստ դիրք բռնած թերթին Գառնիկ Ադդարյանը գրեց, թե «Արմենիեն Ռիպորտերը» պետք է այլևս «Թուրքիշ Ռիպորտեր» կոչել։ Նա համոզիչ ցույց տվեց, որ Էդդի Պողոսյանի խոսքն ու գործը համապատասխանում են հայկական հարցը թաղելու նպատակ հետապնդող թուրք-ամերիկյան համատեղ ջանքերին, որ ամերիկյան թերթի խմբագրի և թուրք վարչապետի հանդիպումը կարող էր իրագործվել միմիայն ամերիկյան հատուկ ծառայությունների, այսինքն կենտրոնական հետախուզական վարչության միջոցով։

Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թյուրքմենը հաղորդեց, թե ամբողջ աշխարհում հայերի դեմ թուրքական կառավարության ձեռնարկելիք միջոցառումների հարցում նա խորհրդակցել էր ԱՄՆ-ի պետական քարտուղար Հեյգի հետ և ստացել նրա հավանությունը։

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի սեսիայից վերադառնալով, 1981-ի հոկտեմբերի սկզբին Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թյուրքմենը մամուլի ասուլիսում պատասխանելով այն հարցին, թե «ինչ է ձեռնարկվելու հայերի

և նրանց պրոպագանդայի նկատմամբ», ասաց. «Ինձ թվում է, որ Թուրքիան փոխել է հայերի գործունեության նկատմամբ լռության քաղաքականությունը։ Ապագայում մեր ակտիվությունն այդ հարցում կավելանա։ Մեր ներկայացուցիչներն արտասահմանում հանդես կգան դեկուցումներով, որոնցում կլուսաբանվեն պատմական փաստերը. բացի այդ, մենք ուժեղացնում ենք մեր պրոպագանդիստական գործունեությունը» (29, 7. 1981)։

1982-ի հոկտեմբերի 4-ին, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 37-րդ սեսիայի ամբիոնի վրա նորից իր հակահայկական դերում էր Թուրքիայի արտաքին գործերի մինիստր պարոն Թյուրքմենը։ Պատմության փաստերի ու դեպքերի աղավաղում, օսմանյան կայսրության պատմության տենդենցիոզ մեկնաբանում, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, իր սեփական հայրենիքն ունենալու նրա ձգտման խեղաթյուրում, կեղծիք, երեսպաշտություն՝ ահա թուրք մինիստրի նոր ելույթի ամենաբնորոշ կողմերը։

Ըստ թուրք մինիստրի, 19-րդ դարի 90-ական թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի դեմ արևմտահայության ազատագրական մաքառումները՝ տեռորիզմ է, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական բանակի հետ համագործակցելը՝ նույնպես։ Նա հայտարարում է, թե թուրք բնակչության նկատմամբ հայերի կիրառած զանգվածային սպանություններից հետո միայն «օսմանյան կառավարությունը որոշեց վերաբնակեցնել հայկական բնակչությունը Արևելյան Թուրքիայի շրջաններից (որոնց մոտենում էին ներխուժած ռուսական զորքերը) կենտրոնական Սիրիա, որն այն ժամանակ գտնվում էր օսմանյան պետության կազմում։ Հատուկ հրահանգներ էին հրատարակվել տեղահանվածների կյանքի և սեփականության պաշտպանության ապահովման համար»։

Մնում է միայն ասել, բրավո մինիստր։

Ըստ Թյուրքմենի ոչ թե երիտթուրքական ոճրագործներն են ոչնչացրել արևմտահայությանը, այլ հայերն են 2 միլիոն թուրք սպանել։ 1981-ին Ստրասբուրգում, եվրոպական պառլամենտի ամբիոնից արտասանած իր ճառում այս վեր-

չին թիվը մեկ միլիոն էր։ Այժմ այն դարձել է 2 միլիոն։ Սուտն այնքան սուտ բան է, որ մենք ավելի ամաչում ենք այն լսել, քան նույն բանը կրկնել։ Տվյալ դեպքում սուտխոսը պետք է լավ հիշողություն ունենար և հիշեր, թե ինչ է ասել անցյալ տարի։ Մի սուտը մեկ ուրիշն է ծնում։ Սուտն ու նենգությունը հիմարների ու վախկոտների զբաղմունքն է։

Երիտթուրքերի ոճրագործության մինիստր-փաստաբանը դիմում է թուրքական պետականության հին մեթոդին. կեղծել հայ բնակչության թիվը, պակասեցնել այն, ի չիք դարձնելու համար 2 միլիոն արևմտահայության համապարփակ ողբերգության դառնաղետ հետևանքները։

Թուրք հեղինակներն ու լրագրողները գտնում են, որ «շատ խոսելու հարկ չկա», հարկավոր է խոսքից անցնել գործի՝ «սանձել հայերին»։

Նման հարցադրումներին ձայնակցում են արևմտյան բուրժուական մամուլի օրգանները, իրենց միտումնավոր միջամտություններով խճողում հարցերը։ «Հերալդ Տրիբյուն» թերթում «Նյու Յորք Թայմսի» Միջին արևելքի թղթակցուհի Մարվին Հավը Անկարայից հաղորդած թղթակցության մեջ «առանց ճակատի պատերազմ էր» անվանել թուրք դիվանագետների դեմ կատարվող ահաբեկչական գործողությունները։ Իսկ հոլանդական հեռուստատեսությունը մի քանի առիթով շեշտել էր այն միտքը, որ «եթե թուրքերը չընդունեն, թե հայկական ջարդ մը կատարված է, տակավին շատ ոճիրներ կգործվին» (11, 31. 10. 1979)։

Կոմունիստները միշտ էլ հետևողականորեն մերժել են տեռորը։ Տակավին XIX դարում, այն բանից հետո, երբ գերմանական սոցիալիստները ենթարկվեցին ռեպրեսիաների Բիսմարկի բացառիկ օրենքի գործադրման հետևանքով, իսկ գերմանական անարխիստներ Իոհան Մոստը և Վիլհելմ Գասելմանը առաջ քաշեցին «Բռնության ու ահաբեկության կոչող» գործողության միջոցով պրոպագանդայի գաղափարը, Կ. Մարքսը խստագույնս քննադատեց նման հայացքները։ «Գործողության միջոցով պրոպագանդայի» նույն հարցադրումը հետո քննադատվեց Վ. Ի. Լենինի կողմից (ПСС, т. 6, стр. 48, 567)։ Կ. Մարքսը գտնում էր, որ զենքի միջոցով քննադատությունը չի կարող փոխարինել

քննադատության զենքին։ Բայց կարելի է այսպիսի խնդիր առաջադրել։ Հանդիսանում է արդյոք «զենքի միջոցով» անհաբեկչական քննադատությունն այն նյութական ուժը, որն ի վիճակի է խորտակել բուրժուական պետության զինված ուժը։ Կ. Մարքսն այդ հարցադրմանը տալիս էր բացասական պատասխան։ «Կոմունիստները,— իր հերթին գրում էր Ֆ. Էնգելսը,— շատ լավ գիտեն, որ ամեն տեսակի դավադրությունները ոչ միայն անօգուտ են, այլև նույնիսկ վնասակար» (К. Маркс и Ф. Энгельс, Соч. II изд. т. 4, стр. 331)։

Ռուսաստանյան էսէռների «տեռորի ճղճղան քարոզը» մշտապես գտնվել է մեր կուսակցության քննադատության կրակի տակ։ Այդ քարոզը բանվորական զանգվածների մեջ արմատավորում էր «վնասակար իլյուզիաներ, իբր տեռորն ի վիճակի է «ստիպելու մարդկանց խորհելու քաղաքականապես թեկուզև իրենց կամքին հակառակ»... իբր այն կարող էր նոր ուժ հաղորդել տատանվողներին, շշկլվածներին, բազմաթիվ ցույցերի վշտալի ելքից պարտվածներին։ «Այդ վնասակար իլյուզիաները,— գրում էր Վ. Ի. Լենինը,— կարող են հասցնել լոկ արագ հուսախաբության և միահեծանության վրա ճնշում գործադրելուն նախապատրաստվելու աշխատանքի թուլացման» (ПСС, т. 6, стр. 376)։ Քաղաքական պայքարում տեռորը երբեք օգուտ չի տվել և մեր կուսակցությունը ոչ միայն մերժել է այն խոսքով, այլև հետևողականորեն պայքարել նրա ու նրա գործադրողների դեմ։

Աշխարհի տարբեր երկրներում սպանություններ կազմակերպող ամերիկյան կենտրոնական հետախուզական վարչությունն իր հանցագործությունները թաքցնում է իր իսկ մեթոդներն ուրիշներին վերագրելու ծանոթ աղմուկով։ Մեր երկրի հասցեին կատարվող ոտնձգությունները զուրկ են որևէ հիմքից և կարող են շփոթեցնել միմիայն միամիտներին։

Սովետական թուրքագետ Գ. Ստարչենկովը «Ասիան և Աֆրիկան այսօր» ամսագրում բացահայտել է իրենց իսկ զինվորական իշխանությունների տեռորիստական գործողությունները այսօրվա Թուրքիայում (23)։

Եվրոպական խորհրդի 21 հոգուց բաղկացած պատվիրակությունը, որ գլխավորում էր անգլիական լեյբորիստական

կուսակցության գործիչ Թոմ Արվինը, մեկ շաբաթ Թուրքիայում գործերի վիճակին ծանոթանալուց հետո մարդկային իրավունքները կոպտորեն ոտնահարելու համար հարց հարուցեց Թուրքիան եվրոպական խորհրդից վտարելու մասին (22, 17. 1. 1982)։

Թուրքիայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար Ի. Բիլենը ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռեյգանին հղած բաց նամակում բացահայտեց ամերիկյան քաղաքականության երեսպաշտությունը արհմիութենական շարժման նկատմամբ ունեցած դիրքորոշման հարցում։ Մի կողմից, ամերիկյան վարչակազմը աղմկում է լեհական արհմիությունների իրավունքների պաշտպանության դիրքերից, մյուս կողմից, լռությամբ մատնում Թուրքիայի զինվորական իշխանությունների հակաժողովրդական, հակամարդկային, տեռորիստական գործողությունները։ Ի. Բիլենը պահանջեց վերջ դնել թուրքական գեներալների անօրինականություններին (22, 16. 1. 1982)։

Թուրքիան գալարվում է տեռորիստական գործողությունների ճիրաններում։ Թուրքիստներն ու պանթուրքիստները կերպարանափոխվում են, համակերպվում իրադրությանը, բայց նրանց էությունը մնում է նույնը։ Նրանք մնում են հայ ժողովրդի շահերի հետևողական թշնամի։

Թուրքիայի զինվորական տնօրենները շարունակում են հետևել ԱՄՆ-ի ագրեսիվ կուրսին, ՆԱՏՕ-ի հակասովետական պլաններին։ Մեկը մյուսի ետևից կնքվում են նոր համաձայնագրեր ռազմական բազաները Թուրքիայի տերիտորիայում ընդլայնելու, զինվորական ռեժիմին բազմազան օգնություն ցույց տալու վերաբերյալ։ ՆԱՏՕ-ի հարավարևելյան հրամանատարությունն անցկացրեց առաջին բազմազգ զորավարժությունները Թուրքիայի արևելյան շրջաններում, որոնք սահմանակից են Սովետական Միությանը։ Զորավարժություններին մասնակցեցին ԱՄՆ-ի, Անգլիայի, ԳՖՀ-ի, Իտալիայի, Թուրքիայի և Բելգիայի ցամաքային ուժերի և ռազմաօդային ուժերի զինծառայողներ, որոնք մտնում են «ՆԱՏՕ-ի բազմազգ արագաշարժ ուժերի» կազմի մեջ։ Զորավարժությունները, ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում պարծենում էին լարվածության թուլացման և բարիդրացիության քա-

ղաքականության ամերիկյան խափանարարները, մտահղացված են «որպես ահաբեկման միջոց» և «իրենց մաշտարներով աննախադեպ են»։ «Պրավդան» (25. 5. 1933) գրեց.

«Իսկ ո՞րն է ՍՍՀՄ սահմանների մոտ Հյուսիսատլանտյան բլոկի հարավարևելյան թևում ռազմական հիստերիայի հերթական նոպայի պատճառը։ Գուցե ինչ-որ մեկը «սպառնո՞ւմ է» Թուրքիային։ Իհարկե, ոչ։ Նրա այժմյան ռազմական ղեկավարությունը բազմիցս և ի լուր ամենքի, սովետա-թուրքական հարաբերությունները բնութագրել է որպես «ավանդական բարիդրացիական»։ Հիշողության մեջ դեռ թարմ է «Ալ ֆաջր» թերթի աշխատակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ Թուրքիայի պրեզիդենտ Քենան Էվրենի հունվարյան հայտարարությունը այն մասին, որ իր երկիրը ձգտում է զարգացնել բարիդրացիության և խաղաղության սկզբունքների վրա հիմնված բարեկամական հարաբերությունները Սովետական Միության հետ։ Քաջ հայտնի է, որ մեր երկիրը իրականում կենսագործում է հիշյալ սկզբունքները»։

ԱՄՆ-ի հետ Թուրքիայի ռազմական համագործակցության ընդլայնումը հղի է վտանգավոր հետևանքներով։ Պենտագոնը ձգտում է Թուրքիան ամբողջապես ենթարկել իր ագրեսիվ քաղաքականությանը։ Թուրքական հասարակության օրինական անհանգստություն է արտահայտում, իր կառավարությունից պահանջում է վարել կշռադատված և հավասարակշռված քաղաքականություն։ Սովետական Միությունը չունի այլ նպատակ, քան պահպանել բարիդրացիական հարաբերություններ հարևան Թուրքիայի հետ։

Առայժմ Թուրքիան տնօրինում են սև ուժերը։

Հայ ժողովրդի հուսալի պատվար Սովետական Միությունը խաղաղասիրական իր հետևողական քաղաքականությամբ ապահովում է նրա սոցիալիստական առաջընթացը։

1. «Ազատամարտ», Փարիզ։
2. «Ազատ օր», Աթենք։
3. «Ալիք», Թեհրան։
4. «Աշխարհ», Փարիզ։
5. «Արարատ», Բեյրութ։
6. «Զարթօնք», Բեյրութ։

7. Լրաբեր», Նյու Յորք, Լոս Անջելես։
8. «Կանչ», Բեյրութ։
9. «Հայաստան» ամսագիր, № 416—417, հուլիս-օգոստոս, 1980, Փարիզ։
«Հայաստան» ամսագիր... սովետական արտա-
10. Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, պրոֆ.
քին քաղաքականության փաստաթղթերում, պրոֆ.
Ջ. Կիրակոսյանի առաջաբանով, Երևան, 1972։
11. «Հառաջ» Փարիզ։
12. «Մարմարա» Ստամբուլ։
13. Մուրլյան Զ., Հայկական դատի հետապնդման ճամբուն վրա, «Զարթօնք», 1. 2. 1980։

14. **Айзенштейн Н. А.**, Некоторые аспекты изучения культуры современной Турции, журнал «Народы Азии и Африки», № 3. 1980.
15. **Гасанова Э. Ю.**, Антикоммунизм в Турции. Сб. «Национально-освободительное движение и современная идеологическая борьба». Баку, 1973.
16. **Григорянц А.**, Люди без будущего, «Известия», 3. X. 1981.
17. **Заманова Э. Э.**, Идеология антикоммунизма в современной турецкой буржуазной эстетике. Сб. «Национально-освободительное движение и современная идеологическая борьба». Баку, 1973.
18. «Известия».
19. **Карабаев Б. М.**, Пантюркизм как часть идеологии антикоммунизма в Турции. Сб. «Национально-освободительное движение и современная идеологическая борьба», Баку, 1973.
20. «Комсомольская правда».
21. «Международная жизнь», № 7, 1982.
22. «Правда».
23. **Старченков Г.**, Терроризм в Турции, журнал «Азия и Африка сегодня», № 11, 1981.
24. **Шпаров В. А.**, Эгейский конфликт. Журнал «Вопросы истории», № 11, 1979.
25. **Филиппов А.**, Вспышка терроризма, «Правда», 18. VI. 1980.

26. "Dünya"
27. **Erkmen H.** Contemporary Turkey, "NewsWeek", 23. 6. 1980
28. "Gunaydin"
29. "Gumhuriet"
30. "Hürriyet"
31. **Krikor!an H. K.** The mandate for Armenia, Constantinople, 1919.

32. Lang D. M. The Armenians: A people in Exile, London, 1981.
33. "Milliet"
34 "NewsWeek"
35. Robinson, Richard D., The first Turkish republic. A case study in National Development, Harvard Yniversity press, 1963.
36. "Time" N. Y.
37. "The Armenian Reporter", N. Y.

Р Е З Ю М Е

МЛАДОТУРКИ ПЕРЕД СУДОМ ИСТОРИИ
(1915 г. — наши дни)

КНИГА ВТОРАЯ

Данная — вторая книга монографии состоит из шести глав. В первой главе — «Младотурки — организаторы геноцида западных армян» дан анализ антиармянской политики младотурецкого правительства. На основании обобщения правдивых фактов, событий времен первой мировой империалистической войны показан процесс осуществления принципов тюркизма за счет жизненных интересов армянского народа. Прогрессивные демократические силы России, Европы, США уже тогда последовательно осуждали массовый геноцид армян в Османской империи.

Вторая глава — «Год 1918 — пантюркизм в действии» посвящена разоблачению планов организаторов турецкой антисоветской интервенции в Закавказье. В главе показана борьба большевиков края за победу принципов Великого Октября, за установление Советской власти. Закавказская контрреволюция облегчила задачу младотурецких интервентов. Захватническая политика Османской Турции провалила осуществление ленинского декрета «О Турецкой Армении». Сардара-

патская битва спасла население Восточной Армении от неминуемой гибели.

В третьей главе — «Младотурецкие преступники перед военным трибуналом» впервые в нашей историографии обстоятельно рассмотрен судебный процесс над младотурецкими убийцами. Привлечен богатый материал (свидетельства, показания, официальные материалы государственных учреждений Османской империи), который полностью изобличает младотурецких главарей как организаторов массового уничтожения армян. Особенно интересны материалы турецких периодических изданий тех лет («Таквим и Вакан», «Ренесанс» и др.), которые раскрывают всю мерзость совершенного преступления. В то время, по признанию турецких интеллектуалов, «турецкий народ склонял свою голову» перед трагедией армянского народа. Немного спустя взяла верх практика фальсификации и извращения фактов истории.

Четвертая глава — «Националисты — продолжатели антиармянской политики султанов и младотурок» посвящена событиям 1919—1921 гг. В условиях сложной международной обстановки, антисоветской интервенции и гражданской войны только Советская Россия выступила в защиту интересов армянского народа против агрессивного курса турецких националистов.

Пятая глава — «Против турецкой фальсификации истории» посвящена критике старых и новых адвокатов младотурецких преступников. На основе анализа богатого фактического материала читатель получит представление о фальсификаторских стараниях турецкой политической пропаганды и историографии. Мировое общественное мнение осуждает лжеисториков.

Глава шестая — «Тюркизм сегодня» посвящена по-

литическим событиям турецкой действительности последних лет: военный переворот 12 сентября 1980 г.; Турция «главный солдат» НАТО; черные дела турецких фашистов. Антиармянская политика турецкой государственности продолжается.

Источники и использованная литература даны после каждой главы.

THE YOUNG TURKS BEFORE THE TRIAL OF HISTORY

(summary)

(From 1915 to our days)

BOOK TWO

The present volume, consisting of six chapters, is the second book of the monograph. The first chapter — "Young Turks — Organizers of the Genocide of Western Armenians" — offers an analysis of the anti-Armenian policy endorsed by the Young Turk government. Based on hard facts from the imperialist World War I, it elaborates on the implementation of the principles of Turkism to the detriment of the vital interests of the Armenian people. The progressive, democratic forces of Russia, Europe and the USA persistently condemned the mass genocide of Armenians in the Ottoman Empire.

The second chapter — "The Year 1918 — PanTurkism in Action", — exposes the scheme of the organizers of Turkish anti-Soviet intervention in Transcaucasia. The chapter canvasses the struggle of the bolsheviks of the area for the triumph of the principles of the Great October Revolution, for the institution of Soviet power. Transcaucasian counter-revolution eased the task of the Young Turk interventionists. The aggressive policy of Ottoman Turkey put a spoke in the wheels of Lenin's decree "On Turkish

Armenia". The battle of Sardarapat saved Eastern Armenia from imminent destructtion.

The third chapter — "Young Turk Criminals before the Military Tribunal" — surveys, for the first time in our historiography, the legal proceedings of the Young Turk killers. The chapter is replete with rich data (eye-witness accounts, testimonies, official documents of the government offices of the Ottoman Empire) that ultimately lay bare the ring-leaders of the Young Turks as organizers of the wholesale massacre of the Armenians. Of particular interest are the materials carried in the Turkish periodicals of those days ("Takviem-i Vaki", "Renaissance" and others) that expose the naked villairy of the perpetrated crime. As the Turkish intellectuals of the times acknowledged "The Turkish people bows down" before the tragedy of the Armenian people. Before long, however, the practice of falsifying and perverting the historical facts got the upper hand.

The fourth chapter — "Nationalists Pursuing the Anti-Armenian policy of the Sultan and the Young Turks" — treats of the events of 1919-1921. Under encumbered international circumstances — the anti-Soviet intervention of the imperialists and the Civil War — it was only Soviet Russia that defended the interests of the Armenian people in the face of the aggressive policy of the Turkish nationalists.

The fifth shapter — "Against Turkish Falsification of History" — takes stock of the criticism of the old and new advocates of the Young Turk criminals. Abundant circumstantial evidence adduced in the chapter will give the reader an idea of the forgery of Turkish political propaganda and historiography. World public opinion condemns the pseudo-historians.

The sixth chapter — "Turkism Today" — highlights the political events in Turkey in recent years: the Turkish coup of September 12, 1980, Turkey — "the foremost solider" of NATO, four cases of Turkish fascists. The anti-Armenian policy of the Turkish state is keeping up.

Each chapter is supplemented with a reference list.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

Գլուխ առաջին

Երիտթուրքերն արևմտահայության գենոցիդի կազմակերպիչներ . 5

Գլուխ երկրորդ

1918 թվական. պանթուրքիզմը գործողության մեջ
Հայոց գենոցիդը շարունակվում է 83

Գլուխ երրորդ

Երիտթուրք ոճրագործները զինվորական դատարանի առաջ . . 157

Գլուխ չորրորդ

Օսմանյան կայսրությունը խորտակվեց.
Հայասպանությունը շարունակվեց 235

Գլուխ հինգերորդ

Ընդդեմ պատմության թուրքական կեղծարարության 335

Գլուխ վեցերորդ

Թուրքիզմն այսօր 401

Резюме 457

Կիրակոսյան Ջոն Սահակի

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

(1915-ից մինչև մեր օրերը)

Գիրք երկրորդ

Киракосян Джон Саакович

МЛАДОТУРКИ ПЕРЕД СУДОМ ИСТОРИИ

(с 1915 г. до наших дней)

Книга вторая

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван — 1983

Հրատ. խմբագիր՝ Ռ. Հ. Մուրադյան
Կրտսեր խմբագիր՝ Գ. Ռ. Կնյազյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան
Տեխն. խմբագիր՝ Փ. Բ. Նահապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Բ. Մարգարյան

ИБ № 3706

Հանձնված է շարվածքի 13.09.1983 թ.։ Ստորագրված է տպագրության 16.12.1983 թ.։ Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպ. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ 24,36 պայմ. տպ. մամ., հրատ. 21,45 մամ.։ Պատվեր՝ 2458։ ՎՖ 07011։ Տպաքանակ՝ 20000։ Գինը՝ 2 ռ. 80 կոպ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող № 65։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Алавердяна, 65.